ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՄԻ ԲՈՒՌ ԾԻԾԱՂ

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան - 1984

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՄԴ 84Հ7
Ք 141

Քալանթարյան, Ա. Փ.

Մի բուռ ծիծաղ: Երգիծական պատմվածքներ և մանտապատումներ. – Եր. Սովետ. Գրող, 1984 – 336 էջ:

Արտաշես Քալանթարյանի նոր ժողովածուն միավորում է հեղինակի վերջին տարիներին հանտապետական մամուլում տպագրված, հեռուստատեսությամբ ցուցադրված և ռադիոյով հաղորդված երգիծական պատմվածքները ու մանրապատկերները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԱՆԱԿՆԿԱԼ 6
ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ 13
ԹՈՒՅՆԻ ԿԱԹԻԼՆԵՐ 15
ՆՎԵՐԸ 20
ԵՂԵՔ ԶԳՈՆ 23
ԳԻՐՔ ՏԱՄ, ԳԻ՛ՐՔ... 24
ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ 27
ՄՆԱՑԱԾԸ ԴԱՏԱՐԿ ԲԱՆ Է 32
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԸ 35
ԶՐՈՒՅՑ ՆԱՐԴՈՒ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋԸ 38
ՈՄԿԵ ԶԿՆԻԿԸ 44
ՇԵՐԼՈԿ ՀՈԼՄՍԸ ՀՐԱԶԴԱՆԻ ՁՈՐՈՒՄ 47
ԱՆԵԼԱՆԵԼԻ ՎԻՃԱԿ 52
ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌ 57
ՀՆԱԶԱՆԴԵՑՆՈՂԸ 62
ԻՄ ԽԵԼՈՔ ԲԱԼԻԿՆԵՐԸ 67
ԻՄ ԳՐԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԸ 72
ԵՐԵՔ ԱՆՀԱՅՏՈՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ 75
ԻՆՉ ԲԱՆ Է ԾԻԾԱՂԸ 91
ՇՐԹՀԱՐՄՈՆԸ 97
ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ 99
ԱՊՏԱԿԸ 104
ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ 107
ՆՎԵՐԸ 110
Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ 115
ՀԵՔԻԱԹ 121
ՇԱՀԱՎԵՏ ԳՈՐԾԱՐՔ 125
ԿՆԵՐԵՍ, ԵՂԲԱՅՐ վերջ 130
ՍԿԵՍՈՒՐԸ 137
ՀԱՐԵՎԱՆՆԵՐ 142
Ս Պ Ա Ս Ո Ի Մ 147
ԷՍՏԱՖԵՏ 151
ՍՐԱՄԻՏ ԵՐԵԽԱՆ 156
ՈՃԻՐ ԵՎ ՊԱՏԻԺ 160
ՎԱՅՐԿՅԱՆԻ ԳԻՆԸ 169

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎՐԵԺ 173
ԱՆԵԿԴՈՏԸ 177
ՎԱՋՔԻ ՕԳՈՒՏԸ 180
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԵՆՔԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ 182
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ 185
ՊԱՏԿԵՐՆԵՐ 21-ՐԴ ԴԱՐԻՑ 191
ՈՉՆՋԻՑ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ 194
ԶՐՈՒՅՑ ԸՆԴՈՒՆԱՐԱՆՈՒՄ 197
ԳՈՂԸ՝ ԳՈՂԻՑ 200
ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ 208
ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ 219
ԿԱՐՈՒՍԵԼ 227
ՀԱՅՐԸ 232
ՆԱ ՔՆԱԾ Է ԵՂԵԼ 236
ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ 240
ԹՈՌՆ ՈՒ ՊԱՊԸ 250
ՄԱՅՐԸ 254
ԳՐԵԹԵ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ 259
ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐ 263
ԽԱՆԴԸ 268
ԳԻՇԵՐԱՅԻՆ ՓԱԽՈՒՍՏ 273
ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՄԵՐ ՉԿԱ 276
ՕԺԻՏՈՎ ՀԱՐՄՆԱՑՈՒ 283
ԽԻՂՃԸ 289
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ 292
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ 296
ՎԱՏ ԵՐԱԶ 301
Ո՞ՐՆ Է ՆՐԱ ՄԵՂՔԸ 306
ԱՂՋԻԿՆ ՈՒ ՀԱՐՍԸ 311
ԸՆԴՈՒՆԱՐԱՆՈՒՄ 313
ԳՈՒՇԱԿԸ 316
ԴԵՐԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ 322
ԱԼՈ, ԱՂԲԸ... 327
ՍԽԱԼԸ 329
ԴԱՏԱՎՈՐԸ 332
ՄԵՆԱՄԱՐՏ 340
ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 344

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ 348
ՆԱՀԱՆՋ՝ ԵՐԳՈՎ 350
ՔԱՂՎԱԾՔԱՄՈԼԸ 354
ՈՐՏԵՂԻՑ Է ՍՈՎՈՐԵԼ 357
ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ 359
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ 361
ԿՌԻՎ 363
ՍՈՒՏԱՍԱՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՏԱԿՈՒՄ 369

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆԱԿՆԿԱԼ

Նրանք կանգ առան ռեստորանի նախասրահում: Ուրախ աղմուկ կար, նվագ, հուրհրան ջահեր, օդի հոսանք, որ ֆիզիկայի համապատասխան օրենքով տաք վիճակում դուրս էր գալիս շքամուտքից և նույն շքամուտքից ներս մտնում սառը վիճակում: Սառը վիճակում ներս մտնող օդի հոսանքի մեջ հայտնվում էին նորանոր զույգեր՝ երջանիկ, վառվռուն դեմքերով, խոսում էին քնքշորեն, նուրբ, զգացմունքով, ասում էին.

— Սիրելիս:

— Խնդրեմ:

— Եթե կարելի է:

— Օ, ինչ եք ասում:

Նրանք, որ կանգ էին առել ռեստորանի նախասրահում, իրար նայեցին :Կինը երկնչոտությամբ ձգեց ամուսնու թևից և նայելով նրա ակնոցին, որի ապակիների վրա շրջված արտացոլվել էր շենքի գունավոր ռեկլամը, «հարմար, էժան, կահավետ է», մեղմիկ շշնջաց.

— Գվիդոն, սիրելիս, ինչո՞ւ ինձ բերեցիր այստեղ: Նոր տարվա այս գիշերով ընկնելու է տրամադրությունս: Այդ կեղտոտ բաժակները, ափսեները, մատուցողներն՝ իրենց բիրտ շարժուձևերով, նրանց անգրագիտությունը թվաբանությունից… Տարրական գումարում անգամ չգիտեն:

— Դե, այդ մեկը չէ,— ժպտաց մարդը, որին Գվիդոն անվանեցին,— այդ մեկը չէ: Գումարման հարցում, սիրելիս, նրանք ֆանտաստիկ երևակայություն ունեն: Նույնիսկ բազմապատկման են հասցնում…

Բայց նա դեռ չէր ավարտել իր ապագա բարդ ստորադասական նախադասությունը, որը կարծես թե ոչ մի բարենպաստ միտք չէր պարունակելու մատուցողների հասցեին, երբ բացվեց դիմացի ապակեպատ դուռը և հայտնվեց սարկավագի՞, թե էստրադային արտիստի հագուստով մի մատուցող ոտքից գլուխ սև, սպիտակ թիթեռնիկ-փողկապով: Նա գլխի թեթև խոնարհումով ողջունեց զույգին, հեռուստատեսության ստուդիայի մեկնաբանների արժանապատվությամբ շնորհակալություն հայտնեց ուշադրության համար, որ հատկապես իրենց ռեստորանն են եկել և տեղեկացավ, թե ինչպիսի՞ սեղան կուզեին ընտրել:

— Մեկուսի, եթե հնարավոր է,— չգիտես ինչու շիկնելով խնդրեց տղամարդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Օ, խնդրեմ,— ասաց մատուցողը,— այս սեղանը թերևս ամենահարմարն է: Պատուհանից հիանալի տեսարան է բացվում: Ահա կերակրացանկը տիկին:

Կինը փոքր-ինչ զարմացած մեկ մատուցողին նայեց, մեկ էլ կերակրացանկին և ցանկություն հայտնեց, որ ամուսինը պատվիրի: Այնժամ ամուսինը ծալեց կաշեկազմ կերակրացանկը և սևեռուն նայեց մատուցողին,

— Ընկեր,— ասաց նա,— այսպիսի ցուցակներ շատ եմ տեսել: Ինչ էլ հարցնեմ, ասելու եք՝ չկա: Ավելի լավ է բանավոր թվեք եղածը:

— Ինչ որ նշված է, կա,— թեթևակի վիրավորված պատասխանեց մատուցողը: Կարող եք չանհանգստանալ:

— Ի՞նչ եք ասում: Այդ դեպքում բերեք մեզ համար... ահա սառը թառափ, ձիթապտուղ, սալաթ պոմիդորով և վարունգով...

Մատուցողը, որը սղագրողի ճարպկությամբ նշումներ էր անում, հանկարծ բարձրացրեց գլուխը և հարցրեց մտախոհ.

— Սալաթը ձիթայուղո՞վ կհաճեիք,թե քացախով:

— Ձիթայուղով,— ասաց կինը:

— Քացախով,— ասաց տղամարդը:

— Հասկացա,— ժպտաց մատուցողը: Կմատուցեմ առանձին –առանձին:

Այս անգամ տղամարդը մտախոհ նայեց մատուցողին, շնորհակալություն հայտնեց շփոթված և խնդրեց բերել նաև մրգահյութ ու պանիր:

— Ինչպիսի՞ պանիր,— տեղեկացավ մատուցողը,— սովետակա՞ն, շվեյցարակա՞ն, հոլանդակա՞ն, ռոկֆո՞ր, Եղեգնաձորի՞, բրինզա՞, չանա՞խ, Արագածի՞ , թե՞լ...

— Թել,— հմայված շշնջաց կինը:

— Իսկ կարելի՞ է խո-խո-խորոված,— կակազեց տղամարդը:

— Ինչո՞ւ չէ, բայց եթե թույլ կտաք, ես ձեզ համար կպատվիրեմ խորոված իշխանաձուկ: Գիտե՞ք ինչ, խորոված թարմ մսից չէ,— հոգածությամբ զգուշացրեց մատուցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Կարիք չկա ասելու, որ հաճախորդներն անմիջապես համաձայնեցին և հուզված տղամարդը խնդրեց նաև կոնյակ՝ երկու հարյուր գրամ և մի շիշ շամպայն:

— Շամպայնը դա՞ռը, կիսադա՞ռը, քա՞ղցր, կիսաքա՞ղցր,— հետաքրքրվեց մատուցողը:

Եվ հանկարծ տղամարդը զունատվեց:

— Լսեք, դուք հո մեզ չե՞ք ծաղրում,— ջղային հարցրեց նա:

— Ներեցե՞ք,— խոնարհվեց մատուցողը,— ձեզ չհասկացա:

— Գվիդոն, դու քեզ կորցնում ես,— միջամտեց կինը: — Կիսաքաղցր, խնդրում եմ, և եթե կարելի է՝ սառույցով:

— Մեզ մոտ շամպայնը միայն սառույցով են մատուցում:

— Տեր աստված, դու ինձ համբերություն տուր,— մրմնջաց տղամարդը կամացուկ,— եղբայր, սա ի՞նչ բան է, երեկ չէ՞ր, որ շամպայնը մատուցում էիք գոլ ջրի մեջ թրջած լաթով:

— Ի՞նչ, դու երեկ այստե՞ղ ես եղել, Գվիդոն,— ձայնի մեջ խոր թաքնված սպառնալիքով հարցրեց կինը:

— Ոչ, սիրելիս, ես ընդհանրապես եմ ասում,— վախեցավ ամուսինը,— տղաները պատմում էին, որ...

— Այո-այո, դուք իրավացի եք,— հանկարծ հիշեց մատուցողը,— սառույց արտադրող սարքը մի օր չէր աշխատում: Կներեք: Սուրճ կուզեի՞ք վերջում:

— Անպայման:

— Դու որևէ բան հասկանո՞ւմ ես,— ասաց ամուսինը, երբ մատուցողը հեռացավ:

— Հիանալի,— բռնկվեց կինը,— հիանալի եմ հասկանում, որ դու երեկ այստեղ ես եղել: Միայն թե առայժմ չգիտեմ՝ ում հետ: Իհարկե... նոր եմ հասկանում, թե ինչու է ինձ ռեստորան բերում, խիղճը տանջում է: Մի առարկիր:

Գվիդոնը գործադրեց նման տխուր վիճակում գտնվող տղամարդու դարավոր փորձը և ի վերջո կարողացավ համոզել, որ ինքն անմեղ է, թեև կինն այդ փայլուն պաշտպանականից հետո, այնուամենայնիվ, իբրև ռազմատուգանք պահանջեց, որ Գվիդոնը իր համար նոր մուշտակ գնի, «Կոսմոսի» փոխարեն ձեռք բերի իսկական «Գանկա» տիպի կահույք և մորը համոզի անորոշ ժամանակով տեղափոխվել ավագ որդու տուն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Հայտնվեց մատուցողը՝ ձեռքին սպիտակ մեխակների մի սքանչելի փունջ:

— Ներեցեք, տիկին, ինձ թվաց, թե դուք մեխակներ եք սիրում,— ասաց նա,— եթե այդպես չէ, ես հենց հիմա ձեզ վարդեր կբերեմ:

— Ոչ, ոչ, դուք կռահել եք,— հաճելիորեն զարմացավ կինը,— պաշտում եմ սպիտակ մեխակները…

— Շնորհակալություն,— ժպտաց մատուցողը,— իսկ հիմա կբերեմ խորտիկները, ամեն ինչ պատրաստ է:

Նրա հեռանալուց հետո տղամարդը պոռթկաց՝ իր զարմանքին խառնելով այն ամբողջ վիշտն ու ցավը, որ նա դեռ զգում էր քիչ առաջ կնոջը խոստացած ռազմատուգանքի պատճառով:

— Լսիր, դու որևէ բան հասկանո՞ւմ ես:

Կինը թոթվեց ուսերը և ասաց զիջողաբար.

— Ոչինչ, ոչինչ չեմ հասկանում:

— Ախր այդպես չի կարող լինել,— դառնացած ասաց տղամարդը,— սա այնքան անբնական է. այստեղ մի մեծ հանելուկ կա՝ դավադրության նման մի բան; Եթե մատուցողն ասեր. «Սա է, ուզում եք կերեք, ուզում եք՝ չէ», կամ կոպիտ վերաբերվեր, թերևս կբարկանայի, բայց ավելի հանգիստ, ավելի ապահով կզգայի ինձ:

— Գիտե՞ս ինչ,— մեխակները հոտոտելով, քնքշացած ասաց կինը,— Գուցե նոր տարվա առթիվ արտակարգ ուշադրություն են դարձնում, գուցե և մեզ բախտ է վիճակվել լավ մատուցողի հանդիպել: Լինում է, չէ՞:

— Չէ, սիրտս չի դիմանա,— տնքաց տղամարդը,— ախր սա կարծես ամեն ինչ դիտմամբ է անում: Ո՞վ է տեսել, որ այսքան արագ մատուցեն: Ո՞վ է տեսել… Տես, տես, բաժակները մաքրությունից նույնիսկ փայլում են:

— Կներեք, որ մի փոքր ուշացրի,– շշնջաց մատուցողը և սկսեց արագ-արագ տեղավորել ափսեները:

— Ընկեր, դուք ինձ կներեք, բայց որպեսզի այս գիշեր կաթված չստանամ, խնդրում եմ պատասխանեք իմ մի հարցին:

— Խնդրեմ,— թեքվեց մատուցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Գվիդոն…— խնդրեց կինը:

— Սպասիր,— նրա ձեռքը հեռացրեց տղամարդը: Լսեք, հարգելի ընկեր, հարգելի բարեկամ: Ի՞նչ է պատահել:Ես կխենթանամ: Ինչո՞ւ չեք կոպտում, ինչո՞ւ չեք վիրավորում: Ինչո՞ւ ափսեները կեղտոտ ու թաց չեն, ինչո՞ւ չեք խառնել պատվերները և թառափ ձկան փոխարեն, օրինակ, բժշկական երշիկ բերել:Ի՞նչ է պատահել այստեղ: Ես պետք է իմանա՞մ, թե ոչ: Այլապես սա այնքան անսովոր, անբնական ու… զզվելի է, որ ոչնչի ձեռք չենք տա:

— Գվիդոն…

— Ներեցեք, տիկին,— մեղմ, գրեթե թախծոտ ձայնով ասաց մատուցողը,— ցավոք, ընկեր Գվիդոնը միանգամայն իրավացի է: Այո: Մեզ մոտ թերություններ շատ կային: Սակայն, հավատացնում եմ ձեզ, մինչև երեկ: Երեկ առավոտյան արիմիութենական ընդհանուր ժողով էր: Եկել էր նաև մեր մինիստրի տեղակալը: Շատ խոսեցինք, գտանք, որ այդպես շարունակել չի կարելի և պարտավորվեցինք նոր տարուց աշխատել այլ ձևով, նոր ձևով, մոտավորապես այսպես: Ահա ամբողջ գաղտնիքը: Դե, մենք էլ՝ մատուցողներս, որոշեցինք՝ ինչու սպասել նոր տարուն, երբ կարելի է սկսել այսօրվանից: Ճիշտ է, դեռևս այնպես չի ստացվում, ինչպես հարկն է, սակայն…

— Ինչ եք ասում, ինչ եք ասում, պարզապես հրաշալի է,— ասաց կինը:

— Սրտիցս կարծես մի ծանր քար ընկավ: Շնորհակալություն, ընկեր,— ասաց տղամարդը:

— Խնդրեմ, դա մեր պարտքն է,— ասաց մատուցողը,– թույլ տվեք լցնել ձեր բաժակները:

— Հիմա տեսնո՞ւմ ես,— ասում էր կինը:

— Բայց ասում էի, չէ՞ , որ այստեղ մի գաղտնիք կա,— ասում էր տղամարդը: Եվ վերջապես, դո՛ւ չէիր ուզում ռեստորան գալ: Դե, ողջ լինես, սիրելիս:

— Ողջ լինենք, հոգյակս: Զարմանալի բան է, բայց տրամադրությունս այնպես բարձրացավ: Ինչու ամենուրեք արիմիութենական ժողովներ չեն անցկացնում: Հաճելի է, չէ՞:

— Որքան քիչ բան է պետք երջանիկ լինելու համար,— ասաց տղամարդը,— մի քիչ ուշադրություն, մի քիչ ժպիտ, մի քանի սիրալիր խոսք…

— Եվ մի քիչ կոնյակ,— ասաց կինը, ու նրանք խմեցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Այո, այո, և ահա ես երջանիկ եմ,— ասաց տղամարդը: — Սիրում եմ քեզ: Եվ ոչ միայն քեզ: Բոլորին: Նույնիսկ այն ճաղատ թմբկահարին, այն պառավ երգչուհուն, մեր այս ազնիվ մատուցողին…

— Ես էլ,— ասաց կինը:

— Դե, դե, հանկարծ չսիրահարվես նրան,— ծիծաղելով սպառնաց տղամարդը:

Եվ նրանք նստեցին երկար-երկար, հիշելով շատ քնքուշ ու շատ կարևոր խոսքեր, որ երբևէ ժամանակ չէին գտել իրար ասելու: Էստրադայից թախծոտ ու մեղմ նվագ էր հնչում: Պատուհանի ետևում ծանր ու մեծ փաթիլներով իջնում էր ձյունը՝ սպիտակ մաքրությամբ, ծածկելով ամեն ինչ: Իսկ ուղիղ կեսգիշերին հանկարծ մի խոր լռություն տիրեց և այդ լռության մեջ, ինչպես եկեղեցում, հանդիսավոր ղողանջով տասներկու անգամ զարկեց հրապարակի մեծ ժամացույցը: Պայթեց ցնծության աղմուկը, մարդիկ գրկեցին իրար, համբուրեցին՝ ազնվացած, հուզված, անկեղծացած: Իսկ տղամարդն ու կինն այնքան ներշնչված էին, այնքան բարի, որ կինը նույնիսկ համաձայնեց երկու ամսով հետաձգել ամուսնու մոր արտաքսումը սեփական տնից:

— Հրաշալի գիշեր անցկացրինք, այնպես չէ՞:

— Գվիդոն,— շշնջաց կինը: Այնքան ուրախ եմ: Եթե դեմ չես, մենք հաճախ կգանք այստեղ:

— Իհարկե,— ծիծաղեց տղամարդը,— բայց դա կախված է նաև մատուցողի թվաբանական գրագիտությունից: Չէ՞: Հիմա կտեսնենք:

Կարծես կռահելով, որ խոսքն իր մասին է, արագորեն նրանց սեղանին մոտեցավ մատուցողը:

— Լսում եմ ձեզ: Վերջնահաշի՞վը: Խնդրեմ, յոթ ռուբլի վաթսուներկու կոպեկ:

— Այդքան քի՞չ,— ուրախ զարմացավ տղամարդը: Դուք երևի սխալ հաշվեցիք:

— Ոչ, ոչ, ամեն ինչ ճիշտ է,— չարաճճիորեն ժպտաց մատուցողը: Դուք մոռացել եք նոր կարգը:

— Խնդրեմ, ստացեք ութ ռուբլի: Շատ զգացված ենք:

— Մի րոպե: Ահա մանրը:

— Հարկավոր չէ, խնդրում եմ:

— Տիկին, դուք ինձ վիրավորում եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Եղբայր, այս ի՞նչ օր է,— զգացվեց տղամարդը,— այդ դեպքում թույլ տվեք սեղմել ձեր ազնիվ ձեռքը:

Հետո նրանք հեռացան երջանկացած: Իսկ երբ նրանք հեռացան երջանկացած, մատուցողը շրջվեց ու... սկսեց ծիծաղել քահ-քահ: Նա խփում էր ծնկներին ու ծիծաղում էր: Ձեռքերով սեղմում էր կողերն ու ծիծաղում էր: Եվ ծիծաղեց այնքան, մինչև թուլացած նստեց աթոռին, հենց այն աթոռին, որը դեռ պահում էր Գվիդոն կոչվող քաղաքացու մարմնի ջերմությունը:

— Ի՞նչ է պատահել, տո,— հարցրեց նրա տարեց գործընկերը:

— Ախր, ախր դու չգիտես,— ծիծաղից խեղդվելով ասաց մատուցողը,— քիչ էր մնում լաց լինեին: Հավատացրի, թե չգիտեմ ովքեր են: Կինը երբ ասաց Գվիդոն, ես մատս կծեցի: Մեր դիրեկտորն ասել էր, որ ստուգելու նպատակով մեզ հյուր է գալու ինքը՝ առևտրի գլխավոր տեսույչ Գվիդոն Մարկոսովիչը: Պատուհանի տակի սեղանին հունական դրոշակ էի դրել, ամբողջ օրը ոչ ոքի չթողեցի նստել: Բայց դու միայն դրա մռութին նայեիր, մռութին, շատ մազալու տիպ էր:

— Ո՞վ,— պատմությունից երևի զվարճացած, ծիծաղի միջից հարցրեց նրա ընկեր մատուցողը:

— Գվիդոն Մարկոսովիչն, ո՞վ:

— Գվիդոն Մարկոսովիչը հրեն մեր դիրեկտորի հետ առանձնասենյակում նստած խմում է:

— Ի՞նչ: Ուրեմն էս Գվիդոնը...

— Ուրիշ Գվիդոն է եղել,— շարունակելով քրքջալ, ասաց տարեց մատուցողը:

Մատուցողը մի պահ մնաց անշարժ, հենված սեղանին, հետո հանկարծ վեր թռավ տեղից, նետվեց դեպի դուռն ու սանդուղքով սլացավ ներքև: Բայց երջանիկ ամուսիններն արդեն չկային: Մատուցողը շքամուտքից հրապարակ ելավ տաք հոսանքի հետ: Բայց երջանիկ ամուսիններն այնտեղ էլ չէին: Այնժամ մատուցողը գոռաց դատարկ հրապարակով մեկ:

— Գողեր, գողեր, խաբեբաներ...

Ու նրա ձայնը խուլ արձագանք տվեց շրջակա շենքերի ձյունոտ կամարների տակ:

Բացվում էր նոր տարվա առաջին առավոտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Ո՞րն է ամենածանր վիճակը:

Հազար-հազար պատասխան կարող եք տալ, սակայն դրանցից և ոչ մեկը ճշմարիտ չի լինի, եթե... եթե խմբագրության աշխատող չեք:

Ամենածանր վիճակը հեղինակի նյութը մերժելու արարողությունն է:

Ահա կանգնած է քո դեմ, մեկնել է բանաստեղծությունների տետրն ու աչքերը հառել է քեզ: Կարդում ես, իսկ նա քեզ հետ մտքում թերթում է էջերն ու շրթունքներն անձայն շարժելով արտասանում: Բոլորն անգիր գիտի անաստվածը: Ո՞նց էլ անգիր է արել: Ախր սարսափելի վատ ոտանավորներ են: Դժվար է ավելի վատ գրել: Բայց, իհարկե, մերժելն անհամեմատ դժվար է:

— Գիտե՞ք ինչ— ասում եմ, նայելով նրա երկնագույն, վճիտ ու թափանցիկ աչքերին,— ինձ թվում է, թե ձեզ ավելի շատ արձակը կհաջողվի: Սրանք էլ վատը չեն,– անմիջապես ավելացնում եմ, նկատելով նրա ձեռքի սպառնագին շարժումը: Բայց այն չեն, էլի: Այ, փորձեք կարճ պատմվածքներ, նովելներ գրել: Այժմ բանաստեղծությունն առանձնապես...

Հիմա կթողնի ու կգնա:

Չէ՛, նրանցից չէ: Լայն, պայծառ ժպտում է, ձեռքը ձախ ծոցագրպանն է տանում, հանում ու սեղանին է դնում պատմվածքների մի պարունակ:

— Գրում եմ, գրում,— ասում է,— կարդացեք:

Կարդում եմ ու դողում: Հիմա ի՞նչ անեմ: Ո՞ւմ մտքով կանցներ, թե պատմվածքներ էլ կունենա, գոնե մի քիչ, ա՛յ, այսքան՝ պատմվածքի նման լիներ: Գոնե ազգակցական, արյունակցական հեռավոր ինչ-որ կապ ունենար պատմվածքի հետ: Այդ ժամանակ գուցե տպագրեինք «Մեր ընթերցողների ստեղծագործությունները» փրկարար խորագրի տակ: Բայց, չէ, ի՞նչ բարեկամություն, ի՞նչ ազգակցական կապ:Լրիվ որբ են այս ընկերոջ պատմվածքները:

— Գիտե՞ք ինչ,— ասում եմ, աշխատելով չնայել նրան,— մի տեսակ... այսպես... ըը, պատմվածքներ են, այո, հանգեր չկան... Չկան, չէ, ոչ ոք չի կարող ասել թե կան... բայց, բայց մի տեսակ վերլուծականը շատ է: Գուցե փորձեիք գրախոսական...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Նկատելով, որ նա ձեռքը սառնասրտորեն աջ ծոցագրպանը տարավ, ես գունատվեցի ու վայրկենապես փոխեցի մտադրությունս:

— Չէ, չէ, ոչ թե գրախոսական այլ թատերական ռե-ցե...

Նրա ձեռքն արդեն անդրավարտիքի ձախ գրպանում էր: Եվս մի ակնթարթ և...

— Ոչ, ակնարկ, ակնարկ, ահա թե ինչ, ձեզանից ակնարկագիր կստաց...

Բայց սա արդեն մղձավանջ է: Հիմա նա անդրավարտիքի աջ գրպանից կհանի ու...

Հետագա մի քանի վայրկյանների ընթացքում համոզվեցի, որ ակամա՝ տիկնիկային թատրոնի դերասանի վտանգավոր ուղիով եմ գնում: Արագորեն նշմարելով նրա ձեռքի շարժումները, ես նոր խնդիրներ էի առաջադրում պատուհաս հեղինակին և ստանում վայրկյանական ռեակցիա:

— Առակ...

Ձեռքը պիջակի արտաքին ձախ գրպանում է:

— Ֆելիետոն...

Աջ գրպանում է:

Ուշադիր հետևում եմ: Այլևս գրպան չի մնացել: Ահա, հիմա կհաղթեմ: եվս մի հարված: Բայց ինչո՞վ, ինչո՞վ: Է՞լ ինչ հանձնարարեմ: Հիմա եմ զգում, թե որքան ծանր է եղել այն թագավորների վիճակը, որոնք իրենց համար վտանգավոր մարդկանց ուղարկել են անմահական խնձոր, հազարան բլբուլ կամ թևավոր ձի բերելու: Այսպիսի մարդը ձին անդրավարտիքի փոքր գրպանից էլ կհանի: Ա՜խ, ինչպես էի մոռացել: Այդ գրպանիկը դեռ կա: Բայց, լավ, ի՞նչ կարող է նա պահել այնտեղ: Սպասիր, գտա:

— Վեպ պիտի գրես, վեպ, ահա թե ինչ: Մեծ, ընդարձակ, հարյուր մամուլանոց մի վեպ,— ասացի ես, հուսահատորեն նրա անդրավարտիքի փոքրիկ «պիստոնչիկ» գրպանիկին նայելով:

Նա աջ ձեռքի երկու մատը դանդաղորեն դեպի գրպանիկն է տանում: Եթե երկու մատով հարյուր մամուլանոց վեպ հանեց այդ գրպանիկից, ես տեղն ու տեղն ինքնասպանություն կգործեմ,

Դրանից հետո այլևս ապրել չարժե:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԹՈՒՅՆԻ ԿԱԹԻԼՆԵՐ

Հնուց ի վեր ամենաանպատիվ, արհամարհելի, նզովքի արժանի արարքը համարվել է գուժկանությունը: Գուժկան, բոթաբեր մարդկանց անվանել են ագռավ, բայղուշ, բվեճ: Նրանց տեսնելիս անիծել են, փոխել են ճանապարհը, խաչակնքվել են: Իսկ թագավորներն իրենց անսահմանափակ իշխանությունից օգտվելով, հրամայել են կտրել այն մարդու լեզուն, որը համարձակվել է տեղ հասցնել բոթը, ահագուժել, հրամայել են սպանել գուժկանին, որ եկել կանգնել է թագավորի առաջ ու հայտարարել.

— Իմացած լինես, որ քո թշնամին հարձակվել, գրավել է քո քաղաքները, գլխատել է եղբորդ, անարգել է ծնողներիդ գերեզմանը...

Եվ, իմ կարծիքով, այս հարցում թագավորները ճիշտ են վարվել:

Վատ լուր հաղորդելը սոսկալի ծանր պարտականություն է և, ուրեմն, այն պետք է կատարել զգուշորեն, նրբությամբ, մեծ տակտով: Թող տարօրինակ չթվա, բայց վատ կամ տխուր լուր հաղորդողը նախ և առաջ պետք է դրա իրավունքն ունենա, բոթն ստացող մարդու մտերիմը լինի, բարեկամը, հարվածը կասեցնողը լինի ու մեղմողը: Այլապես, շատ ավելի լավ է, որ մարդ չիմանա էլ, թե ինչ է պատահել իրեն, եթե դժբախտությունը կանխելն ուշ է արդեն, և դեպքին տեղեկանա բնականոն ընթացքով, իր ժամանակին:

Ընկերներիցս մեկը պատմում է.

Մի օր առավոտ վաղ ինձ արթնացրեց հեռախոսի զանգը: Զարմացա, ո՞ւմ եմ պետք եկել այդ ժամին: Վերցրեցի լսափողն ու ավելի զարմացա. իմ ծանոթ լրագրողներից մեկն էր, որ երբևէ ինձ զանգահարած չկար:

— Բարի լույս:

— Բարի լույս: Այս ժամին...

— Զարմացա՞ր, որ զանգ եմ տալիս: Չէի կարող չզանգահարել: Գիտե՞ս ինչ է եղել:

— Ի՞նչ է եղել:

— Այ մարդ, քո մասին մի զզվելի նյութ է տպագրվել մեր թերթում:

— Ի՞նչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Դե, իհարկե, կատակում է:Ի՞նչ պետք է գրեն իմ մասին: Բայց ի՞նչ կարիք կա կատակելու այս ժամին: Սիրտս տհաճ, անհանգիստ բաբախում է:

— Չէ, ի՞նչ կատակ,— նույնիսկ նեղացած հայտարարում է ծանոթս,— գրել են ու այն էլ շատ կոպիտ, նույնիսկ քաղաքական մեղադրանքներ կան: Ուզո՞ւմ ես կարդամ...

Ու, առանց սպասելու, կարդում է, կարդում է՝ շեշտելով ամենավիրավորական բառերը, կարդում է մի տեսակ բավականությամբ, ասես արտասանում է, ասես հենց ինքն է գրել: Կոկորդս սեղմվում է, ցավում է սիրտս, զայրույթից խեղդվում եմ: Ոչ միայն գրածի համար, չէ, գրածը զրպարտություն է և կհերքվի, ինձ ավելի շատ վշտացնում ու բարկացնում է այդ իմ ծանոթի դերը, առույգ տրամադրությունը, առոգանությունը:

— Հետո՞,— հարցնում եմ:

— Էլ ի՞նչ հետո:

— Կարո՞ղ եմ այնպես անել, որ դա չտպագրվի:

— Ո՞նց թե չտպագրվի,— նույնիսկ ծիծաղում է նա,— արդեն տպագրված է: Թերթից եմ կարդում: Նոր բերեցին:

Քիչ է մնում հայհոյեմ:

— Ուրեմն, ինչո՞ւ ես առավոտ շուտ արթնացնում: Որ աչքալուսա՞նք տաս, որ շնորհակալությո՞ւն հայտնեմ: Կգնայի աշխատանքի՝ կիմանայի: Ինչո՞ւ ես շտապում, ինչո՞վ ես օգնում ինձ, ի՞նչ մարդ ես դու...

Նա ասես թե շփոթված ու վիրավորված ինչ-որ բան է քրթմնջում «ուշադրության», թե «լավության» մասին, բայց ես նետում եմ լսափողը և արդեն թունավորված եմ:

Եվ դեռ «բարի լույս» է ասում՝ տհաճ, ցավեցնող լուրը հայտնելուց առաջ: «Բարի լույս»: Ի՞նչ բարի լույս, երբ լույս-առավոտն արդեն խաթարված է, երբ ցնցված ու գրգռված շտապում ես թերթ գնելու, չես լսում կնոջդ խոսքերը, կոպտում ես երեխաներիդ ու չես պատասխանում հարևաններիդ «բարի լույս»-ին:

Եվ իրոք, ի վերջո, ի՞նչ նպատակ ուներ նա, ի՞նչ նպատակ ունեն նրա նմանները, երբ շտապում են ժամ առաջ դառն ու չար լուրեր հաղորդել, թունավորել մարդկանց:

Բայց սա դեռ ամենավատը չէ, սա դեռ, ինչպես ասում են, փոքրագույնն է չարյաց: Նույնիսկ առարկողներ կլինեն, կասեն՝ մեծ բան չէ, մարդը եղածն է հայտնում, կասեն միևնույնը չէ՞,

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

վաղ թե ուշ իմանալու էիր: Եվ նրանք, գուցե, որոշ չափով իրավացի են: Բայց ի՞նչ ասես ոմանց, որ չեղած բանն են հայտնում քեզ, հորինում են, իրենց մտքերը վերագրում ուրիշին, բամբասում…

Խաղաղ, պայծառ կիրակի է: Երեխաներիդ թևից բռնած, ուրախ ծիծաղով, կատակով մանկական այգի ես գնում: Թվում է՝ ոչ մի բան չի կարող փչացնել տրամադրությունդ: Բայց ահա հանդիպում է մեկը.

— Օ, ողջույն, ողջույն, սրանք քո՞ երեխաներն են:

— Իհարկե,— զարմանում ես դու:

— Յա,— ապշում է ծանոթդ,— բա ասում էին լքել ես երեխաներիդ:

— Ե՞ս, ո՞վ է ասում, այ քեզ հիմարություն:

— Ասում են, էլի, լեզվի տակ հո ոսկոր չկա: Ասում են, թե հեռացել ես տնից, երեխաներիդ ալիմենտ չես տալիս, դատարանում ծեծել ես կնոջդ, մանր խուլիգանության համար…

— Բայց ո՞վ է ասում, ո՞վ է ասել, ո՞վ է…

— Ո՞վ էր, է, սպասիր, չէ, չեմ հիշում: Դե դա ի՞նչ կարևոր է, տեսնում եմ, որ ամեն ինչ լավ է, դե, ապրես, ապրես…

Թփթփացնում է ուսիդ, հեռանում, և հանկարծ դու զգում ես, որ լավ տրամադրությունից հետք անգամ չի մնացել: Քայլում ես ու մտածում՝ ո՞վ այդպիսի զրպարտություն տարածած կլինի, հերթով մտաբերում ես քեզանից որևէ հարցով դժգոհ ծանոթներիդ, զայրանում ես, խոսում ինքդ քեզ, վիճում և… մնաս բարով, լավ տրամադրություն, ծիծաղ ու կատակ, մնաս բարով, մանկական այգի: Իսկ այդ «ծանոթիդ» հենց այդքանն էլ հարկավոր էր:

Զարմանալի է, բայց կան մարդիկ, որ տանել չեն կարողանում ուրիշի երջանկությունը, խաղաղ, հանգիստ կյանքը, նրանց թվում է, թե իրենցից պակասում է ինչ-որ բան, երբ դու ուրախ ես, գոհ ես, որ դու նրանց հաշվին ես աշխատանքում առաջ գնում, արժանանում պարգևի ու խրախուսանքի, որ դու նրանց փոխարեն ես ապրում ու շնչում:

Եվ սկսում են, գործի են դնում թույնի կաթիլները… Քիչ-քիչ, թեյի գդալով: Տարիներ շարունակ աշխատում ես մեկի հետ, նստում նույն սենյակում, միասին նախաճաշում: Բնավորությունդ, սովորություններդ, կյանքդ անգիր գիտի: Բայց մի օր էլ հանկարծ (հատկապես, երբ քեզ լավ ես զգում) հարկ է համարում բացականչել.

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Հա, մոռացա ասել: Երեկ տրոլեյբուսով կայարան էի գնում, մեկ էլ լսեցի, որ կողքիս աթոռին նստածները քո մասին են խոսում:

— Ի՞նչ էին ասում:

— Ասում էին, թե շնորհքով հաշվապահ է, բայց շատ ագահ է, աչքածակ, բարձր աշխատավարձ է ստանում, երեխա էլ չունի, բայց գյուղի այգու իրենց խնձորները Սիբիր է տանում, որ թանկ գնով վաճառի: Ասում էին, թե իբր եղբորդ երեխաներին փողոց ես նետել ու զավթել նրանց բնակարանը, թե կինդ հուսահատությունից կախել է իրեն… Տեսնո՞ւմ ես ինչ ստոր մարդիկ կան…

— Ովքե՞ր էին,

— Ես ի՞նչ իմանամ, ուղևորներ էին, էլի:

— Լավ, բայց դու հո գիտե՞ս, որ ես բարձր աշխատավարձ չեմ ստանում, որ հինգ երեխա ունեմ, որ քաղաքում եմ ծնվել, որ եղբայր էլ չունեմ, բնակարան էլ…

— Գիտեմ, իհարկե:

— Բա ինչո՞ւ չասացիր նրանց:

— Ե՞ս: Անծանոթ մարդիկ էին, ի՞նչ ասեի: Գլո՞ւխ դնեի հետները:

— Իսկ ինչու ես ինձ ասում: Ես որտե՞ղ գտնեմ նրանց, որ համոզեմ, թե սխալվում են: Եվ, վերջապես, դո՞ւ ինչու ես այդ հիմարություններն ինձ հայտնում:

Եվ միշտ նեղանում են.

— Եղա՞վ: Երբ քո մասին նման բաներ եմ լսում, էլ ո՞ր օրվա ընկերդ ու բարեկամդ եմ, որ չզգուշացնեմ: Դե եկ ու լավություն արա…

Մեկն այսպես, մյուսն այնպես, տարբեր ձևերով ու տարբեր չափերով, սակայն նույն նպատակներով ու նույն անազնվությամբ սրսկում հա սրսկում են թույնի կաթիլները: Եվ նրանց առաջն առնելը գրեթե անհնար է: Անհնար է, որովհետև քրեական և ոչ մի օրենսգրքում պատիժ չի սահմանված գուժկանների, զրահակիր զրպարտիչների, առերևույթ ժպիտով ու հոգածությամբ մարդկանց կյանքը թունավորողների նկատմամբ: Անհնար է «գրեթե», որովհետև մի ելք կա միայն, որ բոլորը միահամուռ, մի չգրված օրենքով բամբասողներին, «ուրիշի» ասածը հաղորդողներին, նենգ բանբերներին դիտեն իբրև առաջին դեմք, իբրև ստոր

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

տեղեկությունների աղբյուր և բռնեն հենց նրանց օձիքից, նրանց կանչեն պատասխանատվության:

Թեև, իհարկե, ամենաճիշտն այս հարցում՝ հին թագավորների դիրքն է եղել երևի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆՎԵՐԸ

Նոր տարվա առավոտ է: Կինը լավ տրամադրությամբ՝ երգի տակտով շարժվում է սենյակում, դասավորում սեղանը: Հայտնվում է ամուսինը, նա նույնպես ուրախ է, մոտենում է կնոջը:

— Բարի լույս, և նորից շնորհավոր նոր տարիդ:

— Շնորհակալություն, քո նոր տարին նույնպես, և շնորհակալություն ուշադրության համար:

— Բայց չկարծես, թե ամուսինդ այնքան անշնորհք է, որ չի մտածել որևէ նվերով նշել այս նոր տարին: Գիտես, որ ես միշտ կարողացել եմ, թեկուզ երեք ռուբլիով, գոնե մի մեխակ բերել քեզ:

— Գիտեմ, սիրելիս, գիտեմ...

— Բայց այսօր ոչ միայն մեխակ, այլև աշխարհի բոլոր ծաղիկներն էլ եթե բերեի, ինչպես գուսան Աշոտն է ասում «Հազար ծաղիկ թե որ ինձ տան, յար առանց քեզ ինչի՞ս է պետք,,,», դու այնքան չէիր ուրախանա: Քեզ ուրիշ նվեր եմ տալու այսօր:

— Ի՞նչ նվեր, Բագրատ ջան:

— Չէ, այդքան շուտ ասողը չեմ:

— Ի՞նչ, ի՞նչ, Բագրատ ջան:

— Դե ասա, դու ինձ սիրո՞ւմ ես:

— Ուու, նո՞ր պետք է ասեմ: Ի նչ, ի՞նչ:

— Չէ, ասա, սիրո՞ւմ ես, սիրո՞ւմ ես:

— Դե, սիրում եմ, դե ասա, սիրում եմ... ի՞նչ, ի՞նչ...

— Վարդ, օդ, լազուր, գետակ, արև...

— Չհասկացա: Ի՞նչ:

— Ակրոստիկոս արա,— հրճվանքով բացականչեց ամուսինը, — առաջին տառերն ասա:

Կինը սկսեց մտածել, և դա հաջողվեց նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Վ... ռ... լ... գ... ա... Վոլգա՞, ճամփորդության ենք մեկնելու Վոլգա գետո՞վ, Բազրատ ջան:

— Ոչ, ոչ, մեր «Վոլգայով» ենք ճանապարհորդելու, անուշս, մեր «Վոլգայով», բաա՞, այդպես կզարմանաս: Պատկերացնո՞ւմ ես, թաքուն հերթի էի գրվել, հերթս հասել է, ուզում էի քեզ անակնկալ մատուցել: Եվ ահա «Վոլգա»… Ահա քեզ նոր տարվա, իմ նվերը...

— Կատակո՞ւմ ես:

— Ի՞նչ կատակ, ազնիվ խոսք: Պատկերացնո՞ւմ ես, ես նստում եմ ղեկի մոտ, դու նստում ես կողքիս, իսկը, իսկը այն անեկդոտի նման. «Մարդ պիտի նստի քովս» հա, հա, հա, իսկ երեխաները…

— Ո՞ւմ երեխաները:

— Մեր երեխաները, ո՞ւմ:

— Իմ երեխաներն այդ մեքենան չեն նստի:

— Վախենո՞ւմ ես, չկասկածես, վարորդական իրավունք ունեմ: Ուրեմն, ես կնստեմ ղեկի մոտ, իսկ դու կողքիս... Հա, իմիջիայլոց, դու ո՞ր գույնն ես սիրում, տարբեր գույներ կան, միասին կգնանք, կընտրենք ամենալավ գույնի մեքենան…

— Հա, հա, ես գիտեմ, թե ով կնստի կողքիդ:

— Դու, ո՞վ...

— Չէ, չէ, ես լավ գիտեմ… «Վոլգա»… իբր մինչև հիմա շատ էինք երեսը տեսնում, հիմա էլ «Վոլգա» է առնում, երանի մեզ, էլ ի՞նչ հոգս ունեմ, ամուսինս սրանից հետո «Վոլգա»-ով է ման գալու: Դե գնա գտիր…

— Վայ, վայ, վայ, ինչեր ես ասում... Մի լավ գույնի մեքենա կառնենք, ամառը միասին կնստենք ու...

— Ո՞ւմ հետ կնստես, ոտքով ման գալուց հոգնել եք, հա՞:

—Ո՞վ...

— Դու շատ լավ գիտես, թե ով, ինձ միամիտի տեղ ես դրել, հա՞: Գնա նոր տարվա առթիվ նրան ուրախացրու, նրան…

— Ո՞ւմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Դու լավ գիտես, թե ում... «Վոլգա»... իհարկե, մինչև հիմա ամաչում էիր նրանից, որ տաքսիով էիր զբոսանքի տանում:

— Ումի՞ց...

— Դու լավ գիտես ումից: Հոլովներով է խոսում. ով, ում, ումից: Ուրախացնելու բան գտավ, քանի ես ողջ եմ, այդ «Վոլգա»-ն մեր տունը չի մտնի:

— Վայ, անուշ ջան,— փորձեց կատակել ամուսինը,— ՝«Վոլգան» իհարկե տուն չի մտնի, մի լավ թիթեղյա տնակ կդրնենք բակում...

— Ուրեմն դեռ ծաղրում ես, հա՞, ուրեմն իմացիր, կամ «Վոլգան», կամ ես...

— Դու՝ «Վոլգան» քո մեջ: Թյու, խելքս թռցրել եմ, «Վոլգան», դու էլ մեջը:

— Ոչ, ոչ, ոչ...

— Այո, այո, այո , կգնեմ ամենալավ գույնի մի ավտոմեքենա...

— Գնա, գնա այն աղջկան ասա...

— Հիմար բաներ ես ասում... Ուրեմն կգնամ, ամենալավ գույնի մի աղջիկ կառնեմ...

— Այ ապրես, հիմա սրտինդ ասացիր, ի՞նչ գույնի աղջիկ: Գուցե միասին ընտրենք... Հը՞, գուցե կապույտ աղջիկ՝ «Ակաթի ու կաթի պես հոգեթով», հա՞ ...

— Ի՞նչ աղջիկ, լավ, լավ, մի տեղանոց մոտոցիկլետ կառնեմ, պրծա՞նք...

— Նրան էլ ուսիդ կտանես, չէ՞ ... ձևը կգտնես...

— Լռիր:

— Չեմ լռի, այսօր չեմ լռի,— լաց եղավ կինը,— նոր տարի է, դու պետք է լռես...

— Այս տարի՞ էլ,— տխուր-տխուր հարցրեց Բագրատը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՂԵՔ ԶԳՈՆ

— Հարգանքներս:

Նա փութկոտ քայլերով խմբագրություն մտավ, ձեռքի ամեհի պայուսակը դրեց սեղանին, բացեց, միջից հանեց մի գիրք, կազմը ետ տարավ ու հիմնարկի պետի նման շեղակի սկսեց ինչ-որ բան գրել...

Անհնար էր չնայել նրա գրածին:

«Շատ սիրելի բարեկամիս, մեր գրականության լուսարձակին, մեծ հոգու տեր մարդուն և սրտակից ընկերոջս»...

Հետո բարձրացրեց գլուխն ու...

— Ներեցեք, Ձեր ազգանունն ինչպե՞ս է,— հարցրեց:

Ասացի: Ավելացրեց: Պատվոգրի նման՝ ձախ ձեռքով գիրքը մեկնեց ինձ, աջով սեղմեց ձեռքս ու ամեհի պայուսակը ձեռքին հեռացավ՝ նոր ազգանուններ որոնելու:

Գալիս է եղեք զգոն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳԻՐՔ ՏԱՄ, ԳԻ՛ՐՔ...

Քննադատներն ամենաբախտավոր մարդիկ են: Եթե սովորական մահկանացուներն իրենք են մաշում գրախանութների շեմքը՝ այս կամ այն գիրքը ձեռք բերելու համար, ապա քննադատներն, ինչպես ասում են, մատը-մատին չեն խփում: Իրենք՝ գրողներն են իրենց գրքերը բերում նրանց, հոգածությամբ ուղղելով վրիպակները ու առաջին էջում ոսկեզօծ տառերով գրում. «Մեր ժամանակների Վիսարիոն Բելինսկուն, Նիկոլայ Չերնիշևսկուն և Ալեքսանդր Դոբրոլյուբովին: Իմ միակ, իմ ամենասիրելի, ամենաօբյեկտիվ, ամենախորամիտ, ամենաանկաշառ… ամենասկզբունքային քննադատին: Հավերժ քո՝ Հեղինակ»:

Դե, ասեք, ո՞ր սիրտը կարող է դիմանալ սիրո այսպիսի վառ, այսպիսի ջերմ ու անկեղծ արտահայտության: Նույնիսկ քննադատն էլ չի կարողանում դիմանալ: Հետո՞ ինչ, որ քննադատ է: Նա էլ մեզ նման մանուկ է եղել, սիրտ ունի, չէ՞:

Եվ Երևանի տարբեր փողոցների տարբեր բնակարաններում, լուսամփոփի գունատ լույսի տակ՝ գրողների սիրո խոստովանությունները կարդալով, մեր օրերի բելինսկիները, չերնիշևսկիները և դոբրոլյուբովները թախծում ու հառաչում են:

Ի՞նչ անել:

Առաջ քննադատներն էին գրողներ որոնում, դարանակալում էին բանուկ խաչմերուկներում, պարահանդեսների գնում և ձիակառքի մրցումների, նույնիսկ մենամարտի էին կանչում գրողներին, որպեսզի կարողանան գեթ մի քանի րոպե զրուցել նրանց հետ և ինքնագրով գիրք ստանալ: Իսկ հիմա... Հիմա «Ես քեզ բռնեցի, այժմ դու՝ ինձ» մանկական խաղի սկզբունքով գրողներն են սկսել գրոհել քննադատներին: Եվ քննադատները խուճապի մեջ են: Նրանք քայլում են մութ ու նեղլիկ փողոցներով, արագ ու երկչոտ քայլերով, կասկածով անընդհատ չորս կողմն են նայում, լարված սպասելով, թե ուր որ է նրբանցքից կամ փակուղուց կհայտնվեն գրողներն ու կսկսեն.

— Հարգանքներս, օ հրաշալի քննադատ: Բարեկամս, ահա իմ գիրքը: Ամբողջ սիրով նվիրում եմ քեզ: Մեջը մանրամասն գրել եմ: Միայն մի փոքրիկ խնդրանք: Ուզում եմ, որ դու գրես գրախոսականը: Մի քանի տող, հա՞: Կգրե՞ս: Շատ եմ խնդրում: Դոբրոլյուբովն ուզեց՝ չտվեցի: Նրա ոճն ուր, քոնն ուր...

— Ընկեր Դոբրոլյուբով, իմ մեծ բարեկամ... Գիրքս... Միայն դու… Գրախոսական… Բելինսկին… Ես նրան գի՞րք... մի փոքրիկ, հա՞, այ այսքան... քո ձեռքով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Գիրք տամ, գիրք,— խմբագրությունների միջանցքներում գոչում են Բելինսկուն ու Դոբրոլյուբովին անծանոթ ուրիշ առանձին և որոշ գրողներ,— գրախոսականով… փոխում եմ: Լավ գիրք:

— Հին շոր, հին կոշիկ, պոպոքով,— արձագանքում են նրանց հավատախոհները՝ մեծ շենքերի բակերում:

Ուրիշները չեն բացականչում, նրանք վստահ քայլերով խմբագրություն են մտնում ու հարցնում:

— Ե՞րբ պետք է գրախոսեք իմ գիրքը: Դեռ չե՞ք հանձնարարել: Զարմանալի բան է, երեք օր է լույս է տեսել, իսկ դուք… պրոֆեսոր Նարինյանը դրական իմաստով ցնցված է, իսկ դուք…

— Գիտե՞ք ում հանձնարարեք,— ասում է մի ուրիշ, առանձին հեղինակ,— լավ կլինի, որ գրախոսականը Մացակը գրի: Պետք չէ պրոֆեսոր Սանթրոսյան լինել, կռահելու համար, որ Մացակը նրա ընկերն է:

— Իսկ ինչո՞ւ Մացակը, գուցե հենց դուք գրեք, հը՞:

— Ճիշտ որ, լավ գաղափար է,— հեգնանքի կողքով անվտանգ սահելով, ասում է այդ մի ուրիշը, — հենց ես էլ կգրեմ, ինձնից լավ ո՞վ կհասկանա իմ գիրքը:

Չէ, քննադատները կարծես թե ամենաբախտավորները չեն: Նրանց անձեռնմխելիությունը լուրջ սպառնալիքի տակ է: Եթե այլևս ոչ մի ելք չունենալով, գրախոսական են գրում ու տանում խմբագրություն, դա դեռևս ազատագրություն չէ: Ընդհակառակը, նրանք իրենց հետ խմբագիրներին էլ են կանգնեցնում տառապանքի սյունի տակ:

— Գրախոսականը բերե՞ց,— հարցնում է հեղինակը:

— Բերեց,— ասում է խմբագիրը:

— Հապա, մի տվեք կարդամ,— ասում է հեղինակը:

— Ինչպե՞ս թե տամ կարդաք— հարցնում է խմբագիրը: Դա խմբագրական գաղտնիք է:

— Գաղտնի՞ք: Այդ ումի՞ց: Ինձնի՞ց եք գաղտնիք պահում: Իմ գրքի վերաբերյալ բան եք տպագրում ու ինձնից պահո՞ւմ: Դա, դա, դա… Ի՞նչ բարքեր են: Ես կբողոքեմ: Ես… լավ, շատ եմ խնդրում, նայեմ, հա , հեռվից: Բա ընկերներ չե՞նք, հը՞… թաքուն ցույց տուր, հա՞:

Բայց խմբագիրներն այլևս միամիտներ չեն, չէ՞… խրատվել են: Վերջերս գրողներից մեկը մի թերթի խմբագրի խնդրել է միայն մի րոպեով, հեռվից նայել իր գրքի վերաբերյալ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

գրախոսականին («Միայն մի վայրկյան, հա՞, շատ եմ խնդրում»): Ու երբ պարզասիրտ խմբագիրը գրախոսականը հանել է դարակից ու բարձրացրել գլխից վեր, հեղինակը մեծագույն վարպետությամբ հեռվից կարդալով (ուրիշ ժամանակ կարճատես է), կռահել է, որ գրախոսականը բացասական է:

— Վա, հարգելի խմբագիր, սա թյուրիմացություն է, ազնիվ խոսք, նա ինձ շփոթել է, ախր ես նրան նվիրած գրքում գրել էի՝ «Իմ ամենա… ամենա… ամենա…»

— Ինչ անեմ, նա էլ սա է գրել,— ձեռքերը տարածել է խմբագիրը :

— Աչտո՞ժ,— ասել է հեղինակը,— որ այդպես է, այդ գրախոսականը տուր ինձ, տանեմ քննադատի մոտ ու բանակցությունների մեջ մտնեմ նրա հետ, հա՞: Հետո էլի կբերեմ, հա՞… ազնիվ խոսք:

Խմբագիրը միայն մի պահ վարանում է, և հենց նույն վայրկյանին գրախոսականը հայտնվում է հեղինակի ձեռքին ու նա «ազնիվ խոսք» զոչելով հեռանում է անորոշ ուղղությամբ:

Որոնումները մինչև այժմ արդյունքներ չեն տվել:

Չէ, քննադատներն այնքան էլ բախտավոր մարդիկ չեն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ

Ամեն ինչի մեղավորը շոգն էր: Երևանն այս ի՞նչ է դարձել, եղբայր: Գարնանն այնպիսի անձրևներ են թափվում, որ թվում է, թե որտեղ որ է՝ ասֆալտը ճեղքելով արմավենիներ դուրս կգան... Իսկ ամառը… Դե, ինչ ասեմ, ինքներդ տեսնում եք, էլի: Մարդ չի կարողանում գարեջրի մի կրպակից մյուսը հասնել: Այնպիսի շոգ է անում, որ ինչպես մեր գրողներից մեկն է ասում՝ ստեպ-ստեպ ոտքերիդ տակ ես նայում, տեսնես հո չե՞ս հալվել-պրծել: Ահավոր բան է, ինչպես պատկերավոր ասում է մեր գրողներից մյուսը:

Եվ ահա, այս ահավոր շոգին, զեկուցումներ կազմակերպող մի հիմնարկ ինձ հանձնարարեց զեկուցում գրել նոր լույս տեսած մի գրքի մասին և, իհարկե, շոշափել նաև հեղինակի կենսագրության առավել նշանակալի կետերը: Հեղինակի կենսագրության մեջ, բարեբախտաբար, շոշափելու բան չկար: Դա մի կյանք էր՝ սերտորեն կապված ժողովների, վեհաժողովների, հանձնաժողովների և ժողովածուների հետ, թեթև ու դատարկ մի կյանք, որի առաջին ածականը երբեք չի կարելի օգտագործել նրա գրքի կողքին: Սոսկալի ծանր գիրք էր: Երկու կիլոգրամ: Ես վճիտ մարդ եմ և երբեք չէի համաձայնի գրախանութից տուն տանել այդ բեռը, եթե զեկուցումներ կազմակերպող հիմնարկի պետը շատ չխնդրեր և ապա՝ չգայթակղեր ինձ:

— Բարձր հոնորար եմ տալիս,— ասաց նա:

— Եվ վերամբարձ կռունկ,— հիշեցրեցի ես:

— Ինչո՞ւ,— զարմացավ նա:

— Գիրքը տուն տանելու համար,— ասացի ես:

Հիմնարկի պետը ծիծաղեց, ոտքերի թաթերին բարձրանալով թփթփացրեց ուսիս և վերամբարձ կռունկի փոխարեն ինձ հատկացրեց հիմնարկի «Վոլգա» ավտոմեքենան, չգիտես ինչու՝ երկար ժամանակ հեռախոսով թույլտվություն խնդրելով իր կնոջից:

Ինձ ավտոմեքենայով չես խաբի, իհարկե, բայց հոնորարի խնդիրը մի քիչ բարդ է: Բանն այն է, որ թեև շատ եմ լսել և ինքս էլ երբեմն ասում եմ «փողը հող է», «փողը ձեռքի կեղտ է» և նման այլ թևավոր խոսքեր ու իմաստուն ասացվածքներ, բայց այդ անտեր հողը չգիտես ինչու միշտ քիչ է լինում իմ գրպանում և կռիվները՝ մի կտոր հողի համար, անպակաս մեր տնից: Այդ և սոցիալ-կենցաղային մի շարք այլ հանգամանքներից դրդված, ի վերջո տուն տարա հինգ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ֆունտանոց գիրքը, դրեցի սեղանիս, մի բարձիկ էլ դրեցի աթոռին, որ նորմալ բարձրությունից կարողանամ նայել էջերն ու սկսեցի կարդալ:

Ինչ ուզում եք ասեք, սակայն մեր մոտ դեռևս լուծված չէ քրեական ծանր հանցանք գործող անձանց պատժաչափի խնդիրը: Ծայրահեղ դեպքում տասնհինգ տարի կամ գնդակահարություն: Գնդակահարություն՝ թրըխկ և վերջ: Հետո՞: Դա եղավ պատի՞ժ: Իմ խորին համոզմամբ, այն դեպքում, երբ գնդակահարությունը ևս չի օգնում, հանցագործին կարելի է պարտադրել կարդալ մեր առնվազն մեկ կիլոգրամանոց վեպերից որևէ մեկը: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչպիսի տպավորություն. հերթական երկարաբեղ հերթապահ միլիցիոները գոչում է. «Ոտքի, դատարանը գալիս է»: Հանդիսավոր քայլերով ներս են մտնում ժողովրդական դատավորն ու ժողովրդական ատենակալները, որոնք, հասկանալի է, մեզ մոտ միանգամայն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Դահլիճն առանձնանում է, և խորին լռության մեջ մետաղաձայն հնչում է դատավճիռը. «Հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության… .այսինչ-այսինչ հանցանքների համար, քրեական օրենսգրքի այսինչ-այսինչ հոդվածներով դուք՝ հանցագործ, դատապարտվում եք պատժի առավելագույն չափի… (այստեղ մեղադրյալը թեթևացած շունչ է քաշում, կարծելով, թե գնդակահարությամբ կպրծնի, բայց դատավորը շարունակում է անայլայլ) դատապարտվում եք կարդալու մեր ժամանակակից համբավամեծ գրողներից մեկի նոր լույս տեսած երկու կիլոգրամանոց գիրքը»: Առանց ժամանակ կորցնելու այդ վայրկյանին պետք է նայել մեղադրյալի դեմքին: Նա սաստիկ գունաթափվում է՝ նուրբ-բրդյա գործվածքեղենի-մահուդի կոմբինատից երկու ամիս առաջ դուրս եկած մահուդի նման, երերում ու բռնում է սիրտը:

— Խնայեցեք, կախեք,— մրմնջում է նա ու զարհուրած տապալվում երկարաբեղ հերթապահ միլիցիոների ոտքերի տակ:

Այդ երևակայական թշվառականի նման ես էլ այլևս չէի ուզում ապրել: Ուզում էի մեռնել: Քսանչորսերորդ էջում արդեն խելագարվում էի՝ հեղինակն ասպարեզ էր հանել վաթսունյոթ անուն-ազգանուն: Այդ անուն-ազգանունները, ավելորդ գլխացավանք չպատճառելու համար, խոսում էին նույն ոճով, նույն բառերով և վաթսունյոթն էլ իրենց միտքը վերջացնում էին նույն լավատեսական տրամադրությամբ՝ «Ես լիահույս եմ»: Տասնհինգերորդ էջում վաթսունյոթն էլ անհետանում էին և հրապարակ էին ելնում ութսունչորս նոր անուն-ազգանուններ: Զարմանալի շատ անուններ ունի մեր ազգը և հեղինակը ճարպկորեն օգտվել էր դրանից: Բայց ամենից շատ ինձ ապշեցրեց նրա ստեղծագործական մեթոդը: Նա հերոսներ չէր փնտրում, նրանք պարզապես հանդիպում էին: Իր ընտանիքի բոլոր տասներկու անդամների կենսագրությունը ներկայացնելուց հետո, հեղինակը հեռախոսով զանգ էր տալիս մի քանի հոգու և տեղնուտեղը պատմում նաև նրանց կենսագրությունը: Դուրս գալով միջանցք և նկարագրելով նաև հարևանների կենսագրությունները, իջնում էր սանդուղքով՝ հերթով նկարագրելով մուտքի հարևանների և նրանց ազգական-բարեկամների կենսագրությունները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Հարյուր վաթսունյոթերորդ էջում փողոց ելնելով, մինչև նրբանցքից դուրս գալը, պատմում էր բոլոր իրեն բարևած մարդկանց կենսագրությունները և աշխատանքի էր գնում ոչ թե տաքսի ավտոմեքենայով (ստիպված կլիներ բավարարվել միայն վարորդի կենսագրությամբ), այլ վաթսունվեց տեղանոց լեփ-լեցուն ավտոբուսով: Երեք հարյուր քառասունիններորդ էջում...

Կնոջս օգնությամբ գիրքը տեղափոխեցի մահճակալիս վրա: Սողալով մտա գրքի տակ, ծնկներով պահեցի ու երբ վաթսունվեցերորդ ուղևորը հեղինակին ասաց. «Գուցե մենք այլևս չհանդիպենք, բայց ես լիահույս եմ», անգիտակցաբար քնեցի: Մղձավանջային քուն էր: Մեկ տեսնում էի, որ հեղինակը գազազած բռնել է օձիքս, թափահարում է ու գոռում. «Պատմիր կենսագրությունդ»: Մեկ էլ՝ իբր ավտոբուսի վաթսունվեց միանման ուղևորները՝ վարորդի կարգադրությամբ ինձ պառկեցնում էին գերեզմանի փոսի մեջ: Ես ճչում էի, աշխատում դուրս պրծնել նրանց ձեռքերից, երբ մեկ էլ հեղինակը մի մեծ գերեզմանաքար գրկած, բերեց-գցեց ինձ վրա: Գոռացի սարսափից ու վեր թռա… Գիրքն ընկած էր կրծքիս:

Ես խեղճ մարդ չեմ, ուրիշ ժամանակ գրողի ծոցը կուղարկեի գրողին էլ, նրա երկու կիլոգրամանոց թուղթն էլ, բայց հիմա չէի կարող: Ամառ էր, շոգ, մեր բոլոր հարևանները ծովափ էին գնացել, իսկ ես հող, այսինքն՝ փող չունեի: Իսկ կինս ասում էր, «Բա ուրիշները…»: Երբ կինդ ասում է «Բա ուրիշնե՛րը», կամ պետք է կնոջդ սպանես, կամ քեզ, այլ ելք չկա:

Ատամներս կրճտացնելով, հիշելով Կամոյին ու Զոյա Կոսմոդեմյանսկայային, կամքի ուժով ստիպված գրեցի գրախոսությունը և ջղայնությունից այնքան գովեցի գիրքը, որ ով լսեր՝ զզվեր:

Գրեցի ուղիղ յոթանասունհինգ էջ ու տարա վերոհիշյալ հիմնարկի պետին:

Հիմնարկի պետն ինձ տեսնելով այնպես զարմացավ, ինչպես հեքիաթներում թագավորներն են զարմանում, երբ չար պառավի խորհրդով անմահական ջրի ուղարկված փեսացուն մեկ էլ հանկարծ վերադառնում է շիշը թափահարելով:

— Բերեցի՞ր,— մրմնջաց նա:

— Բերեցի,— ասացի ես:

— Հիմա ո՞ւմ տանք գրախոսելու,— հարցրեց նա:

— Ի՞նչը,— հարցրեցի ես:

— Գրախոսականը,— ասաց նա:

— Գրախոսականը գրախոսելո՞ւ,— զարմացա ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Սա էլ նոր փորձանք: Ո՞ւմ կարելի է գտնել: Այդ ո՞ր դժբախտն է կարդալու գիրքը՝ գումարած իմ գրախոսությունը: Այդպիսի մարդուն կենդանի-կենդանի պետք է ապակե պահարանում դնես, քորոցով ամրացնես պատին: Եվ, այնուամենայնիվ, հայտնվեց: Ինքն ինչ երազ էր տեսել, չգիտեմ, գուցե նրա կինն է՞լ էր ասել,«Բա ուրիշները…», բայց եկավ: Իսկական գրականագետ :

— Հոգիս,— ասաց նրան հիմնարկի պետը,— պետք է փրկես, բարձր հոնորար կտամ:

— Գրախոսությունն ո՞վ է գրել,— գործնական հետաքրքրվեց գրականագետը:

— Տաճատը,— ասաց հիմնարկի պետը:

— Լավ,— անմիջապես համաձայնեց նա,— կանենք:

«Կանենք»-ը ոճ է: Շատ մարդիկ կան, որ իրենց մասին խոսելիս կամ գրելիս ասում են «մենք»: Դրա համար էլ բոլորովին չանհանգստանալով, իմ ծանոթ գրականագետի նկատմամբ կարեկցության ու չարախնդության խառը զգացումով փողոց դուրս եկա: Դե թող կարդա: Բայց հենց փողոցի անկյունում գրականագետը բռնեց ինձ:

— Տաճատ, — հարցրեց նա, — գիրքն իսկապե՞ս կարդացել ես:

— Իհարկե,— ասացի ես:

— Տաճատ, — ասաց գրականագետը,— մենք հին ընկերներ ենք, դու այն մարդկանցից ես, որին ոչ մի վատություն չեմ արել: Ազնիվ խոսք, չես հավատա, բայց չեմ էլ բամբասել: Արի ինձ վատություն մի արա՝ դու կարդացել ես, հերիք է, ինքդ էլ քո գրախոսության մասին մի գրախոսություն գրիր, բեր՝ ես կստորագրեմ:

— Ինչպե՞ս կարելի է,— վրդովվեցի ես:

— Կարելի է, կարելի է,— հանգստացրեց նա,— հիմա ամեն ինչ կարելի է: Հիմա գրողներից ոմանք իրենք են իրենց գրքերի մասին գրախոսություն գրում և ուրիշի անունով տանում խմբագրությունները, պահանջում, որ տպագրեն: Կարելի է: Իսկ քոնն իսկի գիրք էլ չի, ընդամենը գրախոսություն է:

— Չեմ կարող,— գրպանումս արհմիութենական անդամատոմսս շոշափելով ասացի ես,— դա անազնվություն է:

— Անազնվություն է, ազնիվ մարդ գտիր,—կտրեց նա:

Ազնիվ մարդ գտիր: Հեշտ է ասելը: Իսկ կինս ասում է. «Բա ուրիշները…»: Իսկ բոլոր հարևաններս ծովափում են… Շան որդի, դրա համար էր ասում. «կանենք»: Ոճ է, բա ի՞նչ է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Տուն դարձա սաստիկ բարկացած, հանվեցի, մի կողմ դրեցի արհմիութենական գրքույկս ու գրեցի իմ գրախոսության գրախոսականը: Գրեցի հուզված, տենդագին և, ինչպես հարկն է, մի քանի դիտողություններ արեցի ինքս ինձ: Որ օբյեկտիվության հոտ փչի: Կասեն, թե լրիվ գովել է: Այդպես էլ բարկացած, գրախոսությանս գրախոսությունը տարա, հանձնեցի գրականագետին:

— Ստորագրիր ու տար հանձնիր,— նետեցի արհամարհանքով:

Ա՛յ քեզ լկտի մարդ.

— Իսկ որ դու հանձնես, ի՞նչ կլինի,– ասաց ստորագրելուց հետո,— դու գրել ես, դու էլ հանձնիր:

Մի կերպ համոզեցի, ամաչում եմ, բայց նույնիսկ աղերսեցի: Փափկեց, տարավ:

Իսկ մի քանի օր հետո ես գնացի: Հիմնարկի պետը «Ջերմուկ» էր խմում:

— Գիտես ինչ,— ասաց նա,—— գազ չունի: Բայց ի՛նչ գլուխ ունի մեր գրականագետը: Ոնց է գրել: Չկարողացա իոսքիցս դուրս գալ, իսկապես շատ բարձր հոնորար տվեցի:

— Ուրեմն լա՞վ է,— շոյված ինքնասիրությամբ, բայց հոնորարի հիշատակությունից քիչ գունատված հարցրեցի ես:

— Հիանալի է: Վերցրու, ծանոթացիր: Ինչ ասեմ: Իհարկե, ցավալի է, բայց ոչինչ անել չենք կարող: Այնպիսի էական դիտողություններ է արել, որ նման վիճակում ձեր գրախոսականն ընդունել հնարավոր չէ:

Ես դեռ ժպտում էի, հետո միանգամից զգացի, որ կործանվում եմ:

—Ինչպե՞ս թե, իմ գրախոսության գրախոսականը ընդունել եք, իսկ իմ գրախոսությունը... գրախոսականի... գրախոսականը... ես օբյեկտիվության համար...

Ի՞նչ անեմ, ինչպե՞ս ասեմ, որ ես եմ գրել, որ ես եմ ինքս ինձ... Որտե՞ղ գտնեմ նրան... Հիմա ծովափում կլինի, հեղինակի հետ: Իսկ կինս ասում է՝ «Բա ուրիշները... »:

Եվ ո՞վ է տուժում, հա-հա: Այդ գրքի միակ ընթերցողը: Միակ, դժբախտ ընթերցողը: Ընթերցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄՆԱՑԱԾԸ ԴԱՏԱՐԿ ԲԱՆ Է

Մարդ պիտի բախտ ունենա:

Որ բախտ չունեցար, մնացածը դատարկ բան է: Մեր կադրերի տեսուչ Սահակը երևի հոգեկան խռովքի պահին, իմ աչքի առաջ ամբողջ կես ամսվա աշխատավարձը տվեց և պատմական հուշարձանների պաշտպանության վիճակախաղի հարյուր տոմս գնեց: Ձեռքին մնաց մեկ ռուբլի: Մտածեց-մտածեց, մի տոմս էլ գնեց ու տեղնուտեղը նվիրեց մեր գլխավոր հաշվապահին:

Իհարկե, արդեն կռահում եք, թե ինչ եղավ:

Սահակի հարյուր տոմսերը ոչինչ չշահեցին, իսկ գլխավոր հաշվապահը շահեց «Վոլգա» ավտոմեքենա, որի կարիքը չուներ, որովհետև իր ունեցած «Վոլգան» էլ փողոցում էր կանգնեցնում: Նրա ապերախտ որդին զավթել էր հոր ավտոտնակը և այնտեղ իր «Մերսեդեսն» էր պահում:

Ինչ աներ խեղճ մարդը... ստիպված, ուղղակի հուսահատությունից խեղդվելով, շուկայական գնով վաճառեց շահած «Վոլգան»:

Այնպես որ... մնացածը դատարկ բան է:

Իհարկե, հարյուր տոկոսանոց անբախտ մարդիկ չեն լինում, անբախտությունն էլ իր ոլորտներն ու գոտիներն ունի: Մեկն, օրինակ, կնոջ գծով է անբախտ, մյուսը՝ հիմնարկի պետի գծով, երրորդը՝ նարդու գծով և այլն, և այլն...

Այ հենց այդ «և այլն»-ի մեջ է մտնում իմ անբախտությունը: Ես էլ անբախտ եմ լուսանկարչության գծով: Այսինքն, ես երևի միակ մարդն եմ, որ այս ծեր հողագնդի վրա ոչ մի լուսանկար չունեմ: Ոչ մի: Թեև արդեն քառասուն տարեկան եմ:

Հիմա կհարցնեք, բա անձնագիրը՞:

Կասեմ: Եվ հենց ամեն ինչ սկսվեց այդտեղից:

Ծնվել ու մեծացել եմ լեռնային հեռավոր մի գյուղում, որտեղ անձնագիր գոյություն չուներ, և ուրեմն չկար նաև լուսանկարի կարիք: Երեսուն տարեկան էի, երբ քաղաք եկա, և անձնագրի լուսանկարի համար մտա առաջին իսկ պատահած լուսանկարչատունը: Մի քիչ վախենում էի, հատկապես աչքերիս ընկած լույսից, բայց ամեն ինչ հաջող անցավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Մի շաբաթ հետո եկա, որ ստանամ նկարները: Լուսանկարիչը մի մեծ կույտ փայլուն թղթեր հանեց ու մեկ ինձ, մեկ այդ թղթերին նայելով սկսեց փնտրել: Եվ երևի գտավ, որովհետև ինձ մեկնեց, ինչպես ասում են, ոտ ու գլուխ նկարված երկու թերթ: Նայեցի ինձ նայող դեմքերից մեկին, հետո շրջեցի ու նայեցի մյուս կողմից, հետո առանձին-առանձին նայեցի բոլոր այդ ութ դեմքերին ու մրմնջացի:

— Սա ե՞ս եմ:

— Բա ո՞վ է,– հարցրեց լուսանկարիչը:

Չեմ ասի, թե ես չգիտեմ ինչ եմ: Սովորական մարդ եմ: Իսկ այդ նկարի մարդու աչքերը շիլ էին: Մազերն իմն էին, բերանն ու քիթը իմն էին, բայց աչքերը...

— Ընկեր,— ասացի ես, — խնդրում եմ ուշադիր ինձ նայեք: Ես շի՞լ եմ:

— Բա ի՞նչ ես,— ասաց լուսանկարիչը: Վերցրու և տուր իմ երկու ռուբլին:

Հանկարծ զգացի, որ կաթված եմ ստանում...

— Ուրեմն երեսուն տարի շիլ չեմ եղել, հիմա՞ շլացա:

— Ա՛յ ընկեր, դու հո փորձանք չե՞ս,— բարկացավ լուսանկարիչը: Ես ֆոտոգրաֆ եմ, հասկանո՞ւմ ես: Հո յուղաներկով չե՞մ նկարում: Ինչ որ կաս, էն է դուրս գալիս:

— Ուրեմն դուրս է գալիս, որ ես շի՞լ եմ:

— Իհարկե,— ասաց լուսանկարիչը:

— Եթե ես շիլ լինեի, երեսուն տարվա մեջ մեկն ինձ չէ՞ր ասի:

— Գուցե թե խնայել են, ես ի՞նչ իմանամ,— ասաց լուսանկարիչը: Վերցրու քո նկարները և տուր իմ երկու ռուբլին:

— Չեմ տա,— ասացի ես,— սրանք իմ նկարները չեն:

— Քոնն են ու շատ էլ նման են:

— Իմը չեն:

— Երկու ռուբլին...

— Չեմ տա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Լուսանկարիչը հանկարծ վեր թռավ տեղից ու բռնեց ձեռքս:

— Արի գնանք, — ասաց նա սպառնալի:

Չհասցրեցի հարցնել, թե ուր: Նա ինձ գրեթե քարշ տալով փողոց տարավ:

— Ընկերուհի, ընկերուհի, — ձայնեց անցնող մի կնոջ,— խնդրեմ նայեք, այս քաղաքացին շլդիկ չէ՞:

— Ի՜նչ եք անում, պետք չէ,— խնդրեցի ես:

— Հայրիկ, հայրիկ,— ձայն տվեց մի ուրիշ անցորդի, մի րոպե, այս քաղաքացին շլդիկ չէ՞:

— Լավ, լավ,— հանձնվեցի ես,— երկու ռուբլու համար ինձ խայտառակ մի արեք: Շլդիկ եմ, շլդիկ եմ,— բղավեցի ես,— վերցրեք ձեր դրամը, ի սեր աստծո...

— Թե չէ՝ եսի՞մ,— բավարարված ժպտաց լուսանկարիչը:

Անձնագրի համար հորեղբորս նկարը տարա: Այդ օրվանից մինչև այսօր լուսանկարչատուն չեմ մտել և երբեք չեմ անցնում այն մայթով, որտեղ լուսանկարչատուն կա: Վախենում եմ: Ինչ ուզենան՝ կանեն:

Նկարվելու հազար առիթ է եղել: Փախել եմ: Հաստատ համոզված եմ, որ եթե նկարվեմ, աչքերս շիլ են լինելու: Կամ գուցե իսկապե՞ս շիլ են: Չէ, եթե շիլ լինեին, մի՞թե մեկը չէր նկատի: Այսինքն՝ գուցե խնայո՞ւմ են: Է, հիմա ո՞վ է ում խնայում...

Չէ, մարդ պիտի բախտ ունենա: Մնացածը դատարկ բան է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԸ

Մոր եփած ճաշից համով բան աշխարհում չկա:

Ու պատահական չէ, որ մարդիկ հյուրասիրության ժամանակ առաջինը նկատում եվ ընտրում են այն կերակուրները, որ ծանոթ են իրենց մանկուց:

Մոր եփած ճաշից համով բան աշխարհում չկա:

Խղճի դեմ չգնամ, իմ կինն էլ է հիանալի ճաշեր եփում: Մի անգամ առողջարանում ինձ բուժող բժշկուհին նույնիսկ երկար զրույց ունեցավ նրա հետ:

- Եթե ուզում եք, որ ձեր ամուսինը նիհարի եվ առողջ մնա, -ասաց նա,-անհամ ճաշեր եփեք:

- Ի՞նչպես թե անհամ,- զարմացավ կինս:

- Անհամ, անհամ,- հաստատեց բժշկուհին,- սա այն դեպքն է, որ ինչքան վատ, այնքան լավ: Այդ թեմայով նույնիսկ հետաքրքիր դիսերտացիա կա:

Սակայն այդ հետաքրքիր դիսերտացիան չօգնեց մեզ: Ինչ արեց-չարեց խեղճ կինս չկարողացավ անհամ ճաշեր եփել: Եվ նա մեղավոր չէր: Այլ կերպ ինչպե՞ս կլիներ: Այդ նույնն է, թե անհամ կերակուր եփողին խորհուրդ տաս, թե այսուհետեվ համով եփիր:

Եվ այնուամենայնիվ կնոջս խոհանոցում կար մի ճաշատեսակ, որը չէր ստացվում: Խոսքս վերաբերում է տապակած կանաչ լոբուն: Զարմանալի բան է, շատ ավելի բարդ կերակուրներ հոյակապ ստացվում էին: Ասենք՝ տոլման, էջմիածնի բոզբաշը կամ կճուճով չանախը: Իսկ լոբին չէր ստացվում:

- Մի նեղանա, Գոհար,- ափսեն մեղմորեն մի կողմ հրելով, ասում էի ես,-բայց այն չէ:

- Ախր ի՞նչը այն չէ,- վշտանում էր Գոհարը:- Ի՞նչը այն չէ՞:

Չգիտեմ,- ասում էի ես,- բայց մայրս այս ճաշը ուրիշ տեսակ էր եփում:

- Ինչ տեսակ, ասա, ես էլ փորձեմ,- համառում էր Գոհարը:

- Չգիտեմ,- ասում էի ես:-Չգիտեմ, Գոհար: Բայց նրա տապակած լոբին ուրիշ համ ուներ: Մի տեսակ...Մի խոսքով, բացատրել չեմ կարող:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Մի քանի օր անց Գոհարը նորից տապակած կանաչ լոբի դրեց սեղանին: Ես տարակուսանքով նայեցի նրան: Սակայն կնոջս դեմքին խորհրդավոր ժպիտ կար:

- Փորձիր, փորձիր,- ասաց նա,- բոլոր խոհանոցային գրքերը կարդացել եմ: Հարցրել եմ լավագույն խոհարարներին: Ինչ մեղքս թաքցնեմ, նույնիսկ տիկին Թագուհուն էլ եմ հրավիրել ու նրա խորհուրդներով եմ պատրաստել: Սրանից լավ տապակած լոբի աշխարհում չի կարող լինել:

Ես փորձեցի աշխարհի այդ ամենալավ տապակած լոբին եվ ամաչելով ափսեն կրկին ետ հրեցի:

- Ուզո՞ւմ ես կեղծեմ,- ասացի ես:- Ի՞նչ ես ուզում՛ կեղծե՞մ: Չի ստացվում, էլի Գոհար ջան, չի ստացվում: Ախր սա բոլորովին ուրիշ բան է: Սա իմ մոր սարքած կանաչ լոբին չէ:

Գոհարը գոգնոցը աչքերին տարավ ու վազեց խոհանոց՛ մի կուշտ լաց լինելու: Իհարկե հիմար բան է ստացվում: Իհարե, տանջում է խիղճս: Բայց ես ի՞նչ անեմ: Ու խղճահարությունից բացի, մի ուրիշ զգացում էլ է պարուրում ինձ: Դե, եթե չես կարողանում, մի եփիր, ո՞վ է քեզ ստիպում: Եթե դուք չեք կարողանում գոնե այնպես պատրաստել ճաշը, ինչպես մեր տառապած մայրերն էին անում պատերազմի ու սովի ծանր տարիներին, մթերքների բացարձակ պակասության պայմաններում, ուրեմն մի արեք, էլի: Սա՞ ինչ նոր մրցություն է:

Դրանից հետո երկար ժամանակ մեր սեղանին տապակած կանաչ լոբի չէր երեւում:

Մինչեվ երեկ:

Երեկ ես աշխատանքից տուն եկա անասելի քաղցած: Ժամանակ չէի ունեցել հիմնարկում նախաճաշելու: Հակառակի նման էլ Գոհարը դպրոց էր գնացել՝ ծնողական ժողովի, եվ ես սարսափով տեսա, որ ճաշի սեղանը պատրաստ չէ: Խոհանոցում հին սովորությամբ ծնգծնգացնելով բացեցի բոլոր կաթսաների կափարիչները, բայց ամեն տեղ միայն, ինչպես ընդունված է հիմա ասել կիսաֆաբրիկատներ էին: Պատրաստի ճաշ չկար: Վերջին հույսս մնացել էր թավան: Բարձրացրի կափարիչը ու սրտնեղությամբ փակեցի անմիջապես: Տապակած կանաչ լոբի էր:

Ճիշտ է ասել Լոնգֆելլոն. «Կնոջ համառությունը միայն ծովահենի համառության հետ կարելի է համեմատել»:

Բայց ես շատ էի քաղցած, ի՞նչ կարող էի անել: Մի քանի անգամ խոհանոցում արագ-արագ այս ու այն կողմ գնալուց հետո, կրկին մոտեցա թավային, սրտնեղած բարձրացրի կափարիչը

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ու հենց թավայից պատառաքաղով մի քիչ լոբի վերցրի: Եվ անմիջապես էլ զգացի, որ սա հենց այն է, որ կա: Մորս եփած ճաշի հոտն եկավ:

Հաջորդ վայրկյանին բերնեբերան լցրել էի ափսեն եվ ուտում էի վայելքով, հափշտակված, յուրաքանչյուր գդալի հետ խանդաղանդանքով լցվելով Գոհարի նկատմամբ: Այնուամենայնիվ որքան պատվախնդիր տանտիրուհի է, ո՞վ գիտե ինչքան է փորձել, մինչև որ կարողացել է հասնել այս մակարդակին, պատրաստել ճիշտ մայրիկիս նման, մայրիկիս դեղատոմսով:

Ես դեռ շարունակում էի ուտել, երբ դռան չխկոց լսվեց ու միջանցքում հնչեց Գոհարի ոտնաձայնը:

- Շնորհակալություն, Գոհար,-բղավեցի ես: Այ, իմ ուզածը հենց սա էր, էլի: Լոբին այս տեսակ պետք է լինի:

- Այսինքն ինչպե՞ս,- խոհանոց մտնելով հարցրեց Գոհարը:

- Հենց այսպես,- ասացի ես,- հենց այսպես, վերջապես իմ մանկության օրերի համն առա, Գոհար: Մայրս հենց այսպես էր տապակում կանաչ լոբին:

- Գոհարը սկզբում ինձ նայեց զարմացած, կարծես թե ուզեց ծիծաղել, բայց չծիծաղեց ու մեկ էլ տեսա, որ նրա աչքերում արցունքներ են հայտնվել:

- Այդ ո՞նց ես կարողացել ուտել,- ասաց նա կամացուկ, խղճահարությամբ: - Քոռանամ ես... Ախր յուղը դեռ չեմ զցել... Ուշանում էի...

- Հա, այդպես էր... Եվ այնուամենայնիվ, ինչ ուզում եք ասեք՝ մոր եփած ճաշից համով բան աշխարհում չկա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԶՐՈՒՅՑ ՆԱՐԴՈՒ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Նախքան ձեռքը զանգի կոճակին տանելը, Սարգիս Նաղդյանը երկար ժամանակ կանգնած էր երրորդ հարկի աստիճանավանդակում, և զանազան կետերից դիտում էր երկաթապատ դռան վրայի բրոնզե տախտակիկը, որի վրա սև տառերով գրված էր՝ «Մ. Կ. Քոչարյան»:

«Զարմանալի բան է, — հուզված մտածում էր Սարգիս Նաղդյանը,— ուրիշի համար սա երևի շատ հասարակ անուն է, չէ՞. «Մ. Կ. Քոչարյան»: Դրա մեջ ի՞նչ կա: Բայց երբ ես եմ կարդում, մարմնովս դող է անցնում: Հա, իհարկե,— հեգնանքով ժպտաց Սարգիս Նաղդյանը,— որովհետև այդ ուրիշը միայն կարդում է: Իսկ ես այդ սև տառերի ետևում տեսնում եմ իրեն Մարկ Կարպիչ Քոչարյանին:

Աստիճանավանդակում երեք դուռ կար: Երեք դռան առջև էլ միատեսակ փալասներ: Սարգիս Նաղդյանը մտածեց, որ իր համար դատարկ բան է մյուս երկու դռների զանգի կոճակները սեղմելը: Իրանց տեսեք՝ ովքեր են որ: Ինչ որ «Ա.Ն. Բալյան» և ինչ որ «Ն. Պ. Սուքիասյան»: Ուզենա ձեռքով էլ կթակի դուռը: Բայց այս մյուսը. «Մ. Կ. Քոչարյան»: Ինչ էլ սև տառեր են: Նա նունիսկ բարկացավ իր խեղճության վրա, քայլեց, քայլեց ու ջղայնացած կոշիկները սրբեց այն մյուս երկու դռների առջև գցած փալասների վրա: Ու նորից նայեց երկաթապատ դռանը:

«Լավ, ի՞նչ է եղել, ի՞նչ է պատահել,— սրտնեղած ասաց նա,— սովորական մի բան: Սողոմոն Դրաստամատիչը թոշակի է անցնում: Լավ է անում: Նրա տեղը մեկին պե՞տք է նշանակել: Իհարկե: Իսկ ի՞նչ կլինի, եթե ինձ նշանակեն: Ոչինչ էլ չի լինի: Այսինքն՝ իրենց համար ոչինչ էլ չի լինի, իսկ ինձ համար հոյակապ կլինի: Պարզապես՝ հոյակապ: Հիմա հարկավոր է սեղմել այս անիծյալ երկաթապատ դռան զանգի կոճակը, ներս մտնել, կոնյակի այս հինգ շիշը դնել անկյունում, բայց այնպիսի մի տեղ, որ Մարկ Կարպիչը միշտ տեսնի, խոսել դեսից-դենից և իմիջիայլոց Մարկ Կարպիչին հիշեցնել, որ Սողոմոն Դրաստամատիչը թոշակի է անցնում: Այդքան բան » :

Նա լցվեց վճռականությամբ, նույնիսկ խստացավ դեմքը, կտրուկ շարժումով բարձրացրեց ձեռքն ու մոտեցրեց զանգի կոճակին: Նրան թվում էր, թե հիմա ուր որ է էլեկտրական հոսանքը կխփի իրեն, բայց դրա փոխարեն դռան ետևում կլանչոց լսվեց:

— Ես եմ, Սաքոն,— բարակ ձայնով ներկայացավ Սարգիս Նաղդյանը:

Սկզբում նրան շատ կասկածամտորեն դիտեցին երկաթապատ դռան ապակե ուռուցիկ աչքից: Հետո ներսում մի ինչ-որ ուրիշ դուռ բացվեց: Հետո երկար ժամանակ ինչ-որ երկաթներ էին չխկչխկում ու զնգզնգում: Հետո երկաթապատ դուռը կիսաբաց եղավ ամուր զնգացնելով

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

երկաթե շղթան և կիսաբաց դռնից երևաց տիեզերագնացի նման գլխին երկաթե կեռեր ու անտենաներ ունեցող պառավ մի կին:

«Զոքանչն է»,— անսխալ կռահեց Սարգիս Նաղդյանը և կոնյակի շշերը անձնագրի նման առաջ պարզած մտավ լայն հյուրասրահը:

Մարկ Կարպիչը խոր բազկաթոռից համակրանքով նայեց նրան:

— Բարև ձեզ, Մարկ Կարպիչ,— լայն ժպիտով ասաց Սարգիս Նաղդյանը:

— Ա՛, Սաքո, արի, արի: Այ տղա, չե՞ս ամաչում, էդ ձեռքինդ ի՞նչ է,— գլուխը համակրանքով օրորելով հարցրեց Մարկ Կարպիչը:

— Ը՛ը, կոնյակ է, Մարկ Կարպիչ, երեխաների համար, ը՛ը, շատ չեմ բերել, Մարկ Կարպիչ, ընդամենը հինգ շիշ է, մարոչնի...

— Ո՛ւ, ավազակ,— սիրալիր քմծիծաղով ասաց տանտերը,— դիր այդտեղ: Բայց մյուս անգամ... Դե, մոտ եկ, մոտ եկ՝ տեսնեմ ինչ ես ասում:

— Ը՛ը, ոչինչ, ես այստեղից կասեմ... ոտքերս…

— Ոչինչ, առանց ոտքերի արի…— խնդմնդաց Մարկ Կարպիչը,— շատերն առանց գլխի են գալիս…

Սարգիս Նաղդյանը սրտանց ծիծաղեց հիմնարկի պետի սրամտության վրա և այնուամենայնիվ հրաժարվեց մոտենալ:

— Ես ձեզ միայն մի բոպե կզբաղեցնեմ... Կներեք, Մարկ Կարպիչ, բայց երևի դուք արդեն գիտեք, որ Սողոմոն Դրաստամատիչը թոշակի է անցնում: Պատահաբար մտածեցի, թե...

— Նարդի խաղալ գիտե՞ս, այ տղա,— հարցրեց Մարկ Կարպիչը:

— Ի՞նչ,— զարմացավ Սարգիսը,— դե, այսինքն, հա, այսինքն՝ դուք ոնց որ կուզեք: Ասում էի՝ Սողոմոն Դրաստամատիչը...

— Դե մի էն նարդին բեր: Ա՛յ տղա, կարի մեքենան չեմ ասում,— ծիծաղեց Մարկ Կարպիչը: Նարդին, նարդին:

— Բերեցի, բերեցի,— օրորոցի նման զգուշորեն նարդին բռնած մոտեցավ Սարգիս Նաղդյանը: Ուրեմն Սողոմոն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

— Երկա՞ր, թե կարճ,— հարցրեց Մարկ Կարպիչը:

— Կարճ կասեմ, կարճ կասեմ: Ուրեմն...

— Այ տղա, ասում եմ, երկա՞ր ես խաղում, թե կարճ…

— Ախ, հա՛, ինչպես ուզում եք,— տխուր ձայնով ասաց Սարգիս Նաղդյանը:

— Քեզ հետ կարճը կսազի...— վճռեց հիմնարկի պետը: — Դե գցիր, ես գցեցի ջհար: Դո՞ւ ինչ բերեցիր, լավ չեմ տեսնում: Փա՞նջ է:

— Իսկ դուք ո՞րն եք ուզում: Ախ, հա, սե է:

— Թե չէ՝ ինձ թվաց փանջ է: Ջութ սե,— բղավեց Մարկ Կարպիչը,— այսպես...

— Այո, այսպես,— սրտապնդվեց Նաղդյանը: ուրեմն Սողո...

— Իքի բիրդ խաղա,— զգուշացրեց հիմնարկի պետը:

— Է՛, էլ խաղալու բա՞ն թողեցիք,— թույլ-թույլ ծիծաղեց Նաղդյանը: Բոլորը խառնվել են իրար: Էն մեր տեղկոմի կեղտոտ… փանջ ու ջհար… նախագահն էլ...

— Հափ եկ, ի՞նչ էր ասում:

— Ասում էր… դու շեշ...

— Ի՞նչ...

— Չէ, չէ, ձեզ չէր ասում… Ասում էր Սողոմոն Դրաստա…

— Այ տղա, ինչի՞ չես կտրում…

— Ե՞ս կտրեմ,— անհանգստացավ Սարգիս Նաղդյանը, զգալով, որ ողջ խաղը, այսինքն՝ Սողոմոն Դրաստամատիչի պաշտոնը, ձեռքից թռչում է: Դուք կտրեք, էլի... էնպես կտրեք, որ Սողոմոն Դրաստամա...

— Շեշ ու եկ…

— …տիչի փոխարեն...

— Ի՞նչ տիչի: Գյալա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Սողոմոն Դրաստամատիչի…

— Ի՞նչ է, ուզում ես նրա տեղը… դո՞ւ բարա…

— Հա, հա, ես բարա, — շտապով ասաց Սարգիս Նաղդյանը: Այսինքն՝ որ ես…իքի բիր…

— Ախ, թե մի շեշ ու սե,— կատաղությամբ նետեց Մարկ Կարպիչը:

Զառերը շրխկոցով ընկան հատակին ու կորան:

— Այ տղա, Սաքո, մի տես գետնին ինչ է,— շրթունքները սեղմելով հարցրեց Մարկ Կարպիչը:

— Իսկ դուք ի՞նչ եք ուզում,— սեղանի տակից ճաղատ գլուխը դուրս հանած տեղեկացավ Սարգիս Նաղդյանը: Չէ, չէ, ի՞նչ եք ուզում:

— Մի տես բե՞շ չի:

— Բեշ է, բեշ է…

— Թյու,— վշտացավ Մարկ Կարպիչը: Գյալա է:

— Շեշ է, շեշ է,— հուսահատ աղաղակեց Սարգիս Նաղդյանը:

Խաղը շարունակվեց: Տարաբախտ զառերը շրխկոցով այս ու այն կողմ էին նետվում, մեկ մոտեցնելով, մեկ էլ տանել-հեռացնելով անիծյալ Սողոմոն Դրաստամատիչի անիծյալ պաշտոնը:

— Այ տղա, շա՞տ պիտի այդտեղ նստես, ինչո՞ւ դուրս չես գալիս,— զարմացավ Մարկ Կարպիչը:

— Հա էլի, ցավդ տանեմ, ես էլ այդ եմ ասում,— աշխուժացավ Սարգիսը ,- ասում եմ դուրս գամ ու Սողոմոն Դրաստամատիչի…

— Քարերդ, քաքերդ, ինչո՞ւ դուրս չես գալիս…

— Քարե՞րս…Ուզում եք դո՞ւրս գամ,— մրմնջաց դժբախտ ենթական,— ըհը, դու շեշ:

— Դու շե՞շ: Որտեղի՞ց բերեցիր, այ տղա: Հենց ինձ է, որ զույգ չի գալիս… Ինչ բախտ ունես…

«Չի լինի՞ բախտներս փոխենք,— մտքում համարձակ չարախնդաց Սարգիս Նաղդյանը: Դե փոխենք, է՛: Իմ զառի բախտը քեզ, քո անձնական բախտն ինձ: Հը՞»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Բայց բարձրաձայն ասաց կերկերուն ձայնով,

— Այ, էստեղից բերեցի… էսպես գցեցի… Թյու, դու բեշ…

— Յա, այ տղա, բռնո՞ւմ ես, հո խաղամոլ չե՞ս: Դրա համա՞ր ես աշխատանքից ուշանում, հա՞: Գիշերները խաղում ես, ցերեկները աշխատանքի ժամանակ քնում, հա՞:

Ամեն մի «հա»-ի հետ Սարգիս Նաղդյանը ցնցվում էր սարսափից մտքում անիծելով այս նարդին էլ, զառերն էլ, Սողոմոն Դրաստամատիչին էլ, իր բախտն էլ:

Եվ հեռախոսի զանգը նրան փրկության աղաղակ թվաց:

Մինչ Մարկ Կարպիչը խոսում էր հեռախոսով, Սարգիս Նաղդյանը հասցրեց հանել նրա խաղաքարերի գրեթե կեսը: «Լավ, այս ապաշնորհը ոչ մի քար դուրս չէ՞ր եկել, ինչ է»— արդար զայրույթով հարցնում էր ինքն իրեն, նորանոր քարեր հանելով: Հանգստացավ միայն այն ժամանակ, երբ հիմնարկի պետի անկյունում քարերի թիվը դարձավ երկու: Ինքը չորս քար ուներ: Մարկ Կարպիչը վերադարձավ սեղանի մոտ՝ հեռախոսային զրույցից ավելի բարկացած ու գրգռված: Բայց խաղատախտակին մի հայացք նետելուց հետո խաղաղվեց:

— Ավազակ, ավազա՛կ,— համակրանքով ասաց նա: Դե գցիր տեսնենք, զառդ ինչ է ասում:

— Զառս ինչ պետք է ասի,— նվիրված աչքերով պետին նայելով, սրտապնդված շտապ-շտապ ասաց Սարգիս Նաղդյանը: — Այ, ես ասում էի, քանի որ Սողոմոն Դրաստամատիչը աշխատանքից դուրս է գալիս, ինձ նշանակեք նրա տեղը: Ի՞նչ կլինի…

— Զառից կերևա,— բարեհոգաբար գլխով արեց պետը:

— Չեմ գցի, — մանկական կամակորությամբ հրաժարվեց Սարգիսը: Չեմ գցի, հանձնվում եմ, հանձնվում եմ, Մարկ Կարպիչ:

— Չես գցի, չես տեսնի,— ասաց պետը:

«Տեր աստված,— վայրկյանապես հավատացյալ դառնալով մտքում աղաղակեց Սարգիս Նաղդյանը,— հանկարծ զույգ չտաս, հա՞: Զույգ չտաս, հա՞»,— կրկնեց նա՝ վախենալով, թե հանկարծ աստված կարող է լավ չլսել:

— Դե գցիր – անհամբերությամբ գոչեց Մարկ Կարպիչը:

Եվ Սարգիս Նաղդյանը նետեց զառերը: Զառերը ցատկոտեցին, գլորվեցին տախտակի վրայով և երբ կանգ առան, Սարգիսը դեռևս դեպի վեր, աստծուն էր նայում: Հետո հայացքը գցեց զառերին բարձրացավ տեղից, օրորվեց ու մրմնջաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

—Ի՞նչ, դու շե՞շ: Սուտ է, սուտ է, իհարկե, սուտ է… դու շեշ չէ… ուռա, այսօր ապրիլի մեկն է: Նա կեղծ ուրախությամբ նայեց Մարկ Կարպիչի աչքերին և նրանց սառը փայլի մեջ կարդաց իր հույսերի կործանումը: Ուրեմն՝ թռավ, ամեն ինչ թռավ… Սողոմոն Դրաստամատիչի պաշտոնը, հինգ շիշ կոնյակը…—Չէ, չէ,— մրմնջաց նա,— Ի՞նչ դու շեշ: Սա ի՞նչ դու շեշ է… Ըհը, տե՞ս, իքի բիր, ըհը՝ ջհար ու եկ, ըհը՝ սե բայ դու, ըհը՝ լուր-դա-լուր…ըհը, էս ինչ շոգ է, ինչո՞ւ են ծառերը ծաղկել… էս ինչո՞ւ են բոլորը վերարկու հագել… Գլուխս, գլուխս… Անուշ, հե՛յ Անուշ, դո՛ւ հասցրեք, դո՛ւ…

Երբ Սարգիս Նաղդյանի բազմաչարչար մարմինը վերջնականապես փռվեց աթոռի վրա, Մարկ Կարպիչը հուզված բարձրացավ տեղից և մոտեցավ հեռախոսին:

— Այո, այո, շտապօգնությո՞ւնն է,— բղավեց նա,— ալո, շտապօգնությո՛ւն, Եփրեմ ջան, դո՞ւ ես, հա՛, ես եմ: Վաղը քրոջդ տղային ինձ մոտ ուղարկիր, մի տեղ էլ բացվեց: Հը՞: Հա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՍԿԵ ՁԿՆԻԿԸ

Կենցաղային սպասարկման բնագավառի ամենահամեստ աշխատողներից մեկը՝ Համբարձում Սանթրոսյանը, որին բարեկամները փաղաքշաբար Համիկ էին անվանում, իր սեփական մոտորանավակով ձուկ էր որսում Սևանա լճում:

Երբ առաջին անգամ նետեց կարթը, դուրս բերեց մի բավականին խոշոր կողակ.

«Դու ինձ պե՞տք ես»,- անբավական քրթմնջաց Համիկը և ձուկը կրկին ջուրը նետեց:

Երբ երկրորդ անգամ նետեց կարթը, որսաց մի հսկայական սիգ: Համիկը միայն մի պահ հաճույքով դիտեց կեռիկից ազատվելու համար փայլփլուն ձկան գործադրած հուսահատական ճիգերը, ապա արհամարհանքով ժպտաց.

«Հիմար, դո՞ւ ում ես պետք: Քեզ նմանները երկու ռուբլով խանութներում թափված են»:

Եվ լիճը նետեց ձուկը:

Իսկ երբ երրորդ անգամ ջրից դուրս հանեց կարթը, կեռիկից կախված օրորվում էր մի... մի իսկական, մի բնական, մի սքանչելի իշխան ձուկ:

«Ես քեզ կերա»,- հրճվանքից դողալով՝ խանդավառ բացականչեց Համիկը:

Բայց կատարվեց հրաշք:

Իշխան ձուկը հանկարծ մարդկային լեզու առավ և վիրավոր շրթունքները շարժելով - մրմնջաց.

- Թո՛ղ ինձ, թո՛ղ, Համի՛կ, թո՛ղ ինձ անվտանգ,

Քեզ կվճարեմ թանկագին փրկանք...

- Վա՞յ,- ապշեց Համիկը,- էդ դո՞ւ ես խոսում:

- Հա՛,- ասաց իշխանը:

- Երանի մեզ,- գլուխն օրորեց Համիկը,- իբր թե խոսացողները քիչ են, ձկներն էլ են սկսում խոսել:

- Ես սովորական ձուկ չեմ,- ասաց իշխանը,- ես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Համիկը մեղմորեն ժպտաց.

- Էդ ի՞նչ ես ասում: Ուրեմն ես չգիտե՞մ, թե ինչ ձուկ ես դու: Դու ոսկե ձկնիկ ես, ոսկե... Քո կիլոն արդեն երեսուն ռուբլով էլ ձեռքներս չի ընկնում:

- Ես կախարդական ձուկ եմ,- ասաց իշխանը:

- Բա որ կախարդական չլինես, էդ գինը կունենա՞ս,- ծիծաղեց Համիկը:

- Բայց ես կարող եմ կատարել քո բոլոր ցանկությունները,- ասաց իշխանը:-Հրամայի՛ր և կունենաս այն ամենը, ինչ ուզում ես... Միայն թե բաց թող ինձ...

Համիկը մի պահ մտածեց.

- Իսկ ի՞նչ կարող ես անել ինձ համար:

- «Վոլգա» ավտոմեքենա ուզո՞ւմ ես,- հարցրեց ձուկը:

Համիկը քմծիծաղեղ և մատով ցույց տվեց ափը: Ափին կանգնած էր մի բոլորովին նոր «Վոլգա» ավտոմեքենա:

- Այդ դեպքում գուցե առանձնատուն,- հարցրեց ձուկը:

- Մեկը Աղվերանում ունեմ, մեկն էլ Սև ծովի ափին: Ես շարքային աշխատող եմ, ինձ դրանից ավելին չի հասնում,- համեստորեն ասաց Համիկը:

- Ճապոնական տեսամագնիտոֆոնի մասին ի՞նչ կասես,- հարցրեց ձուկը:

- Մի՛ մանրացիր,- բարկացավ Համիկը,- և արժանապատվությունդ մի՛ կորցրու:

- Բա ի՞նչ անեմ,- հուսահատությունից լողակները կոտրատեց իշխան ձուկը:-Դո՛ւ ասա՝ ի՞նչ ես ուզում, և ես կկատարեմ քո յուրաքանչյուր ցանկությունը: Ախր ես կախարդական ձուկ եմ, տեսնո՞ւմ ես, խոսում եմ...

Համիկը կեռիկի վրայից հանեց իշխան ձուկը, մատներով բռնեց խռիկներից, նայեց աչքերի մեջ ու ասաց.

- Դե հիմա դո՛ւ ինձ լսիր: Ես ամեն ինչ ունեմ, հասկանո՞ւմ ես: Ես ոչնչի կարիք չեմ զգում: Միակ բանը, որ մեկ-մեկ սիրտս ուզում է, դո՛ւ ես... Ու դու էլ հազիվ ձեռքս ես ընկել: Այնպես որ՝ խոսես, թե չխոսես, ինձ համար ոչ մի նշանակություն չունի, իշխա՛ն ջան: Ես քեզ ուտելու եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

Եվ կերավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՐԼՈԿ ՀՈԼՄՍԸ ՀՐԱԶԴԱՆԻ ԶՈՐՈՒՄ

— Հետքերը չտրորել,— զգուշացրեց նշանավոր խուզարկուն և հանկարծ անձայն ծիծաղեց, ինչպես միայն ինքը կարող էր:

Նրան ուղեկցում էին միլիցիայի տեղամասային տեսուչ Սրապը և երիտասարդ, գրավիչ մի կին, որի դեմքը գունատ էր ու թախծոտ: Կինը մեծ ջանքերով էր զսպում արցունքները, վախենալով փչացնել կոպերի և թարթիչների բաց մանուշակագույն ներկը:

Նկատելով, որ հռչակավոր խուզարկուն լուռ ծիծաղում է, կինը ցնցվեց.

— Դուք ինչ-որ բա՞ն նկատեցիք, պարոն Հոլմս:

— Երդվում եմ ծխամորճովս,— ասաց Հոլմսը, բերանից այնքան ժամանակ հեռացնելով ծխամորճը, որ կարողանա արտասանել այդ խոսքերը,— երդվում եմ ծխամորճովս, տիկին, որ ես ստույգ կարող եմ նշել հանցագործության օրը:

— Ինչպե՞ս,— ապշեցին տեղամասային տեսուչն ու գրավիչ կինը: Դուք կռահեցի՞ք: Ուրեմն, ե՞րբ է եղել դա:

— Դեպքը տեղի է ունեցել մարտի 30-ին,— ձորի քար լռության մեջ արտասանեց խուզարկուն:

Տեսուչը գունատվեց նախանձից:

— Ինչ խորաթափանցություն,— մրմնջաց նա,—— ինչի՞ց եզրակացրիք, պարոն:

— Դատարկ բան է, սիրելիս,— անվրդով ասաց Հոլմսը: — Ահա, տեսնո՞ւմ եք, այստեղ, խոտերի վրա ամենուրեք լրագրեր են թափված: Եթե փոքր ինչ ավելի ուշադիր նայեք, կտեսնեք, որ դրանք բոլորն էլ կրում են մարտի 30-ի ամսաթիվը: Եզրակացությունը ծնվում է միանգամից: Դեպքը տեղի է ունեցել մարտի 30-ին: Այդպես չէ՞, պաշտոնակից:

Տեղամասային տեսուչ Սրապը շփոթված մի ոտքից մյուսին հենվեց:

— Համարձակվում եմ ասել, պարոն Հոլմս, որ դրանք «Երեկոյան Երևան» թերթի համարներ են և, ուրեմն, բաժանորդներին են հասել հաջորդ օրը, առավոտյան... Ուրեմն, դեպքը պետք է որ տեղի ունեցած լինի մարտի 31-ին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Նշանավոր խուզարկուն երկար ժամանակ տարակուսած մեկ լրագրերին էր նայում, մեկ տեսուչ Սրապին և այնպիսի հուզմունքով էր ծխում ծխամորճը, որ նրա դեմքը մի քանի վայրկյան չէր երևում ծխի քուլաների մեջ:

— Հըմ,— ի վերջո փնթփնթաց նա,— ո՞վ կկռահեր: Երեկոյան թերթը՝ առավոտյան: Սրամիտ է մտածված:Սա վկայում է, որ մենք գործ ունենք կանխամտածված հանցագործության հետ... լավ, շարունակենք: Այստեղ խնջույքի են հավաքված եղել քառասունութ հոգի: Նրանց հետ եղել է նաև անգլիացի կիսագրագետ մի պատանի՝ Փոխոս արտառոց ազգանունով:

— Պոդոսն է, Պոդոսը,— բացականչեց գրավիչ կինը,— քրոջս տղան է, անգլիական թեքումով դպրոցում է սովորում: Բայց դուք ինչպե՞ս իմացաք այդ, պարոն Հոլմս:

Հոլմսը ներողամտաբար ծիծաղեց իր անձայն ծիծաղով:

— Դա դժվար չէր իմանալ, տիկին: Այդ Փոխոսը իր անունը դանակով փորագրել է ահա այս ծառի բնին: Եվ քանի որ հայտնի է, որ մարդիկ պատին կամ ծառին գրում են իրենց աչքերի ուղղությամբ, ապա դժվար չէ եզրակացնել, որ նա կամ պատանի է եղել, կամ լիլիպուտ:

— Ապշեցուցիչ է,— անսքող հիացմունքով բացականչեց թռվիչ կինը:

— Պարոն խուզարկու, իսկ ինչի՞ց եզրակացրիք, որ նրանք քառասունութ հոգի են եղել,— հարցրեց տեսուչը:

— Սիրելի բարեկամ,— արժանապատվությամբ ասաց Հոլմսը,– վստահեցնում եմ ձեզ, որ ես չէի կարող հանցագործ աշխարհի սարսափը դառնալ առանց այդ տարրական գիտելիքների: Նրանք քառասունութ հոգի են եղել, պարոն Սրապ, որովհետև խնջույքի վայրում մորթել են մեկ ոչխար, մեկ խոզ, խմել են տասներկու շիշ կոնյակ, քառասունութ շիշ գարեջուր, կերել և այս ու այն կողմ են թափել հարյուր երեսունվեց մետր այս սպիտակ-լայն ու տափակ բանից…

— Լավաշ,— ազգային արժանապատվությամբ հուշեց Սրապը:

— Շնորհակալություն, պաշտոնակից: Լավաշ: Հիմա տեսնո՞ւմ եք, թե որքան հասարակ բան է: Պարզ տրամաբանություն: Միայն թե որոնենք բաժակները... Ես այստեղ միայն չորս բաժակ եմ տեսնում:

— Որովհետև այստեղ միայն չորս հոգի են եղել,– մռայլ ասաց Սրապը: .

Հոլմսի ծխամորճը դողաց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ինչպե՞ս թե ,- ասաց նա: Տասներկու շիշ կոնյակ... քառասունութ շիշ գարեջուր... մեկ ոչխար… մեկ խոզ… և չորս խո՞զ, ներեցեք, այսինքն չորս հոգի՞…

— Այո,— համեստորեն պնդեց տեղամասային տեսուչ Սրապը:

Հոլմսի գլուխը կրկին մի քանի վայրկյան կորավ ծխամորճից ելնող խիտ ամպերի մեջ: Հրազդանի ձորով անցնող քամին պատառոտում, տանում ծառերի սաղարթներին էր փռում նրանց ծվենները:

— Երդվում եմ ձեռնափայտովս, որ մոռացել եմ հետս բերել,— վշտացած ասաց խուզարկուն,— որ սա ամենամութ գործն է իմ հետախուզական գործունեության մեջ: Ես հավատում եմ ձեզ, պարոն Սրապ, բայց այդ դեպքում ինչո՞ւ են այդ չորս… մարդիկ այնքան բան գնել, որ այսքանն էլ ստիպված են եղել թափել խոտերի վրա: Ինչո՞ւ այնքան ուտելիք չեն վերցրել իրենց հետ, որքան անհրաժեշտ է:

— Ազգային առանձնահատկություն է, պարոն,— կամացուկ ասաց տեղամասային տեսուչ Սրապը:

— Բայց դուք հո չե՞ք կարող չնկատել, որ նրանք ինչ-որ բանից սաստիկ ջղայնացել են, վիճել ու կռվել են և արդյունքը եղել է ջարդված շշերի այս կույտը,— հանկարծ բորբոքված հարցրեց խուզարկուն:

— Համարձակվում եմ առարկել,— անայլայլ առարկեց տեղամասային տեսուչը: Նրանք չեն կռվել: Նրանք ուրախ են եղել և հարբած:

— Հարբա՞ծ, ինչի՞ց եզրակացրիք, պարոն Սրապ:

— Որովհետև, ընկեր Հոլմս, — ասաց Սրապը: Նրանք երկար ժամանակ փորձել են դատարկ շշերով խփել ջարդել էլեկտրասյան լապտերը, բայց չեն կարողացել: Ահա հետքերը լապտերի մոտ, ահա ջարդված շշերը:

Անվանի խուզարկուն անգլերեն քորեց ծոծրակը:

— Իսկ ինչո՞ւ են լապտերները ջարդում: Սպորտի նոր ձև՞ է:

— Ըմմ, այո՛, զվարճանում են:

— Ա՛հ,— բացականչեց Հոլմսը: Ինչո՞ւ ինձ հետ չէ դոկտոր Վաթսոնը, որ հայհոյեր երկուսիս փոխարեն: Դուք ինձ ծաղրո՞ւմ եք, ինչ է, պարոն Սրապ: Ուրեմն նրանք զվարճանալու՞ նպատակով են կոտրատել այս ծառերը, ջարդել ցայտաղբյուրը: Հին հունական քանդակների

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

օրինակով կոտրատել մարզիկի այս արձանի բազուկները… Շատ կատակասեր քաղաքացիներ ունեք, պարոն Սրապ:

Տեղամասային տեսուչ Սրապը բացել էր բերանը ինչ-որ բան ասելու համար, բայց հենց այդպես էլ արձանացավ: Լսվեց սրտակեղեք մի ճիչ, ընկնող մարմնի ձայն և ահասարսուռ մի հեկեկոց:

Հոլմսը և Սրապը շրջվեցին անմիջապես: Նշանավոր խուզարկուն ձեռքը տարավ դեպի ատրճանակը, բայց ոչ ոք չկար: Միայն ջահել ու գրավիչ կինն էր ծնկել գետնին, նախապես ոտքերի տակ լրագիր փռելով:

— Բայց իմ ամուսինը, իմ ամուսինը, որտե՞ղ է նա: Տվեք ինձ իմ ամուսնուն,— հեծկլտում էր նա: Օ՜, մի՞թե սա նրա ազնիվ արյունն է:

— Բայց դա խոճկորի արյուն է, տիկին,— անգլիական նրբավարությամբ նկատեց Հոլմսը:

— Իսկ դուք արյան խմբերը ստուգե՞լ եք,— պոռթկաց դժբախտ կինը,— գուցե համընկնո՞ւմ են: Գուցե ձեզ միայն թվո՞ւմ է: Գուցե մյուս՝ ձեր ասած ոչխարի արյունն է իմ ամուսնունը: Օ՜, իմ հեզ գառնուկ, որտե՞ղ ես դու: Պարոն Հոլմս, գթացեք ինձ, գտեք իմ ամուսնուն սպանողին, չէ՞ որ դուք Հոլմսն եք:

— Բայց նախ հարկավոր է ձեր ամուսնուն գտնել, տիկին,— ասաց նշանավոր խուզարկուն,— և հարկավոր է գտնել նրա մյուս ընկերներին: Եթե նրանք քառասունութ հոգի չեն, ինչպես ես եմ կարծում, այլ ընդամենը չորսը՝ ինչպես իմ պաշտոնակից Սրապն է պնդում, ապա նրանք մեռել են բնական մահով, որկրամոլությունից, և ուրեմն նրանց դիակներն ինչ որ տեղ մոտակայքում կլինեն:

Հոլմսը իր հետաքննական կյանքի ողջ ընթացքում այդքան երկար չէր խոսել, դրա համար էլ լռեց և մի քանի անգամ խոր շունչ քաշեց:

Եվ այդ լռության մեջ իբրև ատրճանակի կրակոց հնչեց Սրապի ինքնաապտակը: Նա ձեռքն այնպես ուժեղ խփեց իր ճակատին, որ երկար ժամանակ ուշքի չէր գալիս: Եվ հազիվ մրմնջաց գունատված շուրթերով.

— Դուք իսկապես մեծ մարդ եք, ընկեր Հոլմս: Ո՞նց գլխի չէի ընկնում: Դուք ասացիք «մոտակայքո՞ւմ»: Դե, իհարկե, նրանք «Փարվանա» ռեստորանում կլինեն: Նրանք ինձ դեռ պատասխան կտան Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ կանաչը տրորելու, ծառերը ջարդելու, արձանը հաշմելու և զազրախոսելու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Եվ աջ ձեռքով ատրճանակի դատարկ պատյանը բռնած տեղամասային տեսուչ Սրապը սլացավ դեպի ռեստորան:

— Կա՛նգ առ,— այդ վայրկյանին լսվեց ահեղագոչ մի ձայն:

Սրապը քարացավ տեղում ու ետ նայեց: Հոլմսն ու գրավիչ կինը ևս վախեցած շրջվեցին դեպի ձայնը:

Վազելով նրանց էր մոտենում կարճահասակ, գիրուկ մի մարդ՝ ծանր հևալով և վանդականախշ թաշկինակով սրբելով ճակատի քրտինքը.,.

— Կա՛նգ առ,—— գոռաց նա կրկին: Այդ ի՞նչ եք անում, ի՞նչ եք ձեզանից բաներ հնարում: Դու ի՞նչ ես չափազանցնում,— բղավեց նա կնոջ վրա: Ի՞նչ ես ողբերգություն խաղում: Ո՞վ է տեսել, որ կինը այդքան սրտանց լաց լինի կորած հարբեցող ամուսնու համար: Ձևականորեն մի քիչ թնկթնկա, հերիք է: Դուք, ընկեր Եղոյան,— ասաց նա, դիմելով Հոլմսին,— հոյակապ եք, այդպես էլ կշարունակեք: Իսկ ձեզ, ընկեր Նազարյան, ո՞վ է թույլ տվել սցենարից դուրս խոսքեր ասել: Ձազրախոսել բառն այստեղ կա՞... կա ծառերը ջարդել, կանաչը տրորել, արձանը հաշմել...

— Դե, էդ բոլորը առանց զազրախոսելու կլինի՞,— նեղացած ասաց Սրապը,— բա էլ որտե՞ղ մնաց դերասանի ստեղծագործական ինքնուրույնությունը, ընկեր ռեժիսոր:

— Վերջ տուր քննադատությանը,— բղավեց ռեժիսորը,— ժողովում չես:

Նա ուժգին ծափ տվեց ու գոռաց.

— Ուրեմն՝ բոլորը սկզբից: Ուշադրություն…Գնացի՛նք…

— Վախ, վա՛խ,— հայերեն հառաչեց անգլիացի նշանավոր խուզարկուն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆԵԼԱՆԵԼԻ ՎԻՃԱԿ

Նոր դիրեկտորը շատ զգայուն ու նուրբ մարդ էր.

— Անհարմար եմ զգում ձեզ դիտողություն անել,— շիկնելով ասում էր նա իր վարորդին,— բայց երբ վարում եք մեքենան, հիշեք, որ ես մեջն եմ:

Նա միշտ կրկնում էր այդ խոսքերը, սկսած այն օրվանից, երբ աշխատանքից հետո վարորդը նրան տուն էր տարել և, կարծելով, թե դիրեկտորը դուրս եկավ, մեքենան մտցրել էր գարաժ, փակել էր դուռն ու գնացել իրենց տուն:

Եվ նոր դիրեկտորը գիշերն արթնացել էր մեքենայի մեջ, գարաժում:

— Կներեք, որ զգուշացնում եմ,— ասում էր նա վարորդին,— Բայց խնդրում եմ հաշվի առնել, որ մեր աշխատանքը չնորմայավորված աշխատանք է: Կառավարությունը մեզանից պահանջում է աշխատել գիշեր և ցերեկ: Եվ մենք էլ աշխատում ենք: Ուրեմն բացառված չէ, որ ես քնեմ ցերեկը, քանի որ գիշերն աշխատել եմ:

Եվ նույնն ասում էր կնոջը՝ հակառակ տեսանկյունից:

Ու քնում էր:

Իսկ հենց որ արթնանում էր, սկսում էր խոսել: Եվ խոսում էր մեղմ, փաղաքուշ ձայնով, հոգածությամբ: Աշխատողներին հերթով իր մոտ էր կանչում ու երկար զրուցում, հետաքրքրվում նրանց կյանքով, հոգսերով, ապրելակերպով… Վերջում ավելացնում էր, որ նրանց համարում է իր աջ ձեռքը:

— Շատ կարգին մարդ է, իսկական դեմոկրատ,— ասում էին նրա մասին առաջին օրերին:

Եվ նորից աշխատողներին իր մոտ էր կանչում, երկար զրուցում նրանց հետ, հետաքրքրվում նրանց կյանքով, հոգսերով, ապրելակերպով…

— Տարօրինակ մարդ է,— ասում էին նրա մասին հաջորդ օրերին:

Նա վախենում էր առանձնասենյակում մենակ մնալ, որովհետև չէր իմանում ինչ անել: Հենց որ հերթը վերջանում էր, դուրս էր գալիս, բռնում առաջին իսկ հանդիպած աշխատողին ու ասում էր մտազբաղ.

— Ես ձեզ էի որոնում, ներս անցեք, հիմա կգամ..

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Վերադառնում էր մի կես ժամ հետո, զարմացած նայում էր նրան, ում կանչել էր և հարցնում էր սիրալիր՝ կնճռոտելով ճակատը,

— Ներեցեք, ինչո՞վ կարող եմ ծառայել:

Դուք եք ինձ կանչել,— ամաչելով ասում էր աշխատողը:

— Ախ, հա, ներող եղեք, այնքան հոգսեր կան, նախ ուզում էի իմանալ, թե ինչ կարող եք ասել ձեր բաժնի պետի մասին... Ձեր կարծիքը ես շատ բարձր եմ գնահատում, որովհետև, այո, այո, ձեզ համարում եմ իմ աջ ձեռքը:

— Բաժնի պետը ես եմ,— ամաչելով ասում էր բաժնի պետը:

— Գիտեմ, գիտեմ… ուզում էի հարցնել բաժնի աշխատողների մասին: Եվ ընդհանրապես ձեր հոգսերի, ընտանեկան դրության, երեխաների մասին: Ներեցեք, բայց ամոթ է, միասին աշխատում ենք, բայց դեռ ինչպես հարկն է չենք ճանաչում իրար...

Բաժնի պետն անհարմար էր զգում ասել, որ այդ հարցերին ինքը պատասխանել է անցյալ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին: Եվ նորից սկսում էր պատմել նյութը հետաքրքիր դարձնելու համար ավելացնելով ընտանիքի անդամների թիվը, փոխելով զբաղմունքը, կրթական ցենզը և սոցիալական դրությունը:

Իսկ երբ մի քանի անգամ դիրեկտորը իր առանձնասենյակը հրավիրեց միջանցքում պատահաբար հայտնված երեք-չորս անծանոթ քաղաքացիների ու ստիպեց մանրամասն պատմել իրենց կենսագրությունը և տեղեկացրեց, որ նրանց համարում է իր աջ ձեռքը...

— Հիմարի մեկն է,— եզրակացրին աշխատողները:

Բայց նա բոլորովին էլ հիմար չէր: Հիմարը հիմարաբար կզբաղվեր որևէ հարցով: Բայց նա ոչնչով չէր զբաղվում:

— Տրանսպորտ է պետք,— ասում էին նրան:

— Ես տրանսպորտի հարցով չեմ զբաղվում,— ասում էր նա:

— Թուղթ է պետք,— ասում էին նրան:

— Ես թղթի հարցով չեմ զբաղվում,— ասում էր նա:

— Կադրերի հարցը պետք է վերանայել,— ասում էին նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ես կադրերի հարցով չեմ զբաղվում,— ասում էր նա:

Եվ որպեսզի հետագայում թյուրիմացություններ չծագեն, լայն խորհրդակցություն հրավիրեց և հանդես եկավ ընդարձակ ճառով: Ասաց, որ բարեկամաբար խնդրում է ամեն դատարկ բանով չզբաղեցնել իրեն: Որ իրեն բոլորովին չեն հետաքրքրում տրանսպորտը, թուղթը, թանաքը, կադրերը, կապի միջոցները, աշխատավարձը, պարտավորությունները, ֆինանսները: Որ իրեն հետաքրքրում է երեք բան, առաջինը՝ պլանը, երկրորդը՝ պլանը, երրորդը՝ պլանը:

— Իսկ այդ պլանը ինչպե՞ս կատարենք,—- հարցրեց նոր ընդունված միամիտ մեկը:

— Չգիտեմ,— ասաց դիրեկտորը:

Եվ նա չէր կեղծում: Նա իսկապես չգիտեր:

— Հաստատ հիմար է,— պնդում էին ոմանք:

— Հաստատ հիմար չէ,— առարկում էին մյուսները: Հիմարը կասեր՝ գիտեմ:

Այդ թեմայի քննարկումը տևեց մի քանի ամիս, բայց այսպես թե այնպես աշխատողները դադարեցին դիրեկտորի առանձնասենյակը մտնել: Նրան տեսնում էին թե չէ՝ փախչում էին, մտազբաղ դեմք ընդունում և իրենց սենյակը քաշվում: Հենց որ նա մեկին բռնում էր ու իր առանձնասենյակն էր տանում, մյուսը մարդասիրությունից ու կարեկցանքից դրդված բացում էր առանձնասենյակի դուռը ու բղավում.

— Մայիս, Մոսկվայից հեռախոսով քեզ են ուզում:

— Մի րոպե,— երախտագիտությամբ ժպտում էր Մայիսն ու անհետանում:

Երբ դիրեկտորը միջանցք էր դուրս գալիս, միջանցքն ամայանում էր: Երբ ստիպված մտնում էր որևէ բաժին, աշխատողները «հիմա գալիս եմ» ասելով սրտապատառ դուրս էին փախչում սենյակից:

Զարհուրելի բան էր. ոչ ոք այլևս չէր ուզում նրան պատմել իր կենսագրությունը: Ոչ ոք այլևս չէր ուզում նրա աջ ձեռքը լինել: Եվ խեղճ դիրեկտորը այդպես, միայն ձախ ձեռքով, տնային կալանավորի պես շրջում էր իր ընդարձակ առանձնասենյակում, չիմանալով ինչ անել, սարսափելով պարտավորեցնող մենակությունից:

Եվ ի՞նչ, հնարը կարծես թե գտավ: Չքնեց ընդամենը երեք գիշեր և այնպիսի մի դիվային միջոց հորինեց, որ աշխատողները ստիպված պետք է լինեին դուրս չգալ նրա առանձնասենյակից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Հենց հաջորդ օրը աշխատակիցների ցուցակը դնելով սեղանին, նա այբբենական կարգով երեք հոգու նկատողություն հայտարարեց, իսկ մեկին էլ խիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացումով: Եվ որովհետև քարտուղարուհին աշխատանքի չէր գալիս, հրամաններն իր ձեռքով փակցրեց միջանցքի տախտակին: — Հիմա կգան բողոքելու,— ձեռքերը շփելով, քմծիծաղ տվեց նա:

Բայց ոչ ոք չեկավ:

Պարզվեց, որ առաջին երկուսը վաղուց ազատված են աշխատանքից, իսկ այն մեկը, որ խիստ նկատողության էր արժանացել վերջին նախազգուշացումով, մեռել էր յոթ ամիս առաջ՝ թոքերի բորբոքումից:

Երկու օր սպասելուց հետո, նա զանգահարեց երրորդին, որ նկատողություն էր ստացել:

— Ես ձեզ նկատողություն եմ հայտարարել,— շշնջաց նա,— բարի եղեք ինձ մոտ գալ:

— Չեմ գալիս:

— Ինչպե՞ս թե չեք գալիս: Դուք իրավունք չունեք: Եկեք խոսենք, խնդրում եմ:

— Չեմ ուզում խոսել:

— Ինչո՞ւ:

— Ես ձեզ հետ խռով եմ:

— Խռո՞վ,— զարմացավ դիրեկտորը: Այսինքն՝ ինչպե՞ս թե խռով եք:

— Որովհետև ինձ նկատողություն եք հայտարարել, երբ ես գործուղման մեջ եմ եղել:

— Դե, տեսնո՞ւմ եք,— ուրախացավ դիրեկտորը: Երևի թյուրիմացություն է: Եկեք զրուցենք:

— Խռով եմ,— համառեց պատժվածը: — Եվ վերջ:

— Երեխա մի եղեք,— խնդրեց դիրեկտորը:

Ի պատասխան՝ պատժվածը «հըմ» արեց, հասկացնելով, որ չի ուզում խոսել ու կախեց լսափողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ապշած դիրեկտորը զանգահարեց տեղկոմի նախագահին, տեղկոմի նախագահը հայտարարեց, որ ինքն էլ է խռով, որովհետև, գիտե՛ք ինչ, առանց նրա կարծիքը հարցնելու խիստ նկատողություն է հայտարարվել հանգուցյալին:

Խեղճացած դիրեկտորը ըստ ցուցակի զանգահարեց իր բոլոր աշխատողներին և սարսափով պարզեց, որ բոլոր աշխատողներն էլ խռով են իրենից:

Նա երկար նստեց լսափողը ձեռքին, գլուխը աշխատակիցների ցուցակին հակած, հետո հանկարծ ծիծաղեց բարձրաձայն, միջանցք նետվեց, հերթով բացեց բոլոր դռները ու բղավեց քրքջալով.

— Չէ, չէ, չեմ խաղում, որ խռով եք, մատներս բացեք… որ խռով եք, մատներս բացեք,,.

Եվ համառորեն նույնը պահանջեց հոգեբուժական հիվանդանոցի գլխավոր բժշկից:

— Բա ասում էիք՝ հիմար է,— նույն պահին տեղկոմի նիստում գլուխը նախատինքով օրորում էր նախագահը: Երբևէ տեսած կա՞ք, որ անխելք մարդը խելագարվի:

Եվ այդ թեման մեր հիմնարկում քննարկվում է մինչև օրս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌ

Ո՞վ կմտածեր, թե այդպիսի բան կպատահի:

Ո՞վ կսպասեր, թե մեր հիմնարկի պետն այդ օրն աշխատանքի կգա ճիշտ ժամին, առավոտյան ժամը իններին:

Ուղիղ երկու տարի, հանած արձակուրդներն ու գործուղումները, նա աշխատանքի էր գալիս ժամը տասնմեկին: Եվ մենք հիանալի գիտեինք թե ինչու: Ընկեր Ատոմյանը աշխատանքից հետո սիրում էր խմել: Եվ որովհետև ուշ էր հարբում, ուշ էլ քնում էր:

Ահա ամբողջ գաղտնիքը:

Իսկ աշխատանքի գալիս էր բարեխղճորեն, նույնիսկ կարելի է ասել՝ չափից ավելի պարտաճանաչ կերպով՝ առավոտյան ճիշտ ժամը տասնմեկին:

Եվ որովհետև երբևէ չէր խախտում այդ ժամը, նրա գալուց հինգ րոպե առաջ մենք արդեն զբաղեցրած էինք լինում մեր տեղերը: Չիկչիկում էին փայտե ու երկաթե հաշվիչները, ցրիչներն արագ-արագ այս ու այն կողմ էին գնում, համազարկեր էին տալիս մեքենագրուհիները:

Ընկեր Ատոմյանը ժպտում էր մեզ, գլխով էր անում բարյացակամորեն և մտնում իր առանձնասենյակը:

Սկսվում էր աշխատանքային օրը:

Իսկ այդ չարաբաստիկ օրը թե ինչ է պատահում, ո՞վ կարող է իմանալ, հիվա՞նդ է լինում ընկեր Ատոմյանը, թե խմիչքի ընկերներն են բացակայում, ստույգ հայտնի չէ, բայց առավոտյան ուղիղ ժամը իններին հայտնվում է հիմնարկի շենքի առաջ:

Հայտնվում է, նայում դռան կողպեքին ու մնում զարմացած: Մոլորված քայլում է շենքի շուրջը, մի քանի անգամ կարդում է հիմնարկի անունը, մտածելով, թե գուցե սխալ տեղ է եկել և անհրաժեշտ է համարում հարցնել անցորդներից մեկին.

— Ներեցեք, այսօր շաբա՞թ է թե կիրակի:

— Երեքշաբթի է, ընկեր ջան,— քայլերն արագացնելով ասում է անցորդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

«Չէ, այստեղ մի խորը թյուրիմացություն կա»— մտածում է ընկեր Ատոմյանը՝ տեղավորվելով բետոնե սանդուղքին: Եվ սկսում է սպասել:

Չանցած երեսունհինգ րոպե, համերաշխորեն հորանջելով հայտնվում են շենքի պահակն ու տեղկոմի նախագահը:

— Սամսոն,— ատամների արանքից հարցնում է ընկեր Ատոմյանը,— որտե՞ղ էիր:

— Կ-կինս հիվանդ էր,— կողպեքը չկարողանալով բացել, կակազում է պահակը:

— Դու բժի՞շկ ես: Գրավոր նկատողություն,— կտրում է դիրեկտորը: Իսկ դո՞ւք, տեղկոմի ընկեր նախագահ…

— Տ-տրոլեյբուսը ուշացավ… տ-տրամվայը…

— Ոտքով գայիք, ինչպես ես եմ եկել,— խորհուրդ է տալիս ընկեր Ատոմյանը: Գրավոր խիստ նկատողություն:

— Բա էդ բոլորը որ մեզ եք տալիս, մեզանից հետո եկողներին ի՞նչ եք տալու,— դուռը բացելով, հարցնում է Սամսոնը:

Նրա միամիտ հարցը անպատասխան թողնելով, դիրեկտորը մտնում է իր առանձնասենյակը, և հինգ րոպե անց անհոգ երգելով ընդունարան մտած քարտուղարուհի-մեքենագրուհի Սիմային կարգադրում է սեփական ձեռքով գրել նկատողություն ստանալու սեփական հրամանը:

—Ռուբեն Պավլովիչ, կյանքումս առաջին անգամ ուշացել եմ և… նկատողություն,— շրթունքները հուզմունքից ներկելով արդարացիորեն տրտնջում է Սիման:

— Որպեսզի առաջինը վերջինը լինի,— փիլիսոփայորեն նկատում է ընկեր Ատոմյանը:

Այնուհետև նա քարտուղարուհուն նստեցնում է ձախ կողմում, իսկ խիստ նկատողություն ստացած տեղկոմի նախագահին աջ կողմում, և սկսում է անօրինակ մի հաշվեհարդար անակնկալի եկած, խուճապի մատնված մեր համերաշխ կոլեկտիվի հետ: Ընդ որում, ծայրահեղ ջանասիրությամբ նրան օգնում է տեղկոմի նախագահը, շփոթեցնում, խաչաձև հարցեր է տալիս ուշացած միամիտ մարդկանց, պահանջում, որ բոլորն առնվազն գրավոր խիստ նկատողություն ստանան:

— Չէ, չէ, ազնվորեն ասեք, ինչո՞ւ եք ուշացել,— չարախնդորեն հարցնում է նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ուշացածների պատասխանները առանձին ինքնատիպությամբ չեն փայլում: Կոլեկտիվի հիսուն տոկոսը հայտարարում է, թե հիվանդ էր կինը կամ ամուսինը, որին հետևում է տեղկոմի նախագահի քմծիծաղը.

— Դուք բժի՞շկ եք: Խիստ նկատողություն:

Մյուս հիսուն տոկոսն էլ ազնվորեն խոստովանում է, թե մեղավորը տրոլեյբուսն էր, ավտոբուսը կամ տրամվայը, որին ի պատասխան տեղկոմի նախագահը, նվիրվածորեն նայելով հիմնարկի պետին, նետում է հեգնանքով,

— Տրանսպորտը, հա՞, իսկ չէի՞ք կարող ընկեր Ատոմյանի նման ոտքով գալ: Հը՞… խիստ նկատողություն:Ժամը տասնմեկին տասնհինգ րոպե պակաս հիմնարկի պետի զայրույթը իր գագաթնակետին հասավ, երբ առանձնասենյակի կիսաբաց դռնից լսեց Սիմայի փեսացու և համատեղության կարգով կադրերի գծով տեսուչ Մացակի ձայնը.

— Սիմ,ազիզ, շեֆն ինչպես միշտ չկա՞…

— Կամ,— որոտաց Ատոմյանը,— ես կամ, իսկ դուք հեռացված եք աշխատանքից:

— Հեռացնելու համար տեղկոմի համաձայնություն է պետք,— նկատեց քարտուղար-մեքենագրուհի Սիման:

— Ես համաձայն եմ,— ասաց տեղկոմի նախագահը: — Օրվա վերջին որոշումը պատրաստ կլինի: Մեր կոչումն է օգնել դիրեկցիային՝ հիմնարկում աշխատանքային օրինակելի կարգ ու կանոն հաստատելու համար:

— Տեղկոմի նախագահը դեռ տեղկոմ չէ,— հեգնանքով նետեց Սիման:

Տեղկոմի նախագահը նրան նայեց սպանիչ արհամարհանքով:

— Պահ,— ասաց նա,—— այ քեզ նորություն: Տեղկոմը այդ ես եմ:

Եվ այնպիսի կեցվածք ընդունեց, ինչպիսին հավանաբար Լյուդովիկոս թագավորներից մեկն էր ընդունել «պետությունն՝ այդ ես եմ» նախադասությունն արտասանելուց հետո:

Հաջորդ տասնհինգ րոպեում տեղկոմի համաձայնությամբ աշխատանքից հեռացվեցին նաև տնտեսվար Միտուշը և դիրեկտորի տեղակալ Հայկազը, որն անցյալ ժողովում մեծ-մեծ խոսում էր գիտատեխնիկական հեղափոխության մասին:

Զոհերին չօգնեց ոչ մի պատճառաբանություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ես մատտեխսնաբ էի գնացել,— ասաց Միտուշը:

— Աղբի մեքենային էի սպասում,— արդարացավ Հայկազը:

Բայց ընկեր Ատոմյանն անդրդվելի էր:

— Պարտավոր էիք ինձ տեղյակ պահել,— կտրեց նա: — Դրանք հարգելի պատճառաբանություններ չեն:

Եվ ահա այդ շիկացած մթնոլորտում, երբ նկատողություն, խիստ նկատողություն ստացած և աշխատանքից հեռացված ողջ կոլեկտիվը ընդունարանում հավաքված մռայլ լռում էր, ինչպես քրմերի երգչախումբը «Աիդա» օպերայի երկրորդ գործողության երրորդ պատկերում, դուռը բացվեց և ներս մտավ ֆիզկուլտ– հրահանգիչ Շահենը:

— Օ՜, հավաքվել եք պապի նորմաները հանձնելո՞ւ,— ուրախ ժպտալով հարցրեց նա:

Եվ երգչախումբը նրան նայեց կարեկցանքով, սպասումով և չարախնդությամբ:

— Իսկ տատիդ հարսանիքը միտդ չի՞ գալիս,— մեներգեց աշխատանքից հեռացված Միտուշը:

— Որևէ հարգելի պատճառ գտիր, թշվառական,— շշնջաց խիստ նկատողություն ստացած գրադարանավարը,— պետն այսօր ժամը իննին է աշխատանքի եկել:

Շահենը գունատվեց, ետ նայեց դեպի դուռը, տատանվեց մի պահ, նայեց կոլեկտիվին, ամաչեց ու երերուն քայլերով մտավ առանձնասենյակ: Եվ երգչախումբը շունչը պահեց կիսաբաց դռան առաջ:

— Որտե՞ղ էիր,— գլուխը ծանրորեն բարձրացրեց ընկեր Ատոմյանը:

Ֆիզկուլտ-հրահանգիչը լուռ էր:

— Գուցե կինդ հիվա՞նդ էր,— հեգնեց տեղկոմի նախագահը:

— Ոչ,— ասաց Շահենը:

— Գուցե տրոլեյբո՞ւսն էր ուշանում,— խայթեց քարտուղար-մեքենագրուհի Սիման, որի աչքին աշխարհը մթնել էր՝ կադրերի գծով տեսուչ Մացակի ազատման հրամանը իր ձեռքով գրելուց հետո, և անգիտակցաբար տեղկոմի նախագահի ճամբարն էր անցել:

— Ի՞նչ է, ֆիզկուլտ կոմիտե՞ էին կանչել,— արհամարհանքով հուշեց հիմնարկի պետը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ոչ, ընկեր Ատոմյան:

— Ուրեմն ինչո՞ւ ես ուշացել, ասա:

— Անհարմար եմ զգում ասել,— մրմնջաց Շահենը:

— Ասա, ասում եմ:

— Անկեղծորե՞ն ասեմ:

— Իհարկե, անկեղծորեն:

— Խմել էի:

— Ի՞նչ: Ինչ ասացի՞ր...

— Երեկ շատ էի խմել... Երկար… առավոտը չկարողացա վեր կենալ:

— Հեռացնել,— ֆիզկուլտ-հրահանգչի լկտիությունից ցնցված բղավեց տեղկոմի նախագահը: Տեղկոմը համաձայն է:

— Հեռացնել,— ճչաց քարտուղար-մեքենագրուհի Սիման:

Իսկ ընկեր Ատոմյանը լուռ էր: Նա Շահենին էր նայում համակրանքով, ներողամտությամբ և խորին ըմբռնումով:

— Իսկ հիմա ո՞նց ես,— հարցրեց նա: Գլուխդ չի՞ ցավում:

— Լավ եմ, ընկեր Ատոմյան,— ասաց Շահենը:

— Դե, գնա, գնա աշխատիր,— գլխով արեց ընկեր Ատոմյանը:

Կոլեկտիվն ալեկոծվեց, մեջը քար նետված ջրափոսի նման, երբ Շահենը ընդունարան մտավ:

— Հեռացրի՞ն,— կեղծ կարեկցանքով հարցրեց տնտեսվար Միտուշը:

— Ինչո՞ւ պիտի հեռացնեին,— ժպտաց Շահենը,— ես հարգելի պատճառ ունեի: Խմել էի երեկ:

Եվ դատապարտված կոլեկտիվը զարմանքի ճիչ արձակեց, ինչպես քրմերի երգչախումբը «Աիդա» օպերայի երրորդ գործողության երկրորդ պատկերում, երբ հայտնի է դառնում Ռադամեսի դավաճանությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՆԱԶԱՆԴԵՑՆՈՂԸ

Սենյակի երեք պատերին, ամենուրեք, փակցված էին հին ու նոր ազդագրեր, որոնց վրա հիմնականում գազաններ էին՝ ահասարսուռ, բաց երախներով, երկար, կարմիր լեզուներով: Եվ պլակատային այդ ողջ գրականության մեջ, մտրակը ձեռքին, տարբեր դիրքերով կանգնած էր վերոհիշյալ գազանների հնազանդեցնողը, հաղթամարմին Սմբատ Ահեղյանը՝ անփույթ, հմայիչ, կարելի է ասել՝ կախարդիչ ժպիտով: Անվախ, քաջակորով այդ մարդը երկու-երեք նկարում ժպտում էր նույնիսկ առյուծի երախից, ուր չգիտես ինչու մտցրել էր իր գլուխը:

Սենյակի չորրորդ պատը գոյություն չուներ: Փոխարենը վանդակաճաղեր էին, որոնց ետևում, նեղլիկ վանդակների մեջ, արագ-գործնական և նյարդային քայլերով ետ ու առաջ էին անում առյուծն ու վագրը, նման այն հիմնարկի պետին, որը քարտուղարուհուն ուղարկել է տեղակալի ետևից և անհամբեր սպասում է, որ հենց տեղակալը ներս մտնի, նկատողություն հայտարարի:

Վանդակաճաղի մոտ, խոր բազկաթոռի մեջ ընկղմված, ոտքը ոտքին գցած, նստած էր այդ ողջ տնտեսության տերը, գազանների նշանավոր հնազանդեցնող Սմբատ Ահեղյանը: Նրա առջև, ցածրիկ սեղանիկին կոթնած նստած էր ռադիոյի թղթակիցը, գրեթե պատանի, որը նկատելիորեն գունատված դեմքով ստեպ-ստեպ երկչոտ հայացք էր նետում վանդակաճաղերին:

— Սկսե՞նք, Սմբատ Տաճատիչ,— հարցրեց տղան՝ ձեռքը մագնիտոֆոնի կոճակին տանելով:

— Սկսենք,— որոտաց հնազանդեցնողի բասը:

Տղան ասես կերպարանափոխվեց, չգիտես ինչու ուղղեց փողկապը, հազաց, ժպտաց բարեհամբույր և մի քիչ էլ ներողամտորեն, սեղմեց մագնիտոֆոնի կոճակը և թեքվեց միկրոֆոնի վրա:

— Հարգելի ռադիոլսողներ,— ասաց նա տաք, մտերմիկ ձայնով,— մեր միկրոֆոնը գտնվում է պետական կրկեսում, գազանների ականավոր, այսպես ասած՝ սանձահարող, հանրաճանաչ արտիստ, հայ դյուցազն Սմբատ Ահեղյանի աշխատասենյակում:

Թղթակցի ձայնն օտար էր, առյուծն զգաց այդ և ահեղ մի մռնչյուն արձակեց: Թղթակիցը ցնցվեց, բարձրացրեց գլուխը, տագնապով վանդակին նայեց, բայց հանդիպելով հնազանդեցնողի ներողամիտ ժպիտին, շարունակեց ռեպորտաժը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Սմբատ Տաճատիչի թիկունքում, իմ դիմաց տեղավորված են վագրի և առյուծի վանդակները: Ձեզ հասնո՞ւմ է նրանց ահավոր մռնչյունը: Նա մի պահ լռեց, որպեսզի ժապավենը արձանագրի մռնչյունը: Օ, սա մի հիասքանչ տեսարան է՝ վարժեցնողն իր սաների հետ: Եվ ահա, թանկագին ռադիոլսողներ, ձեր ցանկությամբ ուզում եմ մի քանի հարց տալ մեր սիրելի վարպետին: Թույլ կտա՞ք, Տաճատ Սմբատիչ:

— Սմբատ Տաճատիչ,— ուղղեց հնազանդեցնողը:

— Դե, իհարկե, ներեցեք, Սմբատ Տաճատիչ, ձեր և ձեր սաների համբավը տարածված է ողջ աշխարհում: Ձեր գազանները հասել են ամենուրեք, կանգնել ամենաբարձր պատվանդաններին: Դուք համառ ու քրտնաջան աշխատանքով կարողացել եք...— թղթակիցը ոգևորվելով մոտեցավ վանդակին, բայց հուժկու մռնչյունը նրան կրկին դեպի մագնիտոֆոնը նետեց, ու նա շարունակեց գրեթե իներցիայով, կակազելով,— ը՛ը, կարողացել եք հնազանդեցնել անապատի հզոր տիրակալներին:

— Տեղդ, Ինգա,— առանց շարժվելու, ծուլորեն նետեց վարժեցնողը:

Թղթակիցը ոգևորվեց.

— Օ՛, եթե այս վայրկյանին, հարգելի ռադիոլսողներ, տեսնեիք, թե Ինգա անունով հրեշն ինչպես սարսափով ետ դարձավ և ինչպես է քծնանքով տարուբերում պոչը, ապա բոլորդ էլ ինձ հետ կծափահարեիք վարպետին:

— Դե դա դատարկ բան է,— համեստորեն նկատեց վարժեցնողը:

— Սմբատ Տաճատիչ,— խաղացկուն ձայնով շարունակեց թղթակիցը,— ասացեք խնդրեմ, ինչպե՞ս եք կարողանում զսպել, հնազանդեցնել այս… այս գազաններին: Մի՞թե չեք վախենում, որ պատառոտեն ձեզ:

— Ը՛ը՛մ, գազանները հետաքրքիր բնավորություն ունեն,— ասաց վարժեցնողը,— նրանք ահեղ են վախկոտների հանդեպ: Նրանք, այո, այո՛, ճանաչում են վախկոտներին և անմիջապես հարձակվում են նրանց վրա: Ակբար, պառկիր:

Վագրը, որին ուղղված էին հնազանդեցնողի խոսքերը, կաղկանձեց խղճալի ու մեկնվեց հատակին:

— Օ՛, իսկապես, անմիջապես պառկեց գազանը,— հուզված արձագանքեց թղթակիցը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

— Իսկ ուժեղ մարդկանցից նրանք վախենում են,— ժպտաց Ահեղյանը,— ու թեև մեծ դժվարությամբ, սակայն հնազանդվում են ի վերջո: Ի՛նգա, նստիր անմիջապես,— որոտաց նա ճաղերին զարկվող առյուծի վրա,— Այդպե՛ս:

— Սմբատ Տաճատիչ, մեր ունկնդիրներին հետաքրքրում է, թե բնավորության ինչպիսի գծեր, հատկանիշներ են պետք գազաններ վարժեցնող դառնալու համար: Այդ հարցի հետ թղթակիցը բարձրացավ տեղից և միկրոֆոնն ավելի մոտեցրեց Ահեղյանին:

— Նստի՛ր, ասում եմ,— գոռաց Ահեղյանը:

Թղթակիցը սարսափահար ընկավ աթոռին:

— Ձեզ հետ չեմ, երիտասարդ,— ծիծաղեց վարժեցնողը,— պարզապես պստիկը չարություններ է անում: Ուրեմն, այսպես՝ գազաններ վարժեցնելու գործին նվիրվող մարդը նախ պետք է ուժեղ կամք ունենա: Ընդգծում եմ՝ ուժեղ: Ավելին՝ անկոտրում, համառ կամք: Նստի՛ր անմիջապես,— գոռաց նա, բայց տեսնելով, որ թղթակիցը կրկին վախեցած նստեց աթոռին, ժպտաց: — Ձեզ հետ չեմ, երիտասարդ: Եվ պետք է լինի քաջ, աներկյուղ, հպարտ: Ընդգծում եմ՝ հպարտ: Եթե նույնիսկ ինչ-որ պահի նա երկյուղ զգա, ոչ մի դեպքում չպետք է ցույց տա, թե վախենում է: Այլապես վերջ, ֆինիշ, ինչպես ասում էր իմ հանգուցյալ մարզիչ Կորյուն Ասլանիչ Պարթևյանը:

— Ինչպե՞ս թե, ուրեմն, նա…— կմկմաց թղթակիցը:

— Այո, նրան կերավ հենց այս Ինգան: Լռիր, փիսիկ,— քնքշորեն ասաց նա առյուծին, որն իր անունը լսելով, գոմռաց ու լայն բացեց երախը՝ ասես ատամնատեխնիկի հրահանգով ցուցադրելով ահռելի ժանիքները:

—Ինչպե՞ս թե... կերավ,— մրմնջաց թղթակիցը:

— Սովորականի պես,— ուսերը թոթվեց վարժեցնողը: — Կորյուն Ասլանիչն Ինգային վարժեցնում էր մի բարդ համարի: Արտիստը գլուխը մտցնում է գազանի երախը: Ապահովության համար Կորյուն Ասլանիչը փորձերի ժամանակ միշտ ինձ էր առաջարկում գլուխս Ինգայի բերանը տանել: Եվ առյուծին ստիպում էր ծնոտները սեղմել այնքան, որ ես ողջ մնամ:

— Եվ ի՞նչ...

— Եվ այն, որ երբ ելույթի ժամանակ ինքը գլուխը գազանի բերանը տարավ, առյուծը ճշտությամբ կատարեց նրա հրահանգները, երախը փակեց ճիշտ այնպես, ինչպես վարժվել էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Բա ինչպե՞ս... ը ը կերավ,— կակազեց թղթակիցը:

— Բանն այն է, որ իմ գլուխը բավականին փոքր է Կորյուն Ասլանիչի գլխից, հասկանո՞ւմ եք,— աչքով արեց Ահեղյանը: Տեղդ, անկո՛ւշտ,— մեղմորեն սաստեց նա Ինգային:

— Եվ... այդքանից հետո դուք չե՞ք վախենում նրա հետ աշխատել,— սարսափով լի աչքերը չհեռացնելով առյուծից, հարցրեց թղթակիցը,

Ահեղյանը ժպտաց,

— Վախենալու ի՞նչ կա: Այն էլ ասեմ, որ Ինգան իմ գազանների մեջ ամենախելոքն է: Տես ինչպես է կոտրատվում: Նա արդեն գիտե, որ իր մասին եմ խոսում: Ավազա՛կ: Ինչ քնքուշն է, չէ՞...

— Շշ՛...շա՛տ...— գլխով արեց թղթակիցը: Իսկ վարժեցնողն ուրիշ ի՞նչ հատկություններ պետք է ունենա, Սմբատ Տաճատիչ:

Ահեղյանը բարձրացավ տեղից, ձեռքերը մեջքին դրեց, ձգվեց, ապա նստեց ու շարունակեց:

— Ես արդեն ասացի՝ վարժեցնողը պետք է ունենա կամք, քաջություն, համառություն, հպարտություն, ուժ, ներքին մեծ զսպվածություն, գերարագ ռեակցիա՝ վտանգից խուսափելու և այն կանխելու համար, երկաթե...

«Երկաթե» բառի վրա Ահեղյանը հանկարծ պատանու թեթևությամբ ցատկեց տեղից, ձգվեց, հետո կծկվեց մի տեսակ և աչքերը չգիտես ինչու դարձան թախծոտ ու աղերսական:

Թղթակիցը զարմացած նայեց այդ կերպարանափոխությանը և վարժեցնողի հայացքի ուղղությամբ ետ նայելով, դռան մեջ տեսավ նիհարիկ, կարճահասակ մի կնոջ, որի աչքերը փայլում էին չարությամբ:

— Երկաթե ի՞նչ,— ինքնաբերաբար հարցրեց թղթակիցը, հայացքը դարձնելով մագնիտոֆոնի սահող ժապավենին:

— Երկաթե...— թավ ձայնով սկսեց Ահեղյանը և հանկարծ վայրկենապես անցավ քնքուշ բարիտոնի: Լսում եմ, Էլյա ջան:

— Ջանդ քեզ պահիր,— սեղմված շրթունքների արանքից նետեց փոքրիկ-մոքրիկ կինը,— դեռ ինձ շա՞տ պետք է սպասեցնես:

— Էլյա ջան,— այնքան բարակ ձայնով սկսեց վարժեցնողը, որ թղթակիցն ակամա չորս կողմը նայեց, որոնելով խոսողին,— Էլյա ջան, ը-ընկերը ռ-ռադիոյից է, մ-մենք, մ-մենք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ուրախ եմ,— սպանիչ ժպիտով, բոլորովին էլ ոչ ուրախ կտրեց կինը: Ուրեմն, չե՞ս գալիս: Հիանալի է: Այդ դեպքում ես գնում եմ:

Ահավոր մի լռություն տիրեց սենյակում: Առյուծն ու վագրն էլ չգիտես ինչու սսկվել-մնացել էին վանդակների հեռավոր անկյուններում:

— Գալիս եմ, ինչպե՞ս չեմ գալիս,— արդեն շատ բարակ, լիրիկական սոպրանոյով երգեց վարժեցնողը,— ինչպե՞ս կարող եմ չգալ, հոգյակս…— Նա այս ու այն կողմ ընկավ, աճպարարի ճարպկությամբ հայտնաբերելով պիջակն ու գլխարկը:

— Գալիս եմ…

Եվ այստեղ թղթակիցն զգաց, որ հաղորդումը ձախողվում է: Միկրոֆոնը որպես ջահ ձեռքին բռնած, նա կտրեց վարժեցնողի ճանապարհը և կանգնելով նրա ու փոքրիկ-մոքրիկ կնոջ միջև, հարցրեց մուրացկանի համառությամբ.

— Երկաթե ի՞նչ, Սմբատ Տաճատիչ:

— Ի՞նչ երկաթ, է…— դեռևս բարակ ձայնով նեղսրտեց հնազանդեցնողը՝ նվիրված աչքերը թղթակցի գլխի վրայով հառած հեռացող կնոջը:

— Վարժեցնողը երկաթե ի՞նչ պետք է ունենա…

— Կամք, երիտասարդ,— որոտաց հնազանդեցնողը,— վճռականություն, անվախ սիրտ և հպարտություն: Ընդգծում եմ՝ հպարտություն: — Եկա, Էլյա ջան… արդեն քեզ մոտ եմ:

Թղթակիցը, որին Սմբատ Տաճատիչն անցնելիս անզգուշորեն մի կողմ էր նետել, ասես երազի մեջ, երերալով մոտեցավ մագնիտոֆոնին.

— Հարգելի ռադիոլսողներ,— ասաց նա՝ վագրի ու առյուծի ահավոր մոնչյունների տակ ցուցաբերելով երկաթե կամք, վճռականություն և հնազանդեցնողին հատուկ մյուս բոլոր հատկությունները,— սրանով թույլ տվեք ավարտել մեր հարցազրույցը պետական կրկեսից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԻՄ ԽԵԼՈՔ ԲԱԼԻԿՆԵՐԸ

Խենթի տեղ կդնեն այն մարդուն, ով հանկարծ հարցնի խելո՞ք երեխաներն են լավ, թե չար, չլսող, անկարգ երեխաները:

Կասեն դա նման է տափակ սրամտություններին, երբ մեկն ասում է.

- Ավելի լավ է մարդ կուշտ լինի, քան քաղցած:

- Ավելի լավ է մարդ հարուստ լինի, քան աղքատ:

- Ավելի լավ է մարդ գլխին մազ ունենա, քան չունենա:

Եվ այլն և այլն:

Կասեն՝ իհարկե խելոք երեխաներն ավելի լավ են: Դա՞ ինչ հարց է:

Եվ կսխալվեն:

Ես էլ նախկինում հավատացած էի, թե խելոք երեխաներն ավելի լավ են, քան...

Բայց հիմա ամենևին էլ այդ կարծիքին չեմ:

Որովհետև իմ երեխաները խելոք երեխաներ են:

Դա միայն իմ կարծիքը չէ: Ես գիտեմ, բոլոր ծնողներն էլ հիացած են իրենց երեխաներով: Բայց նրանց մեջ, թերևս, ես բոլորից շատ այդ իրավունքը ունեմ: Իմ երեխաները իսկապես խելոք են: Փորձեք խաղի ամենաթունդ պահին երեխային կանչել բակից: Նա ձեզ այնպիսի պատասխաններ կտա, որ մի շաբաթ գետինը կմտնեք, կամաչեք հարևանների աչքին երևալ: Բայց իմ տղաները... Երկրորդ անգամ ձայնս չեք լսի: Անմիջապես հայտնվում են վերևում: Կամ աղջիկս՝ մեծը: Հենց նկատեց, որ մի քիչ անտրամադիր եմ, անմիջապես ինքն է ափսեները լվանում, հատակը մաքրում, եղբայրներին ճաշ տալիս: Եվ երեքն էլ հավաքվում են շուրջս:

— Մայրիկ ջան, ի՞նչ անենք, որ դու քեզ լավ զգաս,— ասում է անհանգստացած աղջիկս:

— Գնա՞մ խանութից մածուն բերեմ,— տեղից վեր է թռչում ավագ որդիս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Իսկ փոքրիկս գրկում է ինձ, սեղմվում է այնպես քնքուշ, նայում է ինձ այնքան սիրով ու նվիրված, որ սիրտս ուռչում է հուզմունքից:

— Դու աշխարհի ամենալավ մայրիկն ես,— շշնջում է նա՝ համբուրելով ձեռքերս:

Ամենալավը չգիտեմ, բայց մայրերից թերևս ամենաերջանիկն էի ես... մինչև երեկ:

Իսկ երեկ ահա թե ինչ պատահեց: Սրտի նոպա ունեցա և, ինչպես լինում է նման դեպքերում, տրամադրությունս ընկավ: Հանկարծ մտածեցի, որ մի օր այ այսպես, դարձյալ սրտի նոպա կունենամ, ավելի ուժգին և... և երեխաներս կորբանան: Չգիտեմ ինչու, բայց հանկարծ այնպես խղճացի ինձ: Այսինքն, ճիշտն ասած, ավելի շատ երեխաներիս խղճացի: Պատկերացրի, թե նրանք որքան են վշտանալու, ինչպես են ողբալու, ինչպես են խեղճանալու կյանքում և նստեցի ու մի լավ լաց եղա: Հետո ամուսնուս խղճացի: Ինչպե՞ս պետք է պահի-պահպանի երեխաներին: Երեք երեխա: Իհարկե, ստիպված կլինի ամուսնանալ: Միշտ է, երբ խոսք է լինում այդ մասին, նա միշտ կատակում է, թե խելքը գլխին մարդը մի անգամ ամուսնանալուց հետո նման սխալ երկրորդ անգամ թույլ չի տա, բայց չէ, կտխրի, կտխրի ու կամուսնանա: Ես հո նրան լավ գիտեմ, ամեն ինչ կանի հանուն երեխաների: Եվ խեղճ մարդը կմնա երկու կրակի արանքում: Մի կողմից նոր, ջահել կինը, մյուս կողմից երեք երեխաները: Այդ նորը կպահի՞ երեխաներին, կխնամի՞ այնպես, ինչպես ես էի խնամում (այդ չարաբաստիկ «էի» արտահայտության վրա նորից սրտակեղեք լաց եղա), մայր կդառնա՞ իմ լավ, իմ խելոք բալիկների համար: Բայց ենթադրենք թե ուզենա: Ասենք՝ այնքան սիրի ամուսնուս, որ ցանկանա մայր դառնալ իմ զավակներին: Զավակներս կընդունե՞ն նրան: Այն էլ ինձանից հետո: Այնպիսի մորից հետո, որին նրանք աստվածացնում են: Չէ, իհարկե: Նրանք այնքան էլ փոքր չեն, որ հայրը խաբի, ասի, իբր իրենց մայրիկն է, Մոսկվայից է եկել: Արդեն մեծ են երեխաներս և ինձ ոչ ոքի, ոչ ոքի հետ չեն փոխի: Երբեք:

Անկեղծ ասած, այդ միտքը հանգստացրեց ինձ: Բայց անմիջապես էլ ակամա խղճահարությամբ լցվեցի այն մյուսի, ջահել կնոջ նկատմամբ, որը փաստորեն ինչ-որ տեղ զոհելով իրեն, ուրախություն չի գտնելու մեր ընտանիքում:

Օրինակը հենց մեր դիմացի պատշգամբում է: Ջահել, գեղեցիկ կին է: Սիրելով և հավանաբար նաև խղճալով երկու երեխաների հետ միայնակ մնացած մեր հարևանին, ամուսնացել է հետը, ամեն ինչ անում է երեխաների համար, ամեն ինչ՝ լողացնում է, հագցնում, կերակրում, ավելի լավ է խնամում, պահում, քան նրանց հանգուցյալ մայրը: Եվ ի՞նչ, վարձատրվում է միայն ապերախտությամբ: Աղջիկները նրա կյանքը թունավորում են, հալածում, բամբասում, հետապնդում են: Չեն թողնում հոր հետ տնից դուրս գա, չեն թողնում մազերը հարդարի, նոր հագուստ հագնի: Ամուսինը հանգուցյալ կնոջ մուշտակը նոր կնոջն էր տվել: Պարզապես պատառոտելով պոկեցին վրայից, հետն էլ պատշգամբից կախված ողբաձայն հայտնելով

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

աշխարհին, թե նոր մայրը ծեծում է իրենց, քաղցած է թողնում, թե ուզում է թունավորել իրենց և թե հայրն էլ դանակ է սրում, իրենց համոզում է քաղաքից դուրս զբոսանքի գնալ, որ սպանի Հրազդանի ձորում:

Կարճ ասած՝ դժոխք է դարձել տունը:

Իսկ եթե նույնը նաև մե՞ր տանը կատարվի: Ի՞նչ կլինի իմ խեղճ ամուսնու վիճակը, մտածեցի ես: Հարկավոր է խոսել, անպայման խոսել երեխաների հետ:

Կանչեցի նրանց, գրկեցի մեկ-մեկ, համբուրեցի ու լաց եղա:

— Ի՞նչ է պատահել, մայրիկ ջան,— անհանգստացան նրանք:

— Բալիկներ ջան,— ասացի ես: Գիտեք, որ ես հիվանդ եմ, արդեն մեծ եք, պետք է հասկանաք, որ հնարավոր է ամեն ինչ, հնարավոր է, որ ես մահանամ:

— Ինչ ես ասում, մայրիկ ջան,— լաց եղավ աղջիկս,— ոչինչ էլ չի լինի, այ կտեսնես, կառողջանաս:

— Դեղ բերե՞մ,— իսկույն տեղից վեր թռավ ավագ որդիս: — Խմիր, կանցնի, մայրիկ ջան:

— Չի անցնի,— բարկացա ես: Եվ լռեք, երբ ձեզ հետ մեծերը խոսում են:

Ախր խելոք են իմ բալիկները: Լռեցին անմիջապես և տխուր-տխուր ինձ են նայում:

— Բա ես առանց քեզ ի՞նչ կանեմ, մայրիկ ջան,— վախեցած թնկթնկաց փոքրս:

Գրկեցի նրան և աշխատելով պահել արժանապատվությունս , հեկեկոցս խեղդելով ասացի.

— Այ, հենց դրա համար էլ հավաքել եմ ձեզ, իմ զավակներ: Եվ ուզում եմ լրջորեն խոսել ձեզ հետ: Գիտեմ, սիրում եք ձեր հորը, և նա արժանի է դրան: Երբ ես... ես չլինեմ,— նկատելով, որ նրանք կրկին ուզում են բողոքել, բարձրացրի ձայնս,— երբ ես չլինեմ, ուզում եմ, որ դուք ավելի խելոք լինեք, ավելի սիրեք ու հարգեք ձեր հայրիկին: Խոստացեք, որ այդպես կլինի:

— Խոստանում ենք,— միաբերան բացականչեցին իմ խելոք բալիկները:

— Նա դեռ երիտասարդ է,— ասացի մեծահոգության լացակումած պոռթկումով,— և հավանաբար նոր մայրիկ կբերի ձեզ համար:

— Մենք նոր մայրիկ չենք ուզում,— հուսահատ աղմկեցին նրանք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Պիտի ուզեք,— ինչ-որ ներքին ուրախությամբ, բայց այնուամենայնիվ ջղայնացա ես,— եթե ինձ սիրում եք, պիտի ուզեք: Մի՞թե պետք է նմանվեք մեր դիմացի պատշգամբի չար աղջիկներին: Մի՞թե դուք իմ զավակները չեք: Մի՞թե կարող եք վշտացնել ձեր հորը, չհարգել ձեզ խնամող այդ նոր մայրիկին: Ընդհակառակը, պետք է այնպես պահեք ձեզ, որ այդ խեղճ կինը լավ զգա այստեղ, երջանիկ լինի: Խոստացեք, որ այդպես կլինի:

— Խոստանում ենք,— կամացուկ ասացին նրանք:

— Ավելի բարձր և անկեղծ,— իմ մեծահոգությունից շնչասպառ պահանջեցի ես:

— Խոստանում ենք,— ոգևորված, անկեղծությամբ երդվեցին երեխաներս:

Եվ հանկարծ զգացի, որ չափն անցել եմ:

— Այ, հիմա արդեն հանգիստ եմ, — ասացի՝ զգալով, որ սիրտս ուր որ է կպայթի:

— Ախր ես ի՞նչ անեմ, նոր մայրիկ չեմ ուզում,— բարձրաձայն լաց եղավ փոքրիկս՝ ասես կրկին կյանք պարգևելով ինձ:

Բայց մեծերը անմիջապես հարձակվեցին նրա վրա:

— Ձայնդ կտրիր, ինչպես մայրիկն ասում է, այնպես էլ կլինի, — սաստեց աղջիկս:

— Ի՞նչ է, մայրիկին պետք է վշտացնե՞ս,— բարկացավ ավագ որդիս,— կսատկեցնեմ, եթե մեր նոր մայրիկին չլսես:

— Լավ, լավ, կլսեմ,— վախեցավ փոքրիկս,— բա ո՞վ ճաշ կեփի ինձ համար,— թույլ-թույլ առարկեց նա:

— Ես կեփեմ,— ասաց մեծ աղջիկս, — հետո, դու որտեղի՞ց գիտես, որ նոր մայրիկը ավելի լավ ճաշեր չի եփի: Գուցե մենք խնդրենք, որ հայրիկը վարպետ խոհարարուհի բերի մեզ համար:

— Բա ինձ ո՞վ դպրոց կտանի,— արդեն պարզապես սեփական խիղճը հանգստացնելու համար, կամացուկ ասաց փոքրիկս:

— Ես կտանեմ,— վճռեց ավագ որդիս: Հետո դու մի մոռացիր, որ տանը մեզ շտապեցնող չի լինի այլևս և դպրոցից վերադառնալիս կգնանք կինո՝ նոր մուլտեր կնայենք, կմտնենք խանութները, կթափառենք փողոցներում, ծամոն կառնենք, կծամենք:

— Ինչ լավ կլինի,— անկեղծ ուրախացավ փոքրիկս: Իսկ դո՞ւ ինձ կլողացնես, քույրիկ ջան, թե՞ նոր մայրիկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Չէ մի, նոր մայրիկին պիտի անհանգստացնենք,— ասաց աղջիկս,— ես կլողացնեմ քեզ, կպառկեմ կողքիդ, հեքիաթներ կպատմեմ:

— Իսկ ես կլուծեմ խնդիրներդ և իմ լուսանկարչական ապարատը քեզ կտամ,— քրոջից ետ չմնալու համար ասաց ավագ որդիս, որն իմ ողջ ժամանակ (թյո՛ւ) իր ապարատը նույնիսկ հեռվից ցույց չէր տալիս նրան:

Ոգևորված և հուզված գրկեցին իրար և օրորվելով բարձրաձայն սկսեցին երազել իրենց նոր կյանքի, նոր մայրիկի ու նոր պայծառ հեռանկարների մասին, որ նրանց առջև բացում էր իմ վաղաժամ մահը:

Սիրտս կանգ առավ զայրույթից՝ տեսնելով ապերախտության այդ ցույցը: Բայց մի վայրկյան անց արդեն ծիծաղում էի: Ծիծաղում էի սրտանց, լիաթոք, առողջ ծիծաղով, այնպես, որ երեխաները շրջվել ու զարմանքախառն հիասթափությամբ ինձ էին նայում:

Ախր չէ՞ որ ես նրանց հասցրեցի այստեղ:

Չէ, պետք չէ հիվանդանալ:

Չէ, եթե հիվանդ էլ ես, ոչ ոքի չպետք է ասել:

Եվ ամենակարևորը... Պետք է աշխատես, որ երեխաներդ այնքան էլ խելոք, պատրաստակամ ու լսող չլինեն:

Հավատացեք ինձ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԻՄ ԳՐԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԸ

Երբ կարդում եմ հիշողություններ կամ էսսեներ՝ նվիրված որևէ նշանավոր գրողի կյանքին, ինձ ամենից առավել ցնցում են նման պատկերները.

«Աշխատասենյակից երկար ժամանակ հնչում էր մեծ գրողի հանդարտ ոտնաձայնը»:

Կամ՝

«Գրողը ցասկոտ շարժումով թափահարեց ալեհեր գլուխը և դուռն ամուր շրխկացնելով փակվեց իր աշխատասենյակում: Ուղիղ երեք օր նա դուրս չեկավ այնտեղից»:

Երեք օր: Ինձ երեք րոպե անգամ չեն թողնում աշխատել:

Հենց սկսում եմ գրել, ամուր շրխկոցով բացվում է դուռը, ներս է մտնում տղաս, բացում է ջրի ծորակը ու սկսում չփչփացնելով լվացվել:

— Այ տղա,— տնքում եմ ես,— դրա համար լողասենյակ գոյություն ունի:

— Իսկ լողասենյակում էլ Գոհարիկ գոյություն ունի, — փնչում է տղաս:

Նրանից անմիջապես հետո աղջիկս է հայտնվում ու չխկչխկացնելով լվանում ափսեները: Իսկ երբ նրանցից հետո կինս է իմ աշխատասենյակը մտնում, միանգամից պակասում է օդը և այն ամենը, ինչ կենսական տարածություն է կոչվում: Ես կամաց-կամաց սեղանի մի անկյունն եմ քաշվում, որովհետև կինս սկզբում փոքր լվացքն է արդուկում և հետո է անցնում մեծերին:

Իսկ երբ սավաններն է արդուկում, իմ աշխատանքն ինքնաբերաբար համարվում է ավարտված:

Կարծում եմ կռահեցիք, որ իմ աշխատասենյակը խոհանոցն է:

Երբ ամուսնացանք, մի սենյականոց բնակարանում էինք ապրում: Եվ ես կնոջս ցուցումով, բնականաբար, աշխատում էի խոհանոցում:

— Ոչինչ, սիրելիս,— մխիթարում էր կինս,— այսպես հո չի մնա: Հենց որ երկու սենյականոց բնակարան ստանանք, մեկը կդարձնենք քո աշխատասենյակը: Կփակվես ու կաշխատես քեզ համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ստացանք: Մի սենյակում կինս էր քնում, մյուսում՝ երեխաներս: Իսկ ես կնոջս ցուցումով, բնականաբար, աշխատում էի խոհանոցում:

— Ի՞նչ անեմ,— խղճահարվում էր կինս,— եթե երեք սենյականոց բնակարան ունենայինք, հո այսպես չէր լինի: Երդվում եմ, հենց որ երեք սենյակ ունենանք, մեկը քոնն է: Կկահավորենք ինչպես հարկն է, իսկական գրասեղան կառնենք, նկարդ էլ կփակցնենք գրասեղանի վերևում: ու ո՞ր գրողից ես պակաս:

Կնոջս ցավը տանեմ: Մի բան որ վճռեց՝ վերջ: Նոր բնակարանի սենյակներից մեկը նա իրոք անմիջապես աշխատասենյակ դարձրեց: Ծուռ ոտքերով հունգարական գրասեղան գնեց ու տեղավորեց պատուհանի մոտ, իսկ մեծադիր նկարս էլ, որ Վարդգեսի լուսանկարչատանն էի պատվիրել, փակցրեց գրասեղանի վերևում:

Միայն թե գրասեղանն անմիջապես գրավեց տղաս:

— Ի՞նչ անեմ,– արցունքն աչքերին ասաց կինս,— բա երեխան որտե՞ղ պարապի, այ, եթե չորս սենյակ ունենայինք...

Հիմա մենք չորս սենյակ ունենք, որից երկուսը աշխատասենյակ– առանձնասենյակներ են: Մեկը տղաս է զբաղեցնում իր ռադիո և հեռուստատեսային սարքերով, մյուսը՝ աղջիկս իր տիկնիկների հավաքածուով և «Պետրոֆ» դաշնամուրով, երրորդը անձեռնմխելի ճաշասենյակն է, չորրորդում քնում է կինս, իսկ ես կնոջս ցուցումով, բնականաբար, զբաղեցնում եմ խոհանոցը:

Գիշերը դեռ ոչինչ, աշխատասենյակից երկար ժամանակ հնչում է իմ հանդարտ ոտնաձայնը: Բայց միայն այդքանը: Հենց սկսում եմ գրել, ամուր շրխկոցով բացվում է դուռը, ներս է մտնում տղաս ու... Երբ կինս սկսում է սավաններն արդուկել, իմ աշխատանքն ինքնաբերաբար համարվում է ավարտված:

Տեսնելով իմ տառապանքը, կինս հեկեկում է անմխիթար.

— Ի՞նչ անեմ, եթե գոնե հինգ սենյակ ունենայինք,— մրմնջում է նա:

Բայց ես արդեն գիտեմ, որ ինձ հինգ սենյակն էլ չի փրկի: Եվ չի փրկի նաև տասնհինգը: Եթե մարդ չկարողացավ մի սենյակում իր տեղն ունենալ, տասնհինգում էլ չի ունենա: Բնավորության հարց է և բախտի հարց:

Իմ հույսը երկրորդ խոհանոցն է: Միայն և միայն երկրորդ խոհանոցը: Որ մեկում կինս սավաններ արդուկի, կարկանդակներ թխի, իսկ ես էլ մյուսում իմ պատմվածքները...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Այսինքն եկեք հարցին փիլիսոփայորեն նայենք: Գուցե աշխարհում ոչ մի գրող էլ աշխատասենյակ չունի: Գուցե բոլոր գրողներն էլ խոհանոցում են գրում և խոհանոցն են համարում իրենց աշխատասենյակը: Իհարկե, հենց այդպես էլ կլինի:Դե չէ որտեղի՞ց է ստեղծվել «Գրական խոհանոց» արտահայտությունը: Իհարկե՝ խոհանոցից: Եվ վերջապես ի՞նչ է նշանակում խոհանոց: «Փնտրիր արմատը»,— ասում է Կուզմա Պրուտկովը: Փնտրում եմ: Խոհանոցի արմատը խոհն է: Իսկ խոհ՝ նշանակում է միտք: Ուրեմն խոհանոց նշանակում է մտքերի վայր, մտքերի տեղ...

Էլ ուրիշ ո՞րն է իսկական գրողի տեղը, եթե ոչ խոհանոցը:

Միայն մի բան է զարմացնում ինձ. թե կինս՝ առանց համապատասխան կրթության և առանց համապատասխան փիլիսոփայական ընդհանրացումների, հենց սկզբից և մեկընդմիշտ ինչպե՞ս է որոշել իմ տեղը տան մեջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐԵՔ ԱՆՀԱՅՏՈՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ

/Հոգեբանական դետեկտիվ՝ հումանիտար թեքումով/

Նստած էին իրար դիմաց կապիտան Աբելյանը և ուսանող պրակտիկանտ Սաթյանը: Նստած էին իրար դիմաց սերունդները: Հանցագործ տարրերի դեմ մղված անողոք կռիվներում թրծված, մեծ փորձ ձեռք բերած և փոխարենը գանգուր մազերից զրկված հին հետախույզը և նոր-նոր կյանք մտնող գանգրահեր պատանին, որն անհամբեր դեպի կռիվ էր մղվում, սարսափելով այն մտքից, թե մինչև ավարտի համալսարանը, աշխարհում այլևս քիչ թե շատ խելքը գլխին հանցագործ չի մնա:

Կապիտանը շատ էր կանգնել վտանգի դեմ-հանդիման և վախ ասած բանը չուներ, բայց հոգու խորքում չէր կարող գոնե իրեն չխոստովանել, որ երկյուղ էր կրում այդ նորաթուխ պրակտիկանտից: Հենց որ Սաթյանը ներս էր մտնում, կապիտանը ցնցվում էր ակամա: Նա ցնցվեց նաև հիմա:

— Մի կարգին գործ տվեք, ընկեր Աբելյան,— ասաց Սաթյանը:

— Նոր գո՞րծ: Իսկ այն սպանության գործն ի՞նչ արեցիր:

— Բացահայտեցի, ընկեր Աբելյան: Հանցագործը խոստովանեց և հնդկական փափուկ օթոցի միջից հանեց ու ինձ տվեց ֆիննական դանակը, որի շեղբի վրա տուժողի արյունն էր:

Կապիտանը կարմրատակեց:

— Բայց ես հարյուր անգամ հարցաքննել եմ այդ սրիկային նույն այդ հնդկական փափուկ օթոցին նստած, ինչո՞ւ ինձ չխոստովանեց:

Պրակտիկանտը թոթվեց ուսերը:

— Մի կարգին խճողված գործ տվեք, ընկեր Աբելյան,— նորից խնդրեց նա:

Կապիտանը քորեց նախկին գանգրահեր գլուխը:

— Սրապյանից վերցրու ոսկերչական խանութի կողոպուտի գործը: Չբացված գործ է, ծանոթացիր:

— Ո՞րն է չբացված,— ծիծաղեց Սաթյանը: Մի թեթև պատմեց, ասացի գնացեք խանութի վարիչի տուն, թթվի տակառը կրկնակի հատակ ունի: Ձարդերն այնտեղ են:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Հետո՞,— գունատվեց կապիտանը:

— Քիչ առաջ զանգահարեց: Ասաց՝ զարդերը հայտնաբերել են, բայց մի քիչ կուշանան, որովհետև արտակարգ թթու է:

Կապիտան Աբելյանը թթու հայացքով նայեց սկսնակ հետախույզին:

— Հիմա ինձնից ի՞նչ ես ուզում, այ տղա,— հարցրեց անկեղծորեն:

— Գոնե մի քիչ լուրջ հանցագործ, մի քիչ բարդ, խճճված գործ, դե, ինչպես ասեմ, գոնե երկու-երեք անհայտով հավասարում, որպեսզի հնարավորություն ունենամ շարժել ուղեղս: Շատ եմ խնդրում,— աղերսեց պրակտիկանտը: Որ գնամ համալսարան, ընկեր Թովմասյանին ի՞նչ պատասխան եմ տալու:

Այդ պատանին հանցագործներին այնքան թեթևությամբ էր մերկացնում, որքան կապիկը բանանը: Եվ այնքան հեշտությամբ էր բացում ամենախճճված գործը, որքան մարգարիտ որոնողը՝ ոստրեն: Իր պրակտիկայի վեց օրերի ընթացքում նա բառի բուն իմաստով բացահայտել էր երկու սպանություն, երեք կողոպուտ, երեք դանակահարություն և բառի փոխաբերական իմաստով մերկացրել էր տասնհինգ սպեկուլյանտների, դրամաշորթերի ու խաղամոլների: Բացի դրանից, իր նախաձեռնությամբ, հայտնաբերել էր ալիմենտ վճարելուց խուսափող երկու չարակամի և ուղղակի կեղծ մորուքից բռնելով ու ձգելով բաժին էր բերել գերեզմանատներում սխալ ձայնով «Տեր ողորմյա» երգող մի ծպտված տերտերի:

— Ես քեզ համար որտեղի՞ց այդքան հանցագործ գտնեմ, այ տղա: Սա հո Տեխասը չէ՞,— իրավացիորեն վրդովվեց Աբելյանը:

— Բա ի՞նչ անեմ, պրակտիկաս դատա՞րկ անցնի,— խեղճացավ Սաթյանը:

Կապիտան Աբելյանը երկար-երկար նայեց պրակտիկանտ Սաթյանին: Նայեց ճիշտ այն հայացքով, որով հեքիաթի չար թագավորն էր նայում յոթ սարի ու յոթ ձորի ետևից արքայական խնձորը, անմահական ջուրն ու հազարան բլբուլը բերող անպատկառ փեսացուին ու տենդորեն մտածում, թե էլ որտեղ ուղարկի նրան, որ այլևս ետ չգա:

Հետո կապիտան Աբելյանը ձեռքը խփեց լայն ճակատին, անաղմուկ բարձրացավ տեղից, մոտեցավ չհրկիզվող պահարանին, կտրուկ շարժումով բացեց դուռը, ինչ-որ թվեր հավաքելով մի փոքրիկ դռնակ էլ բացեց և այնտեղից դուրս բերեց մի բարակ թղթապանակ:

— Վերցրու,— վատ թաքրած չարախնդությամբ ասաց նա:

— Սա ի՞նչ է,— անփութորեն հարցրեց պրակտիկանտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Կարճված գործ:

— Սպանությո՞ւն է:

— Գողություն:

— Ի՞նչ են գողացել:

— Կոշիկներ:

— Կոշիկնե՞ր... Եվ դուք ձեր վիթխարի փորձով ու հմտությամբ չե՞ք կարողացել բռնել կոշիկների գողին,— զարմացած հարցրեց պրակտիկանտը՝ ասես հարևանցի, սակայն բավականին սևեռուն մի հայացք նետելով կապիտանի բոլորովին նոր, փայլփլուն կոշիկներին:

Հետախուզության պետը շիկնեց պատանու նման, նստեց և աթոռի տակ ետ տարավ կոշիկները:

— Առեղծվածային պատմություն է,— ասաց նա: Հանցագործը կամ հանցագործները պատուհանից մտել են քաղաքացի Սիմոն Հրեղենի տուն հենց այն ժամանակ, երբ նա խաղաղ քնած է եղել, մահճակալի մոտից վերցրել են նրա գրեթե նոր կոշիկները, պահարանից ևս մի զույգ բոլորովին նոր կոշիկ և անհետացել:

— Իսկ դեպքի վայրում որևէ հետք չե՞ն թողել,— արագ հարցրեց պրակտիկանտը:

— Հետքեր չեն թողել,— ասաց կապիտանը,— բայց փոխարենը մահճակալի մոտ թողել են մի զույգ տրեխ:

— Ի՞նչ, — զարմացավ պրակտիկանտը:

— Տրեխ:

— Իսկ ի՞նչ բան է տրեխը:

Կապիտանը ժպտաց ներողամտորեն և հնարավորություն ստացավ թփթփացնելու պրակտիկանտի ուսին:

— Տրեխը, երիտասարդ, կոշիկ է, որ ժամանակին հագնում էին մեր գյուղացի հայրերը: Դրանք կարում էին եզան կամ խոզի կաշվից…Այ այսպիսի ցցված սուր քթերով...

— Ախ, մոկասի՞ն,— կռահեց պրակտիկանտը: Ուրիշ որևէ բան չե՞ն տարել տնից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ահա առեղծվածը,— հառաչեց կապիտան Աբելյանը: Պատկերացնո՞ւմ ես, Սաթյան, ձեռք չեն տվել ոչ կանխիկ դրամին, ոչ բյուրեղապակուն և ոչ էլ նույնիսկ մագնիտոֆոնին:

Պրակտիկանտ Սաթյանի ճակատի ջիղը շարժվեց:

— Իսկ այդ Սիմոնը ինչո՞ւ է հրեղեն,— հարցրեց նա,— ինչի՞ց եք ենթադրում...

— Հրեղեն նրա ազգանունն է,— ավելի լայն ժպտաց կապիտանը: Այսինքն՝ նրա գրական անունը: Սիմոն Հրեղենը բանաստեղծ է:

— Բանաստե՞ղծ,— զանգուր մի մազափունշ մատի վրա փաթաթելով, մտախոհ կրկնեց պրակտիկանտը: Բանաստեղծ... Գուցե երկրպագունե՞րն են գողացել նրա կոշիկները՝ իբրև հիշատակ:

Կապիտան Աբելյանը փռթկացրեց.

— Հիմա ո՞վ է բանաստեղծություն կարդում: Այն էլ երիտասարդ բանաստեղծներին: Իմ կարդացած վերջին բանաստեղծությունն օրինակ, «Մարոն» է եղել:

— Ինչ-որ մեկը փորձել է խաղալ նրա հոգու հետ: Դա կատակ է:

Կապիտան Աբելյանը թափահարեց գլուխը:

— Սիմոն Հրեղենը այդ կարծիքին չէ: Կամ գուցե հումոր չունի, ես ինչ իմանամ: Հոգիս հանել է անիծածը: Երեք անգամ մինիստրի մոտ է գնացել չափածո բողոքով:

— Կոշիկների համա՞ր,— հոնքերը կիտեց պրակտիկանտը: — Իսկ գուցե... գուցե Շիրվանզադեի «Արտիստի» նման նա իր կոշիկների կրունկների մեջ ոսկինե՞ր է ունեցել պահած:

— Բանաստեղծ և ոսկի՞,— այս անգամ բացահայտ քրքջաց Աբելյանը: — Եթե մարդ փող ունենա, էլ ինչո՞ւ պետք է բանաստեղծություն գրի:

Պրակտիկանտ Սաթյանը ամոթից կարմրեց: Եվ հենց դա էլ օգնեց նրան: Դեպի դեմքը բարձրացող արյան հորձանքի հետ նրա գիտակցությանը հասավ մի կայծ, դեռ չձևավորված, մարմին չառած մի կռահում...

— Ընկեր կապիտան, զանգահարեցեք ձեր պաշտոնակցին՝ ուսանողական թաղամասից, և խնդրեք մեզ ուղարկել իրենց մոտ գտնվող նույնատիպ գործը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ենթադրում ես, թե այնտեղ է՞լ են բանաստեղծի կողոպտել,— զարմացած հարցրեց Աբելյանը:

— Համոզված եմ:

— Այս մեկը բացեցիր, հիմա էլ ո՞ւրիշ գործ ես ուզում,— խնդմնդաց կապիտանը:

— Ներեցեք, իհարկե, ընկեր Աբելյան, բայց մանուկ հասակում ի՞նչ խաղեր էիք խաղում:

Կապիտանի աչքերը երազկոտ դարձան:

— Փոքր ժամանակ… դե, չլիկ-դաստա, երկար էշ, հավալա…

— Իսկ յոթ քարանի չէի՞ք խաղում, գնդակով:

— Մեզ գնդակ որտեղի՞ց, այ տղա,— տխրեց կապիտանը:

Եվ պրակտիկանտ Սաթյանը բացատրեց, որ երբ մութն ընկնելիս գնդակը երբեմն կորչում էր, որպեսզի գտնեին, մի նոր գնդակ էին նետում նույն ուղղությամբ և վազում ետևից: Եվ ճիշտ որ՝ տեսնում էին, որ երկու գնդակն էլ ընկած են իրար մոտ:

— Ուրեմն երկրորդ գործը քեզ դրա՞ համար է պետք,— ի պատիվ իրեն անմիջապես կռահեց կապիտանը: Որպես երկրորդ գնդա՞կ:

— Ճիշտ այդպես:

Կապիտան Աբելյանը հեռախոսով մի համար հավաքեց:

— Եղիշ,— գոռաց նա: Բարև: Աբելյանն է: Ձեր շրջանում հո գողություն չի՞ կատարվել:

— Բանաստեղծի տնից,— հուշեց Սաթյանը:

— Բանաստեղծի տնից,—կրկնեց Աբելյանը: Ի՞նչ: Ինչ են տարե՞լ: «Ժիգուլի՞»… Գողը բռնվա՞ծ է: Ո՞չ:

Պրակտիկանտ Սաթյանը որսի հոտն առած քերծեի նման հուզմունքից դողաց, փայլող աչքերով նայեց կապիտանին և նրա ուշադրությունը գրավելու համար մատով թխկթխկացրեց գրասեղանին:

— Ներս մտեք,— գոչեց կապիտանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Չէ, չէ, ես եմ,— հիշեցրեց Սաթյանը: Ասացեք, եթե հանցագործը դեպքի վայրում որևէ իր է մոռացել կամ թողել, թող գործի հետ ուղարկեն:

— Եղիշ,— գոռաց կապիտան Աբելյանը,— եթե հանցագործը դեպքի վայրում որևէ իր է մոռացել կամ թողել, գործի հետ ինձ ուղարկիր: Ի՞նչ…— նա բարձրացավ տեղից ու ասես ականջներին չհավատալով, հարցրեց նորից: Ի՞նչ... Չէ, չէ, ուղարկում ես, ի՞նչ անեմ… իբրև թե մեզ մոտ քի՞չ կան: Լավ:

Նա ցած դրեց լսափողը ու հազիվ լսելի մրմնջաց.

— Էշ… ավանակ:

— Ո՞վ, այդ Եղի՞շը,— հետաքրքրվեց պրակտիկանտը:

— Չէ, ա՛յ տղա,— ծիծաղեց կապիտան Աբելյանը: Ուղղակի հանցագործները բանաստեղծ Արշալույս Ծովունու ավտոտնակից գողացել են նրա «Ժիգուլի» ավտոմեքենան և փոխարենը ի՞նչ ես կարծում, ի՞նչ են թողել… մի էշ...

— Է՞շ, սովորակա՞ն...

— Էշի արտասովորը ո՞րն է, Սաթյան,— նորից ծիծաղեց Աբելյանը,— հը , հիմա ի՞նչ ես ասում: Սա էլ քո երկրորդ գնդակը:

Պրակտիկանտ Սաթյանը գանգուր գլուխը ափերի մեջ առավ: Մտքերը արագ-արագ շարժվում ու բզզում էին նրա գլխում՝ փեթակի գազազած մեղուների պես: Խոցված արժանապատվությունը ելք էր պահանջում: Հանկարծ նա ընդոստ շարժումով ետ նետեց գանգուր մազերը, նայեց պատուհանից դուրս ու…

Ու հենց այդ ժամանակ ամուր շրխկալով կրնկի վրա բացվեց դուռը և առանձնասենյակի շեմին հայտնվեց զզզզված մազերով, քերծված ձեռքերով, ցնցոտիներ հագած մի բարձրահասակ երիտասարդ:

— Բանաստեղծ Սանասար Զովասար,– որոտաց նա:

— Ահա և երրորդ գնդակը, Սաթյան,— քրքջաց կապիտան Աբելյանը:

Բանաստեղծն անմիջապես խոժոռվեց:

— Երրորդ գնդակը խաղից դուրս վիճակից խփվեց: Ես դարպասի ետևում էի նստած: Խնդրում եմ չվիճել ինձ հետ: — Բայց նկատելով, որ ոչ ոք չի պատրաստվում վիճել իր հետ՝ բանաս-տեղծը անցավ բուն խնդրին: Նա ձախ ձեռքը կրծքին դրեց, աջը մեկնեց դեպի հետախույզները

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ու ինչպես հիմա ամենուրեք ընդունված է ասել, ի խորոց սրտի կերկերուն ձայնով բացականչեց:

— Իմ միլիցիան իմ պահապանն է:

— Ճիշտ է,— հուզված հաստատեց Աբելյանը:

— Ուրեմն պահպանեցեք և պաշտպանեցեք ինձ, ես անմեղ զոհ եմ,— շարունակեց բանաստեղծը՝ ձեռքերի տեղերը սկզբունքորեն փոխելով, այսինքն՝ աջ ձեռքը դնելով կրծքին և ձախը մեկնելով հետախույզներին:

Պրակտիկանտ Սաթյանը դանդաղորեն բարձրացավ տեղից:

— Ձեզանից ի՞նչ են գողացել և ի՞նչ են թողել դեպքի վայրում,— կտրուկ հարցրեց նա:

— Ինձ են թողել դեպքի վայրում,— շշնջաց բանաստեղծը: — Ինձ՝ Սանասար Զովասարիս,,.

Եվ պատմեց մի սահմռկեցուցիչ պատմություն:

Գիշերվա ժամը երեքին Սանասար Զովասարը արթնանում է դռան զանգից: Համոզված լինելով, որ զանգողը հերթապահությունից վերադարձող բուժքույր կինն է, նա հենց այդպես կիսաշապիկ-կիսավարտիքով բացում է դուռը և առանց նայելու ետ դառնում, որպեսզի շտապ անկողին մտնի: Նույն վայրկյանին մի ծանր ձեռք փակում է նրա բերանը և բանաստեղծը ինչ-որ զզվելի քաղցրավուն փալասի հոտ է առնում:

— Քլորոֆորմ,— նետեց պրակտիկանտը: Եվ դուք ուշագնաց եղաք:

— Չեմ հիշում,— ասաց բանաստեղծը: Բայց որ ուշքի եկա՝ հիշում եմ: Դա սարսափելի էր: Ինչպես որ եղել էի, կիսաշապիկ-կիսավարտիքով ինձ նետել էին հողոտ ու քարքարոտ մի դաշտ: Խոտի ցողունները անգթաբար ծակոտում էին իմ բազմաչարչար մարմինը: Այո, այո', խոտը միայն հեռվից է գեղեցիկ: Մոտիկից ծակծկում է: Իմ կողքին այս ցնցոտիներն էին ընկած: Ստիպված հագա: Բերանումս սաստիկ քաղցրահամ կար: Եվ հանկարծ ջուր նկատեցի, աղբյուր էր, բայց շատ ներքևում էր, հողից էլ ցած… հոգիս դուրս եկավ մինչև խմեցի: Դեռ վայրենի ենք, վայրենի: Մի՞թե չէր կարելի բարձրացնել ջուրը, ցայտաղբյուր կառուցել այդ դաշտում: Եվ ո՞վ պետք է դա անի:

— Դեպքի վայրը ձեզ ծանոթ չէ՞ր, ընկեր Զովասար,— հարցրեց կապիտան Աբելյանը:

— Սկզբում ծանոթ չէր, բայց երբ լավ նայեցի շուրջս, հասկացա, որ իմ ծննդավայրի մոտերքում եմ: Հեռվում արեգակի շողերով ողողված մեր գյուղն էր: Թեև շատ դժվարությամբ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

բայց ես նույնիսկ մեր տունը գտա՝ մենավոր ընկուզենու տակ: Երկու ժամ տևեց մինչև մայրուղի հասա և պատահական մի ավտոմեքենայով եկա այստեղ:

— Իսկ ինչո՞ւ գյուղ չգնացիք, ձեր տուն,— հարցրեց կապիտանը: Թե՞ այնտեղ հարազատներ, ազգականներ չունեք:

— Որքան գիտեմ մի քանիսը կան, մասնավորապես հայրս,— ասաց բանաստեղծը: Բայց դե կտրվել ենք իրարից, օտարացել: Հետո ես ի՞նչ պետք է անեի գյուղում: Ցեխ, թրիք, մլակ, մոծակ... Այս անիծյալ քաղաքին այնպես ենք սովորել, որ... նողկում եմ, ատում եմ... Սակայն...

— Իսկ այդ հանցագործները ի՞նչ նպատակով էին... առևանգել ձեզ,— ինքն էլ ակամա վերամբարձ ոճով հարցրեց Աբելյանը: Ձեր բացակայության ժամանակ հանգիստ կողոպտե՞լ էին ձեր տունը:

Բանաստեղծը ցնցոտիի անցքի միջից քորեց ծունկը:

— Ոչ մի բան, պատկերացնո՞ւմ եք, ոչինչ չէին տարել, նույնիսկ նոր լույս տեսած բանաստեղծությունների գիրքս տեղում էր:

Կապիտանի զգոն աչքը նկատեց, թե ինչպես «Բանաստեղծությունների գիրք» արտահայտության վրա ջղաձգորեն ցնցվեց պրակտիկանտ Սաթյանի աջ հոնքը: «Նյարդերը չեն դիմանում,— ոչ առանց գոհունակության մտածեց նա: Է , տղա ջան, բա որ իմ տարիքին հասնես, ի՞նչ պիտի անես»: Իսկ բարձրաձայն ասաց,

— Նույն ձեռքն է:

— Ի՞նչ է, մեկ ուրիշի բերանն է՞լ են փակել,– ձեռքը վախեցած բերանին տարավ բանաստեղծը:

Նրան ոչ ոք չպատասխանեց: Կապիտան Աբելյանը բազմանշանակ հայացքով պրակտիկանտ Սաթյանին նայեց՝ նրան հրավիրելով շարունակել հետաքննությունը, սակայն գանգրահեր պատանին տարուբերեց գլուխը:

Նրա հետ ինչ-որ շատ տարօրինակ բան էր կատարվում: Ասես միանգամից կորցրել էր հետաքրքրությունը թե՛ գողության արտասովոր դեպքերի, թե՛ բանաստեղծի առեղծվածային առևանգման, թե՛ կապիտանի ապրումների նկատմամբ: Նրա դեմքը միայն անտարբերություն էր արտահայտում:

«Իհարկե, քեզ համար ի վերջո ի՞նչ կա, ամեն ինչի համար ես եմ պատասխան տալու», — դառնությամբ մտածեց կապիտանը և դարձավ բանաստեղծին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ընկեր Զովասար, դուք թշնամիներ ունե՞ք:

Սանասար Զովասարը արհամարհանքով ժպտաց.

— Ինչպես կարող է տաղանդը թշնամիներ չունենալ,— համեստորեն ասաց նա: — Բոլոր անտաղանդ գրողներն ու քննադատներն իմ թշնամիներն են:

— Իսկ դուք չե՞ք ենթադրում, թե ով կարող էր ձեզ հետ... այդ խաղը խաղալ,— հարցրեց կապիտանը:

— Սպասեք, ուրեմն դուք սա խա՞ղ եք համարում,— ոտքի կանգնեց բանաստեղծը, դուք սա խաղ եք համարում, հա՞ ... Այդ դեպքում թույլ տվեք հարցնել, թե ինչ տեսակ խաղ է սա՝ նարդի՞, դոմինո՞, թե՞ տապկնոցի... խաղ է, հա՞... հիմա ես այնպիսի խաղ կխաղամ ձեր գլխին...

Կապիտան Աբելյանը հսկայական ջանքեր գործադրեց, մինչև որ կարողացավ հանգստացնել գազազած բանաստեղծին: Բանաստեղծին հանգստացրեց, բայց ինքը չէր հանգստանում: Պրակտիկանտ Սաթյանի անտարբերությունը սպանում էր նրան: Ոչ մի հարց, ոչ մի միջամտություն: Երեխայի նման նստել ու տնակներ է նկարում՝ ծուռ ծխնելույզից երկինք բարձրացող ծխի քուլաներով: Կարծես թե այս ամենը նրա հետ ոչ մի կապ չունի:

— Հարգելի ընկեր Զովասար,— ասաց կապիտան Աբելյանը: Դուք պատմեք ձեր կյանքի, շրջապատի, ծանոթների մասին... գուցե ես կարողանամ որևէ թել գտնել այս հանգույցը քանդելու համար:

Բանաստեղծը բարձրացրեց իր հպարտ գլուխը:

— Իմ կյանքը, իմ շրջապատը, ինձ տանջող հարցերը իմ ստեղծագործությունների մեջ են: Բանաստեղծություններից դուրս ես կյանք չունեմ: Իսկ եթե դուք չգտնեք իմ դեմ փաստորեն մահափորձ կատարած մարդկանց, վստահեցնում եմ, որ դուք էլ կյանք չեք ունենա: Ինչ չէ՝ չէ, բայց գրել հո մենք գիտենք...

Եվ այդպես էլ գլուխը բարձր պահած, ցնցոտիները ծածանելով դուրս եկավ:

Կապիտան Աբելյանը անզորությունից ու հուսահատությունից կրճտացրեց ատամները և, ինչպես ընդունված է, իր ողջ զայրույթը, հոգում կուտակված ողջ մաղձը ուղիղ գծով հասցեագրեց ենթակային:

— Դե խոսիր է՛, ընկեր Սաթյան... բերանդ ջուր ես առել ու նստել տներ ես նկարում: Խոսիր է՛, ընկեր Շերլոկ Հոլմս... իբր թե մեր գործը քիչ էր, Եղիշի գործն էլ բերեցիր կապեցիր գլխիս… Ես

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

կյանքումս իբրև իրեղեն ապացույց միայն էշ չէի ունեցել, դա էլ ունեցա: Այսինքն, թե որ գործից հանեն, ի՞նչ պիտի անեմ... էշ պիտի պահեմ, էլի...

Պրակտիկանտ Սաթյանը բարձրացրեց գլուխն ու ժպտաց.

— Միտք չունի,— ասաց նա:

— Ի՞նչը միտք չունի:

— Էշ պահելը,— ասաց պրակտիկանտը: Շարունակեցեք հանգիստ աշխատել՝ ի սարսափ հանցագործ աշխարհի:

Կապիտանը տնքաց.

— Եվ քո կարծիքով այս անիծյալ բանաստեղծի գործը ինձ էժան կնստի, հա՞ ...

— Երեսունչորս կոպեկ:

— Ի՞նչ երեսունչորս կոպեկ, այ տղա,— նորից զայրացավ կապիտանը:

— Այս գործը բացելը արժե երեսունչորս կոպեկ, բայց դուք պետք է վճարեք, ընկեր Աբելյան, դե, ինչպես ասեմ, ես ուսանողական թոշակով ապրող մարդ եմ:

— Ի՞նչ երեսունչորս կոպեկ,— գոռաց հանցագործ աշխարհի սարսափը:

— Առավոտյան լսեցի, որ ձեր թոռնիկը ձեզ կարգադրում էր գունավոր մատիտներ գնել, ճի՞շտ է:

— Հա, բայց դա ի՞ նչ կապ ունի:

—Ուրեմն հենց հիմա գնացեք գրախանութ, գնեք այդ մատիտները և հետն էլ մի քանի օր առաջ լույս տեսած «Երիտասարդ ձայներ» բանաստեղծությունների ժողովածուն: Արժե երեսունչորս կոպեկ:

— Ձեռ ես առնո՞ ւմ, այ տղա,— տխրեց կապիտանը:

— Գաղտնիքն այդ գրքի մեջ է,— լրջորեն ասաց պրակտիկանտը: Կներեք, որ ձեզ եմ խնդրում գրախանութ գնալ: Բայց դա գործի համար է պետք: Եվ պետք է գնաք ոտքով: Ես ուզում եմ, որ ձեզ տեսնեն գրախանութ մտնելիս: Իսկ փողոցում այնպես պահեք գիրքը, որ վերնագիրը երևա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Դետեկտիվ ես խաղո՞ւմ, Սաթյան…

— Իհարկե,— ասաց պրակտիկանտը:

Կապիտանը տարուբերեց գլուխը, տարակուսանքով նայեց պրակտիկանտի լուրջ աչքերին, հառաչեց ու դուրս գնաց: Իսկ երբ մի քանի րոպե անց վերադարձավ, նրա ձեռքին «Երիտասարդ ձայներ» ժողովածուն էր և էլի ինչ-որ մի գիրք:

— Եվ քո կարծիքով գաղտնիքն այս գրքի մե՞ջ է,— թերահավատորեն հարցրեց կապիտանը…— Երբ ուզեցի, ականջներին չէին հավատում, այնքան ուրախացան, որ հետն էլ մի արտակարգ վեպ տվեցին:

— Դուք էլ կուրախանաք, դուք էլ, կապիտան,— ծիծաղեց պրակտիկանտ Սաթյանը և բացեց ժողովածուն: Տեսնենք ովքեր կան: Ահա, բոլորը մերոնք են՝ Սիմոն Հրեղեն, Արշալույս Ծովունի, Սանասար Զովասար… Սա՞ ով է, Հայկ Հեռատե՞ս… Դե լավ, սկսենք սկզբից: Տեսնենք ի՞նչ է գրում, օրինակ, Սիմոն Հրեղենը… «Իմ տրեխները»:

Օձից խայթվածի նման կապիտանը վեր թռավ տեղից.

— Տրեխնե՞րը… ասում ես՝ տրեխնե՞րը…

— Ես չեմ ասում, Սիմոն Հրեղենն է ասում.

Քունքերս աշխարհի ժամանակն են հաշվում,

Դժգոհությունը պարուրել է ինձ:

Մի պոկեք, մի պոկեք, մի պոկեք ինձ հողից:

Այս կոշիկները, այս կոշիկները

Կրունկներով անգամ ինձ կտրում են հողից:

Իսկ ես ասում եմ՝ լսեցեք ինձ, մարդիկ,

Քննություն չէ հողը…

Որ կտրվեցիր՝ էլ չես հանձնի նորից…

Մեզ չի ների հողը:

Ինձ բռնել է դողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ես եմ, ես եմ, ես եմ

Հենց իմ բախտի գողը...

Ես կոշիկ չեմ ուզում, կոշիկներս տարեք:

Եվ հողը համբուրող տրեխներս բերեք:

Տրեխներս բերեք...

— Պահ,— ձեռքը ճաղատ ճակատին խփեց կապիտան Աբելյանը,— դա հո բանաստեղծություն չի, ուղղակի դեպքի արձանագրություն է, տեղազննության ակտ:

Պրակտիկանտ Սաթյանը թերթեց ժողովածուն:

— Հիմա անցնենք Արշալույս Ծովունուն…

— Էշը գտիր, էշը գտիր, — խաղի մեջ մտնելով անհամբերությամբ բացականչեց Աբելյանը:Էշի մասին կլինի, չէ՞, Սաթյան:

— Անպայման,— հաստատեց պրակտիկանտը: Սա չէ, սա չէ... Ահա, էշը...

Պապս էշ ուներ:

Սև, տխուր էշ էր: Սատուրնի նման:

Պապս էշով էր գնում ջրաղաց,

Երկնքի աստղերն իջնում էին ցած,

Զրուցում պապիս ու սև էշի հետ:

Հեքիաթներ պատմում, ոսկե հեքիաթներ,

Ինչպիսիք միայն աստղերը գիտեն:

Իսկ ես էշ չունեմ: Միայն «ժիգուլի»

Շագանակագույն:

Թեև շատերն այն կոչում են «Զորի»,

Բայց իրեն հարգող ոչ մի մոլորակ և ոչ մի աստղ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ներքև չի իջնում, հեքիաթ չի պատմում...

Ո՛չ ջորուս, ո՛չ ինձ,

Ոսկե հեքիաթներ, ինչպիսիք միայն աստղերը գիտեն:

Ուրեմն, տարե՛ք, տարե՛ք «ժիգուլիս», նվիրում եմ ձեզ:

Տվեք ինձ հեքիաթ, տվեք մի սև էշ...

Բա էլ ի՞նչ ես ուզում, շան որդի,— ուրախությունից գոռաց կապիտան Աբելյանը: Էշ էիր ուզում՝ էշ են տվել: Էլ ինչի՞ ես բողոքում: Սաթյան ջան, ախպերս, խնդրում եմ մի տես այդ Զովասարի՞ն ինչու են տարել...

Այնինչ պրակտիկանտ Սաթյանը արդեն գտել էր անհրաժեշտ էջը.

Դաշտերի բարակ առուներով

Հոսում է իմ կարոտի զգացումը:

Աչքերս հոգնել են քաղաքներից,

Ինձ հալածում են անտենաները:

Ի՞նչ գործ ունեմ ես այս երկնաքերծ անապատում,

Թե գութ կա ձեր սրտում,

Պոկեք ինձ խեղդող փողկապս,

Պատառոտեք իմ կոստյումը անձուկ,

Ու նետեք ինձ հեռու, իմ մանկության դաշտերը,

Որտեղ աստղերը ճչում են խավարում...

— Տարել էին, էլի, տարել էին, ինչո՞ւ փախար,— դռան կողմը նայելով չարախնդաց կապիտանը: Սաթյան, տղաս, բայց այս անգամ ինձ պետք է ասես, թե ե՞րբ գլխի ընկար, ե՞րբ գտար գաղտնիքը:

Սաթյանը ամոթխած ժպտաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Հենց սկզբում, երբ ինձ բացատրեցիք, թե ինչ բան է տրեխը: Եվ մեկ էլ վերջում, երբ Սանասար Զովասարն ասաց, թե իմ կյանքն իմ բանաստեղծությունների մեջ է: Խոստովանեք, ընկեր Աբելյան, որ երբեք ավելի սրամիտ հանցագործության չեք հանդիպել:

— Բան չեմ ասում,— ասաց կապիտանը: Բան չեմ ասում, բայց հիմա ո՞նց պիտի գտնենք այդ սրամտության հեղինակներին: Ի վերջո ավտո են տարել, կոշիկներ են տարել.,.

Պրակտիկանտ Սաթյանը մոտեցավ բաց պատուհանին:

— Գողացած ավտոմեքենայի համարը զրոներո՞վ էր սկսվում,— հարցրեց նա:

— Հա,— ասաց կապիտանը, — 00-03:

— Ներքևում կանգնած է,— ասաց պրակտիկանտը:

Մինչև պատուհանին մոտենալը, կապիտանը մի քանի անգամ խորը շունչ քաշեց, հետո թեքվեց, նայեց ցած, ու ատրճանակի պատյանը բաճկոնի տակ ձեռքով ամուր բռնած վազեց դեպի ելքը:

— Իմ ետևից, Սաթյան,— բղավեց նա:

Իսկ երբ պրակտիկանտը «Երիտասարդ ձայները» ձեռքին հանգիստ քայլերով փողոց դուրս եկավ, կապիտանը շփոթված կանգնած էր ավտոմեքենայի մոտ:

— Փախել են,— մրմնջաց նա,— մեքենան թողել են ու փախել...

Սաթյանը ներողամտորեն ժպտաց:

— Չեն փախել,– ասաց նա,— որովհետև մտադրություն չեն ունեցել փախչելու: Ահա, իմ կարծիքով այս թուղթը ամեն ինչ կբացատրի:

Բանալին ավտոմեքենայի դռան վրա էր: Սաթյանը բացեց դուռը, վարորդի նստատեղից մի քառածալ թուղթ վերցրեց և կարդաց.

«Բարև ձեզ, կապիտան Աբելյան և պրակտիկանտ Սաթյան: Երբ ընկեր կապիտանը գրախանութ մտավ և գնեց «Երիտասարդ ձայներ»-ը, մենք հասկացանք, որ դուք հասկացել եք: Գործը համարեք կարճված: Բայց միաժամանակ խնդրում ենք կարճել նաև երիտասարդ գրողների լեզուն: Հերիք է «ժիգուլի» նստած իբր թե էշ երազեն, նորառճ կոշիկներ հագած՝ տրեխներ պահանջեն և խնդրեն ետ բերել իրենց իբր թե վարդագույն մանկությունը: Գործը համարեք ավարտված, բայց մենք մեր գործունեությունը ավարտված չենք համարում: Նրանք ինչ-որ ցանկանան իրենց բանաստեղծությունների մեջ, մենք իրականացնելու ենք: Քանի որ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

այդ բանաստեղծները առաջին անգամ են կեղծում, մենք ներում ենք նրանց և վերադարձնում Արշալույս Ծովունու ավտոմեքենան, ինչպես նաև Սիմոն Հրեղենի կոշիկներն ու Սանասար Զովասարի կոստյումը, որոնք գտնվում են մեքենայի պահատեղում: Սա թող նրանց համար լինի ահեղ նախազգուշացում: Ըստ որում, խնդրում ենք հատկապես զգուշացնել երիտասարդ բանաստեղծ Հայկ Հեռատեսին: Թող մեր համբերությունը չչարաշահի:

Մի խումբ երիտասարդ ընթերցողներ»:

— Պահ,— մի ժամվա մեջ երկու անգամ իր հովիվ պապի զարմանքով զարմացավ կապիտան Աբելյանը: Սաթյան, եղբայրս, մի տես այդ Հեռատե՞սն ինչ է ուզում:

Պրակտիկանտն արագ-արագ թերթեց ժողովածուն:

— Հիը… ահա… ահա…

Թե խղճում եք ինձ, հանեք ու տարեք,

Գայլերին նետեք արյունոտ սիրտս:

Ո՞ւմ է պետք սիրտը, այս անսիրտ դարում…

Կապիտան Աբելյանը բռնեց սիրտը:

— Անմիջապես զանգահարիր այդ կարճատես Հեռատեսին ու ասա, որ այլևս հիմար-հիմար բաներ չգրի: Նման ընթերցողներից, Սաթյան, ամեն ինչ կարելի է սպասել: Ինչ ասում են, անում են: Թեև ամեն ինչից անկախ շատ կուզենայի տեսնել այդ ընթերցողներին…

— Դե ուրեմն՝ տեսեք, — ասաց Սաթյանը,— համոզված եմ, որ նրանք հեռու չեն և մեզ են հետևում: Տեսեք, տեսե՛ք…

Կապիտան Աբելյանը նայեց շուրջը: Ամենուրեք առանձին-առանձին, զույգերով ու խմբերով ջահել տղաներ ու աղջիկներ կանգնել, հետախույզներին էին նայում, նայում էին ու ժպտում:

— Սաթյան, ի՞նձ է թվում, թե իսկապես բոլորը ժպտում են,— հարցրեց կապիտանը:

— Ժպտում են, ընկեր Աբելյան:

— Հետո, դա քեզ չի՞ անհանգստացնում:

— Ժպիտն ինչո՞ւ պետք է անհանգստացնի, ընկեր Աբելյան: Իմ կարծիքով ժպիտից չպետք է վախենալ, ծիծաղից պետք է վախենալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Կապիտանը Սաթյանին նայեց հիացած ու նույնիսկ մի տեսակ հպարտությամբ:

— Դու մեծ հետախույզ կդառնաս, տղաս: Հավատա խոսքիս:

— Հավատում եմ, եթե չեք ծիծաղում,— ասաց Սաթյանը:

Եվ երկուսն էլ առանց վախենալու ծիծաղեցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԻՆՉ ԲԱՆ Է ԾԻԾԱՂԸ

Մի թերթից ինձ առաջարկեցին երգիծական պատմվածք գրել:

— Քանի՞ էջ է պետք,—գործնականորեն հարցրի ես:

— Երեք և կես:

Ծիծաղս եկավ: Երեք և կես էջում ի՞նչ երգիծանք: Պատմվածքի համար ինձ երեք և կես էջ միայն նախաբան է հարկավոր: Ես սովորաբար տասը էջից պակաս բան չեմ գրում, նույնիսկ՝ դիմում: Երեք և կես էջ: Իսկապես ծիծաղս գալիս է: Բայց պետք է փորձեմ: Ինձ համար դատարկ բան է երեք և կես էջ գրելը: Այսպես թե այնպես տասնչորս տարի է, ինչ երգիծական գործեր եմ գրում: Երեք և կես էջն ի՞նչ է: Մի անեկդոտ պատմեմ՝ կպրծնի: Լավ, պատմեմ, բայց ո՞ր անեկդոտը: Չէ, այն մեկը բոլորը գիտեն, երբ պրոֆեսորը դասախոսության է գալիս մի ոտքին կարմիր, մյուս ոտքին՝ սև կոշիկ: Ուսանողները ծիծաղում են:

— Պրոֆեսոր,– հարցնում են նրանք, մի՞թե դուք այնպիսի կոշիկներ չունեք, որ երկուսն էլ միևնույն գույնի լինեն:

Պրոֆեսորն ասում է ամաչելով.

— Ճիշտն ասած՝ չունեմ: Տանը մի զույգ էլ կա՝ բայց դարձյալ մեկը կարմիր է, մյուսը՝ սև:

Իսկապես, ծիծաղելի է, չէ՞: Բայց նախ այս անեկդոտը բոլորը գիտեն, և հետո, խոստովանեմ, ինձ այնքան էլ ծիծաղելի չի թվում: Ծիծաղելու ի՞նչ կա ,եթե մարդն իսկապես նույն գույնի կոշիկներ չունի: Ավելի շուտ, վշտանալ կարելի է:

Չէ, այս մեկը չեղավ: Բայց ի՞նչ գրեմ: Ինչ մտածում եմ՝ լուրջ բաներ են: Իսկ ինձ թվում էր, թե այնքան ծիծաղելի դեպքեր գիտեմ: Գուցե մեր Խաչիկյանի մասին պատմեմ, հը՞: Տարօրինակ, շատ տարօրինակ մարդ է: Բոլորի անունները խառնում է: Ստեփան Մարկոսյանին ասում է Մարկոս: Ազատ Բաղդասարյանին՝ Բաղդասար: Եվ այնպիսի զարմանալի հիշողություն ունի, որ մեր Լևոն Կիրակոսյանին էլ պապի անունով է կանչում՝ Ղազար: Թե որտեղից է նրա պապի անունը իմացել՝ ապշել կարելի է: Մի անգամ Խաչիկյանը մոռանում է, որ տուն պիտի գնա ու իր առանձնասենյակում նստում է մինչև գիշերվա ժամը երկուսը: Մեկ էլ հանկարծ տեսնում է, որ ժամը երկուսն է: Երկար մտածում է, ցերեկվա՞ երկուսն է, թե գիշերվա: Ի վերջո զանգահարում է շենքի պահակին:

— Եփրեմ,— հարցնում է նա Սահակին,— ցերե՞կ է թե գիշեր: Որ դրսում մութ է, ճի՞շտ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

— Ճիշտ է,— ասում է Սահակը:

— Դե, իմ վարորդ Նազարին ասա, թող վերև բարձրանա ինձ մոտ գա:

Վարորդ Մուկուչը վերև է բարձրանում, մտնում պետի առանձնասենյակը և կանգնում դռան մոտ: Կանգնում է հինգ րոպե, տասը, տասնհինգ րոպե, բայց Խաչիկյանը նրան չի նկատում, գրում է: Վարորդը ստիպված է լինում հիշեցնել իր մասին:

— Ընկեր Խաչիկյան, դուք ինձ կանչե՞լ եք:

Խաչիկյանը զարմացած նայում է նրան ու չի հիշում կանչե՞լ է, թե չէ,

— Է, ինչպե՞ս ես Նազար,— հարցնում է նա:

— Լավ եմ, շնորհակալություն,— ասում է Մուկուչը:

— Կինդ, երեխանե՞րդ ինչպես են:

— Ոչինչ, լավ են:

Խաչիկյանը մի քիչ էլ է գրում, հետո ակնոցի վրայից նայում է վարորդին...

— Է, ամուսնացա՞ր, Նազար, թե էլի պարապ-սարապ ման ես գալիս:

— Պարապ-սարապ ման եմ գալիս,— ասում է Մուկուչը:

— Դե լավ է, լավ,— ուրախանում է Խաչիկյանը,— հիմա կվերջացնեմ, կգնանք, նստիր, նստիր:

Մուկուչը նստում է, իսկ Խաչիկյանը շարունակում է գրել: Անցնում է հինգ րոպե, տասը, տասնհինգ րոպե, իսկ Խաչիկյանը շարունակում է գրել: Մեկ էլ հանկարծ նայում է ժամացույցին ու գլուխն օրորելով պտտում է հեռախոսի սկավառակը:

— Եփրեմ,— հարցնում է նա պահակ Սահակին,— բա քեզ չասացի, որ Նազարին ինձ մոտ ուղարկես:

— Ընկեր Խաչիկյան, ես այստեղ եմ,— տեղից բարձրանում է Մուկուչը:

— Վա՞յ,— ապշում է Խաչիկյանը,— այ տղա, այդ ե՞րբ ես ներս մտել, որ չեմ զգացել:

Ահա թե որքան տարօրինակ մարդ է մեր ընկեր Աբիսողոմյանը: Ի՞նչ Աբիսողոմյան, ախ, հա, ներեցեք, մեր ընկեր Խաչիկյանը: Այո, տարօրինակ մարդ է, բայց այդ մասին ինչ գրեմ, քի՞չ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

տարօրինակ մարդիկ կան: Աշխարհը տարօրինակ մարդկանցով լցված է: Նստես ու բոլորի մասին գրե՞ս: Ո՞ւր կհասնի:

Չէ, երգիծանք չի ստացվում:

— Գուցե սուրճ խմես,— իմ տառապանքը տեսնելով հարցնում է կինս,— օրացույցում կարդացել եմ, որ Բալզակը գրելիս սուրճ էր խմում:

— Նա սուրճ էր խմում, որ վեպ գրի, իսկ ինձ երեք ու կես էջ տեղ են տվել,— բարկանում եմ ես,— կոնյակ տուր ինձ:

— Ինչ կոնյակ,— հարցնում է կինս,— Հարավսլավական «Վինյա՞կ», Բուլղարական «Պլիսկա՞», Ֆրանսիական «Կամյո՞ւ», թե՝ պարզապես «Մարտինի»…

— Պարզապես հայկական որևէ կոնյակ,— ասում եմ ես:

Կինս ինձ է նայում խեղճ-խեղճ:

— Հայկական կոնյակ որտեղի՞ց գտնեմ,— ասում է նա: — Ամբողջ աշխարհը հիմա հայկական կոնյակ է խմում: Մի երկու շիշ ունեմ, հյուրերի համար եմ պահում: Հայկական կոնյակ չկա:

— Ուրեմն դու հյուրերին ավելի շատ ես սիրում քան ի՞նձ,— խանդից գունատվում եմ ես: — Հայկական կոնյակ չկա: Չգիտե՞ս, որ մի ամիս առաջ համամիութենական համտեսի ժամանակ մեր դրոշմակիր բոլոր կոնյակները ոսկե մեդալներ շահեցին:

— Ի՞նչ ես ասում,— զարմանում է կինս,— հետաքրքիր է, թե այդ ոսկիները հանձնողները ո՞րտեղից են կոնյակ գտել համտես անելու համար…

Ծիծաղելի է, չէ՞, եթե գրեմ երգիծական պատմվածք, այս մեկը անպայման կգրեմ: Այս ի՞նչ դժվար է երգիծաբան լինելը, տեր աստված: Ծիծաղելու բան ես պատմում, լացդ է գալիս, լաց լինելու բան ես պատմում՝ ծիծաղդ է գալիս: Հա, վերջապես մի իսկական զավեշտական պատմություն հիշեցի:

Ես մի ընկեր ունեմ Մարգար անունով: Իսկ Մարգարը մի սիրած աղջիկ ունի: Աղջիկն էլ՝ առանձին սենյակ: Ամռանը նրանք թափառում են փողոցներում, այգիներում, իսկ ձմռանը չգիտեն ինչ անեն: Հենց տղան ուզում է ասել «Ես քեզ սիրում եմ», ամեն բառը օդի մեջ սառցալուլա է դառնում, ընկնում գետնին, աղջիկը սայթաքում է, և անախորժություններ են սկսվում: Հիմա կհարցնեք, թե ինչու այդ առանձին սենյակը չեն գնում: Որովհետև դժվար է, որովհետև այդ առանձին սենյակը գտնվում է մի միջանցքում, որտեղ տասնութ այդպիսի առանձին սենյակներ կան: Եվ բոլոր դռներն իրար նման են: Եվ ամեն մի դռան ետև մի

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

բարեկամ է ապրում՝ քեռի, հորեղբայր, մորաքույր, ծնողներ, հորաքույր: Եվ այդ բոլոր բարեկամները կազմակերպված ձևով չեն սիրում Մարգարին: Ուրեմն ի՞նչ անի խեղճ Մարգարը: Այնինչ նա շատ է ուզում գնալ այդ առանձին սենյակը, ասում է՝ այնտեղ այնքան հետաքրքիր է: Ասում է՝ ինքն ու իր սիրած աղջիկը նստում են այնտեղ, այդ առանձին սենյակում և խոսում, զրուցում են քաղաքատնտեսության, միջազգային դրության, ժողովուրդների բարեկամության, տիեզերքի յուրացման գործում տեղի ունեցող իրադարձությունների և այլ, և այլ հարցերի շուրջ:

Բայց աղջկա չար բարեկամները չեն ուզում, որ նրանք օգտակար զրույցների շնորհիվ բարձրացնեն իրենց գաղափարական-գեղարվեստական մակարդակը: Եվ աղջկա չար բարեկամները սպառնում են Մարգարին: Ուրեմն ի՞նչ անի խեղճ Մարգարը: Սպասում-սպասում է, որ լիովին մթնի, գալիս հուշիկ քայլերով վեր է բարձրանում, միջանցքի մուտքի մոտ հանում է կոշիկները, դնում թևի տակ: Ախ այդ անիծյալ ճռճռան տախտակները): Կամացուկ-կամացուկ, շունչը պահած, ինչպես բանաստեղծն է ասում. «Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև» Մարգարն անցնում է միջանցքով և վերջապես կանգ առնում այն դռան առաջ, որտեղ, ինչպես ինքն է ասում, սիրած աղջկա հետ երկար-երկար զրուցում են միջազգային դրության և այլ հարցերի մասին: Կանգնում մի քիչ, ականջ է դնում, հետո կամացուկ հրում, բացում է դուռը և... հայտնվում է աղջկա չար քեռու ողջ գերդաստանի առաջ, պայծառ լուսավորված սենյակում՝ գունատ դեմքով, վառվող աչքերով, կոշիկները թևի տակ:

Վերադարձի ճանապարհը Մարգարը անցնում է անհամեմատ կարճ ժամանակում, անգիտակցաբար բարելավելով հանրապետության վազքի բոլոր ռեկորդները՝ իրենից բավականին ետ թողնելով չար քեռուն, չար հորեղբորը, չար, չար, չար մորաքրոջ-քրոջ-հորաքրոջը և նրանց նետած գնդերն ու սկավառակները, նիզակներն ու ցախավելները: Սպորտի մեջ թույլատրվում է միայն երեք փորձ, տարաբախտ Մարգարը տասնութ փորձ է կատարել ցանկալի առանձնասենյակում երկար-երկար զրուցելու համար, որից տասնյոթը ավարտվել է անհաջողությամբ:

Բայց համառ է Մարգարը, մի անգամ ճիշտ նպատակակետում հայտնվելը այնպես է ոգևորել նրան, որ մինչև այսօր էլ գիշերները բարեխղճորեն այցելում է աղջկա մեկ այս, մեկ այն բարեկամին, գունատ դեմքով, վառվող աչքերով, կոշիկները թևի տակ:

Խոստովանենք, որ սա ծիծաղելի է: Այսինքն՝ ծիծաղելի է մի կողմից: Մարգարն, օրինակ, ինձ պատմելու ժամանակ բոլորովին չէր ծիծաղում: Հումորի զգացում չունի, թե ինչ, չեմ հասկանում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Եվ, վերջապես, ի՞նչ բան է ծիծաղը: Ծիծաղելին հիմնականում այն է, ինչ ուրիշների հետ է կատարվում: Նույնը երբ մեզ հետ է կատարվում, դառնում է ողբերգություն:

Հետաքրքիր է, չէ՞: Չէ, այսօր մի քիչ փիլիսոփայորեն եմ տրամադրված, երգիծանք չի ստացվում: Ստիպված պետք է լինեմ կյանքիս մեջ առաջին անգամ չկատարել խոստումս:

Կներեք, հարգելի խմբագրություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՓՈՔՐ ԲԵՄԻ ՀԱՄԱՐ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇՐԹՀԱՐՄՈՆԸ

Սենյակ: Փոքրիկ տղան շրթհարմոն է նվագում, աղմկում է: Մայրը հոգնած նախատում է նրան: Հայրը խորասուզված լրագիր է կարդում:

ՄԱՅՐԸ– Կարեն, վերջ տուր, բալիկս... / շարունակում է նվագել/: Գլուխս ցավում է, քաղցր ջան, վերջ տուր, խնդրում եմ:

ՏՂԱՆ -Իսկ ես ուզում եմ նվագել, ի՞նչ անեմ... /շարունակում է նվագել/:

ՄԱՅՐԸ– Քանի՞ անգամ խնդրեցի, այդպես չի կարելի, չէ՞: Ասացի վերջ տուր, Դա՞ ինչ բան է: Դու ինձ չե՞ս լսում... /Տղան դադարում է նվագել, նայում է հորը: Նա անտարբեր լրագիր է կարդում: Նորից շարունակում է նվագել/: Կարեն, ո՞ւմ հետ եմ, դե անմիջապես դուրս եկ, շուտ, եթե չես կարողանում չնվագել, տնից դուրս եկ, անմիջապես...

ՀԱՅՐԸ– Այսինքն, էս ցրտին երեխային տնից ինչի՞ ես դուրս հանում, Նունե...

ՄԱՅՐԸ– Գլուխս ցավում է, Վահան...

ՀԱՅՐԸ– Անալգին խմիր, գլխացավի համար երեխային տնից դո՞ւրս են անում: /Կարենը լռել ու լսում է/:

ՄԱՅՐԸ– Ախր ես ամբողջ օրը տանն եմ, Վահան ջան, դու նոր ես եկել, դրա համար էլ չի ազդում քեզ վրա...

ՀԱՅՐԸ– Ուրեմն ես պարապ-սարապ ման եմ գալիս, հա՞... թե քեզանից քիչ եմ աշխատում: Արածդ էլ մի տուն մաքրել չէ՞, կարծես թե ուրիշների նման համ աշխատում ես, համ էլ տուն ես պահում:

ՄԱՅՐԸ- Իսկ ես չե՞մ ուզում աշխատել: Որ չես թողնում, ի՞նչ անեմ...

ՀԱՅՐԸ– Աշխատե՛մ... Իբրև թե շատ ես կարողանում տունը պահել: Ուրիշի տուն ես մտնում, ամեն ինչ փայլում է...

ՄԱՅՐԸ- Որովհետև ուրիշները ցեխոտ կոշիկներով տուն չեն մտնում... Իմ ամբողջ գործն այն է, որ ձեր թափածը հավաքեմ: Դու և քո տղան մի բան դնո՞ւմ եք տեղը: Հարյուր անգամ ասում եմ՝ ինձ ո՞վ է լսողը: Առավոտվանից Կարենին խնդրում եմ հավաքել խաղալիքները... Քանի՞ անգամ եմ ասել, ասա՛, քանի՞ անգամ եմ ասել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ - Դե ի՞նչ ես ինձանից ուզում, ասացի կհավաքեմ, էլի, վա՛յ...

ՄԱՅՐԸ - Տեսնո՞ւմ ես ինչպես է պատասխանում...

ՀԱՅՐԸ - Վերջացրու:

ՄԱՅՐԸ– Ե՞ս վերջացնեմ:

ՀԱՅՐԸ– Հենց դու: Շա՛տ ես խոսում:

ՄԱՅՐԸ - Ապրես, ապրես, Վահան, հենց այդպես էլ դաստիարակում ես երեխային:

ՀԱՅՐԸ - Իսկ ի՞նչ է, իբր դու դաստիարակում ես, հա՞: Դա՞ է քո դաստիարակությունը, որ երեխային նվագել չես թողնում: Գուցե նրա կոչումն էլ հենց այդ շրթհարմոնն է...Դու շա՞տ ես սիրում նվագել, Կարեն ջան...

ՏՂԱՆ - Շա՛տ, հայրիկ ջան, որ թողնի՝ ամբողջ օրը կնվագեմ...

ՀԱՅՐԸ - Տեսնո՞ւմ ես, իսկ դու խեղդում ես երեխայի տաղանդը: Այս ցրտին ստիպում ես դուրս գալ տնից: Լավ է, որ ես տանն էի, ես որ տանը չեմ լինում, դու երևի ինչ ուզում, անում ես…

ՏՂԱՆ - Բա ինչ… ոչ թողնում է բակ գնամ, ոչ էլ թողնում է տանը մնամ... Նվագեմ, էլի, պապ ջան.,. Դու սիրում ես, չէ՞...

ՀԱՅՐԸ - Նվագիր, բալիկ ջան, նվագիր, ցավդ տանեմ... / Կարենը փչում է/:

ՄԱՅՐԸ - Ահա, խնդրեմ... դե որ այդպես է՝ փչիր, Կարեն, կամ... ավելի ճիշտ՝ փչիր, Գավրի՛լա, աշխարհի վերջն է, փչի՛ր…/Բարձր/: Փչիր, Գավրի՛լա…

ՀԱՅՐԸ - Քեզ ի՞նչ պատահեց, Նունե...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ

Ծառուղի: Մի կողմից հայտնվամ են Թամարն ու Օնիկը, մյուս կողմից՝ Հայկոն:

ԹԱՄԱՐ - Հայկո՞…

ՕՆԻԿ - Հայկո՞… Սպասիր, սպասիր, բայց սա ի՞նչ Հայկո է…Մեր Հայկո՞ն... Այ տղա, դիտմամբ ես գիրացել, որ ծպտվես…

ՀԱՅԿՈ - Բայց առաջինը ես ձեզ ճանաչեցի: Դո՞ւք ինչպես եք իրար հանդիպել: Էլի պատահականորե՞ն… ո՞նց ես, է՛, բուժքույր ջան...

ՕՆԻԿ - Այո, պատահականորեն, թույլ տվեք ներկայանալ, տեր և տիկին Մարգարյաններ:

ԹԱՄԱՐ– Պատիվ ունեմ:

ՀԱՅԿՈ – Ճի՞շտ: Բանակից անմիջապես հետո՞: Ահա թե ինչու էիր ամեն օր սիրտդ բռնած բուժկայան վազում: Ախ դու ավազակ Օնիկ...

ԹԱՄԱՐ – Քսա՛ն տարի, ոնց անցավ, չէ՞...

ՕՆԻԿ - Ճիշտ որ… ուղիղ քսան տարի է... Բայց կարծես թե ոչինչ չի փոխվել... «Մանկությո՛ւնս ետ բերեք…»:

ՀԱՅԿՈ– Ի սեր աստծո, գործ չունես, հանկարծ ու ետ կգա… դու շատ չար լեզու ունեիր, կբռնի…

ԹԱՄԱՐ - Իսկ դո՞ւ ինչու ես մանկությունից վախենում, Հայկո ջան, այն ժամանակ էլ կարծեմ տրեխ չէիր հագնում…

ՀԱՅԿՈ - Տրեխն ինչ է, Թամար ջան… բայց դե հազիվ մի կարգին դիրքի եմ հասել... Ասում եք քսան տարում կարծես թե ոչինչ չի փոխվել: Իսկ դուք գիտե՞ք, որ այսօր ձեր առջև կանգնած է հսկայական մի տրեստի կառավարիչ Հայկարամ Վարոսիչ Փանոսյանը: Որպես լրացուցիչ մանրամասն կարող եմ ավելացնել քառաթիվ հեռախոսը, ծառայողական և սեփական «Վոլգա»-ները, չորս սենյականոց բնակարանը քաղաքի կենտրոնում, փառահեղ ամառանոցը Արզականում, սեփական ֆիննական բաղնիքը... և այլն և այլն...

ԹԱՄԱՐ– Շատ ուրախ եմ, Հայկո ջան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՕՆԻԿ - Իսկ ընտանիք, բան…

ՀԱՅԿՈ–՝ Ամեն ինչ ունեմ, փառք աստծո, փառահեղ կին ունեմ, փառահեղ որդի ունեմ… Այսինքն, ինչո՞ւ եմ հեռակա ծանոթացնում: Գնացինք:

ՕՆԻԿ– Բայց մենք…

ՀԱՅԿՈ– Ոչ մի խոսք…Գնացինք,,, չգիտեմ, փառահեղ տիկինս տանը կլինի, թե չէ, բայց տունը տեղում կլինի… Գնացինք, սիրելիներս, այ քեզ հաճելի անակնկալ…

/Իբր մտնում եմ տուն: Դեռևս դռների մեջ/:

ՀԱՅԿՈ - Ահա և մեր տունը: Ճիշտ է, տիկինս տան չէ, բայց նրա ոգին տանն է, այնպես որ արագորեն հանել կոշիկները, հագնել մաշիկները…

ՕՆԻԿ - Այդ կոշիկային արարողությո՞ւնն ինչի համար է:

ՀԱՅԿՈ– Շա՞տ գիտեմ, Օնիկ ջան, ինձ թվում է՝ մենակ ինձ տանջելու համար: Հատակն ամեն օր այնպես է փայլեցնում, որ… Ներս մտեք, ներս մտեք, արդեն կարելի է… հիմա գալիս եմ…

ՕՆԻԿ - /Թամարին/: Որ իմանայի կոշիկ պիտի հանեինք, չէի գա, ազնիվ խոսք, զզվում եմ այն տներից, որտեղ ստիպում են հանել կոշիկները… նման դեպքերում ինձ թվում է, թե ոչ միայն առանց կոշիկների, այլև առանց տաբատի եմ նստած:

ԹԱՄԱՐ - / Ծիծաղում է/ Դե վերջ տուր, լավ… բայց իսկապես փառահեղ բնակարան ունի մեր Հայկոն:

/ Ներս է գալիս Հայկոն/:

ՀԱՅԿՈ - /Բացում է դուռը/ Համեցեք… և ծանոթացեք իմ ժառանգի, իմ հպարտության և իմ գեների պահեստապետի հետ… Ռուբիկ,,. ահա իմ, այսպես ասած, մարտական ընկերները…

/Ռուբիկը նստած է հեռուստացույցի առջև: Այսինքն՝ գրեթե պառկած է: Նստած է մի բազկաթոռի, ոտքերը մեկնել դրել է մեկ ուրիշ բազկաթոռի վրա: Դիտում է/: Ռուբիկ…

ՌՈՒԲԻԿ - Պապ, լավ էլի, տելեվիզոր եմ նայում…

ԹԱՄԱՐ - Բարև ձեզ…

ՕՆԻԿ - Բարև, տղաս…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՌՈՒԲԻԿ – Մի քիչ կամաց, էլի, տելեվիզոր եմ նայում...

ԹԱՄԱՐ - Հըմ, ասում էիր չորս սենյակ ունես, գուցե մենք ուրիշ տեղ գնանք, Հայկո...

ՕՆԻԿ– Իհարկե, իհարկե...

ՀԱՅԿՈ - Ի՞նչ եք ասում, մեր հյուրասենյակը սա է... Ռուբիկս ուղղակի չիմացավ, թե ովքեր եք... Ռուբիկ, պատկերացնո՞ւմ ես, քսան տարի չէի տեսել... բանակի իմ սիրելի ընկերներն են՝ Թամարը և Օնիկը, մենք միասին շատ հիշարժան օրեր ենք անցկացրել... երեք տարի... մի ամբողջ կյանք միասին ենք եղել...

ՌՈՒԲԻԿ - Հասկացա, էլի, պապ, հո խոտակեր չեմ, թողեք նայեմ:

ՕՆԻԿ - Դե լավ, Հայկո, չխանգարենք տղայիդ...

ՀԱՅԿՈ - Դե ես ինչ անեմ, ուրեմն էդքան հետաքրքիր հաղորդում է, հա՞, բալիկ ջան... զարմանալի բան է...

ՌՈՒԲԻԿ– Հա, կամաց, էլի...

ՀԱՅԿՈ - Դե լավ, կամաց կխոսենք, քեզ չենք խանգարի, բալիկ ջան... Ահա, նստեք այստեղ, ես մի լավ սեղան կգցեմ..

ԹԱՄԱՐ - /Շշուկով/ Կարիք չկա, Հայկո...

ՀԱՅԿՈ - Ի՞նչ...

ԹԱՄԱՐ - Կարիք չկա, մենք կուշտ ենք...

ՕՆԻԿ - Ըհը, ըհը...

ՀԱՅԿՈ - /Շշուկով/ Ի՞նչ եք ասում...հազիվ ենք հանդիպել, քսան տարի է անցել, հիմա այնքան ինֆորմացիա ունենք իրար տալու...

ՌՈՒԲԻԿ - Դե ինչ եք փսփսում, ոչ մի բան չի լսվում...

ԹԱՄԱՐ - Գնանք, Օնիկ...

ՀԱՅԿՈ - Ռուբիկ, դա՞ ինչ անքաղաքավարություն է: Մայրդ քեզ ի՞նչ է սովորեցրել, խանգարում ենք, վեր կաց քո ննջարանը գնա, սա՞ ինչ բան է, այնտեղ էլ հեռուստացույց կա, չէ՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՌՈՒԲԻԿ - Այ մարդ, դուք գնացեք ննջարան, սա իմ տեղը չի՞...ի՞նչ ես ինձնից կպել... հարամ արեցիք գլխիս, էլի…

ԹԱՄԱՐ - Գնանք, Օնիկ, գնանք, ասում եմ...

ՕՆԻԿ - Չի լինի...խմելու մի բան բեր, Հայկո.,.

ՀԱՅԿՈ- Հա՞... հիմա, էս վայրկյանին... ըհը... փառահեղ կոնյակ է...

ՕՆԻԿ - Լցրու...

ԹԱՄԱՐ - Չե՞ս ամաչում... դու դրա կարիքն ունե՞ս...

ՕՆԻԿ - Իհարկե...

ՀԱՅԿՈ - Հիմա մի-մի բաժակ կխմենք... ամեն ինչ կդասավորվի...Թամար ջան...

ՕՆԻԿ - Ուրեմն այսպես, Հայկո...

ՌՈՒԲԻԿ - Դե վերջացրեք, էլի, զզվեցրիք...

ՕՆԻԿ - Հիմա, հիմա, տղաս... Ուրեմն այսպես, Հայկո, բանակի մեր ընկեր Հայկո... Իսկ հիմա տրեստի կառավարիչ Հայկարամ Վարոսովիչ Փանոսյան... Ուրեմն այսպես... Հարամ լինի քո դիրքն էլ, քո քառաթիվ հեռախոսն էլ..

ԹԱՄԱՐ -Օնիկ..

ՕՆԻԿ - Մի խանգարիր... քո փայլեցրած հատակն էլ, քո ֆիննական բաղնիքն էլ, քո փառահեղ կինն էլ, քո փառահեղ զավակն էլ, քո փառահեղ կոնյակն էլ...

ՀԱՅԿՈ - Օնիկ, Օնիկ, ի՞նչ ես ասում...

ԹԱՄԱՐ – Օնի՛կ...

ՕՆԻԿ - Եթե մեր տաբատների փոխարեն ժամանակին տղայիդ տաբատը հանեիր, հիմա այս օրը չէիր ընկնի...

ՀԱՅԿՈ - Ի՞նչ տաբատ, ինչեր ես ասում…

ՕՆԻԿ - Ես քո փոխարեն դռանը կգրեի. «Տանը կատաղած շուն կա»...

ՌՈՒԲԻԿ - Դե, գիտեք ինչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՕՆԻԿ - Չխոսես, կսատկացնեմ, ես քո հայրը չեմ, ես ինտելիգենտ մարդ եմ, քյուֆթա կսարքեմ, շան լակոտ...

ՌՈՒԲԻԿ – Վա՛յ, պապա... կխփի...

ՀԱՅԿՈ - Վերջ տուր, Օնիկ, սա... սա թյուրիմացություն է...

ՕՆԻԿ - Իհարկե թյուրիմացություն է... Գնացինք, Թամար...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՊՏԱԿԸ

Պրոֆեսորի առանձնասենյակը: Գրասեղանի ետևում տեղավորվել է ասպիրանտ Արտաշեսը: Պարապում է: Ներս է մտնում փոքրիկ մի տղա:

ԱՐՏԱՇԵՍ– Օ՛, ո՞վ է այս լավ բալիկը:

ՏՂԱՆ - Քե՞զ ինչ:

ԱՐՏԱՇԵՍ – Հըմ... հըմ... Աբգար Լևոնիչի տղա՞ն ես...

ՏՂԱՆ - Աբգար Լևոնիչը խուժան է...

ԱՐՏԱՇԵՍ - Ի՞նչ... այդպես չի կարելի խոսել, բալիկ ջան, Աբգար Լևոնիչը մեծ գիտնական է, մեր լուսատու աստղերից մեկն է, հասկանո՞ւմ ես...

ՏՂԱՆ - Դու էլ ես խուժան...

ԱՐՏԱՇԵՍ - Ե՞ս... Դե լավ... հը՛մ... Հիմա ի՞նչ ես փնտրում այստեղ, վերցրու և գնա, բալիկ ջան...

ՏՂԱՆ - Քո գործը չի…

ԱՐՏԱՇԵՍ - Դե լավ, լավ...

ՏՂԱՆ - Քիթդ ամեն տեղ մի խոթիր...

ԱՐՏԱՇԵՍ - Ի՞նչ.../մեկուսի/ չլինի՞ սա հենց պրոֆեսորի գյուտերից մեկն է, ասենք թե պտուղբանջարեղենի վաճառողի ռոբոտ, որը նախ և առաջ գռեհկախոսությամբ և կոպտությամբ է ծրագրված: Բարձր/: Հապա մի մոտ եկ, փոքրիկ...

ՏՂԱՆ – Յա՛... /լեզուն է ցույց տալիս/...

ԱՐՏԱՇԵՍ - Չէ, ի՞նչ ռոբոտ, ժամանակակից երեխա է: /Տղային/ Իսկ մեծերի հետ այդպես կոպիտ ու անհարգալիր խոսելու համար Աբգար Լևոնիչը երբեք ականջներիցդ չի՞ քաշել...

ՏՂԱՆ - Ականջների՞ց... /Յատկում քաշում է Արտաշեսի ականջներից/: Ես եմ քաշում, ես եմ քաշում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԱՐՏԱՇԵՍ– Սպասիր, ի՞նչ ես անում, ցավեցնում ես, փոքրիկ,, օ՜ֆ-օ՜ֆ, բաց թող, ասում եմ, չարաճճի, հիմա հայրիկդ ներս կմտնի... Օհ, ցավում է...

ՏՂԱՆ - Էլի կանե՞ս, էլի կանե՞ս...

ԱՐՏԱՇԵՍ - Չեմ անի, էլ չեմ անի... բայց ի՞նչ չպետք է անեմ, էլ չեմ անի, բալիկ ջան...

ՏՂԱՆ - Դե հիմա խելոք նստիր, դմբո...

ԱՐՏԱՇԵՍ– Օ՜ֆ, այս ի՞նչ արեցիր, ախր այդպես չի կարելի, բալիկս, քիչ էր մնում պոկեիր ականջս, տես, տես, ինչ է դառել, վառվում է, տես ո՜նց է վառվում... Այդ ի՞նչ ես անում... այդ ի՞նչ ես անում...

/Տղան ջուրը լցնում է Արտաշեսի գլխին/:

ՏՂԱՆ - Հանգցնում եմ...

ԱՐՏԱՇԵՍ - Ի՞նչն ես հանգցնում, այ...փոքրիկ... օ՜հ...

ՏՂԱՆ - Բա չասացի՞ր, ականջս վառվում է...

ԱՐՏԱՇԵՍ -Հեռու գնա, ինձ չմոտենաս, այ քեզ կրակ, ո՞նց օգնություն կանչեմ, ախր ամոթ էլ է… լսափողը տեղը դիր, մի խփիր, լսափողը խոսելու համար է... ի՞նչ ես անում...

/Լսափողով Արտաշեսի գլխին է խփում/:

ՏՂԱՆ - Թմբուկ եմ խփում...

ԱՐՏԱՇԵՍ– Թմբո՞ւկ... Հորդ գլխին խփիր... Օ՜հ, ինչ եմ ասում...պրոֆեսորը... նստիր, հանգիստ զրուցենք, բալիկ ջան, այդ ո՞ւր ես բարձրանում... ո՞ւր ես բարձրանում...

ՏՂԱՆ - Նստեմ վրադ՝ ձի-ձի խաղանք... նո՛, նո՛…

ԱՐՏԱՇԵՍ - Վերջ տուր… օ՜հ, դու անգլերե՞ն էլ գիտես, բալիկ ջան... դու գիտե՞ս, որ նո-նոն անգլերեն է... Ուզո՞ւմ ես քեզ անգլերեն սովորեցնեմ...

ՏՂԱՆ - Իսկ ձին անգլերեն գիտի՞...

ԱՐՏԱՇԵՍ - /Մտադիր է ցրել ուշադրությունը/: Տես հայրիկդ որքան գրքեր ունի, տես, նույնիսկ մագաղաթներ կան, գիտե՞ս ինչ բան է մագաղաթը:

ՏՂԱՆ - Ի՞նչ է, ի՞նչ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԱՐՏԱՇԵՍ– Մագաղաթը գիրք է... բարեկամս, հին-հին, վաղնջական ժամանակներում, երբ թուղթ չկար, մարդիկ գրում էին կաշիների վրա, նրանք քերթում էին կենդանիների կաշին, մշակում էին և գրքեր էին գրում այդ մագաղաթների վրա... Հայրիկդ քեզ չի՞ պատմել...

/ Տղան ձեռքն է առել դանակը/:

ԱՐՏԱՇԵՍ - Այդ ի՞նչ ես անում... դանակը ցած դիր. դա խաղալիք չէ… Դանակը ցած դիր, բալիկս, դանակը քո ինչի՞ն է պետք...

ՏՂԱՆ - Որ քեզ քերթեմ ու գրեմ քո կաշվի վրա...

ԱՐՏԱՇԵՍ - Ցած դիր դանակն, ասում եմ: Ցած դիր, բալիկ ջան... նախ և առաջ դու գրել դեռ չգիտես... բա... նախ գրել պետք է սովորես...

ՏՂԱՆ – Կքերթեմ, նոր կսովորեմ...

/Ուզում է հարձակվել/:

ԱՐՏԱՇԵՍ - Դե բավական է, վերջ, գրողի ծոցը, պրոֆեսորն էլ, իմ դիսերտացիան էլ, ովքեր որ նվաստանալով դիսերտացիա են պաշտպանում՝ նրանք էլ... բավական է, մահ, կամ ազատություն...

/Տղայի ձեռքից խլում է դանակը և ապտակում/:

ՏՂԱՆ – Վա՛յ… խփեց... մա՛մա...

ԱՐՏԱՇԵՍ - Որ մորը հիշեց, ուրեմն երեխա է դառնում... Այս ապտակը թե քեզ փրկեց, փրկեց, թե չէ՝ զոնե ես ձեռքերս լվանում եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

ԹՈՌԸ - /Հազում է/ Ըհը, ըհը, ըհը...

ՄԱՅՐԸ - Ախր ասում էի, մրսել ես, չէ, բալիկ ջան: Երեկ էլ էիր հազում: Որտե՞ղ ես մրսել, այ ցավդ տանեմ: Սառը ջուր հո չե՞ս խմել:

ԹՈՌԸ - Չէ:

ՄԱՅՐԸ - Հիմա ես քեզ տաք թեյ կտամ,բալիկ ջան, սև հաղարջի մուրաբայով, կխմես, կանցնի...

ԹՈՌԸ - Թեյ չեմ ուզում: Ըհը, ըհը...

ՄԱՅՐԸ - Ինչպես թե չես ուզում, մրսած ես, արևիդ մեռնեմ, քեզ հիմա տաք-տաք թեյ կտամ, ոտքերդ տաք ջրի մեջ կդնեմ, կպառկեցնեմ ու կանցնի...

ԹՈՌԸ – Չե՛մ, ես թեյ չեմ ուզում, ըհը, ըհը,պառկել չեմ ուզում…

ՄԱՅՐԸ – Պետք է, բալիկ ջան, թե չէ ջերմությունդ կբարձրանա…

ՊԱՊԸ – Սեդա՞... յանի էդ երեխին ինչի՞ ես լեղաճաք անում... հայ կբարդանա,հայ ջերմությունդ կբարձրանա... Դու իսկի չե՞ս մրսել, մի քիչ կհազա, կանցնի, էրեխի սրտով գնա…

ՄԱՅՐԸ – Հայրի՛կ...

ՊԱՊԸ– Էսքան տարվա մարդ եմ, էնքան եմ մրսել ու շոգել, ի՞նչ է եղել... Չի ուզում, թող չայ չխմի... զոռով մարդու չա՞յ կխմեցնեն...

ՄԱՅՐԸ - Ախր մրսած է, հայրիկ, դեռ երեկվանից է հազում…երեկ տաք պահեցի, կուրծքը փափկեց, հիմա նորից մրսել է...

ԹՈՌԸ – Ըհը, ըհը...

ՄԱՅՐԸ - Տես, ինչպես է հազում...

ՊԱՊԸ – Հազում է, հազում է, հազի մեջ ի՞նչ կա...գուցե թե թոքերն են մեծանում... հը՞, արևիդ մեռնեմ... իրեն-իրեն կանցնի, կգնա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԹՈՌԸ– Հա, պապի ջան…

ՄԱՅՐԸ –Իրեն-իրեն չի անցնի, հայրիկ ջան, վտանգավոր է… համաճարակ է քաղաքում, պետք է շատ զգույշ լինել…

ՊԱՊԸ - Պահ-պահ-պահ…աշխարհը շուռ եկավ…Մեր ժամանակ, որ ոտաբոբիկ վազում էինք ձների միջով, մեզ ի՞նչ էր լինում…

ՄԱՅՐԸ– Այ, բալիկ ջան, թեյ խմիր, որ լավանաս, պաղպաղակ ուտես…

ԹՈՌԸ - Ես այսօր երկու հատ կերել եմ…

ՊԱՊԸ– Ըհը, ըհը…

ՄԱՅՐԸ - Դո՞ւ, պաղպաղա՞կ, այ չարաճճի, ի՞նչ պաղպաղակ,կատակում ես, հա՞…

ԹՈՌԸ - Պապիկս բերեց…

ՄԱՅՐԸ – Պապիկը՞…

ՊԱՊԸ– Ըհը, ըհը…

ՄԱՅՐԸ– /Մոտենում է պապին/ Հայրիկ ջան, ինչո՞ւ ես այդպիսի բան անում, ախր մրսած էր, չէ՞… հիմա տեսնում ես ինչ եղավ…

ՊԱՊԸ - /Բարձր/ Որ երեխու սիրտն ուզում էր, չառնեի՞…

ՄԱՅՐԸ– Եվ այն էլ երկու հատ…

ՊԱՊԸ - Մի հատով ի՞նչ պիտի հասկանար…

ՄԱՅՐԸ - Հայրիկ, ախր այդպես չի կարելի…

ՊԱՊԸ - Հիմա, ինչ է, ինձ էլ ես սկսելու խրատներ տալ, հա՞…Ուրեմն ես էս տանը ոչ մի իրավունք չունեմ, հա՞…

ՄԱՅՐԸ - Հայրիկ, մի բարկանա, բայց այսպես չի կարելի, ես նրան մի բան արգելում եմ, իսկ դու թույլ ես տալիս, ես նրան ասում եմ գիրք կարդա, դու բակ ես ուղարկում, նա համարձակվում է կոպիտ պատասխանել ինձ, իսկ դու փաղաքշում ես, ես նրա վրա բարկանում եմ, իսկ դու պաշտպանում ես…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՊԸ – Հա, երբ ես տանն եմ, չհամարձակվես գոռալ երեխու վրա: Իմ ջիգյարն է, չէ՞, իմ քաղցր թոռնիկն է, չէ՞…

ՄԱՅՐԸ – Իսկ ի՛մ ինչն է, հայրիկ, ե՞ս ինչ եմ ուզում: Ես էլ ուզում եմ, որ քո թոռնիկը դաստիարակված լինի, կրթված լինի, լավ մարդ դառնա…

ՊԱՊԸ - Մեր ցեղից դեռ վատ մարդ դուրս չի եկել...

ՄԱՅՐԸ – Արդեն, արդեն ստացվում է…Չե՞ս տեսնում ինչ պատասխաններ է տալիս, չե՞ս տեսնում, երբ որ դու տանն ես, բոլորովին չի ենթարկվում ինձ…

ՊԱՊԸ - Ուրեմն թողնեմ տնից դուրս գամ, հա՞, ուրեմն ձեզ խանգարողը ես եմ, հա՞… այս օրին էլ հասանք... ինձ իմ տնից դուրս են անում, վեր կաց, աչքերդ բաց արա, ողորմածիկ Սիրան, աչքերդ բաց արա ու տես թե ոնց է ինձ հետ խոսում հարսդ...

ՄԱՅՐԸ – Սա՞ ինչ մղձավանջ է...Պետք չէ, ի սեր աստծո, հայրիկ…

ՊԱՊԸ - Ի՞նչը պետք չի...Որ աչքերը բաց անի՞…

ՄԱՅՐԸ - Երեխայի մոտ այդպիսի բաներ մի ասա, հայրիկ ջան, խնդրում եմ... պետք չէ…
ՊԱՊԸ – Ամաչում ես, չէ՞... բա՞...

ՄԱՅՐԸ - Խնդրում եմ, ախր այդպես լրիվ կփչանա երեխան…

ԹՈՌԸ– Չեմ փչանա, չեմ փչանա, հեծանի՞վ եմ, ինչ է, հո առաջին անգամը չէ… ինչքան ուզում եք խոսեք... դավայ, պապ... Չխեղճանաս, մամ...

ՄԱՅՐԸ– Տեսա՞ր…

ՊԱՊԸ– Տեսա՞ր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆՎԵՐԸ

/ Փոխադրություն /

Պատկեր առաջին

Վահանը: Ձեռքին մի տուփ կա: Նրան է մոտենում Արմենը:

ԱՐՄԵՆ – Վահա՞ն, բարև, եղբայր:

ՎԱՀԱՆ - Բարև, բարև, ո՞նց ես:

ԱՐՄԵՆ – Հիանալի: Իսկ դո՞ւ:

ՎԱՀԱՆ -Դրա կրկնապատիկը: Իսկ դո՞ւ:

ԱՐՄԵՆ – Էլ տեղ չկա, Աշխենն ինչպե՞ս է:

ՎԱՀԱՆ - Ինձ նման ամուսին ունեցողը ինչպե՞ս կլինի:

ԱՐՄԵՆ - Լավ կլինի:

ՎԱՀԱՆ - Դրա կրկնապատիկը:

/Ծիծաղում են կատակի վրա /:

Տեսնո՞ւմ ես, նվեր եմ տանում:

ԱՐՄԵՆ - Ո՞ւմ:

ՎԱՀԱՆ - Աշխենին, ո՞ւմ...

ԱՐՄԵՆ - Դո՞ւ:

ՎԱՀԱՆ - Իսկ ինչ կա որ…

ԱՐՄԵՆ - Բայց չէ՞ որ դու սկզբունքով դեմ էիր կնոջ համար նվեր գնելուն: Երես կառնի, ասում էիր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՀԱՆ - Ինչ ճիշտ է, ճիշտ է: Բայց հիմա, Արմեն ջան, դրությունը փոխվել է: Իսկ երբ դրությունը փոխվում է, սկզբունքներն էլ են փոխվում:

ԱՐՄԵՆ - Եվ այդ ի՞նչն է ստիպել քեզ փոխելու սկզբունքդ:

ՎԱՀԱՆ - Անկե՞ղծ ասեմ:

ԱՐՄԵՆ - Եթե հարկ ես համարում :

ՎԱՀԱՆ - Ախպորս ասեմ՝ ամեն մարդ մի պակասություն ունի: Ես էլ ունեմ:

ԱՐՄԵՆ - Դրա կրկնապատիկը:

ՎԱՀԱՆ - Երևի... Քեզանից ինչ թաքցնեմ… թուլություն ունեմ աշխարհի բնակչության գեղեցիկ մասի նկատմամբ: Մարդ եմ, էլի: Իսկ դու Աշխենին գիտես՝ սրբություն է: Հավատարմության մարմնացում, բարոյականության էտալոն: Ժամերով կարող եմ ճառ ասել:

ԱՐՄԵՆ - Գիտեմ, մասնագիտությունդ է:

ՎԱՀԱՆ –Հա… ու վերջերս չգիտեմ ինչ է կատարվել ինձ հետ, Արմեն, խիղճս տանջում է: Քիչ է մնում գայլի նման կաղկանձեմ, հատկապես գիտես, էլի, երբ տուն եմ վերադառնում: Դե, նրա մտքով էլ չի անցնում, թե որտեղից եմ գալիս ու այնպես ջերմ է դիմավորում, այնպես հոգատար, որ քիչ է մնում լաց լինեմ ու նորից թողնեմ գնամ: Սրիկա, ասում եմ ինքս ինձ, ստոր անասուն, ասում եմ ինքս ինձ, բա դու այս սրբության ճկույթին արժանի՞ ես: Բա դու գետինը չե՞ս մտնում, ասում եմ ինքս ինձ, բա դու այ, այսքան խիղճ չունե՞ս: Գոռում եմ մտքումս, քարկոծում եմ ինձ, տրորում, հողին եմ հավասարեցնում ինձ:

ԱՐՄԵՆ - Հետո՞...

ՎԱՀԱՆ - Ու այդպես… ամեն անգամ: Իմ մեջ, Արմեն ջան, փաստորեն երկու դև է նստած, մեկն այդպես հայհոյում է, իսկ մյուսը ժամացույցին է նայում, որ ժամադրությունից չուշանա: Իսկ ես համ նրա հետ եմ, համ սրա, վառվում եմ արանքում…

ԱՐՄԵՆ - Ուրեմն երեք դև է:

ՎԱՀԱՆ - Երևի...

ԱՐՄԵՆ - Չհասկացա, իսկ նվե՞րն ինչ կապ ունի…

ՎԱՀԱՆ - Ամենաուղղակի կապը, Արմեն: Քանի որ չես կարողանում այդ ստորությունից ձեռք քաշել, մի անգամ ասացի ինքս ինձ, գոնե ավելի ուշադիր ու ավելի հոգատար եղիր կնոջդ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

նկատմամբ: Կյանքումդ գոնե մի անգամ նվեր գնե՞լ ես կնոջդ համար, ասացի ինքս ինձ, այն կնոջ, որ սրբությամբ ու հավատարմությամբ կյանքիդ ընկերն է դարձել, որը հետևում, խնամում է քեզ ու զավակներիդ, որը...

ԱՐՄԵՆ - Բավական է, կհուզվես դարձյալ…

ՎԱՀԱՆ - Այո, հուզվում եմ, չեմ թաքցնում… Ոչ մի դատախազ այն պատիժը չի կարող տալ ինձ, ինչ ես եմ տալիս: Սրիկա, ասում եմ ինքս ինձ...

ԱՐՄԵՆ – Հետո՞, հետո՞...

ՎԱՀԱՆ - Եվ ահա որոշեցի... որ ամեն մի ստորությունից հետո գոնե մի նվեր գնեմ կնոջս համար,,.

ԱՐՄԵՆ - Եվ հիմա էլ…

ՎԱՀԱՆ - Հա, այնտեղից եմ գալիս... Աշխենս շատ կուրախանա, արդուկ եմ գնել… մերը վաղուց փչացել էր... Ու որ տեսնես այդ իմ նվերների վրա ինչպես է ուրախանում, ինչպես է ուրախանում…

ԱՐՄԵՆ - Շա՞տ նվերներ ես գնել...

ՎԱՀԱՆ— Շատ… Աշխենս արժանի է դրան… Ու… հա, մի բան էլ ասեմ, հիմա եմ հասկանում, թե հայրս ինչու էր գրեթե ամեն օր նվեր բերում մորս... Այսինքն, գուցե սխալվում եմ… դե ես գնացի, առանց այդ էլ շատ եմ ուշացել... Ինչ որ ասացի՝ մեր մեջ մնա, հա՛, մեր մեջ...

/ Արմենը գլուխն օրորելով նայում է նրան /:

Պատկեր երկրորդ

ՎԱՀԱՆ - / Տուն է մտնում և ուղղվում դեպի կինը /Բարև, Աշխեն ջան, բարև,անուշս…

ԱՇԽԵՆ - Բարով եկար, հիմա սեղանը կպատրաստեմ... ախր ինչո՞ւ ես այդքան աշխատում: Խնայիր քեզ, Վահան ջան, քո առողջությանը հետևիր, քեզ լավ պահիր, թեկուզ ինձ համար, մեր զավակների համար... առանց քեզ ի՞նչ ենք մենք...

ՎԱՀԱՆ - /Մեկուսի / Ստոր անասուն... եթե դու մարդ լինեիր, հենց հիմա պետք է գետինը մտնեիր ամոթից... ի՞նչ մարդ ես դու, ոչ խիղճ ունես, ոչ պատիվ ունես, ոչ արժանապատվություն ունես, տես, տես, ինչպես է քեզ նայում, տես ինչպես է սիրում քեզ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

իսկ դու, իսկ դու, տականք, չգիտես թե որտեղից ես գալիս... Առ քեզ, աննամուս, առ քեզ, ճիվաղ, առ քեզ, անամոթ...

/ Բարձր, ժպտալով /

Մի տես քեզ համար ինչ եմ բերել, Աշխեն ջան…

ԱՇԽԵՆ - Վայ, արդո՞ւկ է... / Համբուրում է ամուսնուն/: Տեսնում էի, որ շատ ես զբաղված, ամաչում էի խնդրել: Ապրես,Վահան ջան, շատ ապրես:

ՎԱՀԱՆ – Դե լավ, ինչ մեծ բան է որ…

ԱՇԽԵՆ - Կարևորն ուշադրությունն է, Վահան ջան, երևի դու էլ գիտես, թե որքան երջանիկ եմ ես… հատկապես վերջին ժամանակներս ինձ ուղղակի երես ես տալիս... Ի՞նչ կարիք կա այդքան ծախսեր անելու, ընկերներ ունես, մեծ շրջապատ ունես, զրկում ես քեզ ամեն հաճույքից.,.

ՎԱՀԱՆ– Իմ հաճույքը, իմ երջանկությունը դու ես և իմ երեխաներն են, Աշխեն ջան… /մեկուսի/ Առ քեզ, ստոր, առ քեզ, տականք, առ քեզ, անամոթ... գետինը մտնես դու... Չէ, ավտոբուսով չեմ հասցնի... ստիպված տաքսի պետք է նստեմ...

ԱՇԽԵՆ - Իսկ ես քեզ համար… ահա... /մեկնում է նրան մի փաթեթ /:

ՎԱՀԱՆ – Սա՞ ինչ է:

ԱՇԽԵՆ - Իմ նվերն է քեզ, Վահան ջան:

ՎԱՀԱՆ - Շնորհակալություն, Աշխեն ջան…

ԱՇԽԵՆ - Բացիր, բացիր, տես ինչ եմ գնել…

ՎԱՀԱՆ - /Դեռևս ուրախ է/ Ի՜նչ հիանալի փողկապ է... Այս վերնաշապիկը որտեղի՞ց ես գնել, այ աղջի…օ՜հ, իմ ամենասիրելի ճարմանդները…

ԱՇԽԵՆ – /Երջանիկ/ Բա ի՞նչ... Ասացի՝ ամոթ չի՞, որ անընդհատ ամուսինդ է քեզ համար նվեր գնում: Գոնե մի անգամ չե՞ս պատասխանելու նրան, ինչ է:

ՎԱՀԱՆ - /Միանգամից մռայլվելով / Ժամը քանիսի՞ն ես գնել, Աշխեն...

ԱՇԽԵՆ - Ժամն ի՞նչ կապ ունի, Վահան ջան… դրա համար միշտ էլ կարելի է ժամանակ գտնել: Բա դու ո՞նց ես միշտ ժամանակ գտնում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՀԱՆ - Հա, բայց ի՞նչ է պատահել, որ հանկարծ ոչ այս, ոչ այն, որոշեցիր նվեր գնել ինձ համար, հը՞ ...

ԱՇԽԵՆ - Ոչ մի բան անպատասխան չպետք է թողնել, Վահան ջան, ես այդպես եմ կարծում:

ՎԱՀԱՆ – /Երկար, կասկածով, մռայլված կնոջն է նայում/: Այսինքն դրանով ի՞նչ ես ուզում ասել…

ԱՇԽԵՆ - Վա՞յ, քեզ ի՞նչ պատահեց, ա՛յ մարդ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Ծալովի մահճակալին կիսապառկած է մի փոքրիկ աղջիկ՝ չորս–հինգ տարեկան: Հիվանդ է: Ներս է մտնում նրա քույրը՝ տասներկու տարեկան:

ՏԱԹԵՎԻԿ– Մամ… մա՛մա…

ԼԻԼԻԹ - Ասա, Տաթո ջան...

ՏԱԹԵՎԻԿ– Ես մամայիս եմ ուզում...

ԼԻԼԻԹ - Մաման աշխատանքի է գնացել, գնացել է աշխատանքի, որ կոնֆետ բերի քեզ համար...

ՏԱԹԵՎԻԿ - Ես կոնֆետ չեմ ուզում, ես մամայիս եմ ուզում…

ԼԻԼԻԹ - Շուտով կգա, քույրիկ ջան, դու արդեն մեծ աղջիկ ես, պիտի հասկանաս, որ մաման աշխատանքի է գնացել, բա՞...

ՏԱԹԵՎԻԿ – Իսկ ինչո՞ւ է գնացել...

ԼԻԼԻԹ - Ինչո՞ւ: Մաման աշխատում է, որ պահի մեզ: Որ հաց բերի, կաթ բերի, երշիկ բերի մեզ համար…

ՏԱԹԵՎԻԿ - Բա ինչո՞ւ Նառայի մաման չի բերում: Պապան է բերում:

ԼԻԼԻԹ - Նառայի մաման չի աշխատում, դրա համար էլ պապան է բերում:

ՏԱԹԵՎԻԿ - Բա ինչո՞ւ իմ պապան չի բերում:

ԼԻԼԻԹ - Քնիր, Տաթո ջան, հա՞… ուզում ես, խնձոր տամ քեզ:

ՏԱԹԵՎԻԿ - Բա ինչո՞ւ իմ պապան չի բերում:

ԼԻԼԻԹ – Չգիտեմ, Տաթո ջան...

ՏԱԹԵՎԻԿ - Բա ինչո՞ւ առաջ բերում էր, իսկ հիմա չի բերում:

ԼԻԼԻԹ - Որովհետև, որովհետև... խռովել է մամայից ու տուն չի գալիս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԱԹԵՎԻԿ - Իսկ ինչո՞ւ է խռովել: Խաբում ես, գործուղում է գնացել:

ԼԻԼԻԹ - Քրտնել ես, քույրիկ ջան, հիմա թաշկինակով քո ճակատի քրտինքը կսրբեմ... /Սրբում է/:

ՏԱԹԵՎԻԿ - Մամայիս հոտն եկավ...

ԼԻԼԻԹ - Ի՞նչ...

ՏԱԹԵՎԻԿ - Թաշկինակից մամայիս հոտն եկավ… իսկ գիտե՞ս, գրասեղանից պապայի հոտն է գալիս:

ԼԻԼԻԹ – Ծխախոտի հոտն է:

ՏԱԹԵՎԻԿ - Չէ, պապայիս հոտն է:

ԼԻԼԻԹ - Հա, քաղցրիկ ջան...

ՏԱԹԵՎԻԿ– /Հառաչում է/ Ա՜խ...

ԼԻԼԻԹ - Ինչո՞ւ ես հառաչում, Տաթո ջան… ի՞նչ ես ուզում, քույրիկ ջան…

ՏԱԹԵՎԻԿ - Կարոտել եմ պապայիս...

/Լիլիթը շրջվում, ձեռքով ծածկում է դեմքը/:

Դո՞ւ էլ ես կարոտել...

ԼԻԼԻԹ – Հա՜:

ՏԱԹԵՎԻԿ– /Լռելուց հետո/ Որ իմանա հիվանդ եմ, կգա, ես գիտեմ, կասի Տաթոն հիվանդ է, ես պիտի գնամ: Կանչում է / Պապ ջան, արի, արի, պապ ջան… կգա, չէ՞, Լիլիթ...

ԼԻԼԻԹ– Չգիտեմ.,,

ՏԱԹԵՎԻԿ— Իսկ ես գիտեմ… կգա իմ պապան...

ԼԻԼԻԹ - Ջուր ուզո՞ւմ ես, Տաթո ջան…

ՏԱԹԵՎԻԿ - Այո... /Լիլիթը ջուր է տալիս: Խմում է: Շնորհակալություն: Լիլի՜թ…

ԼԻԼԻԹ– Լսում եմ, քույրիկ ջան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԱԹԵՎԻԿ - Բա Մարգո տատիկը ինչո՞ւ մեր տուն չի գալիս: Նա է՞լ է մամայից խռովել:

ԼԻԼԻԹ - Չէ, Մարգո տատիկը չգիտի, որ դու հիվանդ ես, թե չէ անպայման կգար:

ՏԱԹԵՎԻԿ– Դե զանգահարիր, թող գա: Ասա՝ տատիկ ջան, Տաթոն հիվանդ է, Տաթոն կարոտել է քեզ...

ԼԻԼԻԹ - Արդեն մութ է, քաղցր ջան, տատիկը մեր տունը չի գտնի...

ՏԱԹԵՎԻԿ– Կգտնի...

ԼԻԼԻԹ - Չի գտնի, տատիկը ծեր է...

ՏԱԹԵՎԻԿ– Կգտնի... /լացակումած/ կգտնի...

ԼԻԼԻԹ - Ախր գա ի՞նչ անի: Դու ինչ որ ուզում ես, ես չե՞մ տալիս, տեսա՞ր, ջուր ուզեցիր տվեցի, փուչիկ ուզեցիր՝ տվեցի... Ասա, ի՞նչ ես ուզում...

ՏԱԹԵՎԻԿ - Տատիկիս եմ ուզում...

ԼԻԼԻԹ - Զանգահարե՞մ՝ Շուշան տատիկը գա:

ՏԱԹԵՎԻԿ - Չէ, ես Մարգո տատիկիս եմ ուզում:

ԼԻԼԻԹ - Դե լավ, էլի, կամակորություն մի արա: Ես ինչպե՞ս զանգահարեմ Մարգո տատիկին... Մաման չի թողնում, Տաթո ջան...

ՏԱԹԵՎԻԿ - /Դավադիր) Մաման չի իմանա... զանգահարիր...ասա, տատի ջան, Տաթոն հիվանդ է...

ԼԻԼԻԹ - Դե վերջ տուր, ասում եմ, ոչ մի տեղ էլ չեմ զանգահարի... մաման կգա հիմա... /Տաթևիկը լուռ է/ Մաման կգա հիմա, քույրիկ ջան... /լռություն/ Այ, կտեսնես, մինչև հարյուրը հաշվեմ՝ կգա: Հա՞: Դե խոսիր... Ինձ նայիր... Քեզ հետ եմ...

/Տաթևիկը ձեռքերով փակել է աչքերը: Լիլիթը հեռացնում է ձեռքերը/ Ինչո՞ւ ես լաց լինում, քույրիկ ջան, ինչո՞ւ ես լաց լինում:

ՏԱԹԵՎԻԿ - Մարգո տատիկիս եմ ուզում...

ԼԻԼԻԹ– Լավ, ես ի՞նչ անեմ... /մոտենում է հեռախոսին, հավաքում է համարը/ Ալո, Մարգո տատիկ, ես եմ, Լիլիթը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԱԹԵՎԻԿ – Ասա՝ Տաթոն հիվանդ է, տատիկ ջան…

/Լիլիթը թափ է տալիս ձեռքը/:

ԼԻԼԻԹ – Տաթևիկը տաքություն ունի, տատիկ, քեզ է ուզում… ի՞նչ անեմ, լաց է լինում: Մաման գործարանում է: Կգա՞ս, հենց հիմա՞.,, Լավ, տատիկ…

ՏԱԹԵՎԻԿ - /Բարձրացել է տեղից/ Տեսա՞ր… բա ասում էիր տեղը չի գտնի, խափլան… Լիլիթ ջան…

ԼԻԼԻԹ –Հը:

ՏԱԹԵՎԻԿ -Խնձոր եմ ուզում…

/Լիլիթը խնձոր է տալիս նրան/:

Շնորհակալություն…

ԼԻԼԻԹ - Քեզ ի՞նչ է պատահել, այ քույրիկ, հիվանդությունի՞ց է, որ այդքան քաղաքավարի ես դարձել…

ՏԱԹԵՎԻԿ - Չէ , պապաս ասում է, երբ քեզ բան են տալիս, ասա՝ շնորհակալություն:

ԼԻԼԻԹ – Ապրես, ապրես, խելոք բալիկ…

ՏԱԹԵՎԻԿ– Լիլիթ…

ԼԻԼԻԹ - Ասա…

ՏԱԹԵՎԻԿ– Խնձորը չեմ ուզում, վերցրու…

/Լիլիթը վերցնում է/:

Դե ասա՝ շնորհակալություն…

ԼԻԼԻԹ - Ախ դու դմբո, դմբո… / ծիծաղում է, գրկում համբուրում է քրոջը/ թութակ ջան, թութակ… /Լսվում է դռան զանգ/:

ՏԱԹԵՎԻԿ – Մամա՛ս…

ԼԻԼԻԹ– Չէ, Մարգո տատիկը կլինի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Գնում է, վերադառնում է հոր հետ/:

ՀԱՅՐԸ – Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, Լիլիթ…

ՏԱԹԵՎԻԿ - Պապաս…/բարձրանում է տեղից / Պապ ջան, ազիզ ջան, դու լսեցի՞ր, որ քեզ կանչում էի, պապ ջան… / Գրկում, գլուխը թաղում է հոր կրծքի մեջ: Հայրը անասելի հուզված է/:

ՀԱՅՐԸ - Իհարկե, իհարկե լսեցի, բալիկ ջան…

ՏԱԹԵՎԻԿ - Ես այնքան բարձր էի կանչում, պա՜պ ջան, արի, պա՜պ ջան, արի… դու ինձ լսո՞ւմ էիր.. Տեսա՞ր, Լիլիթ, ասում էիր չի գա: Ես գիտեմ, չէ…

ՀԱՅՐԸ - Ես ինչպե՞ս կարող էի չգալ, Տաթո ջան, մաման… հենց քո ձայնը լսեցի… բայց դու ջերմություն ունես, բալիկ ջան, պառկիր, պառկիր… այ այդպես… Լիլիթ ջան, ինձ տուր ջերմաչափը: /Լիլիթը ջերմաչափը մեկնում է նրան/ Դե արի մի հատ էլ քեզ պաչեմ… մոտ արի… մոտ արի…/Լիլիթը դռանը նայելով, մոտենում, գրկում է հորը/:

ԼԻԼԻԹ – Հայրի՜կ ջան…

ՀԱՅՐԸ - Ոնց էի կարոտել ձեզ… Դե ջերմաչափը այդպես պինդ սեղմիր թևիդ տակ… ահա, ավելի ամուր… ապրես… ու քնիր, հա՞, քնիր, քաղցրս…

ՏԱԹԵՎԻԿ– Ձեռքդ տուր…

ՀԱՅՐԸ - Ձեռքս… ինչո՞ւ… /մեկնում է/:

ՏԱԹԵՎԻԿ - Որ չգնաս… Չե՞ս գնա, չէ՞, պապ ջան, Տաթոն հիվանդ է… որ գնաս, էլի կհիվանդանամ, չես գնա, չէ՞, պապ ջան…

ՀԱՅՐԸ - Չեմ գնա, իհարկե չեմ գնա, միայն թե քնիր, որ շուտ լավանաս, բալիկ ջան, լավացիր, որ ես քեզ կրկես տանեմ, տիկնիկային թատրոն տանեմ, հետո կմտնենք «Հեքիաթ» սրճարանը: Ուզում ես, չէ՞ …

ՏԱԹԵՎԻԿ – Չես գնա, չէ՞, պապ ջան… /սկսում է քնել/…

ՀԱՅՐԸ - /Շշուկով/ Բա ինչո՞ւ շուտ զանգ չէիր տալիս, Լիլիթ ջան, ես բժիշկ կհրավիրեի… Իսկ նա չգիտե՞ր, որ հիվանդ է… ինչո՞ւ աշխատանքի գնաց…

ԼԻԼԻԹ - /Դռանը նայելով/ Մամայի գնալուց հետո եղավ, հայրիկ ջան, ասաց՝ գլուխս ցավում է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/ Հայրը ուզում է ազատել ձեռքը/:

ՏԱԹԵՎԻԿ - /Մրմնջում է/ Պապ ջան...

/Հայրը մյուս ձեռքով բռնում է գլուխը, տառապում է: Դռան շխկոց է լսվում: Ներս է գալիս մայրը: Կանգ է առնում ապշած ու շփոթված/:

ՄԱՅՐԸ – Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել...

ԼԻԼԻԹ – Տաթևիկը հիվանդ է, մամ ջան, լաց էր լինում... /շշուկով/ ազնիվ խոսք, ես Մարգո տատիկին եմ զանգահարել, չե՞ս հավատում:

ՀԱՅՐԸ - /Շրջել է գլուխը դեպի կինը, ասում է մեղավորի պես՝ ցույց տալով Տաթևիկի ձեռքը/ Չի թողնում, այնքան ամուր է բռնել... ես կգնայի... բայց չի թողնում... /Մայրը գլխարկը հանում է, թախտին է դնում ու փլվում աթոռին/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԵՔԻԱԹ

Բեմում տղան է: Ներս է մտնում աղջիկը՝ լաց լինելով:

ՏՂԱՆ - Ի՞նչ է պատահել,Գոհարիկ ջան, ինչո՞ւ հանկարծ լաց եղար:

ԱՂՋԻԿԸ – Ես... ես վաղուց եմ լաց լինում:

ՏՂԱՆ - Լավ, բայց ինչո՞ւ ես լաց լինում:

ԱՂՋԻԿԸ - Հը՞… Մոռացել եմ, թե ինչու...

ՏՂԱՆ - /Ծիծաղում է/ Այ քեզ Գոհարիկ... Դե լավ, վերջ տուր...ուզո՞ւմ ես քեզ հեքիաթ պատմեմ...

ԱՂՋԻԿԸ -Պատմիր...

ՏՂԱՆ - Դե նստիր: Ուրեմն ո՞րը պատմեմ:

ԱՂՋԻԿԸ- Չախ-չախ թագավորը:

ՏՂԱՆ - Չէ, դա հարյուր անգամ պատմել եմ: Ուզո՞ւմ ես Մոխրոտը պատմեմ:

ԱՂՋԻԿԸ - Պահ, ամեն օր հեռուստացույցով տեսնում եմ...

ՏՂԱՆ - Իսկ ո՞րը չես տեսնում: Դե լավ, արի պահմտոցի խաղանք:

ԱՂՋԻԿԸ - Մեր տա՞նը: Մեր տանը թաքնվելու տեղ կա՞: Համ էլ պահմտոցին մեծերի խաղ է:

ՏՂԱՆ – Ինչ ես ասում, է՛...

ԱՂՋԻԿԸ - Ճիշտ եմ ասում: Մեր վերևի հարևան Աշոտ քեռին ու Թագուշ մորաքույրը ամեն օր պահմտոցի են խաղում: Երկու հոգի են ու վեց սենյակ... Ամբողջ օրը իրար ձայն են տալիս, իրար ման են գալիս ու չեն գտնում... Ամբողջ օրը կանչում են. «Աշոտ, որտե՞ղ ես», «Թագուշ, տեղդ ասա...

ՏՂԱՆ - Իսկ հետո Թագուշ մորաքույրն էլի նստե՞ց Աշոտ քեռու գլխին:

ԱՂՋԻԿԸ– Ի՞նչ, ես չեմ տեսել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ - Ես էլ չեմ տեսել, բայց Մայա մորաքույրը մայրիկին ասում էր, թե Թագուշը ամբողջ օրը Աշոտի գլխին նստած է ու աղում է...

ԱՂՋԻԿԸ– Ի՞նչն է աղում:

ՏՂԱՆ - Գլուխը...

ԱՂՋԻԿԸ – Գլուխը՞: Ինչպե՞ս է աղում:

ՏՂԱՆ - Դե, երևի այսպես.../ցույց է տալիս/:

ԱՂՋԻԿԸ - Մե՛ղք է Աշոտ քեռին:

ՏՂԱՆ -Է, դմբո, ի՞նչ ես լաց լինում. նրան ոչինչ էլ չի պատահի:

ԱՂՋԻԿԸ – Կդառնա կոտլետ...

ՏՂԱՆ - Չէ մի: Մայա մորաքույրը մայրիկին ասաց, որ մեկ է, նա ինչ էլ անի, ոչինչ չի պատահի:

ԱՂՋԻԿԸ -Կդառնա տոլմա...

ՏՂԱՆ - Ոչինչ էլ չի դառնա: Դու գիտե՞ս, որ նա երեք հարյուր տոննա ցեմենտ է կերել և ոչինչ չի պատահել:

ԱՂՋԻԿԸ - Բա փորիկը չի՞ ցավացել:

ՏՂԱՆ - Չէ: Մայա մորաքույրն ասաց, մարսել է: Հետո երկու անգամ վառվել է և էլի ոչինչ չի պատահել:

ԱՂՋԻԿԸ – Ինչպե՞ս է վառվել:

ՏՂԱՆ - Չգիտեմ: Մայա մորաքույրն ասաց՝ մի անգամ ունիվերմագում է վառվել, մի անգամ էլ պահեստում:

ԱՂՋԻԿԸ – Ուրեմն ֆոկուսնի՞կ է:

ՏՂԱՆ – Երևի:

ԱՂՋԻԿԸ – Ինչ լավ է... Ես էլ կուզեի ֆոկուսնիկ դառնալ, իսկ դո՞ւ...

ՏՂԱՆ - Ես կուզեի ավտոմատ դառնալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ– Ավտոմա՞տ, Ինչո՞ւ:

ՏՂԱՆ - Որովհետև ամբողջ օրը կոպեկներ է կուլ տալիս և ոչինչ չի անում:

ԱՂՋԻԿԸ – Ինչո՞ւ… մեկ-մեկ թշշում է…

ՏՂԱՆ - Ուրեմն բարկանում է, որ քիչ են տալիս…

ԱՂՋԻԿԸ – Դե լավ, հեքիաթ պատմիր, Արտակ…

ՏՂԱՆ – Հի՞ն հեքիաթ:

ԱՂՋԻԿԸ - Չէ, նորը…

ՏՂԱՆ - Ախր, Գոհարիկ ջան, հիմա ո՞վ է նոր հեքիաթ գրում, որ պատմեմ… բոլորն էլ հին հեքիաթներ են գրում…

ԱՂՋԻԿԸ – /Ուզում է լաց լինել/:

ՏՂԱՆ - Դե լավ, մի տզզա: Ուրեմն լինում է չի լինում մի աղջիկ…

ԱՂՋԻԿԸ - Անունը Գոհարիկ…

ՏՂԱՆ - Անունը Գոհարիկ: Մայրիկը կիրակի օրը Գոհարիկին մեկ ռուբլի է տալիս և ասում. «Գնա միայնակ զբոսնիր, Գոհարիկ»:

ԱՂՋԻԿԸ– Ի՜նչ գեղեցիկ հեքիաթ է:

ՏՂԱՆ - Գոհարիկը գնում, գնում, նախ և առաջ տասնմեկ կոպեկ է տալիս և մի հատ էսկիմո պաղպաղակ գնում…

ԱՂՋԻԿԸ - Սուտ է…

ՏՂԱՆ– Ի՞նչն է սուտ…

ԱՂՋԻԿԸ -Ով է տասնմեկ կոպեկով էսկիմո տալիս…

ՏՂԱՆ - Հեքիաթներում պատահում է, քույրիկ ջան… Հետո պաղպաղակ ուտելով գնում է, գնում, տեսնում է, որ փողոցի անկյունում հրաշալի մեխակներ են վաճառում: «Գնեմ մի քանի հատ այս հրաշալի մեխակներից ու նվիրեմ մայրիկին»— մտածում է Գոհարիկը ու հենց այդպես էլ անում է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ– Սուտ է, սուտ է, մեխակի մեկ հատը մի ռուբլի է, ինչպե՞ս է մի քանի հատ գնում...

ՏՂԱՆ - Հը՞, խանութից է գնում, քույրիկ ջան:

ԱՂՋԻԿԸ – Չե՛մի, խանութում ե՞րբ են հրաշալի մեխակներ լինում...

ՏՂԱՆ - Ախր դու մի մոռացիր, որ հեքիաթ է, Գոհարիկ ջան: Մի խանգարի: Հեքիաթում կարելի է ամեն ինչ ասել: Կարելի է ասել, որ լրագիր վաճառողները «Եթերում է Երևանը» իր գնով, հինգ կոպեկով են վաճառում և ոչ թե տասնհինգ կոպեկով, որ խանութներում լիքը ընդհանուր տետրեր կան, որ դասատուները չորսեր ու հինգեր են բաժանում, և ոչ թե միայն երկուսներ ու երեքներ տալիս... որ Երևանի յուրաքանչյուր մեծ բակում ջրավազան կա, որտեղ երբեմն ջուր էլ է լինում... Որ մեր սիրելի Պատանի հանդիսատեսի թատրոնը արդեն նոր շենքում է և այլն և այլն...

ԱՂՋԻԿԸ – Ի՛նչ սիրուն բաներ ես պատմում, եղբայրիկ...

ՏՂԱՆ – Բա՞, Գոհարիկ ջան, երազները մեծ մասամբ սիրուն են լինում:

ԱՂՋԻԿԸ – Հա, Արտակ ջան, իսկ դու ի՞նչ երազ կուզեիր քեզ համար:

ՏՂԱՆ - Ե՞ս... ինչ կուզեի...Իսկ դու մայրիկին չե՞ս ասի...

ԱՂՋԻԿԸ – Երբեք...

ՏՂԱՆ – Հա՞... Դե, ուրեմն, ես շատ կուզենայի, շատ կուզենայի, ա՛խ, որ մի կարգին հարբուխ ընկնեի... դե, էսպես մինչև նոր տարի... նոր տարին անցներ, թե չէ, մի որևէ բանով հիվանդանայի... ասենք, թեկուզ խոզուկով... մինչև գարնանային արձակուրդները... արձակուրդներին մի լավ խաղայինք... Հետո թող ոտքս կամ ձեռքս մի քիչ ջարդվեր... դե, մինչև ամառային արձակուրդները սկսվեին...

ԱՂՋԻԿԸ – Բայց դա իսկական ծույլիկի երազ է, Արտակ...

ՏՂԱՆ - Էհ, դու էլ... երազը երազ է, էլի... ի՞նչ օգուտ, որ ոչ մի երազ էլ չի կատարվում... գրքում եմ կարդացել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԱՀԱՎԵՏ ԳՈՐԾԱՐՔ

Պատկեր առաջին

Սովորական սենյակ: Ամուսինը հեռուստացույց է նայում: Կինը նստած է սեղանի մոտ, գլուխը ափերի մեջ առած, մտախոհ: Հաղորդումն ավարտված է, ամուսինը անջատում է հեռուստացույցը, դառնում կնոջը: Նրանք ջահել են՝ 23—24 տարեկան:

ԱՄՈՒՍԻՆԸ - Հա, ի՞նչ եղավ:

ԿԻՆԸ - Արդեն երկրորդն եմ:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ընդհանո՞ւր հերթում:

ԿԻՆԸ - Չէ, երկուսենյականոցների:

ԱՄՈՒՍԻՆԸ- Ոչինչ, բան չմնաց, ուրեմն ամենաշատը երկու տարի հետո մեր բնակարանը կունենանք: Այնպես եմ հոգնել, Աստղիկ, չես պատկերացնի... Հենց մտածում եմ, որ աշխատավարձս նույնությամբ տանտիրոջն եմ տալու, ձեռքերս թուլանամ են...

ԿԻՆԸ– Իսկ դու մտածիր, տղամարդ ես, երբ ամուսնանում էինք, սարեր էիր խոստանում:

ԱՄՈՒՍԻՆԸ– Սարե՞ր, սարեր ես հիմա էլ եմ առաջարկում, խնդրեմ, ո՞ր սարերն ես ուզում՝ Գորիսի, Ապարանի... Ասա, գնացինք...

ԿԻՆԸ- Երանի քեզ, որ դեռ կարողանում ես կատակել: Իսկ ես ոչ մի ուրիշ բանի մասին մտածել չեմ կարողանում, ինչ անում եմ, ուղեղիս մեջ բնակարանն է: Բնակարանը, բնա-կարանը...

ԱՄՈՒՍԻՆԸ – Դե լավ, Աստղիկ ջան, ի՞նչ մնաց, շուտով կստանաս, այսինքն կստանանք, կվայելենք ու կմոռանանք բոլոր անցած հոգսերը: Կտեսնես:

ԿԻՆԸ - Կտեսնես... Երկու սենյականոց բնակարանն էլ դարձավ վայելք: Հիմիկվա երկու սենյակն ի՞նչ է, առաջվա մեկ սենյակը մեջտեղից կիսած... Եթե ուզենաս, կարող ես չորս սենյակ էլ դարձնել: Մի անգամ էլ կիսիր:

ԱՄՈՒՍԻՆԸ - Մի բարդացրու: Երկու հոգի ենք, էլի...

ԿԻՆԸ - Իսկ դու չե՞ս մտածում, որ կարող ենք երեք դառնալ, չորս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ – Աստված տա… թող լինեն, այն ժամանակ էլ կմտածենք… բարելավման խնդիր կդնենք… կպահանջենք…

ԿԻՆԸ - Եվ կսպասենք էլի հինգ-վեց տարի…

ԱՄՈՒՍԻՆԸ – Հա, ի՞նչ կա, ո՞վ է մեր ետևից ընկել, հո մենակ մենք չենք…

ԿԻՆԸ - Իհարկե, մենակ մենք չենք, բայց բոլորն էլ մտածում են, չարչարվում, են, աշխատում են մի ելք գտնել, իսկ դու քեզ համար հանգիստ նստած հեռուստացույց ես նայում ու սպասում, թե երբ պետք է կինդ քեզ համար բնակարան ստանա…

ԱՄՈՒՍԻՆԸ - Բա քեզ սազե՞ց, Աստղիկ: Դու չգրվեիր, ես էի գրվելու, ի՞նչ տարբերություն, դեռ տանտեր չդարձած արդեն երեսով ես տալիս, չեղավ, չէ: Եվ վերջապես հազար անգամ մտածել ենք: Դե դու ասա. ուրիշ ի՞նչ կարող ենք անել:

ԿԻՆԸ– Եկ բաժանվենք: ,

ԱՄՈՒՍԻՆԸ– Ինչ անե՞նք,

ԿԻՆԸ– Եկ բաժանվենք, Մարտին:

ԱՄՈՒՍԻՆԸ - Սպասիր, հո չե՞ս խելագարվել, բնակարանի պատճառով…

ԿԻՆԸ - Ոչ թե բնակարանի պատճառով, այլ բնակարանի համար:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ոչինչ չեմ հասկանում, այ Աստղիկ, բնակարանի համար ինչո՞ւ պետք է բաժանվենք իրարից, սպասիր, դու այլևս ինձ չե՞ս սիրում, ինչ է…

ԿԻՆԸ մ- Էհ, սերն այստեղ ի՞նչ կապ ունի, Մարտին…

ԱՄՈՒՍԻՆԸ– Գետինը մտնեմ, թե որևէ բան հասկանում եմ: Դու ուզում ես բաժանվե՞լ ինձնից:

ԿԻՆԸ- Այո, կեղծ:

ԱՄՈՒՍԻՆԸ – Կե՞ղծ, ինչի՞ համար…

ԿԻՆԸ - Լսիր, դու հո լուսնից չես իջել, գիտե՞ս քանի-քանի ամուսիններ են ձևականորեն իրարից բաժանվում, որ բնակարանի հարցը վերջնականապես լուծեն:

ԱՄՈՒՍԻՆԸ- Հետո՞, ինչպե՞ս են լուծում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Շատ պարզ: Ասենք թե մեկի տունը պետք է քանդեն և ասենք թե ամուսինները երկու երեխա ունեն և պետք է բնակարան ստանան: Երեք հոգի են թե չորս, միևնույն է, երեք սենյականոց բնակարան են տալու նրանց: Դրա համար էլ բաժանվում են, կինը երեխաների հետ երեք սենյականոց բնակարան է ստանում, իսկ ամուսինն էլ առանձին՝ մի սենյակ: Եվ խնդրեմ՝ երկու բնակարան: Կամ երեխաներից մեկի հարցն է լուծվում, կամ էլ փոխում են չորս սենյականոցի հետ:

ԱՄՈՒՍԻՆԸ– Ու այդպես բաժանված էլ մնո՞ւմ են:

ԿԻՆԸ - Ինչո՞ւ: Նորից ամուսնանում են և նույնիսկ նոր կտրոն են ստանում ու նորապսակների խանութից հազվադեպ ճարվող ապրանքներ են գնում: Ամեն ինչ հաշվված է:

ԱՄՈՒՍԻՆԸ - Հա, բայց դա մեզ հետ ի՞նչ կապ ունի, ոչ մեր տունն են քանդում, ոչ էլ մենք երեխաներ ունենք:

ԿԻՆԸ– Ես ամեն ինչ մտածել եմ, Մարտին: Ամեն ինչ մտածել եմ: Մենք բաժանվում ենք օրենքով և դու ամուսնանում ես Մարինեի հետ:

ԱՄՈՒՍԻՆԸ– Մարինեի՞, ի՞նչ Մարինե...

ԿԻՆԸ– Իմ ընկերուհու...

ԱՄՈՒՍԻՆԸ– /Ձեռքը կնոջ ճակատին է դնում/ Ուզո՞ւմ ես բժիշկ կանչեմ...

ԿԻՆԸ– Բժիշկ մի կանչիր, Մարինեին կանչիր, ես արդեն խոսել եմ, պայմանավորվել եմ:

ԱՄՈՒՍԻՆԸ– Ի՞նչ ես պայմանավորվել:

ԿԻՆԸ – Որ դուք ամուսնանաք:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ես կխելագարվեմ: Իսկ դու մի հարցրու, թե ես Մարինեին ուզո՞ւմ եմ:

ԿԻՆԸ– Քո ուզելն ի՞նչ կապ ունի, ա՛յ տղա, ձևականորեն եք ամուսնանում: Կեղծ, հասկանո՞ւմ ես:

ԱՄՈՒՍԻՆԸ – Սպասիր, ուրեմն մենք կեղծ բաժանվելու ենք, հետո ես կեղծ ամուսնանալու եմ: Հետո՞, որ ի՞նչ...

ԿԻՆԸ– Որպեսզի Մարինեի բնակարանը մեր ձեռքն ընկնի...

ԱՄՈՒՍԻՆԸ– Իսկ ինչպե՞ս է ընկնելու...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Ասեմ, լսիր... Դու գիտես, որ Մարինեն երկու սենյականոց կոոպերատիվ բնակարանում է ապրում: Ահա, գիտես նաև, որ նրա ծնողները սեփական տուն ունեն: Նրանց այգում թութ կերել ես, կհիշես:

ԱՄՈՒՍԻՆԸ– Կերել եմ, հիշում եմ, հետո՞...

ԿԻՆԸ– Հետո այն, որ նրանց տղան բնակարան է ստացել ու բաժանվել է ծնողներից:

ԱՄՈՒՍԻՆԸ– Գլուխս տրաքեց, հետո՞...

ԿԻՆԸ - Ամուր սեղմիր, վերջացնում եմ: Ուրեմն Մարինեն ուզում է վաճառել իր կոոպերատիվ բնակարանը և տեղափոխվել ծնողների մոտ: Այնինչ վաճառելու իրավունք չունի...

ԱՄՈՒՍԻՆԸ– Է, հերն էլ անիծած, իմ ցավը քիչ է, հիմա էլ Մարինեի՞ մասին պետք է մտածեմ:

ԿԻՆԸ- Ոչ թե Մարինեի մասին, այլ մեր մասին, Մարտին ջան: Ուրեմն տես, ամեն ինչ հաշվված է: Մենք բաժանվում ենք օրենքով: Դու ամուսնանում ես Մարինեի հետ, օրենքով, գրանցվում ես նրա տանը: Հետո դուք բաժանվում եք օրենքով, Մարինեն հեռանում է, իսկ բնակարանը մնում է քեզ: Հիմա հասկացա՞ր:

ԱՄՈՒՍԻՆԸ– Բա դո՞ւ:

ԿԻՆԸ - Ես էլ իմ հերթին եմ բնակարան ստանում: Ի՞նչ է ստացվում, երկու բնակարան: Մենք նորից միանում ենք օրենքով: Երկու հատ երկու սենյականոցը փոխում չորս սենյականոցի հետ ու ապրում ենք հանգիստ, մարդավարի, մինչև մեր կյանքի վերջը:

ԱՄՈՒՍԻՆԸ– Սպասիր, սպասիր, մեզ երկուսիս ո՞վ չորս սենյակ կտա:

ԿԻՆԸ– Մինչ այդ երեխաներ կունենանք, էլի...

ԱՄՈՒՍԻՆԸ– Բա որ բաժանվելու ենք, ո՞նց ենք երեխաներ ունենալու...

ԿԻՆԸ– Օ՜ֆ, Մարտին, հոգիս հանեցիր, ասում եմ կեղծ ենք բաժանվելով, կեղծ, հիմա հասկացա՞ր:

ԱՄՈՒՍԻՆԸ– /Մտքում հաշվում է/ Ուրեմն ես ու դու... Մարինեն... հետո ես... բնակարանը: Հա, կարծես թե հասկացա:

ԿԻՆԸ - Փառք աստծո:

ԱՄՈՒՍԻՆԸ– Եվ Մարինեն համաձա՞յն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Ինչո՞ւ չպիտի համաձայնվի, խնդրում է, նրա կոոպերատիվի վարձը և մի բան էլ ավել վճարում ենք:

ԱՄՈՒՍԻՆԸ -Գործ չունես, Աստղիկ ջան, հանգիստ ապրում ենք, էլի...

ԿԻՆԸ - /Զայրացած/ Հանգի՞ստ... Եվ դու սա համարում ես հանգի՞ստ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Դե լավ, լավ, համոզեցիր... արա ինչպես ուզում ես...

Պատկեր երկրորդ

/Նույն բնակարանը: Աստղիկը հավաքում է հեռախոսի համարը/:

ԿԻՆԸ - /Մեկուսի / Էս ինչ պատահեց դրան: Ալո, ո՞վ է, Մարտի՞ն, դու այդտեղ ի՞նչ ես անում:

/Մեկ ուրիշ բնակարանում՝ Մարինեն ու Մարտինը: Մարտինը վերցրել է լսափողը/:
ԱՄՈՒՍԻՆԸ - Աստղի՞կ, ինչ պետք է անեմ, ամբողջ օրը քարշ եկանք դատարանի դռանը, մի երկու ժամ հետո նորից ենք գնալու, քաղցած մեռնում էի, եկանք որ մի քիչ հաց ուտենք:

ԿԻՆԸ - Իսկ ինչո՞ւ տուն չեկար, այ տղա:

ԱՄՈՒՍԻՆԸ - Երկու ժամվա համար գայի ի՞նչ անեի...

ԿԻՆԸ - Հետո՞, ի՞նչ են ասում...

ԱՄՈՒՍԻՆԸ– Չեն բաժանում, Աստղիկ ջան, ի՞նչ անեմ, չեն բաժանում...

ԿԻՆԸ - Բա հիմա ի՞նչ ես մտածում, Մարտին ջան...

ԱՄՈՒՍԻՆԸ– Գիտե՞ս ինչ եմ մտածում, Աստղիկ, այսինքն միայն ես չէ, Մարինեն էլ է այդպես մտածում: Դե եթե չեն բաժանում, ի՞նչ կարող ենք անել, երևի աստծո մատը խառն է: Դու ստացար քո բնակարանը, չէ՞ , վայելիր, մենք էլ այս բնակարանում կապրենք...

ԿԻՆԸ - Ի՞նչ, կատակում ես, հա՞...

ԱՄՈՒՍԻՆԸ - Չեմ կատակում, Աստղիկ ջան, բոլորովին չեմ կատակում: Ամեն ինչ լրիվ հաշվված է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿՆԵՐԵՍ, ԵՂԲԱՅՐ ՎԵՐՋ

Դիրեկտորի առանձնասենյակը: Գրասեղան, հեռախոսներ և այլն: Գրասեղանի ետևում նստած է միջին տարիքի, փոքր-ինչ գեր դիրեկտորը՝ Մարտին Վարդանիչը: Նա բարի, կարեկից դեմք ունի: Ներս է մտնում գրեթե նույն տարիքի նրա աշխատակիցը՝ Երվանդը:

ԵՐՎԱՆԴ - Բարի լույս, Մարտին Վարդանիչ:

ՄԱՐՏԻՆ -Լույս բարի, նստիր...

ԵՐՎԱՆԴ – Շնորհակալություն... /նստում է/:

ՄԱՐՏԻՆ - Այ տղա, քանի անգամ եմ ասել, որ ինձ անուն-հայրանունով չդիմես: Ամոթ է, չէ՞, ընկերներ ենք, բարեկամություն ենք անում իրար հետ...

ԵՐՎԱՆԴ - Մեկը մյուսին չի խանգարում,Մարտին Վարդանիչ... հիմնարկ է...

ՄԱՐՏԻՆ – Հա, բայց դու սեղանի շուրջ էլ ես ինձ Մարտին Վարդանիչ ասում... Ուրիշների մոտ դեռ ոչինչ, բայց երբ մենակ ենք, ի՞նչ կարիք կա, եղբայր...

ԵՐՎԱՆԴ - Ուշադրություն մի դարձրեք, բնավորություն է, սովորություն է, Մարտին Վարդանիչ...

ՄԱՐՏԻՆ – Ըհը, գելի գլխին ավետարան կարդա.../ծիծաղում է/ է, ինչ կա չկա, Երվանդ:

ԵՐՎԱՆԴ – /Պայուսակից թղթեր է հանում, մեկնում է դիրեկտորին/ Ավարտեցի, Մարտին Վարդանիչ:

ՄԱՐՏԻՆ – Ի՞նչը...

ԵՐՎԱՆԴ - Չէիք սպասում, չէ՞: Վարչության աշխատանքների վերակառուցման պլանն է, Մարտին Վարդանիչ: Ազնիվ խոսք, մի շաբաթ է՝ չեմ քնել: Դե, ձեր վստահությունը... մտածեցի, որ եթե գնալու եմ, հո չեմ շարունակելու աշխատել հին ձևով: Եթե Մանասյանի աշխատանքը բավարարեր ձեզ, ինչո՞ւ պետք է նրան ազատեիք աշխատանքից:

ՄԱՐՏԻՆ - /Փոքր ինչ շփոթված է / Իհարկե, իհարկե...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐՎԱՆԴ - Շատ մտածեցի, խոսեցի հին աշխատողների հետ... հիշեցի ձեր դիտողություններն ու առաջարկությունները, օգտվեցի առիթից, որ Տալլին էիք ուղարկել, երկու-երեք օր էլ նրանց վարչության փորձն ուսումնասիրեցի... Մի խոսքով փայլուն հեռանկարներ կան, Մարտին Վարդանիչ

/Թղթերից մեկն առանձնացնում է, դնում է դիրեկտորի առաջ, ինքն էլ բարձրանում, աչքերով հետևում է դիրեկտորին: Դիրեկտորը կարդում է/:

ՄԱՐՏԻՆ - Ըհը, ըհը... այս բոլորը ե՞րբ ես հասցրել, Երվանդ...

ԵՐՎԱՆԴ - / Ինքնագոհ ժպտում է/: Շատ էի ուզում, որ ի վերջո ոտքի կանգնի այդ վարչությունը, ձեր պատիվն էլ բոլորիս պատիվն է, Մարտին Վարդանիչ... Ես առաջ էլ էի այդ մասին մտածում, բայց դե իմ պարտականությունները ուրիշ էին… իսկ երբ վերջերս ժողովում հայտարարեցիք, թե որոշել եք ինձ նշանակել վարչության պետ, այդ օրվանից քուն ու դադար չունեմ...

ՄԱՐՏԻՆ - /Խորասուզվել է հաշվարկների մեջ/: Դու այդպե՞ս ես կարծում... ստո՞ւյգ թվեր են…

ԵՐՎԱՆԴ - Ի՞նչը... /նայում է դիրեկտորի մատի ուղղությամբ/: Միանգամայն ստույգ: Ես դեռ զգուշավոր եմ մոտեցել, ներկայացրել եմ գրեթե մինիմում տվյալները... Մի խոսքով… սա արդեն որպես ընկեր եմ ասում, տղամարդու խոսք եմ տալիս, որ մի տարվա մեջ եկամուտները կկրկնապատկվեն... Մի տարվա մեջ, Մարտին Վարդանիչ...

ՄԱՐՏԻՆ - Սպասիր, Երվանդ, սպասիր... իսկ ապակենտրոնացումն ի՞նչ կտա:

ԵՐՎԱՆԴ – Չե՞ք տեսնում, թե որքան է ուռճացել ապարատը, Մարտին Վարդանիչ... Ես ուսումնասիրեցի հաստիքային ցուցակները, պարզվում է, որ վաթսունհինգ հոգուց քառասունը շրջանային հաստիքներ են եղել... Յուրաքանչյուր նոր վարչության պետ արտադրությունից կրճատել է մի քանի հաստիք և իր շքախումբը համալրել տեղականներով, օգնականներով, տեղակալի տեղակալներով... ո՞ւմ են պետք նրանք... Աթոռ են մաշում ու թուղթ մրոտում...

ՄԱՐՏԻՆ – Հետո՞… և դու կարծում ես, որ...

ԵՐՎԱՆԴ - Առաջարկում եմ հաստիքները նորից արտադրությանը հանձնել… Մեր ընկերները եթե կգնան տեղում կաշխատեն, բուն արտադրության մեջ, մեր աչքի վրա...Չե՞ն գնա... օրենք կա... Հաստիքները կրճատվում են...

ՄԱՐՏԻՆ - Աղմուկ շատ չի՞ լինի,

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐՎԱՆԴ - Իսկ հիմա ի՞նչ նոր բան կարելի է անել՝ առանց աղմուկի... Մանրամասն կքննենք, հաշվարկներ կանենք, կքննարկենք նախագահության նիստում ու նոր միայն որոշում կկայացնենք:

ՄԱՐՏԻՆ – / Բարձրանում է տեղից, քայլում է սենյակում, հետո մոտենում է Երվանդին, ուրախ-ուրախ ընկերավարի խփում է նրա թիկունքին/: Այ քեզ Երվանդ... դու ինձ զարմացրեցիր, եղբայր... ինչ հեռանկարներ են... Մոսկվան անպայման կպաշտպանի մեզ և... կասկած չունենաս, մեր օրինակը կտարածի երկրով մեկ...

ԵՐՎԱՆԴ - Համոզված եմ, Մարտին Վարդանիչ...

ՄԱՐՏԻՆ – Էլի Մարտին Վարդանիչ... զզվեցրիր էլի քո Վարդանիչով…

ԵՐՎԱՆԴ – / Ծիծաղում է/: Սովորությունը երկրորդ բնավորություն է: Ես չեմ հորինել: Եվ ես անուղղելի եմ: Այդ էլ ես չեմ հորինել, այլ կինս՝ տիկին Մաքրուհին:

ՄԱՐՏԻՆ – Ինչպե՞ս է Մարգոն, լա՞վ է...

ԵՐՎԱՆԴ – Լավ է, Մարտին Վարդանիչ... Եթե կարելի է լավ լինել հինգ երեխաների աղմուկի մեջ... Հա, երեկ ասաց, որ պատրաստվում է հարիսա եփել, խնդրեց, որ ձեզ հրավիրեմ կիրակի օրը:

ՄԱՐՏԻՆ - Հարիսա ... փառահեղ հարիսա է եփում Մարգոն… մեկ էլ մայրս էր էդպիսի հարիսա սարքում: / Նորից մոտենում է պատուհանին, նայում դուրս, ձեռքերը մեջքին ծալած/: Բայց ի՜նչ հեռանկարներ են...Ապրես, Երվանդ, ապրե՛ս... /Շրջվում է/: Այ մարդ, մեկ-մեկ որ չեն ասում, թե խտրական եմ... թե ինչու եմ հատկապես քեզ հետ ընկերություն անում, սիրտս պայթում է: Հա , ասում եմ, իմ ընկերն է, սիրում եմ այդ մարդուն, որովհետև տաղանդավոր է, որովհետև աշխատող է, որովհետև մտածող է... Լավ, ես իրավունք չունե՞մ ընկեր ունենալու, չեմ հասկանում...

ԵՐՎԱՆԴ - Գուցե լավ էլ չէ, որ ես եմ ասում: Բայց ես ձեր լավ վերաբերմունքը... մի խոսքով մեր ընկերությունը երբեք չեմ չարաշահում, Մարտին Վարդանիչ:

ՄԱՐՏԻՆ - Ես էլ նույնն եմ ասում: Ասում եմ, մարդ եք, տեսե՞լ եք, որ Երվանդին արտոնություններ տամ: Ի՞նչ եմ արել: Ոչ հողամաս եմ տվել, ոչ ավտոմեքենա, ոչ էլ, նույնիսկ, սովորական, հասարակ պատվոգիր... Բոլորիցդ էլ լավ է աշխատում, բայց ես երբևէ առանձնացրե՞լ եմ նրան...

ԵՐՎԱՆԴ – /Ծիծաղելով /: Ինչ ճիշտ է, ճիշտ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՐՏԻՆ - Իսկ եթե աշխատանքից հետո ես նրա հետ ընկերություն եմ անում, ձ՞եզ ինչ: Դե լավ, է՛, նրանց հերն էլ անիծած... Այս հաշվարկները թող ինձ մոտ ու գնա հանգիստ աշխատիր...

ԵՐՎԱՆԴ -Կհավատա՞ք, Մարտին Վարդանիչ, հիմա իմ ուշքն ու միտքը նոր աշխատանքն է... Չսկսե՞մ, ի՞նչ եք կարծում... Ձեռքերս մի տեսակ դողում են… Սկսեմ, գործ անեմ... Իսկ դուք հրամանը–բանը հետո կտաք:

ՄԱՐՏԻՆ - Ինչը՞... Ախ, հա... Չէ, չէ, ասացի թող մնա, տեսնենք...

ԵՐՎԱՆԴ – Տեսնե՞նք... ի՞նչը տեսնենք...

ՄԱՐՏԻՆ – Ասացի՝ թող մնա... Երվանդ... Այսինքն, քեզանից ի՞նչ թաքցնեմ, չի ստացվում:

ԵՐՎԱՆԴ - Էլի չհասկացա: Ինչը՞ չի ստացվում:

ՄԱՐՏԻՆ - Քեզ վարչության պետ նշանակելու հարցը:

ԵՐՎԱՆԴ - Բայց դու... դուք մի քանի անգամ ասել եք ինձ, Մարտին Վարդանիչ, և նույնն էլ ասացիք ժողովում, բոլորի ներկայությամբ...

ՄԱՐՏԻՆ - /Սրտմտած/ Ասացի, ասացի... Ես էլ գիտեմ, որ ասացի: Բայց ուրիշներն էլ ուրիշ բան են ասում և ես… և ես չեմ կարող հաշվի չնստել նրանց հետ:

ԵՐՎԱՆԴ – Ովքեր՝ ուրիշները:

ՄԱՐՏԻՆ - Ես քեզանից չեմ թաքցնի, Երվանդ, մենք ընկերներ ենք: Այդ ժողովից հետո ինձ մոտ եկան Միրզոյանը, Ասլանյանը, աղմուկ բարձրացրեցին, սպառնացին վերադասին դիմել…

ԵՐՎԱՆԴ - Միրզոյա՞նը... Ասլանյա՞նը... Բայց դուք նրանց չե՞ք ճանաչում, ինչ է, չգիտե՞ք ովքեր են...

ՄԱՐՏԻՆ - Գիտեմ, գիտեմ, որ նրանք ամեն ինչի ընդունակ են, ամեն մի ստորության ու նենգության... Գիտեմ, որ զրպարտիչներ են և նրանցից ամեն ինչ կարելի է սպասել...

ԵՐՎԱՆԴ - Դե ուրեմն էլ ի՞նչ կա… Հարկավոր էր նրանց ինչպես պետքն էր տեղները նստեցնել, վռնդել առանձնասենյակից…

ՄԱՐՏԻՆ – Է, սիրելիս, քեզ համար ի՞նչ կա… իսկ հապա փորձիր նստել այս աթոռին, փորձիր... և կտեսնես, որ ուրիշ տեսակ կխոսես…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐՎԱՆԴ - Չնեղանաք, Մարտին Վարդանիչ, բայց ես բոլոր աթոռներից էլ նույնը կասեի, և բոլոր ամբիոններից… Իսկ եթե գաղտնիք չէ, ի՞նչ էին ասում, ի՞նչ փաստարկներ էին բերում…

ՄԱՐՏԻՆ - Ինչո՞ւ է գաղտնիք: Ասում էին, որ դու կոպիտ ես, մեծամիտ ես, որ ղեկավարի համար անհրաժեշտ ընդունակություններ չունես…

ԵՐՎԱՆԴ - /Ծիծաղում է/: Դե նրանք ամեն ինչ էլ կարող են ասել: Չէ՞ որ ես զեկուցագիր եմ գրել նրանց աշխատանքից հեռացնելու մասին՝ պլանները սիստեմատիկաբար չկատարելու, պորտաբուծության և հավելագրումների համար… Կոպիտ եմ… Ես չգիտեմ, թե էլ ինչ ձևով կա-րելի է խոսել մարդկանց հետ, որոնք պարզապես չեն կատարում իրենց գործը…

ՄԱՐՏԻՆ – /Կնճռոտվում է/: Գիտեմ, գիտեմ, դու ինձ նո՞ր պետք է բացատրես, որ իմանամ: Ես նրանց չե՞մ ճանաչում, ինչ է… Զրպարտիչներ ու բանսարկուներ են… Ամբողջ օրը բամբասանքներով են զբաղված…

ԵՐՎԱՆԴ - Դե տեսնո՞ւմ եք:

ՄԱՐՏԻՆ - Տեսնում եմ, իհարկե, տեսնում եմ… Այ Երվանդ ջան, այ հոգուդ մեռնեմ, ձեռ քաշիր այդ գործից: Այնքան կգրեն,կբողոքեն, կթունավորեն կյանքդ:

ԵՐՎԱՆԴ - Ես չեմ վախենում:

ՄԱՐՏԻՆ -Իսկ ես վախենում եմ: Հա, հա, վախենում եմ: Քաշ են տալու հազար ու մի տեղ, հազար ու մի տեղից էլ հանձնաժողովներ են բերելու: Իսկ ես հոգնել եմ, հասկանո՞ւմ ես, ես գլուխ չունեմ ցավի տակ դնելու: Քեզ որպես ընկերոջ եմ ասում, դրանք որ սկսեցին, էլ փրկություն չկա… կեղտոտ, անամոթ մարդիկ են… որ լսեիր, թե քո մասին ինչեր էին ասում…

ԵՐՎԱՆԴ – Մարտին Վարդանիչ, բայց չէ՞ որ դուք բոլորից լավ գիտեք ինձ… Մի՞թե ուրիշները պետք է ասեն, որ ճանաչեք, ախր փաստորեն գիշեր-ցերեկ միասին ենք լինում… իրար աչքի առաջ…

ՄԱՐՏԻՆ - /Ծիծաղում է/ : Հենց այդ մասին էլ էին ասում: Ասում էին, որ հիմա անզիջում պայքար է գնում պրոտեկցիոնիզմի դեմ, իսկ դու բացեիբաց քո ընկերոջը պաշտոն ես տալիս… որովհետև հաց եք ուտում իրար հետ… Այնպես որ, կներես, ձեռ քաշիր այդ գործից, եղբայր…

ԵՐՎԱՆԴ - Մարտին Վարդանիչ, բա վերակառուցման ծրագիրը… հաշվարկները… ինքներդ էիք ասում, որ փայլուն հեռանկարներ են…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՐՏԻՆ – Է՛, ձեռ քաշիր, Երվանդ, սպասիր տեսնենք ինչ է լինում... Առայժմ թող մնան... Չե՞ս տեսնում, չեն թողնում աշխատենք, էլի, այդ սրիկաները... չեն թողնում... էդքան էլ պայքարում են դրանց դեմ, բայց չեն վերանում, էլի... Չես հասկանում՝ որտեղից են ծնվում, որտեղ են աճում...

ԵՐՎԱՆԴ - Որովհետև վախենում եք նրանցից:

ՄԱՐՏԻՆ - Հա, ախպեր, վախենում եմ...

ԵՐՎԱՆԴ - Իսկ ինձանից չե՞ք վախենում:

ՄԱՐՏԻՆ - Ի՞նչ... քեզնի՞ց... /ծիծաղում է/: Իհարկե, չեմ վախենում... ինչո՞ւ պետք է վախենամ:

ԵՐՎԱՆԴ - Որ ես էլ կգրեմ, կբողոքեմ... կասեմ, որ դուք սարսափում եք պորտաբույծներից, զրպարտիչներից և այդ պատճառով էլ ոչինչ չեք անում հիմնարկի աշխատանքները վերակառուցելու համար... որ դուք հոգնել եք, չեք ուզում աշխատել...

ՄԱՐՏԻՆ - /Ծիծաղում է/: Դու այդ բանը երբեք չես անի, Երվանդ:

ԵՐՎԱՆԴ - Ինչո՞ւ:

ՄԱՐՏԻՆ - Որովհետև դու ազնիվ մարդ ես:

ԵՐՎԱՆԴ - Ինչպե՞ս թե...

ՄԱՐՏԻՆ - Որովհետև դու օրինավոր, կարգին մարդ ես... Որովհետև դու անընդունակ ես ստորության... Որովհետև դու երբեք որևէ տեղ չես գնա բողոքելու... Ամենաշատը կարող ես դիմում տալ և ազատվել աշխատանքից... Եվ մի զարմացիր, որ այսպես անկեղծ խոսում եմ քեզ հետ… Հենց այսպես անկեղծ խոսում եմ, որովհետև դու ազնիվ մարդ ես, Երվանդ... ու երբեք որևէ տեղ իմ խոսքերը չես կրկնի... Ես գիտեմ...

ԵՐՎԱՆԴ - Ուրեմն ազնիվ մարդկանցից չեք վախենում... ու սրիկաներից եք վախենում...

ՄԱՐՏԻՆ - Իհարկե, Երվանդ... Քո կարծիքով կա՞ մեկը, որ զրպարտիչներից չվախենա:

ԵՐՎԱՆԴ - Ուրեմն էլ ինչո՞ւ եք զարմանում, որ նրանք կան... Նրանք կան, որովհետև կաք դուք... դուք...

ՄԱՐՏԻՆ - Չեղավ, չեղավ, Երվանդ, ես քեզ որպես ընկեր անկեղծորեն բացատրում եմ իմ վիճակը, իսկ դու... Եվ բավական է, ամոթ է, էլի, որ երբ մենակ ենք, ինձ հետ դուք-ով ես խոսում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐՎԱՆԴ - Էհ, Մարտին Վարդանիչ, արդեն որքան ժամանակ է, որ ես քեզ դու-ով եմ դիմում, բայց դու չես զգում...

ՄԱՐՏԻՆ - Ինչպե՞ս թե... բա էլ դուքը ո՞րն է...

ԵՐՎԱՆԴ – Երանի չէ՞ր, որ մենակ դու լինեիր քո տեսակի մեջ, Մարտին Վարդանիչ:

/Դուրս է գալիս/:

ՄԱՐՏԻՆ – Չհասկացա... ինչ ասա՞ց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՍԿԵՍՈՒՐԸ

Մայրը նստած սեղանի մոտ՝ գործում է: Հարսը մի անկյունում արդուկում է: Նրա ամուսինը օգնում է նրան, բռնում է սպիտակեղենի ծայրերը, արդեն արդուկածը տեղափոխում է:

ՀԱՐՍԸ– / Կամացուկ/ Իմ օգնական...

ՏՂԱՆ - Իմ սիրելի...

ՀԱՐՍԸ– Երբ դու կողքիս ես, այսպես ամբողջ օրը կարող եմ աշխատել, գիտե՞ս, առանց տրտնջալու, առանց հոգնելու... միայն թե դու միշտ կողքիս լինես...

ՏՂԱՆ - Զարմանալի բան է, Նանար, ով ասեր՝ չէի հավատա, բայց, իսկապես, հիմա ոչ մի տեղ չեմ ուզում գնալ, ոչ ոքի չեմ ուզում հանդիպել... Դու ինձ ինչո՞վ կախարդեցիր, այ աղջիկ...

ՀԱՐՍԸ - Իմ սիրով... Ախր դու չգիտես, թե ես քեզ ինչքան եմ սիրում...

ՏՂԱՆ - Ինչքա՞ն, դե ասա, ինչքան...

ՄԱՅՐԸ - Տեսնես ի՞նչ եք այդքան խոսում, ամբողջ օրը փսփսում եք, հա փսփսում...

ՏՂԱՆ - Հենց այնպես, մայրիկ, դատարկ-մատարկ խոսում ենք:

ՄԱՅՐԸ - Կարծում ես, որ ասեիր լուրջ բանի մասին եք խոսում, կհավատայի՞:

ՀԱՐՍԸ - Աշոտ ջան, մի քիչ ջուր բեր, հա՞...

ՏՂԱՆ - Հիմա, տիրուհիս, անմահակա՞ն ջուր…

ՀԱՐՍԸ – Առայժմ չէ, սովորական, եթե, իհարկե, կա...

ՏՂԱՆ - Հենց հիմա թռչում եմ, թռա...

ՄԱՅՐԸ - /Մեկուսի/ Ես որ ասեի, չէր թռչի...

ՏՂԱՆ - /վերադառնում է/ Ահա ջուրը, ուրիշ ի՞նչ կկամենայիք…

ՀԱՐՍԸ - Որ երկար-երկար ապրեիր ու միշտ միասին լինեինք, Աշոտ ջան…

ՏՂԱՆ - Սիրով, լսում եմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Աշո՞տ:

ՏՂԱՆ - Լսում եմ, մամ ջան...

ՄԱՅՐԸ - Ջանդ անուշ… էդ ի՞նչ ես նստել տանը, տեղ-մեղ չունե՞ս գնալու:

ՏՂԱՆ - Չէ, մամ...

ՄԱՅՐԸ - Ընկերնե՞րդ ուր են, ոչ Ռուբիկն է երևում, ոչ Սեթը...

ՏՂԱՆ - Սեթը գործուղման մեջ է, իսկ Ռուբիկը... Ռուբիկը երկու օր առաջ չէ՞ր մեր տանը:

ՄԱՅՐԸ - Ուրիշ ժամանակ քեզ տանը բռնել չէր լինում, բալիկ ջան, տղամարդը տա՞նը կմնա: Դուրս արի, թարմացիր…

ՏՂԱՆ - Է, հավես չունեմ հիմա, զբաղված եմ:

ՄԱՅՐԸ - Հետաքրքիր է, թե էդ ինչո՞վ ես զբաղված:

ՀԱՐՍԸ - Ինձ է օգնում, մայրիկ:

ՄԱՅՐԸ - Ինչ է անո՞ւմ:

ՀԱՐՍԸ - Ինձ է օգնում…

ՄԱՅՐԸ– Ինչ չէինք տեսել, տեսանք: Ինչ չէինք լսել, լսեցինք… Քեզ ի՞նչ է պատահել, Աշոտ ջան, քսանհինգ տարի պահեցի, մեծացրի քեզ, չտեսա, որ մի անգամ օգնես ինձ: Արդուկ անելն ի՞նչ տղամարդու գործ է, ամոթ է, ամոթ...

ՏՂԱՆ -Հիմա հավասարություն է, մամ, կին-տղամարդ տարբերություն չկա:

ՄԱՅՐԸ - Չորս երեխա եմ պահել-մեծացրել, մի անգամ ասե՞լ եմ, թե օգնեք ինձ, հենց հիմա հոլի նման պտտվում եմ ամբողջ օրը, ո՞վ է ինձ օգնում: Ճիշտ են ասում, էլի, թե «Տղեն կնիկ առավ, մայր բառը մոռացավ»:

ՀԱՐՍԸ -Մայրիկ ջան, ինչո՞ւ եք այդպես ասում. դուք չէի՞ք պատմում, որ հայրիկն ամեն ինչում օգնում էր ձեզ:

ՄԱՅՐԸ– Հետո՞...

ՀԱՐՍԸ - Դե հիմա էլ Աշոտն ինձ է օգնում, դրա մեջ ի՞նչ վատ բան կա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Համեմատեց, հա՛, համեմատեց... Որ չպատասխանի, կպայթի սիրտը... Ուրեմն ես իրավունք չունե՞մ իմ տղային մի բան ասելու, հա՞, անպայման մեջ պիտի ընկնես:

ՀԱՐՍԸ - Ախր այնպիսի բաներ եք ասում, մի՞թե ձեզ սազում է, մայրիկ…

ՄԱՅՐԸ - Ապրես, տղաս, շատ ապրես, այդպես խելոք կանգնիր ու լսիր, թե կինդ ոնց է նախատում ինձ: Նա՞ պետք է ինձ սովորեցնի, թե ես ինչպես խոսեմ...

ՀԱՐՍԸ - Խնդրեմ, հիմա էլ նոր թեմա...

ՏՂԱՆ - Վերջ տուր, Նանար ջան, անհարմար է...

ՄԱՅՐԸ - Իհարկե, որ դու նրան ջան ասես, նա էլ ինչ ուզենա կանի: Ոչ հարգանք է մնացել, ոչ ամոթ… դա ի՞նչ խոսելու ձև է… Հիմա, Նանար ջան, լսում եմ, Նանար ջան, հիմա գալիս եմ, կյանք ջան, ո՞նց ես, ազիզ ջան... Եվ այդ բոլորը՝ ծնողների մոտ... Ու նա էլ քեզ՝ հա, Աշոտ ջան, հա, ցավդ տանեմ...

ՀԱՐՍԸ - Ախր, մայրիկ ջան, դրա մեջ ի՞նչ վատ բան կա: Մի՞թե հաճելի չէ, որ իրար հետ սիրով ենք խոսում: Լա՞վ կլիներ, եթե ուրիշների նման ամբողջ օրը կռվեինք իրար հետ, վիրավորեինք իրար, թունավորեինք մեր կյանքն էլ, ձեր կյանքն էլ...

ՄԱՅՐԸ - Իբրև թե կյանք է մնացել, որ թունավորեք:

ՏՂԱՆ - Հա, բայց իսկապես ի՞նչ է եղել, է, մամ, արժե՞ մի չնչին բանից պատմություն սարքել... ինչի՞ց ես դժգոհ, ո՞վ է քեզ նեղացրել, ի՞նչ ես ուզում...

ՄԱՅՐԸ - Ես ոչինչ էլ չեմ ուզում, ես ուզում եմ, որ դու կարողանաս տարբերել, թե ինչպես պետք է խոսես մորդ հետ և ինչպես կնոջդ հետ:

ՏՂԱՆ – Լավ, որ ջան եմ ասում, ի՞նչ է լինում…

ՄԱՅՐԸ - Շատ բան: Դու տղամարդ ես և տղամարդու պես պետք է խոսես: Ումի՞ց ես այդ քաղցր-մեղցր լեզուն սովորել...

ՏՂԱՆ – Հայրիկից: Նա քեզ ջան էլ է ասում, ցավդ տանեմ էլ…Եվ ես ուրախանում ու հպարտանում եմ, որ դուք այդքան համերաշխ եք:

ՄԱՅՐԸ– Գուցե նա իրավունք ունի, որ ասում է: Ես նրա համար չորս զավակ եմ բերել, պահել, մեծացրել, կրթության եմ տվել նրանց, երեսուն տարի մատներս վառելով տաքացրել եմ ձեզ... Լա՛վ համեմատություն գտար, շնորհավորում եմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ – Դե Նանարն էլ կբերի, դրա համար կարծեմ ժամանակ է պետք, չէ՞…

ՄԱՅՐԸ - Ուրեմն երբ կունենաք, նոր կխոսեք… Հարս բերեցի…Ո՞վ է տեսել, որ տանը հարս լինի ու սկեսուրը տնային գործեր անի, տունը հավաքի, մաքրի…

ՀԱՐՍԸ - Ես չե՞մ մաքրում, եթե թողնեք, ամեն ինչ էլ կանեմ: Բայց հենց ավելը վերցնում եմ, խլում եք ձեռքիցս:

ՄԱՅՐԸ - Որովհետև լավ չես մաքրում: Որովհետև գործը կիսատ ես թողնում:

ՀԱՐՍԸ – Հենց ուզում եմ ճաշ եփել…

ՄԱՅՐԸ - Էդ էր պակաս, որ ճաշը դու եփեիր: Միանգամից ինձ էլ տնից դուրս արեք ու պրծեք, էլի:

ՀԱՐՍԸ - Լավ, դու ասա, Աշոտ ջան, ի՞նչ անեմ ես, բավական է, էլի, էլ չեմ կարող, ցավդ տանեմ… ես խելագարվում եմ:

ՄԱՅՐԸ - Էլի սկսեց՝ ցավդ տանեմ,,,

ՏՂԱՆ - / Կնոջը/ Դե դու էլ ի՞նչ ես անընդհատ՝ ցավդ տանեմ, ցավդ տանեմ, ցավս տանելու փոխարեն մի խոսիր, էլի… մի վիճիր…

ՄԱՅՐԸ - Ասա, է՛, ասա՛… բերանս չեմ կարողանում բացել…

ՀԱՐՍԸ - Ախր, Աշոտ ջան…

ՏՂԱՆ - Վերջացրու…

ՀԱՐՍԸ – Չէ, ախր գիտես որ օրվա մասին է ասում, Արսենը լաց էր լինում, ավելը ցած դրեցի, վազեցի նրա մոտ.,. երեխան տաքություն ուներ…

ՄԱՅՐԸ - Պահ, պահ, պահ, իմ երեխաները տաքություն չեն ունեցել, չեն հիվանդացել…Իսկ ես, քեզ նման, սկեսուր չեմ ունեցել… Ամեն ինչ ես եմ արել… մեն մենակ, էս ձեռքերով… չորս երեխա եմ պահել…

ՀԱՐՍԸ - Տասն անգամ խնդրեցի՝ մայրիկ, Արսենի մոտ մնա, դեղատուն գնամ…

ՄԱՅՐԸ - Իսկ ինչո՞ւ պետք է ես երեխա պահեմ… Հոգնել եմ, հոգնել, հասկացեք, ամբողջ տան գործը ինձ վրա է ընկած… ձեռքերս ցավում են…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՐՍԸ - Բա ինչպե՞ս ես աղջկադ երեխաներին պահում...

ՄԱՅՐԸ - Լսեցի՞ր, Աշոտ, ուրեմն ես իմ թոռնիկներին դուրս եմ անելու տնից, հա՞…

ՀԱՐՍԸ– Թող նրա սկեսուրը պահի...

ՄԱՅՐԸ - Որ չի պահում, ի՞նչ անեմ, որ անհոգի, անսիրտ կին է, մեղավորը ե՞ս եմ...

ՀԱՐՍԸ - Ինչպես փաստաբաններ են ասում՝ ես այլևս հարց չունեմ:

ՏՂԱՆ - Ես հարց ունեմ, ես... ի՞նչ եք ուզում ինձանից, ինչո՞ւ եք թունավորում ինձ, խիղճ ունեք, էլի, կրակն եմ ընկել ձեր ձեռքը: Մարդ քիչ է մնում գլուխն առնի ու փախչի ձեզանից… Դե հիմա խոսեք, ինչքան ուզում եք... / դուրս է ուզում գալ/:

ՄԱՅՐԸ - Աշոտ ջան, Աշոտ, պիջակդ հագիր, չմրսես...

ՏՂԱՆ - /Շրջվում է) Դուք ինձ այնպես չեք վառում, որ մրսեմ,,,

/Դուրս է գնում/

ՄԱՅՐԸ - /Հարսին / Այդ էիր ուզում, հա՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

Սենյակ: Երիտասարդ ամուսիններ են: Ամուսինը լրագրեր է աչքի անցկացնում: Կողքի սենյակից հայտնվում է կինը

ՀԱՅԿ - Քնեցի՞ն,

ԳՐԵՏԱ - / Ծիծաղում է/ Ոչ միայն քնեցին, այլև ինձ էլ մի քիչ քնեցրին... որ տեսնես ինչպես են իրար գրկել… ասես քույրեր լինեն...

ՀԱՅԿ - Նայեմ, հա՞… հո չեն արթնանա...

ԳՐԵՏԱ - Չեն արթնանա, բայց զգույշ...

/ Ամուսինը գլուխը ներս է տանում դռնից, նայում է, ետ է քաշվում/:

ՀԱՅԿ - Ասես հրեշտակներ լինեն...

/Դռան զանգ/

Գնո՞րգն է: Ասենք, չէ, շատ շուտ է:

ԳՐԵՏԱ - Ուրեմն ո՞վ կլինի,

/ Ամուսինը ուսերը թոթվելով մոտենում է դռանը, բացում է: Հայտնվում է հայրը/:

ՀԱՅՐԸ - Բարև ձեզ:

ՀԱՅԿ - Բարի երեկո:

ՀԱՅՐԸ - Շատ-շատ ներողություն... Չգիտե՞ք թե էս ձեր դիմացի հարևաններն ուր են: Զանգը տալիս եմ, տալիս, դուռը բացող չկա…

ՀԱՅԿ - Գնորգի՞ն եք ուզում... / Նայում է ուշադիր/ Դուք… դուք նրա հա՞յրն եք:

ՀԱՅՐԸ - Հայրն եմ, բա դուք ո՞րտեղից իմացաք:

ՀԱՅԿ - Դե դա առանձնապես դժվար չէ. Գնորգը շատ նման է ձեզ: Համեցեք, համեցեք, ներս եկեք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Չէ, չէ. նեղություն չտամ… չգիտեք, հա՞, թե որտեղ են…

ՀԱՅԿԸ - Գիտեմ, գիտեմ… համեցեք, ի՞նչ նեղություն, ներս եկեք… Գևորգն ու Սիրուշը ուշ են գալու…

ՀԱՅՐԸ - Ոչինչ, ոչինչ, ես կսպասեմ…

ՀԱՅԿ – Վայ, ինչո՞ւ եք ուզում մեզ վիրավորել, հայրիկ, ներս եկեք, մարդ ենք, չէ՞… Գրետա, Գևորգի հայրն է…

/Հայտնվում է Գրետան/:

ԳՐԵՏԱ - Բարև ձեզ, ներս եկեք, խնդրում եմ…

ՀԱՅՐԸ - Ախր… դե լավ… / Ուզում է հանել կոշիկները/:

ԳՐԵՏԱ - Ի՞նչ եք անում, հայրիկ, ի սեր աստծո, մեր տանն այդպիսի սովորություն չկա:

ՀԱՅԿ - Համեցեք, համեցեք…

/Սենյակը: Ներս են մտնում երեքով/:

ՀԱՅԿԸ - Ահա և մեր տունը, նստեք, խնդրում եմ…

ԳՐԵՏԱ - / Բազկաթոռը ցույց տալով/ Այստեղ լավ կլինի…

ՀԱՅՐԸ - Շատ, շատ շնորհակալ եմ: /Նստում է/ Բա էս ո՞ւր են գնացել մերոնք:

ՀԱՅԿ - Գևորգենց կոլեկտիվը հավաքվել է այսօր, հայրիկ: Աշխատողներից մեկի ծնունդն է: Գնացին:

ՀԱՅՐԸ - Սիրո՞ւշն էլ…

ԳՐԵՏԱ - Այո, չէր ուզում գնալ, ստիպեցինք… Ավելի լավ է միասին լինեն:

ՀԱՅՐԸ - Բա երեխա՞ն:

ՀԱՅԿ– Ուզո՞ւմ եք տեսնել:

ՀԱՅՐԸ - Բա չե՞մ ուզում, այ ձեզ մատաղ, որտե՞ղ է:

ԳՐԵՏԱ - Ննջարանում: Քնած է մեր բալիկի հետ: Որ տեսնեք, կճանաչե՞ք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Դժվար թե. նոր ծնված ժամանակ եմ տեսել, հիմա ուրեմն տարիուկեսկան է... Կթողնե՞ք տեսնեմ...

ՀԱՅԿ - / Ծիծաղում է/ Խնդրեմ... տեսնենք կճանաչե՞ք...

/Հայրը ներս է մտնում, քիչ անց դուրս է գալիս ժպտալով/:

ՀԱՅՐԸ - Աջ կողմինն է, չէ՞...

ԳՐԵՏԱ - /Ապշած/ Հա, ինչպե՞ս ճանաչեցիք:

ՀԱՅՐԸ– Գևորգիս նման քնած ժամանակ ձախ ձեռքը բարձի տակ է դնում...

ՀԱՅԿ– /Ծիծաղում է/ Ա՛յ քեզ հայրիկ, ա՛յ քեզ ժառանգականություն…

ՀԱՅՐԸ - Էն մեկն էլ ձերն է, հա՞... աստված պահի, հրեշտակ է...

ԳՐԵՏԱ - Շնորհակալություն, հայրիկ...

ՀԱՅԿ - Գրետա՞...

ԳՐԵՏԱ - Ամեն ինչ հասկանալի է... /Քայլում է դեպի խոհանոց/:

ՀԱՅՐԸ – Աղջիկ ջան, ինձ ոչ մի բան պետք չէ, նեղություն մի քաշեք, խնդրում եմ...

ՀԱՅԿ– Թեյ, հը, թեյից հո չե՞ք հրաժարվի:

ՀԱՅՐԸ – Թեյի՞ց... վայ թե չհրաժարվեմ...

/ Բոլորն էլ ծիծաղում են, Գրետան դուրս է գնում/:

ՀԱՅԿ - Բա ինչպե՞ս է, որ իմաց չեք տվել, հայրիկ:

ՀԱՅՐԸ - Ճիշտը որ ասեմ, շատ հանկարծ ստացվեց: Դե մենք շատ հեռու ենք ապրում՝ Ղարաբաղում: Մեր գյուղը սարերի ծերին է, ամպերի մեջ կորած...

ՀԱՅԿ - Ես երևի լրիվ կարողանամ նկարագրել ձեր գյուղն էլ, ձեր տունն էլ, ձեր հարևաններին էլ... Գևորգն այնքան է պատմել... նա ձեզ միշտ հիշում է ու շատ է սիրում, հայրիկ...

ՀԱՅՐԸ - Հա, ես դժգոհ չեմ իմ զավակներից... Շուտ-շուտ գալիս են՝ Գևորգս էլ, Սիրուշս էլ... Գոհ եմ, փառք աստծո: Ափսոս, որ ես չեմ կարողանում գալ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅԿ - Հա, իսկ հիմա ո՞նց եք, հայրիկ, աչքով չտամ, բայց ձեր տեսքը հիանալի է... Գևորգը շատ էր անհանգստանում... ասում էր, որ պառկած եք երկար ժամանակ...

ՀԱՅՐԸ - Ճիշտն ասած շատը դրա համար եմ եկել, տղա ջան... Մեր բժիշկներն ասացին, թե լավ կլինի, եթե գնաս Երևան ու մի կերպ պրոֆեսոր Խաչմանուկյանի մոտ ընկնես... Ասացին թե, եթե հաջողացնես, որ պրոֆեսոր Խաչմանուկյանը ընդունի քեզ, հաշվիր, որ փրկված ես...

/Ներս է մտել Գրետան և ուտելիքներ է դասավորում սեղանին/:

ԳՐԵՏԱ - Ո՞վ:

ՀԱՅՐԸ - Պրոֆեսոր Խաչմանուկյանը, աղջիկ ջան: Հիմա, ասում եմ, ով գիտե, գուցե թե Գևորգս հաջողեցնի... Ո՞վ գիտի, կկարողանա՞...

ՀԱՅԿ— Իհարկե, կկարողանա, հայրիկ… Բայց իմ կարծիքով հարցը նրան չի հասնի: Դրա համար ես ձեզ ամենակարճ ճանապարհը ցույց կտամ, ուղղակի մի բարկացրեք իմ տիկնոջը, Գրետային, մի հրաժարվեք ընթրիքից... և մի բաժակ իմ ձեռքով զցած տնական գինուց:

ՀԱՅՐԸ - Ախր ես իսկապես...

ՀԱՅԿ - Հանուն գործի, հայրիկ, պետք է...

ՀԱՅՐԸ - Ախր ինչի, ի՞նչ կապ ունի պրոֆեսոր...

ԳՐԵՏԱ - Պրոֆեսոր Խաչմանուկյանն իմ հայրն է... Եթե ուզում եք, որ ձեզ ծանոթացնեմ նրա հետ, ուրեմն…

ՀԱՅՐԸ - Այ քեզ հրաշք… Լցրու, տղա ջան… լցրու...

ՀԱՅԿԸ - /Ծիծաղելով/ Այ այդպես... /լցնում է/:

ԳՐԵՏԱ - Հանգիստ եղեք, ես հենց հիմա զանգ կտամ, կպայմանավորվեմ... ու վաղը ձեզ կտանեմ հիվանդանոց...Հայկ...

ՀԱՅԿ– Իմ ավտոմեքենան ձեր տրամադրության տակ է, տիկին:

ՀԱՅՐԸ - Չգիտեմ էլ ինչ ասեմ... բա ձեր գործը... բա երեխան...

ԳՐԵՏԱ - Երեխան Սիրուշի մոտ կմնա:

ՀԱՅԿ - Ուրեմն, ձեր կենացը, բարով եք եկել, հայրիկ… ամեն ինչ լավ կլինի, չկասկածեք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Չեմ կասկածում, տղա ջան… և շատ-շատ ուրախ եմ, որ իմ տղան, իմ հարսը ձեզ նման հարևաններ ունեն... բախտավոր են նրանք:

ԳՐԵՏԱ - Իսկ դուք գիտե՞ք, թե նրանք ինչ հարևաններ են մեզ համար... հարազատներից էլ մոտ ու լավ...

ՀԱՅՐԸ - Գիտեմ, իմացա, աղջիկ ջան.,.

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ս Պ Ա Ս Ո Ի Մ

Սենյակում միայնակ մի մանկամարդ կին է: Սեղանին ճաշի պարագաներ են դրված: Աղջիկը գիրք է կարդում, բայց ցրված, անընդհատ պատի ժամացույցին է նայում, քայլում է դեպի պատուհանը, նայում դուրս, սպասումի մեջ է:

ԱՂՋԻԿԸ– /Մեկուսի/ Տեսնես որտեղ կլինի… Գիշերվա ժամը երկուսն է, իսկ նա չկա: Սա էլ եղավ կյա՞նք: Սա էլ եղավ ամուսնությո՞ւն: Երեք ամիս է, ինչ ամուսնացած եմ և ամուսնուս միայն գիշերներն եմ տեսնում... Իսկ մինչև ամուսնանալը ինչքա՜ն համեստ էր: Ես ինչ որ բան զգում էի, բայց ծնողներս երջանկության մեջ էին. «Բախտիդ քար մի գցիր,այ աղջիկ, էդպիսի տղա հիմա որտե՞ղ կարելի է գտնել, խելո՜ք, համե՜ստ»: Ես նրանց ասում էի ախր չեմ ճանաչում, չեմ սիրում, ի՞նչ անեմ: «Ամեն ինչը ժամանակին կլինի,– ասում էին նրանք, - հիմա ի՞նչ սեր, ի՞նչ բան, տուն-տեղ ունի, շենք ու շնորհքով տղա է, հեռախոսային ցանցում է աշխատում, նրա ապրուստը միշտ կա ու կա»: Այո, ամեն ինչ կա, բացի սիրուց, ամեն ինչ կա, բացի ուրախությունից...

/Դռան ճռռոց է լսվում, շրջվում է: Ներս է մտնում տղայի մայրը՝ քնատ, խալաթը հագին/:

ՄԱՅՐԸ - Ամբողջ գիշեր քայլում ես՝ ճըռռ հա ճըռռ, ճըռռ հա ճըռռ, ներքևում քնել չի լինում: Դեռ չի՞ եկել…

ԱՂՋԻԿԸ - Չէ, մայրիկ:

ՄԱՅՐԸ - Մի ասող լինի՝ որտեղ ես քարշ գալիս: Նոր ամուսնացած ջահել կնոջը թողնում է տանն ու կորչում: Էս ի նչ սերունդ է, տե՜ր աստված: Մարդավարի ապրել չեք կարողանում… բա սա կյա՞նք է:

ԱՂՋԻԿԸ - Լավ, ես ի՞նչ անեմ, մայրիկ ջան, հոգնած, անքուն, նստել սպասում եմ, ի՞նչ անեմ:

ՄԱՅՐԸ – Ի՜նչ անեմ... քեզ չի՞ ասում, թե որտեղ է, ինչ է անում...

ԱՂՋԻԿԸ - Չէ, ոչինչ չի ասել...

ՄԱՅՐԸ– Բա եղա՞վ: Այդպես ո՞նց կլինի, բա կինն էլ չիմանա՞, թե իր ամուսինը որտեղ է, ինչ է անում, ինչ շրջապատի մեջ է, բա դու չե՞ս անհանգստանում, ա՜յ հարս: Հանգիստ նստել, գիրք ես կարդում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿ - Ինչպե՞ս թե չեմ անհանգստանում... բայց ինչ կարող եմ անել, ի՞նչ... Եթե ինքը չի ասում, ես որտեղի՞ց կարող եմ իմանալ, թե որտեղ է...

ՄԱՅՐԸ– Բա էլ ի՞նչ կին ես, որ չիմանաս: Խնդրիր, պահանջիր, ստիպիր, լաց եղիր, վախեցրու, որ կթողնես, կգնաս... քի՞չ ձև կա... Բա սա տան նմա՞ն է, դու ինքնասիրություն չունե՞ս, ինչ է...

ԱՂՋԻԿԸ - Ուրեմն, դեռ ես եմ մեղավոր, հա՞... Ես եմ մեղավոր... երեք ամիս է ամուսնացել ենք, բայց օրը ցերեկով մի անգամ երեսը տեսած չկամ, և դուք էլ ոչ մի կերպ չեք միջամտում...

ՄԱՅՐԸ – Է՛, կարծում ես, թե ինձ լսո՞ւմ է, աղջիկ ջան, առանց հոր, ինքնագլուխ մեծացած տղա է, ինձ ե՞րբ է բանի տեղ դրել: Կարծում ես չե՞մ ասում, չե՞մ խոսում... Բայց դե քո խոսքն ուրիշ է, դու նրա կինն ես...

ԱՂՋԻԿԸ– Ես ոչինչ չգիտեմ, մայրիկ, միայն գիտեմ, որ այսպես ապրել չի կարելի... ի՞նչ անեմ, նրա հետ խոսե՞լ է լինում: Կես գիշերին գալիս է հոնքերը կիտած ու անմիջապես էլ պառկում, քնում է: Ես ի՞նչ կարող եմ անել...

ՄԱՅՐԸ - Դե քեզ համար եմ ասում, ափսոս է ծաղիկ հասակդ, թե չէ ինձ համար ի՞նչ կա: Ես սովոր եմ: Օֆ-օ՛ֆ...

/Դուրս է գալիս/:

/Աղջիկը կրկին մոտենում է լուսամուտին, դուրս է նայում/:

ԱՂՋԻԿԸ - / Ձայնը/ Ժամը երեքը դարձավ: Հետո՞: Բավական է, բավական է, բավական է, այսօր ես կխոսեմ նրա հետ: Ճիշտ է ասում մայրիկը, արդեն ինքնասիրությունս էլ եմ կորցնում:

/Դռան զանգ: Աղջիկը վճռական քայլերով մոտենում է դռանը, բացում: Ներս է մտնում տղան: Խմած է: Առանց կնոջը նայելու անցնում է կողքով, մոտենում է ննջարանի դռանը ու նոր է ետ նայում/:

ՏՂԱՆ - Արա, հլա քնած չե՞ս:

ԱՂՋԻԿԸ - Ինչպե՞ս քնեի, Սերգեյ, ախր անհանգստանում էի քեզ համար: Ինչպե՞ս քնեի...

ՏՂԱՆ – Պահ-պահ-պահ,անհանգստանո՛ւմ էր... պատերազմո՞ւմ եմ, ինչ է, էդ ի՞նչ էր պատահել, որ անհանգստանում էիր...

ԱՂՋԻԿԸ - Ախր, եթե գոնե իմանայի, թե որտեղ ես, գուցե և հանգիստ լինեի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ – Չէ՛ մի, քեզ զեկուցելու եմ…

ԱՂՋԻԿԸ - Լավ, ես հո օտար չեմ, Սերգեյ, մենք ամուսիններ ենք, չէ՞, ինչո՞ւ պիտի ես չիմանամ, թե դու որտեղ ես լինում գիշերները… Եթե հյուր ես գնում, ինչո՞ւ ինձ էլ հետդ չես տանում: Բերել ես, որ տա՞նդ պահես, ինչ է…

ՏՂԱՆ – Է՛լ ինչ կուզեիր… չէ՛ մի, հետս ման էի տալու, թանգարանի ապրանք ես, ինչ է… Սրա՛ն տեսեք…

ԱՂՋԻԿԸ– Սերգեյ, Սերգեյ, ի՞նչ է պատահել քեզ հետ… եթե ուզում էիր մենակ ապրել, ինչո՞ւ ամուսնացար, ինչի՞ համար էր այս ամբողջ պատմությունը, ինչի՞ համար էր այդ նշանադրությունն ու հարսանիքը…

ՏՂԱՆ - Դե քիչ խոսա… տրամադրությունս լավ է, չեմ ուզում փչացնել, թե չէ ասել էի, հա՛ …

ԱՂՋԻԿԸ - Լավ, մի՞թե հնարավոր չէր գոնե զանգահարել, զգուշացնել, որ ուշանալու ես, մեղք եմ չէ՞, նստել տանջվում եմ ամբողջ գիշեր…

ՏՂԱՆ – Տո դու ո՞վ ես, է, ես իսկի մորս մինչև հիմա չեմ ասել, տո դու էդ ո՞վ եղար, է՛ …

ԱՂՋԻԿԸ - Ես քո կինն եմ, Սերգեյ…

ՏՂԱՆ - Կինս ես, չափդ ճանաչիր ու նստիր…

ԱՂՋԻԿԸ - Երեք ամիս է, այս տան մեջ նստած եմ, Սերգեյ, ես էլ մարդ եմ, չէ՞… Այս երեք ամսվա մեջ գոնե մեկ անգամ տնից դուրս չենք եկել: Լավ, գոնե դու տանը մնա:

ՏՂԱՆ - Տանը մնամ, ի՞նչ անեմ, փեշդ բռնեմ, նստե՞մ: Տղերքին էլ ասեմ, թե կնիկս չի թողնում տնից դուրս գամ, հա՞: Թան էլ չէ, փրթած մածուն:

ԱՂՋԻԿԸ - Այդ ի՞նչ լեզվով ես խոսում, Սերգեյ, չե՞ս ամաչում… Լավ, ընկերներիդ հետ թափառելուց բացի դու որևէ ուրիշ հետաքրքրություն չունե՞ս, ոչ մի զբաղմունք, ոչ մի երազանք չունե՞ս… Դու ուղղակի սրբություն չունես, Սերգեյ…

ՏՂԱՆ - Դե հերիք է, գլխիս պրոֆեսոր է դարձել, երազա՛նք, սրբությո՛ւն… Կարծես թե համալսարանում քննություն է տալիս…

ԱՂՋԻԿԸ - Լավ, քեզ հետ ի՞նչ լեզվով խոսեմ, ասա, ասա, ի՞նչ լեզվով խոսեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ - Ոչ մի լեզվով էլ մի խոսիր... մի խոսիր, էլի, այ աղջիկ, իմացիր, որ միշտ էսպես եմ լինելու, էսպես եղել է, էսպես էլ պիտի լինի... Ես ինձ համար քեֆ եմ քաշելու, դու էլ մնալու ես տանը... Վերջ...

/Ներս է ընկնում մայրը/:

ՄԱՅՐԸ - Աղջի, դու թողնելո՞ւ ես քնենք, թե չէ: Խեղճ տղի հոգին կերել ես, կաշին ու ոսկորն է մնացել, էլ ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես ուզում, հը՞...

ԱՂՋԻԿԸ - Մայրիկ, ձեզ ի՞նչ պատահեց, ես իրավունք չունե՞մ իմ ամուսնու հետ խոսելու:

ՄԱՅՐԸ - Ցերեկը խոսիր:

ԱՂՋԻԿԸ - Ցերեկը տեսնո՞ւմ եմ, որ խոսեմ:

ՄԱՅՐԸ - Ուրեմն մի խոսիր, զզվեցրիր, էլի, տղամարդու վրա էլ էդքան կխոսե՞ն... նա էլ ինքնասիրություն ունի, չէ՞...

ԱՂՋԻԿԸ - Բայց միթե ես… ես նրան բան ունեմ ասելու, հուզված եմ...

ՄԱՅՐԸ - Պահ-պահ-պահ,լեզուն երկարացրեց, հուզվա՛ծ է... լույսի պես տղան ընկել է ձեռքը ու նա դեռ... հուզվա՛ծ է... կյանքներս կերար, ինչ ոտքդ էս տունն ես դրել, ամեն ինչ քանդվում է... անիծվեր գալուդ օրը...

ԱՂՋԻԿԸ - Մայրիկ, մայրիկ, ախր քիչ առաջ ասում էիր...

ՄԱՅՐԸ– Հիմա էլ քեզնից ստեր կհնարես, հա՞, հիմա էլ իմ տղային ուզում ես իմ դեմ հանել, հա՞... քիչ ես խառնել, հիմա էլ ուզում ես քանդել տունս, հա՞...

ԱՂՋԻԿԸ - Դե եթե ես եմ ձեր հանգիստ կյանքը խանգարողը, ներողություն եմ խնդրում, կգնամ: Այսքանից հետո ինչպե՞ս կարելի է ապրել ձեզ հետ...

/Ամուսինը նրան է նայում արհամարհանքով):

ՏՂԱՆ - Էրեկ գնայիր, էսօր կլիներ երկու...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԷՍՏԱՖԵՏ

/Փոխադրություն/

Ամբիոնի մոտ կանգնած է հիմնարկի պետը:

ՊԵՏ - Եվ ուրեմն, թանկագին ընկերներ, թույլ տվեք տեղկոմի անունից, ձեր բոլորի անունից և անձամբ մեր վարչության պետ ընկ. Սողոմոնյանի անունից սրտանց շնորհավորել մեր սիրելի հոբելյարին, ցանկանալ նրան երկար կյանք մեր կոլեկտիվից դուրս, առողջություն՝ մեր կոլեկտիվից դուրս և անձնական երջանկություն՝ մեր կոլեկտիվից դուրս: Միաժամանակ թույլ տվեք նրան նվիրել մեր համեստ նվերը՝ Օմար Խայամի կիսանդրին:

Մոտ եկ, ասում եմ՝ մոտ եկ, Սիրան...Շնորհավորում եմ:

ՍԻՐԱՆ -Շնորհակալություն:

ՊԵՏ - Եվ տես, թե ինչ լավատեսորեն է ասել այս մեծ փիլիսոփան:

/Կարդում է/:

Կյանքի ոչ մի պարագայից մի վախիր,

Ինչ գա՝ կանցնի, զուր ներկայից մի վախիր,

Այս մի կանխիկ վայրկյանն ուրախ վայելիր,

Անցյալն անցավ, ապագայից մի վախիր:

/ժպտում է/:

Մոտ եկ, մոտ եկ, Սիրան քույրիկ, մի վախիր... /Ծիծաղում է/ էդ էլ իմ կողմից...

/ Սիրանին է նվիրում նվերն ու բանաստեղծությունը: Սիրանը մնում է կանգնած, արձանը ձեռքին, չգիտի ինչ անել/:

ՍԻՐԱՆ - Ես սա ի՞նչ անեմ: Տանեմ տուն, Եփրեմը կռիվ է սարքելու, թե դու ինչ կապ ունես Օմար Խայամի հետ: Բա ի՞նչ անեմ: Գտա: Կտանեմ հորեղբորորդի Հրաչիկին նվեր: Նոր բնակարան են ստացել, միևնույն է, մի բան պետք է տանեի:

/ Անցում: Շրջվում է դեպի Հրաչիկն ու Գոհարը/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Հրաչիկ ջան, շնորհավորում եմ ձեր նոր բնակարանը: Երջանիկ լինեք: Շատ մտածեցի, թե ինչ նվեր բերեմ, վերջը որոշեցի, որ ամենալավ նվերը Օմար Խայամն է: Տեսեք ինչ է ասում. /Կարդում է/

Կյանքի ոչ մի պարագայից մի վախիր,

Ինչ գա՝ կանցնի, զուր ներկայից մի վախիր,

Այս մի կանխիկ վայրկյանն ուրախ վայելիր,

Անցյալն անցավ, ապագայից մի վախիր:

ՀՐԱՉԻԿ – Ի՜նչ նեղություն, Սիրան ջան, շատ ապրես:

ԳՈՀԱՐ - Ինչ հիանալի քանդակ է… շատ, շատ շնորհակալություն…

/Սիրանը հեռանում է/:

ԳՈՀԱՐ - Տեսա՞ր ինչ ապտակ էր:

ՀՐԱՉԻԿ - Ի՞նչ ապտակ, ո՞վ…

ԳՈՀԱՐ - Հիանալի հասկացրեց, որ լավ գիտի, թե ոնց ենք բնակարան ստացել: Կարծում ես զուր տե՞ղն էր անընդհատ կրկնում «Մի վախիր, մի վախիր»…

ՀՐԱՉԻԿ – Է՜, ինչ ես խոսում…

ԳՈՀԱՐ - Նախանձից տրաքվում են, որ մի հինգ մետր ավել ենք ստացել: Շատ էլ լավ ենք արել: Աճող ընտանիք ենք, հասնում է…

ՀՐԱՉԻԿ - Մե՞նք ենք աճող..,

ԳՈՀԱՐ - Իսկ ինչ կա…

ՀՐԱՉԻԿ - Բան չեմ ասում, բայց լավ քանդակ է, գուցե և արվեստի նմուշ է:

ԳՈՀԱՐ - Ես այս նմուշը մի օր էլ մեր տանը չեմ պահի:

ՀՐԱՉԻԿ - Բա ի՞նչ անենք:

ԳՈՀԱՐ - Նվեր էիր ման գալիս, հենց այսօր էլ նվեր տանենք Մացակ Պավլովիչին: Պետերն իրենց աշխատողներին հենց այնպես չեն ծնունդի հրավիրում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՐԱՉԻԿ - Հը՞, քիչ չի՞: `

ԳՈՀԱՐ - Երկու շիշ էլ լավ կոնյակ դնենք հետը: Եղա՞վ:

/Շրջվում են դեպի Մացակ Պավլովիչը/:

ՀՐԱՉԻԿ - Թանկագին Մացակ Պավլովիչ: Եվ տեսեք թե ինչ է ասում արևելքի մեծ բանաստեղծը. /Կարդում են երկուսով /

Կյանքի ոչ մի պարագայից մի վախիր,

Ինչ գա՝ կանցնի, զուր ներկայից մի վախիր,

Այս մի կանխիկ վայրկյանն ուրախ վայելիր,

Անցյալն անցավ, ապագայից մի վախիր…

ՄԱՑԱԿ - Հիանալի է, գրեթե աննման է, ապրես, Հրաչ, ապրես:

ՀՐԱՉԻԿ - Ըստ որում բոլորն էլ գիտեն, որ դուք Օմար Խայամի նման տնական գինին եք գերադասում: Բայց կարծեմ չեք խուսափում նաև կոնյակից: Դրա համար էլ հարկ համարեցինք երկու շիշ էլ կոնյակ բերել: Ըմմ, մարոչնի է, գիտէ՞ք, «Նաիրի» կոլեկցիոն…

ԳՈՀԱՐ - Ձեր կինը մյուսների բերած շշերի հետ դրեց: Հանկարծ չխառնվե՞ն...

ՄԱՑԱԿ Հըմ, հըմ… ապրե՛ս, Հրաչ, ապրե՛ս…

/Մացակ Պավլովիչը միայնակ է/:

ՄԱՑԱԿ - Սրիկա, այլևս ոչ մի կասկած, որ անստորագիր նամակի հեղինակը նա է: Նույն խոսքերը… նույն խոսքերը... «Մեր տրեստի կառավարիչը գերադասում է տնական գինին, բայց չի հրաժարվում նաև դրոշմակիր կոնյակներից»... Սրիկա… պատահականությո՞ւն է, ինչ է, որ հատկապես Օմար Խայամ է բերել: Կարծես թե ուրիշ բանաստեղծներ չկան... Ուղղակի ընդգծում է, որ ես ալկոհոլիկ եմ… Սրիկա… մենք դեռ կհանդիպենք:

Իսկ սա ի՞նչ եմ գրկիս սեղմել... կարծես աչքիս լույսը լինի... Որտե՞ղ կորցնեմ: Ի՞նչ… ապրես, Մացակ Պավլովիչ, ուղիղ կտանեմ Տիգրանին: Շատ սրամիտ կստացվի,չէ՞ որ նրա դոկտորական դիսերտացիայի թեման հենց Պարսկաստանն է. «Պարսկական մոծակների մի քանի առանձնահատկությունները մոծակաբանության վերջին նվաճումների լույսի տակ»: Ես նրան կասեմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Շրջվում է դեպի Տիգրանը/:

Սիրելի և ազնիվ բարեկամ: Քո դիսերտացիոն աշխատանքը հեղաշրջում է պարսկական մոծակաբանության մեջ, և պատահական չէ, որ քեզ ողջունելու է եկել Պարսկաստանի մեծագույն բանաստեղծներից մեծագույնը՝ Օմար Խայամը: Լսիր, թե ինչ է ասում նա.

Կյանքի ոչ մի պարագայից մի վախիր,

Ինչ գա՝ կանցնի, զուր ներկայից մի վախիր,

Այս մի կանխիկ վայրկյանն ուրախ վայելիր,

Անցյալն անցավ, ապագայից մի վախիր…

ՏԻԳՐԱՆ - / Ծափահարում է/:

ՄԱՑԱԿ - Վերցրու և միշտ փիլիսոփայորեն նայիր կյանքին, այս մեծ մարդու նման:

ՏԻԳՐԱՆ - / Ծափահարում է/:

ՄԱՑԱԿ -Ավելացնեմ, որ Օմար Խայամի գլուխը դատարկ է, այսինքն՝ կիսանդրին կարող է ծառայել նաև որպես թաս: Վայելիր, ազնիվ մարդ…

ՏԻԳՐԱՆ /Ծափահարում է/:

/Մացակ Պավլովիչը հեռանում է/:

Հըմ, հըմ, արդյոք ի՞նչ էր ակնարկում Մացակ Պավլովիչը : Ինչո՞ւ էր շարունակ կրկնում՝ ազնիվ մարդ, ազնիվ մարդ… Ազնիվ մարդուն ազնիվ չեն ասում... Մի՞թե գիտի, թե ինչ աղբյուրներից եմ օգտվել… Դժվար թե… Այսինքն ո՞վ գիտե... Կամ ինչո՞ւ էր ընդգծում, որ Օմար Խայամի գլուխը դատարկ է: Եվ ինչ-որ կասկածելի զուգահեռ անցկացնում մեր միջև: Ինչպե՞ս էր: Կարդում է/: «Այս մի կանխիկ վայրկյանն ուրախ վայելիր»: Ահա թե ինչ, իսկ հաջո՞րդ վայրկյանը… Տեսնես արդեն գրե՞լ է իմ դեմ, թե նոր է գրելու:

Օմար Խայա՛մ... Ես քեզ դատարկ գլուխ ցույց կտամ, Մացակ Պավլովիչ, կտեսնես, քո արծաթե հարսանիքին աղվես եմ բերելու, աղվես… արծաթե հարսանի՞ք… Բայց հենց այսօր արծաթե հարսանիքի եմ հրավիրված՝ հարևաններիս մոտ: Ի՞նչ եմ տանելու: Ինչ եմ տանելու: Սրանից լավ նվե՞ր: Եթե ինձ բերել են, ինչո՞ւ ես էլ տանել չեմ կարող:

/Շրջվում է դեպի Եփրեմն ու Սիրանը/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Սիրելի հարևան, սիրելի հարևանուհի…ձեր արծաթե հարսանիքը մեր արծաթե հարսանիքն է, ամբողջ աշխարհի արծաթե հարսանիքն է… Ես երկար խորհեցի, թե ինչ նվեր գնեմ այս նշանավոր օրը հավերժացնելու համար... Եվ վերջապես գտա... Թող միշտ ձեզ հետ լինեն սերը, պոեզիան և գինին, թող միշտ ձեզ հետ լինի Օմար Խայամը: Տեսեք թե ինչ է ասում արևելքի մեծ փիլիսոփան.

«Կյանքի ոչ մի պարագայից մի վախիր

/Լսվում է ճիչ/ :

Ի՞նչ պատահեց, տիկին: /Մեկուսի/: Մի՞թե իմ խոսքերը այդքան ազդեցիկ էին:

՝ /Լսվում է լացի ձայն: Սիրանը հեծկլտում է վախեցած/:

ՍԻՐԱՆ - Չեմ ուզում, չեմ ուզում, ես Օմար Խայամ չեմ ուզում... Եփրեմ, անգինս, հավատա, որ ես ոչ մի կապ չունեմ Օմար Խայամի հետ…

ՏԻԳՐԱՆ - Վա՞յ, ինչ պատահեց, տիկին Սիրան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՍՐԱՄԻՏ ԵՐԵԽԱՆ

Սենյակ: Հայրը բազկաթոռի մեջ խրված թերթ է կարդում: Տասնվեց տարեկան աղջիկը դաս է սովորում սեղանի մոտ: Աղմուկով ներս է ընկնում ութ-ինը տարեկան տղան: Նա ձեռքին փոքր գնդակ ունի:

ՏՂԱՆ - Հարված... գնդակը դուրս թռավ ձողափայտի վրայից... Այժմ հարձակվում են դաշտի տերերը: ասիլևը գնդակը փոխանցում է Քերոբյանին, Քերոբյանը՝ Մելիքյանին... Մելիքյանը... հոյակապ փոխանցում, Նավասարդյանը պոկվում է տեղից, ճարպիկ շարժումներով խաբում է հյուրերի պաշտպաններին, ահա, նա մեն-մենակ է մնացել դարպասապահի հետ: Հարված, պետք է հարվածել... Գնդակը ցանցի մեջ է:

/ Վերջին խոսքերի հետ գնդակը նետում է քրոջ գլխին/:

ՔՈՒՅՐԸ - Վայ, ի՞նչ ես անում, չե՞ս տեսնում, սովորում եմ...

ՏՂԱՆ - Խաղը վերսկսված է... Սամվել Պետրոսյան, Անդրանիկ Խաչատրյան, երկար փոխանցում Սամվել Ղասաբօղլյանին: Գլխի հարված... ուղիղ ձողափայտին...

/ Նորից խփում է քրոջ գլխին/:

ՔՈՒՅՐԸ - Հայրիկ, ասա, էլի, Կարենը խանգարում է ինձ…

/ Հայրը չի արձագանքում/:

ՏՂԱՆ - /Նայում է հորը/: Ես եմ խանգարում, հա՞, դե ա՛ռ քեզ, ա՛ռ քեզ... /Գնդակով խփում է /:

ՔՈՒՅՐԸ - Վերջ տուր, ասում եմ, հիմար…

ՀԱՅՐԸ - Դե, դե, հիմարը դու ես, տղա է, խաղում է, էլի, ի՞նչ ես երեխային նեղացնում:

ՏՂԱՆ – Հա՛…

ՔՈՒՅՐԸ – Ախր պարապում եմ, հայրիկ ջան...

ՀԱՅՐԸ – Է՛, պարապիր...

ՏՂԱՆ - Մեկ է, գլուխը բան չի մտնի, չէ՞, պապ: Մարոյի գլուխը ոնց որ Տրետյակի դարպասը լինի, դժվար է մտնում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Ի՞նչ ասացիր /քրքջում է/, ոնց որ Տրետյակի դարպա՞սը... Վայ ես քո ցավը տանեմ, միանգամի՞ց գտար, թե լսել էիր մեկից:

ՏՂԱՆ - Միանգամից գտա, պապ ջան…

ՀԱՅՐԸ - Վայ ես քո սրամիտ ցավը տանեմ…

ՔՈՒՅՐԸ - Շատ սրամիտ է, գիտես տատիկին ինչ ասաց. տատիկի մեջքը ցավում էր, տնքում էր ու ասում. «Ախ, երբ պիտի մեռնեմ», իսկ Կարենն ասաց. «Շատ լավ կլինի: տատ, որ մեռնես, մենք էլ կպրծնենք»:

ՀԱՅՐԸ– Տատի՞ն: Դո՞ւ ես ասել...

ՏՂԱՆ -Լավ եմ արել: Բա համ ասում է երբ պիտի մեռնեմ, համ էլ ամեն օր բժիշկ է կանչում: Որ ուզում է մեռնի, ինչո՞ւ է բժիշկ կանչում: Լավ չե՞մ ասել, պապ…

ՀԱՅՐԸ - Այ մարդ, էս տղեն հանճար է, հանճար, լավ ես արել, ախպեր ջան... Ճիշտ է, որ տատիկին ես ասել, չի կարելի, բալիկ ջան, բայց շատ սրամիտ ես ասել, ապրես...

/Ներս է մտնում մայրը/:

ՏՂԱՆ - /Հորը/ Ըհը, անալգինն եկավ…

ՄԱՅՐԸ – Օ՜հ, Վարդան ջան, գլուխս այնպես է ցավում... Ասում եմ գուցե մի անալգին խմեմ:

/Հայր ու տղա փռթկում են/:

Ծիծաղելու ի՞նչ կա, չեմ հասկանում, ի՞նչ ասացի...

ՀԱՅՐԸ - Ախր, ախր, որ իմանաս էս անպետքն ինչ ասաց... Վա՜յ, ասաց, «Ըհը, անալգինն եկավ: /Ծիծաղում է/:

ՄԱՅՐԸ - Շատ ես երես առել, Կարեն, զգուշացնում եմ…

ՀԱՅՐԸ - Դե, դե, Կարենիս ձեռք չտաս, լսո՞ւմ ես, իմ տղին ձեռք չտաս: Դու պիտի հպարտանաս, որ այսպիսի տղա ունես… կտեսնեք, թե նա ինչ է դառնալու... Ի՞նչ ես դառնալու, տղա ջան...

ՏՂԱՆ - Հիվանդանոցի պահակ...

ՀԱՅՐԸ– Տեսաք /քրքջում է/ տեսա՞ք... Ինչո՞ւ, բալիկ ջան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ - Ամեն մեկից մի ռուբլի... Օրական հիսուն ռուբլի...

ՀԱՅՐԸ– Վայ ես քո լեզուն կծեմ... Մի օր դուք կլսեք Կարենիս մասին, մի օր կհպարտանաք, որ նրա հարազատներն եք, կտեսնեք ինչ է դառնալու...

ՔՈՒՅՐԸ - Նախ և առաջ՝ խուլիգան...

ՏՂԱՆ - Մի հատ կհասցնեմ քիթ ու մռութիդ... նոր կիմանաս...

ՀԱՅՐԸ - Դե, դե... Քեզ կարգին պահիր, Մարո... ավել-պակաս բաներ ես խոսում...

ՄԱՅՐԸ - Այդ ի՞նչ ես անում, Վարդան ջան, այդպես չի կարելի ախր... Ինչո՞ւ ես երես տալիս... Չէ՞ որ ամբողջ օրը մենք ենք նրա հետ... Ոչ մեկիս չի լսում, ինչ ասում ենք, պատասխանում է, ի՞նչ պիտի լինի նրա վերջը...

ՀԱՅՐԸ– Իսկ ի՞նչ է եղել, է՛...

ՄԱՅՐԸ- Էլ ի՞նչ պետք է լինի... Ձեռքից գնում է... Ախր, եթե դու ընդհանրապես խիստ չլինեիր, չէի ասի: Մյուս երեխաներին չես թողնում ծպտուն հանել, իսկ սրան նստեցրել ես գլխներիս... Դա ի՞նչ դաստիարակություն է... Մյուսները քո՞նը չեն, ինչ է...

ՀԱՅՐԸ - Պա՛հ, ողբերգություն սարքեցիր... Փոքրն է, սիրում ենք, ինչ է պատահել: Հետո՝ ես մեղավո՞ր եմ, որ այդքան խելքով ու սրամիտ է...

ՄԱՅՐԸ - Շա՛տ սրամիտ է: Երեկ դանակը վերցրել, քանդում էր հեռուսացույցը: Ասում եմ՝ ձեռք չտաս...

ՏՂԱՆ - Հա, ասում եմ... քաշեցիր ականջիցս... Քիչ էր մնում մեռնեի...

ՀԱՅՐԸ- Ի՞նչ...

ՄԱՅՐԸ - Ասում եմ՝ ձեռք չտաս, Կարեն, կպատժեմ, ասում է՝ դե փորձիր, պապան կգա, կասեմ, քեզ կծեծի: Շատ սրամիտ է, չէ՞...

ՀԱՅՐԸ - Իսկ դու ինչո՞ւ ես նրա ականջից քաշում: Երեխա է, մինչև չքանդի, չտեսնի, չի սովորի... Կամ ինչո՞ւ ես ասում՝ կպատժեմ: Դու որ ասում ես, նա էլ կասի, էլի…

ՄԱՅՐԸ -Ուրեմն ես ու նա մեկ ենք, հա՞...

/Կարենը մոտենում, շշնջում է հոր ականջին/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ– Ի՞նչ... Վայ ես քո ցավը տանեմ, ախր հետո էլ ասում են՝ շատ ես սիրում սրան: Բա ի՞նչ անեմ, որ չսիրեմ… ախր սա մեծացած-փոքրացած մարդ է, վայ ես քո ջանին մեռնեմ... Դե բարձր ասա: Չէ, չէ , բարձր ասա...

ՏՂԱՆ - Լավ, է՛ , պապ...

ՀԱՅՐԸ– Չէ, չէ, բարձր ասա, մի վախենա, կյանքիդ մեռնեմ...Ես քո կողքին եմ... քեզ ո՞վ ձեռք կտա...

ՏՂԱՆ - /Նայում է մորը, քրոջը, հետո հորը/: Ասում եմ՝ գլուխ մի դնի, կնիկ են, էլի, պապ ջան, կնոջ մազը երկար է, խելքը կարճ...

ՀԱՅՐԸ– /Քրքջում է/: Տեսա՞ք, տեսա՞ք... Ախր էս տարիքի ո՞ր երեխան էսքան խելք ունի, ո՞ր երեխան էսպիսի բաներ կասի...

ՄԱՅՐԸ - Ոչ ոք, բարեբախտաբար, ոչ ոք, Վարդան... Դու հետո երկար կհիշես նրա խոսքերը: Հերթը քեզ էլ կհասնի... Կհիշես, Վարդան...

ՀԱՅՐԸ - Ի՞նչ, դե լավ, հա, երեխա է, էլի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՃԻՐ ԵՎ ՊԱՏԻԺ

Պատկեր առաջին

Սովորական ճաշասենյակ: Միջին տարիքի ամուսինները իրար օգնելով նկար են փակցնում պատին:

ՀԱՅԿ - Մեխը տուր:

ՆՎԱՐԴ - Սա՞:

ՀԱՅԿ -Ըհը... /ամրացնում է/: Չէ՛, էսպես որ գնա, օր ծերության մի սքանչելի հավաքածու կունենանք:

ՆՎԱՐԴ - /Ծիծաղելով/ Ավելի շուտ, ավելի շուտ, միայն թե անպակաս լինեն պարգևատրումներդ: Ի՛նչ լավ ծաղիկներ են.,,.

ՀԱՅԿ - Ես հաշվեցի, Նվարդ ջան, եթե շուկայից այսքան ծաղիկներ գնեի, ավելի թանկ կնստեր: Երկու օր հետո էլ չորանալու էին, դեն էինք նետելու... Իսկ հիմա, խնդրեմ... անընդհատ զարդարում են պատը…

ՆՎԱՐԴ – Ի՛նչ էլ մի հաշվողն ես, Հայկ...

ՀԱՅԿ– Ըհը...

ՆՎԱՐԴ - Մեկ-մեկ վախենում եմ իմ երջանկությունից, գիտես...Ախր փոքր ժամանակ իմ ամենահամարձակ երևակայության մեջ անգամ չէի պատկերացնի, թե այսպես հիանալի կդասավորվի մեր կյանքը...

ՀԱՅԿ– Նախ ուսիդ վրայով երեք անգամ թյու-թյու արա... Այնուամենայնիվ, սատանի ականջը խուլ...

ՆՎԱՐԴ - Ամեն... Ախր երբ ամուսնացանք, ոչինչ չունեինք... հիմա ո՞վ կհավատա... երեխաներ, տուն, ավտոմեքենա, գիտնական ամուսին... կոնստրուկտոր...

ՀԱՅԿ– Շնորհակալություն, ճիշտ հաջորդականության համար...

ՆՎԱՐԴ - Չէ, չէ, նախ գիտնական ամուսին...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅԿ– Որը բժշկուհի կին ունի...

ՆՎԱՐԴ - Որը օր ծերության կրկին սիրահարվել է իր գիտնական ամուսնուն...

/ Ծիծաղում են, Հայկը գրկում է կնոջը/:

Թող, երեխաները հանկարծ ներս կմտնեն, գի՛ժ...

/ Հնչում է դռան զանգը: Նվարդը նետվում է դեպի դուռը և վերադառնում ամուսնուն գրեթե հասակակից մեկի հետ/:

ԱԶԱՏ - Բարև ձեզ, ժողովուրդ... Անցնում էի, ասացի մտնեմ տեսնեմ, ինչ կա, չկա...

ՀԱՅԿ - Լավ ես արել, նստիր, Ազատ ջան... Նվարդ...

ՆՎԱՐԴ - Ամեն ինչ հասկանալի է:

/Արագորեն սեղան է պատրաստում/:

ԱԶԱՏ - Է, ոնց եք, ոնց չեք... Օ՛, սա նորություն է, չէ՞,– լավ նկար է, հիմա մոդա է, ով փող ունի, նկար է առնում: Էն կճուճ ծախողին, որ բռնել էին, է՛ , ութսունչորս հատ նկար էին տնից հանել... Դո՞ւ քանիսն ունես, Հայկ...

ՀԱՅԿ– Սա էլ երկրորդն է...

ԱԶԱՏ— Երկրորդը՞, էլ չունե՞ս... /նայում է չորս կողմը/: Հա, էլի... Բա ինչ էին ասում... տունը նկարներով լցրել է: Տեղ չի մնացել, մի մասն էլ ներքնահարկ է տարել... թե՞ իսկապես տեղափոխել ես ներքնահարկ...

ՆՎԱՐԴ - Դժբախտաբար, մենք ներքնահարկ չունենք, Ազատ...

ԱԶԱՏ— Ինչպես թե: Չունե՞ք: Բա ձեր բարը ո՞րտեղ է...

ՀԱՅԿ– Ի՞նչ բար...

ԱԶԱՏ— Բար, էլի, հիմա մոդա է... Ասում էին մի բար է սարքել, մի բար՝ բուխարիով, փայտե տակառներով ու տակառիկ աթոռներով, երաժշտական լուսավորությամբ...

ՆՎԱՐԴ - /Ծիծաղում է/ Երանի լիներ...

ՀԱՅԿ - Իսկ ո՞վ էր ասում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԱԶԱՏ - Ո՞վ... հիմա չեմ հիշում...

ՀԱՅԿ - Գուցե ուրիշի հետ են շփոթել...

ԱԶԱՏ - Ինչ ես ասում, հո մի հոգի չէր, որ շփոթեր, բոլորն էլ էդ մասին են խոսում: Ուրեմն իսկապե՞ս բար չունես...

ՀԱՅԿ - Չէ, այ մարդ, ինչ ես խոսում... իսկի որ չլինի, դու ամիսը գոնե մի անգամ այստեղ լինում ես, չէի՞ր տեսնի...

ԱԶԱՏ - Եթե ցույց չտաք, ինչպե՞ս պիտի տեսնեմ…

ՆՎԱՐԴ - Բայց պետք է ունենանք, որ ցույց տանք, չէ՞... / Զայրանում է/:

ՀԱՅԿ - Նվարդ...

ՆՎԱՐԴ - Չէ, բայց այնպիսի բան թող ասեն, որ մի քիչ բռնի: Այդպես ո՞նց կլինի...

ԱԶԱՏ - Ուրեմն իսկապես բար չունեք, հա՞...

ՆՎԱՐԴ - Տե՛ր աստված...

ՀԱՅԿ - Ես գլխի ընկա... Ազատը խմելու բան է ակնարկում, իսկ մենք չենք հասկանում... խմելու բան բեր, Նվարդ...

/Նվարդը դուրս է գալիս/:

ԱԶԱՏ - /Աչքով անելով/ Ուրեմն հիմա լա՞վ եք:

ՀԱՅԿ - Ի՞նչ իմաստով:

ԱԶԱՏ - Նվարդի հետ:

ՀԱՅԿ - Նվարդի հե՞տ: Իսկ մենք ե՞րբ ենք վատ եղել:

ԱԶԱՏ – Անկեղծորե՞ն ես ասում:

ՀԱՅԿ - Իսկ ինչո՞ւ պետք է կեղծեմ...

ԱԶԱՏ -Հա՞: Դե փառք աստծո, փառք աստծո... սրտիցս մի մեծ բեռ ընկավ: Ի՞նչ տեսակ մարդիկ են: Ախր, ճիշտն ասած, ես առաջին հերթին դրա համար ձեր տուն եկա: Լսեցի, որ

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

բաժանվել եք, այն էլ շատ տհաճ, աղմկոտ ձևով, թե իբր դու Նվարդի իրերը ցած ես նետել պատշգամբից...

ՀԱՅԿ– /Քրքջում է, դիմում է ներս մտնող Նվարդին/ Լսո՞ւմ ես, սիրելի տիկին, բանից պարզվում է, որ մենք բաժանվել ենք, որ ես քեզ ցած եմ նետել պատշգամբից...

ԱԶԱՏ - Իրերը, իրերը...

ՆՎԱՐԴ - Իսկ ո՞վ էր ասում...

ԱԶԱՏ - Ո՞վ... ճիշտն ասած՝ չեմ ճանաչում: Անծանոթ մարդիկ էին... բարձր-բարձր խոսում էին տրոլեյբուսում:

ՆՎԱՐԴ – Իսկ դու չէի՞ր կարող ասել, որ դա հերյուրանք է…

ԱԶԱՏ - Ե՞ս… ուրեմն ես պետք է գլո՞ւխ դնեի անծանոթ մարդկանց հետ: Կարևորն այն է, որ դա սուտ է: Թե՞ մի բան եղել է...

ՀԱՅԿ - Ի՞նչ է եղել... որ բաժանվե՞լ ենք...

ԱԶԱՏ - Չէ, դե երևի վիճել եք ինչ-որ հարցով, կռվել եք... Հիմա ո՞ր տանը նման բաներ չեն լինում... Մարդիկ էլ լսել են, կարծել են, թե…

ՆՎԱՐԴ - Ազատ, դու տեսած կա՞ս, որ մենք երբևէ կռվենք իրար հետ...

ՀԱՅԿ– Ի՛նչ հիմարություն...

ԱԶԱՏ - Հա, բայց խոսում են, է, խոսում, հո բոլորի բերանը փակել չես կարող... Դե փառք աստծո, որ սուտ է... Սիրտս հանգստացավ... Ձեր կենացը /Խմում է/:

ՀԱՅԿ - Խմիր, խմիր...

ԱԶԱՏ - Հետաքրքիր բան է, գիտես, չգիտես ինչու ձեզ չեն սիրում... Շատ եմ մտածում, թե ինչից է, բայց չեմ կարողանում հասկանալ...

ՆՎԱՐԴ - Ո՞ւմ չես սիրում... Ի՞նձ...

ԱԶԱՏ– Չէ, հիմնականում Հայկի մասին են խոսում:

ՆՎԱՐԴ - Իսկ ի՞նչ են ասում...

ՀԱՅԿ - Դե ինչ ուզում են ասեն, նրանց հերն էլ անիծած...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆՎԱՐԴ - Չէ, սպասիր, Հայկ, ինչո՞ւ չեն սիրում, ի՞նչ են ասում...

ԱԶԱՏ - Հայկ, ճի՞շտ է, որ քո կառուցած կամուրջը խորտակվել է:

ՀԱՅԿ - Ինչ է եղե՞լ...

ԱԶԱՏ - Դե ասում են, թե իբր քո հաշվարկները ճիշտ չեն եղել... այսինքն՝ ավելի ճիշտ, դու մեկ ուրիշի հաշվարկներ ես ներկայացրել՝ քոնի փոխարեն, և հիմա կամուրջը խորտակվել է:

ՀԱՅԿ - Այ քեզ ապուշություն... Ես այդ կամրջի համար մրցանակ եմ ստացել...

ԱԶԱՏ - Դա ի՞նչ կապ ունի...

ՆՎԱՐԴ - Բայց չէ՞ որ կամուրջը կա... դժվա՞ր է տեսնելն, ի՞նչ է...

ԱԶԱՏ - Հա, Նվարդ ջան, բայց ես հո չեմ կարող ամեն խոսողի վերցնել ու տանել կամրջի մոտ... ծիծաղելի բան ես ասում…

ՀԱՅԿ - Լավ, բա ի՞նչ անենք, ուրեմն թույլ տանք, որ հենց այնպես բամբասե՞ն...

ՆՎԱՐԴ - Խելագարվել կարելի է...

ԱԶԱՏ– Դրա համար եմ ասում, էլի... չեմ հասկանում ինչ ես արել դու, որ քեզ չեն սիրում.,, Կամուրջը դեռ ոչինչ, ասում են, թե իբր յուրացրել ես ձեր ճարտարապետներից մեկի նախագիծը և իրեն էլ հեռացրել աշխատանքից ֆիզիոլոգիական արձակուրդի ժամանակ...

ՀԱՅԿ - Սպասիր, սպասիր, ուրեմն այդ ճարտարապետը կի՞ն է:

ԱԶԱՏ - Դե երևի կին է, որ ֆիզիոլոգիական արձակուրդի մեջ է գտնվում:

ՆՎԱՐԴ - Բայց Հայկի բյուրոյում կին չկա...

ԱԶԱՏ - Դե որ հեռացրել է՝ ո՞րտեղից պետք է լինի...

ՀԱՅԿ - Ե՞ս... ես ո՞ւմ եմ հեռացրել... ես ոչ ոքի էլ չեմ հեռացրել... Հիմա ո՞ւմ կարող ես հեռացնել... հիմա հեռացնել չկա, հեռանալ կա միայն...

ՆՎԱՐԴ - / նյարդային/ Հանգիստ, Հայկ ջան, հանգիստ,,. Չէ, բայց ո՞վ է ասում, ո՞վ…

ԱԶԱՏ - Դե խոսում են, էլի, հո անկետա չես լրացնելու… մարդ են, բերան ունեն, խոսում են…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Դե լավ, շատ նստեցի, շատ-շատ ուրախ եմ, որ ձեզ մոտ ամեն ինչ կարգին է... ցտեսություն... Ուրեմն կարգի՞ն է ամեն ինչ… /Հեռանում է/:

/ Ամուսինները նստած են մռայլ ու գլխիկոր/:

Պատկեր երկրորդ

Նույն սենյակը: Հայկը ինչ-որ հին աթոռ է նորոգում, Նվարդը օգնում է նրան:

ՀԱՅԿ– Մեխը տուր:

ՆՎԱՐԴ - Սա՞,

ՀԱՅԿ— Ըհը... /մեխում է/: Հաշվիր, որ տասնհինգ ռուբլի շահեցիր:

ՆՎԱՐԴ - Այս մի աթոռը վերանորոգելը տասնհինգ ռուբլի՞:

ՀԱՅԿ– Ոչ պակաս: Հինգ ռուբլի վարպետին պետք է տայի՞ր: Էդ հինգ: Մի շիշ օղի պետք է դնեի՞ր սեղանին: Էդ էլ հինգ: Ճաշն էլ հո առանց մսի չէր լինելու: Էդ էլ հինգ: Եղա՞վ տասնհինգ: Էլ չեմ ասում այն մասին, որ հետն էլ անեկդոտներ էիր պատմելու, որպեսզի վարպետի տրամադրությունը բարձրանա:

ՆՎԱՐԴ - / Ծիծաղում է/ Շնորհակալություն, վարպետ: Հիանալի հաշվարկներ ես անում, զարմանում եմ, թե այդքանից հետո ինչպե՞ս են քանդվում քո կառուցած կամուրջները:

ՀԱՅԿ– / հումորով/ Իմ կամուրջնե՛րը… Բայց ես ընդամենը մի կամուրջ եմ կառուցել, այն էլ կանգնած է հաստատուն…

ՆՎԱՐԴ - /Նույն խաղով/ Չի կարող պատահել, ասում են, թե...

ՀԱՅԿ– Բայց ո՞վ է ասում, գրողը տանի...

ՆՎԱՐԴ - Ժողովուրդը... այսինքն՝ Ազատը...

ՀԱՅԿ - Ազատը, հա՞, բավական է, էլ միամիտ չկա: Թե ձեռքս կընկնի...

/Դռան զանգ/:

ՆՎԱՐԴ - Ինչպես ասում են՝ անունը տուր ու փայտը վերցրու ձեռքդ...

/ Գնում է բացելու դուռը/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅԿ -Ձեռքիս է, ձեռքիս... /Ներս է մտնում Ազատը/:

ԱԶԱՏ - Բարև ձեզ: Անցնում էի, ասացի մտնեմ տեսնեմ ինչ կա, ինչ չկա: Նկարը ցույց տալով/ Վա՞յ, սա նորություն է...

ՆՎԱՐԴ - Չէ, ինչ ես ասում, Ազատ, անցյալ անգամ, որ եկար, նոր էինք փակցնում, չե՞ս հիշում...

ԱԶԱՏ - Իսկապե՞ս: Բայց այն ժամանակ կարծես թե ուրիշ կտավ էր:

ՀԱՅԿ - Չէ, նույնն է, նույնը, ուղղակի երբ դու այն ժամանակ եկար՝ ծաղիկները դեռ կոկոն էին: Հիմա բացվել են:

ԱԶԱՏ - /Ծիծաղում է/ Շա՜տ սրամիտ էր: Ուրեմն նույն նկարն է, հա՞... Բայց ի՜նչ մարդիկ կան աշխարհում: Ինչե՜ր ասես չեն հնարում...

ՀԱՅԿ - Միանգամայն իրավացի ես, Ազատ, ինչե՜ր ասես չեն հորինում... որոշ մարդիկ... Լսիր, դու հիմա ո՞րտեղ ես աշխատում՝ «Ջրխեղդփրկիչ» ջոկատո՞ւմ ես, թե տեղափոխել են...

ԱԶԱՏ - Ջոկատում եմ: Իսկ ո՞վ է ասել, թե տեղափոխել են...

ՆՎԱՐԴ - Ուրեմն հենց Ազատի մասին էր խոսքը: Ես ասում էի, չէ՞…

ՀԱՅԿ - Է՜հ...

ԱԶԱՏ - Ինչ խոսք, բան ասեք բան հասկանամ, ո՞վ էր ասում, ի՞նչ էր ասում...

ՀԱՅԿ - Թե իբր… մարդ չգիտի էլ, թե ինչպես ասի... թե իբր քեզ տեղափոխել են այլ աշխա...

ՆՎԱՐԴ - Ինչո՞ւ պարզ չես ասում, Հայկ, Ազատը քո ընկերը չէ՞... ուղղակի ասա, որ ասում էին, թե Ազատին հեռացրել են աշխատանքից խաբեբայության և աչքակապության համար…

ԱԶԱՏ - Ինչի համա՞ր...

ՀԱՅԿ - Դե իբր, գիտես էլի, մարդկանց բերանը հո չես կարող փակել, իբր դու ձևակերպել ես, թե մի ամսում երկու հարյուր խեղդվողի եք փրկել Սևանում և ահագին պարգևատրումներ եք դուրս գրել ու…

ՆՎԱՐԴ - Կերել...

ԱԶԱՏ - Ե՞ս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆՎԱՐԴ - Ձեզ մոտ ուրիշ Ազատ Ղազարյան կա՞...

ԱԶԱՏ -Ոչ...

ՆՎԱՐԴ - Դե ուրեմն դու ես, էլի, չէ՞, Հայկ...

ԱԶԱՏ - Սպասիր, ինչպե՞ս թե ես եմ, ես խեղդվողների հետ ի՞նչ գործ ունեմ, ես տնտեսվար մարդ եմ, մեկը լինի ինձ փրկի… Բայց ո՞վ էր ասում, ո՞վ…

ՆՎԱՐԴ - Անծանոթ մարդ էր…

ԱԶԱՏ -Եվ դու… դու, Հայկ, չկարողացա՞ր ասել, որ անձամբ ճանաչում ես ինձ, որ ես ընդունակ չեմ խարդախության, որ...

ՀԱՅԿ - Հարգելիս, ես քեզ ամիսը մեկ հազիվ եմ տեսնում, ի՞նչ գիտեմ, թե դու ինչով ես զբաղված մնացած օրերին… Եվ հետո, ես ինչո՞ւ պիտի զլուխ դնեի անծանոթ մարդկանց հետ:

ՆՎԱՐԴ -Շատ ցավալի է, բայց մարդուն ուղղակի չեն սիրում, էլի… Թե չէ ո՞ւմ ինչ գործն է, որ Ազատն իր մորը ծերանոց է ուղարկել: Երևի մի բան կա, որ այդպես է հարմար գտել… Ճիշտ չէ՞, Ազատ...

ԱԶԱՏ - Ի՞նչ, ի՞նչ, ինչ եմ արե՞լ, բ-բայց ես մայր չունեմ…

ՀԱՅԿ -Ուրեմն զոքանչիդ մասին է եղել խոսքը: Դու զոքանչիդ էլ ես մայրիկ ասում, չէ՞…

ԱԶԱՏ - Ե՞ս, զոքանչի՞ս, ծերանո՞ց… խելագարվե՞լ են, ինչ է… եթե այդ խոսքերը զոքանչիս ականջն ընկնի, նա ինձ ծերանոց կուղարկի և դեռ մի բան էլ այն կողմ... Սա՞ ինչ բան է, ով էր ասողը, Հայկ ջան, Նվարդ ջան, այդ ո՞վ է ասել, ախր, բա ես չիմանա՞մ, թե ով է իմ թշնամին, ով է ուզում վարկաբեկել ինձ…

ՀԱՅԿ - Ասե՞մ, Նվարդ:

ՆՎԱՐԴ - Գործ չունես, Հայկ... Եթե ասում են, ուրեմն մի բան կա, էլի, հո մարդիկ հենց այնպես չեն խոսի... Գուցե որպես կեղծ փրկվողներ ոչ թե երկու հարյուր հոգի են ձևակերպել, այլ հարյուր հիսուն… բայց էությունը դրանից հո չի փոխվում…

ԱԶԱՏ - Ուրեմն դու հավատո՞ւմ ես նրանց, Նվարդ, բայց այդպես ո՞նց կլինի, ախր պարզ երևում է, որ դա բամբասանք է, զրպարտություն.,. Դուք ինձ չեք հավատում, նրա՞նց եք հավատում,,. Չէ՞ որ իմ ամբողջ կյանքը ձեր աչքի առաջ է անցել:

ՀԱՅԿ - Ասում եմ, Նվարդ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆՎԱՐԴ– Քո գործն է...

ՀԱՅԿ -Ուրեմն գիտե՞ս ովքեր էին ասողները, Ազատ, հենց նրանք, ովքեր քեզ ասել էին, թե իբր ես նկարների մեծ հավաքածու ունեմ, թե բար եմ պատրաստել ներքնահարկում՝ փայտե մեծ տակառներով և տակառիկ աթոռներով ու երաժշտական լուսավորությամբ...

ՆՎԱՐԴ - Թե մենք բաժանվել ենք իրարից և խորտակվել է Հայկի հաշվարկներով կառուցած կամուրջը...

ՀԱՅԿ -Թե ոչ ոք ինձ չի սիրում...

/Հայկն ու Նվարդը ծիծաղում են/:

ԱԶԱՏ - /Դեռ շփոթված/ Բայց ովքե՞ր են վերջապես դրանք...

ՆՎԱՐԴ -Դու պիտի ասես, չէ՞ որ առաջինը նրանք են քեզ պատմել մեր մասին: Եվ դու հավատացել ես, թեև մեր ամբողջ կյանքը քո աչքի առաջ է անցել...

/Ազատը լուռ է: Քարացել է/:

ԱԶԱՏ - Ուրեմն, ուրեմն այս բոլորը...

ՀԱՅԿ - Մտածիր, մտածիր, եղբայր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՅՐԿՅԱՆԻ ԳԻՆԸ

Գործարանի մի անկյունը: Բանվորն իբր թե աշխատում է մի հաստոցի մոտ: Միալար աղմուկ է լսվում: Նրան է մոտենում խայտաբղետ հագնված թղթակիցը:

ԹՂԹԱԿԻՑ - Բարև ձեզ, մենք հեռուստատեսությունից ենք:

ԲԱՆՎՈՐ - Երևում է: Բարև ձեզ:

ԹՂԹԱԿԻՑ - Մենք որոշել ենք ռեպորտաժ կազմակերպել ձեր աշխատատեղից՝ «Վայրկյանի գինը» թեմայով: Մեր նպատակն է, վարպետ Մուշեղ, հեռուստադիտողներին ծանոթացնել ձեր աշխատանքի մեթոդին, ցույց տալ, թե ինչպես ռացիոնալ օգտագործելով աշխատանքային յուրաքանչյուր վայրկյանը, դուք արտադրական փայլուն հաջողությունների եք հասել...

ԲԱՆՎՈՐ - Լավ չէ՞ր լինի աշխատանքից հետո:

ԹՂԹԱԿԻՑ - Աշխատանքից հետո ինչպե՞ս ներկայացնենք ձեր աշխատանքը: Մի անհանգստացեք, մենք ձեզ չենք խանգարի...

ԲԱՆՎՈՐ - /Հուսահատ/ Դե ինչ արած... /Օրորում է գլուխը, շարունակում է աշխատել/:

ԹՂԹԱԿԻՑ - Զարզա՛նդ: Ընկեր Մուշեղ, Զարզանդը մեր ռեժիսորն է, սկսիր...

ՌԵԺԻՍՈՐ - Հիանալի է: Տղաներ, արագ, կամերաները տեղավորեք, լուսավորող, լուսավորող, որտե՞ղ կորավ այդ տղան, արագ: Օպերատոր, միկրոֆոններից մեկը հենց դազգահի վրա դիր, մյուսը տար ակումբ: Ո՞ւր ես տանում, ո՞ւր ես տանում, այս դազգահի վրա դիր... Այդպես... լուսավորող, ո՞ւր կորավ լուսավորողը...

ԹՂԹԱԿԻՑ - /բլոկնոտի մեջ նշումներ անելով/ Վարպետ Մուշեղ, ուրեմն մենք կսկսենք մի փոքրիկ հարցազրույցով ձեզ հետ. Նու՛, սովորական հարցեր. ինչո՞ւ հանկարծ որոշեցիք խառատ դառնալ, ո՞վ է ձեր սիրելի գրողը, ձեր պապն է՞լ է խառատ եղել... ինչպե՞ս եք վերաբերվում ապահարզանին...

ՌԵԺԻՍՈՐ - Ընկեր Սիրունյան, բան չի դուրս գա, հաստոցի աղմուկը խանգարում է միկրոֆոնին...

ԹՂԹԱԿԻՑ - Վարպետ Մուշեղ, հնարավոր չէ՞ մի քանի ժամով անջատել հաստոցը...

ՄՈՒՇԵՂ - Ինչպե՞ս թե, անջատել: Բա ո՞նց աշխատեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԹՂԹԱԿԻՑ - Ձևացրեք, թե աշխատում եք:

ԲԱՆՎՈՐ - Ո՞նց ձևացնեմ, այ ընկեր, բա որ մեքենան ձայն չհանի, ո՞վ կհավատա, որ աշխատում եմ...

ՌԵԺԻՍՈՐ - Ապահով մնացեք, վարպետ, այնպես ցույց կտամ, որ կհավատան...

ԹՂԹԱԿԻՑ - Նա կանի... պրոֆեսիոնալ է...

ԲԱՆՎՈՐ - Բա ձայնը...

ՌԵԺԻՍՈՐ - Ձայնը մեր տղաները կհանեն... փորձեք, տղերք...

/Տղաները սկսում են հաստոցի ձայն հանել/:

Տեսնո՞ւմ եք... տղերք եմ ասել է՛, ինչ ձայն ասես, կհանեն... Տեսնո՞ւմ եք...

ԲԱՆՎՈՐ - Տեսնում եմ...

ՌԵԺԻՍՈՐ - Առաջին կամերա... խոշոր պլան: Երկրորդ կամերա՝ պանորամա...

ԹՂԹԱԿԻՑ- Վարպետ Մուշեղ, հետո մենք հանգամանորեն կխոսենք աշխատանքային վայրկյանը ճիշտ օգտագործելու հարցում ձեր կիրառած...

ԲԱՆՎՈՐ - Ի՞նչ վայրկյան, այ ախպեր, ախր թողեք աշխատեմ..

ՌԵԺԻՍՈՐ - Աշխատեք, աշխատեք, ձևացրեք, թե աշխատում եք... առաջին կամերա՝ խոշոր պլան, վարպետի ձեռքերը...

ԲԱՆՎՈՐ - Այս ի՞նչ եք անում, ախր պլանս...

ԹՂԹԱԿԻՑ - Վարպետ Մուշեղ, դուք հո եսասեր չեք, միայն ձեր մասին եք մտածում, իսկ մեր բազմահազար հեռուստադիտողներին ո՞վ պետք է բացատրի աշխատանքային վայրկյանի կարևորությունը... Սա, եթե կուզեք իմանալ… պետական նշանակություն ունեցող հարց է:

ՌԵԺԻՍՈՐ - Ընկեր Սիրունյան, դազգահը խանգարում է, վարպետ Մուշեղը կրուպնի չի երևում...

ԹՂԹԱԿԻՑ -Վարպետ, հնարավո՞ր է հեռացնել դազգահը...

ԲԱՆՎՈՐ - Ի՞նչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԹՂԹԱԿԻՑ - Օ՜հ, ինչ եմ ասում...

ՌԵԺԻՍՈՐ - Թող դազգահի առաջ կանգնի...

ԲԱՆՎՈՐ - Ե՞ս, կանգնեմ ի՞նչ անեմ...

ԹՂԹԱԿԻՑ - Կանգնեք ու աշխատեք...

ԲԱՆՎՈՐ - Ո՞նց աշխատեմ...

ԹՂԹԱԿԻՑ - Դե լավ, վարպետ Մուշեղ, մենք հո ձեզ չե՞նք սովորեցնելու, թե ոնց աշխատեք, փորձառու վարպետ եք...

ԲԱՆՎՈՐ - Ես այսպիսի բաների վարպետ չեմ, հասկացա՞ք...

ՌԵԺԻՍՈՐ - Լսեք, ընկեր, ախր մենք թանկագին ժամանակ ենք կորցնում: Ես հրաժարվում եմ, ես այսպես աշխատել չեմ կարող… Լուսավորող, ո՞ւր կորավ այդ տղան...

ԹՂԹԱԿԻՑ - Դե լավ, մի աշխատեք, ես սցենարը շուռ կտամ, կանգնեք դազգահի առաջ, լաթով այսպես սրբեք ձեր ձեռքերը ու խոսեք վայրկյանի կարևորության մասին...

ՌԵԺԻՍՈՐ - Իսկ գուցե «Ձեռքերն» արտասանի, որ ամեն տեղ արտասանել ենք տալիս...

ԹՂԹԱԿԻՑ – Ի՜նչ ես ասում, դա «Մոր ձեռքերն» են... Չէ, վարպետ Մուշեղ, դուք կխոսեք, հետո... / նայում է բլոկնոտին/ ահա, ճիշտ այստեղ ես կասեմ. «Թանկագին հեռուստադիտողներ, միանգամայն պատահաբար այստեղ է գտնվում Հայաստանի երգի-պարի պետական վաստակավոր անսամբլը: Օգտվելով առիթից, խնդրենք նրանց մի երգ երգել վարպետ Մուշեղի պատվերով...

Եվ կտանք կես ժամանոց մի համերգ:

ԲԱՆՎՈՐ - Անսամբլը՞… Որտե՞ղ եք տեղավորելու… Ուրեմն մեր արտադրամասը կանգ է առնելու…

ԹՂԹԱԿԻՑ - Ինչո՞ւ արտադրամասը: Ամբողջ գործարանը: Սիրելի վարպետ, «Վայրկյանի գինը» այնպիսի կարևոր հարց է հիմա, որ ափսոս չէ նաև ամբողջ գործարանը կանգնեցնելը... Դուք գիտե՞ք, թե առաջավոր փորձի փոխանակման իմաստով ինչպիսի խոշոր նշանակություն կունենա մեր հաղորդումը...

ՌԵԺԻՍՈՐ - Ընկեր Սիրունյան... Սկսենք փորձը, տեխնիկան կանգնած է ախր, զուր ժամանակ ենք կորցնում... Կամերաները պատրաստ…Արտադրամասում լռություն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԹՂԹԱԿԻՑ - Ուրեմն ի՞նչ կուզենայիք, որ անսամբլը կատարեր ձեր պատվերով, սիրելի վարպետ… Ես այսպես կհարցնեմ…

ԲԱՆՎՈՐ - Կհարցնե՞ք: Ախր վախենում եմ չհարցնեք:

ԹՂԹԱԿԻՑ – Ի՜նչ եք ասում, անպայման կհարցնեմ, վարպետ…

ԲԱՆՎՈՐ - Որ հարցնեք, կպատասխանեմ: Կասեմ՝ խնդրում եմ, աղաչում եմ, հանուն ձեր հանգուցյալ ծնողների, հանուն վայրկյանի կարևորության, հանուն արտադրության զարգացման, մեզ քիչ կտրեք գործից, թողեք աշխատենք, ի սեր աստծո…

ԹՂԹԱԿԻՑ - Ի՞նչ… այդպե՞ս… խնդրեմ, մենք էլ ուրիշ տեղ կգնանք… Խնդրում են… բանկետներ են կազմակերպում… զարմացրի՜ք,,. Պատրաստի սցենար է, թող վարպետ Մուշեղ չլինի, լինի վարպետ Սաքո… Ի նչ տարբերություն: Գնացինք, տղերք…

ՌԵԺԻՍՈՐ - Վերջ: Հանգցրեք լույսերը: Լոսավորող, լուսավորող… ո՞ւր կորավ այդ տղան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎՐԵԺ

Հիմնարկի պետի առանձնասենյակը: Գրասեղան, վրան բազմաթիվ հեռախոսներ: Գրասեղանի կողքին ծալովի թեթև մահճակալ է: Մահճակալին պառկած, քնած է հիմնարկի պետը:

Դուռը բացվում է, ներս է մտնում նրա կինը: Տեսնելով քնած ամուսնուն, փորձում է արթնացնել:

ԿԻՆԸ - Անդրանիկ. Անդրանիկ, ես եմ, Մագդալինան:

ԱՄՈՒՍԻՆԸ - /Տրորելով աչքերը, հանկարծ վեր է թռչում/ Ի՞նչ է, աշխատանքից ուշանո՞ւմ եմ: / Հիասթափված/ Ա՜խ, էլի աշխատանքի տեղում եմ, հա՞: /Ուրախացած/ Ի՞նչ է պատահել, չլինի՞ որևէ մեկը գնացել է և ես կարող եմ նորից տուն վերադառնալ:

ԿԻՆԸ - Ընդհակառակը, Անդո ջան:

ԱՄՈՒՍԻՆԸ -Այսինքն, ինչպե՞ս թե ընդհակառակը: Դրանից էլ ընդհակառա՞կ կլինի:

ԿԻՆԸ - Երևի կլինի, որ լինում է: Մորաքրոջս տղայի կնոջ հորեղբոր տղայի քենու… Չէ… մորաքրոջս տղայի կնոջ հորեղբոր տղայի կնոջ քեռու... չէ… հա, հա, քեռու խնամու աղջիկն ու փեսան են եկել իրենց տղայի հետ:

ԱՄՈՒՍԻՆԸ - /Սարսափած/ Չի կարող պատահել: Չէ, ես սրան այլևս չեմ դիմանա: Լսիր, սիրելի Մագթաղ, սա՞ ինչ բան է: Երբ ամուսնանում էինք, դու ասում էիր, թե որբ եմ, ոչ ոք չունեմ: Իսկ հիմա պարզվում է, որ նույնիսկ մորաքրոջ տղայի կնոջ ամուսնու քեռու հորեղբոր զոքանչի խնամի էլ ունես: Մի քիչ շատ չէ՞:

ԿԻՆԸ - Ի՞նչ անեմ, իրենք են ասում: Բայց ոչ թե մորաքրոջ տղայի կնոջ ամուսնու քեռու հորեղբոր զոքանչի խնամի… դա անհեթեթություն է: Այլ հարազատ մորաքրոջս տղայի կնոջ հարազատ հորեղբոր տղայի հարազատ քեռու… չէ, քեռու խնամու հարազատ աղ…

ԱՄՈՒՍԻՆԸ – Ի՜նչ ես ասում: Չէի կարծում, թե այդքան հարազատ ազգական են: Եվ էլի՞ ինչ են ուզում քո ազգականները, Մագթաղ: Ասա, ասա, անուշ ջան, է՞լ ինչ են ուզում: Իմ տան ննջարանից, քո կողքից հանեցին, ճաշասենյակից հանեցին, խոհանոցից հանեցին, լողասենյակից հանեցին, պատշգամբից հանեցին: Եկել եմ հիմնարկի իմ առանձնասենյակում եմ քնում: Ուզում են այստեղից է՞լ հանել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Լավ, էլի, երկու ամիս չդիմանա՞նք: Ի՞նչ է, երեխաները ինստիտուտ չընդունվե՞ն:

ԱՄՈՒՍԻՆԸ -Թող ընդունվեն, ես ձեռքերը բռնեցի՞, բայց ինչո՞ւ իմ հաշվին: Ինչո՞ւ պիտի ամեն տարի ամռանը ես իմ այս առանձնասենյակում քնեմ: Ինչո՞ւ երեխաների հետ ծնողներն էլ են գալիս:

ԿԻՆԸ - Ուրեմն իրենց երեխաներին անտե՞ր թողնեն:

ԱՄՈՒՍԻՆԸ– Թող հյուրանոց գնան:

ԿԻՆԸ - Հա, հա, մեր հյուրանոցներում էլ կանչում են, «Էստի համեցեք, էստի համեցեք»:

ԱՄՈՒՍԻՆԸ– Իսկ ես կանչում եմ, հա՞:

ԿԻՆԸ - Չէ, ես եմ կանչում: Լավ, Անդիկ ջան, ի՞նչ անեմ, տնից դո՞ւրս անեմ: Թումանյանի «Քեռի Խեչանը» կարդացե՞լ ես: Ամբողջ գյուղում խայտառակ կլինենք: Փաստորեն բոլորը հարազատներ են. մեկը մեր Բաղդասարն է իր ընտանիքով, մեկը՝ Վարազդատը իր ընտանիքով, մեկը հորքուր Սիրուշի տղան է իր ընտանիքով, մեկը...

ԱՄՈՒՍԻՆԸ -Բա ե՞ս ինչ եմ, ես իսկի՞ քո հարազատը չեմ, որ աքսոր ես ուղարկել: Ամբողջ հիմնարկը իմ մասին է խոսում: Տարծում են լքել եմ ընտանիքս: Մի օր որ հարցս քննեն, ի՞նչ պիտի անեմ: Ո՞ւմ կարող եմ համոզել, թե պարզապես ժամանակավորապես ինձ տնից դուրս են արել, ընդունելության քննությունների կապակցությամբ: Լավ, բա հիմա դրանք որտե՞ղ պետք է ապրեն:

ԿԻՆԸ– Այ, հենց հարցն էլ դա է, Անդրանիկ ջան: Ասում եմ, գուցե քո առանձնասենյա...

ԱՄՈՒՍԻՆԸ– Ի՞նչ, այստեղից է՞լ եք հանում,

ԿԻՆԸ- Չե, չէ, դա արդեն անխղճություն կլինի: Գուցե պարզապես քեզ հետ, այստեղ ապրեն, հա՞, տանը, նույնիսկ սեղանի տակ տեղ չկա, մեր Կիրակոսի աղջկա կեսարարի...

ԱՄՈՒՍԻՆԸ - Այստե՞ղ, այստեղ որտե՞ղ ապրեն... Ես գրասեղանի՞ վրա քնեմ, ինչ է:

ԿԻՆԸ - Ինչո՞ւ գրասեղանի: Ինչո՞ւ ես զավեշտի վերածում: Կարող ես հաշվապահական սենյակը բացել: Առավոտը որ ձերոնք գան, մերոնք դուրս կգան...

ԱՄՈՒՍԻՆԸ -Ոչ թե ձերոնք, այլ ե՛ս դուրս կգամ: Ավելի շուտ՝ կհանեն կպրծնեմ: Տե՛ր աստված: Իսկ քո այդ մորաքրոջ խնամու զոքանչի... վոոբշչեմ... տղան պատրաստվե՞լ է քննություններին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - /Կամացուկ/ Որ պատրաստված լիներ, ինչո՞ւ պիտի մեր տուն գար: Ասում են՝ քո անունը տալով են եկել: Գուցե նորից Մինաս Տիրոսիչին զանգահարես, հը ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Մինաս Տիրոսիչի՞ն: Բա դու խիղճ չունե՞ս, այ Մագթաղ, քո հարազատներից արդեն տասնյոթ հոգու համար զանգ եմ տվել:

ԿԻՆԸ - Որտեղ տասնյոթը, այնտեղ էլ տասնութը...

ԱՄՈՒՍԻՆԸ - Հետո էլ տասնինն ու քսանը, չէ՞:Այդ խեղճ Մինաս Տիրոսիչը հենց իմ ձայնը լսում է, իր ձայնը կտրվում է: Երեկ ասաց. իսկ լավ չի՞ լինի, եթե հենց կնոջդ գյուղում մեր ինստիտուտի մի ֆիլիալ բացենք... պրծնենք:

ԿԻՆԸ - Իսկ դու ինչո՞ւ ես ասում, որ իմ բարեկամներն են:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ասեմ ի՞մ բարեկամներն են:

ԿԻՆԸ – Իսկ, ինչ՞ է, իմ բարեկամները քո բարեկամները չե՞ն: Իսկ որ նրանց ուղարկած կարագն ու մածունը, լոբին ու կարտոֆիլը, սուճուխն ու ալանին ուտում ես, լա՞վ է: Գիտե՞ս, որ իմ այս մորաքրոջ տղայի կնոջ ամուսնու… վոռբշչեմ, աղջիկը քսան կիլո բուրդ է բերել: Բրդի գինը գիտե՞ս: Որ փափուկ քնում ես, գիտե՞ս ինչի վրա ես քնում:

ԱՄՈՒՍԻՆԸ - Գիտեմ, գրասեղանին, շա՛տ փափուկ է :

ԿԻՆԸ - Դե լավ, Անդիկ ջան, սրանք վերջինն են, տեղավորի ու զանգահարի Մինաս Տիրոսիչին, հա՞: Հիմա չեմ ասում, առավոտյան զանգ կաաս, հա՞ ...

ԱՄՈՒՍԻՆԸ– Հա՛, հա՛, հա՛...

ԿԻՆԸ - Իսկ, ի՞նչ է, դու բարկանո՞ւմ ես:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ե՞ս, ե՞ս... բա ես քեզ վրա կարո՞ղ եմ բարկանալ, ես ի՞նչ իրավունք ունեմ, Մագթաղ ջան, մի մարդ որ այդքան հարազատներ ունի...

ԿԻՆԸ - Հա, ապրես, Անդիկ ջան, դե գրի քննական թերթիկի համարը՝ 1614: Դիմացիր, Անդիկ ջան, մի ամիս հետո մենք նորից միասին կլինենք, հա՞ ...

ԱՄՈՒՍԻՆԸ -Հա...

ԿԻՆԸ - Դե, չմոռանաս զանգ տալ, 1614, հա՞, համբուրում եմ:

/Օդային համբույր է ուղարկում: Հեռանում է/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ– Չե՛մ մոռանա: Նստում մտածում է, հետո հանկարծ վճռականորեն վերցնում է լսափողը/:

Ալո, Մինաս Տիրոսիչ, բարի երեկո, ավելի ճիշտ՝ բարի գիշեր: Անդրանիկն է: Լսում է/ Մինաս Տիրոսիչ... /պաուզա/ Մինաս Տիրո... /պաուզա/ Մինաս Տի... /պաուզա/ Մինաս... /պաուզա/ Մին... /պաուզա/: Ա՛յ մարդ, սպասիր, տես ինչ եմ ասում... Բոլորովին ուրիշ բան եմ ասում... Չէ, չէ, ուրեմն կնոջս... Չէ, ասում եմ, ընդհակառակն եմ ասում: Մոտդ գրիր թերթիկի համարը՝ 1614, հենց ներս մտավ՝ կկտրես... Հենց առաջին քննությունից... Հա , շատ եմ խնդրում: Եթե հնարավոր է՝ մի ձգձգիր... էն մյուսներին էլ... չխառնես հանկարծ, համարները նորից ստուգիր, 319, 320, 321, 468, 469, 520, 670... հա՞ ... բոլորը հիշո՞ւմ ես... Դե ուրեմն, կտրիր, Տիրոսիչ ջան, հենց ներս մտնի, կտրիր, որ ներս էլ չմտնի՝ էլի կտրիր: Հաջողություն քեզ, որ չես արել՝ կնեղանամ, հա…. Շատ եմ խնդրում... Ես քո լավությունը մինչև կյանքիս վերջ չեմ մոռանա... Համբուրում եմ... /Օդային համբույր: Լսափողը ցած է դնում: Խփում է ձեռքերը/: Վերջապե՛ս... Վաղը, չէ, երեք օր հետո… ես իմ անկողնում կքնեմ.../Երանությամբ իջեցնում է գլուխը ու զարնվում չոր տախտակին/ Ա՛խ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆԵԿԴՈՏԸ

ՏՂԱՆ - Լսիր, Նունե, երեկ մի այնպիսի համով անեկդոտ լսեցի,ծիծաղից ուշքս գնում էր:

ԱՂՋԻԿԸ- Ի՞նչ անեկդոտ էր:

ՏՂՄՆ - Հիվանդը գնում է պրոֆեսորի մոտ ու հարցնում.

- Պրոֆեսոր, դուք ի՞նչ եք անում, երբ մրսում եք:

- Հազում եմ, - ասում է պրոֆեսորը:

ԱՂՋԻԿԸ– /Ծիծաղում է/ Ի՜նչ լավն է:

ՏՂԱՆ - Սրամիտ է, չէ՞...

ԱՂՋԻԿԸ - Շա՜տ... Բայց քո բախտը բերեց, որ ինձ պատմեցիր:

ՏՂԱՆ - Ինչո՞ւ:

ԱՂՋԻԿԸ - Որովհետև դու կարող էիր պատմել մեկին, որ հումորի զգացողություն չունի…

ՏՂԱՆ - Հետո՞ ինչ…

ԱՂՋԻԿԸ - Հետո այն, որ քո վիճակը, մեղմ ասած, կդառնար ողբերգական:

ՏՂԱՆ - Չէ մի...

ԱՂՋԻԿԸ - Հաստատ: Միշտ էլ ողբերգական է նրանց վիճակը, որոնց հումորից զուրկ մարդիկ են հանդիպում:

ՏՂՄՆ - Դե լա՜վ, ողբերգակա՜ն...

ԱՂՋԻԿԸ - Հավատա... Մարդկանց գիտեմ, որոնց պատմած անեկդոտը վերջինն է եղել:

ՏՂԱՆ - Չափազանցում ես, Նունե:

ԱՂՋԻԿԸ - Հա՞...Այդ դեպքում մի անեկդոտ պատմիր:

ՏՂԱ՛Ն - Ի՞նչ անեկդոտ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ - Որևէ... դա ոչ մի նշանակություն չունի:

ՏՂԱՆ -Անեկդոտ... անեկդոտ...

ԱՂՋԻԿԸ - Դե, թեկուզ պրոֆեսորի հետ կապված այդ նույն անեկդոտը:

ՏՂԱՆ - Լավ: Ուրեմն հիվանդը գնում է պրոֆեսորի մոտ ու հարցնում.

- Պրոֆեսոր, դուք ի՞նչ եք անում, երբ մրսում եք:

- Հազում եմ,— ասում է պրոֆեսորը:

/ Ծիծաղում է/ Չէ, ինչ ուզում ես ասա, շատ ծիծաղելի է:

ԱՂՋԻԿԸ– Ի՞նչն է ծիծաղելի:

ՏՂԱՆ - Ինչպես թե ինչը, անեկդոտը ծիծաղելի չէ՞ր...

ԱՂՋԻԿԸ - Գուցե և ծիծաղելի է, բայց ինչո՞ւ է պրոֆեսորը ասում հազում եմ...

ՏՂԱՆ - Բայց հենց սրամտությունը դրա մեջ է, Նունե...

ԱՂՋԻԿԸ - Գուցե... բայց մի՞թե պրոֆեսորը չէր կարող լուրջ պատասխանել…

ՏՂԱՆ - Բայց այդ դեպքում անեկդոտ չէր ստացվի...

ԱՂՋԻԿԸ - Իսկ նա ինչո՞ւ էր ուզում անեկդոտ սարքել... Մի՞թե կարելի է հիվանդի հետ այդպես թեթևամտորեն վարվել... Մարդ է, գուցե և պատասխանատու աշխատող է, ընտանիք, երեխաներ ունի, մրսել է, խորհրդի կարիք է զգում, պրոֆեսորն ինչո՞ւ է ծաղրում նրան...

ՏՂԱՆ - է՛, Նունե, չի ծաղրում, այլ սրամտում է...

ԱՂՋԻԿԸ - Թող էլի սրամտեր, բայց ասեր, որ մրսածը պետք է տաք պահի իրեն, ասպիրին ընդունի, թեյ խմի հոնի մուրաբայով...

ՏՂԱՆ – Եվ դա կդառնա՞ր սրամտություն...

ԱՂՋԻԿԸ - Գուցե և սրամտություն չդառնար, բայց կլիներ լուրջ պատասխան այն բժշկի համար, որը մեծ Հիպոկրատի երդումն է ընդունել և պարտավորվել է...

ՏՂՄՆ - Ի սեր աստծո, Նունե, բայց դա սոսկ սրամիտ անեկդոտ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ– Իսկ դրա սրամտությունն ինչի՞ մեջ է...

ՏՂԱՆ - Սրամտությունը՞... ի՞նչ սրամտություն, ախ հա, անեկդոտի՞... Լավ, վերջ տանք, հա՞, Նունե...

ԱՂՋԻԿԸ - Չէ, ինչո՞ւ վերջ տանք, գուցե դու ասես, թե դրա ինչն է ծիծաղելի... Եթե միայն այդ անեկդոտը նպատակ չունի վարկաբեկելու մեր պրոֆեսորական ողջ բանակի անձնուրաց...

ՏՂԱՆ- Բավական է, ես եմ ծիծաղելի, ես, որ քեզ անեկդոտ պատմեցի:

ԱՂՋԻԿԸ – Բայց ինչո՞ւ պատմեցիր...

ՏՂԱՆ- Սխալվեցի, սխալվեցի, սա... սա, վերջինը կլինի...

ԱՂՋԻԿԸ - / Ծիծաղում է/ Հանձնվո՞ւմ ես... Տեսա՞ր, թե ինչի կարող է հասցնել հումորից զուրկ մարդը...

ՏՂԱՆ - Հանձնվում եմ, անձնատուր եմ լինում... / Ծիծաղում է/

նույնիսկ մոռացա, որ խաղ է, ճնշումս բարձրացավ...

ԱՂՋԻԿԸ – Այդպե՛ս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՋՔԻ ՕԳՈՒՏԸ

Առավոտ է: Զբոսայգում սպորտային հագուստով վազում է հիմնարկի պետը: Ետ-ետ է նայում: Վազելով նրան է մոտենում աշխատակիցը:

ԱՇԽԱՏԱԿԻՑ – Բ -բարև ձեզ…

ՊԵՏ – Ա՛, բարև-բարև, վազո՞ւմ ես…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Այո, այո…

ՊԵՏ - Երբվանի՞ց…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Ողջ կյանքում վազել եմ

ՊԵՏ - Շա՛տ ես սիրում վազել…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Այո… հատկապես ձեր ետևից…

ՊԵՏ – Ինչքա՞ն ես կարողանում վազել…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Ինչքան ուզեք… թեկուզ աշխարհի ծայրը…

ՊԵՏ – Ա՛յ տղա, կողքիցս գնա, հանկարծ ոտք կգցես ինձ…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Ես ձե՞զ… Ավելի լավ է կոտրվի ոտքս…

ՊԵՏ - Հետո՞, մի ոտքով ո՞նց ես վազելու…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Կվազեմ, կվազեմ…

ՊԵՏ - Կողքիցս վազիր, ասում եմ…

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Չէ, ի՛նչ եք ասում, ինչպես կարելի է:

ՊԵՏ -Իսկ դրա մեջ ի՞նչ կա:

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Չէ, չէ, ես դեռ ինչքա՛ն պետք է ձեր ետևից վազեմ, որ իրավունք ունենամ ձեր կողքից վազելու:

ՊԵՏ - Բա որ այդպես վազում ես, ինչո՞ւ կարգին չես աշխատում, այ տղա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Չէ, չէ, հիմա ամեն ինչ կարգին է, շեֆ, մեր նամակի պատասխանը եկավ, լրացուցիչ ֆոնդեր են եկել... Գործուղումս զուր չանցավ... Պո-պոկեցի ինչքան պե-պետք է... բ-բայց թանկ նստեց...

ՊԵՏ - Ո՞ւմ հաշվին...

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Ի՞նչը ում, շեֆ...

ՊԵՏ - Թանկ նստելը...

ԱՇԽԱՏԱԿԻՑ – Ի-իմ գրպանից տվեցի...

ՊԵՏ - Մեծ գրպան ունես...

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Չէ, չէ, մի քանի հատ մանր-մունր գրպաններ են... Եթե ձեր տեղակալը չխանգարի, ասում եմ, ախր լավ կլինի... Ասելը լավ էլ չէ, բայց միշտ ձեզ բամբասում է... էն օրն էլ... էն օրն էլ ասում էր... թե... թե...

ՊԵՏ - Ի՞նչ...

ԱՇԽԱՏԱԿԻՑ – Հի-մի կհաս-նեմ կա-սեմ... Ասում էր, թե ի-բր... Չեմ հասնում, շեֆ:

ՊԵՏ - Վազիր, վազիր...

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Ասում էր, օ՛ֆ, սիրտս...

ՊԵՏ - Ինչո՞ւ էր ասում... օ՛ֆ... սիրտս...

ԱՇԽԱՏԱԿԻՑ -Չ-չէ, ես եմ... ասում... Օ՛ֆ... սի-սի... ս-սպասեք...

ՊԵՏ - Վազիր, վազիր, ուրեմն բամ...

ԱՇԽԱՏԱԿԻՑ - Օֆ, օֆ, սպասեցեք... բամբ... չէ... ասեմ... ու-ու սիրտս...

/Կանգնում է, հևում ու ընկնում գետնին: Պետը մոտենում է, բռնում զարկերակը, գոհունակորեն շփում ձեռքերը/:

ՊԵՏ - Էս մի զրպարտիչից էլ պրծանք… Ինչ լավ են հնարել այս վազելը… Տեսնես վա՞ղն ով կգա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԵՆՔԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Մի ստենդի վրա նկարված են կամ ամրացված զենքի տեսակներ, նմուշներ, սկսած քարե զենքից, մինչև ատոմային ռումբը և ... հեռախոս: Ստենդը միանգամից չի երևում, ցուցադրվում է էքսպոնատ առ էքսպոնատ: Բացատրություններ է տալիս թանգարանի գիտաշխատողը:

ԳԻՏԱՇԽԱՏՈՂ - Հիմա խնդրեմ անցնենք այս դահլիճը: Մոտեցեք, ավելի մոտեցեք: Այդպե՛ս: Ուշադրությամբ հետևեք իմ ցուցափայտին: Ո՛չ հիմա: Երբ կբարձրացնեմ: Ահա՛... դուք տեսնում եք զենքեր, որոնք օգտագործվել են Հայաստանի տերիտորիայում անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը: Ահա առաջին զենքը: Ո՞վ կարող է ասել, ի՞նչ է սա: Հապա, դու, փոքրի՛կ: Ապրես, քար է: Ճիշտ է, թշնամիներին ոչնչացնելու համար նախամարդը ձեռքով բարձրացնում էր քարը և... և ի՞նչ էր անում: Զգույշ, զգույշ, այո՛, այո, այդպես խփում էր իր հակառակորդի գլխին: Զենքը հետզհետե սկսում է կատարելագործվել: Թշնամին չէր սիրում երբ քարով խփում էին իրեն ու փախչում էր: Ի՞նչ էր հարկավոր անել: Հարկավոր էր քարը հասցնել նրան: Ինչո՞վ հասցնել: Ոչ, ոչ, ես ինքս ինձ եմ հարցնում: Պարսատիկով: Ահա և պարսատիկը: Հաջորդ ստենդների վրա դուք կարող եք տեսնել... իհարկե, նետ ու աղեղ, նի-զակ, կացին, թուր, գեղարդ, Գառնի, Էջմիածին, Զվարթնոց... ինչպե՞ս.... Ո՞վ ասաց... ոչ, գեղարդից հետո կանգ առեք: Ուշադրություն, սկսվում է հրազենի դարը: Ի՞նչ է սա, ապրես, հրացան, ի՞նչ են անում, իհարկե, կրակում են: Իսկ սա, այո, գնդացիր է, սա թնդանոթ է, սա ականանետ է... ինչպես տեսնում եք, գոյություն են ունեցել զենքի բավականին պրիմիտիվ տեսակներ: Փաստորեն պարսատիկից հետո ի՞նչ, այո, զենքը առաջընթաց չի ապրել: Ի՞նչ էր հարկավոր: Հարկավոր էր զենքի ավելի հզոր, այսպես ասած մասսայական բնաջնջման տեսակ: Եվ մարդկային միտքը, թանկագին ընկերներ, զենքի նոր տեսակներ էր նյութում: Դուք տեսնում եք այդ զենքը: Ի՞նչ է սա, ո՞վ կարող է ասել: Ի՞նչ, հեռախո՞ս: Ո՞վ ասաց հեռախոս: Ոչ, թանկագին ընկերներ, սա միայն արտաքնապես է նման հեռախոսի: նչպես որոշ նռնակներ կիտրոնի են նման : Զևով, ինչպես ասում են արվեստի տեսաբանները: Բովանդակությամբ, ընկերներ, սա զենքի այն չարագուշակ տեսակն է, որից սոսկալին անհնար է պատկերացնել: Այս զենքը հնձում է արագորեն, անվրեպ և, ամենակարևորը, անաղմուկ: Վիճակագրական վերջին տվյալներով, դժբախտ պատահարների պարագրաֆով հեռախոսը ավելի շատ մարդկային կյանքեր է խլում, քան ավտովթարները, օդային աղետները, ծովային բախումները և գնացքների խորտակումները միասին վերցրած:

Ըստ որում, ուշադրություն դարձրեք իմ վերջին արտահայտությանը, հավասարապես տուժում են և զենք-հեռախոս ունեցողները, և չունեցողները: Չունեցողները չունենալու, իսկ ունեցողները՝ ունենալու համար: Բառախա՞ղ ստացվեց: Կաշխատեմ մտքերս պարզաբանել

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

առարկայորեն: Դիտեցեք մի փոքրիկ ժապավեն: Ահա, դուք տեսնում եք մի կնոջ, որը հեռախոս ունի և...

/ հայտնվում են երկու դերասանուհիներ/:

ՄԵԿԸ - Բարև, Գոհար ջան, ինչպե՞ս եք, չեք երևում...

ՄՅՈՒՍԸ- Ժամանակ չկա, Քնար ջան, չի ստացվում:

ՄԵԿԸ – Լավ, գոնե զանգ տուր մեկ-մեկ...

ՄՅՈՒՍԸ - Ինչպե՞ս, դուք հեռախո՞ս ունեք...

ՄԵԿԸ - Դե իհարկե, Սարոս անցկացրեց, օդային... դուք չունեք, հա՞ ... դե, ոչինչ, վերցրու մեր համարը, ավտոմատից զանգ տուր: Կներես, շտապում եմ, հեռախոսի վարձը պետք է մուծեմ, ցտեսություն...

ՄՅՈՒՍԸ– Ցտեսություն... օ՜հ, սիրտս, ինչո՞ւ հանկարծ այսպես վատացավ: Հեռախոս Քնարե՞նց: Շուկայում է աշխատում նրա էդ, էդ Սարոն ու օդային գի՞ծ... Իսկ իմ դոցենտ ամուսնուն մերժում են... Այսօր ասում են գիծ չկա, վաղն ասում են համար չկա... սիրտս... ահա քո համարը, ահա, /պատռում, թափում է/: Ես էլ զանգ կտամ, որ դու ուրախանաս, ո՜նց չէ... Ա՜խ, հեռախոսային ցանց, ա՜խ... /թուլացած բռնում է սիրտը/:

ԳԻՏԱՇԽԱՏՈՂ - Ուշադիր նայեք այդ կնոջը: Նա արդեն կործանված է: Նա գնալու է տուն ու թունավորելու է ամուսնու կյանքը, քաղցած է թողնելու երեխաներին, կտրելու է հարևանի լվացքի պարանը և ի վերջո պետք է սիստեմատիկ այցելի նյարդային և սրտի բժիշկներին, որից հետո, ինչպես հայտնի է, այլևս փրկություն չկա:

Բայց միայն նա չէ կործանման դատապարտված, հետևեք հեռախոս ունեցողին:

/Բեմում կրկին հայտնվում է Քնարիկը՝ հեռախոսը ձեռքին/:

ՔՆԱՐԻԿ - /Ուրախ–ուրախ պտտվում է հեռախոսի շուրջը/: Հեռախոս ջան, հեռախո՜ս, ինչ սիրուն ես ու պայծառ, էս ինչ լավն է, էս ինչ լավն է, չորս կողմը լույս համարներ: /Կրկնում է/ :

Իսկ հիմա զանգահարեմ Լիլիկին, թող նախանձից ախորժակը փակվի: Ինչպե՞ս էր համարը: 4-21-61: Հեշտ էլ համար է: Ալո՞: Լիլիկ ջան, ի՞նչ պոլիկլինիկա: Սպասեք, ձեր համարը ո՞րն է՝ 63-57-73՞: Ի՞նչ կապ ունի, լավ, ներեցեք: Նորից հավաքեմ, երևի շփոթեցի: Ալո՞, դա 54-21-61 է՞: Ինչպես թե 49-51-11: Ախր... անջատեցին: Գուցե հեռախոսս սխալ են միացրել: Մի անգամ էլ փորձեմ... /մնում է՝ դեմքին զարմանք ու հետաքրքրություն/ Վա՜յ, մի համար հավաքեցի և

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

արդեն խոսում են: Լսում է/ Այ գետինը մտնեք դուք: Այս ի՞նչ երիտասարդություն է: Երեսս ո՞նց կարմրեց: Ա… անջատեցին: Գուցե Թբիլիսի պատվիրեմ, քեռուս… 07, ալո՞, ի՞նչ միլիցիայի հերթապահություն, ալո, ալո.,, տե՛ր աստված, ըհը 0, ըհը 7, ալո՞, միջքաղաքա յի՞նն է, ո՞չ, հրշեջ պահպանության ջոկա՞տ, հիմարը դուք եք, ի՞նչ կրակ, այ կրակն ընկնի ձեր հեռախոսային ցանցը: Ա՛հ, սիրտս: Մեկ է, մեռնեմ էլ, պիտի զանգահարեմ, 07, ահա, վերջապես… միջքաղաքա յի՞նն է, խնդրում եմ պատվեր ընդունել Թբիլիսի: Ի՞նչ, կընդունեք միայն շտապ պատվեր և այն էլ կստանամ վաղը չէ մյուս օ՞րը: Իսկ ինչի՞ս է պետք վաղը չէ մյուս օրը: Ավելի լավ չէ՞ ավտոբուսով գնամ-գամ: Սի՛րտս: Այս ինչո՞ւ է ցավում: Կյանքումս նման բան չէր եղել: Լավ, ես հիմա Սարոյին զանգ կտամ, թող գա տանի գցի այս… հեռացավը, քանի չեմ խելագարվել: Ո՞րն է համարը, հա, 56-22-52: Ալո՞, շուկա՞ն է, Սարո՞, ի՞նչ շտապօգնություն, ի՞նչ շտապ-օգ-նու-թյո՞ւն, հա, հա, պատվեր… ընդունեք… խնդրում եմ… Թբիլիսի… չէ, չէ, ինձ համար… մեռնում եմ… սը… սը… /թուլացած ընկնում է աթոռին: Հայտնվում է թանգարանի աշխատակիցը/: ԳԻՏԱՇԽԱՏՈՂ -Ահա հեռախոս ունեցողների ճակատագիրը: Դառը, անմխիթար ճակատագիր: Եվ մտածել, որ բոլոր այդ հեռախոս ունեցողները դատապարտված են կործանման… Ու նաև չունեցողները… Եվ հասարակության այդ երկու խավն էլ ո՞ւմ դեմ է բողոքում, ո՞վ կասի, դու, փոքրիկս, այո՛, հեռախոսային ցանցի դիրեկցիայի: Անիծում են բոլոր ունեցող-չունեցողները, ունեցողները՝ ունենալու, իսկ չունեցողներն ինչո՞ւ, ապրես, չունենալու համար:

Եվ այդ անեծքներից ամենասարսափելին դեռ հնչում է իմ ականջին…

- Հեռախոսային գործի ղեկավարներ, թող հեռախոսն անպակաս լինի ձեր տներից: Ամե՛ն:

Հարցեր կա՞ն: Ամեն ինչ պա՞րզ է: Անցնենք հաջորդ սրահը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

ՉԿԱՅԱՑԱԾ ԶԵԿՈՒՅՈՒՄ

ԶԵԿՈՒՅՈՂ - Ընկերներ, հեռուստացույցը, ըստ էության, մտել է մեր ամենահեռավոր գյուղերն անգամ, դարձել է անհրաժեշտություն, սովորություն և կենցաղ: Բայց որքան կենցաղ է դառնում, ընկերներ, այնքան, ըստ էության, մեծանում են պահանջները: Ահա թե ինչու Նորքի բարձունքի վրա, ըստ էության գեղատեսիլ վայրում, անցյալ տարի շահագործման հանձնվեց հեռուստատեսության նոր շենքը, երեք ստուդիաներով: Ճիշտ է, այդ ստուդիաներից ըստ էության միայն մեկն է աշխատում, բայց դա էական չէ: Ճիշտ է, ջուրը շենքի առաջին հարկից դեռ վերև չի բարձրանում, բայց ըստ էության դա էլ էական չէ, որովհետև նրանք, ովքեր դիտում են մեր հաղորդումները, կվկայեն, որ մեր նյութերում, ըստ էության, ջրի պակաս չի զգացվում: Բայց գաղտնիք չէ, ընկերներ, որ Հայաստանի որոշ շրջաններում դեռևս կան գյուղեր, որտեղ ռելյեֆի պատճառով, ըստ էության, չեն հասնում մեր հաղորդումները: Ահա թե ինչու մեր հեռուստատեսության աշտարակի կողքին արդեն սկսել է բարձրանալ մի նոր աշտարակ, որն ավելի բարձր կլինի, քան նշանավոր Էյֆելյան աշտարակը, ըստ էության: Այդ ժամանակ ոչ մի տուն այլևս չի ազատվի մեր հաղորդումներից: Եվ հենց այդ կապակցությամբ էլ, ընկերներ, ես ձեզ ուզում եմ զգուշացնել մի ըստ էության վտանգավոր վտանգից: Հարցն այն է, որ ամեն լավի հետ, հեռուստացույցն, ըստ էության, ունի նաև վատ կողմեր, որոնցից պետք է խուսափել: Այո, հեռուստացույցը խախտում է մեր ավանդական սովորությունները, ընկերներ, և այդ սովորություններից ամենասուրբը՝ հյուրասիրությունը: Փաստե՞ր: Եկեք մի հայացք նետենք այն ըստ էության երանելի ժամանակներին, երբ հեռուստացույց չկար: Պատկերացրեք սովորական մի տուն:

Պատկեր առաջին

Սովորական տուն, սեղան, ռադիո, աթոռներ, պահարան: Հայրը լրագիր է կարդում, մայրը ասեղնագործում է, տղան սեղանի մոտ դաս է պատրաստում:

ԶԵԿՈՒՅՈՂԻ ՁԱՅՆԸ - Ինչպես տեսնում եք, հեռուստացույց չկա: Եվ ահա հյուր է գալիս այդ տունը:

/Հնչում է դռան զանգը: Որդին անմիջապես նետվում է դեպի դուռը, բացում: Ներս է մտնում հյուրը/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՅՈՒՐԸ – Խաղաղությո՛ւն ձեզ…

ՀԱՅՐԸ – Օ՛, Աշոտ ջան, ինչ լավ արեցիր, որ եկար: Հանվիր, հանվիր, Արտակ, աթոռ բեր Աշոտ քեռու համար:

ՀՅՈՒՐԸ - Է, ինչպե՞ս եք, հիշեցի, կարոտեցի, ասացի գնամ մի քիչ զրուցենք:

ԿԻՆԸ - Շատ լավ եք արել, իսկ Սոնային ինչո՞ւ չեք բերել:

ՀՅՈՒՐԸ - Սոնային չգտա: / Ձեռքով ցույց է տալիս/, չորս կողմը կոմպոտի բանկաներ էր շարել, փակել ու կորել էր մեջը:

ԿԻՆԸ - / Ծիծաղելով/ Է՛, մեր գործին վերջ չկա:

ՀԱՅՐԸ - Տիկին Սեդա, ախորժակս բացվեց, սեղան գցիր, խնդրում եմ: Կհավատա՞ս, Աշոտ ջան, աշխատանքից շուտ եմ եկել, բայց ախորժակ չունեի հաց ուտելու: Առանց հյուրի հա՞ց կուտվի: Քեզ աստված ուղարկեց:

ՀՅՈՒՐԸ - Շնորհակալություն: Արտա՞կ, այ տղա, դու էլի էն փոքր Արտակն ես, թե՞ ուրիշ ես:

ԱՐՏԱԿ– Չէ, ուրիշ չեմ…

ՀՅՈՒՐԸ - Բա ես էլ կարծում էի, թե փոքրիկ ես, քեզ համար խաղալիք եմ բերել: Դե, վերցրու, բալիկ ջան:

ԱՐՏԱԿ - Շնորհակալություն, Աշոտ քեռի…

ՀՅՈՒՐԸ– Ապրես, տես ինչ էլ մեծացել է, երևի նույնիսկ արտասանել գիտի: Չէ, ասենք դեռ փոքր է…

ՀԱՅՐԸ - Գիտի, գիտի…

ՀՅՈՒՐԸ - Չեմ կարծում թե իմանա: Հը՞, Արտակ, ոտանավոր գիտե՞ս…

ԱՐՏԱԿ- Գիտեմ…

ՀՅՈՒՐԸ– Ի՛նչ ես ասում, հապա մի արտասանիր…

ԱՐՏԱԿ– Որը՞…

ՀՅՈՒՐԸ - Որը պատահի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԱՐՏԱԿ - Հոկտեմբերիկ եմ ես քաջ,

Միշտ քայլում եմ ձախ ու աջ,

Կարմիր աստղ ճակատիս,

Հավանո՞ւմ եք դուք էլ ինձ:

Ի՞նչ անենք որ պստիկ եմ,

Պստիկ եմ, բայց ճստիկ եմ.

Որ մեծանամ՝ պիտ դառնամ

Վաշտապետի օգնական...

ՀՅՈՒՐԸ – Ա՛յ ապրես, դու գեներալ էլ կդառնաս...

ԿԻՆԸ - /Սեղանին ուտելիքներ դնելով/ Է՛, Արտակը այնքան բան գիտի… հիմիկվա երեխաներին չգիտե՞ք...

ՀԱՅՐԸ - / Լցնելով բաժակները/ Գիտես, որ ես չեմ խմում, Աշոտ ջան, բայց քո գալու կապակցությամբ... Ողջ լինես, ախպերս: Շատ ուրախացրիր ինձ: Հա, ուրեմն ինչ էի պատմելու քեզ:

Անցյալ տարի…

ԶԵԿՈՒՅՈՂԸ - Ու հոսում ու հոսում էր բարեկամների զրույցը, թանկագին ընկերներ, ի՛նչ քաղցր հուշեր ասես չէին պատմում իրար, ինչ եղած-չեղած արկածներ ասես չէին հիշում: Եվ ըստ էության՝ վերջ այդ ամենին, որովհետև սենյակ մտավ հեռուստացույցը:

Դուք տեսնում եք նույն տունը: Ուշադրություն դարձրեք՝ հեռուստացույցը ամենապատվավոր տեղում է և տան բոլոր իրերը ըստ էության հարմարեցված են նրան: Աթոռները դրված են, ինչպես թատրոնում կողք կողքի: Ոչ ոք չի ուզում մեջքով դեպի հեռուստացույցը նստել: Եվ ահա հյուր է գալիս այդ տունը:

Պատկեր երկրորդ

Հայրը, մայրը, որդին իրար կողքի նստած հեռուստացույց են նայում: Հնչում է դռան զանգը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Սեդա, մի տես ո՞վ է...

ՄԱՅՐԸ - Արտակ, բացիր դուռը..,

ԱՐՏԱԿ -Լավ, էլի, ես հեռուստացույց եմ նայում:

ՀԱՅՐԸ- /Բարկացած/ Բա մենք ի՞նչ ենք անում:

ՄԱՅՐԸ -/Բարկացած/ Ըհը, ամեն անգամ ես պետք է բացեմ դուռը... /Դժգոհ բացում է դուռը, ներս է մտնում Աշոտը/:

ՀՅՈՒՐԸ - Խաղաղություն ձեզ...

ՀԱՅՐԸ - /Առանց գլուխը թեքելու/ Ա՜, Աշոտ, արի, արի, հետաքրքիր հաղորդում է, վայրենիների կյանքից...

ՀՅՈՒՐԸ - Աա՜: Է՜, ինչպե՞ս եք, Գևորգ ջան, ի՞նչ կա, ինչ չկա, հիշեցի, կարոտեցի, ասացի...

ՀԱՅՐԸ - Նստիր, նստիր, տես ինչ է անում անիծածը:

ՀՅՈՒՐԸ - Ասացի գնամ մի քիչ...

ԱՐՏԱԿ - Հայրիկ, մի քիչ կամաց խոսեք, էլի, ոչինչ չի լսվում…

ՀՅՈՒՐԸ - Ուրեմն մինչև հիմա վայրենիներ կա՞ն...

ՀԱՅՐԸ – Սու՜ս, վայրենիներ միշտ էլ եղել են... վայ, ես քո հերն եմ անիծել...

ՀՅՈՒՐԸ - Արտակ, իսկ ես քեզ համար խաղալիք եմ բերել...

ԱՐՏԱԿ - Հիմա կուլ կտա... տես, տես...

ՀՅՈՒՐԸ– / Ձեռքին խաղալիքը խաղացնելով/ Դուք ինչպե՞ս եք, Սեդա քույրիկ:

ՄԱՅՐԸ - Ախր նա աչքերը որ պսպղացրեց, ես ասացի... շնորհակալություն, Աշոտ ջան, տեսա՞ր, տեսա՞ր...

ԱՐՏԱԿ - Կամաց խոսեք, էլի...

ՄԱՅՐԸ - Գևորգ, Գևորգ, մի քիչ ետ նստիր, սեղան զցեմ... ոնց որ վերջանում է...

ՀԱՅՐԸ- Ո՜ւֆ, սեղանի ժամանակ գտար, հիմա ֆուտբոլ է սկսվելու…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՅՈՒՐԸ - / Դանդաղ գնում է դեպի դուռը/ Դե, ցտեսություն ձեզ...

ՀԱՅՐԸ - /Մեխանիկորեն/ Ցտեսություն... շան որդի...

ՀՅՈՒՐԸ - Ի՞նչ...

ՀԱՅՐԸ - / Սթափվելով/ Գնո՞ւմ ես, Աշոտ ջան, մնայիր հեռուստացույց նայեինք...

ՀՅՈՒՐԸ - Չէ, գնամ, մեր տանը կնայեմ... մենք էլ դրանից ունենք...

ՀԱՅՐԸ - / ցրված/ Հա՞, դե կբարևես քույրիկիս, ստոր արարածներ...

ՀՅՈՒՐԸ - Շնորհակալություն... Մնաք բարով...

/ Հեռանում է/:

ԶԵԿՈՒՑՈՂԸ - Ահա թե ինչի հասցրեց հեռուստացույցի մուտքը տները: Ահա թե ինչի հասցրեցին հետաքրքիր հաղորդումները ըստ էության: Եվ ահա թե ինչից պետք է խուսափել, թանկագին ընկերներ: Մենք, իհարկե, այդ ուղղությամբ ըստ էության որոշ աշխատանքներ կատարում ենք, պակասեցրել ենք հետաքրքիր հաղորդումների թիվը, նախնադարյան համայնական կինոնկարներ ենք կրկնում ամիսը մեկ անգամ, բայց դեռևս ըստ էության արդյունքի չենք հասել: Եվ ես սարսափով եմ մտածում, թե ինչ կլինի հետո, ինչ վիճակ կստեղծվի մեր տներում, երբ կաշխատեն հեռուստացույցի ոչ թե երկու, այլ տասներկու ալիքները, երբ տանը յուրաքանչյուրն իր համար հեռուստացույց կունենա և որպեսզի մեկը մյուսին չխանգարի, յուրաքանչյուրը կօգտվի իր սեփական ընկալուչներից: Եվ որովհետև մի ալիքով ողբերգություն ցույց կտան, մյուս ալիքով կատակերգություն, իսկ երրորդով՝ ուսումնական հաղորդում, ապա…

Այսինքն եկեք պատկերացնենք այդ նույն ընտանիքի վիճակը այն ժամանակ...

Երրորդ պատկեր

Նստած են հայրը, մայրը, մի մեծ տղա... Ամեն մեկի առաջ մի հեռուստացույց է, գլուխներին ականջակալներ: Ամեն մեկն իր հեռուստացույցն է նայում:

Մեկը ծիծաղում է, մյուսը լաց է լինում, մեկը նստած է հիացած, հափշտակված: Ներս է մանում ծերունի Աշոտը:

ՀՅՈՒՐԸ - Խաղաղությո՛ւն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Տղան իսկույն մի հեռուստացույց է դնում հյուրի առջև և ընկալուչները հագցնում գլխին: Հյուրն էլ է սկսում լաց լինել/

ԶԵԿՈՒՑՈՂ - Ահա հեռուստատեսության ապագան, ըստ էության, ընկերներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐՆԵՐ 21-ՐԴ ԴԱՐԻՑ

ՀԻ՛Ն ՇՈՐ, ՀԻ՛Ն ԽՐՈՒՍՏԱԼ

Բեմում երկու դերասաններ են: Ներս է մտնում երրորդը՝ խուրջինով:

ՀՆԱՀԱՎԱՔ – Հի՛ն շոր, հի՛ն կոշիկ, հի՛ն խրուստալ, պոպոքո՛վ...

ՀԱՐԵՎԱՆ - Սա՞ որ մոլորակից հայտնվեց, հեռացեք, ա՛յ ընկեր:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Օ, ոչ, մի հեռացրեք նրան, խնդրում եմ, հարմար առիթ է: Ես մի երկու կտոր այստեղ ունեմ: /Բերում է/ Ընկեր ջան, այս երկու կտոր բյուրեղապակուն ի՞նչ կտաք:

ՀՆԱՀԱՎԱՔ-Իսկ հին շոր չունե՞ք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Չէ, ցավոք սրտի:

ՀՆԱՀԱՎԱՔ - Հին կոշի՞կ էլ չունեք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Դժբախտաբար միայն այս բյուրեղապակին է...

ՀՆԱՀԱՎԱՔ - Այսպես էլ պատիժ կլինի՞: Ա՛յ ընկերներ, ես հո չե՞մ կարող միայն խրուստալով պլանս կատարել: Հին շոր ու կոշիկ բերեք...

ՀԱՐԵՎԱՆ - / Խեղճացած/ Դե, որ չկա, որտեղի՞ց տանք;

ՀՆԱՀԱՎԱՔ - Չկա, բա ես ի՞նչ անեմ: Ուր գնում եմ՝ բյուրեղապակի են առաջարկում: Իսկ ինձանից հիմնարկը չի ընդունում: Էլ տեղ չկա:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Լավ, բայց տեսեք ինչ բյուրեղապակի է, սրանց ի՞նչ կտաք:

ՀՆԱՀԱՎԱՔ - Քսան հատ պոպոք:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - /Ապշած/ Ի՞նչ...

ՀՆԱՀԱՎԱՔ - Քսան հատ ընկույզ:

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -Իսկ մեր ժամանակ, մի քանի տարի առաջ, դրանք երկու հարյուր ռուբլի արժեին, ոչ պակաս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՆԱՀԱՎԱՔ – Ձե՛ր ժամանակ... Հենց ձեր ժամանակն էր մեղավոր, որ հիմա այս օրն ենք ընկել: Մարդիկ խեղդվում են խրուստալի մեջ, տուն կա, որ մտնում ես, խրուստալից բացի ուրիշ բան չի երևում: Դաշնամուրի վրա խրուստալներ են, հեռուստացույցի վրա խրուստալներ են, սառնարանի վրա խրուստալներ են, պահարաններում, պահարանների վրա ու պահարանների տակ, հատակի վրա ու առաստաղի տակ, լողասենյակում, միջանցքում, խոհանոցում ու, ներեցեք, զուգարանի առաստաղին, խրուստալ, խրուստալ, խրուստալ...

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Այո, մեր ժամանակ կանանցով հավաքվում էինք հաճախ ու ասում՝ եկեք գնանք տիկին Սիրուշի խրուստալները տեսնելու... Հետո այնտեղից էլ տիկին Թագուշի խրուստալներին այցի գնանք...

ՀՆԱՀԱՎԱՔ -Այո, ձեր ժամանակ մարդիկ քաղցած էին մնում, թե ինչ է՝ խրուստալի գծով հարևանից ետ չմնան, բարեկամից առաջ անցնեն, ծանոթին զարմացնեն: Մի տարվա աշխատավարձով խրուստալի մի ջահ էին առնում ու կախում երկու մետրանոց տան ճակատին՝ գնացող եկողի ճակատին էր կպչում զնգզնգալով...

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Այո, ի՛նչ բյուրեղապակիներ կային...

ՀՆԱՀԱՎԱՔ –Կայ՛ին, քսան տարի է անցել այդ, այդ խրուստալացավից, քսան տարի խրուստալ եմ ունեցել, բայց հիմա, երբ փոխում եմ պոպոքով, հարցնում եմ, թե սա ի՞նչ է, թե խրուստալ է: Լավ, խրուստալ է, բայց ի՞նչ է, ինչի՞ համար է, չեն իմանում: Խրուստալ է, ասում են:

ՀԱՐԵՎԱՆ - Իսկ ձեր ինչի՞ն է պետք իմանալը, հո նորից չեք վաճառելու:

ՀՆԱՀԱՎԱՔ - Չէ, ջանըմ, առնողն ո՞վ է: Տանում ենք ջարդում ու նորից հանձնում գործարաններին, որ սովորական թեյի բաժակներ պատրաստեն: Ուրիշ մոլորակներից բացի, մեր մոլորակից էլ շատ պատվերներ կան: Թեյի բաժակի հարցում մի քիչ դժվար է…

ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Լավ, գոնե երեսուն ընկույզ տվեք... ախր չեխական են…

ՀՆԱՀԱՎԱՔ - Տեղական էլ լինեին, ավել չէի կարող տալ: Չկա, քուր ջան, այ խնդրեմ, հին կոշիկ բեր, տամ, հին շոր բեր, տամ… / հարևանին/ Քո այդ կոշիկները հին չե՞ն, հիսուն պոպոք կտամ:

ՀԱՐԵՎԱՆ – Ի՛նչ եք ասում, երեկ եմ գնել, մեր «Մասիս» ֆիրմայի արտադրանքն է:

ՀՆԱՀԱՎԱՔ - Հա՞, աչքիս հին երևացին: Դե լավ, մնաք բարով, պլանս մնաց... Հի՛ն շոր, հի՛ն կոշիկ, հի՛ն խրուստալ, պոպոքով...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/ հեռանում է/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՉՆԶԻՑ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ

Բեմը ներկայացնում է իրար կից պատշգամբներ: Արանքում, ցածրիկ միջնապատի վրա դրված է շախմատի տախտակը: Իրար հետ շախմատ են խաղում Արտակն ու Գոհարիկը: Խաղում են դանդաղ, մտածելով:

ԳՈՀԱՐԻԿ - Շախ:

ԱՐՏԱԿ - /կատարում է քայլը/ Այստեղ...

ԳՈՀԱՐԻԿ - Նորից շախ:

ԱՐՏԱԿ - / Նայում է Գոհարիկին ու նորից կատարում իր քայլը/ Այստեղ...

ԳՈՀԱՐԻԿ - /Ոգևորության մեջ/ Էլի շախ...

ԱՐՏԱԿ - Ահա, դե հիմա քեզ շախ ու մատ:

ԳՈՀԱՐԻԿ - Ինչպե՞ս թե մատ: Առաջինը ես շախ տվեցի:

ԱՐՏԱԿ - Հա, բայց տեսնո՞ւմ ես, հենց որ ես թագավորս շարժեցի, քո թագավորը շախի տակ ընկավ և մատ եղավ:

ԳՈՀԱՐԻԿ- Չէ, խաբեցիր... /Լաց է լինում/:

ԱՐՏԱԿ - էհ, քեզ հետ չարժի խաղալ: Տզզանի մեկն ես:

ԳՈՀԱՐԻԿ - /Լաց լինելով/ Տզզանը դու ես...

ԱՐՏԱԿ - Հենց դու ես, թիթիզ... / Քաշում է մազը/:

ԳՈՀԱՐԻԿ - Վայ, մամ, Արտակն ինձ ասում է թիթիզ: Մամա... ինձ ծեծեց... /Աղջկա թիկունքում հայտնվում է մայրը՝ տիկին Փեփրոնեն/:

ՓԵՓՐՈՆԵ - Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես լաց լինում...

ԳՈՀԱՐԻԿ- Արտակն ինձ ծեծեց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՓԵՓՐՈՆԵ - Արտա՞կը: Իսկ դու ի՞նչ գործ ունես նրա հետ, քանի՞ անգամ ասել եմ, այդ անդաստիարակի հետ չխաղաս... /Արտակի թիկունքում հայտնվում է մայրը՝ տիկին Սաթիկը/:

ՍԱԹԻԿ - Տիկին Փեփրո՞ն... ինչպե՞ս չես ամաչում: Մեր Արտա՞կն է անդաստիարակ, իսկ քո աղջիկը դաստիարակված է, հա՞...

ՓԵՓՐՈՆԵ - Իհարկե, դաստիարակված է, մի քո երեխային էլ նայիր, իմին էլ:

ԱԱԹԻԿ -Նայում եմ, նայում, իսկը քեզ է քաշել... սուտասան է և կռվարար...

ՓԵՓՐՈՆԵ - Ո՞վ է սուտասան, ո՞վ է սուտասան, սուտասանը դուք եք, որ տան դուռը փակում եք, հյուրերը գալիս, զանգը տալիս են, չեք բացում: Սուտասանը հենց դուք եք:

ԱԱԹԻԿ - Ձեզ նման՝ հիմնարկի հաշվին տունը չենք վերանորոգում...

ՓԵՓՐՈՆԵ - Ծը, ծը, ծը, ի՛նչ ազնիվն եք... էդ ո՞ւմ մեքենայով ես շուկա գնում... ամուսնուդ հիմնարկինը չէ՞:

ԱԱԹԻԿ - Ամուսնուս հետ գործ չունես, հասկացա՞ր... իմ ամուսինը քո ամուսնու թայը չէ... Իմ ամուսինը քո ամուսնու նման ամբողջ գիշեր գրամեքենան թխկթխկացնելով զրպարտագրեր չի գրում...

ՓԵՓՐՈՆԵ - Իհարկե, տանը լինո՞ւմ է, որ գրի... ռեստորանների մշտական հաճախորդ է...

ՍԱԹԻԿ - Իբր թե քոնը որ տանն է լինում, մա՞րդ է...

ՓԵՓՐՈՆԵ - Էդ թույլ տվեք ինձ իմանալ...

/Ներս է մտնում Գոհարիկի հայրը՝ Առաքելը/:

ԱՌԱՔԵԼ - Սա՞ ինչ աղմուկ է, ինչ է պատահել, Փեփրոն:

ՓԵՓՐՈՆԵ - Չգիտե՞ս ինչ է պատահել, էս տիկինը նախանձից պայթում է, որ մենք կանք, ապրում ենք... ոնց որ իրենց հաշվին ենք ապրում...

ՍԱԹԻԿ - Դե, դե, լեզուդ քեզ պահիր... ես էլ քո ամուսնուց վախեցա, էլի:

ԱՌԱՔԵԼ - Ինչպե՞ս չեք ամաչում, տիկին Սաթիկ, դա ի՞նչ խոսակցության ձև է...

ՍԱԹԻԿ - Թող քո կնիկը ամաչի... որ օրը մի անգամ մազերը ներկում է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՓԵՓՐՈՆԵ - Մազ ունեմ՝ ներկում եմ... քեզ նման պարիկ չեմ դնում քաչալ գլխիս...

ԱՌԱՔԵԼ - Փեփրոն, Փեփրոն, ձայնդ, անմիջապես... տուն գնա, քեզ ասում եմ տուն գնա... /Հայտնվում է Արտակի հայրը՝ Բարսեղը/:

ԲԱՐՍԵՂ - Էդ ո՞ւմ գլուխն է քաչալ... Բավական չի՞... Ասում եմ՝ բավական չի՞. ... այ երկրաշարժ լիներ էն օրը, որ մենք էս տունը ստացանք... Ես կքանդեմ էս պատշգամբը, բավական է, ասում եմ, բավական է... Կնստեմ, կգրեմ... Գողեր և ավազակներ միաժամանակ...

ԱՌԱՔԵԼ – Տո-տո-տո-տո... ո՞վ է ավազակ, ավազակի ձայն եմ լսում...

ՓԵՓՐՈՆԵ –Ամա՛ն, մարդ, գնանք, գործ չունենք դրանց հետ...

ՍԱԹԻԿ - Խելքդ դրա հետ մի դիր, այ մարդ...

ԲԱՐՍԵՂ - Բավական չի՞... ասում եմ, բավական չի՞... Կտամ կսպանեմ ու կպրծնեմ... Դուք դիտեք, որ ես գիժ եմ: Բավական չի՞: Բերե՞մ տեսնեք իմ գժի թուղթը...

ԱՌԱՔԵԼ - Չէ, չէ, այ մարդ, չի՞ երևում, ինչ է...

ՓԵՓՐՈՆԵ - Հավատում ենք, հավատում ենք...

ԲԱՐՍԵՂ - Թե չէ, եսի՛մ...

/Աղմուկը շարունակվում է, լսվում են կռվի պատառիկներ «Դու ես», «Դու ես» ձայներ: Հետո մեղմանում է վեճը, բայց դեռ լսվում է: Մի անկյունում կանգնած են Գոհարիկն ու Արտակը/:

ԳՈՀԱՐԻԿ - Արտակ, չգնա՞նք բակ խաղալու:

ԱՐՏԱԿ— Հա՞, գնանք, Վահանին էլ կանչենք ու տապկնոցի խաղանք: Չէ՞:

ԳՈՀԱՐԻԿ - Ըհը...

ԱՐՏԱԿ - Լսիր, իսկ էս ինչո՞ւ են մեր հայրիկներն ու մայրիկները բղավում...

ԳՈՀԱՐԻԿ - Ես ի՞նչ իմանամ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԶՐՈՒՅՑ ԸՆԴՈՒՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունարան: Երևում է առանձնասենյակի դուռը: Վրան գրված է. «Քննիչ»: Այդ դռանը նայելով զրուցում են տարեց մի մարդ և մի երիտասարդ:

ՏԱՐԵՑ -Ազատ ջան, ասում ես լավ ես ճանաչում, հա՞:

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ասացի, այո՛, քեռի, ինչո՞ւ չես հավատում:

ՏԱՐԵՑ - Հավատում եմ, հավատում եմ: Մի բարկանա: Իսկ ինքը քեզ կճանաչի՞ :

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Իհարկե, մանկության ընկեր է:

ՏԱՐԵՑ – Է՛, էնքան մանկության ընկերներ կան, որ հետո չեն ճանաչում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ասում եմ՝ կճանաչի:

ՏԱՐԵՑ - Դե, ապրես, ապրես, քրոջ որդի, էս մի նեղությունից էլ որ ազատվեմ, էլ ինձ մահ չկա:

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Դատարկ բան է, քեռի: Քանի անգամ ասեմ՝ հետը խոսել էլ չարժե, հարցն ինքնըստինքյան պարզ է և արդարացիորեն կլուծվի:

ՏԱՐԵՑ - Առանց խոսելո՞ւ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Իհարկե:

ՏԱՐԵՑ - Լսիր, քրոջ որդի, դու քո ասածին հավատո՞ւմ ես: Հիմա առանց խոսելու հա՞րց կլուծվի:

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ուրեմն բոլոր հարցերը քո այդ խոսելո՞վ են լուծվում:

ՏԱՐԵՑ - Բա իհարկե:

ԵՐԻՏԱՍԱՐԴ – Է՛...

ՏԱՐԵՑ - Դե լավ, լավ, մի նեղանա, մտիր, Ազատ ջան, բայց հենց սկզբից հասկացրու, որ հոգու խաթեր չի անելու: Ասա «Մենք էլ մարդ ենք, էլի», կամ ասա՝ «Ժամը քանիսի՞ն գամ», ու հետն էլ աչքով արա: Որ թիվն ասաց, այնքան էլ բերենք, պրծնենք:

ԵՐԻՏԱՍԱՐԴ -Ինչի՞ց պրծնես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՏԱՐԵՑ -Դե էս պատմությունից, էլի... .

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ես կխելագարվեմ: Լսիր, այ քեռի, ախր ի՞նչ է պատահել: Ինչ որ պատմեցիր, դա չէ՞ :

ՏԱՐԵՑ - Դա է, բա ի՞նչ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Հո ուրիշ բան չի՞ եղել;

ՏԱՐԵՑ - Էլ դրանից ավել ի՞նչ պետք է լիներ...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ուրեմն հարևանիդ տղաները կռվել են, մեկը դանակով փորձել է խփել մյուսին, դու բռնել ես դրան, դանակը խլել ես ձեռքից ու մի ապտակ ես հասցրել, չէ՞ ...

ՏԱՐԵՑ - Ձեռքս չորանար, չխփեի...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Շատ էլ լավ ես արել, որ խփել ես...

ՏԱՐԵՑ - Էդ դու ես ասում, մի տես քննիչն ինչ կասի...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ի՞նչ կասի... ի՞նչ պիտի ասի...

ՏԱՐԵՑ - /Տնքում է/ Կասի խուլիգանություն ես արել ու այսինչ հոդվածով պիտի նստես... Բա որ ես նստեմ, քեռակինդ ի՞նչ անի, պառկի՞...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ախր ինչո՞ւ պիտի նստես...

ՏԱՐԵՑ - Բա ուրիշները ինչո՞ւ են նստում...

ԵՐԻՏԱՍԱՐԴ – Տե՛ր աստված...

ՏԱՐԵՑ - Բա տեսնո՞ւմ ես, որ աստված ես կանչում...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Բա ի՞նչ անեմ, ախր դու վկա ես, վկա, վկա, հասկանո՞ւմ ես...

ՏԱՐԵՑ - Բոլորին էլ սկզբից որպես վկա են կանչում, հետո նստեցնում են, ես չգիտե՞մ... Մինչև չխոսես...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Էհ...դե լավ, գնացի... /վճռական քայլերով մոտենում է դռանը/:

ՏԱՐԵՑ - Չմոռանաս, աչքով կանես, արևիդ մեռնեմ... կամ ասա «Մենք էլ մարդ ենք», չմոռանաս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Երիտասարդը ներս է մտնում: Քեռին անհանգիստ քայլում է ընդունարանում: Կանգ է առնում դռան մոտ, փորձում է նայել բանալու անցքից, ականջը սեղմում է փափուկ դռանը: Ոչինչ չի լսվում: Գրպանից դրամ է հանում, ուզում է հաշվել, հետո վախեցած գրպանն է դնում):

ԵՐԻՏԱՍԱՐԴ - / Դուրս գալով, ժպտալով/ Ըհը, տեսա՞ր, դե հիմա հանգիստ գնա...

ՏԱՐԵՑ - Ուրեմն...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ամեն ինչ լավ է, քեռի... Ասում էի, չէ՞...

ՏԱՐԵՑ - Վայ քեռին քո արևին մեռնի... Շատ, շատ շնորհակալ եմ, Ազատ ջան... Բա ես կարգը չգիտե՞մ... Ինչքա՞ն ուզեց...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ինչը՞ ինչքան...

ՏԱՐԵՑ - Ասում եմ, ինչքա՞ն փող ուզեց...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ի՞նչ փող, ա՛յ մարդ, ասաց՝ դեպքին լավ ծանոթ է, քեռիդ շատ ճիշտ է վարվել, թող հանգիստ, ազատ գնա իր գործին...

ՏԱՐԵՑ - Ու փող չուզե՞ց...

ԵՐԻՏԱՍԱՐԴ - Չէ, այ մարդ, ի՞նչ փող...

ՏԱՐԵՑ— Տունս քանդվեց... ,

/Բռնում է գլուխը/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՈՂԸ՝ ԳՈՂԻՑ

Կատակերգություն մեկ գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ՝
ԳՈՂ
ՏԱՆՏԵՐ
ՔՆՆԻՉ

Միլիցիայի քննիչի առանձնասենյակը: Գրասեղանի ետևում նստած է միլիցիայի քննիչը: Նրա առջև նստած է գողը:

ՔՆՆԻՉ - Լսեք, Վաղինակ, նույնը Վաղո, նույնը Զուբ, նույնը Դարդոտ, նույնը Աղվես, նույնը... և այլն: Խոստովանո՞ւմ եք, որ սույն թվականի հունիսի վեցին, ցերեկվա ժամը 12-ի մոտերքում մտել եք քաղ. Սեդրակ Սահակյանի բնակարանը և կատարել գողություն:

ԳՈՂԸ - Քաղաքացի քննիչ, բա էս լեն ու բոլ աշխարհում մարդ գողություն կանի՞ :

ՔՆՆԻՉ - Դուք ինձ հարցեր մի տվեք,պատասխանեք՝ արե՞լ եք, թե ոչ:

ԳՈՂԸ - Քաղաքացի քննիչ, որ ասեմ արել եմ, կհավատա՞ս:

ՔՆՆԻՉ - Ուրեմն չե՞ք արել:

ԳՈՂԸ - Քաղաքացի քննիչ, ախր ինչի՞ պիտի անեմ: Դու կանեի՞ր:

ՔՆՆԻՉ - /Բարկանալով/ Դե, դե, ձեզ հիմարի տեղ մի դրեք: Մենք ձեր կենսագրությունը անգիր գիտենք:

ԳՈՂԸ - Որտեղի՞ց գիտեք, ոչ մի գրքում գրված չի, իմ կենսագրությունը համեստ կենսագրություն է:

ՔՆՆԻՉ – Շա՛տ համեստ է: Երկու անգամ բռնվե՞լ եք գողության մեջ:

ԳՈՂԸ - Բռնվել եմ:

ՔՆՆԻՉ - Ներե՞լ են, ժամկետից շուտ բա՞ց են թողել:

ԳՈՂԸ - Բաց են թողել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՔՆՆԻՉ - Բա չե՞ք ամաչում, որ երրորդ անգամ…

ԳՈՂԸ - Քաղաքացի քննիչ, օրինակ, լավությունն ինչի՞ ես երեսովս տալիս: Կներես, բայց սարքեցիր «Տժվժիկը»:

ՔՆՆԻՉ – Ա՛խ, տժվժիկը, տժվժիկը դուք դեռ հետո կտեսնեք: Ձեր համառությունն ավելորդ է, զուր ջանք: Իմացեք, որ վերոհիշյալ տան դռան բռնակի, գրասեղանի ապակու և չինական տուփի վրա հայտնաբերված են մատնահետքեր, որոնք ըստ դակտիլոսկոպիկ հետազոտության տվյալների համապատասխանում են ձեր մատների հետքերին:

ԳՈՂԸ – Սո՛ւտ է: /Բարկացած/ Հայ-հո՛ւյ, մատների հետքեր: Մատների հետքեր ո՞րտեղից գտաք, երբ ես ձեռնոցով եմ աշխատել: Սուտ է:

ՔՆՆԻՉ - /Հաղթական/ Աա՛, բռնվեցիք, աղավնյակս:

ԳՈՂԸ - /Շփոթված/ Ես… բայց ախր… սակայն… քաղաքացի քննիչ…

ՔՆՆԻՉ - Որտե՞ղ եք թաքցրել գողացված ապրանքը, ասացեք, արագ, մենք տեղը գիտենք, բայց լավ կլինի, եթե դուք ասեք: Դա կմեղմացնի ձեր պատիժը: Շուտ, շո՛ւտ…

ԳՈՂԸ - Լավ, ինչ եղավ, եղավ: Խոստովանում եմ: Ներքնահարկում, հատակի երրորդ ու չորրորդ տախտակների տակ:

ՔՆՆԻՉ - /Վերցնում է լսափողը/ Սրապ, անմիջապես մեղադրյալի հետ մեկնեք նրա տուն, տեղազննություն կատարեք և կազմեք համապատասխան արձանագրություն: Ներքնահարկի տախտակների տակ իրեր կան, վերցրեք, բերեք:

ԳՈՂԸ - Քաղաքացի քննիչ, ասացեք երրորդ ու չորրորդ տախտակների տակ, թող մյուս տախտակներին ձեռք չտան, այնտեղ ուրիշ ապրանքներ են, չխառնվեն:

ՔՆՆԻՉ - Գնացեք, գնացեք:

ԳՈՂԸ -Ո՞նց թե գնացեք, բա որ տերերը մի օր գան ուզեն… դու ըլնես, ի՞նչ կանես… /Դուրս է գնում/:

ՔՆՆԻՉ - Վերցնում է լսափողը/ Ընկեր Սեդրակ Սահակյանի բնակարա՞նն է: Բարև ձեզ, ընկեր Սեդրակ Սահակյան: Քննիչն է: Այո, այո՛, կարող եք ինձ շնորհավորել, ինչպես նաև՝ ձեզ: Գողը բռնված է: Բավականին չարչարեց ինձ, բայց դե ես միայն այդպիսի թռչնակներ չեմ տեսել, ի վերջո խաչաձև հարցաքննությանը չդիմացավ, ամեն ինչ խոստովանեց: Ի՞նչ, դուք ձեր կորցրածն արդեն գտե՞լ եք: Ինչպե՞ս թե՝ ես եմ գտել: Հիմա իրերը կբերեն: Ոչինչ չեմ

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

հասկանում: Եկեք, եկեք այստեղ, պարզենք: /Ապշած ետ ու առաջ է քայլում սենյակում: Ուսերը բարձրացնելով և օրորելով գլուխը/:

Ա՛յ քեզ բան: Այս գողը գո՞ղ է, թե ապուշ է: Բայց գուցե այդ տանտե՞րն է ապուշ: Առաջին անգամ է ինձ նման դեպք հանդիպում: Այսպես, եկեք սառը վերլուծենք. կատարվել է գողություն: Գողը բռնված է: Գողը խոստովանում է: Գողացված ապրանքները կան: Կողոպտված տանտերը հայտնում է, որ ինքը կողոպտված չէ: Ուրեմն ի՞նչ: Ուրեմն էլ ի՞նչ գող, էլ ի՞նչ գողացված ապրանք: Խելագարվել կարելի է: Սպասեք, սպասեք, եկեք մանրամասն վերլուծենք, ուրեմն այսպես, կատարվել է գողություն, գողը բռնված է...

Պատկեր

Ներս է մտնում գողը՝ մի մեծ ճամպրուկով:

ԳՈՂԸ - Բերեցի, քաղաքացի քննիչ, բացե՞մ: Հա, բայց արձանագրի, որ ես բերեցի:

ՔՆՆԻՉ - / Հեգնանքով/ Իսկ ձե՞զ ով բերեց:

ԳՈՂԸ - Քաղաքացի միլիցիոներ Սրապը:

ՔՆՆԻՉ - Դա է՞լ արձանագրենք: / Նայում է բաց ճամպրուկի ներսը/ Վահ, բայց սա հո իսկական հարստություն է:

ԳՈՂԸ - /Ամաչելով/ Ես մանր-մունր գործեր չեմ սիրում: Լավ բաներ են, չէ՞:

ՔՆՆԻՉ - /Ձեռքին պտտեցնելով փայլուն մատանիները, ժամացույցները, ապարանջանները/ Պահ, պահ, ի՜նչ նուրբ աշխատանք, ինչպիսի երանգներ...

ԳՈՂԸ - Դե տեսնո՞ւմ ես, որ իմ տեղը դու լինեիր, չէի՞ր տանի:

ՔՆՆԻՉ - /Նեղացած/ Վերջ տուր, ես ոչ մի դեպքում չէի կարող այդպիսի բան անել, հիմար, հասկացա՞ր:

ԳՈՂԸ - Լավ, չես կարող, չես կարող, ինչի՞ ես վիրավորում, ով ինչ կարող է, էն պետք է անի:

ՔՆՆԻՉ - Մանրամասն պատմեք, թե ինչպես է եղել դեպքը: Որտեղի՞ց իմացաք, որ քաղ. Սեդրակ Սահակյանի տանը այսպիսի թանկարժեք իրեր կան:

ԳՈՂԸ - Սեդրակ Սահակյանը պահեստապետ է:

ՔՆՆԻՉ - Հետո՞ ինչ: Բայց դուք տունն եք մտել, ոչ թե պահեստը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՈՂԸ - Սակայն ի՞նչ տարբերություն: Պահեստի դուռը ղալաթ է արել նրա տան դռան մոտ:

ՔՆՆԻՉ - Ինչո՞ւ, ի՞նչ դուռ էր:

ԳՈՂԸ - Ձեր հարցին պատասխանում եմ, կրկնակի երկաթե դռներ են, մի հատ էլ կաղնեփայտե: Բոլորը միասին վերցրած տասնութ հատ կողպեք կա դրանց վրա, երկու շղթա և երեք հաստ երկաթ, որ պտտվելով ետ ու առաջ են գնում: Կողպեքներից հինգը անգլիական տիպի են, յոթը հայրենական, չորսը գյուղական «ղֆիլ» տիպի, մեկը ֆրանսիական... դե հիմա դու ասա, քաղաքացի քննիչ, եթե դու շատ հարուստ չես և հարստությունդ էլ գողացած չէ, ին-չի՞ պիտի դուռդ դարձնես կողպեքի ցուցահանդես;

ՔՆՆԻՉ - Ուրեմն քաղ.Սեդրակ Սահակյանը գո՞ղ է:

ԳՈՂԸ - Պահեստապետ է: Ախր չեն հասկանում է՛, քաղաքացի քննիչ, մենք էլ մարդ ենք չէ , էդպիսի դուռ որ տեսնես, ո՞նց չմտնես: Ձեռքերս դողում էին:

ՔՆՆԻՉ - Բայց դուք թվեցիք ընդամենը տասնյոթ կողպեք, իսկ տասնութերորդը՞ ...

ԳՈՂԸ - Տասնութերորդը էն կողպեքներից է, որ վրան օտար լեզվով տառեր են գրված...

ՔՆՆԻՉ - Եվ ի՞նչ խոսքով էր բացվում:

ԳՈՂԸ - /Ամաչելով/ Չգիտեմ: Ախր ես օտար լեզու չեմ անցել: Չորրորդ դասարանի կրթություն ունեմ:

ՔՆՆԻՉ - Բա ինչպե՞ս բացեցիր:

ԳՈՂԸ - Չբացեցի, քաղաքացի քննիչ:

ՔՆՆԻՉ - Բա ինչպե՞ս ներս մտար:

ԳՈՂԸ - Պատուհանից, քաղաքացի քննիչ:

ՔՆՆԻՉ –Ա՛յ մարդ /ջղայնությունից չգիտի ինչ անել/... Բա որ պատուհանից ես մտել, ի՞նչ ես կես ժամ գլուխս տանում դուռը նկարագրելով:

ԳՈՂԸ - Քաղաքացի քննիչ, ախր դու խնդրեցիր, որ պատմեմ: Հիշո՞ւմ ես, ասացիր ինչո՞ւ, ի՞նչ դուռ էր:

ՔՆՆԻՉ - Լավ, լավ, թյո՛ւ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Ներս է մտնում Սեդրակ Սահակյանը/:

ՏԱՆՏԵՐ - /Կարծելով, թե քննիչը փոշտացել է/ Առողջություն...Բարև ձեզ /սեղմում է քննիչի ձեռքը/, Սեդրակ Սահակյան: Բարև ձեզ /սեղմում է գողի ձեռքը/, Սեդրակ Սահակյան:

ՔՆՆԻՉ - Նստեք, ընկեր Սահակյան: Ահա գողը:

ՏԱՆՏԵՐ – Շա՛տ ուրախ եմ, մենք արդեն ծանոթացանք: Այսինքն՝ նորից ծանոթանանք, Սեդրակ Սահակյան:

ՔՆՆԻՉ - Ահա և ձեր իրերը, ընկեր Սահակյան: Պատկերացնում եմ, թե որքան եք վշտացել, երբ իմացել եք՝ որ գողացված են:

ՏԱՆՏԵՐ - Ի՞նչ իրեր: Սրա՞նք /նայում է, ուզում է ձեռքը մեկնել, զսպում է: Բայց օրորվում է հուսահատությունից/ Սը-սը-րանք ի՞նչ իրեր են: Ի՜նչ լավ իրեր են:

ՔՆՆԻՉ - Հրաշալի իրեր են: / Ուրախ/ Ձեր ապրանքներն են, ընկեր Սահակյան, և նորից կվերադառնան իրենց օրինական տիրոջ մոտ: Գողն ամեն ինչ խոստովանեց:

ԳՈՂԸ - Դու լինեիր, չէի՞ր խոստովանի:

ՏԱՆՏԵՐ – Սը-սպասեցեք, բը-բայց սա թյուրիմացություն է /աչքը չհեռացնելով զարդերից/ Սը-սըրանք իմ ապրանքները չեն:

ՔՆՆԻՉ - Ինչպե՞ս թե: Սեդրակ Սահակյանը դուք չե՞ք:

ՏԱՆՏԵՐ - Ես եմ:

ՔՆՆԻՉ - Ըհը, տեսնո՞ւմ եք, այ, ճամպրուկի վրա գրված է Ս. Ս: Սեդրակ Սահակյան:

ՏԱՆՏԵՐ - Իսկ ինչո՞ւ Սեդրակ Սահակյան: /Բարկանալով/: Ինչո՞ւ անպայման Սեդրակ Սահակյան և ոչ թե ասենք Սերոբ Սարգսյան, Սիմոն Սիմոնյան, Սուրեն Գրիգորյան,Վարդան Բալայան:

ՔՆՆԻՉ -Սպասեցեք, լավ, ուրեմն սրանք ձեր իրերը չե՞ն:

ՏԱՆՏԵՐ – Ասացի՝ ոչ:

ԳՈՂԸ - Վա՞յ, ուրեմն ես խաբո՞ւմ եմ: Ուրեմն ես քո տնից չեմ տարե՞լ:

ՏԱՆՏԵՐ – Ոչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՈՂԸ - Ո՞նց թե, կողպեքներով տունը քո տունը չի՞, պատուհանից որ ներս ես մտնում խոհանոց…

ՏԱՆՏԵՐ - Ես երբեք պատուհանից ներս չեմ մտնում:

ԳՈՂԸ - Լավ, լավ, ես մտնում եմ: Հետո միջանցքով որ գնում ես՝ աջ կողմը ճաշասենյակն է, չէ՞, իսկ ձախում՝ ննջարանը: Այդ ննջարանից էլ մի մուտք չկա՞ ղեպի մյուս ննջարանը: Հը՞: Իսկ էնտեղ ֆիննական պահարանի մեջ, սպիտակեղենի տակ մի ուրիշ փոքրիկ դարակ չկա՞, որտեղ էլ հենց դրված էր այս ոսկեղենը և յոթ հազար ռուբլի, նոր գումարով: Ասում է՝ չե՛ս տարել, մեռա մինչև գտա, իսկ սա ասում է՝ չե՛ս տարել:

ՔՆՆԻՉ - Ի՞նչ կպատասխանեք, ընկեր Սահակյան:

ՏԱՆՏԵՐ - Այս քաղաքացին կամ գիժ է, կամ՝ խաբեբա:

ԳՈՂԸ - Ե՞ս, խաբեբա՞,գիտե՞ս ինչ, քեզ կարգին պահի. քննիչի սենյակում ես, թե չէ…

ՔՆՆԻՉ - Հանգստացեք, հանգստացեք, Վաղինակ, նույնր Վաղո, նույնը…

ԳՈՂԸ -Ախր ո՞նց հանգստանամ, քաղաքացի քննիչ, սա ասում է, թե ես չեմ գողացել:

ՏԱՆՏԵՐ -Այ մարդ, դու հո շառ չե՞ս: Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԳՈՂԸ -Ասում է՝ խաբեբա: Էս ադամանդե մատանիները քոնը չե՞ն, էս ոսկե ապարանջանները քոնը չե՞ն, էս ոսկե ժամացույցները քոնը չե՞ն, էս փողը… Ախր իմ ձեռքով եմ մեկ-մեկ վերցրել:

ՔՆՆԻՉ - Ի՞նչ կպատասխանեք, ընկեր Սահակյան:

ՏԱՆՏԵՐ - /Ամեն անգամ ցնցվելով/ Իմը չեն, իմը չեն:

ՔՆՆԻՉ - Ուրեմն հրաժարվո՞ւմ եք այս ողջ հարստությունից:

ՏԱՆՏԵՐ - Իմը չեն, իմը չեն:

ՔՆՆԻՉ - Ապշելու բան է: Այս ի՞նչ է ստացվում: Դուք ինձ համբերությունից մի հանեք, թե չէ կկալանավորեմ ձեզ:

ՏԱՆՏԵՐ - Բայց ինչի՞ համար:

ՔՆՆԻՉ - /Մեկուսի/ Իսկապես, ինչի՞ համար: /Բարձր/ Չխոստովանելու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՈՂԸ - Այ ախպեր, խոստովանի պրծի, տեսա՞ր ես ոնց խոստովանեցի: Դե դավայ, դավայ…

ՏԱՆՏԵՐ - Բարձրանում է տեղից, հուսահատ/ Լավ, ես ի՞նչ անեմ: Հը՞: Այ քեզ փորձանք: Եթե խոստովանեմ, ասեմ իմ ապրանքն է, կորած եմ, կսկսեն հարցնել, թե որտեղից քեզ այդ ոսկեղենը, այդ փողերը: Չխոստովանեմ… սպառնում էն: Ի՞նչ անեմ:

ՔՆՆԻՉ - /Ձեռքին բռնել, պտտում է մի աղամանդե մատանի/ Միայն սա կարժենա չորս հազար ռուբլի:

ՏԱՆՏԵՐ - /Վճռական/ Լավ,արի ազնվորեն խոսենք, ընկեր քննիչ, ես եմ ուզում քեզ մի հարց տալ: Դե ասա, ո՞նց կարող էի ես այդպիսի գանձեր ունենալ, որտեղի՞ց:

ՔՆՆԻՉ - /Զարմացած/ Ես ի՞նչ իմանամ :

ՏԱՆՏԵՐ - Յա, դե պատասխանիր է՛, հարցնելը հեշտ է, ո՞րտեղից, հը՞: /Չարախնդորեն/ Գիտե՞ս իմ աշխատավարձն ինչքան է:

ՔՆՆԻՉ - Ինչքա՞ն:

ՏԱՆՏԵՐ - Վաթսունմեկ ռուբլի: Իսկ դու ասում ես մատանին չորս հազար ռուբլի արժի: Իսկ էն մյուս մատանիները, օղերը, ոսկեղենը… իսկ յոթ հազար ռուբլին: Հը՞, ուրեմն ես երկու հարյուր տարի աշխատում եմ ու հաց չե՞մ ուտում, հարկ չե՞մ տալիս, շոր չե՞մ հագնում:

ՔՆՆԻՉ - Վաթսունմեկ ռուբլի՞: Իսկ ի՞նչ միջոցներով էիք ծովափ գնացել:

ՏԱՆՏԵՐ - /Հաղթական/ Տեսա՞ր: Կասկածում ես, որ իմ աշխատավարձով կարող եմ ծովափ գնալ: Բա ուրեմն այս հարստությունը ես որտեղի՞ց ունենայի:

ՔՆՆԻՉ - /Շփոթված/ Լսեք, Վաղարշակ, նույնը Վաղո, նույնը... Դուք հո տունը չե՞ք շփոթում, գուցե ուրիշ տնից եք գողացել:

ՏԱՆՏԵՐ - Իհարկե, շփոթել է: Կամ գուցե պարզապես զրպարտո՞ւմ է. տասը բարեկամ ունեմ, երեք թշնամի: Գուցե նա իսկի գող էլ չի, ընկեր քննիչ, դու ասա, բա նա գողի նման է՞ :

ԳՈՂԸ - Ի՞նչ, գող չե՞մ: Չե՞ս ամաչում, այ մարդ: Քիչ մնա կասես էդ ոսկեղենն իմն է:

ՏԱՆՏԵՐ - Քոնն է, բա ի՞նչ է, հենց քոնն է:

ԳՈՂԸ - Այ մարդ, հիմա սիրտս կճաքի: Տո, ես ի՞նչ շահ ունեմ խաբելու, քո տնից եմ գողացել, ասում եմ, քո տնից եմ գողացել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԱՆՏԵՐ – Հայ-հո՜ւյ, միամիտ մի ձևանա, ի՜նչ շահ ունեմ, Ի՞նչ իմանամ, գուցե հենց Պողոսն է քեզ սովորեցրել, որ ինձ բռնեն, ինքն իմ տեղը պահեստապետ դառնա, ճիշտ չէ՞, ընկեր քննիչ:

ԳՈՂԸ - Պողո՞սն ով է: Սա ինձ կսպանի: Ես ազնվորեն չխոստովանեցի՞, տեղը ցույց չտվեցի՞, չբերեցի՞, քաղաքացի քննիչ:

ՔՆՆԻՉ - Լռեք, ձեր մեջ զժվել կարելի է, սրիկաներ: Ի՞նչ անեմ ես... էս ի՞նչ պատուհաս էր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Սովորական մի սենյակ: Կինը մտազբաղ ու տխուր սեղանն է հարդարում, ուտելիք դնում սեղանին: Լսվում է, թե խոհանոցում ինչպես է լվացվում ամուսինը ու հետն էլ խոսում:

ԱՄՈ ԻՍԻՆԸ- Օ՜ֆ, գազանանոցի գայլի պես քաղցած եմ: Հիմա կգամ ու կխժռեմ ամեն ինչ: Օ՜ֆ, ինչ սառը ջուր է: Էս ո՞նց է, որ չեն անջատել: Ա՜խ, գլուխս հովացավ...

/Ներս է մտնում՝ ձեռքերը հաճույքից շփելով, նստում է սեղանի մոտ, նայում է ուտելիքներին, հետո զարմացած՝ կնոջը/:

Այս ի՞նչ հաճելի անակնկալ է: Լսիր, չլինի՞ թե կամ քո ծննդյան օրն է, կամ՝ իմ: Այս մածունը ո՞րտեղից : Լսիր, սա մածո՞ւն է, թե կարագ: Չէ՜, կարագն այս մյուսն է: / Հոտ է քաշում/ Ես լրիվ մոռացել էի, որ այսպիսի մածուն է եղել երբևէ: Ինձ միշտ թվում էր, թե մածունը խանութների շշերի մեջ լցված թանն է: Բայց սա՞ ինչ կարագ է... Հրա՞շք է, ինչ է, իսկական խնոցու կարագ՝ թանի հետքերն էլ վրան:

ԿԻՆԸ - Կեր, կեր, Արշակ, հետո ես քեզ հետ լուրջ խոսակցություն ունեմ:

ԱՄՈՒՍԻՆԸ -Լո՞ւրջ: Ինձ հե՞տ:

ԿԻՆԸ - Այո, Արշակ, քեզ հետ: Բայց կեր, հետո կխոսենք:

ԱՄՈՒՍԻՆ - Ուրեմն, քո կարծիքով, այդ նախազգուշացումից հետո ուտե՞լ կլինի: Ասա տեսնեմ, ինչ է եղել:

ԿԻՆԸ - Այդ ես եմ ուզում իմանալ, թե քեզ հետ ինչ է եղել:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ինձ հե՞տ: Իսկ ի՞նչ պետք է լինի, ամեն ինչ լավ է:

ԿԻՆԸ - Ես էլ հենց այդ լավից եմ վախենում, ինչո՞ւ է լավ, ի՞նչ է պատահել...

ԱՄՈՒՍԻՆԸ - Սպասիր, որ վատ լիներ, ավելի՞ լավ կլիներ, Այսինքն… ի՞նչ ես ուզում ասել:

ԿԻՆԸ - Երբևէ ես քեզանից պահանջե՞լ եմ ավելին, քան դու կարող ես անել:

ԱՄՈՒՍԻՆԸ - Գետինը մտնեմ, թե որևէ բան հասկանում եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Հիանալի հասկանում ես: Մի ձևացրու: Արդեն քսան տարի է, ինչ մենք ամուսնացել ենք: Փառք աստծո, երբեք էլ այնպես լավ չենք ապրել, որ հղփանանք: Երբևէ ես քեզ ասե՞լ եմ, թե Արշակ ջան, այս չունենք, այն չունենք, թե ինձ ծովառնետի մորթուց վերարկու է հարկավոր, թե աթոռների ոտքերը ջարդված են, նոր կահույք առ, թե աղամանդե ականջօղերն ինձ շատ են սազում, թե ինչու ամռան այս շոգին անգամ մեր տանը պոմիդոր չկա...

ԱՄՈՒՍԻՆԸ - Նվարդ ջան, բայց դու գիտես, որ ես հարյուր քսան ռուբլի աշխատավարձ եմ ստանում:

ԿԻՆԸ - Գիտեմ, դրա համար էլ չեմ պահանջում: Դրա համար էլ այնպիսի գյուտեր եմ անում մինչև աշխատավարձի օրը պարտք չվերցնելու համար, որ յուրաքանչյուր գյուտարար կնախանձեր ինձ:

ԱՄՈՒՍԻՆԸ - Սիրելի Նվարդ, մի՞թե ես չեմ հասկանում այդքանը: Չէ՞ որ ինքս էլ գյուտարար եմ ի վերջո:

ԿԻՆԸ - Համեստություն մի արա: Ես գիտեմ, որ դու հիանալի գյուտարար ես: Դու մի ամբողջ գործարան կարող ես պահել, ես գիտեմ, բայց քո աշխատավարձով տուն պահել չես կարող: Դրա համար էլ ամեն կերպ աշխատում եմ օգնել քեզ, լավ տնտեսվար լինել, ոչ մի ավելորդ ծախս թույլ չտալ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Բայց այդ դեպքում ի՞նչ է նշանակում այս մածունը, այս կարագը...

ԿԻՆԸ - Դու ի՞նձ ես հարցնում:

ԱՄՈՒՍԻՆԸ - Սպասիր, բա ո՞ւմ հարցնեմ, Պուշկինի՞ն հարցնեմ:

ԿԻՆԸ - Պուշկինին ինչո՞ւ հարցնես, Գաբրիել Գասպարիչին հարցրու:

ԱՄՈՒՍԻՆԸ - Գաբրիել Գասպարի՞չն ով է, Նվարդ:

ԿԻՆԸ - Ես չգիտեմ ով է և չեմ էլ ուզում իմանալ: Ես ուզում եմ ապրել այնպես, ինչպես ապրել ենք: Մեզ ոչինչ պետք չէ: Ազնիվ ապրելուց ավելի մեծ երջանկություն չկա: Ես դեռ չեմ հանդիպել մեկին, որն անազնիվ ճանապարհով հարստանա և երջանիկ լինի միաժամանակ: Գուցե դա պատահականություն է, բայց այդպես է...

ԱՄՈՒՍԻՆԸ - Բայց ո՞ւմ համար է քո այդ զեկուցումը՝ բարոյախրատական թեմայով:

ԿԻՆԸ - Քեզ համար, Արշակ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ - Ի՞նձ... Դու այսօր հո շուկա չե՞ս գնացել Ախ, հա՛, մածունը, դե իհարկե գնացել ես...

ԿԻՆԸ - Իսկ ի՞նչ կապ ունի իմ խոսքերի հետ՝ շուկան...

ԱՄՈՒՍԻՆԸ - Որովհետև միշտ ասում ես, թե շուկայում խելագարվել կարելի է…

ԿԻՆԸ - Այո կարելի է: Բայց հիմա ես շուկայի մասին չեմ խոսում, այլ քո այդ Գաբրիել Գասպարիչի մասին: Ո՞վ է քո այդ Գաբրիել Գասպարիչը: Որտեղի՞ց հայտնվեց: Այդ ի՞նչ մոտիկ մարդ է, որի անունը առաջին անգամ եմ լսում: Այդ մոտիկ մարդն ինչո՞ւ է քեզ մածուն ու կարագ ուղարկում և ներողություն խնդրում, որ դեռ մեղրը չեն քաշել, որ իբր այս տարի ծաղիկը սակավ է...

ԱՄՈՒՍԻՆԸ - /Զարմացած բարձրանում է տեղից/ Սպասիր, սպասիր, բայց նախ և առաջ ո՞վ է այդ Գաբրիել Գասպարիչը:

ԿԻՆԸ - Եվ դու ի՞նձ ես հարցնում: Նա՝ ով ուղարկել է այս մածունն ու կարագը, որոնցով դու մանկությունդ հիշեցիր...

ԱՄՈՒՍԻՆԸ -Ի՞նչ... ո՞ւմ է ուղարկել...

ԿԻՆԸ - Այ քեզ բան: Ուրեմն դու չգիտե՞ս, թե ով է Գաբրիել Գասպարիչը...

ԱՄՈՒՍԻՆԸ - Նվարդ ջան, երդվում եմ բոլոր սրբություններով, որ առաջին անգամ եմ լսում: Իմ ծանոթների մեջ մի քանի Գաբրիելներ կան և մի քանի Գասպարիչներ, բայց ոչ մի զտարյուն Գաբրիել Գասպարիչ չկա: Եվ ինքդ էլ գիտես, որ աշխատանքի բերումով նաև չկա ոչ մեկը, որն ինձ գյուղատնտեսական մթերքներ ուղարկի... Ես հո...

ԿԻՆԸ - Ուրեմն, ի՞նչ են նշանակում այս մածունն ու կարագը... Մի՞թե սխալվել են: Մարդը որոշակի հարցրեց...

/Դուռը զանգում են: Մոտենում, բացում է: Ներս է մտնում մեկը՝ մի ծանր բիդոն քարշ տալով/:

ՄԵԿԸ - Բարև ձեզ... ընկեր Գևորգյանի բնակարանն է, չէ՞:

ԿԻՆԸ - /Ամուսնուն է նայում/ Այ, հենց այսպես... Այո՛...

ՄԵԿԸ - Այ շատ ուրախ եմ, է՛... Ուրեմն էս մի պուճուր յուղը մեր ընկեր Սուքասյանն է ուղարկել: Անուշ արեք...

ԿԻՆԸ - /Ամուսնուն է նայում/ Դե ինքդ էլ պատասխանիր, Արշակ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ - Սա, սա ի՞նչ յուղ է...

ՄԵԿԸ - Միանգամայն արդար յուղ է, ընկեր ջան... Ուզում եք համը տեսեք, քյահրիբարի պես յուղ է... արդար... Սուքասյանը...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ներեցեք, իսկ ո՞վ է այդ արդար Սուքասյանը...

ՄԵԿԸ - Ընկեր Սուքասյանը մեր մթերման գրասենյակի պետն է...

ԱՄՈՒՍԻՆԸ -Բայց ես այդպիսի մարդու չեմ ճանաչում...

ՄԵԿԸ - Չեք ճանաչում, կճանաչեք, ոսկի մարդ է... ինքն էլ խնդրեց ասեմ, որ սրանից պրոբ անեք, գոնե մի շաբաթ յոլա գնաք, մինչև նոր բիդոն ուղարկի...

ԱՄՈՒՍԻՆԸ -Նվարդ, դու որևէ բան հասկանո՞ւմ ես: Լսեք, ընկեր, գուցե դուք սխալվել եք: Գուցե ուրի՞շ տեղ պետք է տանեիք:

ՄԵԿԸ -Ինչի՞, սա Մոլոկովի փողոցի 364 տունը չի՞:

ԱՄՈՒՍԻՆԸ - Այո, բայց...

ՄԵԿԸ - Առաջին պադեզդը չի՞...

ԱՄՈՒՍԻՆԸ - Այո, բայց...

ՄԵԿԸ - Դուք ընկեր Գևորգյան Ա. Ա.-ն չե՞ք:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ա.Ա.-ն եմ, այսինքն՝ Գևորգյանն եմ, բայց ես ոչ մեկից յուղ չեմ ուզել...

ՄԵԿԸ - Ուրեմն ընկեր Սուքասյանն էնքան անհասկացող ա, որ սպասեր ուզեի՞ք... նա ուրիշ մարդ ա, ուրիշ...

ԱՄՈՒՍԻՆԸ- /Զայրացած/ Ես էլ եմ ուրիշ մարդ: Դե անմիջապես վերցրեք ձեր այս բիդոնն ու հեռացեք, թե չէ միլիցիա կկանչեմ...

ՄԵԿԸ - Վայ, ինչի՞ եք նեղություն քաշում...

ԿԻՆԸ - Հեռացեք այստեղից... լսո՞ւմ եք...

ՄԵԿԸ - Լսում եմ...

ԿԻՆԸ– Յուղն ինչո՞ւ եք թողնում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԵԿԸ - /Հեռանալով/ Ախր միանգամայն արդար յուղ է... Կարծում եք խանութի՞ է... /մեկուսի/ Լա՛վ ընկանք, հա... Էս ինչքա՞ն պիտի բերենք, որ ընդունի...

Պատկեր

Ամուսինն ու կինը: Ամուսինը շրջում է զայրացած:

ԱՄՈՒՍԻՆԸ - Սա, սա ի՞նչ բան է...

ԿԻՆԸ - Գուցե ե՞ս քեզ հարցնեմ, ընկեր Գևորգյան...

ԱՄՈՒՍԻՆԸ - Բայց քո ազգանունն էլ կարծեմ Գևորգյան է...

ԿԻՆԸ - Այո, բայց Ա. Ա. չէ:

ԱՄՈՒՍԻՆԸ – Չէ՛, սա, սա երևի շատ լուրջ գործ է: Սա կամ շանտաժ է, կամ պրովոկացիա...

ԿԻՆԸ - Հետաքրքիր է, թե ինչպես են կարողանում ապրել այն մարդիկ, որոնց համար այ այսպես միշտ բերում են...

ԱՄՈՒՍԻՆԸ – Է՛, ավելի հետաքրքիր չէ՞, թե մեզ նմաններն ինչպես են կարողանում ապրել:

ԿԻՆԸ - Լսիր, Արշակ, այնպես մի խոսիր, որ ես նորից սկսեմ կասկածել, թե սա հենց քեզ համար էլ նախատեսված էր...

ԱՄՈՒՍԻՆԸ - Այդքան միամիտ մի լինիր, Նվարդ ջան, գյուտարարին ո՞վ է բան բերողը: /Դռան զանգ: Ամուսինը բացում է դուռը: Իրար ետևից լուռ ու մունջ, առանց հարցնելու ներս են մտնում զանազան մարդիկ՝ երկու ձեռքով բռնած արկղեր: Նրանք արկղերը տեղավորում են անկյունում ու առանց որևէ բան ասելու դուրս են գալիս: Կնոջ և ամուսնու ապշահար հայացքները/:

ԱՄՈՒՍԻՆԸ - Սպասեք, այս ի՞նչ եք անում:

ԿԻՆԸ - Սա՞ ինչ բան է...

ՄԵԿԸ - Միս է, միս է: Էս մեկը տավարի ֆիլե է, էն մեկը ոչխարի չալաղաջ, էս մեկը գառան միս է, էն մյուսն էլ հավեր… Սամսոն Ակոպիչն ասաց խոզի ասորտիմենտը վաղը կուղարկեմ...

ԿԻՆԸ – Օ՛հ, ես այլևս չեմ կարող...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ - Սպասեք, դուք այստեղ մսամթերքների վաճառք-ցուցահանդե՞ս եք կազմակերպում, ինչ է... Անմիջապես վերցրեք այս ամենն ու հեռացեք...

ՄԵԿԸ - Ես փոքր մարդ եմ, ինձ ասել են տար, ես էլ բերել եմ...

/Արագ հեռանում է/:

ԱՄՈՒՍԻՆԸ - /Լացակումած/ Բայց ես չեմ ուզում, հասկանո՞ւմ եք: Անձի ազատություն կա՞ վերջապես, թե չէ: /Մյուսին/ վերցրեք տարեք անմիջապես, խնդրում եմ... Ես թույլ չեմ տա...

ՄՅՈՒՍԸ - Մենք փոքր մարդ ենք... / Հրում է ու դուրս գնում/:

ԱՄՈՒՍԻՆԸ - /Գոռում է նրանց ետևից/ Այո, դուք փոքր մարդիկ եք, սրիկաներ, ավազակներ, ինչո՞ւ եք ուզում գայթակղել մեր ազնիվ ընտանիքը, անազնիվներ... Տեսեք, տեսեք խեղճ կինս ինչպես է նայում այդ մսերին...

ԿԻՆԸ - Արշակ, ախր ի՞նչ պետք է անենք, ախր սա փչացող ապրանք է...

ԱՄՈՒՍԻՆԸ - Փչացող չէ, Նվարդ, սա փչացնող ապրանք է... Նրանք ուզում են փչացնել մեզ:

ԿԻՆԸ - Բայց գուցե դու մեկին լավություն ես արել և նա երախտահատույց է լինում: Պատահում է, չէ՞, մենք գրքերում այնքան ենք կարդացել... Հիշո՞ւմ ես կոմս Մոնտե Քրիստոն...

ԱՄՈՒՍԻՆԸ - Նվարդ, ես քեզ չեմ ճանաչում... ինչե՞ր ես խոսում: Հիմա ո՞վ է լավությանը երախտահատույց լինում: Ինչ լինում է, մինչև լավություն անելն է լինում միայն: Հետո ո՞վ է հիշողը...

ԿԻՆԸ - Իսկ դու ո՞րտեղից գիտես այդ բոլորը...

ԱՄՈՒՍԻՆԸ - Մենք էլ ենք գրքեր կարդացել... ֆելիետոնների...

ԿԻՆԸ - Հա, բայց ափսոս է այս... այս ամբողջ ապրանքը, տեր աստված...

/ Դուռը զանգում են: Ակամա բացում է: Մի ձեռք է մեկնվում և սենյակի հատակին է դնում երկու զամբյուղ/:

ՁԱՅՆ - Մեր նախագահ Քերոբն է ուղարկել՝ համտեսի...

ԱՄՈՒՍԻՆԸ - Սպասեք... /դուռն արագորեն փակվում է/ Սրիկաներ... համտեսի... ի՞նչ է, այդ համտես անողը մամո՞նտ է, թե շնաձուկ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Եթե սա համտես է, պատկերացնում եմ, թե իսկական բերածն ինչ պետք է լինի...

ԱՄՈՒՍԻՆԸ - Սա՞ ինչ մղձավանջային երազ է...

ԿԻՆԸ - /Ափսոսանքով) Այո, երա՛զ է...

ԱՄՈՒՍԻՆԸ - /Խիստ/ Մղձավանջային...

ԿԻՆԸ - Այո, երա՛զ է...

/Դռան զանգ: Կինն ուզում է բացել/:

ԱՄՈՒՍԻՆԸ - Չշարժվես տեղիցդ... Սուս, ձայն չլսեմ...

/Անընդհատ զանգում են/:

Այ այդպես, տանջվեք... ձեր հերն եմ անիծել... էլ դուռը բացող չկա... էլ մթերք ընդունող չկա: Մեր տունը բազա՞ր է, թե... / Դռան զանգը/:

ԿԻՆԸ – Լսիր, բայց գուցե բոլորովին ուրիշ մարդ է... սպասիր նայեմ դիտանցքից...

ԱՄՈՒՍԻՆԸ - Հենց որ ձեռքին բան տեսնես, չբացես դուռը...

ԿԻՆԸ –/Հառաչելով/ Գիժ հո չեմ /Նայում է ավելի ուշադիր/: Արշակ, ինչ-որ մի հաստլիկ, ճաղատ, անծանոթ մարդ է...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ձեռքին, ձեռքին ի՞նչ կա...

ԿԻՆԸ - Կարծես թե ոչինչ չկա:

ԱՄՈՒՍԻՆԸ - Կողքերը նայիր, ուրիշ մարդիկ չե՞ն երևում...

ԿԻՆԸ - Չէ, ոչ ոք չի երևում...

ԱՄՈՒՍԻՆԸ - Որ այդպես է՝ թող ներս գա:

/Կինը բացում է դուռը:

Պատկեր

Ներս է մտնում անծանոթը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆՇԱՆՈԹ - Բարև ձեզ... /Նայում է արկղերին/... Բարև ձեզ...

ԱՄՈԻՍԻՆԸ- Բարև ձեզ, համեցեք, նստեք... ո՞ւմ հետ պատիվ ունենք...

ԱՆՇԱՆՈԹ - / Շարունակելով նայել արկղերին/ Ըհը, ըհը, ըհը...Այո, ժամանակն է ծանոթանալու: Ես ձեր վերևի հարկի նոր հարևանն եմ... Գևորգյան...

ԿԻՆԸ - Ի՞նչ... ուրեմն դո՞ւք եք Գևորգյանը...

ԱՆՇԱՆՈԹ - Այո, բայց դրա մեջ ի՞նչ կա...

ԿԻՆԸ - Գևորգյան Ա. Ա՞...

ԱՆՇԱՆՈԹ -Այո, Ա. Ա...

ԱՄՈԻՍԻՆԸ – Աա՛...

ԱՆՇԱՆՈԹ -Բայց այդտեղ ինչ զարմանալու բան կա... մանավանդ որ, եթե չեմ սխալվում, դուք էլ եք Գևորգյան Ա. Ա.:

ԿԻՆԸ - Այո, բայց մենք բոլորովին ուրիշ Գևորգյան ենք...

ԱՆՇԱՆՈԹ - Չեմ կասկածում:

ԱՄՈԻՍԻՆԸ - Ներեցեք, իսկ դուք ի՞նչ մասնագիտություն ունեք...Ուզում եմ ասել, որպես ի՞նչ եք աշխատում:

ԱՆՇԱՆՈԹ - Ե՞ս: Ես, այսպես ասած՝ հսկիչ եմ, տեսուչ, այսպես ասած՝ որոշում եմ ապրանքի լավն ու վատը...

ԿԻՆԸ - /Հեգնանքով/ Հավանաբար լավ եք որոշում...

ԱՆՇԱՆՈԹ -Այո, ղեկավար հսկիչ եմ... կեղծ համեստություն չեմ անի... Եվ գիտեք ինչ, ես հենց այդ կապակցությամբ եմ ձեզ մոտ եկել: Իմ աշխատանքի բերումով, զանազան հիմնարկներ և անհատ անձինք, պարտավոր են ինձ ապրանքների նմուշներ բերել համտեսի, այսպես ասած՝ դեգուստացիայի և որակավորման... Եվ քանի որ, այսպես ասած՝ տարօրինակ զուգադիպությամբ դուք էլ եք Գևորգյան Ա. Ա., ինձ հասցեագրված նմուշները հավանաբար ձեզ են բերել... /Ուշադիր դիտում է արկղերը/:

ԿԻՆԸ - Ուրեմն սրանք են նմուշները, հա՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆԾԱՆՈԹ - Այո...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ինչ էլ հսկայակա՛ն նմուշներ են...

ԱՆԾԱՆՈԹ - Այո, անհասկացող ժողովուրդ է, էլի: Ես ասում եմ բերեք քիչ-քիչ, համտեսի համար, իսկ նրանք միշտ այսպես բերում, լցնում են... Կարծես իրենց գերին ենք... Պահելու տեղ էլ չկա... Կինս քիչ է մնում խելագարվի: Շատ անհասկացող ժողովուրդ է...

ԿԻՆԸ - Այո, ամեն մարդ յուրովի է խելագարվում...

ԱՆԾԱՆՈԹ –Իհարկե... Ներողություն, իսկ դուք ի՞նչ եք աշխատում:

ԱՄՈՒՍԻՆԸ – Գյուտարար-ինժեներ եմ:

ԱՆԾԱՆՈԹ - Եվ այս մի սենյա՞կն է...

ԿԻՆԸ - Այո, չէ՞ որ ուրիշները ավելի մեծ կարիքի մեջ են...

ԱՆԾԱՆՈԹ - Շատ եմ սիրում ձեզ նման ազնիվ մարդկանց... Իհարկե... Իսկ եթե ձեզ առաջարկեմ երկու սենյականոց հիանալի մի բնակարան քաղաքի կենտրոնում, ի՞նչ կասեք...

ԿԻՆԸ – Ի՛նչ եք ասում, մի՞թե դա հնարավոր է...

ԱՆԾԱՆՈԹ - Անհնարին ի՞նչ կա... Մեր Վարդանը շենք է կառուցել... Ես կկարգադրեմ և կփոխանակեն ձեր տունը...

ԿԻՆԸ – Օ՛, տեր աստված... Կոմս Մոնտե Քրիստո...

ԱՄՈՒՍԻՆԸ - Բայց ինչի՞ համար...

ԱՆԾԱՆՈԹ - Ինչպես թե ինչի համար: Մի՞թե մենք մարդ չենք, մի՞թե մեզ չեն վերաբերում այն խոսքերը, որ մարդը մարդու համար գայլ է, ներեցեք, ընդհակառակը, որ ընկեր է, բարեկամ և հարազատ: Գնացեք ապրեք, սիրելիներս, և միաժամանակ մենք կխուսափենք...

ԱՄՈՒՍԻՆԸ - Աա՛, Գևորգյան Ա. Ա.-ից:

ԱՆԾԱՆՈԹ - Այո, իհարկե, թե չէ անընդհատ ինձ հասցեագրված բաները ձեզ են բերելու և ձեզ հասցեագրվածները՝ ինձ...

ԿԻՆԸ - /Մեկուսի/ Հա, էլի, գծագրերից բացի ուրիշ բան կստանաս... հա՛, մեկ էլ պարտքերի անդորրագրերը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ - Ոչ, մենք այստեղ մեզ լավ ենք զգում...

ԿԻՆԸ - Արշակ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Նվարդ, մենք մեզ այս մի սենյակում հիանալի ենք զգում...

ԿԻՆԸ - Դե իհարկե, տե՛ր աստված, ախր այսպիսի առիթ էլ երբեք չի լինի...

ԱՆԾԱՆՈԹ - Երկու սենյականոց մեկուսացված բնակարան, հիսուն մետր... հիանալի պատշգամբներ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Այլևս չխոսենք այդ մասին...

ԱՆԾԱՆՈԹ - Տիկին, դուք որպես ավելի գործնական, լրջախոհ... իբրև տնտեսուհի, բարձրորակ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Իմ տիկնոջ հետ գործ չունեք... նա ձեզ համար համտեսի նմուշ չէ...

ԿԻՆԸ – Արշա՛կ, խելագարվեցի՞ր, ինչ է...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ոչ մի խոսք: Մենք մնում ենք:

ԱՆԾԱՆՈԹ - Լավ, լավ, չխոսենք: Այդ դեպքում եկեք ուրիշ բան մտածենք: Նախկինում, շատ վատ բաների հետ մի լավ բան կար: Նման թյուրիմացություններից խուսափելու համար, այսինքն, որ մեր ապրանքը ձեզ չհասներ և ընդհակառակը, մարդիկ իրենց տան դռներին ոչ միայն լրիվ գրում էին իրենց անունները, հայրանուններն ու ազգանունները, այլև պաշտոնները: Օրինակ՝ «Առաջին աստիճանի գաղտնի խորհրդական», «Դպրոցի հոգաբարձու», «Երրորդ գիլդիայի վաճառական»... հիանալի էր: Ինչո՞ւ դուք էլ օրինակ, ձեր դռանը չեք փակցնում՝ «Գևորգյան Ա. Ա. ինժեներ-գյուտարար»... հպարտ է հնչում:

ԱՄՈՒՍԻՆԸ - /Տեղից բարձրանալով/ Իսկ դո՞ւք ինչ պետք է գրեք ձեր դռան վրա, հը՞. «Գո՞ղ», «Դրամաշո՞ր», «Կաշառակե՞ր», «Սրիկա՞»: Դրանցից ո՞րը պիտի գրեք: Թե բոլորը միասին...

ԿԻՆԸ – Արշա՛կ...

ԱՆԾԱՆՈԹ – Ինչե՛ր եք ասում: Ես ձեզ հետ այլևս չեմ ուզում խոսել: Տվեք իմ փորձանմուշները, ես հեռանում եմ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ոչինչ էլ չեք ստանա: Այս փորձանմուշները ես անմիջապես միլիցիա եմ ուղարկելու՝ փորձաքննության: Այն ժամանակ կտեսնեք, ընկեր Ա, Ա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆՃԱՆՈԹ - Միլիցիա՞... Ուրեմն, կորա՛ն... Ի՛նչ կեղտոտ մարդիկ եք, ամա՛ն... Այսպիսի հարևանների հետ ապրե՞լ կլինի...

/Արագորեն բացում է դուռը, դուրս է նետվում/:

ԿԻՆԸ - Սրիկա, օ՛, ինչ սրիկան էր...

ԱՄՈՒՍԻՆԸ - Եվ դեռ մենք ենք կեղտոտը...

/Դրսում ուժգին աղմուկ է լսվում, ինչ-որ բաներ են քարշ տալիս/:

ԿԻՆԸ - Սա՞ ինչ է...

ԱՄՈՒՍԻՆԸ - Դռանը չմոտենաս, չբացես դուռը... Էլի բերում են...

ԿԻՆԸ - /Նայելով/ Չէ՛, այս անգամ տանում են... իրենք են... տեղափոխվում են արդեն... Բայց խեղճը ո՞ր շենքը պետք է գնա, որտեղ գոնե երկու-երեք Գևորգյաններ չլինեն...

ԱՄՈՒՍԻՆԸ - Պարտադիր չէ, որ Գևորգյան լինեն... Եթե ամեն մի շենքում երկու-երեք ազնիվ մարդ լինի միայն, նման սրիկաները ոչ մի տեղ հանգիստ չեն ունենա...

ԿԻՆԸ - Այո, Արշակ... բա հիմա ի՞նչ ենք անելու այս /հուզված/ մածո՛ւնը, կարա՛գը, մի՛սը, յո՛ւղը...

ԱՄՈՒՍԻՆԸ - Վաղը կտանեմ մեր գործարանի մանկապարտեզը... Թող երեխաներն ուտեն...

ԿԻՆԸ - Իսկ երեխաներին բան կհասնի՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ

Սովորական գրասեղան: Նստած է դատավորը, ինչ-որ գործեր է թերթում, մրմնջում է:

ԴԱՏԱՎՈՐ – Ա-պա-հար-զան, ա-պա-հար-զան... Չէ՛, շատանում են... Եվ հաճախ որքան հիմար առիթներով... Ինչ ծանր բան է մեր գործը և երբեմն որքան թեթև է թվում ուրիշներին...

/Դուռը բախում են/ Մտե՛ք...

/Ներս է մտնում մի քաղաքացի/:

ՔԱՂԱՔԱՑԻ - Կարելի՞ է:

ԴԱՏԱՎՈՐ - Մտեք, համեցեք, համեցեք... նստեք, խնդրում եմ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ես ձեզ մոտ...

ԴԱՏԱՎՈՐ - Ապահարզանի հարցով եք եկել...

ՔԱՂԱՔԱՑԻ - Որտեղի՞ց իմացաք: Նա՞ է զանգահարել... Հասցրե՛լ է...

ԴԱՏԱՎՈՐ - Ո՞վ՝ նա, ձեր կինը՞: Ինձ ոչ ոք էլ չի զանգահարել, և ես, ներեցեք, դեռ չգիտեմ նույնիսկ, թե ով եք դուք...

ՔԱՂԱՔԱՑԻ – Ախ, այո՞, ներողություն, Մեսրոպ Սարգսյան...բայց ուրեմն ինչպե՞ս իմացաք, որ ապահարզանի գործով եմ եկել...

ԴԱՏԱՎՈՐ - Պրոֆեսիոնալ զգացողություն է: Լսում եմ ձեզ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ընկեր դատավոր, ես այլևս չեմ կարող... Ուզում եմ բաժանվել իմ կնոջից:

ԴԱՏԱՎՈՐ - Այո, դա արդեն գիտեմ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Եվ խնդրում եմ ինձ չհամոզել: Ի վերջո, եթե ապահարզանի վերաբերյալ օրենք կա, ուրեմն մարդիկ իրավունք ունեն բաժանվելու:

ԴԱՏԱՎՈՐ – Միանգամայն իրավացի եք:

ՔԱՂԱՔԱՑԻ - Բաներ կան, որ հանդուրժել չի կարելի, եթե չես ուզում ոտնահարված լինել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Ձեզ փորձել են ոտնահարե՞լ...

ՔԱՂԱՔԱՑԻ - Խոսքս զգացմունքների մասին է: Ես տանել չեմ կարող…

ԴԱՏԱՎՈՐ - Անհավատարմությունը...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ի՞նչ անհավատարմություն... ներեցեք, բայց դուք իմ կնոջը չեք ճանաչում և ոչ ոք...

ԴԱՏԱՎՈՐ - Քավ լիցի, ես ընդհանրապես եմ ասում...

ՔԱՂԱՔԱՑԻ - Իսկ ես ընդհանրապեսի հետ գործ չունեմ: Իմ կինը բարձր բարոյականության տեր կին է... և այնուամենայնիվ ես պետք է բաժանվեմ նրանից...

ԴԱՏԱՎՈՐ – Երեխաներ ունե՞ք...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ունենք, բայց երեխաներն ի՞նչ կապ ունեն: Ես ալիմենտ եմ վճարելու:
ԴԱՏԱՎՈՐ - Դե, դա ձեր ցանկությունից կախված չէ... ձեզ կստիպեն վճարել:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ինչո՞ւ ստիպել, եղբայր, ես իմ կամքով եմ տալու... Երեխաներն ինչո՞ւ պետք է տուժեն իրենց մոր մեղքերի համար...

ԴԱՏԱՎՈՐ - Մեղքե՞ր... Դա արդեն հետաքրքիր է, պատմեք, խնդրեմ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Գիտեք, մի քիչ դժվար է կողմնակի մարդուն պատմել այն...

ԴԱՏԱՎՈՐ - Ինչ մեկ ամիս անց պատմելու եք լեփ լեցուն դահլիճի առա՞ջ: Չեղավ, ընկեր Սարգսյան...

ՔԱՂԱՔԱՑԻ - Դե լավ, նախ՝ առանց իմ կամքը հարցնելու, կինս մի քանի օր առաջ մազերը հարդարել էր նոր ձևով...

ԴԱՏԱՎՈՐ – Ի՜նչ եք ասում...

ՔԱՂԱՔԱՑԻ - Այո, բայց միայն դա չէ, ընկերուհու հետ միասին, անցյալ շաբաթ օրը ցերեկով կինո է գնացել...

ԴԱՏԱՎՈՐ - Երբ դուք խնդրել էիք միասին գնալ, իսկ ինքը հրաժարվել էր, չէ՞ ...

ՔԱՂԱՔԱՑԻ – Ի՜նչ եք ասում, ես կինոյի ժամանա՞կ ունեմ... Ավելին՝ իմանալով, որ ես ուզբեկական փլավ չեմ սիրում, կարծես դիտմամբ շաբաթը մեկ այդ... այդ փլավն է եփում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ – Ի՜նչ բարքեր են... Եվ դուք փաստորեն քաղցած եք մնում:

ՔԱՂԱՔԱՑԻ - Չէ, ինձ համար ուրիշ ճաշ է եփում: Բայց հարցը դա չէ: Ինչո՞ւ է ուզբեկական փլավ եփում, իմանալով, որ ես տանել չեմ կարող այդ դեղնավուն բրինձը... Եվ ինչո՞ւ է իմ երեխաներին սովորեցնում այդ ճաշին, փաստորեն նրանց իմ դեմ գրգռելով...

ԴԱՏԱՎՈՐ – Այսինքն՝ ինչպե՞ս է գրգռում:

ՔԱՂԱՔԱՑԻ - Այսպես. տեսնելով այդ ճաշը, ես կիտում եմ հոնքերս, իսկ երեխաները, ասես դիտմամբ, ախորժակով չփչփացնում են...

ԴԱՏԱՎՈՐ - Այո, ծանր վիճակ է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Տեսնո՞ւմ եք: Հիմա ես ավելի սոսկալի բան կասեմ...

ԴԱՏԱՎՈՐ - Խնայեցեք, դուք ինձ վախեցնում եք...

ՔԱՂԱՔԱՑԻ - Նա ուզում է աշխատանքի անցնել...

ԴԱՏԱՎՈՐ - Չի կարող պատահել...

ՔԱՂԱՔԱՑԻ – Այո, այո, ընկեր դատավոր, նա ուզում է աշխատանքի անցնել, որովհետև գիտի, որ երբ ես տուն եմ գալիս և ինքը տանը չի լինում, ես խելագարվում եմ...

ԴԱՏԱՎՈՐ - Իսկ որտե՞ղ է լինում...

ՔԱՂԱՔԱՑԻ -Որտե՞ղ պետք է լինի, խանութում, կամ հարևանուհու մոտ: Սո՜ւրճ են խմում...

ԴԱՏԱՎՈՐ - Այո... Ուրի՞շ...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ուրեմն այսքանը բավական չէ՞... Ասեմ նաև, որ խոսում է՝ իմ լրագիր կարդալու ժամանակ... Ախ, հա, ես մոռացել էի, որ ձեր կոչումը մեզ հաշտեցնելն է... բայց ձեր ջանքերը զուր կլինեն, հասկանո՞ւմ եք, իմ վճիռը վերջնական է...

ԴԱՏԱՎՈՐ - /Բարձրանում է տեղից/ Ի՞նչ, ձեզ հաշտեցնե՞մ, ես ձեզ հաշտեցնե՞մ... Սխալվում եք, բարեկամս: Ընդհակառակը, ես սրտանց, ամբողջ հոգով համաձայն եմ ձեզ հետ... /Սեղմում է նրա ձեռքը/:

ՔԱՂԱՔԱՑԻ - /Ինքն էլ է բարձրանում/ Ինչպես թե... ինչո՞ւ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Ինչ որ մեկը պետք է գնա առջևից... Այո՛, այս ամենին պետք է վերջ տրվի... Եվրոպայից էլ ենք անցել, առանց հարցնելու մազե՛ր են հարդարում... Այսպես որ գնա, Հայաստանում կնոջ և տղամարդու միջև այլևս ոչ տարբերություն չի լինի... Առանց այդ էլ բան չի մնացել: Տվեք ձեր դիմումը, բարեկամս, շնորհավորում եմ... Ես հիացած եմ ձեր համարձակությամբ...

ՔԱՂԱՔԱՑԻ - Սպասեք, բայց...

ԴԱՏԱՎՈՐ - Ի՞նչ բայց, տվեք դիմումը և գոնե... և գոնե դուք երջանիկ եղեք...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ներեցեք, ուրեմն ձեր տանն է՞լ...

ԴԱՏԱՎՈՐ - Նույնն է, նույնը, շաբաթներով գիշերները տուն չի գալիս...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ինչպե՞ս թե...

ԴԱՏԱՎՈՐ - Այդպես. հերթապահ բժշկուհի է աշխատում... Անկեղծությանը անկեղծությամբ կպատասխանեմ: Օր ու արև չունեմ, ձեր կինը միայն ձեր լրագիր կարդալու ժամանակ է խոսում, իսկ իմ կինը գիշերներն էլ է խոսում, գիշերները...

ՔԱՂԱՔԱՑԻ - Հերթապահության ժամանա՞կ:

ԴԱՏԱՎՈՐ - Ոչ, ոչ, քնած ժամանակ: Ուզբեկական փլա՛վ եք ասում... հեքիաթ է... Ո՛ր ճաշը գովեմ, ուղիղ մի ամիս ամեն օր նույնն է եփում... Ավելին ասեմ՝ կոպերն ու թարթիչներն էլ ներկում է... Կինո եք ասում... առանց հարցնելու ծովափ է գնում, ծովափ... Երկու անգամ պա-տահաբար հանդիպել ենք Խոստայում:

ՔԱՂԱՔԱՑԻ - /Մեկուսի/ Փառք քեզ, տե՛ր աստված, փառք քեզ, տե՛ր աստված...

ԴԱՏԱՎՈՐ - Իր բարեկամները աչքի լույսն են, իմը՝ փուշը: Շաբաթը մեկ նոր հագուստ է պատվիրում, մոդան չի հասցնում նրա ետևից հասնել: Ամեն տարի արտասահման է գնում ու դեռ ոչ մի անգամ ինձ հետը չի տարել:

ՔԱՂԱՔԱՑԻ - Բա, բա ինչո՞ւ չեք բաժանվում ու երկրորդ անգամ ամուսնանում:

ԴԱՏԱՎՈՐ - Սա հենց երկրորդն է: Կյանքումս տեսած չկամ, որ վերնաշապիկս լվանա կամ արդուկած թաշկինակ դնի գրպանս... է՛, այսինքն ի՞նչ եմ շարունակում, կարծես թե դուք չգիտեք... Ձերն էլ նույնն է, էլի...

ՔԱՂԱՔԱՑԻ - Այսինքն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Իսկ դուք ասում եք... հաշտեցնեմ: Ե՞ս: Ո՛չ: Նրանք պետք է պատժվեն... Այո, ինչ որ մեկը պետք է գնա առջևից... Դո՛ւ պետք է գնաս, դու պիոներ ես, սիրելիս...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ե՞ս…

ԴԱՏԱՎՈՐ - Տուր դիմումդ, եղբայրս, չնեղանաս, ես դիտմամբ եմ «դու»-ով խոսում քեզ հետ, մենք գաղափարական եղբայրներ ենք... Տուր դիմումդ, անմիջապես կբաժանեմ, կմիջնորդեմ Գերագույն դատարանում, ապահով մնա...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ես, ես ուզում եմ մտածել...

ԴԱՏԱՎՈՐ - Ի՞նչ մտածել, մտածելն է կործանում մարդկանց... Ես նախանձում եմ քեզ... դիմումդ...

ՔԱՂԱՔԱՑԻ - /Ետ-ետ գնալով/ Դ-դեռ չեմ գրել, վաղը կբերեմ...

ԴԱՏԱՎՈՐ – Ափսո՛ս... լավ , չմոռանաս... տղամարդ եղիր... տղամարդ...

/Քաղաքացին փախչում է/:

Պատկեր

ԴԱՏԱՎՈՐ - /Լրջանում է հանկարծ: Դե, իհարկե, այլևս չի գա: Ահա, մի ընտանիք էլ փրկեցի կործանումից: Օ՛հ, հոգնեցի: Խեղճ տիկին Սրբուհի, տանն իր համար նստած երեխային է օրորում երևի ու մտքով էլ չի անցնում, թե ինչ եմ դարձրել իրեն... Ի՞նչ անես, անձնական օրինակը մեծ ուժ է... Օ՛հ...

/Լսվում է կանացի մի ձայն)/:

ԿԻՆԸ - Կարելի՞ է, /չոր/ թույլ կտա՞ք...

ԴԱՏԱՎՈՐ -/Լրջացած, հանգիստ/ Խնդրեմ, նստեք, տիկին...

ԿԻՆԸ - Ես հայցադիմում եմ բերել ապահարզանի համար: ,

ԴԱՏԱՎՈՐ - Անմիջապես երևում է, տիկին:

ԿԻՆԸ -/Սառը/ Ինչի՞ ց...

ԴԱՏԱՎՈՐ - Ապահարզանի դիմող կանայք սովորաբար խոժոռ են նայում բոլոր տղամարդկանց ընդհանրապես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Մի՞թե... Ո՞ր օրը կարող եք նշանակել դատը:

ԴԱՏԱՎՈՐ - Դուք հավանաբար գիտեք, որ դատարանի նպատակն է հանգամանորեն քննել բաժանման գործը և հաշտեցման հնարավոր եզրեր գտնել...

ԿԻՆԸ – Ես դատարանի իրավունքները գիտեմ, բայց գիտեմ նաև իմ իրավունքները...

ԴԱՏԱՎՈՐ - Ուրեմն ձեր կարծիքով ապահարզանն անխուսափելի՞ է...

ԿԻՆԸ - Այլապես ես հիմա դատարանում չէի լինի:

ԴԱՏԱՎՈՐ - Հիմա դուք դատարանում չեք, այլ դատավորի սենյակում, և ես իմ պարտքն եմ համարում...

ԿԻՆԸ - /Սառնորեն/ Ներեցեք, ուրեմն ե՞րբ կլինի դատը...

ԴԱՏԱՎՈՐ - /Պաթետիկ/ Բայց մի՞թե հաշտության ոչ մի հնարավորություն չկա, տիկին...

ԿԻՆԸ - /Լացակումած, պաթոսով /Ո՜չ.../ պառզայից հետո բարձրացնում է գլուխը/ Իսկ ձեր կինը կհաշտվե՞ր նման վիճակի հետ...

ԴԱՏԱՎՈՐ - Բայց ես վիճակին անծանոթ եմ դեռևս...

ԿԻՆԸ - Այո, այո, լավ, կասեմ... Ես… ես ահավոր պայմաններում եմ ապրում: Իմ, իմ ամուսինը աներևակայելի խանդոտ է: Պատկերացնո՞ւմ եք, նա ամեն օր գալիս և ինձ աշխատանքից տուն է տանում, ինչպես մանկապարտեզի սանի…

ԴԱՏԱՎՈՐ – Ինչպիսի՜ հոգատարություն...

ԿԻՆԸ - Ինչպե՞ս... Օրական տասն անգամ զանգ է տալիս, որպեսզի ստուգի՝ ես տեղո՞ւմ եմ, թե ոչ...

ԴԱՏԱՎՈՐ - /Օրորում է գլուխը/ Կարոտում է…

ԿԻՆԸ - Կարոտո՞ւմ է. իսկ ինչո՞ւ տանն էլ չի կարոտում... Ինչո՞ւ հենց տուն եմ մտնում, իսկույն արձանանում է հեռուստացույցի առաջ... Նա, նա այդ անտեր ֆուտբոլն ու հոկեյն ավելի շատ է սիրում, քան ինձ...

ԴԱՏԱՎՈՐ - Ուրեմն հոգնած է լինում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ – Հոգնա՛ծ... այո, ինձ հետ միշտ հոգնած է լինում, ամիսը մեկ հազիվ եմ կարողանում համոզել, որ կինո կամ թատրոն տանի: Իսկ ընկերները զանգեն թե չէ՝ առույգ-առույգ թռչում է... Եվ ամեն անգամ սկանդալ պետք է բարձրացնեմ, որ չգնա...

ԴԱՏԱՎՈՐ – Խե՛ղճ կին... .

ԿԻՆԸ - Այ, տեսնո՞ւմ եք, արդեն դուք էլ եք խղճում ինձ:

/Թաշկինակը աչքերին է տանում/:

ԴԱՏԱՎՈՐ – Է՛, ես ձեզ չէ, որ խղճում եմ, տիկին, ես իմ խեղճ կնոջն եմ խղճում...

ԿԻՆԸ - Ձեր կնոջը... Ինչո՞ւ...

ԴԱՏԱՎՈՐ - Ինչո՞ւ: Որովհետև վերջին ֆիլմը, որ տեսել ենք, «Բայջու Բավրան» է եղել, ահա թե ինչու: Որովհետև ես այնպիսի խանդոտն եմ, որ չեմ թողնում նա աշխատի և երկու հորաքրոջս էլ մեր տանն եմ պահում, որպեսզի նա տանը հանկարծ մենակ չմնա: Է՛հ, ես ի՞նչ մարդ եմ:

ԿԻՆԸ - Իսկ ինքը՞...

ԴԱՏԱՎՈՐ - Ինքն ի՞նչ գիտի, թե ես ինչ եմ անում: Օր չկա, որ աշխատանքից հետո կամ հենց աշխատանքի ժամին ընկերներիս հետ ռեստորան չգնամ: Դե, և մնացածը... Ոչ մի կոպեկ տանը չեմ թողնում, որ հանկարծ իր ուզած ձևով չծախսի... հորաքույրներս են հացն առնում ու շուկա գնում...

ԿԻՆԸ - Գ-գիտեք ինչ, ձեզ մոտիկից չճանաչողը երբեք չի մտածի, թե դուք այդպիսին եք...

ԴԱՏԱՎՈՐ - Իսկ ձեր ամուսնուն չճանաչողը կմտածի՞... Տղամարդիկ բոլորն էլ մի սանրի կտավ են, ինչպես ասում է ժողովրդական իմաստուն ասացվածքը... Գոնե կարողանայի հեռու մնալ թղթախաղից:

ԿԻՆԸ – Ի՜նչ, դուք թղթախաղով է՞լ եք զբաղվում...

ԴԱՏԱՎՈՐ - Իսկ, ինչ է, ձեր ամուսինը չի՞ զբաղվում... Վերջերս էլ բախտս բոլորովին չի բերում, հաջորդ ամսվա աշխատավարձս էլ եմ տարվել...

ԿԻՆԸ - /Գլուխն օրորելով/ Ո՛չ, իմ ամուսի՜նը...

ԴԱՏԱՎՈՐ - Խեղճ կնոջս մայրը հյուր էր եկել մեր տուն... Մի խոսքով... քաղաքավարի ճանապարհ դրեցի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Սպասեք, և ձեր կինը հանդուրժո՞ւմ է այդ բոլորը... Ինչո՞ւ է հաշտվում... Ինչո՞ւ չի բաժանվում և ամուսնանում երկրորդ անգամ...

ԴԱՏԱՎՈՐ - Ես նրա երրորդ ամուսինն եմ...

ԿԻՆԸ - Այո՞...

ԴԱՏԱՎՈՐ - Դե ներեցեք, բացվեցի ակամա, գիտեք, դատավորն էլ մարդ է և սիրտը թեթևացնելու կարիք է զգում երբեմն...

Ուրեմն այսպես... ձեր դատը կնշանակենք...

ԿԻՆԸ - Գիտեք, եթե շատ եք ծանրաբեռնված, գուցե ես հետո գամ...

ԴԱՏԱՎՈՐ – Ո՛չ, ո՛չ, ի՞նչ եք ասում, այս ամիս հակառակի պես ապահարզանի ոչ մի գործ չունենք... Տվեք ձեր դիմումը...

ԿԻՆԸ - Դիմո՞ւմը... /Նայում է թղթին/ Դիմումը մոռացել եմ... շփոթել եմ... վաղը կբերեմ...

ԴԱՏԱՎՈՐ - Շատ լավ, կսպասեմ... չմոռանաք, խնդրում եմ, գիտեք, էլի, պլանը… /Կինը արագորեն դուրս է գնում/:

ԴԱՏԱՎՈՐ - /Հոգնած/ Ահա մի փրկված ընտանիք ևս... Ինչպե՜ս փախավ... Հիմա տեսնես իմ մասին ինչեր է պատմելու...

Ոչինչ, կարևորն այն է, որ երեխաները անհայր չմնան: Օֆ, օ՜ֆ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԱՐՈՒՍԵԼ

Գրասեղանի մոտ նստած է անձնագրային բաժնի պետը: Ներս է մտնում մի քաղաքացի:

ՔԱՂԱՔԱՑԻ - Բարև ձեզ:

ՊԵՏԸ - Լսում եմ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ասում եմ՝ բարև ձեզ:

ՊԵՏԸ - Հասկացանք: Ասում եմ՝ լսում եմ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Լավ: Ես ուզում եմ գրանցվել այստեղ:

ՊԵՏԸ - Այստե՞ղ:

ՔԱՂԱՔԱՑԻ – Այսինքն՝ այս քաղաքում:

ՊԵՏԸ - Այս քաղաքում գրանցվել չի կարելի:

ՔԱՂԱՔԱՑԻ - Չէ, գիտեք ինչ, ես այստեղ եմ ծնվել, մեծացել: Հետո մեկնել եմ Ալավերդի աշխատելու: Այնտեղ ամուսնացել եմ... հետո, մի խոսքով, իրար չհասկացանք... Ես վերադարձել եմ և ուզում եմ կրկին մեր տանը ապրել:

ՊԵՏԸ - Իսկ ձեր կի՞նը:

ՔԱՂԱՔԱՑԻ - Կինս ի՞նչ:

ՊԵՏԸ - Ձեր կինը համաձա՞յն է,

ՔԱՂԱՔԱՑԻ - Մենք դատարանով ենք բաժանվել: Ահա որոշումը, խնդրեմ:

ՊԵՏԸ - /Կարդում է որոշումը/ Համաձայն... իսկ ինչո՞ւ եք բաժանվել...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ը ը, դա զուտ անձնական հարց է:

ՊԵՏԸ - Անձնակա՞ն... իսկ գուցե ձևականորե՞ն եք բաժանվել:

ՔԱՂԱՔԱՑԻ - Դատարանի վճիռը ձեր ձեռքին է:

ՊԵՏԸ - Իսկ գուցե դատարանի վճիռն է՞լ է ձևական: Քի՞չ է պատահում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՔԱՂԱՔԱՑԻ - Գուցե և պատահում է, բայց սա օրինական վճիռ է...

ՊԵՏԸ - Իհարկե, ուրիշներինը ձևական է, իսկ ձերը օրինական...

ՔԱՂԱՔԱՑԻ - Լսեք, սիրելի ընկեր, ի՞նչ եք ուզում: Կնոջիցս պրծա, ձեզանից չե՞մ պրծնում: Լավ եմ արել՝ բաժանվել եմ, ի՞նչ եք ուզում:

ՊԵՏԸ - Ես ոչինչ չեմ ուզում, կարծեմ դուք եք ուզում:

ՔԱՂԱՔԱՑԻ – Այո՛, գրանցվել եմ ուզում:

ՊԵՏԸ - Տեսնո՞ւմ եք: Իսկ Ալավերդիում որտե՞ղ էիք ապրում:

ՔԱՂԱՔԱՑԻ - Նախկին կնոջս տանը:

ՊԵՏԸ - Ուրեմն նախկին կին է՞լ եք ունեցել:

ՔԱՂԱՔԱՑԻ –Ո՛չ, սա: Եթե բաժանվել եմ, ուրեմն նախկին է:

ՊԵՏԸ - Իսկ ինչո՞ւ չշարունակեցիք այդ տանը մնալ: Ձեզ այնտեղ մի անկյուն հասնում է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Իսկ ես անկյուն չեմ ուզում: Ես իմ տունն եմ ուզում, իմ տունը...

ՊԵՏԸ - Իսկ ինչո՞ւ եք բղավում:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ե՞ս: /Հոգնած/ Ներողություն:

ՊԵՏԸ - Այդպես: Իսկ այստեղ որտե՞ղ եք ուզում գրանցվել:

ՔԱՂԱՔԱՑԻ - Մեր տանը: Հորս տանը: Սեփական տուն է:

ՊԵՏԸ - Բնակտարածությունը բավականացնո՞ւմ է:

ՔԱՂԱՔԱՑԻ– Բավականացնում է:

ՊԵՏԸ - Ո՞ր փողոցի վրա է:

ՔԱՂԱՔԱՑԻ – Սարաջովի:

ՊԵՏԸ - Սարաջովի՞:

ՔԱՂԱՔԱՑԻ – Սարաջովի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԵՏԸ - Չի լինի,

ՔԱՂԱՔԱՑԻ - Ինչո՞ւ:

ՊԵՏԸ - Քանդվելու ենթակա է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Երբ ես դեռ չէի ծնվել, դարձյալ քանդվելու ենթակա էր:

ՊԵՏԸ - Դա ինձ չի վերաբերում: Որոշում կա:

ՔԱՂԱՔԱՑԻ - Հա, բայց ես մեր տանն եմ գրանցվում:

ՊԵՏԸ - Դա արդեն ձեր տունը չէ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ինչպե՞ս թե մեր տունը չէ:

ՊԵՏԸ - Որովհետև գրանցված չեք:

ՔԱՂԱՔԱՑԻ - Դե, ես էլ ուզում եմ գրանցվել:

ՊԵՏԸ - Քանդման ենթակա է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Բա ես որտե՞ղ ապրեմ:

ՊԵՏԸ - Որտեղ ապրել եք:

ՔԱՂԱՔԱՑԻ - Լսեք, ընկեր ջան, քեռի ջան, հորեղբայր ջան, ես ամբողջ կյանքում այդ տանն եմ ապրել: Ընդամենը մի տարի է, ինչ դուրս եմ եկել: Հիմա վերադառնում եմ...

ՊԵՏԸ - Ինչո՞ւ եք վերադառնում:

ՔԱՂԱՔԱՑԻ - /Հուսահատ պառուզա/ Լավ, ես իմ ծնողների հետ իրավունք չունե՞մ ապրելու: Ասենք թե բանակ եմ գնացել:

ՊԵՏԸ - Բայց դուք բանակ չեք գնացել:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ասենք թե խոպան եմ գնացել, մեծ կառույցները, Սիբիր, գրողի ծոցը...

ՊԵՏԸ - Այնտեղ էլ գրանցվեք:

ՔԱՂԱՔԱՑԻ - Այնտեղ գրանցված էի: Հետո դուրս եմ գրվել, ուզում եմ մեր տանը գրանցվել:

ՊԵՏԸ - Ձեր տունը քանդման ենթակա է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՔԱՂԱՔԱՑԻ - Լավ, թույլ տվեք ուրիշ տեղ գրանցվել:

ՊԵՏԸ - Որտե՞ղ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Որտեղ ուզում եք:

ՊԵՏԸ - Ես ոչ մի տեղ էլ չեմ ուզում: Դուք եք ուզում:

ՔԱՂԱՔԱՑԻ - Լավ, ես եմ... ես... Թեկուզ Սարի թաղում:

ՊԵՏԸ - Սարի թաղն էլ է քանդման ենթակա:

ՔԱՂԱՔԱՑԻ - Օրինակի համար եմ ասում... Դե, թեկուզ Կրիվոյի փողոցում:

ՊԵՏԸ - Կրիվոյն էլ է քանդման ենթակա:

ՔԱՂԱՔԱՑԻ - Վայ, մեռնում եմ... Որտեղ ուզում եք... Չէ, որտեղ ես եմ ուզում... գժանոցում, Մարսի վրա, Լուսնի տակ, Վեներայի կողքին... Թե՞ դրանք էլ են քանդման ենթակա:

ՊԵՏԸ - Քանդման ենթակա են: Ի՞նչ... Չէ, դրանք քանդման ենթակա չեն...

ՔԱՂԱՔԱՑԻ - Ուրեմն որևէ տեղ, թեկուզ Նորքի զանգվածում:

ՊԵՏԸ - Նորքի զանգվածո՞ւմ: Սպասեք, սպասեք, դուք Երևանում մի տուն ունեք և ուզում եք երկրո՞րդն էլ ունենալ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ես չեմ ուզում... դուք եք ուզում...

ՊԵՏԸ - Ե՞ս...

ՔԱՂԱՔԱՑԻ - Դե տեսնում եք, ուրեմն կգրանցե՞ք Սարաջովում:

ՊԵՏԸ - Չեմ կարող, քանդման ենթակա է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Լավ, բա ես ի՞նչ անեմ... Ալավերդուց եկա...

ՊԵՏԸ - Իսկ ինչո՞ւ Ալավերդուց եկաք...

ՔԱՂԱՔԱՑԻ - /Օրորվում է/ Որտեղի՞ց, ի՞նչ Ալավերդի... Ո՞վ... ճիշտ որ, է՛, ինչո՞ւ... Հա, ես ու դու իրար չհասկացանք, եկանք Անկախ մայլա, հա... կինս Սարաջովում... Վեներայի վրա... Հայրս Նորքի զանգվածում, կտուրների վրա... ես գրողի ծոցում... Դու... Ուրեմն ո՞րն էր հիմնա-

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

կան հարցը... ընկեր ունկնդիրներ... Սպասեք, սպասեք, ես անպայման կհիշեմ... Հա, գտա... Ալա, բալա, նիցա, դուս կաբանիցա, հեյ գիտի վանչո, ռաս կապիտանչո, փալանչո...

Հիմա միասին... երեք չորս... Ալա, բալա, նիցա...

/Հաշվում է, աչքերը փակած/:

ՊԵՏԸ - Վա՞յ, իսկ որ ներս մտավ, ոնց որ խելագար չլիներ... Շատ զգույշ պետք է լինել, շա՛տ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ

Սովորական սենյակ: Հայրը լրագիր է կարդում: Մայրը սրբում է կահույքի փոշին: Տղան դաս է սովորում գրասեղանի մոտ:

ՏՂԱՆ - /Թաքուն նշաններ է անում մորը, շշուկով/ Մա՛մ...

ՄԱՅՐԸ- /վախեցած նայում է հորը, թոթվում է ուսերը/ Ինքդ էլ ասա...

ՏՂԱՆ - Լավ էլի, մամ...

ՄԱՅՐԸ -Թորգոմ...

ՀԱՅՐԸ - Ըհը...

ՄԱՅՐԸ - Թորգոմ ջան, վաղը Աշոտենց ծնողական ժողովն է:

ՀԱՅՐԸ – Ըհը՛...

ՄԱՅՐԸ - Դասղեկը խնդրել է, որ դու գնաս ժողովի:

ՀԱՅՐԸ - /Ապշած/ Ե՞ս...

ՄԱՅՐԸ - Հա, Թորգոմ ջան...

ՀԱՅՐԸ - Ե՞ս ինչ կապ ունեմ:

ՄԱՅՐԸ - Դե երևի նրանք գտնում են, որ կապ ունես...

ՏՂԱՆ - Պապ ջան, ընկեր Կոտոյանն ասաց. հայրիկդ թող գա:

ՀԱՅՐԸ – Բայց ինչի՞ համար... նա ինձ որտեղի՞ց գիտի... Մանուշ, կգնաս, կիմանաս, թե ինչ է ուզում:

ՄԱՅՐԸ - Դե երևի որևէ հարց կա... Ուզում են հայրերի հետ խոսել:

ՀԱՅՐԸ - Դա՞ ինչ խտրականություն է... հիմա հայր-մայր՝ ի՞նչ տարբերություն: Եվ վերջապես, ես դպրոցի տեղն էլ չգիտեմ: Ուրիշ դպրոց կգնամ: Հիմար վիճակի մեջ կընկնեմ;

ՏՂԱՆ - Ախր ընկեր Կոտոյանն ասաց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Թե ընկեր Կոտոյանն ինչ ասաց՝ կարևոր չէ, Աշոտ, կարևորն այն է, թե ես ինչ եմ ասում: Ես դպրոց չեմ գա;

ՏՂԱՆ - Ախր ինչու՞, հայրիկ ջան, մամ, ասա էլի...

ՄԱՅՐԸ – Թորգո՛մ...

ՀԱՅՐԸ - Վերջացրու, Մանուշ, ես դպրոցի հետ գործ չունեմ:

/Տղան ընդոստ վեր է թռչում և դուրս վազում սենյակից/:

ՄԱՅՐԸ - /Մեղմ ու տխուր/ Բա ինչի՞ հետ գործ ունես, Թորգոմ, ասա, ինչի՞ հետ գործ ունես: Ուսուցիչ ես, հարազատ աղջիկդ խնդրում է հենց քո առարկան պարապել իր հետ, լավ չի հասկանում, ասում ես՝ ես գործ չունեմ:

ՀԱՅՐԸ - Սկսվե՛ց...

ՄԱՅՐԸ - Խոհանոցի լուսամուտի ապակին արդեն մի շաբաթ է կոտրվել է, փչում է, չեմ կարողանում գործ անել, մրսում եմ, քեզ խնդրում եմ վարպետ հրավիրել, ասում ես՝ ես գործ չունեմ, դա իմ գործը չէ:

ՀԱՅՐԸ - Ուրեմն, ի՞մ գործն է, Մանուշ:

ՄԱՅՐԸ - Ախր, էդպես չի լինի, Թորգոմ ջան, մեր տանը էլեկտրական ոչ մի սարք չի աշխատում, ոչ մի անջատիչ, ոչ մի շտեպսել սարքին չէ:

ՀԱՅՐԸ – Խրոց, Մանուշ, խրոց...

ՄԱՆՈՒՇ - Ի՞նչ...

ՀԱՅՐԸ - Շտեպսելին հայերեն անվանում են խրոց...

ՄԱՅՐԸ - Թեկուզ...

ՀԱՅՐԸ - Դու էլեկտրիկի հետ պետք է ամուսնանայիր... ճակատագրական սխալ ես թույլ տվել, Մանուշ:

ՄԱՅՐԸ - Դեռ կատակում ես, չէ՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Բա ի՞նչ անեմ: Մարդուց այդքան պահանջել չի կարելի, սիրելիս: Արտադրությունում բանվորներին ամենաշատը երկրորդ մասնագիտություն սովորել են ստիպում, իսկ դու ուզում ես, որ ես և՛ հյուսն լինեմ, և՛ էլեկտրիկ, ապակի զցող լինեմ և մանկավարժ... շատ չէ՞:

ՄԱՅՐԸ - Ինչու՞ է շատ: Ուրիշ ամուսիններ...

ՀԱՅՐԸ - Խմում են:

ՄԱՅՐԸ - Ի՞նչ...

ՀԱՅՐԸ - Խմում են, իսկ ես չեմ խմում:

ՄԱՅՐԸ - Հետո՞...

ՀԱՅՐԸ - Ծխում են: Իսկ ես չեմ ծխում:

ՄԱՅՐԸ - Լավ ես անում, Թորգոմ ջան, բայց հետո, հետո՞...

ՀԱՅՐԸ - Այ, որ խմեի ու ծխեի, այդ հետոն չէիր ասի... Քո միակ նպատակը կլիներ այն, որ ես չխմեի ու չծխեի...

ՄԱՅՐԸ - Թորգոմ, սիրելիս, եթե չես խմում, չես ծխում, նշանակում է իրավունք ունե՞ս այդքան անտարբեր լինելու ընտանիքիդ նկատմամբ, քո տան նկատմամբ: Հազար ու մի հոգսեր կան, հազար ու մի հարցեր կան, մեղք եմ, չէ՞, ինչու՞ ես ամեն ինչ զցել ինձ վրա... բա տանը տղամարդ լինի ու...

ՀԱՅՐԸ - Իսկ եթե չլիներ, ի՞նչ պետք է անեիք...

ՄԱՅՐԸ - Ի՞նչը չլիներ...

ՀԱՅՐԸ - Ոչ թե ինչը, այլ ով՝ ես: Ենթադրենք ես չլինեի...

ՄԱՅՐԸ - Տարօրինակ բաներ ես ասում, Թորգոմ, բայց չէ՞ որ կաս:

ՀԱՅՐԸ - Ենթադրեք թե ես չկամ ու ձեռ քաշեք ինձանից, վե՛րջ:

ՄԱՅՐԸ - Թորգոմ...

ՀԱՅՐԸ - Վերջացրու, Մանուշ:

/Կինը հուսահատ տարածում է ձեռքերը: Հեռախոսը զնգում է: Կինը վերցնում է/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Այո՞: Բարև, Գրետա, է՛հ, տուն է, էլի, Թորգոմը՞... տանն է, խնդրեմ, խնդրեմ... Վերցրու, մեր ներքևի հարևան Սահակյանի կինն է:

ՀԱՅՐԸ - Մինիստրի տեղակալի՞...

ՄԱՅՐԸ - Հա...

ՀԱՅՐԸ - Բայց ես ի՞նչ գործ ունեմ... /վերցնում է/ Լսում եմ, Գրետա Մարկովնա... Շնորհակալություն... ինչպե՞ս... էլեկտրական նոր ջա՞հ եք գնել... շնորհավորում եմ... պետք է կախե՞լ... /վախեցած նայում է կնոջ կողմը/ Իհարկե, կարող եմ, դատարկ բան է... Ես իսկույն...

ՄԱՅՐԸ - Հը, երկրորդ մասնադիտությու՞ն ձեռք բերեցիր, Թորգոմ...

ՀԱՅՐԸ – Հետաքրքիր կին ես, Մանուշ, հարևան է, խնդրում է, չգնամ՝ ի՞նչ կմտածի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆԱ ՔՆԱԾ Է ԵՂԵԼ

Նոր տարվա գիշեր: Սենյակում մայրն ու աղջիկն են: Փոքրիկ ու համեստ սեղան են բացել: Մի շիշ շամպայն: Եղևնու մի ճյուղ: Մայրը անշտապ սեղանն է հարդարում: Աղջիկը քայլում է երջանիկ ու խոսում է:

ԱՂՋԻԿԸ -Այնքան էի ուզում, որ ձյուն գար, մամ... Ախր ի՞նչ նոր տարի՝ առանց ձյան: Ձյունն ուրիշ է. երբ թափվում է հանդարտ, ծանր փաթիլներով, միանգամից սպիտակով ծածկում գետինը, տանիքները, ամեն-ամեն ինչ... բարձրացնում ես գլուխդ ու փաթիլները ուղիղ դեմքիդ են իջնում, խուտուտ տալիս... Չէ, ուրիշ է ձյունը... ճիշտ չէ՞, մամ...

ՄԱՅՐԸ - /Մի նոր ափսե ձեռքին/ Ճիշտ է, ճիշտ է, շատախոս...

ԱՂՋԻԿԸ - Իսկ ամենալավն այն է, որ տաք ձյուն է գալիս... ապշելու բան է, չէ՞, տաք ձյուն, վազում ես, իբր թե սոթ է տալիս, մեջքի վրա ընկնում ես փափուկ ձյան մեջ ու մեկ էլ զգում ես, որ երջանիկ ես… ճիշտ չէ՞, մամ...

ՄԱՅՐԸ - /Սեղանի մոտ/ Իմ կարծիքով դու առանց ձյան էլ երջանիկ ես:

ԱՂՋԻԿԸ - Ի՞նչ: Ո՞րտեղից իմացար, մամ...

ՄԱՅՐԸ - Խենթուկ:

ԱՂՋԻԿԸ - Չէ, չէ, ո՞րտեղից իմացար:

ՄԱՅՐԸ - /Ծիծաղելով/ Սեղանը մի խառնիր, այ աղջիկ: Որտեղից իմացար... Մի՞թե դա իմանալ է պետք: Զգալն էլ քիչ չէ:

ԱՂՋԻԿԸ – Օ՜հ, դու փիլիսոփա ես, մամ, փիլիսոփա...

ՄԱՅՐԸ - Որ մայր դառնաս, դու էլ ակամա կսկսես փիլիսոփայել: Իսկ քո երջանիկ լինելն զգալը ինչ մի դժվար բան է: Բավական է մի հայացք, և... երջանիկ լինես, աղջիկս, երջանիկ լինես...

ԱՂՋԻԿԸ - Սուս, մամ, պետական կարևոր գաղտնիքները հրապարակելը պատժվում է օրենքով:

ՄԱՅՐԸ – Շա՜տ խիստ գաղտնիք է, իհարկե: Ամբողջ թաղամասը գիտի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ - Ի՞նչ անեմ, մամ, որ ժամին գալիս եմ՝ հարևանները աչքերը չռած մեզ են նայում:

ՄԱՅՐԸ - Դու գալիս ես և ձե՞զ են նայում:

ԱՂՋԻԿԸ - Դե... երբ որ Հակոբը ուղեկցում է ինձ: Իսկ նա քեզ դո՞ւր է գալիս, մամ, միայն թե անկեղծ, նա քեզ դո՞ւր է գալիս:

ՄԱՅՐԸ - Կարևորն այն է, որ քե՛զ դուր գա, բալիկս:

ԱՂՋԻԿԸ -Ուրեմն քեզ դուր չի գալիս:

ՄԱՅՐԸ - Ախ դու, պրովոկատոր: Դուր է գալիս, դուր է գալիս...

ԱՂՋԻԿԸ - Կներես, մամ, բայց ես չեմ կարծում, թե նա որևէ մեկին դուր չգա: Այնքան աշխույժ է, այնքան սիրալիր, այնքան հոգատար...

ՄԱՅՐԸ – Տա՛ աստված, որ այդպես լինի, աղջիկս... վայ, մեկ բոպե է մնացել, շուտ, բացիր շամպայնը...

ԱՂՋԻԿԸ – Վայ... /Բացում է, թափում է շամպայնը/ Վայ, մեջը բան չմնաց:

ՄԱՅՐԸ -Ինչքան էլ մնա, հերիք է մեզ... Շնորհավոր նոր տարիդ, Քնարիկ, թող նոր տարին նոր ուրախություն բերի քեզ, բախտավոր լինես, աղջիկս...

ԱՂՋԻԿԸ - Հիմա զանգ կտա:

ՄԱՅՐԸ - Ո՞վ,

ԱՂՋԻԿԸ – Հակոբը: Ա՛յ, հիմա զանգ կտա... մեկ, երկու...

ՄԱՅՐԸ - Քեզանից բացի, ես ոչ ոք չունեմ աշխարհում, թե ինչպես եմ պահել, մեծացրել քեզ, մեկ աստված գիտի, մեկ էլ...

ԱՂՋԻԿԸ - Մամ ջան, մի բոպե սուս մնա, հա՞, հիմա ուր որ է զանգ կտա:

ՄԱՅՐԸ - Վախենում ես չլսվի՞, ինչ է...

ԱՂՋԻԿԸ - Մի բոպե...

ՄԱՅՐԸ - Հիմա հեռախոսակայանն այնքան ծանրաբեռնված կլինի, որ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ – Ի՜նչ ես ասում, մամ, հիմա, այ հենց հիմա կինչի զանգը... /Լռում են, սպասում: Մայրը փոքր-ինչ սրտնեղած է/: Ի՞նչ էիր ասում, մա...

ՄԱՅՐԸ - Ոչինչ:

ԱՂՋԻԿԸ - Իսկ գուցե... /վերցնում է լսափողը և անմիջապես էլ ցած է դնում/ Չէ՜, աշխատում է:

ՄԱՅՐԸ - Կարող էիր գոնե իմ Նոր տարին շնորհավորել:

ԱՂՋԻԿԸ -Վայ, մամ ջան, վայ, ինչ դմբոն եմ... Շնորհավորում եմ Նոր տարիդ, կյանք ջան, առողջ լինես, ուրախ լինես, իմ գլխից անպակաս... /Հնչում է հեռախոսի զանգը/ Ինքն է... /Վերցնում է լսափողը/:

Ալո՞... /հիասթափված է/ շնորհակալություն, ձերն էլ, ոչինչ, է՜հ, մայրիկը պառկեց... Չէ, ոչինչ, բարի գիշեր...

ՄԱՅՐԸ - Ի՞նչ ես խոսում, այ աղջիկ, ես ե՞րբ պառկեցի:

ԱՂՋԻԿԸ - Սաթիկն էր, մամ ջան, կես ժամ խոսելու էր:

ՄԱՅՐԸ - Հետո՞, ինձ հետ էր խոսելու, քե՞զ ինչ...

ԱՂՋԻԿԸ - Հեռախոսը, մամ, Հակոբը զանգ կտա հիմա...

/Լռում են: Նայում են հեռախոսին/:

Ի՞նչ կարող է պատահած լինել: Անպայման մի բան պատահած կլինի:

ՄԱՅՐԸ - Ի՞նչ ես իրար խառնվել, աղջիկս, գուցե հյուրեր ունեն, զբաղված է...

ԱՂՋԻԿԸ – Ի՜նչ ես ասում, մամ, նա ասաց ժամացույցի տասներկուերորդ զարկի հետ կինչի իմ զանգը... որպեսզի նոր տարվա յուրաքանչյուր վայրկյանին մենք միասին լինենք: Զանգը չէ՞ր:

ՄԱՅՐԸ - Սրտիդ այդքան մոտ մի ընդունիր, աղջիկս...

ԱՂՋԻԿԸ - Ասում ես էլի, մամ... Արդեն մի ժամ անցել է... Ի՞նչ կարող է պատահած լինել...

ՄԱՅՐԸ - Ամեն ինչ էլ կարող է լինել: Գուցե ուղղակի նրանց հեռախոսն է փչացած և անհարմար է զգում այսպիսի մի օր ուրիշի տնից զանգահարել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ - Մամ ջան, բա որ ասում եմ՝ դու աշխարհի ամենախելոք, ամենաիմաստուն մայրիկն ես... ինչպես մտքովս չէր անցնում... հիմա կստուգեմ... /Հավաքում է համարը/:

Զանգերը գնում են... Ալո՞, վերցրին... Հակո՞բ: Ի՞նչ է պատահել, Հակոբ ջան: Ի՞նչ, քնա՞ծ էիր: Ինչպես թե քնած էիր,,. Հա՞... Ե՞ս... ես ի՞նչ... Ու-զում էի շնորհավորել քո նոր տարին... Ի՞նչ... Ես սենտիմենտա՞լ եմ... Ճիշտ է... Բարի գիշեր, Հակոբ...

/ Շրջվում է, նայում է տխրած մորը: Մայրը շոյում է նրա մազերը/:

Պատկերացնո՞ւմ ես, մամ, նա քնած է եղել: Նա քնած է եղել, մամ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռեստորանի մի անկյունը: Փոքրիկ սեղան՝ երկու հոգու համար: Հեռվից մեղմ երաժշտություն է լսվում: Սեղանին են մոտենում երկու տղամարդ. մեկը երկչոտ, ռեստորանին անվարժ շարժուձևով, միջահասակ, նիհար մարդ է, շատ սովորական հագնված, մյուսը ժամանակակից ոճով, անթերի հագնված՝ կաշվե պիջակով, թավշե տաբատով, դեղին վերնաշապկի վրա վառ կարմիր փողկապ կապած երիտասարդ է, ռեստորանի մշտական այցելու: Նրա անունը Մանուկ է, երկչոտ մարդու անունը՝ Տիգրան:

ՄԱՆՈՒԿ - Նստիր, նստիր, հարևան ջան...

ՏԻԳՐԱՆ - Շնորհակալություն:

/Նստում է: Նստում է նաև Տիգրանը և մատները չխկչխկացնելով մատուցողի ուշադրությունն է հրավիրում: Անմիջապես հայտնվում է մատուցողը, անձեռոցիկը ձախ արմունկից կախ, խոնարհվում է/:

ՄԱՏՈՒՑՈՂ - Լսում եմ:

ՄԱՆՈՒԿ - /Հարևանին/ Դե, կարգադրիր, ի՞նչ կուզես, հարևան ջան...

ՏԻԳՐԱՆ - Ե՞ս... գիտեք… ինձ համար միևնույնն է...

ՄԱՆՈՒԿ - Չեղավ, էսօր քեֆ ենք անում, հարևան, ուզիր, ինչ սիրտդ ցանկանում է...

ՏԻԳՐԱՆ - Ոչ, ոչ, իսկապես, ինձ համար միևնույնն է, գուցե կոտլետ, կոտլետ ունե՞ք...

ՄԱՆՈՒԿ - / Ծիծաղում է/ կոտլե՞տ... դե լավ, ի՞նչ ունեք, Մացո:

ՄԱՏՈՒՑՈՂ - Ձեզ համար ամեն ինչ...

ՄԱՆՈՒԿ - /Ինքնագոհ ժպտում է/ Դե, ամեն ինչ էլ բեր...

ՄԱՏՈՒՑՈՂ - Ի՞նչ կխմեք...

ՄԱՆՈՒԿ - Իսկ ես ի՞նչ եմ խմում, այ տղա...

ՄԱՏՈՒՑՈՂ - Եղավ... /կամացուկ/ Կարծես թե ասետրինա ստացան՝ բանկետի համար:

ՄԱՆՈՒԿ - Դասավորիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՏՈՒՑՈՂ - Եղավ... / Հեռանում է/...

ՄԱՆՈՒԿ - Քիչ առաջ սեղանից վեր կացանք, գիտե՞ս, իբր թե մտա նախաճաշելու: Մեկ էլ տղերքը վրա տվեցին... Հենց նոր էի դուրս եկել, մեկ էլ տեսա գրքերը թևիդ տակ գնում ես..

ՏԻԳՐԱՆ - Այո, աշխատանքից էի գալիս...

ՄԱՆՈՒԿ - Որ չտեսա... ասացի սրանից էլ լավ առի՞թ, հարևանիս հետ մի քիչ նստենք զրույց անենք...

ՏԻԳՐԱՆ - Այո...

ՄԱՆՈՒԿ - Հիմա այո ես ասում, բայց հոգիս դուրս եկավ, մինչև որ համոզեցի:

ՏԻԳՐԱՆ - Դե, գիտեք, գրեթե անծանոթներ ենք...

ՄԱՆՈՒԿ - Բա սրանից էլ լավ առի՞թ, կխոսենք, հաց կուտենք, կծանոթանանք: Ամոթ էլ է, հարևաններ ենք ու իրար չենք ճանաչում... ես քեզ փաստորեն միայն առավոտներն եմ տեսնում: Երբ աշխատանքի եմ գնում, դու աղբ ես թափում:

ՏԻԳՐԱՆ - Այո...Մեծ քաղաքներն այդ տեսակետից շատ տարօրինակ են... մարդիկ տարիներ շարունակ ապրում են կողք-կողքի և միմյանց չեն ճանաչում... / Մոտենում է մատուցողը, սայլակով ուտելիքներ ու խմիչքներ բերելով, դասավորում է/:

ՄԱՆՈՒԿ - Ապրես, Մացո, այ տղա, սև իկրան հո չե՞ս մոռացել... Չէ՞… Մի բան ասեմ, չծիծաղես, հարևան, մինչև թանկացնելը ես իկրա կյանքումս չէի կերել, բայց հենց որ թանկացրին, ասացի՝ ուրեմն մի բան արժի, որ թանկացնում են, բա ինչու՞ բադրիջանի իկրան էլ չեն թանկացնում... ճիշտ չէ՞... Ու ոչինչ... տանը հիմա միշտ մի երկու կիլոանոց պահում եմ... Դու իկրա չե՞ս սիրում...

ՏԻԳՐԱՆ - Սիրում եմ...

ՄԱՆՈՒԿ - Դե կեր... այսինքն, մեր հայկական սովորությամբ, մի-մի բաժակ խմենք, նոր, չէ՞... /Լցնում է բաժակները/:

Ուրեմն քո կենացը, հարևան, մեր հարևանության կենացը, ողջ լինես, առողջ լինես... գնացի...

ՏԻԳՐԱՆ - Շնորհակալություն: Բայց ես քաղցած եմ, գիտեք, ուղիղ աշխատանքից էի գալիս, մի քիչ կուտեմ, նոր կխմեմ, լա՞վ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՆՈՒԿ - Իհարկե, կեր, կեր... Դե մենք քիչ առաջ տղերքով... Սա էլ բալիկ է, բալիկ չե՞ ս սիրում:

ՏԻԳՐԱՆ - Սիրում եմ:

ՄԱՆՈՒԿ - Դէ, կեր, կեր, կարագով լավ է... Ձեյթուն էլ կեր, մարսողական է: Էս ռեստորանն ինձ դուր է գալիս, դրա համար էլ միշտ էստեղ եմ ճաշում: Տնական են պատրաստում, մաքուր…

Իսկ դու ո՞ր ռեստորանն ես սիրում…

ՏԻԳՐԱՆ - Ե՞ս... ես հիմնարկում եմ նախաճաշում: Այո… իսկ դա շատ թանկ չի՞ նստում… ռեստորանում…

ՄԱՆՈՒԿ - Պապական խոսք է, հարևան, թանկից էժանը չկա, սուտ բան է: Հա, հարևան ջան, քո անունն ի՞նչ է, կներես, որ մինչև հիմա չեմ իմանում:

ՏԻԳՐԱՆ – Տիգրան:

ՄԱՆՈՒԿ - Իմ անունն էլ Մանուկ է: Ըհը, ծանոթացանք: Իսկ ինչ գծով ես աշխատում... դու կեր, կեր, համ կեր, համ խոսիր...

ՏԻԳՐԱՆ - Չէ, ոչինչ, լեզվաբան եմ:

ՄԱՆՈՒԿ - Լեզվաբա՞ն... Քննությո՞ւն ես ընդունում...

ՏԻԳՐԱՆ - Ոչ, ես դասախոս չեմ… ուղղակի լեզվի ինստիտուտում եմ աշխատում…

ՄԱՆՈՒԿ - Հա... իսկ լու՞րջ գործ է...

ՏԻԳՐԱՆ - Ես շատ եմ սիրում…

ՄԱՆՈՒԿ - Ամենակարևորը դա է: /Լցնում է իր բաժակը/ Ուրեմն նորից քո կենացը և այն բանի կենացը, որ մարդ իր աշխատանքը սիրում է... Ես, օրինակ, առաջ կաշվի գործ էի անում, լավ էր, բայց շան հոտ էր գալիս, չէի սիրում…

ՏԻԳՐԱՆ - Իսկ հիմա՞...

ՄԱՆՈՒԿ - Հիմա մաքուր-մաքուր է, կոմիսիոն խանութում եմ... Արտասահմանում բարեկամ-մարեկամ չունե՞ս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ոչ:

ՄԱՆՈՒԿ - Ափսոս... դե գնացինք:

ՏԻԳՐԱՆ - Արդե՞ն...

ՄԱՆՈՒԿ - Ի՞նչ, չէ, Տիգրան ջան, խմելու համար եմ ասում, գնացինք, այսինքն՝ խմեցինք:

ՏԻԳՐԱՆ - / Ծիծաղում է/ Այո՞ ... ես էլ կարծեցի… Ուրեմն, գնացի՞նք, հետաքրքիր է... /խմում է/ Օ՜հ, ինչ հիանալի կոնյակ է... ի՞նչ է... / կարդում է/ «Նաիրի»... փառահեղ կոնյակ է...

ՄԱՆՈՒԿ - Հա, ես մենակ «Նաիրի» եմ խմում... իսկ դու ուրիշ բան ես սիրում, հա՞, ուզո՞ւմ ես ասեմ...

ՏԻԳՐԱՆ - Ոչ, ոչ, հիանալի է... / նորից ծիծաղում է/ Ուրեմն՝ գնացի՜նք… Շատ հետաքրքիր է, եթե այդպես ընդունված է, ուրեմն կարելի է բառարանում էլ գրել իբրև նոր գործածական իմաստ...

ՄԱՆՈՒԿ - Բա ի՞նչ, կարծում ես մենք պակա՞ս լեզվաբան ենք... Դե հիմա մի կենաց էլ ասեմ...

ՏԻԳՐԱՆ - Խնդրեմ...

ՄԱՆՈՒԿ – Ուրեմն՝ ընկերության կենացը, մաքուր, ազնիվ, անշահախնդիր ընկերության կենացը, էն ոնց էր, է՜, բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդու...

ՏԻԳՐԱՆ - Այո, Ջիվանի...

ՄԱՆՈՒԿ - Հա, շատ եմ սիրում անշահախնդիր ընկերությունը, ա՛յ, ոնց որ ես ու դու, չէ՞...

ՏԻԳՐԱՆ - Այո, այո, այդպես է:

ՄԱՆՈՒԿ - Իսկ... ուրեմն ասում ես՝ արտասահմանում բարեկամներ չունե՞ս...

ՏԻԳՐԱՆ- Ոչ, ոչ, ո՛չ արտասահմանում, ո՛չ էլ բանտարկված...

ՄԱՆՈՒԿ - Վայ, ա՛յ մարդ, ես հո անկետա չեմ լրացնում: Ուզում եմ ասել, եթե բարեկամ ունես ու հանկարծ ապրանք–մապրանք բերի, էլ ուրիշի չես ասում, ուղիղ ինձ մոտ ես բերում... Եղա՞վ...

ՏԻԳՐԱՆ - Այո, բայց ես ոչ մի բարեկամ չունեմ...

ՄԱՆՈՒԿ - Ափսոս... դե հիմա մի կենաց էլ դու ասա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ե՞ս... հաճույքով... Ձեր կենացը, Մանուկ, սրտանց, շատ ուրախ եմ, որ այսպես մոտիկից ծանոթացանք...ըստ իս, դուք բավականին բարի, առինքնող, սրտաբաց մարդ եք... ձեր կենացը... Ուրեմն՝ գնացի՛նք:

ՄԱՆՈՒԿ - Գնացինք... /Խմում են/:

Հա, Տիգրան ջան, ասացիր, բայց բան չհասկացա, կներես, ուրեմն ի՞նչ գործի ես...

ՏԻԳՐԱՆ - Լեզվաբան եմ...

ՄԱՆՈՒԿ - Հասկացա, բայց ի՞նչ ես անում...

ՏԻԳՐԱՆ - Լեզուներ եմ ուսումնասիրում, իմ մասնագիտությունը համեմատական լեզվաբանությունն է...

ՄԱՆՈՒԿ - Հասկացա, իսկ ինչի՞ հետ ես համեմատում...

ՏԻԳՐԱՆ - / Ծիծաղում է/ Լեզուներն եմ համեմատում իրար հետ, արմատներն եմ ճշտում... ընդհանրություններ եմ փնտրում...

ՄԱՆՈՒԿ - Եվ քանի՞ լեզու գիտես...

ՏԻԳՐԱՆ - Դե ինչպես ասեմ... Լիովին տիրապետում եմ հինգ լեզվի, խոսում եմ տասնչորս լեզվով և տասներկու լեզու էլ... այո, տասներկու, հասկանում եմ... օգտագործում եմ...

ՄԱՆՈՒԿ – Այ քեզ բան... հարևան, հաստատ քո կենացը... Ես չգիտեի էլ, որ մեր շենքում էդքան մեծ մարդ է ապրում: Գնացի՛նք...

ՏԻԳՐԱՆ – Գնացի՛նք... Այսինքն, ի՛նչ եք ասում, ի՞նչ մեծ... ես մի սովորական լեզվաբան եմ...

ՄԱՆՈՒԿ - Եվ էդքան լեզուներն ի՞նչ եք անում, հարևան...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ պետք է անեմ...

/Մոտենում է մատուցողը/:

ՄԱՏՈՒՑՈՂ - Ճիշտ ժամանակին, օսետրինա նա վերտելե… բանկետից թոցրեցի...

ՄԱՆՈՒԿ - Ապրես, Մացո... մի շիշ էլ բեր...

ՏԻԳՐԱՆ - Ոչ, ոչ, ինչ եք ասում, բավական է, ես արդեն գինով եմ, գիտեք... Չբերեք, ընկեր, պետք չէ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՏՈՒՑՈՂ - Ինչպես կամենաք... / ուզում է գնալ/:

ՄԱՆՈՒԿ - Ո՞նց թե ինչպես կամենաք, այ տղա, էդ ի՞նչ լեզվով ես խոսում, ես քեզ ի՞նչ ասացի... հաշիվը ես չե՞մ փակելու:

ՄԱՏՈՒՑՈՂ - Աչքիս վրա, Մանուկ ջան...

ՄԱՆՈՒԿ - Խմեք, հարևան ջան, խմեք, հիսուն ռուբլի է, էլի…

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչն է հիսուն ռուբլի:

ՄԱՆՈՒԿ - «Նաիրին», իբրև թե դու երեսունով ես խմում...

ՏԻԳՐԱՆ - Մի՞ շիշը...

ՄԱՆՈՒԿ - Չէ, երկուսը.../ծիծաղում է/ բայց դե արժե, չէ՞, որ խմում ես...

ՏԻԳՐԱՆ - Սպասիր, ուրեմն երկու շիշը հարյուր ռուբլի՞ ...

ՄԱՆՈՒԿ – Է՛, մանրացանք, ուրեմն քո կարծիքով էդ կոնյակն ու՞մ համար են արտադրում: Որ ես չխմեմ, դու չխմես, մնա թթվի՞...

Գնացինք, հարևան ջան, էս էլ մեր երեխաների կենացը:

ՏԻԳՐԱՆ - Այո, գնացինք... /Խմում է, բայց տրամադրությունն ընկած է/:

ՄԱՆՈՒԿ- Այ ախպեր, էդքան լեզու գիտես, դու էլ ես մտածո՞ւմ...

ՏԻԳՐԱՆ - Լեզու՞ն ինչ կապ անի...

ՄԱՆՈՒԿ - Չէ, չէ, սպասիր, հիմա դու ինչքա՞ն ես ստանում, հարցնելն ամոթ չլինի...

ՏԻԳՐԱՆ - Ե՞ս... ես բարձր աշխատավարձ եմ ստանում... մի խոսքով, մոտ երեք հարյուր ռուբլի:

ՄԱՆՈՒԿ - Ինչքա՞ն,

ՏԻԳՐԱՆ - Երեք հարյուր... Դե, նաև կոչումը... դրա համար է բարձր...

ՄԱՆՈՒԿ - Բա՞րձր... բա լեզուների համար չե՞ն վճարում:

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ պետք է վճարեն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՆՈՒԿ - Քո կենացը, ախպեր... Բա էլ ինչի՞ են ասում, թե ինչքան լեզու գիտես, էնքան մարդ ես, եթե տասնհինգ լեզու գիտես, հիմա դու օրենքով տասնհինգ մարդու աշխատավարձ պիտի ստանայիր:

Ուրեմն, երեք հարյուր… Չէ, դու «Նաիրի» չխմեցիր...

ՏԻԳՐԱՆ - Այո, ես «Նաիրի» չեմ խմում... /Վիրավորված է/:

ՄԱՆՈՒԿ - / Ծիծաղում է/ Չնեղանաս, Տիգրան ջան, մի անեկդոտ հիշեցի: Ուրեմն մի հայ մարդ Սոչիի ծովում խեղդվում է ու սկսում է գոռալ, «Պոմոգիտե, պոմոգիտե», այսինքն թե՝ խեղդվում եմ, հասեք... Մի ուրիշ հայ էլ ափին կանգնած է լինում, ասում է. «Ախպեր ջան, լեզու սովորելու տեղը լողանալ սովորեիր, էլի»: Հիմա քոնն է, էդքան լեզուներ սովորելու տեղը լողանալ սովորեիր, էլի, հեր օրհնած...

ՏԻԳՐԱՆ - Բայց ես իմ վիճակից դժգոհ չեմ, ի՞նչ է պատահել...

ՄԱՆՈՒԿ - Չէ, բայց իսկականից ծիծաղս գալիս է. ախր, դու էդքան լեզուներ գիտես ու հիմնարկի բուֆետում ես նախաճաշում, ռեստորանում կոտլետ ես ուզում, իսկ ես մի լեզու գիտեմ, բայց...

ՏԻԳՐԱՆ - Եթե խոսքը հայերենի մասին է, դուք հայերեն էլ չգիտեք, Մանուկ…

ՄԱՆՈՒԿ - Հայերե՞ն… ի՞նչ հայերեն, իմ խոսքը ուրիշ լեզվի մասին է, ուրիշ, իմ լեզուն բոլորն էլ հասկանում են, որտեղ էլ լինի, ով էլ լինի... Ասեք, օրինակ, ես Մացոյի հետ ի՞նչ լեզվով եմ խոսում, որ ինչ ուզում եմ, բերում է…

ՏԻԳՐԱՆ - Դրամի լեզվով…

ՄԱՆՈՒԿ - Ապրես, քո կենացը, հարևա՛ն… Այ թե որն է իսկական լեզուն, թե չէ, չնեղանաս, համեմատակա՛ն լեզվաբանությո՛ւն…

/Նա էլի ինչ-որ բաներ է խոսում, բայց Տիգրանը այլևս չի լսում, նրա մեջ ներքին պայքար է գնում, ձեռքը թաքուն դեպի գրպանն է տանում, անհանգիստ շարժումներ է անում/:

Տիկո ջան, անհանգիստ ե՞ս...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ... այո, գիտեք, բոլորովին մոռացել էի... Ես մի շատ կարևոր տեղ ունեի զանգահարելու... Մի րոպե...

ՄԱՆՈՒԿ - Գնա, գնա, ախպեր ջան, զանգ տուր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/ Տիգրանը բարձրանում է տեղից, զգում է, որ հարբած է, բայց տիրապետում է իրեն և հեռանում: Մանուկը նայում է նրա ետևից, ծիծաղում է/:

Հա-մե-մա-տա-կան... Չէ՛ , դու «Նաիրի» չխմեցիր... լեզվաբանությու՛ն...

/Մոտենում է Տիգրանը/ :

Էդքան շու՞տ...

ՏԻԳՐԱՆ - Այո...

ՄԱՆՈՒԿ - Դե ուրեմն... /լցնում է բաժակները/ Գնացինք...

ՏԻԳՐԱՆ - / Բարձրանում է տեղից/ Այո, այո, գնացինք, շնորհակալություն:

ՄԱՆՈՒԿ – Վայ, ա՛յ տղա, մոռացա՞ր, խմելու համար եմ ասում, գնացի՛նք:

ՏԻԳՐԱՆ - Ոչ, արդեն ուշ է... /շարժվում է տեղից/ Այս անգամ բառիս բուն իմաստով գնացինք...

ՄԱՆՈՒԿ - Ո՞ւր... Ուրեմն քո կարծիքով էստեղ փող չենք տալո՞ւ... Մացո՛... Ուրեմն քո կարծիքով, էս բոլորը ձրի՞ էր... Մացո՛...

/Հայտնվում է մատուցողը/:

ՄԱՏՈՒՑՈՂ - Լսում եմ...

ՄԱՆՈՒԿ - Հաշիվը... /Տիգրանին/ Հիմա տես, թե իմ լեզուն ոնց է հասկանալու…

ՄԱՏՈՒՑՈՂ - Ձեր հաշիվը փակված է:

ՄԱՆՈՒԿ - Ո՞նց թե փակված է... /Նայում է չորս կողմը/ Ախ, հա՛, տղերքն են փակել, հա՞... Չէ՞… Բա ո՞վ է փակել...

ՄԱՏՈՒՑՈՂ - /Հայացքով ցույց է տալիս Տիգրանին/ Այս ընկերը...

ՄԱՆՈՒԿ - Դո՞ւ... Դու՞...

ՏԻԳՐԱՆ – Այո, ի՞նչ կա... դատարկ բան է...

ՄԱՆՈՒԿ - Դու... դու՞ք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Գնացինք, գնացինք, հարևան...

Պատկեր

Սովորական սենյակ: Մարիամը սեղանի մոտ նստած հեռուստացույց է դիտում: Անհանգիստ հայացք է նետում ժամացույցին: Լսվում է բացվող դռան ձայնը: Վերջապես: Կինը ոտքի է կանգնում, դիմավորում ամուսնուն: Ներս է մտնում Տիգրանը: Նա հարբած է, բայց աշխատում է տիրապետել իրեն, կանգնած է ձիգ:

ՄԱՐԻԱՄ - Տիգրա՞ն, այս որտե՞ղ էիր, գոնե զանգ տայիր, շատ անհանգստացա... /Ամուսինը լուռ է, տանջվում է/:

ՏԻԳՐԱՆ - Ես, ես մեղավոր եմ, Մարիամ...

ՄԱՐԻԱՄ - Ի՞նչ է պատահել, դու քեզ վա՞տ ես զգում: Տիգրան...

/Մոտենում է/:

Բայց դու հարբած ես... / Ծիծաղում է/ Այ քեզ բան, ինչ չէինք տեսել, տեսանք... Դու հարբած ես, Տիգրան…երեխաները արթուն լինեին, մի քիչ ծիծաղեին...Դե արի, արի... բռնեմ թևդ...

ՏԻԳՐԱՆ - Ես հարբած չեմ, Մարիամ, բայց վատ, շատ վատ բան է կատարվել...

ՄԱՐԻԱՄ - Ի՞նչ է պատահել, դե ասա,. ասա, ի՞նչ է պատահել…

/ Տիգրանը գրպանից մի ճմրթված հինգանոց է հանում, նայում է տարակուսանքով, նորից փորփրում է գրպաններն ու... ոչինչ չգտնելով, հինգանոցը տխուր մեկնում է կնոջը/:

ՏԻԳՐԱՆ - Ահա, ահա իմ կես ամսվա աշխատավարձը…

ՄԱՐԻԱՄ - Նստիր, նստիր, իսկ ի՞նչ ես արել... կորցրե՞լ ես…

ՏԻԳՐԱՆ - Կորցրել եմ, Մարիամ ջան... այսինքն ռեստորանում հաշիվ եմ փակել... «Նաիրի», «օսետրինա»... բայց դու հասկացիր, Մարիամ, այդպես ստացվեց... Ես ուրիշ կերպ չէի կարող, հասկանո՞ւմ ես... Որ չվճարեի, կմեռնեի... Հասկանո՞ւմ ես...

ՄԱՐԻԱՄ - /Ծիծաղում է/ Հետաքրքիր մարդ ես, սիրտս քիչ էր մնում կանգ առներ... ո՛նց վախեցրիր... Հետո՞, դրա մեջ ի՞նչ կա... լավ ես արել, ուրեմն պետք է եղել, որ վճարել ես...

ՏԻԳՐԱՆ - Չէ, հասկանո՞ ւմ ես, սկզբում ինձ հրավիրեցին, իսկ հետո... հետո… ես պետք է փակեի հաշիվը... Այդ հաշիվը ե՛ս պետք է փակեի, Մարիամ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՐԻԱՄ - Դե վերջացրու, հանգստացիր, Տիգրան ջան, ի՞նչ է պատահել վերջապես, դու ողջ-առողջ եկել ես, ամենակարևորը դա է... Շատ էլ լավ ես արել, որ փակել ես...

ՏԻԳՐԱՆ -Ասում ես, էլի... Բա ինչո՞վ պետք է ապրենք...

ՄԱՐԻԱՄ - Պահ, պահ, պա՛հ, կոտորվեցինք… ինչո՛վ պետք է ապրենք... Վատ ենք սովորել... ուսանողական տարիները մոռացե՞լ ես... Կես ամիս էլ կապրենք իբրև ուսանող...

ՏԻԳՐԱՆ - /Հուզված/ Դու… դու… իմ բարի… իմ… առանց քեզ ես ի՞նչ կանեի այս աշխարհում…

ՄԱՐԻԱՄ - Դե, դե, ամոթ է... երեխաները հանկարծ կլսեն... վերջացրու և գլուխդ բարձր պահիր, Տիգրան ջան, բարձր...

ՏԻԳՐԱՆ - Ախր ես... ախր ես հենց դրա համար էլ վճարեցի, Մարիամ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԹՈՌՆ ՈՒ ՊԱՊԸ

Սովորական սենյակ: Պարզ կահավորում, հավանաբար սեղան, աթոռներ, բազմոց, մենահայելի: Սենյակում միայն Տաթևիկն է: Ինչ-որ փալաս ձեռքին սրբում է կահույքի փոշին:

Դռան զանգ: Տաթևիկը նետվում է դեպի դուռը, կողքին դրած փոքրիկ աթոռը մոտ է քաշում, նայում է դիտանցքից:

ՏԱԹԵՎԻԿ - /Ուրախ բացականչում է/ Պապի՛ ջան... /բացում է դուռը և նետվում ներս մտած պապի գիրկը/:

ՊԱՊԸ - Տաթո ջան, արևս... /գրկում պահած, արմունկով փակում է դուռը, սենյակ է մտնում, պտտվում է/:

ՏԱԹԵՎԻԿ - Շա՛տ էի կարոտել քեզ, պապի ջան... ո՞նց ես...

ՊԱՊԸ - Լավ եմ, մեռնեմ քեզ... լավ եմ... դե իջիր, իջիր, ձեռքերս ցավում են, Տաթո ջան... /Իջեցնում է/:

ՏԱԹԵՎԻԿ - Ինչո՞ւ, դու է՞լ ես լվացք անում...

ՊԱՊԸ - Լվա՞ցք: Ախ, հա՛, մենակ լվացքից չէ, որ ձեռքերը ցավում են, գառ ջան:

ՏԱԹԵՎԻԿ - Մայրիկն ասում է, որ ձեռքերը լվացքից են ցավում...

ՊԱՊԸ - Հա՞... իսկ լվացքի մեքենա չունե՞ք, ինչ է, որ մայրիկը ձեռքերով է լվացք անում:

ՏԱԹԵՎԻԿ - Չունենք, պապի ջան… Պապի ջան, իսկ գիշերը կմնա՞ս ինձ մոտ:

ՊԱՊԸ – Չէ՛, բալիկ ջան, ես մի քանի ժամով եմ եկել, խորհրդակցության...

ՏԱԹԵՎԻԿ - Խորհրդակն ի՞նչ է...

ՊԱՊԸ - Խորհրդակցությո՞ւնը... դե ինչպես բացատրեմ, գառ ջան, կանչում են, խոսում են, մի խոսքով, լվացքի պես բան է…

ՏԱԹԵՎԻԿ - Ձեռքերդ դրա՞ համար են ցավում...

ՊԱՊԸ - Երևի... Հա, ոնց էի մոռացել... տես քեզ համար ինչ եմ բերել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

/Տաթևիկին է մեկնում շոկոլադի մի մեծ սալիկ/:

ՏԱԹԵՎԻԿ – Վա՛խ… /Վերցնում է շոկոլադը, նորից գրկում է պապին/ Ապրես…

ՊԱՊԸ - Ի՞նչ…

ՏԱԹԵՎԻԿ - Ապրես, պապի ջան…

ՊԱՊԸ - Վայ, մեռնեմ լեզվիդ, էս ինչ բալիկ ես դարձել… Դե կեր, կեր, որ տեսնեմ, թե ոնց ես ուտում…

ՏԱԹԵՎԻԿ – Հա՛, պապի ջան…

/Բացում է փաթեթը, կծում է մի փոքրիկ, ուտում է հաճույքով, բայց մնացածը փաթաթում է նորից ու դնում սեղանին/:

ՊԱՊԸ - Ինչո՞ւ չես ուտում, բալիկ ջան…

ՏԱԹԵՎԻԿ - Մայրիկի հետ կուտեմ, հա՞, պապի ջան, մայրիկը որ շոկոլադ է ունենում, շատ կեսն ինձ է տալիս…

ՊԱՊԸ - Հա՞, իսկ մայրիկդ ո՞ւր է:

ՏԱԹԵՎԻԿ - Աշխատանքի է, պապի ջան…

ՊԱՊԸ - Որտե՞ղ… Հասմիկն աշխատո՞ւմ է, ինչ է…

ՏԱԹԵՎԻԿ - Բա որ չաշխատի, մենք ինչո՞վ պետք է ապրենք…

ՊԱՊԸ - Ի՞նչ… Իսկ հայրիկդ… հայրի՞կդ ինչ է անում, չի՞ աշխատում…

ՏԱԹԵՎԻԿ - Չէ, պապի ջան… Գիշերն ինձ մոտ կմնա՞ս, պապի ջան…

ՊԱՊԸ - Չեմ կարող, ցավդ տանեմ, ավտոմեքենան սպասում է ներքևում, Կիրովական պիտի գնամ…

ՏԱԹԵՎԻԿ - Ինչո՞ւ…

ՊԱՊԸ - Ինչո՛ւ… հազար ու մի գործ կա, բալիկ ջան, քո պապին մեծ գործարան է ղեկավարում… Սպասիր, ուրեմն ասում ես հայրիկդ չի՞ աշխատում:

ՏԱԹԵՎԻԿ - Չէ, պապի ջան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՊԸ - Բա ի՞նչ է անում, այ բալա...

ՏԱԹԵՎԻԿ - Չգիտեմ...

ՊԱՊԸ - /Մեկուսի/ Ի՞նչ է կատարվում էս տանը: Ընդամենը երեք ամիս չեմ եղել և կարծես թե խառնվել է ամեն ինչ, տղաս չի աշխատում, հարսս աշխաանքի է անցել, տղաս... հո չի՞ բաժանվել: /Տաթևիկին/ Հայրիկդ տուն չի՞ գալիս, ինչ է...

ՏԱԹԵՎԻԿ - Գալիս է, պապի ջան, ուշ գալիս է, երգում է, մայրիկը լաց է լինում...

ՊԱՊԸ - Հարբա՞ծ է լինում... Այսինքն ինչ եմ հարցնում... Եվ դու տանը մենա՞կ ես մնում:

ՏԱԹԵՎԻԿ - Մենակ, պապի ջան...

ՊԱՊԸ - Ամեն օ՞ր:

ՏԱԹԵՎԻԿ - Հա...

ՊԱՊԸ - Բա ինչո՞ւ մանկապարտեզ չես գնում:

ՏԱԹԵՎԻԿ - Ինձ ո՞վ կբերի մանկապարաեզից... մայրիկը մեկ առավոտյան է աշխատում, մեկ երեկոյան... Պապի ջան, ինձ այգի կտանե՞ս...

ՊԱՊԸ - Այգի՞... Հիմա չեմ կարող, անուշ ջան...

ՏԱԹԵՎԻԿ - Բա ես ի՞նչ անեմ, է՛... այգի եմ ուզում, կարուսել եմ ուզում, ջրի նավակ եմ ուզում... Սոնային իր հայրիկը տանում է:

ՊԱՊԸ - Սոնա՞ն ով է:

ՏԱԹԵՎԻԿ - Սոնան, էլի, չե՞ս ճանաչում...

ՊԱՊԸ - Չէ, հարևանի երեխան է, հա՞...

ՏԱԹԵՎԻԿ - Բա ասում ես՝ չեմ ճանաչում... Պապի ջան, դու գաղտնիք պահել գիտե՞ս:

ՊԱՊԸ - Գաղտնի՞ք: Գիտեմ...

ՏԱԹԵՎԻԿ - Դե արի ականջիդ բան ասեմ...

ՊԱՊԸ - Ասա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏԱԹԵՎԻԿ - Մայրիկն ուզում է չարություն անել...

ՊԱՊԸ - Չարությո՞ւն, ի՞նչ չարություն...

ՏԱԹԵՎԻԿ - Ես որ պատշգամբում լվացքի պարանից կախվում եմ, մայրիկս բարկանում է, ասում է խելոք մնա, չարություն մի արա, կընկնես... Իսկ ինքը ուզում է կախվել...

ՊԱՊԸ - Այսինքն, ինչպե՞ս թե կախվել...

ՏԱԹԵՎԻԿ - Չգիտեմ, բայց որ հայրիկը երգում է, հետո օրորվում է, հետո բաժակները խփում է գետնին, ջարդում է, մայրիկն ասում է. -Էլ ուժ չունեմ, էլ չեմ կարող էսպես ապրել, մի օր պարանը կվերցնեմ, կկախվեմ... Դու մի թող, որ մայրիկը կախվի, հա՞, պապի, հանկարծ կընկնի…

ՊԱՊԸ - Չեմ թողնի, արև ջան, չեմ թողնի...

ՏԱԹԵՎԻԿ - Պապի ջան, գիշերն ինձ մոտ կմնա՞ս... Ես քեզ հեքիաթներ կպատմեմ... բարի գիշերիկ կասեմ...

ՊԱՊԸ - Չեմ կարող, Տաթո ջան, մեքենան... / հանկարծ ջղային/ : Մեքենան... մեքենան... մեքենան... /Պատշգամբ է դուրս գալիս, ձայն է տալիս/:

Արշա՛կ, Արշա՛կ, դու գնա... գուցե թե գիշերվա գնացքով գամ... Հա, իմաց տուր մերոնց... Գործ կա... Գուցե վաղն էլ չգամ, տեսնենք...

/ Ներս է գալիս/:

ՏԱԹԵՎԻԿ - Պապի ջան, ուրեմն մնո՞ւմ ես...

/Ձեռքերը պարզում է պապին/:

ՊԱՊԸ - / Գրկում է թոռանը/ Մնում եմ, գառ ջան, մնում եմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ

Ինչ-որ դարպաս: Տաքսի ավտոմեքենան կանգնած է դարպասի մոտ: Առջևում վարորդի կողքին մի տղամարդ է նստած՝ ճաղատ գլխով, գեր քրտնաթոր դեմքով: Ետևում ծեր մի կին է նստած, թաշկինակը աչքին:

ՈՐԴԻՆ - /Վարորդին/ Իսկ եթե ազդանշան տաք, դարպասը չե՞ն բացի:

ՎԱՐՈՐԴԸ - Այստեղ իրավունք չունեմ ազդանշան տալու:

ՈՐԴԻՆ - /Ծիծաղում է/ Լավ, լավ, կարծես թե ամեն տեղ պահպանում եք կարգը: Իսկ եթե ես դարպասը բացել տամ... ներս կմտնե՞ք...

ՎԱՐՈՐԴԸ - Մեկ է, իրավունք չունեմ, ընկեր ջան, ինչո՞ւ չեք հավատում, տեսեք, վերևում կախված է նշանը:

ՈՐԴԻՆ - Նշանը… դե լավ, իջիր մայրիկ...

/ Մայրը փորձում է բացել դուռը, չի կարողանում: Վարորդն իջնում է անմիջապես, բացում է դուռը/:

ՄԱՅՐԸ - /Վարորդին/ Ապրի արևդ, տղա ջան...

ՈՐԴԻՆ - /Վարորդին/ Ճամպրուկը չմոռանանք:

/Վարորդը հանում է սև հասարակ մի ճամպրուկ, մեկնում ուղևորին/:

ՎԱՐՈՐԴԸ - Խնդրեմ,բայց ես շատ սպասել չեմ կարող, աշխատանքս ավարտվում է:

ՈՐԴԻՆ - Շատ չեք սպասի: Հիմա մայրիկին ներս տանեմ ու գամ: Եվ... վարձի համար ապահով մնացեք:

ՎԱՐՈՐԴԸ - Դրա համար չեմ ասում...

/Որդին՝ մի ձեռքով ճամպրուկը, մյուսով մոր թևը բռնած մոտենում է դարպասին: Սեղմում է զանգի կոճակը. ոչ մի արդյունք, նորից է սեղմում, երկար, ջղային. պատասխան չկա: Նայում է ժամացույցին/:

ՈՐԴԻՆ - Չլինի՞ ընդմիջման ժամ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՐՈՐԴԸ - / Նայում է ժամացույցին/ Իհարկե:

ՈՐԴԻՆ - /Մորը/ Ըհը, էնքան քաշքշեցիր, էնքան խոսեցինք, մինչև որ ուշացանք: Հարյուր անգամ ասացի շուտ արա:

ՄԱՅՐԸ - Թոռներիս չտեսնեի՞, ա՛յ բալա...

ՈՐԴԻՆ - Կարծես թե Սիբիր էինք ուղարկում... Քսան րոպեի ճանապարհ է, կգային, կտեսնեիր, էլի…Բա հիմա ի՞նչ անեմ: / Նորից նայում է ժամացույցին/ ուղիղ ժամը երկուսին մինիստրի մոտ խորհրդակցություն է:

ՄԱՅՐԸ - Արգամ ջան...

ՈՐԴԻՆ - Հա...

ՄԱՅՐԸ - Տար տուն, հետո կգանք...

ՈՐԴԻՆ - Ի՜նչ ես խոսում, մայրիկ, հազիվ ենք համո... տեղ հասել, հիմա ե՞տ դառնանք: Բայց ես ի՞նչ անեմ, ուղիղ ժամը երկուսին... /Նայում է ժամացույցին/:

ՄԱՅՐԸ - /Տխուր/ Ուրեմն ես ձեր կոկորդին էդպես կանգնած եմ, էլի...

ՈՐԴԻՆ – Ահա՛, նորից նույն պատմությունը... /շշուկով/ Այ մամա, մի բանը քանի անգամ կարելի է ասել: Հարցը ամեն կողմից քննեցինք, չէ՞... Ինքդ էլ համոզվեցիր, որ ամենահարմար ելքն էլի սա է: Ես ի՞նչ մեղավոր եմ, որ իրար հետ յոլա չեք գնում...

ՄԱՅՐԸ - Խիղճ ունեցիր, Արգամ, ո՞վ յոլա չի գնում:

ՈՐԴԻՆ - Լավ, ինքը, ինքը, բայց ես ի՞նչ անեմ, ասա, ասա, ե՞ս ինչ անեմ: Բաժանվե՞մ: Երկու երեխա ունենք, ես ինչպե՞ս առանց նրանց ապրեմ: Եվ հետո իմ շրջապատը… ի՞նչ կասեն: Հազար ու մի հարց կա: Վստահության հարց կա, առաջքաշման հարց կա... Ընտանիքը լքած մարդուն...

ՄԱՅՐԸ - Իսկ մորը կարելի է...

ՈՐԴԻՆ - Ի՞նչն է կարելի, ի՞նչն է կարելի... Մամա, հավատա, քո պատկերացումները այս հիմնարկության մասին միանգամայն հին ու սխալ են: Այ, կտեսնես, կտեսնես... ամեն ինչ մաքուր ու կանոնավոր է, հիանալի վերաբերմունք, լավ հարմարություններ... Մի խոսքով՝ իսկական հանգստյան տուն է, էլի, հանգստյան տունը չգիտե՞ս ինչպես է լինում...

ՄԱՅՐԸ - Ո՞րտեղից իմանամ, տղա ջան, կյանքումս հանգստյան տան մեջ ե՞րբ եմ եղել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՐԴԻՆ – Օ՛ֆ, էլի շեղվեցիր... Չես եղել, հիմա կլինես՝ կիմանաս... Այդքան էգոիստ չեն լինի, այ մամա, այդպես հո չի կարելի, միայն քո մասին ես մտածում…

ՄԱՅՐԸ - Եթե իմ մասին մտածող լինեի, այս օրը չէի ընկնի:

ՈՐԴԻՆ - Հա, բայց ի՞նչ է պատահել, է՛, հո մենակ դու չես… տես ինչ շենքեր են սարքել... Ուրեմն պահանջ կա, որ սարքել են, չէ՞... Հետո, դու էիր տրտնջում, թե մենակ ես, թե քեզ հետ խոսող չկա... Հիմա խնդրեմ, բոլորն էլ քո տարիքի մարդիկ են, կնստեք, կզրուցեք, խաղեր կխաղաք, հեռուստացույց կնայեք...

ՄԱՅՐԸ - Ախր ես առանց քեզ, առանց իմ թոռների ո՞նց պիտի ապրեմ, ա՛յ բալա, կմեռնեմ կարոտից:

ՈՐԴԻՆ - Չենք թողնի, որ կարոտես, մամ ջան, քսան րոպեի ճանապարհ է, տեսար, չէ՞, կգանք, կհանդիպենք, կխոսենք...

ՄԱՅՐԸ - Իբր թե տանը շատ էիք խոսում...

ՈՐԴԻՆ - Դե, տեսնում ես, ուրեմն ի՞նչ տարբերություն... Հանգիստ եղիր, մայրիկ ջան, ամեն ինչ լավ կլինի...

/Նայում է ժամացույցին, ցնցվում/:

Վայ, ես լրիվ ուշացա... Ի՞նչ անեմ, մեր պլաններն են քննելու... Մամ, մամ ջան, ես գնամ, հա՞... Այստեղ բոլոր հարցերը լուծել եմ, քեզ անմիջապես կընդունեն... Ես գնամ, մամ... էլի կգամ...

ՄԱՅՐԸ - Գնա, տղա ջան, գնա... /Շրջվում է, թաշկինակը աչքերին է տանում/:

ՈՐԴԻՆ - Դե լավ, լավ, վերջ տուր, մի տանջիր ինձ, այ մամա, կարծում ես ինձ համար հե՞շտ է, մի քիչ էլ իմ մասին մտածիր...

ՄԱՅՐԸ - /Առանց շրջվելու, բայց հանգիստ ձայնով/ Գնա...

ՈՐԴԻՆ – Ա՛յ, ապրես... Վաղն անպայման կգամ... Գնացինք, վարպետ:

/Նստում է ավտոմեքենա: Վարորդը փորձում է միացնել շարժիչը, չի ստացվում, նորից է փորձում/: Ի՞նչ պատահեց:

ՎԱՐՈՐԴԸ - /Առանց նրան նայելու/ Չեմ հասկանում...

ՈՐԴԻՆ - Բայց ես ուշանում եմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՎԱՐՈՐԴԸ - Որ չի աշխատում, ի՞նչ անեմ... /Դուրս է գալիս ավտոմեքենայից, բացում է շարժիչի կափարիչը, թեքվում, նայում է, օրորում է գլուխը/: Մի ուրիշ բան ճարեք, էստեղ առնվազն մի ժամվա գործ կա...

ՈՐԴԻՆ - Ինչպե՞ս թե, բայց ի՞նչ պատահեց...

ՎԱՐՈՐԴԸ - Ի՞նչ իմանամ... մեքենա է, էլի, հո մարդ չի, որ բացատրես՝ հասկանա...

ՈՐԴԻՆ – Ա՛յ քեզ ձախորդություն... Բայց ես ուշանում եմ…

/Անօգնական չորս կողմն է նայում, ինչ որ ավտոմեքենա է տեսնում/ Ալո՛... տաքսի, տաքսի... ալո՛, ընկեր...

/Վազում է/:

ՎԱՐՈՐԴԸ - Սպասեք, բա ո՞վ պիտի վճարի…

ՈՐԴԻՆ - Թյու, մոռացա, վերցրեք... ուշացա, ուղիղ ժամը երկուսին...

/Վազում է/:

/Լռություն/ :

ՎԱՐՈՐԴԸ - /Կամացուկ/ Մայրի՛կ, մայրի՛կ...

/ Կինը շրջվում է, հազիվ է զսպում հեկեկոցը/:

Արի քեզ տուն տանեմ...

ՄԱՅՐԸ - / Փղձկում է/ Ի՞նչ... ո՞ւր... Ես տուն չունեմ… Ես տուն չունեմ…

ՎԱՐՈՐԴԸ - /Մոտենում է/ Դու տուն ունես, արի քեզ մեր տուն տանեմ, մեր ջան…

/ Մայրը զարմացած է, թվում է թե չի հասկանում/:

Արի քեզ մեր տուն տանեմ... Ես մոր կարոտ եմ, շատ եմ խնդրում: Մի տարի առաջ մեռել է իմ մերը, ուշքի չեմ գալիս, տունը դատարկ լինի ոնց որ, չեմ ուզում տուն մտնեմ... Արի քեզ մեր տուն տանեմ, մեր ջան...

ՄԱՅՐԸ - Ի՛նչ ես ասում, տղա ջան, դու ինձ չես ճանաչում, ի՞նչ ես ասում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՎԱՐՈՐԴԸ - Ո՞նց թե չեմ ճանաչում... մեր ես, չէ՞, ես էլ մոր կարոտ եմ... Տանս մեծ չկա, առանց մեծի ի՞նչ տուն... Արի, ինձ մերություն արա, մեր ջան, լավ, խելոք երեխաներ ունեմ... նրանք կսիրեն քեզ, նրանք էլ տատի կարոտ են... Արի տուն գնանք, մեր ջան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՐԵԹԵ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ

Առավոտ է: Մայրը ծնկած սրբում է հատակը: Ռադիոն «Լիցքային վարժություններ» է հաղորդում: Լսվում է որդու ձայնը:

ՈՐԴԻՆ - Մա՛, բաճկոնիս կոճակը թուլացել էր, կարե՞լ ես…

ՄԱՅՐԸ - /Չի լսում/ Ի՞նչ...

ՈՐԴԻՆ - Ասում եմ՝ պիջակիս կոճակը կարե՞լ ես…

ՄԱՅՐԸ - Հա... /շարունակում է աշխատել/:

/Որդին հայտնվում է՝ հագնվելով ու երգելով/:

ՈՐԴԻՆ - Եվ ի՞նչ ենք ուտելու...

ՄԱՅՐԸ - Կարագ, պանիր կա սեղանին, տղա ջան...

ՈՐԴԻՆ - Իսկ որ մի տաք բան լիներ, վա՞տ կլիներ...

ՄԱՅՐԸ - Ո՞վ է ասում վատ կլիներ: Բայց մինչև աղբը թափեցի, մինչև խանութ գնացի եկա, չհասցրեցի: Թեյը տաք է:

ՈՐԴԻՆ - Հատակը որ չսրբեիր, կհասցնեիր:

ՄԱՅՐԸ - Իսկ հատակը ո՞վ պիտի մաքրեր…

/Նկատում է, որ որդին ուզում է հեռանալ/

Ո՞ւր ես գնում...

ՈՐԴԻՆ - Աշխատանքի, ո՞ւր...

ՄԱՅՐԸ - Առանց նախաճաշելո՞ւ...

ՈՐԴԻՆ - Շնորհակալ եմ, կշտացա :

ՄԱՅՐԸ - Սպասիր: Տղա ջան, դու ինձնից ի՞նչ ես ուզում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՐԴԻՆ - Ե՞ս, դեռ ե՞ս եմ ուզում: Տեսնո՞ւմ ես, ոչինչ էլ չեմ ուզում, ինձ համար սուս ու փուս հեռանում եմ, դո՞ւ ինձնից ինչ ես ուզում: Խնդրեմ, կոշիկներս էլ սրբված չեն, բայց ես ձայն հանեցի՞ ...

ՄԱՅՐԸ - Իսկ ինչո՞ւ կինդ չի սրբում:

ՈՐԴԻՆ – Օ՛ֆ, էլի սկսեցիր...

ՄԱՅՐԸ - Ի՞նչը սկսեցի, Ոսկան ջան, ի՞նչը սկսեցի: Այ բալա, բոլորովին հաշվի չես առնում, որ ես մեծացել եմ, ծերացել եմ, շուտ եմ հոգնում... Մտածում էի, կամուսնանա տղաս, հարս կբերեմ... կթեթևանա հոգսս... Լավ, ինչո՞ւ չես ասում, որ նա քեզ համար նախաճաշ պատրաստի, արդուկի հագուստներդ, կոշիկներդ սրբի…

ՈՐԴԻՆ - Դե լավ, էլի, ա՛յ մամ, նա ճաշ պատրաստել գիտի՞:

ՄԱՅՐԸ - Թող սովորի:

ՈՐԴԻՆ - Դե թող սովորի... ես ասում եմ՝ մի՞ սովորի:

ՄԱՅՐԸ – Բայց չես էլ ասում, որ սովորի… Այ բալիկ ջան, միայն ինձ համար չեմ ասում, ավելի շատ Մարիետայի համար եմ մտածում: Այդպես ո՞նց կլինի ապրել. ամուսին, երեխա ունեցող կինը արդեն ուրիշ տեսակ պետք է լինի: Հայրդ ամբողջ կյանքում առավոտյան յոթին է արթնացել, որ աշխատանքի գնա: Իսկ ես վեցին եմ արթնացել, որ նախաճաշ պատրաստեմ նրա համար, թեյ տաքացնեմ... Կարգին կինը ինչպե՞ս կարող է չճանապարհել իր ամուսնուն...

ՈՐԴԻՆ – Է՛հ, ձեր ժամանակ ուրիշ է եղել, այ մեր, հիմա ո՞րտեղից այդպիսի կին կարող ես գտնել...

ՄԱՅՐԸ - Այդպիսի կանայք հիմա էլ շատ կան... Հիմա ի՞նչ է անում Մարիետան:

ՈՐԴԻՆ - Քնած է, ինչ է անում:

ՄԱՅՐԸ - Ինչո՞ւ չես արթնացնում, հիմա քնելու ժա՞մ է...

ՈՐԴԻՆ – Է՛, մեղք է, մամ ջան...

ՄԱՅՐԸ - Տեսնո՞ւմ ես, իսկ ես մեղք չեմ... Ես պարտավոր եմ…

ՈՐԴԻՆ – Ա՛յ մամ, հիմա նրան արթնացնե՞լ կլինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Իսկ ինչո՞ւ չի լինի... Գիշերը հերթափոխի՞ է եղել, թե հունձ է արել... Այդքան քնե՞լ կլինի... Ամեն օր մինչև ժամը 11-ը, 12-ը քնում է... է՞ս ինչ տեսակ մարդիկ են , ոչ ամոթ ունեն, ոչ պատկառանք...

ՈՐԴԻՆ - Տեղն է քեզ, դու չէի՞ր ասում. մենակ թե ամուսնացիր, Ոսկան ջան, մնացածը քո գործը չէ… էնպես պահեմ հարսիս...

ՄԱՅՐԸ - Հա, բայց ո՞ւմ մտքով կանցներ, որ տերն ու ծառայի պատմությունը գլխիս է գալու... Ա՛յ տղա ջան, ա՛յ քո ցավը տանեմ, նրան թվում է, թե հյուրանոցում է ապրում ու ես էլ հավաքարարն եմ: Ե՞րբ պիտի այդ աղջիկը այս տունը իրենը համարի…

ՈՐԴԻՆ – Է՛հ, կրակն եմ ընկել ձեր ձեռքը... հարամ է այն հացը, որ ես ուտում եմ...

/ Հեռանում է/:

/Կողքի սենյակից գիշերանոցով դուրս է գալիս մի պստիկ աղջնակ, տրորում է աչքերը/:

ԱՂՋԻԿԸ - Տատի, տատի ջան, շորերս հագցրու...

ՄԱՅՐԸ - /Դեռ չարացած/ Մորդ ասա...

ԱՂՋԻԿԸ - Մաման բաբայ է արել...

ՄԱՅՐԸ - / Փնթփնթալով/ Հիմա ասել էի, հա՛... Գնա բեր շորերդ, գառ ջան...

/Աղջիկը բերում է շորերը: Տատը հագցնում է: Հնչում է հեռախոսի զանգը, տատը վերցնում է լսափողը/:

Ալո, ո՞վ է, Կլարա՞… ո՞նց եք... Մարիետան... /ամաչում է/ Մարիետան քնած է... Չէ՛, հիվանդ չէ... Ինչո՞ւ, ձեր տանը արթո՞ւն էր լինում այս ժամին... ի՞նչ է արել, որ հոգնի... Չէ՛, ես չեմ արթնացնի... /լսափողը պահում է ձեռքին/ Սուսան, բալիկ ջան, գնա մամային ասա՝ Կլարա տատիկն է...

/Սուսանը ներս է գնում, դուրս է գալիս Մարիետան խալաթով, զզզվված/:

ՄԱՐԻԵՏԱ - Ի՞նչ է պատահել, է՛... /վերցնում է լսափողը/ Մամ, էս ժամին ինչո՞ւ ես զանգում... Ի՞նչ, ի՞նն է, հետո՞ ինչ, որ ինն է... ի՞նչ, քանիսո՞վ... ա՛ռ, մամ ջան, ա՛ռ...

/Ցած է դնում լսափողը/:

Սուսիկին մանկամսուր չե՞ք տարել, տիկին Սուսան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Սուսիկն ուզում է, որ դու տանես մանկամսուր, Մարիետա...

ՄԱՐԻԵՏԱ - Ե՞ս... Գլուխս չեմ կարողանում բարձրացնել, քունս տանում է, տիկին Սուսան, մանկամսուրը հո հեռու չէ, դրա մեջ ի՞նչ կա, որ պատմություն եք սարքում:

ԱՂՋԻԿԸ - Մամ ջան, դու տար էլի...

ՄԱՐԻԵՏԱ - Իհարկե, երեխային էլ դուք եք սովորեցրել, չէ՞... Իմ քնելը մեր տան ամենամեծ պրոբլեմն է դարձել... Ես մեղավո՞ր եմ, որ քունս տանում է...

ՄԱՅՐԸ - Իմ քունն էլ է տանում, բայց ես ստիպված...

ՄԱՐԻԵՏԱ - Ձեր քունն ինչո՞ւ պետք է տանի, մեծ կին եք... իսկ փորձեք, էլի, իմ ընկերուհիներից որևէ մեկին զանգահարեք, տեսեք հիմա արթուն կլինի՞... Ինտելիգենտ մարդիկ բոլորն էլ մինչև 11-ը– 12-ը քնած են լինում:

ՄԱՅՐԸ - Իսկ ովքե՞ր են աշխատում, միայն ոչ ինտելիգենտ մարդի՞կ...

ՄԱՐԻԵՏԱ - Եթե ես շուտ արթնանայի, տեսնես ուրիշ ինչ էիք հորինելու, որպեսզի Ոսկանի աչքից զցեք... զզվել եմ այս տնից, բավական է, չեն էլ թողնում, որ մարդ քնի... Ես գնում եմ... Եվ ոչ թե մանկամսուր, այլ ուղիղ մեր տուն եմ տանում Սուսիկին... Մենք այս տանը մի օր էլ չենք մնա...

Գնացինք, քաղցրս…

ՄԱՅՐԸ - Նորից նույն պատմությունը... Չհոգնեցի՞ր գնալ-գալուց... Մեր տուն... Ե՞րբ պիտի այս տունը քոնը համարես, այ բալա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐ

Ճաշասենյակ: Հայրը բազկաթոռի մեջ լրագիր է կարդում և հետն էլ հեռուստացույց դիտում: Աղջիկը սեղանի մոտ ինչ-որ բան է գրում: Մայրը գործում է: Հեռախոսի զանգ:

ՀԱՅՐԸ – Ե՛ս կվերցնեմ...

/ Մոտենում է, վերցնում լսափողը/:

Ալո՜... ալո՜ , լսում եմ:

/ Սպասում է/:

Լսում եմ: Ալո՜,ալո՜... դե խոսեք...

ՄԱՅՐԸ - Երևի ավտոմատից է, չի միանում…

ՀԱՅՐԸ - Չէ, ոնց որ ձայն կա, ալո՜...

/ Անջատում է: Ուզում է վերադառնալ: Նորից զանգ/: Ես կվերցնեմ... Ալո՞... լսում եմ...

ՄԱՅՐԸ – Գետինը մտնեն էդ հեռախոսները, մարդու հոգի են հանում :

ՀԱՅՐԸ - Խոսեք, ո՞ւմ եք ուզում... ալո՜ ...

/Շպրտում է լսափողը/:

ԱՂՋԻԿԸ - Դե երևի նորմալ չի աշխատում...

ՀԱՅՐԸ - Հեռախոսը նորմալ է աշխատում, զանգողն է աննորմալ... և հաստատ քեզ է ուզում... Ալո՜ ... լսում եմ...

ԱՂՋԻԿԸ - Ի՞նձ... Ինչի՞ց իմացար, պապ, խոսե՞ց:

ՀԱՅՐԸ - Որ չխոսեց, դրա համար էլ համոզված եմ, որ քեզ էր ուզում...

ՄԱՅՐԸ - Օ՜հ, էլի սկսվեց:

ՀԱՅՐԸ - /Գրգռված/ Ի՞նչը սկսվեց: Ի՞նչը սկսվեց...

ՄԱՅՐԸ - Որ ջղայնանում ես, հեռախոսին մի մոտեցիր, էլի, Արշավիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ -Իսկ ինչո՞ւ չպետք է մոտենամ, ասացեք խնդրեմ, ինչո՞ւ չպետք է մոտենամ...

ՄԱՅՐԸ - Որովհետև հուզվում ես, բարկանում ես... Եվ վերջապես ինչո՞ւ ես զարմանում, մեր քաղաքի հեռախոսները էդ ե՞րբ են լավ աշխատել, որ հիմա զարմանում ես. կամ առաջին համարը հավաքելուց հետո է զբաղված, կամ երկրորդ համարը հավաքելուց հետո, կամ բոլորովին ուրիշ տեղ է ընկնում... Հո զուր չէ, որ հեռախոս չունեցողները ունեցողներին են երանի տալիս, ունեցողները չունեցողներին:

ՀԱՅՐԸ - Ուրեմն ասա՝ կնոջ նման է, էլի...

ՄԱՅՐԸ - Ինչի հետ ուզում ես համեմատիր, բայց տրամադրությունդ մի փչացրու:

ՀԱՅՐԸ - Ուրեմն ես էս տանը տրամադրությունս զցելու իրավունք էլ չունեմ: /Հեռախոսի զանգ: Հայրն ակամա մոտենում է/:

ՄԱՅՐԸ - Թող, ես կվերցնեմ... Ալո՞... ալո՞... ես ձեզ լսում եմ: Ալո՞...

ՀԱՅՐԸ - / Հեգնելով/ Լսիր, լսիր, լավ լսիր…

ՄԱՅՐԸ - Դե, խոսեք, ո՞ւմ եք ուզում...

/Ցած է դնում լսափողը/:

ՀԱՅՐԸ - Պարզ չէ՞, թե ում է ուզում: Դե ասա, տիկին Պայծառ, հիմա քեզ պա՞րզ չէ, թե ում է ուզում...

ՄԱՅՐԸ - Իհարկե պարզ չէ, Արշավիր...

ՀԱՅՐԸ – Ա՛յ սիրելիս, ա՛յ հոգիս, դպրոցում տրամաբանություն չե՞ք անցել: Տան մեջ երեք հոգի են: Այսինքն՝ մենք ենք: Ինձ չեն ուզում, քեզ չեն ուզում, ուրեմն ո՞ւմ են ուզում...

ԱՂՋԻԿԸ - Դե լավ, էլի, պապ, այդ զանգահարողը հո համր չէ, չի՞ կարող խնդրել, որ լսափողը ինձ տաս:

ՀԱՅՐԸ - Եթե մաքուր մարդ լինի, կխնդրի… իսկ չի խնդրում, որովհետև անպատկառի մեկն է, վայրենի և գռեհիկ... Ես նույնիսկ պատկերացնում եմ նրա դեմքը՝ մազերն էսպես թափած, կասկածելի շապիկ հագած... ու բերանում էլ ծամոն... ծամում է ու պտտեցնում սկավառակը: Ծամում է ու պտտեցնում...

ՄԱՅՐԸ - Չե՞ս զգում, որ վիրավորում ես աղջկան, այդպես չի կարելի, Արշավիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Ես եմ վիրավորում, հա՞...

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ, իսկ ես ի՞նչ գործ ունեմ այդպիսի տղաների հետ...Ես ե՞րբ եմ առիթ տվել...

ՀԱՅՐԸ - /Հեռախոսը ցույց տալով/ Ահա, խնդրեմ, դրանից էլ լավ առի՞թ...

ԱՂՋԻԿԸ - Հա... բայց ես...

/Հեռախոսի զանգ/:

ՀԱՅՐԸ - Դե լավ, հիմա կտեսնես...

ՄԱՅՐԸ - Սպասիր, ես կվերցնեմ...

ՀԱՅՐԸ - Ոչ, ոչ, ես գիտեմ, թե ինչ կասեմ...

ԱՂՋԻԿԸ - Թող ես խոսեմ, մամ... /Մոր ձեռքից վերցնում է լսափողը/: Ալո՞... ալո՛... լսում եմ... ալո՛... ոչ մի ձայն էլ չկա...

ՀԱՅՐԸ - Տե՛ս, տես ինչ դերասանություն է անում:

ԱՂՋԻԿԸ - Դու խոսիր...

ՀԱՅՐԸ - Ալո՞... դե իհարկե, նա էլ խոսեց... իմ ձայնը լսելուց հետո...

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ ջան, ինչո՞ւ ինձ չես հավատում, ոչ մի ձայն էլ չկար, ազնիվ խոսք: Եվ վերջապես՝ ո՞վ, նա...

ՀԱՅՐԸ - Դու շատ լավ գիտես ով է:

ՄԱՅՐԸ - Արշավիր, իսկապես, եթե դու որևէ բան գիտես, կամ որևէ բան են հասցրել քեզ, ասա, մենք էլ իմանանք...

ՀԱՅՐԸ - Էլ դրանից ավել ի՞նչ ես ուզում, տիկին, ամբողջ օրն աշխատում եմ դժոխքի մեջ, գալիս եմ տուն, որ հանգստանամ մի քիչ և ահա, խնդրեմ... /հեռախոսի զանգ/

Ահա, խնդրեմ... /աղջկան/ Դու եթե մեկ էլ հեռախոսի համար ես տվել որևէ լակոտի, ես քեզ հետ ուրիշ ձևով կխոսեմ... լավ իմացիր...

ԱՂՋԻԿԸ - /Հեծկլտալով/ Ես այլևս չեմ կարող, այլևս չեմ կարող... մամ ջան, հայրիկն ի՞նչ է ուզում ինձնից... բավական է, ես կխելագարվեմ... ի՞նչ եք ուզում ինձնից... ես ոչ ոքի

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

հեռախոսի համար չեմ տվել, ես ոչ ոքի չեմ ասել, որ զանզահարի ինձ... Անջատեք այդ հեռախոսը, անջատեք, մեղք եմ, չէ...

ՄԱՅՐԸ - Դե լավ, լավ, աղջիկս...

ԱՂՋԻԿԸ - Մեղք եմ, չէ... ինչպես կարելի է, ամեն օր, ամեն օր... Ինչո՞ւ ինձ չեք հավատում… ի՞նչ եք ուզում ինձնից...

/Այս ամբողջ ժամանակամիջոցում հեռախոսը զնգում է/:

ՀԱՅՐԸ - Միայն մի բան. այդ ո՞ր անամոթն է, որ անընդհատ զանգահարում է քեզ ու երբ մենք վերցնում ենք՝ լռում է...

ԱՂՋԻԿԸ - Ես այլևս չեմ կարող... Ես էլ եմ ուզում իմանալ, թե դա ով է, շատ եմ ուզում իմանալ, թե դա ով է... որ այդպես թունավորում է մեր կյանքը.,,

/Իրեն կորցրած վերցնում է սարքը ու նորից նետում սեղանիկին/:

ՄԱՅՐԸ - Ջարդեցիր, ա՛յ աղջիկ...

ՀԱՅՐԸ - Ի՞նչ ես անում... Չէ՛, դեռ զնգում է... փչացա՞վ...

/Վերցնում է զանգող հեռախոսը, փչում է/:

Ուհ... ալո՛... ալո՛... լսում եմ... ի՞նչ, մամ ջան, էդ դո՞ւ ես... ի՞նչ... էդ դո՞ւ էիր անընդհատ զանգ տալիս... Ա՛խ, մամա... մամա... Չէ՞ր լսվում... ի՞նչ... դու մեզ լսո՞ւմ էիր... հա՛, տանն եմ, արի...

/Զգուշորեն ցած է դնում լսափողը, ամաչում է գլուխը բարձրացնել: Աղջիկը դեռ ձեռքերով ծածկել է դեմքը: Կինը ժպտում է/:

ՄԱՅՐԸ - Պարզեցի՞ր ով է, Արշավիր...

ՀԱՅՐԸ - /Մոտենում է աղջկան, գրկում է ուսերը/ Դե լավ, վերջ տուր, դե վերջ տուր, ասում եմ... Ես քեզանից ներողություն եմ խնդրում, աղջիկս, հեռախոսային ցանցի ղեկավարության և… և անձամբ իմ անունից…

ՄԱՅՐԸ – Տե՛ղն է քեզ… թող քեզ դաս լինի...

ՀԱՅՐԸ - Է՛, հա՛, է՛, հա՛... ես բա՞ն եմ ասում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Աղջիկը բարձրացնում է գլուխը, ժպտում է, մայրը ծիծաղում է երջանիկ, որ ամեն ինչ հարթվել է: Հայրը ծիծաղում է սկզբում ամաչելով, հետո բարձր: Նրանք գրկում են իրար ու ծիծաղում են/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԽԱՆԴԸ

Պատշգամբ կամ սենյակ: Մեղմ քնարական երաժշտություն է հնչում: Ջահել կինը ռիթմի տակ ամուսնու վերնաշապիկն է արդուկում: Նրա տրամադրությունը բարձր է: Հանկարծ, երբ շրջում է վերնաշապիկը, գրպանից մի թուղթ է ցած ընկնում: Թուղթը մի կողմ է դնում և շարունակում անհոգ արդուկել: Ու անմիջապես էլ մի հայացք է նետում թղթին, թեքվում է, մոռանում արդուկը, վերցնում թուղթը:

ԱՆԱՀԻՏ - /Կարդում է/ «Մասնագիտությամբ բժշկուհի եմ: Փնտրում եմ կյանքի ընկեր, որը պետք է լինի 27-ից 30 տարեկան, միջահասակից բարձր, սևահեր, միջնակարգ կամ բարձրագույն տեխնիկական կրթությամբ և սիրի ժողովրդական երգեր:

Վերջին կետը պարտադիր է: Ն.Դ.: Խնդրում եմ զանգահարել երեկոյան ութից հետո, հեռախոս 27-24... »:

Սա՞ ինչ բան է: Սերո՞ք…

/ Ընկնում է աթոռին/:

Սպասիր, սպասիր, ուրեմն երեսուն տարեկան, բարձրահասակ, սևամազ, ինժեներ… Իսկը ինքն է, էլի… սիրի ժողովրդական երգերը... Ես էլ ասում եմ վերջերս ինչու է անընդհատ շվշվացնում…

/Նետվում է դեպի հեռախոսը, հավաքում է տենդայնորեն/:

Չկա, ուրեմն էնտեղ է, էլի… Չէ, ասենք դեռ ութը չկա… Իսկ գուցե երեկ է պայմանավորվել կամ մյուս օրը, ինչ իմանամ... Ես քափ ու քրտինքի մեջ մտած ձմեռվա խորոված եմ փակում իր համար, կոմպոտներ եմ պատրաստում, իսկ ինքը կյանքի նոր ընկեր է փնտրում... այ, շա՛տ ապրես, Սերոբ, շա՛տ... Ես ամբողջ օրը վառվում եմ գազօջախի մոտ… Է՞ս ինչ հոտ է, վառվե՛ց…

/Նետվում է դեպի արդուկը: Վերնաշապկից ծուխ է բարձրանում: Վերցնում է արդուկը, անջատում է, բայց արդեն ուշ է/:

Վառվեց… լավ եղավ, թող վառվի, սա դեռ ի՞նչ է, վառվելը նոր կտեսնես, Սերոբ տղա... Հա, իհարկե, ոչ երեկ երեկոյան էր տունը, ոչ էլ անցյալ օրը... Գնամ տղերքի հետ նարդի խաղամ... Նարդին էլ Ն.Դ.-ն է, հա՞... Անամոթ... Հիմա ի՞նչ անեմ: Ի՞նչ պիտի անեմ, առաջ ես կգնամ, անտեր հո չե՞մ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Նորից նետվում է դեպի հեռահասը: Հավաքում է համարը/:

Մամա, մամ ջան... ես եմ...

/Մայրը՝ լսափողը ձեռքին, մի անկյունում/:

ՄԱՅՐԸ - Աննա, ի՞նչ է պատահել, ցավդ տանեմ:

ԱՆԱՀԻՏ - /Հեծկլտոցով/ Մամ ջան...

/ Երաժշտության տակ: Մնացած խոսքերը որոշակի չեն լսվում, բայց երևում է, որ Անահիտը խոսում է անընդհատ/:

ՄԱՅՐԸ - Ի՞նչ, այդպես, հա՞, բա որ ասում էի…

/Մնացած խոսքերը չեն լսվում, բայց զգացվում է, թե ինչպես է գազազել մայրը/:

ԱՆԱՀԻՏ – Հա՛...

/Ցած է նետում լսափողը, արագ շարժումներով հավաքում է իրերը, լցնում ճամպրուկների մեջ, պահարաններից սպիտակեղենն է հանում, դաշնամուրի վրայից վերցնում է փղերը, ժամացույցը պոկում է պատից... Ձեռքն ընկած այն իրերն ու հագուստները, որ ամուսնուն են պատկանում, շպրտում է սենյակով մեկ:

Լսվում է դռան չխկոց, «Սերս գաղտնի թող մնա» երգելով, ուրախ-ուրախ ներս է մտնում Սերոբը, կանգ է առնում դռան առջև, բայց ինքերցիայով շարունակում է երգել, զարմացած դիտելով, թե ինչով է զբաղված կինը/:

ՍԵՐՈԲ - Ի՞նչ ուբորկայի ժամանակ է, ա՛յ կնիկ...

ԱՆԱՀԻՏ - Դու երգիր, երգիր, պարապի, քննություն ես տալու...

ՍԵՐՈԲ - Ի՞նչ երգեմ... այսինքն, ի՞նչ քննություն, Անահիտ...

ԱՆԱՀԻՏ - / Սառը, արժանապատվությամբ / Խնդրում եմ իմ անունն այլևս չտալ…

ՍԵՐՈԲ - Գիշերվա երազս էր... ի՞նչ է պատահել, Անա... ներողություն, այսինքն ոչ մի ներողություն, ի՞նչ է պատահել, Անահիտ…

ԱՆԱՀԻՏ - Դու շատ լավ գիտես, թե ինչ է պատահել, դու անգիր գիտես, «Սերս գաղտնի թող մնա», հա՞... Գաղտնի չի մնացել, ամեն ինչ հայտնի է, սիրելի ամուսին, ամեն ինչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՍԵՐՈԲ - Գժվե՞լ ես, ինչ է, ա՛յ կնիկ...

ԱՆԱՀԻՏ - Քեզ նման ամուսին ունեցողը կգժվի, բա ի՞նչ պետք է անի...

ՍԵՐՈԲ - Լսիր, դու ինձ կարո՞ղ ես մարդավարի բացատրել...

ԱՆԱՀԻՏ - Կարող եմ, բացատրում եմ, ես գնում եմ մեր տուն, հորս տուն: Ինքս եմ գնում: Եվ ոչ թե դու ես հեռանում ինձնից, այլ ես եմ հեռանում քեզնից... Վերջ:

/ Փորձում է փակել ճամպրուկը, չի կարողանում/:

Օգնիր, չե՞ս տեսնում, որ չի փակվում...

ՍԵՐՈԲ - Ի՞նչ... հա՜... /օգնում է, փակում են/: Բ-բայց, բայց ինչո՞ւ ես հեռանում:

ԱՆԱՀԻՏ - Որպեսզի ստիպված չլինես սերդ գաղտնի պահել...

ՍԵՐՈԲ - Ի՞նչ սեր...

ԱՆԱՀԻՏ - Ն.Դ.-ն:

ՍԵՐՈԲ - Տեր աստված, ի՞նչ Ն. Դ…

ԱՆԱՀԻՏ - Նարդին, էլի, հիմա դա, եթե չեմ սխալվում, նարդի է կոչվում: Երեկ երեկոյան ո՞րտեղ էիր…

ՍԵՐՈԲ - Երե՞կ...

ԱՆԱՀԻՏ - Նաև անցյալ օրը...

ՍԵՐՈԲ - Նարդի էի խաղում...

ԱՆԱՀԻՏ - Դե տեսնո՞ւմ ես, երգում ես, նարդի ես խաղում, մտածում ես առողջության մասին, գտնում ես, որ կողքիդ անպայման բժշկուհի պետք է լինի...Ուրեմն ես քո ինչի՞ն եմ պետք... այսինքն՝ դու իմ ինչի՞ն ես պետք...

/ Մյուս ճամպրուկն է փորձում փակել/: Սեղմիր, ա՛յ տղա...

ՍԵՐՈԲ - Ինչ անե՞մ... ախ, սեղմե՛մ... / Սեղմում է, ճամպրուկը փակում են/:

ԱՆԱՀԻՏ - Ես գնացի, Սերոբ, երջանիկ եղիր... /Փղձկում է, նստում է ճամպրուկին/ Երջանիկ եղիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՍԵՐՈԲ - Առանց քեզ ի՞նչ երջանիկ, Անահիտ ջան... Ինչե՞ր ես խոսում:

ԱՆԱՀԻՏ - Ինչո՞ւ... միանգամայն համապատասխան ես՝ միջահասակից բարձր, ինժեներ, մազերդ սև ու համապատասխան թեմայով լավ էլ երգում ես... Կասկած չունենաս, դու կոնկուրսով կանցնես...

ՍԵՐՈԲ - Տե՛ր աստված, դու ինձ համբերություն տուր, ի՞նչ կոնկուրս, այ աղջիկ...

ԱՆԱՀԻՏ - Որ քո բժշկուհին հայտարարել է...

ՍԵՐՈԲ - Ի՞նչ բժշկուհի...

ԱՆԱՀԻՏ – Դե՝ գիտե՞ս ինչ, հերիք է դերասանություն անես, գոնե տղամարդ եղիր, ասա որ, ասա որ ինձ չես սիրում այլևս, որ... որ նոր կյանք ես ուզում սկսել... և ոչ թե այսպես, վախկոտի նման, գաղտագողի... մասնակցի կոնկուրսին... թե անցար, անցար, թե չանցար, նորից մնաս տանը՝ մինչև նոր մրցանակաբաշխություն...

ՍԵՐՈԲ - Անահիտ, լռիր, լռիր, ասում եմ, հիմա հասկացա, որ ինչ-որ բան է կատարվել, բայց ամոթ ինձ, թե որևէ բան հասկանում եմ: Ի՞նչ է եղել, չե՞ս կարող մարդավարի ասել, ի՞նչ կոնկուրս, ի՞նչ բժշկուհի, ի՞նչ ինժեներ...

ԱՆԱՀԻՏ - Դե լավ, սա ի՞նչ է, ասա... /Մեկնում է թերթի կտրոնը/:

ՍԵՐՈԲ - Սա՞, սա «Ծիածան» թերթից եմ կտրել, ո՞րտեղից գտար:

ԱՆԱՀԻՏ – Լավ չէիր թաքցրել, վերնաշապիկիդ գրպանիկից ընկավ...

ՍԵՐՈԲ - Է՛, լավ, դրա մեջ ի՞նչ կա: Ուզում էի այուրպրիզ անել...

ԱՆԱՀԻՏ - Արեցիր, էլի, դրանից էլ լավ այուրպրի՞զ: Երևի զարմանում ես, որ չեմ ուրախանում, հա՞, երևի դեռ պիտի պար գամ, հա՞...

ՍԵՐՈԲ - Չէ, բայց ի՞նչ բժշկուհի... ոչինչ չեմ հասկանում... Երկու օր հետո մեր ամուսնության տարեդարձն է, չէ՞, ես էլ ուզեցի քեզ համար անակնկալ պատրաստել:

ԱՆԱՀԻՏ - Պատրաստեցիր, էլի...

ՍԵՐՈԲ - Բայց կարծեմ դու էիր ուզում, չէ՞, մի անգամ ասացիր՝ Մարգոյի տանը տեսել եմ ու շատ եմ հավանել...

ԱՆԱՀԻՏ - Ո՞ւմ եմ հավանել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՍԵՐՈԲ - Ում չէ, ի՛նչ, այ կնիկ, փոշեծծիչ:

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ:

ՍԵՐՈԲ - Փոշեծծիչ, «Փոթորիկ»: Դու չէի՞ր ասում: Ես էլ որ թերթում կարդացի ռեկլամը... կտրեցի...

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչը կտրեցիր...

ՍԵՐՈԲ - Ռեկլամը , նոր դո՛ւ ինձ տվեցիր, չէ, տես...

/ Նորից մեկնում է կտրոնը: Անահիտը վերցնում, կարդում է/:

ԱՆԱՀԻՏ - Վա՞յ... «Ուզո՞ւմ ես թեթևացնել տանտիրուհու հոգսը, գնիր «Փոթորիկ» փոշեծծիչ, դա կլինի ամենալավ նվերը... »:

/Թուլացած նորից ընկնում է ճամպրուկին/:

Դե հիմա… հիմա դու կարդա...

/Շրջած մեկնում է կտրոնը/:

ՍԵՐՈԲ - Ի՞նչ կարդամ... «Մասնագիտությամբ բժշկուհի եմ, փնտրում եմ կյանքի ը...ընկեր, որը... /կարդում է արագ– արագ, փոթկալով, հետո ծիծաղում է, բարձրաձայն, երկար, արցունքի միջից ծիծաղում է նաև Անահիտը/:

Բայց ես սա չէի էլ տեսել, գի՛ժ...

/Գրկում են իրար, ծիծաղում միասին/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՓԱԽՈՒՍՏ

Գիշեր է: Շենքի պատուհաններից մեկը ճռնչոցով բացվում է: Սկզբից ցած է նետվում սավաններից հյուսված մի պարան: Հետո հայտնվում է մի կնոջ գլուխ՝ շորով փաթաթված: Նա զգուշորեն աջ ու ձախ է նայում, հետո իջնում է պարանով: Դեռ ոտքը գետնին չդրած, լսվում է պահակի ձայնը:

ՊԱՀԱԿ - Ո՞վ ես, էհե՛յ...

ԿԻՆԸ - / Ընկնելով ցած/ Օ՜ֆ...

ՊԱՀԱԿ - Ըհը, բռնվեցիր, ո՞ւր էիր տանում սավանները:

ԿԻՆԸ - Ո՞վ է, ի՞նչ սավան...

ՊԱՀԱԿ - Ո՞նց թե: Փաթաթել տանում է ու դեռ հարցնում է ինչ սավան: Հիմա կնիքները կստուգեմ: Մի լույսի մոտ արի...

/Քաշում է մի կողմ/:

ԿԻՆԸ - Վայ, Երեմ եղբայր, դո՞ւ ես...

ՊԱՀԱԿ - Երեմն եմ, բայց գողի եղբայր չեմ: Ըհը, կնիքը՝ «հիվանդանոց»:

ԿԻՆԸ – Վայ, ինչ լավ է, որ դու ես, Երեմ եղբայր, սիրտս ճաքեց, կարծեցի խիրուրգն է:

ՊԱՀԱԿ - Ո՞վ: Սանամ քույրի՞կ: Աչքերիս հավատա՞մ: Դո ւ... սավանի գո՞ղ:

ԿԻՆԸ - Ի՞նչ սավան, Երեմ եղբայր, ձեր սավանները գողանալու բա՞ն են: Ես... Ես իմ գողն եմ:

ՊԱՀԱԿ - Ո՞նց թե քո գողը:

ԿԻՆԸ - Հա, հա, հենց իմ գողը: Ես ինձ գողանում եմ... Ուզում եմ փախչել էստեղից... Կարոտել եմ թոռներիս, տանը ու էն խեղճ հալիվորին... թող գնամ, Երեմ ջան:

ՊԱՀԱԿ - Ո՞նց թողնեմ, բա մեր ինվենտա՞րը... /ցույց է տալիս խալաթը/ Տեսնո՞ւմ ես՝ հինգ տեղ կնքված է. «Հիվանդանոց»:

ԿԻՆԸ - Ախր ես էլ չեմ կարող մնալ, խալաթը կուղարկեմ, մեղք եմ, Երեմ եղբայր, քուն ու հանգիստ չունեմ: Ուզում եմ տուն գնալ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՀԱԿ - Հիվանդ-հիվանդ ո՞ւր ես գնում:

ԿԻՆԸ - Ես հիվանդ չեմ, առողջ եմ, առողջ եմ, առողջացել եմ:

ՊԱՀԱԿ - Սպասիր, քո ի՞նչն էր:

ԿԻՆԸ – Կույր աղիքը:

ՊԱՀԱԿ - Ինչքա՞ն ես էստեղ:

ԿԻՆԸ - Ամիսուկես է:

ՊԱՀԱԿ - Ինֆեկցիա հո չի՞ անցել:

ԿԻՆԸ - Ի՞նչ... չէ, ոչ մի բան էլ չի անցել:

ՊԱՀԱԿ - Իսկ ուրիշ ցավ-մավ չունե՞ս:

ԿԻՆԸ - Չէ, բայց որ մի քիչ էլ մնամ, ստամոքսի ցավ կստանամ:

ՊԱՀԱԿ - Հըմ... Գուցե քեզ մոռացել են, որ դուրս չեն գրում:

ԿԻՆԸ - Ուր էր մոռանային: Ուր թաքնվում եմ՝ չի լինում: Հենց խիրուրգին տեսնում եմ, քնած եմ ձևանում, բայց էլի քնից վեր է կացնում ու բարևում է: Ու էսպես ամեն օր բարևում է:

ՊԱՀԱԿ – Ի՜նչ հոգատարություն: Բա որ բարևում է, ի՞նչ է ասում:

ԿԻՆԸ - Ասում է ո՞նց ես, ոնց, մայրիկ:

ՊԱՀԱԿ - Իսկ դո՞ւ:

ԿԻՆԸ - Ես էլ ասում եմ, լավ եմ, բալիկ ջան, թող գնամ տուն, էլի...

ՊԱՀԱԿ - Իսկ նա՞,

ԿԻՆԸ - Նա էլ ասում է՝ էս ո՞նց է քո ետևից մարդ չի գալիս: Որ բերում էին՝ քսան հոգի եկել էին: Հիմա ո՞ւր են:

ՊԱՀԱԿ - Հա… ո՞ւր են:

ԿԻՆԸ - Եսիմ ուր են... վար է, ցանք է, կով ու կիթ է, հավ ու ճիվ է… Ոտքերն եմ ընկնում, ասում եմ՝ թող գնամ, ասում է չէ՝ մինչև քո ետևից չգան, չեմ թողնելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՀԱԿ - Լսիր, հո ձերոնք բան-ման չէին խոստացել:

ԿԻՆԸ - /Ամաչելով/ Խոստացած կլինեն:

ՊԱՀԱԿ - Դե, չեղավ, չէ՞, տեսնո՞ւմ ես՝ մեր միջանցքում էլ է գրված՝ խոստացել ես, կատարիր... Չպետք է խոստանայիք:

ԿԻՆԸ - Ո՞նց չխոստանայինք... Չորրորդ օրն էր չորրորդն էի...

ՊԱՀԱԿ - Հետո՞…

ԿԻՆԸ - Որ խոստացանք... Չորրորդ օրն էր… առաջինն էի...

ՊԱՀԱԿ - Հըմ... Խիրուրգն ո՞վ է:

ԿԻՆԸ - Ընկեր Գառնակերյանը…

ՊԱՀԱԿ - Հա, նա կուտի, կուտի... Ինչ ասեմ, բախտդ չի բերել, քույրիկ, վեց խիրուրգ ունենք... հինգը ոսկի են, մաքուր, ազնիվ, վարպետ...Դու ավտոմատի մոտ ես ընկել...

ԿԻՆԸ - Ինչի՞...

ՊԱՀԱԿ - Ավտոմատ հեռախոսի... մինչև փողը չի ուտում, չի խոսում... Ես դեռ զարմանում եմ, որ ապառիկ գործ է բռնել... իսկի նրանից չէ…

ԿԻՆԸ - Բա հիմա ես ի՞նչ անեմ, եղբայր... /ցույց է տալիս պատուհանը/ նորից բարձրանա՞մ...

ՊԱՀԱԿ – Է՛հ, ինչ լինում է, թող լինի... Փախիր, քույրիկ, միայն թե խալաթը չմոռանաս... ինվենտար է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՍԵՐ ՉԿԱ

Ինստիտուտի դիրեկտորի գրասեղանը: Գրքեր, հեռախոսներ: Սեղանի ետևում նստած է դիրեկտորը: Նա հոգնած, տանջահար դեմք ունի: Խոսում է հեռախոսներով, համոզում, խնդրում, զարմանում է, հետո օրորում է գլուխը, փակում է ականջները, հետո լսափողերը նետում է սեղանին: Բարձրանում է տեղից ու զայրացած սկսում է քայլել սենյակում:

ԴԻՐԵԿՏՈՐ - Դե իհարկե, միայն հիմա եմ հասկանում, թե ինստիտուտների դիրեկտորներին ինչու է կոլեգիան հաստատում: Այո, այո, որպեսզի կոլեգիայի կազմի մեջ մտնող այդքան մարդկանց մեջ չկարողանաս իմանալ, թե կոնկրետ ով է քո թշնամին, թե կոնկրետ ով է ուզեցել քեզ հետ հաշիվներ մաքրել, քեզ առաջարկելով ինստիտուտի դիրեկտոր…

Ինստիտուտի դիրեկտո՛ր…

Ասա կրակ, ասա պատիժ, ասա երկնային դատաստան… Այս մի քանի ամսվա մեջ ինչքա՛ն ընկերներ կորցրեցի և ինչքա՛ն բարեկամներ, ավելի ճիշտ, ազգականներ գտա: Ֆոկուսի պես բան է, մինչև հիմա չկային ու մեկ էլ հոպ՝ հայտնվել են: Պարզվում է, որ ամբողջ Հայաստանում մեր ազգից մեծ ազգ չկա, որ հայ ժողովրդի կեսը Անմեղիկյան է, իսկ մյուս կեսն էլ իրեն լրիվ Անմեղիկյան է համարում: Որքան քեռորդիներ, հորեղբայր, հորաքրոջ և մորաքրոջ զավակներ ունեմ, քավոր ու խնամիական ինչ հզոր ցանց են ունեցել իմ հանգուցյալ ծնողները, ապշել կարելի է: Իսկ իմ կնոջ ազգակցական կապերն արդեն, ինչպես ասում են , դուրս են եկել հանրապետության սահմաններից…

Եվ մինչև դիրեկտոր դառնալս այդ մասին բոլորովին տեղեկություն չեմ ունեցել: Ապրել եմ խեղճ, որբի պես: Այսինքն, մի անգամ չգիտեմ ինչ առիթով ուզեցի փնտրեմ ազգականներիս, բայց այդպես էլ չհաջողվեց: Իսկ հիմա, խնդրեմ, լայն ասորտիմենտ…

Եվ ոնց էլ հաջողացրել են, ամեն մեկը ինստիտուտ ընդունվող մեկ կամ մի քանի երեխա ունի: Եվ ամբողջ օրը…

/Զանգ/:

Խնդրեմ, այս մի հեռախոսով էլ գտան:

/Վերցնում է լսափողը/:

Ներեցեք, ես ընդունելության հարցով չեմ զբաղվում: Վերջացրեք: Ինչպե՞ս… ի՞նչ բժիշկ… Ախ, հա՛, դուք բժշկի՞ ընդունելության ժամերն եք հարցնում, հա՞… Ներեցեք, սիրելիս… հեռախոսն

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

եք շփոթել, ազնիվ ընկեր, շնորհակալություն, որ շփոթել եք, բարեկամս... տաքություն... ե՞ս... ախ, հա, հա, հարցնում եք՝ տաքություն հո չունե՞մ... Ունեմ, ունեմ, ունեմ, եղբայր: Հաջողություն ձեզ:

Գրողը տանի, սիրտս վատացավ...

/ Դարակից վոլոկարդին է հանում, լցնում փոքրիկ բաժակի մեջ, հաշվելով/:

Բարի լույս:

/Խմում է: Հետո լսափողերից մեկը զգուշությամբ լծակին է դնում ու զանգի ձայն լսելով, անմիջաաես վերցնում սարսափած/:

Ալո՞, լսում եմ: Ո՞վ...

/Երևում է լսափողը բռնած մի դեմք/:

ԳԱՐԵԳԻՆ - Բարև, ընկեր Սարգիս: Բարև, բարիաչողում, Գարեգինն է:

ԴԻՐԵԿՏՈՐ - Բարև ձեզ: Ը՛ը, կներեք, ո՞ր Գարեգինը:

ԳԱՐԵԳԻՆ - Հա-բա՞, չես ճանաչի... Ինչի՞ պիտի ճանաչես... Գարեգին Մանոյան...

ԴԻՐԵԿՏՈՐ - Մանոյա՞ն... /Մեկուսի/ Մանոյան, Մանոյան, Մանոյան /բարձր/ կներեք, բայց չեմ հիշում, ընկեր...

ԳԱՐԵԳԻՆ - Մանոյան... Չես հիշի, բա ինչ, բայց որ կոշիկներդ բերում ես կարկատելու, էդ ժամանակ հիշում ես, ասում ես. «Ո՞նց ես, Գարեգին ջան, երկու ժամից պատրաստ կլինի՞, Գարեգին ջան»:

ԴԻՐԵԿՏՈՐ - /Դեռ զուսպ/ Ա...կներեք, ը՛ը, որովհետև քանի ամիս կլինի կոշիկներս վերանորոգման չեմ բերում...

ԳԱՐԵԳԻՆ - Հա, դե հիմա ինչի՞ պիտի բերես, Սաքո ջան... ինչ է՝ շարքային դասախո՞ս ես, որ կոշիկներդ կարկատելու բերես... Հիմա երկու օր հագնում ես ու պոպոքով փոխում, չէ՞, Սաքո ջան...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ներեցեք, բայց դուք...

ԳԱՐԵԳԻՆ - Իսկ էն ժամանակ բերում էիր, Սաքո ջան, պոդմյոտկա էլ էի անում, նաբոյկա էլ էի անում, հիշո՞ւմ ես, մի անգամ էլ իմ հաշվին նալեցի քեզ, է՜, մանր, պլպլան նալեր էին...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԻՐԵԿՏՈՐ - /Տառապանքով օրորում է գլուխը/ Հիշում եմ, հիշում եմ: Իսկ հիմա դարձյալ կարկատո՞ւմ եք... Հավանաբար շուտով երևամ...

ԳԱՐԵԳԻՆ - Կարկատում եմ, կարկատում... Ես քեզ համար միշտ կանգնած, այսինքն՝ նստած եմ: Արի, արի, Սաքո ջան, աղջիկս էս տարի դպրոցն ավարտում է, Սաքո ջան...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ցտեսություն...

/Նետում է լսափողը, հառաչում է/ Ա՜խ...

/Նրան է մոտենում հրդեհաշեջի գլխարկով մեկը, պատվի է բռնում, մեկնում է ձեռքը/:

ՀՐՇԵՋ - Հրշեջ ծառայության կապիտան Վարդանյան:

ԴԻՐԵԿՏՈՐ - Հրշե՞ջ...

ՀՐՇԵՋ - Ինչո՞ւ եք զարմանում: Ձեր ինստիտուտում հրավտանգ վայրեր կան, ճիշտ չի կազմակերպված հակահրդեհային պաշտպանության գործը: Կամավոր հրշեջ խումբը գրեթե չի գործում, ուսանողները և առանձնապես ուսանողուհիները ծխում են միջանցքում և նույնիսկ լսարաններում... իսկ եթե շենքը հրդեհվի ...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ա՜խ, ուր էր,ուր էր...

ՀՐՇԵՋ - Ի՞նչն է ուր...

ԴԻՐԵԿՏՈՐ - Այսինքն՝ուզում եմ ասել, թե ուր է, որ կարողանաք պատշաճ բարձրության վրա դնել հակահրդեհային... /Հնչում է հեռախոսը/: Ներեցեք, լսում եմ. Քեռի՞ն, ալո, ալո, կիրակի օրը խաշի՞...

/Հնչում է մյուս հեռախոսը/:

Մի րոպե, լսում եմ, լսում եմ, հարևան, խորովա՞ծ... ձեզ հետ չեմ, քեռի, ձերը խաշն էր, չէ, խորոված չեմ ուզում, չէ, սիրելի հարևան, ի՞նչ խաշ...

/ Երկու լսափողն էլ պահում է իր դիմաց, բղավամ է/

Տղա՞ է, թե աղջիկ... Չեմ ուզում, ստամոքսի խոց ունեմ...

/Լսափողերը տարբեր լծակների է դնում/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՐՇԵՋ - Ստամոքսի խո՞ց, իսկ ինչո՞վ եք բուժվում... Ես ձեզ կարող եմ հիանալի դեղ առաջարկել, մոտիկ հարևանս Ամերիկայից է բերել, երեք գույնի է, սրիկան մի սրվակը երեք ռուբլիով է վաճառում... Առաջին կուրսը...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ի՞նչ կուրս, ի՞նչ կուրս, ոչ մի կուրս, լսո՞ւմ եք. ես ընդունելության հարցով չեմ զբաղվում...

ՀՐՇԵՋ - Չէ, չէ, ասում եմ դեղի առաջին կուրսը վեց սրվակ է:

ԴԻՐԵԿՏՈՐ - Հա, ներեցեք... Եվ օգնո՞ւմ է հրդեհի դեմ...

ՀՐՇԵՋ - Ի՞նչ հրդեհ... Ասում եմ ստամոքսը... այդպես չի կարելի թողնել, դուք գիտակից, դիրեկտոր մարդ եք, ընկեր Անմեղիկյան... ստամոքսի հետ չեն խաղա... ես այդ դեղն անպայման կբերեմ ձեզ...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ոչ, ոչ, խնդրում եմ...

ՀՐՇԵՋ - Մի անհանգստացեք, ձրի կբերեմ, ընկեր Անմեղիկյան, անշահախնդիր կերպով, ուրեմն մենք իսկի մա՞րդ չենք: Ուսադիրներիս մի նայեք, ընկեր Անմեղիկյան...

ԴԻՐԵԿՏՈՐ-Իսկ փոխարե՞նը...

ՀՐՇԵՋ - Փոխարենն ի՞նչ...

ԴԻՐԵԿՏՈՐ - Փոխարենը տղա՞ է թե աղջիկ...

ՀՐՇԵՋ - Հի, հի, հի, տղա է, ընկեր Անմեղիկյան, մի տեղ պիտի ընդունվի՞, թե չէ: Մենք էլ մարդ ենք, ընկեր Անմեղիկյան, բա որ աչք ենք փակում հակահրդեհային կանոնների խախտման վրա...Ախր ձեր ինստիտուտը իսկական հրդեհի բույն է...

ԴԻՐԵԿՏՈՐ - Հրդեհի բույն է, բա ինչ է... հա, իսկ եթե հրդեհի բույն է, ինչո՞ւ եք ուզում ձեր որդուն մեզ մոտ ընդունել և փոխարենը աչք փակել հրդեհավտանգ վիճակի վրա... Բա որ ձեր երեխան էլ վառվի...

ՀՐՇԵՋ - Եթե մի բան չանեք, կվառվի, բա ինչ...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ոչինչ չեմ կարող անել, ընկեր, գնացեք և պայքարեք ազնվորեն, դուք՝ հրդեհի դեմ, ձեր որդին՝ ինստիտուտ ընդունվելու համար: Հաջողություն ձեզ...

ՀՐՇԵՋ - Լավ, այդ դեպքում ես ստիպված կլինեմ ակտը ուղարկել մինիստրություն, կտեսնենք... ստամոքսի խոց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԻՐԵԿՏՈՐ - Ուղարկեք, ուղարկեք...

/Կապիտանը դուրս է գնում: Դիրեկտորը նորից հանում է վոլոկարդինի սրվակը և սկսում է հաշվել: Խմում է/:

Սուտ բան է, անշահախնդիր սեր չկա:

/Հնչում է հեռախոսի զանգը: Վեր է թռչում վախեցած, վերցնում է լսափողը/:

Ալո՞, լսում եմ...

/ Երևում է մի կնոջ դեմք, լսափողը ձեռքին/:

ԿԻՆԸ - Սաքո ջան, դո՞ւ ես:

ԴԻՐԵԿՏՈՐ - Լսում եմ: Անմեղիկյանն է:

ԿԻՆԸ - Ո՞նց ես, Սաքո ջան...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ներեցեք, ում հետ պատիվ ունեմ...

ԿԻՆԸ – Է՛, Սաքո ջան, մի՞թե այդպես արագ է թռչում ժամանակը, մի՞թե արդեն տարիների մշուշի մեջ կորել են մեր սիրո արահետները... Շողիկն է, Սաքո ջան, Շողիկը, հիշո՞ւմ ես, գյուղում ամբողջ օրը վազում էիր իմ ետևից, կարմիր շորով աղջիկ էիր կանչում ու քաշում մազերիցս...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ներեցեք, բայց դուք շփոթում եք, ես ոչ մեկի ետևից էլ չեմ վազել...

ԿԻՆԸ - Վազել ես, վազել ու մոռացել ես: Ինչպե՞ս ես, Սաքո ջան, էլի գանգուր մազե՞ր ունես:

ԴԻՐԵԿՏՈՐ - /Շփում է գլուխը) Հա, իհարկե...

ԿԻՆԸ - Բա ինչո՞ւ ես շվշվացնելով խոսում, ատամներդ հո չե՞ն թափվել:

ԴԻՐԵԿՏՈՐ – Չէ՛, տրամադրությունս է բարձր... ի՞նչ եք ուզում, տիկին:

ԿԻՆԸ - Ինչ եմ ուզում... Իսկ դու գիտե՞ս, որ մենք աղջիկ ունենք, Սաքո ջան...

ԴԻՐԵԿՏՈՐ - Ի՞նչ... /մտածում, մեղքերն է հիշում/ ի՞նչ աղջիկ… /մեկուսի/ Իմ կարծիքով տղա պետք է լիներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - /Լսում է/ Չէ, աղջիկ է, որ տեսնես, իսկը իմ նման, սիրուն, բոյով, էլի կարմիր շոր է հագնում...

ԴԻՐԵԿՏՈՐ - Այո, բայց ինչո՞ւ մեր, ե՞ս ինչ կապ ունեմ...

ԿԻՆԸ - Որ ինստիտուտ ընդունես, կապ էլ կլինի,Սաքո ջան… Հին սերը չի մոռացվում... Չմոռանաս, հա, կարմիր շորով աղջիկ է: Մի անգամ ինձ մոտ արի, որ լավ ճանաչես, հա՞, Սաքո, ինձ մոտ...

ԴԻՐԵԿՏՈՐ - /Լսափողը ցած է նետում/ Սուտ է, անշահախնդիր սեր չկա, լավ է ասել Լարոշ-Ֆուկոն. «Ոչ մի հնարքով չի կարելի թաքցնել սերն այնտեղ, որտեղ այն կա և գտնել այնտեղ, որտեղ այն չկա»:

Այսպես թողնել չի կարելի, կզանգահարեմ լուսավորության մինիստրություն... տեսնենք... Ալո, ընկեր Բունիաթյա՞ն...

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ - Լսում եմ, լսում եմ, Սաքո ջան...

ԴԻՐԵԿՏՈՐ - Խայտառակություն է, ընկեր Բունիաթյան, ծնողները մեզ խեղդում են, խնդրում եմ ձեր միջոցով մի շրջաբերական իջեցնեք շրջանային ժողկրթբաժինները, թող խոսեն ծնողների հետ, թող նրանք չմիջամտեն, չխանգարեն իրենց երեխաների ընդունելությանը. խնդրում եմ...

ԲՈՒՆԻԱԻՅԱՆ - Մի հուզվիր, մի հուզվիր, Սաքո ջան, անպայման կխոսեմ. դե դա իսկապես խայտառակություն է, պետք է պայքարել անպայման…

Հա, ի դեպ, քրոջս տղան էլ ձեզ մոտ քննու... Սաքո, Սաքո, Սաքո...

/Ցած է գցում լսափողը: Հեռախոսները զանգում են: Փակում է ականջները, սկսում է վազվզել սենյակում: Ամեն կողմից լսվում է/.

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,

Արի մեզ մոտ հարսանիք,

Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՝

Սիրուն, ջահել, հարսն-աղջիկ,

Ինձ մոտ արի՝ ձվածեղ անեմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

Ինձ մոտ արի՝ բլլիթ տամ...

Ես քու հոքիրն, ես քու նանն եմ...

Ես էլ ազիզ բարեկամ…

ԴԻՐԵԿՏՈՐ - Տարա նի նա՛մ, տարա նի նա՛մ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՕԺԻՏՈՎ ՀԱՐՄՆԱՅՈՒ

Տղան ճաշում է: Մայրը նստել է նրա դիմաց, հիացմունքով նրան է նայում;

ՏՂԱՆ - Ախր շատ համով ես եփում է՛, մամ... մարդ ուտում–ուտում, չի կշտանում…

ՄԱՅՐԸ – Հա՛, բալիկս...

ՏՂԱՆ - Հետո էլ ասում են՝ նիհարիր, մամայիս ճաշերը ուտողը ո՞նց նիհարի:

ՄԱՅՐԸ - /Ծիծաղում է/ Կամուսնանաս, կնիհարես:

ՏՂԱՆ - Չէ, ճիշտ, մամ, որ ասում են անգլիացիները, շվեդները նիհար են, գիտե՞ս ինչից է, որովհետև նրանց ճաշերն այնքան անհամ են, որ ուտել չի լինում: Բա դու ինչո՞ւ չես ճաշում, մամ…

ՄԱՅՐԸ - Ես արդեն ճաշել եմ...

ՏՂԱՆ - Ե՞րբ...

ՄԱՅՐԸ - Մի ժամ առաջ: Մարիամի մոտ էի իջել: Մինչև չկերակրեցին, բաց չթողեցին: Դու իմ ճաշերն ես հավանում, իսկ որ Սուսանի եփած ճաշերն ուտես... Ի՜նչ աղջիկ է դարձել, գիտե՞ս ինչ թխվածքներ է պատրաստում…

ՏՂԱՆ - Մեկ է, քո ձեռքերից լավ ձեռքեր չկան…

ՄԱՅՐԸ - Իսկ որ ձեռագործները տեսնես…հրաշալի են, ուղղակի հրաշալի...Դու նրա հազի սվիտերը չե՞ս տեսել, կանաչը, հենց ինքն է գործել:

ՏՂԱՆ - Հա…

ՄԱՅՐԸ - Բայց այնպես ես հա՛ ասում, որ նշանակում է չես տեսել:

ՏՂԱՆ - Ճիշտն ասած՝ չեմ տեսել, մամ:

ՄԱՅՐԸ - Սանդուղքի վրա կես ժամ խոսում էիր հետը, սվիտերը չտեսա՞ր…

ՏՂԱՆ - Դե լավ, ուզո՞ւմ ես ասեմ՝ տեսել եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Ասենք, ինչո՞ւ պետք է նրա հագուստին նայեիր, նրա հետ խոսողն, իմ կարծիքով, հայացքը դեմքից կտրել չի կարող:

ՏՂԱՆ - Մամ, իսկ ես քեզ ասե՞լ եմ, որ հավանաբար բաժնի վարիչ նշանակեն ինձ: Արդեն փսփսում են:

ՄԱՅՐԸ - Գիտեմ, ասել ես...

ՏՂԱՆ - Հա՞, իսկ ինձ թվում էր չեմ ասել: Մեր գլխավոր հաշվապահը երեկ ասում էր…

ՄԱՅՐԸ - Դու Սուսանի ի՞նչը չես հավանում, տղաս:

ՏՂԱՆ - Ո՞ւմ: Սուսանի՞...

ՄԱՅՐԸ - Հա, քեզ դուր չի՞ գալիս:

ՏՂԱՆ - Ո՞վ, Սուսա՞նը... Ո՞վ է ասում, թե ինձ դուր չի գալիս: Շատ լավ աղջիկ է, մամ…

ՄԱՅՐԸ - Բա էլ ի՞նչ ես ուզում, այ որդի, հիանալի ծնողներ ունի, ամբողջ կյանքը մեր աչքի առաջ է անցել, համեստ, խելոք, զարգացած, ժողովրդական տնտեսության ցուցահանդեսն է ավարտել…

ՏՂԱՆ - Ինստիտուտը, մամ...

ՄԱՅՐԸ - Իսկ ես ի՞նչ ասացի: Նրանից ավելի լավը չես գտնի, տղաս, և հավատա մորդ աչքին, նա քեզ շատ է հավանում, անունդ լսում է թե չէ, կարմրում է: Իսկ հիմա, ա՛յ բալա, կարմրելու ընդունակ աղջիկ որտեղի՞ց գտնես: Հիմիկվա աղջիկների դեմքին ամեն գույն կգտնես, բացի կարմիրից:

ՏՂԱՆ - Ինչո՞ւ, շրթունքները կարմիր են ներկում:

ՄԱՅՐԸ - Դա առաջ էր, առաջ, հիմա մոդան ուրիշ է: Ի՞նչ ես ասում: Հորդ հետ չխոսե՞մ...

ՏՂԱՆ - Ես Սուսանին չեմ սիրում, մամ...

ՄԱՅՐԸ - Ի՞նչ, ինչո՞ւ, այ բալա, նրա ի՞նչն է պակաս, ասա տեսնեմ: Ով տեսնում է, երանի է տալիս նրա տիրոջը: Ինչո՞ւ, ինչո՞ւ չես հավանում, տղա ջան:

ՏՂԱՆ – Այդպիսի հարց չեն տա, մամ, դու ինձնից լավ գիտես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Ես ոչինչ էլ չգիտեմ, չեմ հասկանում, թե ինչու ես փախցնում քո երջանկությունը: Քեզ գրեթե ոչ մի հոգս չի մնում, Մարիամը ցույց տվեց Սուսանի օժիտը: Մինչև ձեր կյանքի վերջը բավական է, գիտե՞ս: Հագուստի ու սպիտակեղենի մասին չեմ խոսում: Մի բնակարանի լրիվ կահույքը, ռումինական, ներքնահարկում արկղներով դրված է: Մարիամը նույնիսկ ակնարկեց, թե մի ավտոմեքենայի փող էլ Սուսանի անունով խնայդրամարկղ է գցված: Էլ ի՞նչ ես ուզում, վայելիր, էլի...

ՏՂԱՆ -Դե որ այդքան բան ունի Սուսանը, ինչո՞ւ է ուզում ամուսնանալ... Ամուսնանալուց հետո ինչի՞ վրա պիտի ուրախանա...

ՄԱՅՐԸ - Հիմար-հիմար խոսում ես, էլի...

ՏՂԱՆ - Վերջացնենք, մամ, հա՞, էլ մի խոսիր, հա՞, մամ ջան...

ՄԱՅՐԸ - Ինչո՞ւ, ախր ինչո՞ւ վերջացնենք, մարդ էլ իր բախտից փախչի...

ՏՂԱՆ - Ես նրան չեմ սիրում, մամ... մի՞թե շատ բարդ բան է իմ ասածը:

ՄԱՅՐԸ - Ի՞նչ սեր, է՛, ինչ սեր, չես սիրում, կսիրես: Սիրելու համար ժամանակ է պետք... Կարծում ես ես ու քո հայրը սիրո՞ւմ էինք իրար... Մի կարգին չէինք էլ ճանաչում...

ՏՂԱՆ - Սմբատն ինձ զանգ չի՞ տվել:

ՄԱՅՐԸ - Բավական է, խոսքը կտուր մի գցիր: Ասա տեսնեմ ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ չես ուզում ամուսնանալ... Տարիքդ անցնում է, տղաս, քանի գնա, դժվարանալու է: Ինչո՞ւ չես ուզում ամուսնանալ: Մենք էլ մեղք ենք, չէ, մեծացել եմ, շատ բան չեմ հասցնում, ինձ էլ օգնական է պետք, ինձ էլ նայող է պետք...

ՏՂԱՆ - Հա, հիմիկվա հարսներն էլ հո նայող չե՛ն...

ՄԱՅՐԸ - Սուսանը...

ՏՂԱՆ - Մամ...

ՄԱՅՐԸ - Եվ վերջապես մենք էլ ենք ուզում թոռ ունենալ... ամբողջ օրը նստում ենք կկուների պես... երեխայի ձայն ենք ուզում... Լսո՞ւմ եմ: Իսկ դու չես էլ մտածում ամուսնանալու մասին: Ժամանակն է, տղաս, ժամանակն է...

ՏՂԱՆ - Ինչ ճիշտ է, ճիշտ է...

ՄԱՅՐԸ - Ասում ես ու տեղից չես շարժվում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ – Չէ, կարծես թե սկսել եմ շարժվել…

ՄԱՅՐԸ - Ճի՞շտ ես խոսում, փառք աստծո, ուրեմն կիրակի օրը հայրիկիդ հետ գնում ենք Սուսանենց տուն… Հենց այս կիրակի… Հաստատ պիտի շտապենք, քանի դեռ միտքդ չես փոխել…

ՏՂԱՆ - Այն աղջիկը, որի մասին ուզում եմ ասել, ուրիշ անուն ունի, մամ ջան: Նրա անունը Մարինե է:

ՄԱՅՐԸ - Մարինե՞… ո՞վ է նա, ես տեսե՞լ եմ…

ՏՂԱՆ - Չեմ կարծում: Մեր լաբորատորիայում է աշխատում…

ՄԱՅՐԸ - Լաբորատորիայո՞ւմ… ի՞նչ է, կրթություն չունի՞…

ՏՂԱՆ - Ունի: Քիմիական տեխնիկումն է ավարտել:

ՄԱՅՐԸ - Տեխնիկո՞ւմ… հիմա դա էլ կրթություն է համարվում, հա՞… Իսկ ծնողներն ո՞վ են:

ՏՂԱՆ - Հայր չունի, իսկ մայրը ուսուցչուհի է՝ որքան գիտեմ…

ՄԱՅՐԸ - Որքա՛ն գիտեմ… Իհարկե, ծնողները ձեր ինչի՞ն են պետք… իսկ հայրն ինչո՞ւ է բաժանվել:

ՏՂԱՆ - Ի՞նչ իմանամ… շատ վաղուց է եղել… հիմա նա իր ընտանիքն ունի:

ՄԱՅՐԸ - Իսկ քույր, եղբայր ունի՞…

ՏՂԱՆ - Երկու քույր ունի…

ՍԱՅՐԸ - Ուրեմն երևի հազիվ են ծայրը ծայրին հասցնում…

ՏՂԱՆ - Հա, մամ ջան, դժվար են ապրում, պատկերացնո՞ւմ ես, ամբողջ ձմեռ խեղճ աղջիկը բաճկոն էր հագնում, վերարկու չուներ… ախր ինչ ստանում է, տուն է տանում, փոքր են քույրերը…

ՄԱՅՐԸ - Դե որտեղից ունենան…

ՏՂԱՆ - Իհարկե…

ՄԱՅՐԸ - Ես արդեն պատկերացնում եմ նրա օժիտը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ - Չարժե պատկերացնել, մամ ջան, նրան որտեղի՞ց օժիտ... Մի անգամ խոսք ընկավ այդ մասին, Մարինեն կախեց գլուխը, լաց եղավ: Իսկ ես նրան ասացի՝ գլուխդ բարձր պահիր, Մարինե ջան, ես հենց այդպես, ինչպես կաս, կտանեմ քեզ... Եթե գաս, կբռնեմ ձեռքդ ու կտանեմ... Դու չգիտես, թե ես ինչ ծնողներ ունեմ... Նրանք այնքան բարի են ու բարձր քաղքենիական...

ՄԱՅՐԸ - Այսինքն հիմար են, էլի...

ՏՂԱՆ - Ինչպես թե... ի՜նչ ես ասում, մամ ջան…մեր ինչի՞ն է պետք նրա օժիտը... Մենք ամեն ինչ էլ ունենք..,

ՄԱՅՐԸ - Ի՞նչ ունենք, ի՞նչ ունենք... Դու մոռանում ես, որ մի եղբայր էլ ունես... Վա՞տ կլիներ, հա, որ այդ աղջիկը ապահովված տնից լիներ,հարուստ օժիտ ունենար...

ՏՂԱՆ - Դե գուցե և լավ կլիներ, բայց որ չունեն…

ՄԱՅՐԸ - /Զայրացած/ Իսկ Սուսանը ունի, ամեն ինչ... Կարծում ես, թե այդքան հե՞շտ է տուն-տեղ դնելը...

ՏՂԱՆ - Բայց չէ՞ որ դու էլ ոչինչ չես ունեցել, մամ, դու չէի՞ր ասում, թե հագիդ շորով ես ամուսնացել... Եվ թե ամեն ինչ հայրիկն ու դու միասին եք ձեռք բերել և ամեն մի գնում մեծ ուրախություն է եղել ձեզ համար: Մենք էլ կապրենք, կաշխատենք, կունենանք ինչ պետք է...

ՄԱՅՐԸ - Բայց եթե ուզենաս, հենց հիմա կունենաս ամեն ինչ, հասկանո՞ւմ ես, առանց տառապանքի, առանց հաշվելու կոպեկները... Ամեն ինչ, Սուսանի հայրը նույնիսկ կոոպերատիվ է գրվել աղջկա համար...

ՏՂԱՆ - Ես Մարինեին եմ սիրում, մայրիկ…

ՄԱՅՐԸ – Տե՜ր աստված, ի՜նչ դժբախտություն է, բարձրագույն կրթությամբ, հարուստ օժիտով, լույսի նման աղջիկը մի տկլոր մեխանիկի հետ ամուսնացավ, գնաց, հիմա էլ սա է մի աղքատի բերում: Ամեն վատ բան հենց մեր գլխին է կոտրվելու: Սա ի՞նչ պատուհաս է... Ախր այդ աղջիկը քո ինչին է պետք, նրա ի՞նչն ես հավանել, այ բալա, կույր ես, կույր, իհարկե կխաբի, կմտնի պատրաստի տունդ…

ՏՂԱՆ - Ես դեռ նրան պետք է համոզեմ, մամ, ես աշխարհի ամենաերջանիկ մարդը կդառնամ, եթե նա համաձայնի մտնել իմ տուն... Դու նրան չես ճանաչում, տեսնես թե չէ, կսիրես նրան, անհնարին է նրան չսիրելը, իսկ գիտե՞ս նրան ինչու եմ սիրում, նա քեզ նման է, մամ, իբրև թե բարկանում է, բայց սիրտը մաքուր է ու բարի… քեզ նման... քեզ նման...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/ Գրկում է մորը, սկսում է պտտել/:

ՄԱՅՐԸ – Բաց թող, շունչս կտրվեց, բաց թող ասում եմ, խելագար, կույր, ինձ համար հո չեմ ասում, քեզ համար եմ ասում… հիմար, հիմար, անմիտ տղա… նրա օժիտն իմ ինչին է պետք: Ես ուզում եմ, որ դո՛ւ երջանիկ լինես…

ՏՂԱՆ - Ուրեմն թույլ տուր, որ երջանիկ լինեմ, մամ... Ախր ես ի՞նչ անեմ, որ դուք ինձ սխալ եք դաստիարակել: Հայրիկը չէ՞ր ասում, թե կնոջ բերածը դռնից կախված զանգ է: Ներս մտնելիս էլ, դուրս գալիս էլ դիպչելու է գլխիդ ու զնգա:

Ես զանգ չեմ ուզում, մամ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԽԻՂՃԸ

Բենզակայան: Բենզինաբաշխիչ սարքի մոտ նստած է Դավիթը: Մոտենում է Արմենը:

ԱՐՄԵՆ - Ներեցեք, բենզին է պետք:

ԴԱՎԻԹ - /Առանց նայելու/ Բենզին չունեմ:

ԱՐՄԵՆ - Մի քիչ, գիտեք, գոնե հինգ լիտր, մինչև գյուղ հասնեմ:

ԴԱՎԻԹ - Որ բենզին չունեմ, բենզի՞ն դառնամ: Չկա՛:

ԱՐՄԵՆ - Բա ի՞նչ անեմ:

ԴԱՎԻԹ - Բա ե՞ս ինչ անեմ... /Զայրացած նայում է ու ճանաչում/ Արմե՞ն...

ԱՐՄԵՆ - Հա, իսկ դո՞ւ... Դավի՞թ...

ԴԱՎԻԹ - Ես եմ, ես եմ, ախպեր...

ԱՐՄԵՆ - Ո՞նց ես, ո՞նց, Դավիթ...

ԴԱՎԻԹ - Լավ եմ, ախպեր, ավտոդ մոտ բեր...

ԱՐՄԵՆ - Բերեմ ի՞նչ անեմ, երբ բենզին չկա…

ԴԱՎԻԹ - Ուրեմն քեզ համար է՞լ չկա... մի քանի լիտր կտամ, հո չե՞մ թողնելու իմ մանկության ընկերը ճանապարհին մնա:

ԱՐՄԵՆ - Վայ, շատ շնորհակալություն, Դավիթ ջան:

ԴԱՎԻԹ - Ուրեմն քո կարծիքով խիղճներս լրիվ կորցրե՞լ ենք: Չէ, ախպեր ջան, չէ: Բայց դե ինչ անես, որ լավ չեն մատակարարում: Ասա, ի՞նչ անեմ: Քո կարծիքով հե՞շտ է: Հավատա, Արմեն ջան, ամեն անգամ, որ էդ սև շլանգը փաթաթում եմ ապարատի վրա, ոնց որ սև օձն ինձ վրա փաթաթեմ:

ԱՐՄԵՆ - Շա՛տ պատկերավոր էր:

ԴԱՎԻԹ - Ասում ես ու թողնո՞ւմ: Բա մարդ էնքան չունենա՞, որ բոլորին ասի. եկեք, լցրեք, հասեք ձեր գործին: Ինքն էլ պլան կատարի, փոխանցիկ դրոշ ստանա: Է՛հ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՐՄԵՆ - Դժվար է, իհարկե...

ԴԱՎԻԹ - Ասում ես ու թողնո՞ւմ... էն օրն էլի էսպես սև օձը փաթաթել նստել եմ, մեկ էլ դրռռ, մի ավտո եկավ կանգնեց: Վարորդն եկել է, թե հոգուդ մեռնեմ, մի ճար արա, բենզին տուր: Բենզին չկա, ասում եմ: Շա՛տ նեղն եմ, ասում է, զոքանչս հիվանդ է, քաղաք եմ տանում: Ճամփին որ մի բան պատահեց, ընտանիքս կքայքայվի: Այ մարդ, ասում եմ, որ բենզին չունեմ, ի՞նչ անեմ: Բենզի՞ն դառնամ: Չի գնում, վիզը ծռել կանգնել է: Սիրտս կտրատվում է, ես էլ մարդ եմ, չէ՞, խիղճ ունեմ: Բայց ի՞նչ անեմ, որ բենզին չունեմ: Ախպեր ջան, ասում է, տասը մանեթ փող տամ, տասը լիտր բենզին տուր: Ու ձեռքը կոկորդին է տանում: Քիչ էր մնում լաց լինեի, խիղճս էնպես էր տանջում: Տնքացի, փնչացի, վերջը ձեռքս թափ տվեցի, վերցրի տասնոցն ու հինգ լիտր բենզին տվեցի: Ի՞նչ անես, հո չես թողնելու մարդու զոքանչը կորչի: Մենք էլ զոքանչ ունենք, չէ՞...

ԱՐՄԵՆ - Ապրես, ապրես, Դավիթ ջան, դու փոքր ժամանակ էլ խղճով մարդ էիր:

ԴԱՎԻԹ – Է՛, հիմա խղճով մարդու դար չի, չէ... Սուտ է, իմ հացի մեջ աղ չկա: Էն օրը մեր տղերքից մեկը եկել էր, թե՝ Դավիթ ջան, մի ճար արա, բենզին տուր, գնում եմ Երևան հաստատվելու: Ցույց եմ տալիս շլանգը, ասում եմ բենզին չկա, աղաչում-պաղատում է, թե եթե ժամը իննին կոլեգիայի նիստում չլինեմ, ուրիշին կհաստատեն, թեկնածուներ շատ կան: Ասացի՝ հանգիստ եղիր, հիմա ոչ մի տեղ բենզին չկա: Թեկնածուները տեղ չեն հասնի: Վերջը էնքան խնդրեց, որ չդիմացա, քառասուն ռուբլի վերցրի ու բակը բերնեբերան լցրեցի: Քիչ էր մնում լաց լիներ: Գնաց... Դու ասա հետո՞ ինչ եղավ:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ եղավ...

ԴԱՎԻԹ – Ի՞նչ պիտի լիներ: Գնաց հաստատվեց ու հիմա իմ հարցը դրել է, որ աշխատանքից հեռացնեն: Ասում է մի բակի մեջ քսան ռուբլի ավել ես վերցրել: Բա՞: Ոչ խիղճ ունեն, ոչ ամոթ: Դե արի էդպիսի մարդկանց լավություն արա: Մինչև մնացի՝ քայքայվեցի:

ԱՐՄԵՆ - Հա՛... / մեկնում է հինգ ռուբլիանոց/:

ԴԱՎԻԹ - Էդ ի՞նչ ես անում, կնեղանամ... մանկության ընկերներ ենք... է, չեղավ, չէ, մի ռուբլու բենզին եմ լցրել… Հիմա մանր ո՞րտեղից ճարեմ... ոչ առևտուր կա, ոչ էլ... Դե լավ... որ քայքայված չլինեինք...

Ախր դե ասում ես, էլի... բա մարդ խիղճ չունենա՞ր… Թյու, ինչ եմ ասում, է՛... բա էնքան բենզին չունենա՞ր, որ բոլորին ասեր, եկեք, լցրեք, հասեք ձեր գործին: Ես էլ պլան կատարեի, փոխանցիկ դրոշ ստանայի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Է՛h…

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Սենյակ: Տղան գիրք է կարդում: Աղջիկը արդուկում է ու երգում՝ «Ճամփեն պիտի չիմանա, թե ուր կերթամ ես»: Մայրը հարդարվում է հայելու առաջ: Ներս է մտնում հայրը՝ նա խստադեմ է, անժպիտ: Բոլորը թողնում են իրենց գործը: Վեր են կենում:

ՀԱՅՐԸ - Նստեք, նստեք:

ՈՐԴԻՆ - Հայրիկ ջան, վերջացրի:

ՀԱՅՐԸ - Չե՞ս ստում:

ՈՐԴԻՆ - Եղա՞վ, հայրիկ ջան:

ՀԱՅՐԸ - Եղավ... Մի օրում ինչպե՞ս վերջացրիր:

ՄԱՅՐԸ - Դու գիտես, որ քո ասածն օրենք է: Դա էլ հո իմ ասածը չէ: Ամբողջ գիշեր սենյակում լույսը վառվում էր: Քեզանից այնպես ենք վախենում...

ԱՂՋԻԿԸ - Մամ, ինչո՞ւ, քեզանից չենք վախենո՞ւմ:

ՄԱՅՐԸ – Ո՛չ այնպես, ինչպես Վարդանից:

ՀԱՅՐԸ - /Խիստ/ Տունը մի գլուխ պետք է ունենա:

ՄԱՅՐԸ - Բան չեմ ասում, Վարդան ջան, բա ի՞նչ:

ՈՐԴԻՆ - Հենց նոր վերջացրի:

ՀԱՅՐԸ - Տուր տեսնեմ: /Վերցնում է գիրքը, շուռ ու մուռ է տալիս/: Որ ասեմ պատմիր՝ կպատմե՞ս:

ՈՐԴԻՆ - Անգիր, հայրիկ ջան... Ուզո՞ւմ ես պատմեմ:

ՀԱՅՐԸ - Ժամանակ չունեմ: /Գրպանից թղթադրամ է հանում/ Վերցրու:

ՈՐԴԻՆ - Շնորհակալություն, հայրիկ ջան... Վա՞յ, երեքնոց է:

ՀԱՅՐԸ - Իսկ գի՞րքդ ինչքան է: Բրոշյուրներ ես կարդում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՐԴԻՆ - Չէ, ուղղակի որ այդպես ասացիր...

ՀԱՅՐԸ - Ես ասել եմ, որ հինգ ռուբլի կտամ յուրաքանչյուր կարդացածդ գրքի համար: Եվ միշտ էլ տվել եմ: Իսկ սա գի՞րք է:

ՈՐԴԻՆ - Հարյուր քսանչորս էջ է:

ՀԱՅՐԸ - Առնտուր չենք անում: Մեծ գրքեր կարդա... հինգ ռուբլի ստացիր:

ՈՐԴԻՆ - Լավ, հայրիկ ջան...

ՄԱՅՐԸ – Ի՜նչ լավ մտածեցիր այդ ձևը, հիմա ամբողջ օրը կարդում է, Վարդան ջան, ամբողջ օրը... էլ ոչ հիպի ընկերներ կան, ոչ ցատկոտում է, ոչ էլ մագնիտոֆոնն է միացնում, ոչ ջինս է հագնում...

ՈՐԴԻՆ - Պահ, ջինսն ի՞նչ է, որ, չէ՞, հայրիկ ջան...

ՀԱՅՐԸ - Աշխատողին պետք է շահագրգռել, Մանիկ, նյութական շահագրգռվածությունը հզոր խթան է: Կառավարությունն էլ է այդպես վարվում: Դե մենք էլ սովորում ենք: Բայց դարձյալ քիչ է կարդում Արմենը, քիչ...

ՈՐԴԻՆ - Ինչո՞ւ, հայրիկ ջան, այս ամիս արդեն ութսուն ռուբլու կարդացել եմ: Իսկ Մարինեն հիսուն էլ չի ստացել:

ՄԱՅՐԸ - Մարինեին ձեր հայրը ուրիշ բանի համար է շահագրգռում: Որ պարկեշտ, խոնարհ աղջիկ լինի:

ԱՂՋԻԿԸ - Բա ես խոնարհ չե՞մ, պապ:

ՀԱՅՐԸ - Եթե ես երեխաների դաստիարակության գործը իմ ձեռքը չվերցնեի, Մանիկ, չգիտեմ թե ինչ կլիներ...

ՄԱՅՐԸ - Ճիշտ է, Վարդան ջան, ես էլ չգիտեմ, թե ինչ կլիներ...

ՀԱՅՐԸ - Այ, նայում եմ, հիանալի է՝ մազերը փաթաթված են, համեստ է, զուսպ, շրջազգեստը երկար, շրթունքները ներկված չեն...

ԱՂՋԻԿԸ - Իսկ ես ե՞րբ եմ ներկել, որ...

ՀԱՅՐԸ - Բռունցքս թե վրադ չլիներ, կներկեիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Իհարկե, կներկեր...

ՀԱՅՐԸ - Դե դու էլ ի՞նչ ես թութակի նման կրկնում:

ՄԱՅՐԸ - Ներիր, Վարդան ջան,այդպես ստացվեց...

ՀԱՅՐԸ - Ուրևմն զգուշացնում եմ, մենք գնում ենք հյուր... խելոք, հանգիստ, համեստ... պա՞րզ է:

ՈՐԴԻՆ, ԱՂՋԻԿԸ - Իհարկե, հայրիկ ջան:

ՈՐԴԻՆ - Ես մի մեծ գիրք կսկսեմ... Այնպես եմ ուզում կարդալ...

ԱՂՋԻԿԸ - Ես էլ արդուկը կվերջացնեմ ու մի գիրք էլ ես կկարդամ:

ՀԱՅՐԸ - Քո կարդալը պարտադիր չէ... Մի ուրիշ, աղջկան վայել գործ գտիր:

ԱՂՋԻԿԸ - Լավ, հայրիկ ջան...

ՀԱՅՐԸ - Դե գնացինք...

ՄԱՅՐԸ - Գնացինք, Վարդան ջան...

ՀԱՅՐԸ - Հը, հիմա ամեն ինչ կարգին է, չէ՞...

ՄԱՅՐԸ - Կարգինն էլ խո՞սք է, զարմանալի բան է...

ՀԱՅՐԸ - Սուտ բան է, մինչև չվախենան, չեն հարգի... հա, հա, սուտ բան է:

/Դուրս են գնում: Դուրս են գալիս, թե չէ, զավակները կերպարանափոխվում են: «Ուռա՛, կեցցե ազատությունը» ճչալով վեր են թռչում: Տղան հագնում է մայկան ու ջինսը, աղջիկը շտապ-շտապ ծալում կարճացնում է զգեստը և թափում մազերը, ներկում է շուրթերն ու աչքերը: Մագնիտոֆոնը միացված է: Այդ ամենը կատարվում է խելագար ռիթմի տակ/:

ԱՂՋԻԿԸ– Զանգահարիր, շուտ...

ՈՐԴԻՆ - Հիմա /հավաքում է համարը/ Սամ, թռեք... /հավաքում է համարը/ Կառ, թռեք... հետներդ խմելու բան բերեք... Դե դավայ, դավայ...

ԱՂՋԻԿԸ - / Նայելով հայելուն/ Իսկ այսպես ո՞նց է, հայրիկ ջան, տեսնում ես. զուսպ, համեստ, պարկեշտ... ճիշտ չէ՞, հայրիկ ջան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՐԴԻՆ - Պահ, Մար... էքստրա...

/Դուռը շրխկոցով բացվում է, ճիչ-աղաղակով ներս են ընկնում խայտաբղետ հագնված տղաներ ու աղջիկներ, կիթառով, մագնիտոֆոնով՝ ինչ-որ շշեր ձեռքերին: Խմում են շշերից՝ իրար ձեռքից խլելով: Ու սկսվում է վայրենի, խենթ, փոթորկոտ մի պար՝ գալարումներով: Շշերը դնում են սեղանին: Սեղանի ոտքը կարճ է, օրորվում է: Որդին ձեռքի գիրքը դնում է սեղանի ոտքի տակ):

ՈՐԴԻՆ - Հինգ ռուբլիս՝ սեղանի տակ: /Տնազ է անում/ Իսկ սա գի՞րք է, սա բրոշյուր է... իբր թե կարդում եմ...

ԱՂՋԻԿԸ – Կեցցե՛ ազատությունը... Կեցցե՛ ազատությունը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԸ - Բացակա՞ չկա՞:

ՄԱՅՐԸ - Բոլորը ներկա են, Մացակ:

ՀԱՅՐԸ - Հարգելի հարազատներ, բարեկամներ, ո՞վ չգիտի, թե ինչ է բարեկամը...

ՔԵՌԻ - Լավ բարեկամը լավ հարևանից լավ է...

ԿԻՆԸ - Հակառակը, հակառակը...

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Նայած հարևան և նայած բարեկամ...

ՀԱՅՐԸ - Վերջ տվեք, ես ձեզ բանավեճի չեմ հրավիրել «Ո՞րն է իսկական բարեկամությունը» թեմայով: Միայն ուզում էի ասել, որ բարեկամը հիմնականում նեղ օրն է պետք:

ՄԱՅՐԸ - Նեղն ենք, նեղը...

ԿԻՆԸ - /Քեռուն/ Իհարկե, լեն օրը ուրիշներին կկանչեն...

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Բայց ի՞նչ է պատահել, եղբա՛յր…

ՀԱՅՐԸ - Ուզում եմ ձեզ հետ խոսել մեր Վարդան որդու մասին:

ԿԻՆԸ - Խուլիգանությո՞ւն, ամա՛ն.,.

ՔԵՌԻ - Կեղտոտ շրջապա՞տ է ընկել... Որևէ հիմար բա՞ն է արել...

ՀԱՅՐԸ - Դպրոցն է ավարտել, և ինստիտուտի հարց կա…

ՀՈՐԵՂԲԱՅՐ – Հա՛... իսկ որտե՞ղ է ուզում ընդունվել:

ՔԵՌԻՆ - Ի՞նչ չ հակումներ ունի...

ՀԱՅՐԸ - Սրճարան, աղջիկներ, ցատկոտումներ, ֆուտբոլ…

ՄԱՅՐԸ - Հա, դու էլ հարազատ որդուդ սևացրու, սևացրու...

ՀԱՅՐԸ - Բա ի՞նչ ասեմ, հակումների մասին է հարցնում… եղբայրդ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՔԵՌԻՆ - Ես այլ հակումները նկատի ունեմ, Մացակ... որտե՞ղ է ուզում ընդունվել...

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Հիմա ինստիտուտ ընդունվելու համար հակումները չեն հարցնում… հնարավորություններն են հարցնում:

ՀԱՅՐԸ - Ահա, ապրի՛ եղբայրս...

ՔԵՌԻՆ - Բայց ինքը որևէ տեղ ուզո՞ւմ է ընդունվել…

ՀԱՅՐԸ - Իսկ նրան հարցնողն ո՞վ է: Նա շա՞տ է հասկանում: Կյանքում որևէ ինքնուրույն բան արած կա՞: Ինչ որ մեր ընտանեկան խորհուրդը որոշի, այն էլ կանի...

ԿԻՆԸ - Ես առաջարկում եմ բժշկական:

ՄԱՅՐԸ - Բժշկակա՞ն... Նա հենց որ արյուն է տեսնում, վատ է զգում:

ԿԻՆԸ - Իսկ այդ ո՞վ է արյուն տեսնելով լավ զգում…

ՄԱՅՐԸ- Իսկ այնտեղ մարդ ունե՞ք: Ձեր հարևանը կօգնի՞ ... բժշկականում է աշխատում, չէ՞ …

ԿԻՆԸ - Պրոֆեսոր Սիսոյա՞նը… անցյալ տարի նրա աղջկան կտրեցին:

ՄԱՅՐԸ - Ուրեմն ինստիտուտում մարդ չի ունեցել:

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Դե էլ ինչ եք խոսում, բժշկականի վրա խաչ քաշեք:

ՀԱՅՐԸ - Քաշեցինք... Գուցե պոլիտեխնի՞կ...

ՄԱՅՐԸ - Մեղք է Վարդանս, Մացակ ջան... դրա վրա էլ խաչ քաշիր...

ՀԱՅՐԸ - Ինչո՞ւ… որովհետև ընդունվելը դժվա՞ր է...

ՄԱՅՐԸ - Չէ, ասում են ավարտելուց հետո ավելի դժվար է լինում...

ՀԱՅՐԸ - Ախր սանատորիական մի ընկեր ունեմ… նրանց ճաշարանի վարիչն է:

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Միհրա՞նը... հանել են… նրա վրա էլ խաչ քաշիր...

ՀԱՅՐԸ – Քաշեցինք..

ՔԵՌԻ - Համալսարանը...

ԿԻՆԸ - Իսկ ո՞ր ֆակուլտետը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Իսկ ո՞ր ֆակուլտետում մարդ ունենք…

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Լեզվագրականի դեկանն իմ ընկերն է, բայց չի լինի…

ՀԱՅՐԸ - Այսինքն, ինչո՞ւ չի լինի:

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Չի լինի, էլի… անցյալ տարի ինձնից երեք հատ թիթեղ ուզեց տանիքը վերանորոգելու համար… չտվեցի…

ՀԱՅՐԸ - Է, հիմա տանք, տանիքը չէ, իրեն էլ թիթեղապատենք… ամբողջ ընտանիքն էլ, հարևաններին էլ…

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Չի լինի; երեսս չի բռնում, արդեն ուշ է…

ՄԱՅՐԸ - / Մեկուսի/ Որ իր տղան լիներ, երեսը կբռներ…

ՀԱՅՐԸ - Ուրի՞շ… դու ծանոթ չունե՞ս, Սաքո…

ՔԵՌԻ - Ունեմ… Անասնաբուծական-անասնաբուժականում…

ՄԱՅՐԸ - Ինչ, շրջա՞ն պիտի գնա…

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Է, հարս ջան, հիմա ո՞վ է շրջան գնում… դիպլոմ է, էլի…

ԿԻՆԸ - Մարգո՞ն, Սաքո…

ՔԵՌԻ - Հա…

ՀԱՅՐԸ - Մարգոն ո՞վ է…

ՔԵՌԻ - Կաթի տեխնոլոգիայի բաժնի…

ՄԱՅՐԸ - Խաչ քաշիր, Մացակ, Վարդանը կաթի նկատմամբ ալերգիա ունի…

ԿԻՆԸ – Ամա՛ն, մեր էս խանութի կաթի նկաամամբ ո՞վ ալերգիա չունի…

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Իսկ դա կա՞թ է, որ ալերգիա ունենան,,.

ՀԱՅՐԸ - Վերջ տվեք, բարեկամներ, կաթի որակը բարձրացնելու համար չենք հավաքվել. դառնանք Վարդանի խնդրին:

ԿԻՆԸ - Էլ ինստիտուտ մնա՞ց, բոլորի վրա խաչ քաշեցիք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Եղբայր, ինստիտուտներն ինչո՞ւ եք հաշվում, եկեք մեր ազդեցիկ բարեկամներին ու ծանոթներին հաշվենք: Սողոյանը կօգնի՞...

ՀԱՅՐԸ - Խաչ քաշեք: Էս տարի նրա աղջիկն էլ է ընդունվում:

ՔԵՌԻ - Տիկին Սուսանը... նրա տղան մինիստրությունում է:

ԿԻՆԸ - Աման, հիմա որ տղան է մորը լսում...

ՀԱՅՐԸ - Խաչ քաշեք:

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Չէ, դեռ սպասեք, թող դա մնա պահեստում... իսկ ի՞նչ կասեք նրա մասին /ցույց է տալիս առաստաղը/, նրա…

ՀԱՅՐԸ - Նրա՞...

ՔԵՌԻ - Կանի՞...

ԿԻՆԸ - Որ ամուր բռնեք, կանի...

ՔԵՌԻ - Շատ թանկ կնստի…

ԿԻՆԸ - Ի՞նչ առումով...

ՔԵՌԻ - Արմաղանում ամառանոց է սարքում՝ դե արի քար ճարիր, փայտ ճարիր, ավազ, ցեմենտ...

ՀԱՅՐԸ - Դա՞ ինչ խոսակցություն է… բա բարեկամությունն էլ ո՞ր օրվա համար է: Տրեստի կառավարիչ չե՞ս: Չէ՞ որ մարդը մարդու համար ընկեր է, եղբայր է, հարազատ է, հո գա՞յլ չի...

ՔԵՌԻ - Դե ասա տրեստս քանդվեց, էլի...

ՀԱՅՐԸ - Չի քանդվի, դու նրան շինանյութ կտաս, ես էլ քեզ խողովակներ բաց կթողնեմ...

ՔԵՌԻ - Բա ասում էիր չունե՞մ...

ՀԱՅՐԸ - Դե մի բան կանենք... երեխայի ապագայի հարց է: Մի ամբողջ սիստեմ է, Սաքո: Միշտ պիտի իմանաս, թե ում ինչ է պետք: Ուրիշ կերպ չի լինի: Ես Մամյանին էքսկավատոր պիտի տամ, որ նա կարագ բաց թողնի Միրզոյանին: Միրզոյանը հանքային պարարտանյութ ունի, Շատվորյանին կտա, Շատվորյանը սառնարաններ կտրամադրի Ատոմյանին, Ատոմյանից խողովակներ կվերցնեմ, կտամ քեզ, դու էլ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՔԵՌԻ - Լավ, հասկացա, բայց Վարդանը, Վարդանը ի՞նչ է ասում...

ՀԱՅՐԸ - Վարդանն ի՞նչ կարևոր է, տեսնենք նա ինչ է ասում…

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Բայց ես գիտեմ, որ նա միայն իրավաբանականում ուժ ունի...

ՀԱՅՐԸ - Է, թող դառնա իրավաբան, ի՞նչ կա, դա մասնագիտություն չի՞...

ՔԵՌԻ - Առաջ մի բան չէր, բայց հիմա շատ լավ մասնագիտություն է...

ՀԱՅՐԸ - Ուրեմն որոշեցի՞նք...

ԲՈԼՈՐԸ - Որոշեցինք...

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Եվ այնուամենայնիվ Վարդանի կարծիքը... Ահա և ինքը:

/ Ներս է մտնում ջահել մի տղա՝ ֆուտբոլի գնդակը ձեռքին/:

ՀԱՅՐԸ – Ահա՛, դուք էլ ուզում եք նրա կարծիքը հարցնել: Մայրը որ հաց ու պանիր է դնում առաջը, էլի հարցնում է, թե մամ, հացն էլ ուտեմ, պանիրն է՞լ... Իսկ դուք ասում եք ինքնուրույն որոշի...

ՏՂԱՆ - Բարև ձեզ... ի՞նչ է պատահել, հայրիկ...

ՀԱՅՐԸ - Այսպես, Վարդան ջան, որոշեցինք, որ պետք է դիմենք իրավաբանական...

ՏՂԱՆ - Դո՞ւք, այդ տարիքում կընդունե՞ն որ...

ՀԱՅՐԸ - Խնդրեմ... քեզ համար եմ ասում, ա՛յ տղա, քեզ համար...

ՏՂԱՆ - Ե՞ս... ես արդեն գործերս ֆիզկուլտինստիտուտ եմ տվել, հայրիկ...

ՄԱՅՐԸ - Վա՞յ…

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Պարզ երևում է, որ տղան ինքնուրույնություն չունի...

ՀԱՅՐԸ - Հը՞...

/Ընդհանուր ծիծաղ/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՏ ԵՐԱԶ

Սանդղահարթակ: Դուռ: Վրան գրված է ռուսերեն. Ս. Ն. Վարդանյան: Լսվում է շոգեքարշի հնքը, այնուհետև երկարատև սուլոց: Գնացքը շարժվել է: Դռանն է մոտենում կողովներով ու կապոցներով ծանրաբեռ տարեց մի մարդ: Նայում է դռանը, կարդում է:

ՀԱՅՐԸ - Սա էր, սա՛, սա պիտի լինի... Աչքերս էլ չեն տեսնում: Հա, իհարկե, «Ս. Ն. Վարդանյան»: Ն.-ն էլ ե՞ս եմ: Չէ՜, դե տունը սա էր, անունն ու ազգանունն էլ համընկնում են, մնում է միայն հոր հարցը: «Ն.»: Բայց ինչո՞ւ «Ն.», երբ ես Մկրտիչ եմ: Ուստա Մկրտիչ: Ախ, հա՜, ախր տղայիս հիմա Սոկրատ Նիկիտիչ են ասում: Մկրտիչը չի բռնում և ուրեմն դրա համար էլ ես դարձել եմ Նիկիտա: Այսինքն, իսկապես չի բռնում, էլի... Սոկրատ Մկրտիչևվիչ... Ողորմի՛ քեզ, այ հեր, անուն ես գտել, էլի…

Մ-կ-ր-տ-չ... / նայում է ժամացույցին/ ժամը ինն է: Քնա՞ծ կլինեն, թե արթնացել են: Գյուղում էս ժամին գործի կեսն արած են լինում: Իսկ սա քաղաք է ախր: Ի՜նչ վատ երազ էր: Որ վեր թռա, դեռ դողում էի… /Ականջ է դնում/ Չէ, ամեն ինչ խաղաղ է, փառք աստծո: Զանգե՞մ, թե անհարմար է: / Զանգում է/ Այսինքն ի՞նչն է անհարմար: Հայրը, որ երկար տարիներ չի տեսել որդուն, հարսին ու թոռներին, վատ երազ է տեսել, անհանգստացել է, կարոտել է և գործը թողած եկել է նրանց տեսնելու: Ինչո՞ւ է անհարմար: / Զանգում է/:

/Լսվում է ոտնաձայն, դռան անցքից նայում են/:

ՈՐԴԻ - / Ձայնը/ Ո՞վ է:

ՀԱՅՐԸ - Հերդ է:

ՈՐԴԻՆ - Ո՞վ:

ՀԱՅՐԸ - /Սրտնեղած/ Ես եմ, Սոկրատ ջան, հերդ եմ: Բաց արա դուռը:

/ Սողնակների, կողպեքների չխկչխկոց, շղթայի զրնգոց: Բացվում է դուռը: Ներսում կանգնած է խռիվ մազերով, շքեղ խալաթով որդին՝ ոտքերին հողաթափեր/:

ՈՐԴԻՆ – Ա՛յ հեր, էս ի՞նչ է պատահել, հրդե՞հ է ընկել, ինչ է:

ՀԱՅՐԸ - Ի՞նչ հրդեհ...

ՈՐԴԻՆ - Բա էդքան երկար զանգ կտա՞ն: Զանգեցիր, մի քիչ սպասիր, էլի, համբերիր, էլի, կբացեն: Դե ներս արի, ի՞նչ ես դռանը կանգնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Բարև,Սոկրատ ջան...

ՈՐԴԻՆ – Կամաց:

ՀԱՅՐԸ - /Նույնպես շշուկով/ Ի՞նչ է պատահել:

ՈՐԴԻՆ - /Գլխով է անում/ Քնած են, ի՞նչ պետք է պատահի:

ՀԱՅՐԸ - Հա: Կարոտել էի, մի եկ պաչեմ, տղա ջան:

ՈՐԴԻՆ - Լվացված չեմ, ա՛յ հեր:

ՀԱՅՐԸ - Բան չկա: Ես քեզ ամեն տեսակ էլ պաչած կլինեմ:

/Գրկում է որդուն, համբուրում է/:

Հա, մի քիչ մոռ եմ բերել, մի քիչ մոշ եմ բերել, մի քիչ հաղարճ, դե մրգից, բանից... / վերցնում է կողովները, ուզում է տուն մտնել/:

ՈՐԴԻՆ - Պետք չէ, պետք չէ:

ՀԱՅՐԸ - Ի՞նչը պետք չէ:

ՈՐԴԻՆ - Տուն մտնելը...Ասացի քնած են, չէ՞...

ՀԱՅՐԸ - Բա ի՞նչ անեմ:

ՈՐԴԻՆ - Արի խոհանոց: Կամաց, պատերին մի խփիր, նոր ենք վերանորոգել: Ա՛յ, էստեղ նստիր... Դրանք էլ ցած դիր, ի՞նչ կարիք կար հետդ քարշ տալու, շուկան լիքն է...

ՀԱՅՐԸ – Ասացի՝ հարսը կուրախանա: Կոմպոտ է, մուրաբա է...

ՈՐԴԻՆ - Կուրախանար, եթե պատրաստած բերեիր, ա՛յ հեր...Դե լավ, դու նստիր, ես լվացվեմ... / Դուրս է գալիս/:

ՀԱՅՐԸ - Էսպես բաներ... / խռոված է: Էսպես բաներ:

/Իր մտքերի հետ է, պատուհանից դուրս է նայում: Նայում է ծորակին, ուզում է ջուր խմել, ջուրը թափվում է պայթյունով ու աղմուկով: Վախեցած փակում է, նորից նստում, նայում է պատուհանից դուրս: Ներս է գալիս որդին/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՐԴԻՆ - / Իմիջիայլոց/ Է՛, ինչ կա-չկա, ա՛յ հեր, էսքան շուտ ո՞ւր էիր գալիս: Չգիտե՞ս, որ քաղաք տեղ է, ուշ են վեր կենում:

ՀԱՅՐԸ - Է, լավ, ոչ մեկը չի՞ աշխատում, չի՞ սովորում...

ՈՐԴԻՆ - Դե, էստեղ էդպես է… գիշերն ուշ են քնում, ուշ էլ վեր են կենում: Չարժեր, որ էսքան շուտ գայիր, տեսնում ես, չենք էլ կարողանում մի կարգին բարձր խոսել:

ՀԱՅՐԸ - /Խռոված/ Ի՞նչ ես առաջարկում, գնացքը կանգնեցնեի՞…

ՈՐԴԻՆ - Դե լավ, ինչի՞ ես նեղանում, հայրիկ...

ՀԱՅՐԸ - Չեմ նեղանում, տղա ջան, բայց դե ծանր-ծանր կողովները ձեռքիս հո քաղաքում թրև չէի՞ գալու:

ՈՐԴԻՆ - Չէ, դե քեզ համար եմ ասում:

ՀԱՅՐԸ - / Բարձր/ Ո՞նց եք, բալա ջան, հարսը, թոռներս ո՞նց են...

ՈՐԴԻՆ - Կամաց, հայրիկ, ասացի երեխաները քնած են:

ՀԱՅՐԸ – Երեխանե՛ ը... Հիմա վաղուց նրանց երեխա ունենալու ժամանակն է, ամենափոքրը՝ Նազիկս, քսան տարեկան չի՞ ...

ՈՐԴԻՆ - Հա, բայց դե երեխա են, էլի...

ՀԱՅՐԸ - Բան չեմ ասում…

ՈՐԴԻՆ - Դե դու նստիր,ես գնամ հագնվեմ...

ՀԱՅՐԸ - Գնա, բալա, ջան:

/ Նստում, նորից դուրս է նայում պատուհանից՝ տխուր ու մռայլ/:

/Կադրի ետևից/:

Էս ո՞նց պատահեց: Էս ինչի՞ էսպես օտարացան: Լավ, ի՞նչը իմ զավակին էսպես սառեցրեց իր ծնողների նկատմամբ: Դպրո՞ցը, ինստիտո՞ւտը, որ մեզ գրկելով սովորել տվեցինք: Աշխատանքի տե՞ղը: Ախր դրանք օրենքով երեխային պետք է մեծացնեին, կրթեին, մարդ դարձնեին: Ինչի՞ են հակառակն անում: Էսպես ո՞նց կլինի: Ախր դրանք պիտի դաս տային, սովորեցնեին, մարդկանց ավելի մոտեցնեին, ավելի հարազատ դարձնեին իրար: Ինչու՞ է

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

հակառակն ստացվում: Փոխանակ տղաս գոռար ուրախությունից, որ տեսել է հորը, փոխանակ գոռար երեխաների վրա, թե. «վեր կացեք, անպիտաններ, ձեր պապն է եկել» ... ինձ ասում է՝ սուս մնա, կամաց խոսիր ու նստիր խոհանոցում, ա՛յ հեր...

/Աչքերն արցունք է լցվում: Ներս է մտնում որդին/:

ՈՐԴԻՆ - Հը, ի՞նչ ես հոնքերդ կիտել, ա՛յ հեր:

ՀԱՅՐԸ - Վեր չկացա՞ն:

ՈՐԴԻՆ - / Ծիծաղում է/ Էսքան շուտ վեր կացողը չեն: Դեռ ուր ե՛ս... / Դրսից ավտոմեքենայի շչակի ձայն է լսվում/ Ըհը, վարորդս էլ եկավ, ես պետք է գնամ…

ՀԱՅՐԸ - Բա առանց հաց ուտելո՞ւ ես գնում:

ՈՐԴԻՆ - Արդեն սովորել եմ: Քարտուղարուհիս սուրճ է տալիս: Իսկ դու նստիր, ուր որ է վեր կկենան, հաց կուտեք…

ՀԱՅՐԸ - Չէ, բալա ջան, ես կուշտ եմ: Վատ երազ էի տեսել, անհանգիստ էի, ասացի գնամ տեսնեմ...

ՈՐԴԻՆ - Հետաքրքիր մարդ ես, այ հեր, քեզ համար քնում, մեզ համար երազ ես տեսնում…

ՀԱՅՐԸ - Դե ի՞նչ անեմ... Ասում եմ՝ ես էլ գնամ, Սոկրատ…

ՈՐԴԻՆ - Ո՞ւր ես գնում, ուր որ է ինժեներ, ուսուցչուհի թոռներդ կարթնանան, բա չե՞ս ուզում նրանց տեսնել…

ՀԱՅՐԸ - Դե կարևորն էն է, որ ողջ առողջ են… Դե էս բաները մի տեղ դատարկի, քթոցները մեզ պետք են:

ՈՐԴԻՆ - Ախր ի՞նչ կարիք կար, ա՛յ հեր… /դատարկում է ինչ-որ տեղ/ շուկան լիքն է, էլի…

ՀԱՅՐԸ - /Վերցնում է դատարկ քթոցները/ Դե, ես գնացի…

ՈՐԴԻՆ - Արի, արի նստիր ավտոս, ինձ հիմնարկ կտանի, հետո քեզ կայարան:

ՀԱՅՐԸ - Չեմ ուզում: Ես ոտքով կգնամ…

ՈՐԴԻՆ - Ախր ինչո՞ւ,ա՛յ հեր…

ՀԱՅՐԸ– Չեմ ուզում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Դուրս է գալիս/:

ՈՐԴԻՆ - /Մուտքի մեջ/ Ուրեմն գնում ես, էլի...

ՀԱՅՐԸ– Հա…

ՈՐԴԻՆ - /Նայում է ժամացույցին/ Բա չասացիր էլ, թե ինչ երազ էիր տեսել…

ՀԱՅՐԸ - Ինչ որ էր՝ կատարվեց, տղաս... մնաս բարով…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Ո՞ՐՆ Է ՆՐԱ ՄԵՂՔԸ

Սենյակ: Աղջիկը արդուկում է: Եղբայրը գիրք է կարդում՝ բազմոցին պառկած: Ներս է մտնում հայրը: Որդին տեղից չի շարժվում: Աղջիկը նետվում է դեպի հայրը, վերցնում կիսավերարկուն, տանում կախում է:

ՀԱՅՐԸ -Ի՞նչ կա:

ՈՐԴԻՆ - Սովորական, հայրիկ:

ՀԱՅՐԸ - Մայրիկդ ո՞ւր է:

ԱՂՋԻԿԸ - Վարսիկենց տանն է: Մարինեն ամուսնանում է: Մայրիկին խնդրել են տորթ պատրաստել:

/Խոսելու հետ ճաշ է դնում սեղանին/:

ՀԱՅՐԸ - Մարինեն որն է, էն շե՞կը:

ՈՐԴԻՆ - Ուրեմն դու ամառվանից էս կողմ չես տեսել: Հիմա սև է:

ՀԱՅՐԸ - Հա՞: Ուրեմն նա էլ ամուսնացավ...

ՈՐԴԻՆ - Էն էլ ինչ տղա է ճարել: Ոտից գլուխ ջինս է ու կաշի:

ՀԱՅՐԸ - Հը՛մ... Ու մերդ նրա համար տորթ է թխում:

ԱՂՋԻԿԸ - Դե, Վարսիկ մորաքույրը խնդրեց...

ՀԱՅՐԸ - Բա նա քե՛զ համար երբ է տորթ պատրաստելու:

ԱՂՋԻԿԸ - Ո՞վ:

ՀԱՅՐԸ - Ես ի՞նչ իմանամ: Վարսիկը, մերդ, մի ուրիշը...

ՈՐԴԻՆ - /Նստում է/ Ասա է, ասա... զզվեցրեց...

ՀԱՅՐԸ - Վերջը դու պիտի ամուսնանա՞ս, թե չէ, ա՛յ աղջիկ: Թե՞ որոշել ես մինչև կյանքիդ վերջը տանը մնալ: Արդեն մեծ աղջիկ ես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/ Աղջկա ձեռքից ընկնում է արդուկը, վառում է ձեռքը/:

ԱՂՋԻԿԸ - /Ցավից կնճռոտվելով/ Հայրիկ ջան, չխոսենք այդ մասին, էլի…

ՀԱՅՐԸ - Ուրեմն դու պիտի ինձ ասես, թե ինչի մասին խոսեմ ու ինչի մասին չխոսեմ, հա՞…

ՈՐԴԻՆ - Պապան ճիշտ է ասում, էլի…

ԱՂՋԻԿԸ - Դա քեզ չի վերաբերում, Հովիկ…

ՈՐԴԻՆ - Տեսա՞ր ինչ ասաց: Այսինքն՝ ո՞նց թե ինձ չի վերաբերում: Եթե ճիշտը կուզես՝դա հենց ինձ է վերաբերում: Ես ուզում եմ ամուսնանալ, իսկ տանը տեղ չկա: Ճիշտ չէ՞,պապ…

ՀԱՅՐԸ - Բա ի՞նչ է:

ՈՐԴԻՆ - Ասենք թե վաղը մեկին բերեցի, որտե՞ղ պիտի ապրենք: Իսկ դու մի ամբողջ սենյակ ես զբաղեցնում:

ԱՂՋԻԿԸ - Ուրեմն ես մեր տանը տեղ չունե՞մ…

ՈՐԴԻՆ - Մինչև հիմա ունեիր, հերիք է, հո կարմիր լույս չես ինձ համար:

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ, խնդրում եմ, Հովիկին ասա, թող չխառնվի…

ՀԱՅՐԸ - Այսինքն ինչո՞ւ չխառնվի, սխա՞լ է ասում, ամեն ինչ իր ժամանակն ունի… մեծացել, թթվել, ծանր ու մեծ նստել ես տանը:

ԱՂՋԻԿԸ - Ի՞նչ անեմ, ուզում եմ աշխատել…

ՀԱՅՐԸ - Էդ էր պակաս…

ԱՂՋԻԿԸ - Ուզեցի սովորել…

ՀԱՅՐԸ - Ինչքան սովորեցիր, հերիք է…

ԱՂՋԻԿԸ - Բա էլ ինչո՞ւ եք մեղադրում, թե նստել եմ տանը, ի՞նչ անեմ…

ՈՐԴԻՆ - Ի՞նչ անեմ… պապան ասում է, էլի, ամուսնացիր…

ՀԱՅՐԸ - / Որդու հետ միասին/ Ամուսնացիր…

/ Լռություն/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ - Ինչպե՞ս ամուսնանամ:

ՀԱՅՐԸ - Իսկ ուրիշները ո՞նց են ամուսնանում: Բա ձեր դպրոցում մի տղա չկա՞ր, մեր հարևաններից ոչ մեկը չկա՞…

ՈՐԴԻՆ - Նշանն ուզում էր քեզ, ինչի՞ չհամաձանվեցիր...

ԱՂՋԻԿԸ - Երևի պետք է, որ մի քիչ էլ ես ուզեմ...

ՈՐԴԻՆ - Պահ-պահ, փիլիսոփայիս տեսեք, դե սպասիր, որ մի օր ձի նստած մի ասպետ հեռու հեռուներից քո անունը տալով Երևանի Սարի թաղը հասնի...

ԱՂՋԻԿԸ - Հենց նրան էլ սպասում եմ:

ՀԱՅՐԸ - Դե կտրիր ձայնդ: Էն տղան ի՞նչ վատն էր: Ո՞նց էր անունը:

ՈՐԴԻՆ –Մակար:

ՀԱՅՐԸ - Հա: Ի՞նչն էր պակաս: Տուն-տեղ ունի, ավտոմեքենան տակը…

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ ջան, սա ի՞նչ քննարկելու բան է, ախր ամաչում եմ քեզ հետ խոսել այդ մասին: Որ չեմ սիրում, ինչպե՞ս ամուսնանամ...

ՀԱՅՐԸ – Չե՛ս սիրում, չե՛ս սիրում… կամուսնանաս, կսիրես... Չե՞ս տեսնում, մորդ ուշքը գնում է ինձ համար: Հիմա սերս ո՞րն է: Ամուսնությունն էլ լավ գործարքի պես մի բան է դարձել: Շնորհք ունեցար, ամեն ինչ լավ կլինի, շնորհք չունեցար...

ՈՐԴԻՆ - Քեզ նման տանը կմնաս: Պառավա՛ծ օրիորդ...

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ...

ՀԱՅՐԸ - Վերջ տուր...լավ...

/ Պաուզա/:

/ Ներս է մտնում մայրը: Լսել է վերջին խոսքերը/:

ՄԱՅՐԸ - Էլի ի՞նչ եք կպել աղջկան: Պառաված օրիորդ: Քսանմեկ տարեկան պառաված օրիորդներ շատ եք տեսել: Բավական է, էլի…

ՈՐԴԻՆ - Ինչի՞: Վա՞տ է, որ ասում ենք ամուսնացիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Ասելուն էլ ձև կա: Մի բաժակ ջուր տուր, Մանիկ:

/ Աղջիկը դուրս է գնում/: Ի՞նչ եք ուզում աղջկանից, հերիք է, էլի: Ինքը չի՞ ուզում ամուսնանալ, ինչ է... Բայց որ հարմար փեսացու չկա, ի՞նչ անենք:

ՀԱՅՐԸ - Իսկ ինչքա՞ն պետք է սպասենք, որ հարմարը գա...

ՄԱՅՐԸ- Այդքան նեղել չի կարելի, Թորգոմ ջան, մեղք է, որ աչքերը փակ-փակ ամուսնացավ ու դժբախտացավ, լա՞վ կլինի: Առանց այդ էլ ինքը տանջվում է, դուք էլ մի կողմից եք ավելացնում: Աղջիկ է, հանկարծ գլխին մի փորձանք կբերի, կտառապեք ամբողջ կյանքում...

ՈՐԴԻՆ – Պահ-պահ-պահ...

/ Աղջիկը ջուր է բերում, մայրը խմում է մի քիչ/:

ԱՂՋԻԿԸ - / Ինչ որ բան է շշնջում մոր ականջին/:

ՄԱՅՐԸ – Հորդ հարցրու:

/ Աղջիկը նորից է շշնջում/:

Ասում եմ՝ հորդ հարցրու, դա իմ գործը չէ…

ՀԱՅՐԸ - Էդ ի՞նչ է ուզում:

ՄԱՅՐԸ - Այսօր Մանիկի դասընկերուհու ծննդյան օրն է: Հրավիրել է: Մանիկն ուզում է...

ՀԱՅՐԸ - Ոչ մի դեպքում:

ՈՐԴԻՆ - Է՞լ ինչ կուզեր:

ՄԱՅՐԸ - Թող գնա, էլի, Թորգոմ ջան, դրա մեջ ի՞նչ կա...

ՈՐԴԻՆ - Շիշ ենք պտտելո՞ւ, ընկերուհի...

ՄԱՅՐԸ - Դու սուս մնա...

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ ջան, ախր այդպես ոնց կլինի: Քանի անգամ ընկերուհիներս իրենց տուն են հրավիրում, չեք թողնում, ի՞նչ կմտածեն իմ մասին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՅՐԸ - Կմտածեն, որ դու կարգին աղջիկ ես: Կհասկանան, որ օրինավոր աղջիկը կես գիշերին ուրիշի տուն չի գնա: Պատվի հարց կա, նամուսի հարց կա: Կամուսնանաս, հետո ուր ուզում ես գնա, խնդրեմ...

ՈՐԴԻՆ - Իհարկե...

ՄԱՅՐԸ - Հա, ինչքան ես գնացի, այնքան էլ նա կգնա...

ԱՂՋԻԿԸ - Հայրիկ, շատ եմ խնդրում...

ՀԱՅՐԸ - Չխոսենք, Մանիկ... Ես որ ասացի չէ՛, ուրեմն չէ... վերջ...

/ Աղջիկը պոկվում է տեղից ու դուրս փախչում լացակումած/:

ՈՐԴԻՆ - /Հեգնանքով/ Գնամ տեսնեմ, հանկարծ գլխին մի փորձանք չբերի ... /Պաուզա/:

ՄԱՅՐԸ - Դու գտնում ես, որ իրավացի՞ ես, Թորգոմ...

ՀԱՅՐԸ - Անկասկած:

ՄԱՅՐԸ - Հայր ու որդի ամբողջ օրը հալածում եք աղջկան, թե ամուսնացիր: Ո՞ւմ հետ ամուսնանա: Մարդիկ ո՞րտեղից են իրենց համար կյանքի ընկեր գտնում՝ աշխատանքի տեղից, ինստիտուտից, հավաքույթներում: Մանիկը որտե՞ղ ընկեր գտնի, երբ չես թողնում աշխատի, չես թողնում սովորի, չես թողնում տնից դուրս գա և նույնիսկ կինոն ու թատրոնն ես արգելում:

ՀԱՅՐԸ - Դատապաշտպանն սկսեց...

ՄԱՅՐԸ - Ճիշտ չե՞մ ասում, ինչ է...

ՀԱՅՐԸ - Այս տանը միայն մեկն է ճիշտ ասում: Դա ես եմ:

ՄԱՅՐԸ - Իսկ հետո անպայման գալիս է մի շրջան, երբ մարդիկ խիստ զարմացած մտածում են, թե այդ ինչից է, որ զավակները իրենց չեն հարգում:

ՀԱՅՐԸ - Ի՞նչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿՆ ՈՒ ՀԱՐՍԸ

ԱՂՋԻԿԸ – Օ՜, Լուսիկ մորաքույր, բարև ձեզ...

ԼՈՒՍԻԿ - Բարև, աղջիկ ջան:

ԱՂՋԻԿԸ - Ինչպե՞ս եք, երեխանե՞րն ինչպես են...

ԼՈՒՍԻԿ - Քեզանից ի՞նչ պահեմ, Նունե ջան, տղայիս վիճակը մի բան չէ:

ԱՂՋԻԿԸ - Համբարձումի՞... ի՞նչ է պատահել...

ԼՈՒՍԻԿ - Էլ ի՞նչ պատահեր, ասում էինք ամուսնանա, մի հալալ կաթնակեր հարս բերենք, գործ անող լինի, տուն-տեղ դնի... Չէ՜... խանում-խաթուն է բերել գլխներիս... Իմ տղան ոնց որ խղճուկ գառնուկ լինի, ոնց որ կանաչ խոտ գտած լինի, պտտվում է չորս կողմը, թաթերի վրա է ման գալիս, մեզ վրա է ֆշշացնում՝ թե սո՜ւս, կարթնացնեք: Էն էլ ե՞րբ... ժամը տասին... կարծես թե գիշերը լվացք է արել: Կյանքո՞ւմ էինք էդպիսի բան տեսել. սուրճը եփում, անկողնում մատուցում է էդ անամոթին.

- Խմիր, Նոնա ջան...

- Ո՞նց ես, Նոնա ջան...

- Ոչ մի տեղդ չի՞ ցավում, Նոնա ջան...

Էդ Նոնա չեղածն էլ գոնե մի կարգին ընտանիքից լինի, փափուկ ապրած, տեսած լինի... Մենք էլ մի օգուտ ունենայինք: Էդպիսի բա՞խտ ունենք: Հայրը մի հասարակ դոցենտ է, մայրն էլ շրջիկ բժշկուհի... Մատը-մատին չի խփում, ոչ մի գործ չի անում, պարզ է՝ ես էլ չեմ անում, ասում եմ ամաչի... բայց ի՞նչ... էլի խեղճ տղաս է շուկա գնում, կաթի-մածնի վազում, հացը բերում... է՜, բախտ չունեցանք...

ԱՂՋԻԿԸ – Ափսո՜ս... իսկ Ալլա՞ն ինչպես է...

ԼՈՒՍԻԿ – Ա՛յ, ասա, ա՛յ, ասա, Ալլայիս համար էսքան էլ չեմ անհանգստանում: Ամուսինը խելոք, կրթված, գժվում է աղջկաս համար, չի թողնում մատը-մատին կպցնի: Պատկերացնո՞ւմ ես, Ալլան դեռ անկողնում՝ փեսաս սուրճ է մատուցում նրան.

- Խմիր, Ալլա ջան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

-Ո՞նց ես, Ալլա ջան,

- Ոչ մի տեղդ չի՞ ցավում, Ալլա ջան...

Շատ զարգացած, ինտելիգենտ տղա է; Ցեխ ունի... Ամեն ինչ ինքն է անում, շուկա է գնում, կաթի-մածնի վազում, հաց բերում… բախտավոր աղջիկ է Ալլաս, բախտավո՛ր… դե այդպիսի ամուսին ունեցողը բախտավոր կլինի, էլի, Նունե ջան: Չէ՛, մեր Համբարձումի նման…

Է՛, աղջիկս ու՛ր, հարսս ուր, Համբարձումս ո՛ւր, փեսաս ուր…

ԱՂՋԻԿԸ – Այո, ահռելի տարբերություն է...Ուղղակի աչք է ծակում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԸՆԴՈՒՆԱՐԱՆՈՒՄ

Բժշկի ընդունարան: Մի քանի հոգի աթոռներին նստած իրենց հերթին են սպասում: Մեկը սեղանից բրոշյուր է վերցրել, կարդում է, մյուսը լրագիր է ընթերցում:

ՄԵԿԸ - /Մատով լրագրին խփելով/ Ափսո՜ս, ինչ մարդ մեռավ…

ՄՅՈՒՍԸ - Ո՞վ...

ՄԵԿԸ - Չապլինը… ի՜նչ հզոր տաղանդ էր...

ԵՐՐՈՐԴԸ - Երևո՜ւյթ էր, երևո՜ւյթ...

ՄԵԿԸ - Ապշելու արտիստ էր...

ՄՅՈՒՍԸ - Հա, բայց ասում են՝ շատ ժլատ մարդ է եղել:

ՉՈՐՐՈՐԴԸ - Ո՞վ:

ՄՅՈՒՍԸ – Էդ… նրա ասածը...

ՉՈՐՐՈՐԴԸ - Չապլինը՞…

ՄՅՈՒՍԸ - Հա, ասում են՝ միլիոններ է ունեցել, բայց իր քրոջ տղային մի կտոր հաց չի տվել...

ՉՈՐՐՈՐԴԸ – Է՜, արտասահմանում ո՞վ է ուրիշին հաց տվողը...

ՄՅՈՒՍԸ - Հա, բայց հարազատ քրոջ տղան է…

ՄԵԿԸ - Իսկ դուք որտեղի՞ց գիտեք...

ԵՐՐՈՐԴԸ - Երևո՜ւյթ էր, երևո՜ւյթ...

ՄՅՈՒՍԸ - Ե՞ս…ամբողջ աշխարհն է խոսում... հարազատ որդին էլ չի դիմանում, թողնում փախչում է տնից:

ՄԵԿԸ - Ո՞ր որդին, նա, եթե չեմ սխալվում, տասը զավակ ուներ...

ՄՅՈՒՍԸ -Հենց սխալվում եք, մի տղա է ունեցել, նա էլ փախել է: Ասում են այնքան ժլատ է եղել, որ պանիրը փակի տակ է պահել, մեր Փահլավունու նման:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԵՐՐՈՐԴԸ - Երևո՛ւյթ էր, երևո՛ւյթ... ի՞նչ, ո՞ւմ նման...

ՄՅՈՒՍԸ - Փահլավունու... ակադեմիկոս մարդ է, հազարներ է ստանում, բայց կնոջ հագին, ասում են, մաշված կոշիկներ են...

ԵՐՐՈՐԴԸ – Ի՛նչ եք ասում

ՉՈՐՐՈՐԴԸ - Հա, Փահլավունի՞ն, ասում են դրամարկղում տասներկու միլիոն փող ունի…

ԵՐՐՈՐԴԸ - Ի՛նչ եք ասում, անհեթեթություն է...

ՄԵԿԸ - Ի՞նչն է անհեթեթություն... ժլատությունը մի կողմ, դա մասնավոր հարց է, բայց ասում են, որ ուղղակի խեղդում է երիտասարդ, տաղանդավոր գիտնականներին, չի թողնում, որ շունչ քաշեն… Ասում են՝ ոչ մի աշակերտ չունի...

ԵՐՐՈՐԴԸ - Սպասեք, բա որ չունի, ինչպե՞ս է խեղդում...

ՉՈՐՐՈՐԴԸ - Ուրիշների աշակերտներին է խեղդում... Ըստ որում ձեռքից էլ այնքան մաքուր չէ…

ՄՅՈՒՍԸ - Դուք է՞լ եք լսել...

ՉՈՐՐՈՐԴԸ - Մի քանի օր առաջ էլ հինգերորդ ավտոմեքենան պետական գներով վաճառեց… հինգերորդ քսանչորսը…

ԵՐՐՈՐԴԸ – Ինչպիսի՛ զրպարտություն… նա ոչ մի ավտոմեքենա էլ չունի…

ՄՅՈՒՍԸ - Դե որ չստացած վաճառի՝ որտեղի՞ց կունենա...

ՄԵԿԸ – Ափսո՛ս, ափսո՛ս նրա տաղանդը…

ՉՈՐՐՈՐԴԸ - Ինչ տաղանդ, եղբայր, ի՞նչ տաղանդ… ուռճացրած, փուչ հեղինակություն է, ասում են նրա փոխարեն աշակերտներն են գրում...

ԵՐՐՈՐԴԸ - Իսկ հենց նոր ասում էիք աշակերտներ չունի...

ՉՈՐՐՈՐԴԸ - Ուրեմն էդքան էլ չունի՞... բայց դե գիտական աշխատանքների հերն էլ անիծած, իրենք գրում են, իրենք էլ կարդում... միայն թե բարբարոս չլիներ...

ՄԵԿԸ - Ուրեմն ճի՞շտ է, որ կնոջը ծեծում է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄՅՈՒՍԸ – Կնոջը… որ միայն կինը լիներ, կասեի մարդ է, երեխաներին էլ է ծեծում, թոռներին էլ, հարևանների երեխաներն անգամ հենց նրան տեսնում են՝ «վա՛յ, մամա ջան» բղավելով փախչում են տները…

ՄԵԿԸ - Դե դա արդեն չափազանցություն է…

ՉՈՐՐՈՐԴԸ - Ի՞նչ է… Ե՞ս գիտեմ, թե դուք, նրանց հարևաններից մեկը իմ կնոջ մորաքրոջ փեսայի խնամին է…

ՄՅՈՒՍԸ – Շա՛տ հեռացար, ինձ նրա անձնական վարորդի հարևանի քեռին է պատմել, մեր լույսի հսկիչն է…

ՄԵԿԸ - Դե որ բոլորն էլ խոսում են, ուրեմն ճիշտ կլինի, էլի, ասում են անծուխ կրակ չի լինում:

ԵՐՐՈՐԴԸ - Լինում է, լինում է… ձեր այդ բոլոր ասածները պարզապես բամբասանքներ են, ավելին՝ հերյուրանքներ: Հնարավոր է, որ նա ինչ-որ չափով ժլատ է, հնարավոր է, որ կարգին գիտնական չէ, բայց այդ մարդը ավտոմեքենա չի ունեցել, նրա աշակերտներից երեքը գիտության դոկտորներ են, նա իր կնոջը չի ծեծում, երևի ընդհակառակը, նա ինքն է «վա՛յ մամա ջան» կանչելով փախչում, երբ ստորության է հանդիպում, խիղճ ունեցեք, խի՛ղճ…

ՉՈՐՐՈՐԴԸ - / Չարախնդալով/ Ախր դուք ի՞նչ գիտեք…

ՄՅՈՒՍԸ - Անտեղյակ մարդ է, ես նրան ասում եմ, որ այդ Փահլավունու անձնական վարորդի հարևանի քեռին մեր լույսի հսկիչն է, իսկ նա…

ՄԵԿԸ - Դուք որ նրան չեք ճանաչում, ինչո՞ւ եք խառնվում:

ԵՐՐՈՐԴԸ - Իսկ դուք ճանաչո՞ւմ եք…

ԲՈԼՈՐԸ - Մե՞նք…

/ Դուռը բացվում է, անկետան ձեռքին դուրս է գալիս բուժքույրը, կարդում է/:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Պրոֆեսոր Փահլավունի, խնդրեմ…

/Երրորդը զլուխը կախ ներս է մտնում: Մյուսները իրար են նայում զարմացած ու շփոթված և միանգամից դուրս են փախչում/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳՈՒՇԱԿԸ

Սենյակ: Կինը հուզված նայում է ձեռքին, ստուգում է այստեղ ու այնտեղ, փնտրում է իր ոսկյա ժամացույցը:

ԿԻՆԸ - Որտե՞ղ դրած կլինեմ... Հո ասեղ չէր, որ կորչեր... էլ տեղ չմնաց, էլ տեղ չթողեցի, քանդեցի ամեն ինչ, չկա ու չկա: Այնքան նայեցի՝ սևացան աչքերս:

/Ներս է մտնում ամուսինը/:

ԱՄՈՒՍԻՆԸ - Բարև, Հեղինե, ուտելու ի՞նչ կա:

ԿԻՆԸ - Ոչինչ էլ չկա, առավոտվանից չեմ կարողանում մատս մատիս կպցնել:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ի՞նչ է պատահել:

ԿԻՆԸ - Ժամացույցս եմ կորցրել, Լադո...

ԱՄՈՒՍԻՆԸ - ժամացո՞ւյցդ, ոսկե՞...

ԿԻՆԸ - Հա, մեռա ման գալով, էլ տեղ չեմ թողել, քրքրել եմ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Մի տեղ ընկած կլինի, էլի, որտեղ պիտի կորչի...

ԿԻՆԸ - Ասում եմ՝ տեղ չեմ թողել, բաժակների մեջ էլ եմ նայել, աղբն էլ եմ քրքրել, չկա ու չկա:

ԱՄՈՒՍԻՆԸ - Երեխաները հո չե՞ն վերցրել:

ԿԻՆԸ – Ի՜նչ ես ասում...

ԱՄՈՒՍԻՆԸ - Հարևան-մարևան չի մտե՞լ:

ԿԻՆԸ - Հետո՞, ժամացույցն առան ու տարա՞ն: Բան ես ասում, էլի...

ԱՄՈՒՍԻՆԸ - Իսկ ինչի չեն տանի, է՜, ժամացույցը ոսկուց, շղթան ոսկուց...

ԿԻՆԸ - Ամոթ է, ամոթ, իմ հարևանները այդպիսի մարդիկ չեն:

ԱՄՈՒՍԻՆԸ - Վերջին անգամ որտե՞ղ ես տեսել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Տեսնելը ո՞րն է, առավոտը ձեռքիս էր, խանութ եմ գնացել, ետ եկել, հանել, դրել իր տեղը ու գործով ընկել… Հետո, երբ պիտի գնայի Վարդանիկին տուն բերելու, ուզեցի կապեմ… չկա…

ԱՄՈՒՍԻՆԸ - Է լավ, հո հրաշք չի՞:

ԿԻՆԸ - Բա ի՞նչ է... Որ չգտնեմ, կխելագարվեմ...

ԱՄՈՒՍԻՆԸ – Է՛...

ԿԻՆԸ - Բա ի՞նչ անեմ, Լադո, ի՞նչ անեմ...

ԱՄՈՒՍԻՆԸ - Մի բան ասե՞մ:

ԿԻՆԸ - Ասա, ասա՛...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ասում են Մասիսի շրջկենտրոնում մի գրբաց կա, Սիլվա է անունը… Ասում են ինչ կորցրած բան լինի, գիր է անում ու գտնում:

ԿԻՆԸ – Է՛ , բան ես ասում, էլի... Գրբա՛ց, չես էլ ամաչում, հավատում ես էդ դատարկ-մատարկ բաներին:

ԱՄՈՒՍԻՆԸ - Դե հիմա հավատալու-չհավատալու ի՞նչ կա: Այն օրը մեր պահակ Սերգոն էր պատմում, թե կինը կորցրել էր իր ոսկե մատանին, գնացել են էդ Սիլվայի մոտ, տասը ռուբլի են տվել...

ԿԻՆԸ - Տասը ռուբլի՞:

ԱՄՈՒՍԻՆԸ - Հա, էդքան է վարձը, տասը ռուբլին վերցրել է, գիր է արել ու ասել, թե մատանին ձեր տանն է, որ լավ ման գաք, կգտնեք: Եկել են տուն, ման են եկել ու գտել են, բա՞: Դրանից հետո, ուզում ես հավատա, ուզում ես մի հավատա:

ԿԻՆԸ - Ուրեմն, ասում ես…

ԱՄՈՒՍԻՆԸ - Հա, էլ ի՞նչ ունենք կորցնելու, ժամացույցը կորցրել-պրծել ես, մեր պահակ Սերգոյին վերցնեմ, գնամ էդ Սիլվայի մոտ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Պատկեր

Սիլվայենց տանը: Գուշակ կինը նստած է գրասեղանի ետևում, դիմացը գրքեր, թղթեր են, հեռախոս:

ՍԻԼՎԱ - /Հեռախոսով/ Ժամանակ չունեմ, ընկեր Միրոյան, վաղը եկեք: Ես ի՞նչ անեմ, այ հոգիս, ես էլ իմ պլանն ունեմ: Մի խոսքով՝ տերը թույլ չի տալիս:

/Վերջին խոսքի վրա ներս է մտնում Լադոն, ասում է խեղճ-խեղճ/:

ԼԱԴՈ - Ուրեմն տերը թույլ չի տալիս, հա՞...

ՍԻԼՎԱ - Զզվեցրել է, ռեստորանի դիրեկտորն է, ամեն օր զանգ է տալիս, թե տես ՕԲԽՍՍ-ից մեզ մոտ ստուգողներ չե՞ն գալու: Կարծես թե ես շրջանի միլպետն եմ:

ԼԱԴՈ - Ուրեմն տերը թույլ տալի՞ս է:

ՍԻԼՎԱ - Դու Սերգո բիձայի ուղարկած մարդն ես, չէ՞ :

ԼԱԴՈ - Հա:

ՍԻԼՎԱ - Թույլ է տալիս: Ձեռքերդ տուր, տեսնեմ…

/Լադոն մեկնում է ձեռքերը/:

Դատարկ ձեռքին ո՞վ է նայողը:

/Լադոն շտապով մի տասնոց է հանում: Սիլվան այն դնում է մի կողմ/ Սա մի կողմ… եղբայր ջան… ճանապարհդ շատ մութն է:

ԼԱԴՈ - Ինչո՞ւ:

ՍԻԼՎԱ - Սև-մութ ամպեր են դիզվել գլխիդ:

ԼԱԴՈ - Ձեռքիս մեջ գլուխս երևա՞ց:

ՍԻԼՎԱ - Ամեն ինչ էլ երևում է… էստեղից ուղիղ կգնաս ձեր տուն... գլխիդ տակ երկու բարձ կա, մեկը նոր է, մեկը հին, հինը կվերցնես ու կգաս…

ԼԱԴՈ - Գլխիս տա՞կ... Մի բարձ է:

ՍԻԼՎԱ - Երկուսն է: Հինը կվերցնես, կգաս: Քեզ գիր են արել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԼԱԴՈ - Ո՞վ, ի՞նչ գիր:

ՍԻԼՎԱ - Բարձիդ ծոպի մեջ գիր կա… քեզ գիր են արել, որ դու մեռնես:

ԼԱԴՈ - Ո՞վ է գիր արել, ո՞վ...

ՍԻԼՎԱ - Կբերես, բմբուլները քամուն կտամ, գիրը կհանեմ ու կասեմ թե ով:

ԼԱԴՈ - Բա ժամացո՞ւյցը:

ՍԻԼՎԱ - Ի՞նչ ժամացույց:

ԼԱԴՈ - Ոսկե ժամացույցը, ոսկե շղթայով...

ՍԻԼՎԱ - Ի՞նչ ժամացույց, եղբայր, քեղ գիր են արել, որ դու մեռնես...

ԼԱԴՈ - Բայց ես կնոջս ժամացույցի հարցով եմ եկել, Սերգո բիձան չի՞ ասել, կինս կորցրել է ոսկե ժամացույցը, ոսկե շղթայով... Մենք ուզում ենք, որ դու գիր անես, գտնես...

ՍԻԼՎԱ - Հա՞... Սպասիր կենտրոնանամ... /մրմնջում է/:

ԼԱԴՈ - Ի՞նչ, ի՞նչ եք ասում...

ՍԻԼՎԱ - Մի խանգարիր, տիրոջ հետ եմ խոսում...

ԼԱԴՈ – Ուղիղ ի՞ր...

ՍԻԼՎԱ - /Մրմնջում է/:

ԼԱԴՈ - Ասա, որ «Զարյա» է, ոսկե, ոսկե շղթայով...

ՍԻԼՎԱ - Ձեռքդ տուր:

/ Լադոն մեկնում է/:

Դատարկ ձեռքին ո՞վ է նայողը:

ԼԱԴՈ - Վա՞յ, էլի՞...

ՍԻԼՎԱ - Առևտուր չենք անում, տեսնո՞ւմ ես ինչքան գործ ունեմ... դեռ հլա պիտի գիր անեմ, որ հարևան սովխոզի դաշտերի վրա կարկուտ չգա... դիրեկտորն է խնդրել:

ԼԱԴՈ - /Հոգոց հանելով/ Վերցրու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՍԻԼՎԱ - Սա մի կողմ: Ուրեմն, լսիր ուշադիր... Կնոջդ ժամացույցը գողացել է ձեր հարևաններից մեկը՝ անունը կամ Հասմիկ է, կամ Գայանե, կամ Ջուլիետա...

ԼԱԴՈ - Գայանեն է, Գայանեն է, ասում էի, չէ՞...

Պատկեր

ԼԱԴՈ - Գայանեն է, Գայանեն է, ասում էի, չէ՞...

ԿԻՆԸ - Ի՞նչ Գայանե, ինչ ես ասում...

ԼԱԴՈ - Ժամացույցդ, ժամացույցդ… գրբացն ասաց, որ քո կնոջ «Զարյա» ժամացույցը՝ ոսկե շղթայով, գողացել է ձեր հարևան Գայանեն…

ԿԻՆԸ - Հենց էդպես էլ ասա՞ց:

ԼԱԴՈ - Հա, Հեղինե ջան, մազերս բիզ-բիզ կանգնեցին...

ԿԻՆԸ – Ա՛խ, Գայանեն, հա՞, հիմա ես մի Գայանե էլ նրա կողքին կդնեմ: Գայանե՞... Տես ինչ օրն եմ գցելու... Արևդ խավարի... Որևէ թուղթ-մուղթ չտվե՞ց, որ իրեն ցույց տանք...

ԼԱԴՈ - Ի՞նչ թուղթ, այ կին, տեղեկա՞նք պիտի տար, ինչ է, բանավոր ուղիղ աստծո հետ էր խոսում:

ԿԻՆԸ - Գայանեն, հա՞... Ես քեզ Գայանե ցույց կտամ... Ախր էսօր եկավ, աղ ուզեց... Ես քեզ մի էնպիսի աղ տամ, բիբարն էլ հետը, որ ամբողջ կյանքում մոկտաս... Դու փորձիր ժամացույցս ետ մի բեր, Գայանե աղջիկ, աշխարհով մեկ խայտառակելու եմ:

ԼԱԴՈ - Բա ինչ, տես, է՛, գրբացը որ չլիներ, ո՞ւմ մտքով կանցներ: Իսկ դու ասում էիր «Իմ հարևաննե՛րը»...

/Ներս է գալիս աղջիկը, պայուսակը ձեռքին/:

ԱՂՋԻԿԸ – Մա՛մ, մամ ջան, հո չնեղացար, ազիզ ջան…

ԿԻՆԸ - Ես նրան կասեմ, ոնց որ տարել ես, էնպես էլ խելոք-խելոք բեր...

ԱՂՋԻԿԸ - Չնեղացար, չէ՞, մամ ջան...

ԿԻՆԸ - Ի՞նչ է եղել, է՛, ա՛յ աղջիկ...

ԱՂՋԻԿԸ - Որ ժամացույցդ կապել էի թևիս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Ի՞նչ… ժամացո՞ւցս…որտե՞ղ է…

ԱՂՋԻԿԸ - Ի՞նչ պատահեց, վերցրու, մամ ջան…

ԼԱԴՈ– Էս ի՞նչ ստացվեց, ուրեմն քսան ռուբլիս…

ԿԻՆԸ– Խե՛ղճ Գայանե…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԵՐԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակվարչության գրասենյակ: Բնակկառավարիչը և գլխավոր ինժեները:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - /Հեռախոսով/ Իսկ դուք ինչ եք առաջարկում, ե՞ս խողովակ դառնամ: Չէ, չէ, դուք ինձ ասեք, ե՞ս խողովակ դառնամ:

ԿԻՆԸ - /Գլուխը ներս մտցնելով/ Կարելի՞ է:

ԿԱՌԱՎԱՐԻՉ – Ո՛չ: /Կինը գլուխը ետ է քաշում/ Հարգելի ընկեր, ֆոնդ չունենք, հասկանալի՞ է: Իսկ ես ինչ անեմ, որ ջուրը թափվում է: Ուրիշ ժամանակ էլ բողոքում եք, թե ջուր չկա: Իսկ ի՞նչ է, ե՞ս ծորակ դառնամ: Չէ, չէ, դուք ինձ ասեք, ե՞ս ծորակ դառնամ: Վերջացրինք / Ցած է գցում լսափողը/:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - /Ծիծաղում է/ Լա՛վ շշպռեցիք, ինչ է, ուզում էր մե՞նք ծորակ դառնանք: Եսի՛մ...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Իմիջիայլոց, այս բոլորը գլխավոր ինժեների գործն է, ընկեր Սուքիասյան: Իսկ դու ասում ես՝ եսի՛մ... Կառավարիչն ի՞նչ գործ ունի մերժելու հետ... Մերժելը, եթե կուզես իմանալ, քո պոզիցիան է…

ԿԻՆԸ - /Գլուխը ներս մտցնելով/ Կարելի՞ է:

ԿԱՌԱՎԱՐԻՉ – Ո՛չ, սպասեք:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Ա-այսինքն, ինչպե՞ս թե իմ պոզիցիան է...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Քո պոզիցիան է:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Ինչո՞ւ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Որովհետև օրենքով ինձ չպիտի գտնեն, որ մերժեմ: Դե, զանգահարիր մյուս բնակվարչությունները, չէ, չէ, դե զանգահարիր, տես էս ժամին տեղում կառավարիչ կգտնե՞ս:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Գլխավոր ինժեներ էլ չես գտնի:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Չեղավ, մեկը պետք է տեղում լինի՞, որ մերժի...

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Թող հաշվապահը մերժի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Հաշվապահն ի՞նչ կապ ունի:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Թող սլեսարը մերժի:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Իսկ սլեսար կգտնե՞ս, որ մերժի... Իսկի մենք չենք գտնում:

ԿԻՆԸ - /Գլուխը ներս է մտցնում/ Կարելի՞ է:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Ոչ, սպասեք:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Տեսնո՞ւմ ես: Բա կառավարիչը քարտուղարուհի չպիտի՞ ունենա, որ այդ «ոչը» նա ասի: Ասի՝ «Ոչ, սպասեք, կառավարիչն զբաղված է»:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ – Եսի՛մ

/ Հեռախոսը զնգում է/:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Այո... սիրելի ընկեր, ես ի՞նչ անեմ, որ ձեր տունը մկներով լցվել է: Կատու պահեք: Ի՞նչ, իսկ դուք ի՞նչ եք առաջարկում, ե՞ս կատու դառնամ: Չէ, չէ, դուք ինձ ասեք, ե՞ս կատու դառնամ: Վերջացրինք:

/Ցած է գցում լսափողը/:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - /Ծիծաղում է/ Լա՛վ շշպռեցիք, ինչ է, ուզում էր մե՞նք կատու դառնանք: Եսի՛մ...

ԿԻՆԸ- /Գլուխը ներս մտցնելով/ Կարելի՞ է...

ԿԱՌԱՎԱՐԻՉ – Ո՛չ:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ – Ո՛չ:

ԿԻՆԸ – Ո՛չ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Ի՞նչը ոչ:

ԿԻՆԸ - Այն, որ այլևս դուրս չեմ գա:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - /Բարկացած/ Ինչպե՞ս թե դուրս չեք գա: Ի՞նչ եք ուզում:

ԿԻՆԸ - Որ այս տեղեկանքը կնքեք, որովհետև...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԿԱՌԱՎԱՐԻՉ - /Ուրախացած/ Տեղեկա՞նք: Ստիպված եմ մերժել, հարգելիս: /Գլխավոր ինժեներին/ Իմիջիայլոց, սա էլ քո պոզիցիան է:

ԿԻՆԸ - Ինչո՞ւ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Որովհետև պատին մեսրոպատառ հայերենով գրված է. «Տեղեկանքները տրվում են ժամը հինգից վեցը»:

ԿԻՆԸ - Գիտեք ինչ, ներեցեք...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Իսկ հիմա ժամը քանի՞սն է:

ԿԻՆԸ - Տասնմեկը:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Տեսնո՞ւմ եք: Վերջացրինք:

ԿԻՆԸ - Ներեցեք, խնդրում եմ, բայց տեղեկանքը ինձ հենց հիմա է պետք:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Ժամը հինգից վեցը:

ԿԻՆԸ - Խնդրում եմ ձեզ, բացառության կարգով: Շատ է անհրաժեշտ: Ուղղակի մի տեղեկանք, որ...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Գլխիս Ռայկին մի խաղացեք...

ԿԻՆԸ - Ի՞նչ, ո՞վ, ախ հա՜... Չէ, ինչ եք ասում, ես կես ժամից մանկապարտեզում պետք է լինեմ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Ժամը հինգից վեցը:

ԿԻՆԸ - Բարի եղեք, ես այլ ելք չունեմ, ինձ հիմա է պետք...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Լսեք, ընկերուհի, ասենք, թե ժամը վեցին ֆուտբոլ է, իսկ դուք ժամը տասնմեկին ստադիոն եք գնում, ֆուտբոլի խաղ կտեսնե՞ք:

ԿԻՆԸ - / Խղճուկ ժպտալով/ Դե, իհարկե, չեմ տեսնի...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Տեղեկանք էլ չեք տեսնի: Պա՞րզ է: Տեղեկանքի խաղը սկսվում է ժամը հինգին:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Վերջացրինք:

ԿԻՆԸ - /Կերպարանափոխվելով/ Ո՛չ, չվերջացրինք: Անմիջապես կնքեք այս տեղեկանքը: /Ձեռքը տանում է դեպի հեռախոսը/

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԱՌԱՎԱՐԻՉ - / Զարմացած/ Իսկ... Իսկ ինչո՞ւ պետք է կնքենք:

ԿԻՆԸ - Բավական է: Համեստությունը ձեզ մոտ չի անցնում: Տեղեկանքը պետք է կնքեք, որովհետև ես Մելքոնյանի կինն եմ:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Բա...Բա...Բա... Բարեղամ Իգնատիչի՞...

ԿԻՆԸ - Այո, ըստ որում ասաց, թող կնքելուց հետո կառավարիչն ինձ մոտ գա...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Բա... Բա... Բա… Ինչո՞ւ սկզբից չէիք ասում, հարգելի ընկերուհի: Ախր մենք անմիջապես, մի վայրկյանում: Ախր գիտեք ինչ, խնդրում եմ, մեր դրության մեջ էլ մտեք: Առավոտվանից զանգում են, տանջում են: Խողովակ են ուզում, ծորակ են ուզում, թիթեղ են ուզում, կատու են...

ԿԻՆԸ - Վերջացրեք, ես ուշանում եմ:

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Հիմա, հիմա, իհարկե, սիրով... Ո՞ւր կորավ անտեր կնիքը, հենց նոր ձեռքիս էր, ո՞ւր կորավ...

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Էլի ձեր ձեռքին է...

ԿԱՌԱՎԱՐԻՉ - Հա, վա՞յ, ներեցեք մեծահոգաբար... Ես թռա ընկեր Մելքոնյանի մոտ... Ներեցեք, ընկերուհի... շատ-շատ ներեցեք: /Դուրս է վազում/:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - /Դողդողալով վերցնում է կնիքը, ուզում է փչել վրան, հետո ամաչում է, գտնում է բարձիկը, թանաքոտում կնիքը, պատրաստվում է կնքել և կասկածով նայում է կնոջը: Նորից տեղեկանքին է նայում, նորից կնոջը/...

Բա...Բայց... Բայց…

ԿԻՆԸ - Ի՞նչ է... ի՞նչ կա...

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Ձեր ազգանունը... ներեցեք, Մելքոնյան չէ...

ԿԻՆԸ - Իսկ ի՞նչ է, պարտադի՞ր է, որ ես ամուսնուս ազգանունը կրեմ, դա է՞լ է ձեզ վերաբերում...

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ – Չէ՛, ի՞նչ եք ասում… Եսիմ... Այսինքն, ներող եղեք... խնդրեմ, ահա... /կնքում է/:

ԿԻՆԸ - Շնորհակալություն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ -Ի՞նչ եք ասում, մենք ենք շնորհակալ... մենք ենք շնորհա... /ուշադիր դիտում է կնոջը, ապշած է/...

ԿԻՆԸ - Դե՞, էլի՞ ինչ կա...

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Շատ, շատ ներողություն... Բայց դուք դերասանուհի չե՞ք... Ես ձեզ ոնց որ տեսել եմ...

ԿԻՆԸ - Դերասանուհի եմ:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Բա ասում էիք ընկեր Մելքոնյանի կի՞նն եք...

ԿԻՆԸ - Ուրիշ ի՞նչ կերպ կարող էի տեղեկանք ստանալ:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - Սպասեցեք, ուրեմն խաղո՞ւմ էիք:

ԿԻՆԸ - Իհարկե:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ - /Հանկարծ զայրույթով/ Բա-բա ամոթ չի՞...

ԿԻՆԸ - Ինչո՞ւ է ամոթ: Ես երկար տարիներ Օթելլոյի կին եմ խաղացել, եղել եմ նաև Քաջ Նազարի, Պրոտասովի, Արբենինի կինը... Հանուն տեղեկանքի դժվար չէր հինգ րոպե մի ինչ-որ Մելքոնյանի կին խաղալ: Երբ ուրիշ ելք չկա:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ – Բա-բա խաբելը ձեզ սազո՞ւմ է...

ԿԻՆԸ – Եսի՛մ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱԼՈ, ԱՂԲԸ...

Հեռախոսային մենախոսՈՒթյուն:

ԿԻՆԸ – Օ՜հ, էլ մի ասա, Մարո ջան, ի՜նչ աշուն է, տանը նստել չի լինում: Անցյալ կիրակի ամուսնուս հետ գնացել էինք Աշտարակ: Ի՜նչ գույներ են: Մարդ ակամա բանաստեղծ կդառնա: Հրաշք է, դեղին-դեղին է ամեն ինչ ու մեկ էլ հանկարծ ցանկապատի անկյունում վառ կարմիրով այրվում է տանձենին, մի րոպե, կարծես աղբը եկավ...

/Լսափողը ցած է դնում, թեքվում նայում է պատուհանից/:

Չէ, աղբը չէր: Հա, պատշգամբներում ուլունքի նման կախված են կարմիր բիբարները, ալանին, սուճուխը... թոնիրների մեջ լավաշն է թխվում, օջախի վրա քլթքլթում է հոնի մուրաբան, մեծ տակառների մեջ տեղավորում են ձմեռվա թթուն, ծառերի տակ կապված են դավուրմացու... աղբը... խոյերը... Վայ, վայ, կարծես թե աղբը եկավ...

/Նորից լսափողը ցած է դնում, թեքվում, նայում է պատուհանից/:

Չէ, էլի աղբը չէր: Տեր աստված, էս աղբի հարցը ե՞րբ պիտի լուծվի, ինչի՞ մասին էի ասում: Խոյերի՞, ի՞նչ խոյեր... Այո, այո, Մարո, դավուրմացու.. Մառանները կախովի մրգերով լի են, մաճառը պճպճում է կարասների մեջ...և կարծես թե ամեն ինչ պատրաստ է աշնանային շքեղ հարսանիքի համար:

Ո՞վ, Սաթիկի աղջիկը՞: Ո՞ւմ հետ: Ի՜նչ ես ասում: Դե, նրանք գիտեն, թե որտեղից են բռնեցնում: Հա, Սաթիկի մերը չմեռնի...Արդե՞ն, Եվրոպայի շուրջը՞, նա դեռ նրանց շատ կպտտեցնի, ուրեմն Եվրոպայից է սկսել: Աղբը, աղբը, մի վայրկյան...

/ Նայում է պատուհանից/:

Օֆ, չէ, երեխաներն են հեծանիվ քշում... Ձեր աղբը արդեն տարե՞լ են... Դե, իհարկե, եթե մեր շենքում էլ այդպիսի մարդ ապրեր, մերն էլ տարած կլինեին: Սուտ բան է: Այս գիշեր երազում տեսել էի, թե իբր աղբատար մեքենան առավոտ շուտ եկել էր: Ուրախությունից ճչացի ու վեր թռա: Բա ո՞ւր է: Կեսօրը վաղուց է անցել, իսկ մեքենան չկա ու չկա: Չէ, չէ, հարևանության չափանիշներն էլ են փոխվել: Ասում են լավ հարևանը նա է, ով իմաց է տալիս աղբի մեքենայի գալու մասին: Իհարկե, փառք աստծո, մեր հարևանները լավն են, շատ են խղճով ու մարդկային: Հենց որ աղբատարի զանգը զնգզնգում է, բոլորն իրար ձայն են տալիս, տեղեկացնում են հեռախոսով: Հա, իմիջիայլոց, մեր հարևանի կինը աշխատանքից դուրս եկավ: Ելք չկար: Երկուսն էլ նախագծող ինժեներներ են: Առավոտ շուտ աշխատանքի էին

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

գնում: Եվ աղբը մնում էր: Կինը ստիպված աշխատանքից դուրս եկավ, որ աղբը ժամանակին թափի: Հիմա լավ են... Մի վայրկյան:

/Նայում է/:

Չգիտեմ ինչ անեմ, աշխատանքից ուշանում եմ: Էլի բաժնի վարիչը խոսելու է: Նրան ի՞նչ կա, կինը չի աշխատում: Ի՞նչ, ես դա չգիտեի... ի՛նչ ես ասում, Մուշե՞ղը… Օյ, հետաքրքրությունից վառվում եմ, պատմիր, ի՛նչ ես ասում… Օ՛, ահա թե ինչ... Ուրեմն... Աղբը, աղբը, ես թռա, Մարո ջան... Չէ, այս անգամ իսկականից, իսկականից... Ես տեսնում եմ մեքենան, այնտեղ կանգնած է նա: Աղբը... համբուրում եմ… Հետո կպատմես… ա՛ղբը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՍԽԱԼԸ

Սենյակ: Գրասեղանի ետևում նստած է խմբագիրը, արագ–արագ գրում է, ջնջում: Հետո նայում է ստացված փոստը: Ծանոթանում է նամակներին: Մեկը անփութորեն նետում է, մյուսը դնում է մի կողմ, երրորդի համար ծիծաղում է ուրախ, հետո բացում է չորրորդը: Կարդում է և մռայլվում հետզհետե: Բարկացած վեր է կենում, շրջում սենյակում, մոտենում է դռանը, կիսաբաց անում և կանչում:

ԽՄԲԱԳԻՐ - Դեդեյանին կանչիր ինձ մոտ:

/Մտնում է Դեդեյանը՝ բարձրահասակ, նիհար մի երիտասարդ/:

ԴԵԴԵՅԱՆ - Լսում եմ, շեֆ:

ԽՄԲԱԳԻՐ - Լսիր, քանի անգամ եմ ասել՝ ինձ շեֆ չասես, մենք հո ամերիկյան հետախուզությունում չե՞նք աշխատում:

ԴԵԴԵՅԱՆ - Ներեցեք, ընկեր խմբագիր:

ԽՄԲԱԳԻՐ - /Կնճռոտելով ճակատը/ Դե լավ, նստիր, ես քո ակնարկի մասին եմ ուզում խոսել:

ԴԵԴԵՅԱՆ - Ի՞նչ կա: /Մատով ցույց է տալիս վերև/ Դուր չի՞ եկել: Իմ կարծիքով վատը չէ:

ԽՄԲԱԳԻՐ - Իմ կարծիքով ևս: Քանի՞ օր էիր գործուղման մեջ: Կարծեմ տասը:

ԴԵԴԵՅԱՆ - Այո, տասը…

ԽՄԲԱԳԻՐ - Տասն օր: Դե հիմա անկեղծ ասա, Դեդեյան: Տասն օրը բավական չէ՞ նյութը հանգամանորեն ստուգելու համար:

ԴԵԴԵՅԱՆ - Խղճով ասած՝ լիուլի բավական է:

ԽՄԲԱԳԻՐ - Դու նույնիսկ մի ամբողջ օր հնարավորություն էիր ունեցել զրուցելու մի ծեր այգեգործի, ինչպես էր անունը, հա՛, Մովսես դայու հետ: Իսկապե՞ս այդքան լավ մարդ էր:

ԴԵԴԵՅԱՆ - Շատ լավ մարդ էր: Ինչպես ասեմ՝ հողի մարդ, աշխատավոր մարդ: Էսպես՝ ճաքճքված ձեռքեր, իմաստուն կնճիռներով պատված դեմք… և այլն… Ես իմ ակնարկի մեջ գրել էի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԽՄԲԱԳԻՐ - Եվ իրո՞ք այդքան խելոք էր խոսում:

ԴԵԴԵՅԱՆ - Իմաստուն մարդ էր, շեֆ: Կյանք տեսած մարդն ուրիշ է: Ազնիվ խոսք՝ բերանս բաց լսում էի:

ԽՄԲԱԳԻՐ - Նույնիսկ բերանդ բաց…

ԴԵԴԵՅԱՆ - Այո, այո, այնքան սրամիտ բաներ էր պատմում, հազիվ էի հասցնում ծոցատետրումս գրել:

ԽՄԲԱԳԻՐ – Ի՜նչ ես ասում, իսկ ինձ, Դեդեյան, ինչ որ մեկն ասաց, թե նա խոսելու հետ առանձնապես գլուխ չունի:

ԴԵԴԵՅԱՆ - Ինձ էլ էին ասում: Բայց մեծամտություն չհամարեք, շեֆ, թղթակցից է կախված: Ես համրին էլ կխոսեցնեմ:

ԽՄԲԱԳԻՐ - Ինչ ճիշտն է՝ ճիշտը, իսկապես որ թղթակցից է կախված:

ԴԵԴԵՅԱՆ - Իհարկե: Ես հո ուրիշների պես օբյեկտին չեմ ասում… «Գիտեք ինչ, ես եկել եմ ձեր մասին գրելու: Խոսեք, որ գրեմ»: Երբեք: Զրուցում եմ այսպես, հանգիստ: Կարծես իմիջիայլոց, առանց մատիտի ու ծոցատետրի, տրամադրում եմ էսպես կամաց-կամաց, մինչև որ բացվում է:

ԽՄԲԱԳԻՐ - Եվ այդպես էլ բացեցիր նրա՞ն:

ԴԵԴԵՅԱՆ - Այն էլ ո՜նց… Վերջում չէի կարողանում կանգնեցնել: /Ծիծաղում է/ Խոսում էր ու խոսում…

ԽՄԲԱԳԻՐ– Իսկ ի՞նչ լեզվով էր խոսում:

ԴԵԴԵՅԱՆ - Հայերեն, ի՞նչ… կատակում եք, շեֆ…

ԽՄԲԱԳԻՐ - Ախ, եթե միայն կարողանայի կատակել… Ուրեմն դու հայերեն հասկանո՞ւմ էիր…

ԴԵԴԵՅԱՆ - /Ծիծաղում է/ Այսօր ձեր տրամադրությունը լավ է երևում:

ԽՄԲԱԳԻՐ - Փայլուն… Եթե հայերեն գիտես՝ կարդա…

ԴԵԴԵՅԱՆ - /Կարդում է/ Գյուղբաժնի գրական աշխատող Սենո Դեդեյանին հեռացնել աշխատանքից՝ խմբագրությանը թյուրիմացության մեջ գցելու համար.. Սա, սա, ինչո՞ւ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԽՄԲԱԳԻՐ– /Վեր կենալով/ Որովհետև ի ծնե համր է եղել քո այդ Մովսես դային, անպատասխանատու մարդ: Որովհետև դու ոչ նրան տեսել ես, ոչ էլ զրուցել հետը, անխիղճ մարդ: Որովհետև քո պատճառով ես ամաչում եմ ակտիվից, ամաչում եմ հեռախոսազանգերին պատասխանել, ամաչում եմ առանձնասենյակից դուրս գալ, ամաչում եմ պատասխանել այս նամակներին:

ԴԵԴԵՅԱՆ - Իսկ ինչպե՞ս կարող էր համր լինել:

ԽՄԲԱԳԻՐ— Դու այդ ինձ ես հարցնում, հա՞: Այո, համր, ահա բժշկական տեղեկանքը, ահա մի խումբ կոլտնտեսականների նամակը… Ասենք, չէ՞ որ դու կարողանում ես համրին էլ խոսեցնել: Երևի դու գերբնական շնորհք ունես, հա՞, դե ինքդ էլ պատասխանիր այս նամակին: Տես թե ինչ են գրել… «Խնդրում ենք պարզել, թե ընկեր Դեդեյանին ինչպես է հաջողվել խոսեցնել Մովսես դայուն, դրանից հետո ինչ անում ենք, նա դարձյալ չի խոսում: Եթե ձեր թղթակից ընկեր Դեդեյանը իրոք այնպիսի շնորհք ունի, որ կարողանում է խոսեցնել ի ծնե համր մարդկանց, խնդրում ենք նրան նորից գործուղել մեզ մոտ, որովհետև բրդի մթերման կայանում մի խեղճ համր էլ կա»: Հը, գործուղման կգնա՞ս… Գրե՞մ, տասն օրը բավակա՞ն է…

ԴԵԴԵՅԱՆ - Չէ, չէ, չէ, չէ, չէ, չէ…

ԽՄԲԱԳԻՐ - Դե չքվիր աչքիցս, քանի… ես էլ բարկությունից չեմ համրացել:

ԴԵԴԵՅԱՆ - /Ետ-ետ դեպի դուռն է գնում, բացում է այն ու մեկ էլ…) Լավ, լավ, կգնամ, պետքս չէ, բայց ախր դա անազնվություն է, համրին ինչո՞ւ են պատասխանատու աշխատանքի նշանակել, հը՞, բա որ գան այգին կողոպտելու ու ինքը չլսի , հը՞: Այդ ժամանակ ո՞վ պետք է պատասխան տա: Երևանի խուլ ու համրերի կոմբինատում մի կարգին խուլ ու համր չես գտնի, իսկ այնտեղ… մի գյուղում երկուսը…կազմակերպված բան է, այ մարդ, ո՞ւմ մտքով կանցներ…

ԽՄԲԱԳԻՐ - /Բարկացած բարձրացնում է ուսերը/ Վե՛րջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐԸ

Բեմը ներկայացնում է վագոնի բաց կուպե: Շոգ է: Լրագրերով դեմքերը զովացնելով ներս են մտնում մի տղամարդ և մի կին:

ՏՂԱՄԱՐԴԸ – Օ՜հ, հիմա կշարժվի գնացքը և վերջապես կազատվենք այս շոգ մայրաքաղաքից: Զարմանում եմ, թե ինչպես են մարդիկ իրենց հով սարերից գալիս, գալիս ու կուտակվում այստեղ: Ազնիվ խոսք, հնար ունենայի, մեկ օր էլ չէի մնա:

ԿԻՆԸ - Իբրև թե մնացիր: Արածդ չտեսանք: Մեր քաղաքում մեծ-մեծ խոսում էիր: Ասենք հո քո եղբայրը չէ, որ սիրտդ մղկտար, քո ի՞նչն է, քոնը լիներ...

ՏՂԱՄԱՐԴԸ – Էլի՛ սկսեցիր, ա՛յ կնիկ, ի՞նչ ես ուզում ինձանից: Քոնը, քոնը, քոնը: Ես ի՞նչ ունեմ որ: Հը: Ինձ ի՞նչ է մնացել: Քո մայրը իմ մայրն է, քո քույրը իմ քույրն է, քո եղբայրը իմ եղբայրն է, քո քեռին իմ քեռին է, քո պապն իմ պապն է: Ես մերոնց երեսը տեսնո՞ւմ եմ:

ԿԻՆԸ - Երես ունե՞ն, որ տեսնես:

ՏՂԱՄԱՐԴԸ - Չունեն, չունեն, ձերոնք ունեն, շատ ունեն, պրծա՞նք: Գործերս թողած, մի շաբաթ է էս քաղաքի դատարաններն ընկած ման եմ գալիս, խիղճ ունեցիր, խիղճ...

ԿԻՆԸ - Արածդ չտեսանք, Վարդան տղա, վաղը թե եղբորս դատեցին, նոր կխոսեմ հետդ:

ՏՂԱՄԱՐԴԸ - Այ կնիկ, ի՞նչ ես ուզում ինձանից: Ես մեղավո՞ր եմ, որ քո եղբայրը հանցագործ է:

ԿԻՆԸ - Ո՞ւմ եղբայրն է հանցագործ:

ՏՂԱՄԱՐԴԸ - Լավ, դատարանում էդպես անմեղ կձևանաս: Խփել, մարդու ծնոտը ջարդե՞լ է, ջարդել է: Մարդը բժշկի գնացե՞լ է, գնացել է: Թուղթը բերե՞լ է, բերել է: Ես ի՞նչ անեմ:

ԿԻՆԸ - Իսկ նա չի՞ խփել: Եղբայրս մեղավո՞ր է, որ իր խփածները կպել են, իսկ նրա խփածները չեն կպել: Բռնցքամարտ որ լիներ, հո չեմպիոն կդարձնեիք: Ինչ է, տասը մետր պարա՞նն էր պակաս: Տղերք են, խմել են, մի քիչ իրար խփել են, հետո՞: Ի՞նչ եղավ: Պետությունը տուժե՞ց:

ՏՂԱՄԱՐԴԸ - Լավ, ինձ ինչո՞ւ ես ասում, ես դատավո՞ր եմ:

ԿԻՆԸ - Բա որ դատավորին չգտար, ո՞ւմ ասեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՄԱՐԴԸ - Ես ի՞նչ անեմ, որ քաղաքում չէր: Այ Շուշիկ ջան, դատարան գնացի՞նք, գնացինք, տունը գնացի՞նք, գնացինք: Ռեստորանները ման եկա՞նք, ման եկանք:

ԿԻՆԸ - Հա, գիտեմ, թե ռեստորաններում ինչու էիր ման գալիս: Դատավորն էլ ռեստորան գնաց: Միամիտ չլինես:

ՏՂԱՄԱՐԴԸ - Ինչի՞, դատավորը մարդ չի՞...

ԿԻՆԸ – Վաղը որ եղբորս դատեց, նոր կտեսնես մարդ է, թե մարդ չի:

ՏՂԱՄԱՐԴԸ – Է՜հ, եթե կուզես ճիշտն իմանալ, մեղքը քոնն է, Շուշիկ, մեր դատավորը կդատեր, խղճով էլ կդատեր, իսկ դու բացարկ հա բացարկ...

ԿԻՆԸ - Ինձ պետք է, որ չդատեն, ինձ խղճով դատելը պետք չէ…

ՏՂԱՄԱՐԴԸ – Է, հետո՞, որ քաղաքից գալու է, չի՞ դատելու...

ԿԻՆԸ - Որ խեղճ եղբայրս քեզ նման փեսա ունենա, կդատվի... Քաղաքից ով մեր շրջանն է գալիս, վերցնում բերում ես տուն: Շուշիկ ջան, լավ սեղան գցիր, սա մայրաքաղաքում շատ մեծ մարդ է, Շուշո ջան, սա պետ է, սա վերադաս է, սա մինիստր է, սա զամմինիստր է: Բկներին կանգնի, ո՞ւր անհետացան էդ մեծ մարդիկ, հը՞: Թե՞ մենակ մեր տանն էին մեծ: Ոչ մեկն էլ քեզ բանի տեղ չդրեց, դատավորին չգտար ու քո պատճառով իմ խեղճ եղբայրը պետք է նստի:

ՏՂԱՄԱՐԴԸ - Ախ, ա՜խ, ինչ անեմ, էս անտեր գնացքն էլ ինչի չի շարժվում, է...

/Ներս է մտնում մի մարդ: Նայում է ժամացույցին/:

ԴԱՏԱՎՈՐ - Ուղիղ երկու րոպեից կշարժվի: /Մոտենում է պատուհանին/ Դե, տղերք, գնացեք, ազնիվ խոսք, չեմ սիրում, որ սպասում են: Շատ շնորհակալություն:

ՁԱՅՆԵՐ - Դե լավ, գնացինք... Դե ձեզ տեսնենք, լավ կդատեք, ընկեր Մամյան:

ԴԱՏԱՎՈՐ - Անհոգ եղեք, ինչպես պետք է...

ԿԻՆԸ - /Ամուսնուն/ Էսեցի՞ր...

ՏՂԱՄԱՐԴԸ – Էը-սե-ցի... Այ քեզ բա՜ն...

ԴԱՏԱՎՈՐ - Բարի երեկո ձեզ: Իմ տեղը կարծեմ այստե՞ղ է: /Նայում է տոմսին/ 22-ը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - Վայ, խնդրեմ, խնդրեմ, Վարդան, տեղ տուր, այ մարդ...

ՏՂԱՄԱՐԴԸ - Վայ, խնդրենք, խնդրենք...

ԴԱՏԱՎՈՐ - Ինչո՞ւ եք անհանգստանում: Ես այստեղ կտեղավորվեմ, ձեզ չեմ խանգարի:

ԿԻՆԸ Բա դա ասելո՞ւ խոսք էր, ընկեր Մամյան:

ԴԱՏԱՎՈՐ - Ինչպե՞ս, դուք ինձ ճանաչո՞ւմ եք:

ՏՂԱՄԱՐԴԸ - Դե, ձեզ ո՞վ չի ճանաչում: Էլի դատավո՞ր եք, ընկեր Մամյան:

ԴԱՏԱՎՈՐ - Այո, դժբախտաբար դարձյալ դատավոր եմ:

ԿԻՆԸ - Վայ, ինչո՞ւ դժբախտաբար, ձեզ նման շա՞տ դատավորներ կան: Երանի չէ՞ր բոլորը ձեզ նման ազնիվ ու սկզբունքային լինեին:

ԴԱՏԱՎՈՐ - Դե, ի՞նչ եք ասում, շնորհակալություն… Կարիք չկա նման խոսքերի…

ԿԻՆԸ - Ինչո՞ւ, լավին լավ պետք է ասել, վատին՝ վատ: Բայց շատ ներողություն, դուք Սպիտա՞կ եք մեկնում:

ԴԱՏԱՎՈՐ - Այո, այո, Սպիտակ,

ԿԻՆԸ - Եվ... դատելո՞ւ եք...

ԴԱՏԱՎՈՐ - /ժպտալով/ Դե իհարկե, իմ գործը դա է...

ԿԻՆԸ - /Ամուսնուն/ Վարդան, դե շուտ մի բան արա... ես կմեռնեմ:

ՏՂԱՄԱՐԴԸ - Ի՞նչ անեմ... Ո՞նց սկսեմ, հը՞...

ԿԻՆԸ– /Ֆշշալով/ Գնա վագոն ռեստորանից խմիչք և ուտելիք բեր, շուտ...

/Ամուսինը դուրս է գնում/:

ԿԻՆԸ - /Լռությունից հետո, շարունակելով դեմքի մոտ թափահարել լրագիրը/ Հիանալի եղանակ է, այնպես չէ՞...

ԴԱՏԱՎՈՐ - Այո... շոգ է...

ԿԻՆԸ - Այո, շոգ է... / Լռություն/ Ահա շարժվեց... Դուք գնացք սիրո՞ւմ եք, ընկեր Մամյան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Է, հոգնել եմ, տիկին: Հիշո՞ւմ եք, մի երգ կար՝ այսօր այստեղ, վաղը այնտեղ… մեր աշխատանքն այնպիսին է, որ…

ԿԻՆԸ - Ինչո՞ւ, դուք Երևանում չե՞ք դատում:

ԴԱՏԱՎՈՐ - Դատում եմ, ինչպես չէ, բայց հաճախ էլ շրջաններն են հրավիրում…

ԿԻՆԸ - Դե, իհարկե, դժվար կլինի… Ո՞ւր կորավ այդ անճարակը:

/ Ներս է գալիս ամուսինը, փաթեթներով և շշով/:

ՏՂԱՄԱՐԴԸ - Դեռ փակ էր ռեստորանը: Ստիպելով բացեցի: Ահա այսպես…

ԿԻՆԸ - Ես ինքս… Դուք՝ տղամարդիկ, այնքան անշնորհք եք… Իհարկե, ընկեր Մամյան, խոսքը ձեզ չի վերաբերում:

ԴԱՏԱՎՈՐ - Դե չէ, ես էլ նույնն եմ:

ԿԻՆԸ - /Ծիծաղելով/ Ամեն մարդ մի շնորհք կունենա: Հիմա ես կդասավորեմ…

ԴԱՏԱՎՈՐ - Ուրեմն այս ժամին պատրաստվում եք ճաշելո՞ւ..

ՏՂԱՄԱՐԴԸ – Ի՞նչ անեմ, կնոջս կարգա… /վախեցած նայում է կնոջը/: Գ-գիտեք ինչ, մարդ հենց գնացք է նստում, ախորժակը բացվում է: Մի-մի հատ չխմե՞նք, ընկեր Մամյան, մեր հանդիպման կենացը…

ԴԱՏԱՎՈՐ - Դե ինչ, չի խանգարի… Օ՜, «Հոբելյանական»…

ԿԻՆԸ - Ողջ լինեք, ընկեր Մամյան…

ԴԱՏԱՎՈՐ - Ողջ լինեք, տիկին, ողջ լինեք… ը…

ԿԻՆԸ - Վարդան…

ԴԱՏԱՎՈՐ - Վարդան…

ԿԻՆԸ - Մարկոսիչ…

ԴԱՏԱՎՈՐ - Մարկոսիչ… / խմում է միանգամից/:

ՏՂԱՄԱՐԴԸ – Վա՛յ, սա կարգին մարդ է, բա ասում է դատավո՞ր եմ: Մի-մի հատ էլ գցենք… Դատարկ բաժակները տանել չեմ կարողանում, ընկեր Մամյան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Այո, իրավացի եք... դատարկ բաժակը դեռևս բաժակ չէ, այլ ընդամենը ձևավոր ապակի...

ԿԻՆԸ - Իմաստուն խոսքեր են, խմեք, խմեք, անուշ լինի...

ԴԱՏԱՎՈՐ - Գեղեցիկ սեռի կենացը, հանձինս ձեզ, տիկին: Դուք մի փոքրիկ չէի՞ք խմի:

ՏՂԱՄԱՐԴԸ – Էհե՛, սա արագ վազողներից է...

ԿԻՆԸ - Շնորհակալություն... ինչպե՞ս կարող եմ ձեզ հետ չխմել... լցրու, Վարդան...

/Խմում են/:

ԿԻՆԸ- Ինձ թվում է, թե ձեր աշխատանքում առանց խմելու չի լինի: Այնքան հուզվում եք, տառապում, խառը պատմությունների մեջ ընկնում, որ...

ԴԱՏԱՎՈՐ - Չեք սխալվում, տիկին, այդ իմաստով ուղղակի անտանելի է: Ցավն այն է, որ ժողովուրդն էլ մեծ մասամբ չի հասկանում, կարծում է սխալ ես դատում, գոռում-գոչում է, խանգարում է...

ՏՂԱՄԱՐԴԸ - Հա, հա, էս անտեր դատարկ բաժակները որ չեմ տեսնում...

ԿԻՆԸ - /Ամուսնուն/ Լսիր, դու քիչ խմիր, իրեն խմեցրու...

ՏՂԱՄԱՐԴԸ - Բա դա կլինի ազնվությո՞ւն... Ողջ լինեք, ընկեր Մամյան, այս փոքրիկ բաժակով, բայց մեծ սրտով...

ԴԱՏԱՎՈՐ– Ոչ, ոչ, ես պետք է ասեմ... /հարբում է/ Ես հատկապես ուզում եմ խմել ձեր կենացը: Չէ, չէ, չէ, ասեմ թե ինչու...Այնքան քիչ մարդիկ են հասկանում մեր աշխատանքի բարդությունն ու ծանրությունը, և դուք այնքան ջերմությամբ ու անշահախնդրությամբ ընդունեցիք ինձ, որ ես չեմ կարող բաժակ չբարձրացնել և սրտանց չխմել ձեր կենացը, ցանկանալ ձեզ ամենայն բարիքներ և առողջություն... Մուրա՛զ...

ՏՂԱՄԱՐԴԸ - Հա, առողջությունը որ եղավ, մնացածը ձեռքի գործ է... բաժակը, բաժակը, ընկեր Մամյան, թույլ չտանք, որ սրանք դառնան ապակի…

ԴԱՏԱՎՈՐ - Օ՛հ, շատ սրամիտ մարդ եք, Վարդան...

ԿԻՆԸ - Մարկոսիչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Մարկոսիչ... և այս «Հոբելյանականը»... Իմ ամենասիրելի խմիչքն է… վաղուց չէի խմել... մուրա՛զ...

ՏՂԱՄԱՐԴԸ - Այս փոքր բաժակով, բայց մեծ սրտով... ես ուզում եմ խմել ձեր ազնիվ սրտի կենացը, ընկեր Մամյան...

ԿԻՆԸ - Ձեր խղճի, կարեկցանքի, մարդկանց հոգիների խորքը թափանցելու կարողության, ես կասեի՝ տաղանդի կենացը...

ԴԱՏԱՎՈՐ - Մերսի... Մուրա՛զ... հա, պետք է ասեի շնորհակալություն, բայց այս «Հոբելյանականը»...

ՏՂԱՄԱՐԴԸ - Կլինի, կլինի, տեսա, էնքան կա՛...

ԴԱՏԱՎՈՐ - Առաջվա շշերը ուրիշ էին... հա խմում էիր, խմում էիր, չէին պրծնում: Հիմա հոպ՝ չկա...

ՏՂԱՄԱՐԴԸ - Դատարկ բան է՝ տեսե՛ք, հոպ՝ կա /գրպանից հանում է մի շիշ ևս/:

ԴԱՏԱՎՈՐ –Վա՛յ, դու հանճարեղ մարդ ես, Վարդան Մարկոսիչ...

ՏՂԱՄԱՐԴԸ - Այս փոքր բաժակով, բայց մեծ սրտով...

ԿԻՆԸ - Լսիր, սրտիցդ այն կողմ պիտի անցնե՞ս, թե ոչ, գործին մոտեցիր, գործին...

ՏՂԱՄԱՐԴԸ - Ախր ո՞նց մոտենամ...

ԿԻՆԸ - Մոտեցիր, էլի, մոտեցիր, էլի… Մի քիչ հեռվից մոտեցիր…

ՏՂԱՄԱՐԴԸ - Ընկեր Մամյան, իսկ դուք խուլիգաններին ինչպե՞ս եք պատժում...

ԿԻՆԸ – Օ՛հ, ողորմելի... հեռվից մոտեցավ, հա...

ԴԱՏԱՎՈՐ - Խիստ, խիստ, խուլիգաններին պետք է խոտորեն պատժել... այո...

պը-պատժել:

ԿԻՆԸ - Հազար անգամ իրավացի եք, բայց, գիտեք ինչ, ընկեր Մամյան, երբեմն լինում են պատահականություններ, դե՝ թյուրիմացություն: Մարդն առաջին անգամ սխալվում է, դրանք հաշվի առնվո՞ւմ են, թե ոչ...

ԴԱՏԱՎՈՐ - Իհարկե, մ-մուրա՛զ, ամեն ինչ պ-պարտադիր հաշվի ենք առնում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - /Ամուսնուն/ Տեսա՞ր: Այ, ընկեր Մամյան, հենց խեղճ եղբայրս էլ... պատահական էսպես կամացուկ խփել է մեկին, ծնոտը մի քիչ կոտրվել է... Էլի կարող է կպցնել, հիմա ի՞նչը չեն կպցնում...

ԴԱՏԱՎՈՐ - Ինչո՞ւ է խ-խփել...

ԿԻՆԸ - Բա ի՞նչ աներ, այդ մարդը ռեստորանում եղբորս առաջարկած բաժակը չի խմել, համարյա վիրավորական խոսքեր է ասել, նա էլ... Դուք լինեիք, չէի՞ք խփի...

ԴԱՏԱՎՈՐ - Ինչպե՞ս թե... չէիք խմի... ներողություն՝ խփի, էնպես կխփեի որ...

ԿԻՆԸ - /Ամուսնուն/ Տեսա՞ր: Բա՞: Ընկեր Մամյան, խեղճ եղբայրս էլ էսպես կամացուկ խփել է, և դրա համար, ուրեմն, ուզում են բանտարկել...

ԴԱՏԱՎՈՐ - Դե, դա չեղավ, եթե ամեն խփելու համար մարդ բանտարկեն, ո՞ւր կգնա...

ԿԻՆԸ - /Ամուսնուն/ Տեսա՞ր: Իսկ էս ամուսինս էլ, թե չէ՝ բան դուրս չի գա... Իսկ ես ասում եմ՝ դատավորից է կախված, ճի՞շտ է, օրինակ, դուք, ընկեր Մամյան, եթե ձեզ շատ-շատ խնդրեինք, չէի՞ք ազատի եղբորս... Եթե... ինչ ուզեիք՝ «չէ» չլիներ…

ԴԱՏԱՎՈՐ - Ձեզ նման չքնաղ տիկնոջ համար ինչե՛ր չէի անի...

ՏՂԱՄԱՐԴԸ – Վա՛յ, /կնոջը/ լսիր, դուք էս ինչե՞ր եք անում...

ԿԻՆԸ – Սո՛ւսս, եղբորս համար է: Սո՛ւսս: Դու գնա մի շիշ էլ բեր: Անճարակ: Ընկեր Մամյան, տղամարդու խո՞սք... Ինձ համար կանեի՞ք…

ԴԱՏԱՎՈՐ – Տը-տղամարդու խոսք...

ԿԻՆԸ - Դե ուրեմն փրկեք եղբորս, ընկեր Մամյան, վաղը հենց եղբորս դատն է: Փրկեք…

ԴԱՏԱՎՈՐ - Ե՞ս, ես ինչպե՞ս փրկեմ...

ԿԻՆԸ - Հենց այնտեղ, ուր դուք գնում եք, եղբորս դատն է…

ԴԱՏԱՎՈՐ - /Զարմացած/ Բայց ես ի՞նչ կապ ունեմ, տիկին:

ԿԻՆԸ - Ինչպե՞ս թե, դուք Սպիտակ չե՞ք գնում:

ԴԱՏԱՎՈՐ - Այո, Սպիտակ եմ գնում:

ԿԻՆԸ– Չե՞ք դատելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԴԱՏԱՎՈՐ - Դատելու եմ:

ԿԻՆԸ– Ուրեմն իմացեք, որ հենց եղբորս եք դատելու: Ծերուն Տիրունյանը եղբայրս է, ազատեք նրան, հա՞, խոսք տվեցիք, չէ, չէ, խոսք տվեցիք, ասացիք տղամարդու խոսք... չէ՞... Մամյան, սիրելիս, մենք էլ մեր կողմից... Ոնց որ կարգն է... հա՞… հա՞…

ԴԱՏԱՎՈՐ - Սպասեցեք, ի՞նչ եք ասում, ի՞նչ դատ... Ես ֆուտբոլի խաղի եմ գնում…

ՏՂԱՄԱՐԴԸ - /Հանկարծ քրքջում է/:

ԿԻՆԸ - Ի՞նչ ֆուտբոլ, ինչպե՞ս թե ֆուտբոլի, դուք, ինչ է, ծաղրո՞ւմ եք մեզ: Բա դուք չասացի՞ք դատավոր եք:

ԴԱՏԱՎՈՐ – Է՛, հա, դատավոր եմ, բայց ֆուտբոլի դատավոր եմ, ի՞նչ եք ուզում ինձանից, ահա սուլիչը... Այ քեզ բա՛ն... փաստաթո՞ւղթ ցույց տամ:

ԿԻՆԸ - Ֆուտբոլի՞... /հանկարծ հիստերիկորեն ծիծաղում է/ ֆուտբոլի... Հա, հա, հա, դատավոր… ինչ էլ ծախսեր արինք, տեր աստված, «Հոբելյանական», մուրա՛զ.

ՏՂԱՄԱՐԴԸ - /Տեղից բարձրանալով, կոպտորեն/ Լսիր, է՛յ, դու էդ ի՞նչ էիր ասում կնոջս, հը՞… անուշի՛կ տիկին, քիթ ու մռութդ կջարդեմ...

ԿԻՆԸ - Բա, բա, անամոթի մեկը... Հլա դրան նայիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՄԵՆԱՄԱՐՏ

Սովորական սենյակ: Թախտ, սեղան, աթոռներ: Մայրը նստած է թախտին, գուլպա է գործում, կինը՝ ձեռքը ճակատին նստած է սեղանի մոտ, ներս է մտնում ամուսինը:

ԱՄՈՒՍԻՆԸ -/ Լավ տրամադրությամբ/ Բարև ձեզ: Սա՞ ինչ բան է, ինչո՞ւ չեք դիմավորում տան աշխատավորին: Ինչո՞ւ ողջույնի քայլերգ չի հնչում և ինչու հրթիռներ չեն սլանում երկինք, հը՞... հը՞…

/Սպասում է ծիծաղի, բայց ոչ ոք չի ծիծաղում: Ասում է հանկարծ կոտրված/

Հը՞, էլի սև կատու է անցել ձեր արանքով, հա՞... պատերազմական վիճակ է… զոհերն եք հաշվում... Մարդ եք, էլի, ի՞նչ եք ուզում ինձանից: Մի՞թե ես իրավունք չունեմ աշխատանքից հետո մի քիչ հանգստանալու, մի կտոր հալալ հաց ուտելու…

/Ոչ մի ձայն/:

Ի՞նչ է պատահել, մայրիկ ջան, ինչի՞ց ես նեղացել, ասա, լսում եմ...

ՄԱՅՐԸ - Ես էս տանը վաղուց խոսելու իրավունք չունեմ, նրան հարցրու...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ի՞նչ է պատահել, Աստղիկ...

ԿԻՆԸ - Ոչինչ էլ չի պատահել, Աշոտ, ոչինչ, ոչինչ չի պատահել...

ԱՄՈՒՍԻՆԸ - Լավ: Այսպես ոչինչ չի ստացվի: Ստիպված ձեզ էլ եմ հարցաքննելու հանցագործների նման: Ձեզանից մեկնումեկը թող մնա, մյուսը գնա հարևան սենյակը: Ես ձայն կտամ: Դե շուտ, ո՞ւմ եմ ասում:

/Լուռ հեռանում է կինը/:

ՄԱՅՐԸ – Է՛, բան էլ չի եղել, տղա ջան:

ԱՄՈՒՍԻՆԸ - Այ մայրիկ ջան, եթե չի եղել, էլ ինչի՞ համար է այս ամբողջ պատմությունը:

ՄԱՅՐԸ - Դե լավ, ասա, տղա ջան, ես քեզ վա՞տ եմ պահել, մեծացրել, դաստիարակել:

ԱՄՈՒՍԻՆԸ - Դա ինչ հարց է, մայրիկ, դու արել ես այն, ինչ երևի ոչ մի մայր չէր կարողանա անել: Ինձ նման տղա դաստիարակելը հերոսություն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Մի ծռմռվի: Ես քեզ իսկապես լավ եմ պահել:

ԱՄՈՒՍԻՆԸ - Դրանում ոչ մի կասկած, մայրիկ:

ՄԱՅՐԸ - Իսկ հիմա ինչո՞ւ է Աստղիկին թվում, թե ես երեխաներին վատ եմ դաստիարակում:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ինչպես կարող ես այդպես մտածել...

ՄԱՅՐԸ - Ինքն է այդպես մտածում: Ես համբուրում եմ երեխային, ինքը նեղանում է վրաս: Իսկ ինքն ամբողջ օրը չըմփ հա չըմփ պաչպչում է հորդ ներկայությամբ: Իբրև ինչ: Երեսուն տարի ես սրբիչը կախել եմ պատուհանի կողքի մեխից, դու հո գիտես: Այսօր առավոտ տեսնեմ վերցրել լվացարանի մոտ է կախել…

ԱՄՈՒՍԻՆԸ - Բայց դրանում ի՞նչ կա:

ՄԱՅՐԸ - Շատ բան կա: Ամեն ինչ դրանից է սկսվում: Իմ եփած ճաշերն էլ արդեն դուր չեն գալիս, շատ յուղոտ ես անում, մայրիկ, ասում է: Երեխաների համար ինքն առանձին է եփում: Մի բան էլ որ ասում եմ, կիտում է հոնքերը, ժամերով չի խոսում... Ինչո՞ւ, ես մայր չե՞մ, իրավունք չունե՞մ դիտողություն անելու նրան: Նա իմ զավակը չէ՞, ես նրան չե՞մ սիրում, ինչ է... Որ իր համար նոր վերարկու գնեցիր, ես ասացի՞ ինչու ես գնում, ինչո՞ւ քրոջդ համար էլ նորը չես վերցնում:

ԱՄՈՒՍԻՆԸ - Բայց Նինելի համար անցյալ տարի գնեցինք:

ՄԱՅՐԸ - Դե, ես ի՞նչ իմանամ, Նինելն ասում է, որ հիմա մոդան փոխվել է: Ի՞նչ անեմ, տղա ջան, արդեն նշանելու աղջիկ է:

ԱՄՈՒՍԻՆԸ – Ու՛ր էր, ու՛ր էր...

ՄԱՅՐԸ - Հա, այ, դա էլ նրա խոսքերն են... Ձեզ նեղություն է տալիս, հա՞…

ԱՄՈՒՍԻՆԸ - Կատակ արեցի, այ մայրիկ…

ՄԱՅՐԸ - Դա կատակ չի, այդպես եք մտածում... Աշոտ ջան, տղա ջան, հորդ հետ կյանքում մենք շատ դժվարություններ ենք տարել, մինչև մեծացրել ենք ձեզ: Ու ես ի՞նչ իմանամ մեզ ինչքան է մնացել... Մի՞թե մենք իրավունք չունենք այդ մի քանի օրը կամ տարին հանգիստ, անվրդով ապրելու...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ի՞նչ ես ասում, մայրիկ, դուք ամենալավ կյանքին եք արժանի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՅՐԸ - Ես հո չե՞մ ասում, թե մենք թերություն չունենք, շատ անգամ նեղսրտում եմ, ինձ վրա էլ եմ ջղայնանում, Աստղիկը լավ աղջիկ է: Բայց դե մեծացել ենք, հիվանդ ենք, նյարդեր չեն մնացել... մանկացել ենք... բայց դե հիմա սա ենք… մեզ նոր փոխե՞լ կլինի... Ուրեմն մնում է հաշտվել ու համբերել: Ճիշտ չե՞մ ասում, որդի...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ճիշտ ես ասում, մայրիկ... Լավ, դու գնա, ես հիմա կխոսեմ Աստղիկի հետ...

ՄԱՅՐԸ - Հանկարծ չիմանամ, թե կոպտել ես նրան, լսո՞ւմ ես...Նրա նմանը չկա...

ԱՄՈՒՍԻՆԸ - Ի՞նչ իմաստով ես ասում, մայրի՛կ...

ՄԱՅՐԸ– Էէ՛... /Դուրս է գնում/:

/Պաուզա/

ԱՄՈՒՍԻՆԸ – Որ այս կողմից նայում ես, միանգամայն ճիշտ է մայրիկը... Տարօրինակ է, ինչո՞ւ է Աստղիկը սկսել վատ պահել իրեն: Աստղի՛կ: Ներս հրավիրեք մեղադրյալին:

/ Ներս է մտնում Աստղիկը/:

ԿԻՆԸ - Լսում եմ, Աշոտ:

ԱՄՈՒՍԻՆԸ - Ես եմ ուզում լսել քեզ, Աստ ջան: Ի՞նչ է պատահել քեզ հետ…

ԿԻՆԸ - Անկեղծ ասեմ, Աշոտ ջան, չգիտեմ ինչ է պատահել, բայց ես չեմ կարողանում ինձ հանգիստ զգալ այս տանը: Չեմ էլ կարողանում բացատրել, բայց չգիտեմ, թե ինչպես պահեմ ինձ: Ինչ անում եմ, ինձ թվում է կեղծ է, թե իբր խաղում եմ:

ԱՄՈՒՍԻՆԸ - Իսկ դու մի խաղա:

ԿԻՆԸ – Չէ, լուրջ եմ ասում: Դե, տես, երբ դու աշխատանքի ես գնում, ես եմ ուզում քեզ համար նախաճաշ պատրաստել: Բայց մայրիկը վիրավորվում է. ասում է՝ սա ի՞նչ բան է, ամբողջ կյանքում ես եմ նրա նախաճաշը պատրաստել: Չեմ պատրաստում, ասում է կինն ինքը պետք է ճանապարհի իր ամուսնուն: Բա ես առանց նախաճաշի կթողնեի՞ իմ Գևորգին:

ԱՄՈՒՍԻՆԸ – Է՛, երկուսդ էլ պատրաստեք...

ԿԻՆԸ - Մի ծիծաղիր, մարդ եմ, խոհանոցում աշխատելիս երգում եմ մեկ-մեկ, նույնիսկ չզգալով: Մեկ էլ լսում եմ, որ սենյակում մայրիկն ասում է Նինելին.

- էդ աղջիկն էլ չի լրջանում, ամբողջ օրը ձենը գլուխն է գցում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

Լռում եմ: Չեմ երգում այլևս... դրանից էլ է նեղանում.

- Հը, ասում է, մտքումդ ի՞նչ կա, որ ձայնդ չի լսվում...

ԱՄՈՒՍԻՆԸ -Լավ, բայց ինչո՞ւ ես նեղացել, երբ համբուրել է մեր աղջկան:

ԿԻՆԸ - Որովհետև կեղտոտ ձեռքերով հաց էր ուտում, ես նկատողություն արեցի երեխային, իսկ ինքը սկսեց համբուրել ու վեր-վեր թռցնել:

ԱՄՈՒՍԻՆԸ – Հը՛մ...

ԿԻՆԸ - Քույրդ քննությունից կտրվել էր, լաց էր լինում, գրկեցի, մխիթարեցի, ասում եմ, դե ոչինչ, մյուս տարի կհանձնես, մայրիկն ասում է.

- Իհարկե, դու բարձրագույն ունես, քո շա՞տ պետքն է, որ երեխան կտրվել է:

ԱՄՈՒՍԻՆԸ – Հը՛մ... Իսկ սրբիչի՞ տեղն ինչու ես փոխել:

ԿԻՆԸ - Լավ, Աշոտ ջան, բա ամոթ չէ՞ր, որ մինչև հիմա սրբիչը մեխից էր կախված: Կախիչ եմ գնել, կպցրել լվացարանի մոտ, վա՞տ եմ արել...

ԱՄՈՒՍԻՆԸ – Հը՛մ... Չէ՛, ոնց որ այնքան էլ վատ չես արել… Լավ, գնա, Աստղիկ ջան, ես կմտածեմ...

/Կինը դուրս է գնում/:

Ըհը, դե մտածիր, ընկեր քննիչ, մանավանդ որ քաղցած մարդը լավ է մտածում: Ի՞նչ անես: Մայրիկին եմ լսում, մայրիկն է ճիշտ: Աստղիկին եմ լսում, Աստղիկն է ճիշտ... Հաստատ գիտեմ, որ եթե հայրիկին լսեմ, նա բոլորից ճիշտ կլինի: Էլ քրոջս մասին չեմ խոսում, նա հո միշտ ճիշտ է ու ճիշտ…

Բա ի՞նչ անեմ, հանցագործ չէ դիմացս, որ… Բոլորը հարազատներս են…

Արդյունքը՞... Առայժմ նա է, որ ինձ հաց տվող չկա...

Որովհետև երկու կողմն էլ վիճում է, թե ով իրավունք ունի ինձ հաց տալու…

Բա սա կյա՞նք է: Ե՞ս ինչ մեղք եմ գործել, հարգելի ընկերներ... ճիշտ չէ՞... Չէ՛… որ կողքից նայում եմ՝ ես էլ եմ ճիշտ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մի սենյակ: Մեղան, թախտ, սեղանի մոտ տղան ու աղջիկը դաս են պատրաստում: Ներս է մտնում մի մարդ:

ՄԱՐԴԸ - Բարև ձեզ, փոքրիկներ:

ՏՂԱՆ, ԱՂՋԻԿԸ - Բարև ձեզ, քեռի...

ՄԱՐԴԸ - Սա Սահակյանի բնակարանն է, չէ՞...

ԱՂՋԻԿԸ - Այո, քեռի...

ՄԱՐԴԸ - Հայրիկը տանը չէ՞...

ՏՂԱՆ - Հայրիկն ու մայրիկը խանութ են գնացել, քեռի: Դուք նստեք, հիմա կգան…

ՄԱՐԴԸ - Չէ, երևի կուշանան, փոքրիկներ, գուցե ես գնամ...

ՏՂԱՆ - Չէ, ուր որ է կգան, քեռի, կուզե՞ք ձեզ զբաղեցնենք...

ՄԱՐԴԸ - Չէ, խաղացեք ձեզ համար, բալիկներս... ես լրագիր կկարդամ...

/ Տեղափոխվում է սեղանի մոտ, սկսում է կարդալ/:

ԱՂՋԻԿԸ - Էլի խաղանք, Արտակ:

ՏՂԱՆ - Ի՞նչ խաղանք, է՛...

ԱՂՋԻԿԸ - Հիմա եկ հայրիկ-մայրիկ խաղանք...

ՏՂԱՆ - Լավ, բայց հայրիկը դու եղիր:

ԱՂՋԻԿԸ - Չէ, չէ, դու տղա ես, դու էլ հայրիկը եղիր...

ՏՂԱՆ - Դե լավ, բայց իսկականից կգոռամ, հա՞...

/ Մարդը մի կողմ է դնում լրագիրը, բարձրացնում է գլուխը ու զարմացած նայում երեխաներին/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՏՂԱՆ- / Մի քիչ օրորվելով մոտենում է թախտին/ Է՜հ, այնքան եմ հոգնել այսօր, վրաս հալ չկա... ո՞նց ես, անուշիկս...

ԱՂՋԻԿԸ - Լավ եմ, թութուշիկս... էլի գլուխդ տաք է, հա՞...

ՏՂԱՆ - Էհ, դու էլ ի՞նչ ես... տաք է, տաք է... աշխատավարձս տուն չե՞մ բերում... Ահա, վերցրու...

ԱՂՋԻԿԸ - Ախր ես աշխատավարձիդ համար չեմ ասում... Մեղք ես, չէ՞, ինչո՞ւ ես այդքան խմում... գոնե երեխաներիդ մասին մտածիր...

ՏՂԱՆ - Երեխաներիս ցավը տանեմ, նրանց ի՞նչ է եղել... Մեռնեմ դրանց բոյին... Իսկը ինձ են քաշել...

ԱՂՋԻԿԸ - Աստված հեռու տաներ, որ քեզ քաշեին...

ՏՂԱՆ - Ի՞նչ... բա ո՞ւմ պետք է քաշեին... հը՞...

ԱՂՋԻԿԸ - Ոչ, ես այլևս այսպես չեմ կարող… ես այլևս այսպես չեմ կարող...

ՏՂԱՆ - Հը, ի՞նչ է, ի՜նչ է...

ԱՂՋԻԿԸ - Մի՞թե ես իրավունք չունեմ... վայել ապրելու...

ՏՂԱՆ - Մարդավայել...

ԱՂՋԻԿԸ - Հա էլի, վայել ապրելու... Ես ուրախություն չտեսա այս տանը, ես արև չտեսա այս տանը...

ՏՂԱՆ - Դե, ձայնդ, երեխաները կլսեն, ի՞նչ կմտածեն... Եվ վերջապես ես ի՞նչ եմ արել, իրավունք չունե՞մ ընկերներիս հետ մի-մի թաս խմելու... մարդ եմ, չէ՞, աշխատող տղամարդ եմ, չէ՞ ...

ԱՂՋԻԿԸ - Վախ, վախ...

ՏՂԱՆ - Եկել եմ տուն, ուզում եմ հանգստանալ, իսկ դու ձայնդ գլուխդ ես գցել... բարձս ո՞ւր է...

ԱՂՋԻԿԸ - Գլխիդ տակ է, ո՞ւր է...

ՏՂԱՆ -Վայ, հա, է... Մարդու գլխին խե՞լք ես թողնում... /Հորանջում է/ Դե լավ, մի նեղանա, անուշ ջան, դու ինձ սիրում ես, չէ՞, ասա՝ չէ, այսինքն ասա՝ հա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿԸ – Ախր ինչի ես նման…

/ Տղան խռմփացնում է/

Երեխաները քեզնից ի՞նչ սովորեն… Ես էլ կասեմ ամուսին ունեմ… Ա՜խ քո ընկերները… Չէ, Արտակ, հիմա պիտի խռմփացնես…

ՏՂԱՆ – Չէ, չէ, հենց որ մայրիկն ասում է ինչի ես նման, հայրիկն այդտեղ է խռմփացնում…

ԱՂՋԻԿԸ – Չէ, ընկերների վրա է խռմփացնում…

ՏՂԱՆ – Հիմա ես գիտե՞մ, թե դու… Հայրիկը ե՞ս եմ, թե դու…

ԱՂՋԻԿԸ – Դե լավ, հիմա որ գա, կտեսնես…

/ Ներս է մտնում հայրը/:

ՀԱՅՐԸ – Բարև ձեզ, իմ անուշներ ու թութուշներ… Վա՞յ, վա՞յ, աչքերիս չեմ հավատում … Վաղո, դո՞ւ ես… Այ բարով, հազար բարով ես եկել մեր տունը…

ՄԱՐԴԸ – Բարև, բարև, եղբայր…

ՀԱՅՐԸ – Այ քեզ անակնկալ… Հիմա Սաթիկը որ քեզ տեսնի, ոնց կուրախանա…Երևի չճանաչի, չէ, տասներկու տարի է անցել… մի դար…

ՄԱՐԴԸ - Շատ, շատ է անցել…

ՀԱՅՐԸ - Դե նստիր, նստիր, ախպեր ջան, Սաթիկը հիմա կգա…

ՄԱՐԴԸ – Չէ, կներես, բայց ես շտապում եմ, շատ նստեցի այստեղ…

ՀԱՅՐԸ - Ուրեմն վաղո՞ւց ես եկել: Երեխաներ, դուք զբաղեցրե՞լ եք քեռուն, իմ մանկության ընկերն է, է՜…անպիտաններ

ՄԱՐԴԸ - Այո, այո, զբաղեցրել են, շնորհակալություն: Դե, ցտեսություն, հաջողություն քեզ, Սերոբ, Սաթիկին կբարևես:

ՀԱՅՐԸ – Ո՞ւր, ո՞ւր ես գնում, այ մարդ, բա մի չե՞ս հարցնում ո՞նց եմ, ոնց չեմ, բա քեզ չի՞ հետաքրքրում, թե ինչ է դարձել, ոնց է ապրում քո մանկության ընկերը… քո մանկության ընկերուհու հետ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄԱՐԴԸ – Ես գիտեմ, ամեն ինչ գիտեմ, Սերոբ… Աշխատեք ավելի լավ ապրել… հաջողություն…

/ Դեպի ելքն է ուղղվում/ :

ՀԱՅՐԸ – Վայ, որտեղի՞ց գիտես, այ մարդ… Հետաքրքիր է… Խաբում էր, չէ՞…Գնաց…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ

1-ԻՆ ԿԻՆ –Բարև, Մանյա ջան:

2–ՐԴ ԿԻՆ – Բարև Սոնյա ջան:

1-ԻՆ ԿԻՆ – Ո՞նց ես, ջանիկս… ինչ էլ նիհարել ես, էդ ո՞նց ես արել…

2-ՐԴ ԿԻՆ – Դատարկ բան է, Սոնյա ջան, դիետա: Առավոտյան մի բաժակ սուրճ, նախաճաշին մեկ հատ ձու, կեսօրին հարյուր գրամ խաշած միս, տավարի, հա՛, ժամը վեցին հարյուր գրամ շվեյցարական պանիր, իսկ քնելուց առաջ հարյուր գրամ կաթնաշոռ՝ մածունով, և բոլորը առանց հացի, ու կդառնաս…

1-ԻՆ ԿԻՆ – Է՛, կարողանո՞ւմ եմ հետևել ինձ: Ասա, ժամանակ լինո՞ւմ է, ամբողջ օրը Ժորժիկով եմ զբաղված, շատ է հոգնեցնում, շա՛տ…

2–ՐԴ ԿԻՆ – Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել:

1-ԻՆ ԿԻՆ – Հազում էր, պատկերացնո՞ւմ ես: Գիշեր-ցերեկ քուն չունեի: Այս տարի ի՛նչ ձմեռ արեց, ի՛նչ ձմեռ: Ոնց որ Սիբիրում ապրենք: Որ տեսնեիր խեղճ Ժորժիկս ոնց էր հազում, լաց կլինեիր:

2-ՐԴ ԿԻՆ - Բժշկի տանեիր, Սոնյա ջան:

1-ԻՆ ԿԻՆ – Տանեիր… Ինչ ես ասում, այդպիսի ցրտին կարելի՞ էր միթե նրան դուրս բերել տնից: Տուն եմ հրավիրել՝ էլ պրոֆեսորներ, էլ դոցենտներ, նույնիսկ հեռագրով ակադեմիկոս Զուլցմանի կարծիքը հարցրեցի:

2-ՐԴ ԿԻՆ - Ուրեմն այդքան լո՞ւրջ էր:

1-ԻՆ ԿԻՆ – Լուրջն էլ խո՞սք է, քանդվեցինք, որ տեսնեիր՝ պառկել էր տաքության մեջ, աչքերը տխուր-տխուր ինձ էր հառել, աչքերը սև, խոշոր: Սիրտս կտրատվում էր: Ավելի լավ էր ես հիվանդանայի, Ժորժիկ ջան, ասում եմ, միայն թե չտեսնեի քո տանջանքը:

2-ՐԴ ԿԻՆ – Հա, հա, մեծին ինչ ուզում է լինի, միայն փոքրը չհիվանդանա: Որ անօգնական քեզ են նայում…

1-ԻՆ ԿԻՆ – Փառք աստծո, անցավ: Հիմա տես ոնց է խաղում քո Մերիի հետ: /Երկուսն էլ հիացած նայում են մի կողմ/: Քո Մերին ինչ լավ մեծացել է, Մանյա ջան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

2-ՐԴ ԿԻՆ – Ամա՛ն, աչքով չտաս, Սոնյա ջան, կրակի կտոր է, կրակի կտոր: Տեղում մի րոպե հանգիստ չի մնում՝ մեկ այս կողմ է թռչում, մեկ այն կողմ: Շատ չարաճճին է: Դե ինչ անես, երես ենք տալիս, այդ մեկն է , ես սիրում եմ՝ տալիս եմ Կարոյին, Կարոն սիրում է՝ տալիս է ինձ: Այնքան կապված է ինձ հետ, գրկիցս չի իջնում, գիշերները մեկ էլ տեսար վեր կացավ եկավ մտավ իմ անկողինը:

1-ԻՆ ԿԻՆ – Է՛, ինչքան էլ չարչարեն, առանց դրանց կյանքը ոչ մի իմաստ չունի: Տունդ լցնում են, տունդ…

2-ՐԴ ԿԻՆ – Հա, հա, Սոնյա ջան, էլ մի ասա, ես չեմ պատկերացնում, թե ինչ կանեի առանց Մերիի:

1-ԻՆ ԿԻՆ – Զարմանալի բան է, այ հիմա որ մոտս չէ, սիրտս թուլանում է, էլ չեմ դիմանում, կանչում եմ…

2-ՐԴ ԿԻՆ – Ես էլ, ես էլ, կանչենք, հերիք է խաղան:

1-ԻՆ ԿԻՆ – Ժորժի՛կ, Ժորժի՛կ, իդի կա մնե…միլիյ…

2-ՐԴ ԿԻՆ – Մերի, սյուդա իդի, մայա խորոշայա… Նո՞ւ, կամու սկազանո…

/Արագորեն հաչոցով ներս են ընկնում երկու շնիկներ/

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՆԱՀԱՆՋ՝ ԵՐԳՈՎ

Բեմը ներկայացնում է շատ սովորական մի սենյակ: Կինը նստած է սեղանի մոտ: Ներս է մտնում ամուսինը:

ԱՄՈՒՍԻՆԸ- Բարի երեկո, հոգյակս:

ԿԻՆԸ-/Հեգնանքով/ Բարի երեկո սիրելիս…

ԱՄՈՒՍԻՆԸ- /Հեգնանքը չզգալով երգում է/ Սիրելի՛ս, քեզ համար… կյանքս չեմ խնայի… Այսօր ի՞նչ ենք ուտելու…

ԿԻՆԸ- Գազ չկա, կտրել են առավոտյան…

ԱՄՈՒՍԻՆԸ- /երգում է/ Առավոտյան արշալույսին յար քեզի եկա երազով… Իսկ ես քեզանից ե՞րբ գազ ուզեցի:

ԿԻՆԸ- /Հեգնելով/ Հա, հա, հա, շատ սրամիտ էր, եթե գազ չկա, սիրելի ամուսին, ճաշ էլ չկա արդեն…

ԱՄՈՒՍԻՆ- /Երգում է/ Արդեն մութն ընկել է, ճամփիդ կսպասեմ, տեսքիդ կարոտել եմ, քո տեսքին մեռնեմ… Է՛, լավ, չգիտեի՞ր, որ աշխատանքից գալու եմ, մի ինչ որ բան հնարեիր…

ԿԻՆԸ- Դրա համար հարկավոր է, որ մարդ տրամադրություն ունենա, ուրախ լինի հոգով: Ուրեմն դու չես տեսնում, հա՞, որ ես քանի օր է տառապում, տանջվում եմ: Ինչո՞ւ մի անգամ չես հարցնում, թե ինչ է եղել քեզ, Մերի ջան, ինչո՞ւ…

ԱՄՈՒՍԻՆԸ-/Երգում է/ Ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ…

ԿԻՆԸ- Դե վերջ տուր այդ հիմար սովորությանը… ամեն մի բառի վրա մի երգ ես սկսում…

ԱՄՈՒՍԻՆԸ- /Երգում է/ Մի երգ գիտեմ ես աննման, հզոր մուրճի թափի նման…

ԿԻՆԸ- Սեղրակ…

ԱՄՈՒՍԻՆԸ- /Լրագիրը մի կողմ է դնում/ Հա ջան:

ԿԻՆԸ- Ասում եմ վերջ տուր, ես քեզ հետ լուրջ խոսակցություն ունեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՄՈՒՍԻՆԸ- Լավ, Մերի ջան, քաղցած փորով ի՞նչ լուրջ խոսակցություն: Մի բան տուր ուտեմ…

ԿԻՆԸ- Կխոսենք, նոր կտամ, էլի…

ԱՄՈՒՍԻՆԸ- /Երգում է/ Էլի երկինքն ամպել է… լավ, լավ: Բայց դա արդեն տնտեսական բլոկադա է: Նույնիսկ հանցագործներին մահապատժից առաջ կերակրում են…

ԿԻՆԸ- Սեղրակ

ԱՄՈՒՍԻՆԸ- Հա ջան: Ասա տեսնեմ , ի՞նչ ես ասում…

ԿԻՆԸ- Ի՞նչ ես մտածում:

ԱՄՈՒՍԻՆԸ- Ինչի՞ մասին…

ԿԻՆԸ- Ծովափի…

ԱՄՈՒՍԻՆԸ- Գուցե սխա՞լ լսեցի: Ծովա՞փ: Բայց չէ՞ որ անցյալ տարի ասացիր՝ սա վերջին անգամը կլինի: Ասացի՞ր:

ԿԻՆԸ- Ասացի: Բայց իմ խոսքը Սոչիի մասին էր: Իսկ այս տարի կգնանք Յալթա:

ԱՄՈՒՍԻՆԸ- Բա Ապարա՞նը:

ԿԻՆԸ- Ես Ապարան չեմ ուզում:

ԱՄՈՒՍԻՆԸ- Բա Դիլիջա՞նը:

ԿԻՆԸ- Ես Դիլիջան չեմ ուզում:

ԱՄՈՒՍԻՆԸ- Բա Գեղամի՞կը:

ԿԻՆԸ- Ես Գեղամիկ չեմ ուզում…

ԱՄՈՒՍԻՆԸ- Ո՞նց թե…

ԿԻՆԸ- Հա, հա, չեմ ուզում:

ԱՄՈՒՍԻՆԸ- Քեզ ի՞նչ պատահեց, այ Մերի, մեր տղային էլ մոռացա՞ր: Մեր Գեղամիկը… Ախր նա քննություններ է տալու, մեկնումեկը պե՞տք է մնա նրա մոտ, կերակրի, հագցնի նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ –Իհարկե, կերակրի, հագցնի…իմ գործը միայն դա է, ինձ հանգստություն չկա, ես մարդ չեմ, ես մեքենա եմ: Ամբողջ օրը եփիր, թափիր, ավլիր, լվա, վազիր շուկա, թռիր խանութ, մազերդ հարդարիր, դերձակուհու մոտ վազիր, հագուստներդ մաքրման տուր: Իհարկե, ես մարդ չեմ, դու մոռանում ես, որ ինձ էլ է մայր բերել…

ԱՄՈՒՍԻՆԸ –Ո՞վ է ասում չի բերել… Ա՜խ, բա դա մոռանալո՞ւ բան է: Այսինքն, ի՞նչ ես ուզում, Մերի ջան, գնա, գնա, ուր ուզում ես: Խնդրեմ, Յալթա գնա, որ…որ ծովն ուզում ես գնա… Ես կմնամ, այո, ես կմնամ…

ԿԻՆԸ – Իհարկե, ես գնամ, որ դու այստեղ ազատ զգաս քեզ, լավ զգաս, իհարկե…

ԱՄՈՒՍԻՆԸ – Ա՛յ կնիկ, ես քո լավն եմ ուզում, ախր: Դե լավ, ուզո՞ւմ ես դու մնա, ես գնամ, հը՞…

ԿԻՆԸ – Իհարկե, ես մնամ, դու գնաս, որ այնտեղ ազատ զգաս քեզ, լավ զգաս… իհարկե, չեմ հասկանում, չեմ հասկանում, էլի…

ԱՄՈՒՍԻՆԸ – Սպասիր, ուրեմն քո ամբողջ նպատակն այն է, որ ես որտեղ լինեմ, վա՞տ զգամ ինձ…

ԿԻՆԸ – Չէ՛, որ ես լավ զգամ ինձ…

ԱՄՈՒՍԻՆԸ –Ուրեմն, ես վատ զգամ, որ դու լա՞վ զգաս…

ԿԻՆԸ – Դե դու էլ ինչ ես՝ զգում, զգաս, զգամ: Իմացիր, որ ես ոչ մեկից ետ մնացողը չեմ: Եթե Մարան, Լյալյան, Միմին ծովափ են գնում, ուրեմն, որ մեռնեմ, ես էլ եմ գնալու: Չգիտեմ, թե քեզ տղամարդ ես համարում, մի այնպիսի բան մտածիր, որ համ ես լավ զգամ, համ դու լավ զգաս, համ Գեղամիկը լավ զգա…

ԱՄՈՒՍԻՆԸ – Համ էլ Մարան, Լյալյան, Միմին վատ զգան…

ԿԻՆԸ – Ինչ ուզում ես արա: Ես չգիտեմ…

ԱՄՈՒՍԻՆԸ - /Երգում է տխուր/ Ես չգիտե՜մ, ուր են տանում հեռավոր… Բայց, ախր, ի՞նչ անեմ, որ ես լավ զգամ, դու վատ զգաս, չէ, որ դու լավ զգաս, Մարան, Լյալյան, Միմին…

ԿԻՆԸ – Սեդրակ, ասում եմ վերջ տուր ամեն ինչից երգ սարքելու այդ հիմար սովորությանդ: Ո՞վ ես դու, հո ինքնուս կոմպոզիտոր չե՞ս…

ԱՄՈՒՍԻՆԸ – Ով ես դու, ով եմ ես… չգիտեմ…Օտար ենք մեր իրար, անծանոթ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿԻՆԸ - /Հուսահատ տարածում է ձեռքերը/…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՔԱՂՎԱԾՔԱՄՈԼԸ

ՄԵԿԸ –Ահա գալիս է անիծյալ քաղվածքամոլը… Եվ ուղիղ դեպի ինձ: Ոչ մի փրկություն չկա: Հիմա կսկսվի…

ՄՅՈՒՍԸ – Բարև ձեզ: Ինչպե՞ս եք: Թեև դա սովորություն է: Դելակրուան ասում է. « Մի հարցնի մարդուն , թե նա ինչպես է, քանի դեռ չգիտես, թե ինչպես է»:

ՄԵԿԸ – Բարև, լավ եմ: Եվ, այնուամենայնիվ, համարձակվում եմ հարցնել, թե դո՞ւ ինչպես ես:

ՄՅՈՒՍԸ –«Անվճռականության պահին գործիր արագ և ջանա կատարել առաջին քայլը, թեկուզ և ավելորդ լինի այդ քայլը»- մի առիթով ասել է Տոլստոյը: Լավ է, չէ՞: Ես ձեզ հո չխանգարեցի՞: Ինչի՞ մասին էիք մտածում մինչև իմ գալը:

ՄԵԿԸ – Տարբեր բաների մասին. մարդու մասին, աշխատանքի նկատմամբ նրա վերաբերմունքի մասին:

ՄՅՈՒՍԸ – Աշխատանքի նկատմամբ նրա վերաբերմունքի՞… ավելի լավ չէիք կարող ասել, քան ասել է Ստենդալը. «Եկեք աշխատենք, որովհետև աշխատանքը հաճույքի հայրն է»: Այսինքն, Պիսարևն էլ մի առիթով վատ չի ասել. «Եթե բոլոր մարդիկ աշխատեին, բոլորն էլ հարուստ ու երջանիկ կլինեին»:

ՄԵԿԸ – Այո, բայց երջանկությունը ևս հարաբերական հասկացություն է:

ՄՅՈՒՍԸ – Օ՜, այդ առիթով հիանալի է ասել Սպենսերը. « Եթե համեմատեք գյուղացու և փիլիսոփայի օդային դղյակները, ապա դրանց ճարտարապետական կառուցվածքը միանգամայն տարբեր կլինի»:

ՄԵԿԸ - Սպենսե՞րը: Ասում են թե նա և նկարիչ Գիբոնը մտերիմ ընկերներ են եղել:

ՄՅՈՒՍԸ – «Իսկական ընկերը դժբախտության ժամանակ է իմացվում,- ասել է մի առիթով Եզովպոսը: Հա, հա, իսկ մի բոլորովին ուրիշ առիթով Անաքսարսիսն ասել է. «Ավելի լավ է մի մեծարժեք ընկեր ունենաս, քան շատ էժանագին ընկերներ»:

ՄԵԿԸ –Ավելի լավ է մարդ առողջ լինի, քան հիվանդ:

ՄՅԻՍԸ - Ինչպե՞ս: Ո՞վ է ասել:

ՄԵԿԸ – Ես եմ ասում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՄՅՈՒՍԸ – Ի՜նչ եք ասում: Հետաքրքիր միտք է: Բայց կարծում եմ, որ ձեզանից առաջ ինչ որ մի առիթով մեկ ուրիշն արդեն ասած կլինի:

ՄԵԿԸ – Այո, իմ հարևան Մակիչն ասել է. « Ավելի լավ է մարդ կուշտ լինի, քան քաղցած»: Կարծեմ սկզբունքային տարբերություն չկա:

ՄՅՈՒՍԸ – Չէ, սկզբունքի մասին Գյոթեն է լավ ասել մի առիթով. «Անսկզբունք գործունեությունը սնանկացման կհասցնի անպայման»:

ՄԵԿԸ – Իսկ մի ուրիշ առիթով ոչի՞նչ չի ասել:

ՄՅՈՒՍԸ – Ինչո՞ւ չի ասել: Նա ամեն առիթով մի բան ասել է:

ՄԵԿԸ – Իսկ դո՞ւ…

ՄՅՈՒՍԸ - Ես ի՞նչ…

ՄԵԿԸ – Այ, դու անընդհատ ասում ես՝ Գյոթեն ասել է, Պավլովն ասել է, Սաադին ասել է, Միչուրինն ասել է… Իսկ դո՞ւ ինչ ես ասել, դո՛ւ, կյանքումդ որևէ ինքնուրույն բան ասե՞լ ես:
ՄՅՈՒՍԸ – Ի՞նչ առիթով:

ՄԵԿԸ – Մի որևէ առիթով…

ՄՅՈՒՍԸ – Հետաքիքրիր է. Ինչո՞ւ չեմ ասել… մի առիթով, օրինակ, ասել եմ, թե «Ես միշտ ավելի հեռուն եմ տեսել, քանի որ կանգնած եմ եղել հսկաների ուսերին»… Ասել է Նյուտոնը:

ՄԵԿԸ – Իսկ Էպիկտետն ի՞նչ է ասել

ՄՅՈՒՍԸ - /Բացում է ծոցատետրը/ Ո՞վ…

ՄԵԿԸ – Էպիկտետը…

ՄՅՈՒՍԸ - Է՞, Էսքիլես… Էվրիպիդես, Էրազմ, Էլոյան… իսկ դա ո՞վ է:

ՄԵԿԸ – Հռոմեացի փիլիսոփա…

ՄՅՈՒՍԸ – Հա, որ փիլիսոփա է, անպայման մի բան ասած լկինի… Անհնարին է, որ ասած չլինի… այդ ո՞նց է, որ ինձ մոտ չկա… Իսկ ի՞նչ է ասել…

ՄԵԿԸ – Երբ պարծենկոտ մի ջահել ասել է, թե ինքը խելոք է, որովհետև շատ փիլիսոփաների է ճանաչում, Էպիկտետն ասել է.

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

«Ես շատ հարուստ ծանոթներ ունեմ և այնուամենայնիվ հարուստ չեմ»:

ՄՅՈՒՍԸ – Հետաքրքիր է, իսկ ի՞նչ առիթով է ասել:

ՄԵԿԸ – Երևի այսպիսի առիթով…

ՄՅՈՒՍԸ - Հա՞, դե կներեք, գնամ, գնամ գրքերը փորփրեմ գտնեմ: «Ով որ փնտրի, նա կգտնի», - ասել է մի առիթով Խնկո-Ապերը:

ՄԵԿԸ – Այ քեզ կրակ… Այստեղ են ասել՝ սապատավորին գերեզմանը կուղղի:

ՄՅՈՒՍԸ - /Ետ է դառնալով/ Ո՞վ է ասել…

ՄԵԿԸ - / Բղավելով/ Ես եմ ասում: Եվ վերջ: Ոչ մի խոսք: Հեռացիր, թե չէ կխեղդեմ…

ՄՅՈՒՍԸ – Կգնամ… Բայց շատ եք սիրում քաղվածքներով խոսել:

ՄԵԿԸ - Ե՞ս… /ուշակորույս ընկնում է ցած/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՐՏԵՂԻՑ Է ՍՈՎՈՐԵԼ

Բեմը ներկայացնում է փոքրիկ մի սենյակ: Ամուսինը լրագիր է կարդում՝ ընկղմված բազկաթոռի մեջ: Կինը սեղանի կողքին նստած ասեղնագործում է:

ԿԻՆԸ – Գևորգ, ես քեզ հետ լուրջ խոսակցություն ունեմ:

ԳԵՎՈՐԳ - /Առանց գլուխը բարձրացնելու/ Անցեք մի քանի օր հետո:

ԿԻՆԸ – Չէ, առանց կատակի, հարցն ավելի լուրջ է, քան դու պատկերացնում ես:

ԳԵՎՈՐԳ – Լսիր, Իդա, դու չե՞ս զգում, որ քո բոլոր լուրջ մտքերը ծագում են իմ լրագիր կարդալու ժամանակ:

ԿԻՆԸ – Որովհետև տուն ես գալիս թե չէ, անմիջապես կամ լրագիր ես վերցնում ձեռքդ, կամ էլ մեխվում հեռուստացույցի առաջ:

ԳԵՎՈՐԳ – Շնորհավորում եմ, հայոց լեզվի ուսուցչուհու համար բավականին նուրբ համադասական նախադասություններ ես արտասանում:

ԿԻՆԸ – Դու կատակում ես, իսկ մեր Արայիկը սկսել է ստել:

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ…/ Լրագիրը մի կողմ է դնում/:

ԿԻՆԸ – Հիմա տեսնո՞ւմ ես, որ լուրջ հարց է:

ԳԵՎՈՐԳ – Ասում ես, սկսել է ստե՞լ… ինչի՞ց եզրակացրիր:

ԿԻՆԸ – Եզրակացներու ի՞նչ կա: Դասերից հետո երկու ժամ ուշ եկավ տուն: Հարցնում եմ, թե ի՞նչ է պատահել: Ասում է՝ պիոներական հավաք էր: Իսկ հետո պարզում եմ, որ ոչ մի հավաք էլ չի եղել: Երեխաները պարզապես գնացել են կինո:

ԳԵՎՈՐԳ Ա՛յ քեզ բան: Իսկ ինչո՞ւ ազնվորեն չի ասել: Մի՞թե մենք նրան կզրկեինք կինոյից:

ԿԻՆԸ – Հարցն էլ այդ է…

ԳԵՎՈՐԳ - / Հուզված շրջում է սենյակում/ Բայց, բայց նա որտեղի՞ց է ստել սովորել: Հը՞: Փառք աստծո, ո՛չ ես, ո՛չ էլ, եթե չեմ սխալվում՝ դու, երբևէ սուտ չենք խոսում:

ԿԻՆԸ – Իսկ ինչո՞ւ ես ասում՝ եթե չեմ սխալվում: Ես երբևէ որևէ առիթ տվե՞լ եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳԵՎՈՐԳ – Բառից մի կառչիր, խնդրում եմ: Ինձ պարզապես վշտացնում է, որ նա սուտ է խոսել: Եվ որտեղի՞ց է նա ստել սովորել:

ԿԻՆԸ –Ի՞նչ անեմ… Ողղակի ինձ կորցրել եմ:

ԳԵՎՈՐԳ – Չէ, այսպես թողնել չի կարելի: Պետք է ինչ-որ բան մտածել:

ԿԻՆԸ – Ի՞նչ անենք, ի՞նչ անենք…

ԳԵՎՈՐԳ – Դա՛, գիտե՞ս ինչ անենք, չէ՛, հարմար չէ…

/Կիսաբաց դռնից երևում է Արայիկի գլուխը/

ՏՂԱՆ – Հայրիկ, հեռախոսով քեզ են ուզում, ի՞նչ ասեմ:

ԳԵՎՈՐԳ - /Բարկացած/ Ասա, տանը չեմ…

ՏՂԱՆ – Լավ:

ԳԵՎՈՐԳ – Այ քեզ պատմությո՛ւն…որտեղի՞ց է այդ տղան ստել սովորել, հը՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

ԳՐԵԹԵ ԸՍՏ ԿՌԻԼՈՎԻ

Բեմում կանգնած է մի աղջիկ, նրան է մոտենում տարեց պրոֆեսորը:

ՊՐՈՖ. – Բարև, Սեդա:

ԱՂՋԻԿ – Բարև ձեզ, ընկեր պրոֆեսորի պաշտոնակատար:

ՊՐՈՖ. – Ի՞նչ կարիք կա այդպես պաշտոնական…

ԱՂՋԻԿ – Բարև ձեզ, Աշոտ Կարպիչ:

ՊՐՈՖ.- Այդպես…Ի դեպ, ես քեզանից դժգոհ եմ, Սեդա:

ԱՂՋԻԿ – Ինչո՞ւ, ի՞նչ եմ արել:

ՊՐՈՖ. – Ուսուցչանոցում պատահաբար տեսա, որ հայերենի քո քառորդը «չորս» է:

ԱՂՋԻԿ – Ճիշտ է, Աշոտ Կարպիչ, ես այս քառորդին անպայման կաշխատեմ «հինգ» դարձնել:

ՊՐՈՖ. – Սպասիր, իմ ինչի՞ն է պետք հայերենից քո «հինգը»: Դու դաշնակահարուհի՞ ես դառնալու, թե՞ հայոց լեզվի դասատու: Միայն և միայն դաշնամուր պարապելու, քո ամբողջ ուշադրությունն ու ժամանակը միայն դաշնամուրին նվիրելու փոխարեն, դու, ինչպես են ասում, հա՛, հոլովներ ես կրկնում:

ԱՂՋԻԿ – Բա հայերենը…

ՊՐՈՖ. – Գիտեմ, գիտեմ… Բայց այնտեղ մի երեքն էլ բավական է, դու մտածիր դաշնամուրից քո ստացած «չորսը» «հինգ» դարձնելու մասին: Հասկանալի՞ է: Ի վերջո քո ինչի՞ն են պետք այդ… պատմությունը, մաթեմատիկան, հայերենը, քիմիան… Ի՞նչ է, բեմ ես բարձրանալու և այն… այն Մենդելեևի աղյուսա՞կն արտասանես: Դաշնամուր, ահա քո գործն ու կոչումը…

ԱՂՋԻԿ – / Ընկճված/ Հասկանալի է…

ՊՐՈՖ. – Այդպես… Ցտեսություն…

/ Պրոֆեսորը դուրս է գնում, ներս է մտնում մի ուսուցչուհի/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՈՒՍՈՒՑԻՉ – Բարև, Սեդա:

ԱՂՋԻԿ – Բարև ձեզ, ընկեր Երանոսյան:

ՈՒՍՈՒՑԻՉ – Սեդա, իմիջիայլոց, ես քեզ հետ լուրջ խոսելիք ունեմ:

ԱՂՋԻԿ – Խնդրեմ, ընկեր Երանոսյան:

ՈՒՍՈՒՑԻՉ – Դու չե՞ս զգում, որ քո կարողությունների չափով չես զբաղվում հանրակրթական առարկաներով: Ես սա որպես դասղեկ եմ ասում: Մի քանի օր առաջ դասատուները խոսում էին, որ դու ինչպես հարկն է չես պարապում, մատների արանքով ես նայում հանրակրթական առարկաներին: Ես ինքս քեզ «չորս» դրեցի, բայց դու էլ պետք է հասկանաս և խոստովանես, որ «չորսի» չգիտես:

ԱՂՋԻԿ – Ընկեր Երանոսյան, ախր դուք գիտեք, որ մասնագիտական առարկաս, դաշնամուրը, շատ ժամանակ է…

ՈՒՍՈՒՑԻՉ – Ահա, սկսվեց… դաշնամուր, դաշնամուր… Իսկ ո՞ւմ են պետք կիսագրագետ երաժիշտները, ասացեք խնդրեմ, առանց այդ էլ նրանց թիվը քիչ չէ: Իսկ եթե կոնսերվատորիա չընդունվեցի՞ր: Ի՞նչ պետք է անես: Չգիտեմ, դաշնամուրի մասին մեկ էլ չլսեմ: Ոչ մի խոսք: Ես քեզ զգուշացնում եմ, պետք է սովորես… Հասկանալի է՞ :

ԱՂՋԻԿ – Հասկանալի է:

ՈՒՍՈՒՑԻՉ – Այդպե՜ս… Ցտեսություն…

/Դուրս է գնում/:

ԱՂՋԻԿ - /Մտատանջության մեջ/ Հաս-կա-նա-լի է: Բայց ի՞նչն է հասկանալի: Ի՞նչ անեմ ես: Դաշնամուրից «հինգ» եմ ստանում, հանրակրթականի դասատուներն են նեղանում: Նրանց առարկաներից եմ «հինգ» ստանում, պրոֆեսորն է խռովում: Դիտմամբ բոլորից էլ «չորս» եմ ստանում, դարձյալ դժգոհ են: Ի՞նչ անեմ ես: Ի՞նչ անեմ ես…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Կոմպոզիտորը նստած է դաշնամուրի առջև: Նրան է մոտենում թղթակիցը:

ԹՂԹ. – Բարև ձեզ, ընկեր Երազունի:

ԿՈՄՊ. – Բարև, աղջիկս:

ԹՂԹ. – Ընկեր Երազունի, մեր ունկնդիրներն անհանգստացած են ձեր լռությամբ:

ԿՈՄՊ. - Ինչո՞ւ…

ԹՂԹ.- Քանի տարի է, ինչ եթերում չեն հնչում ձեր գործերը, համերգասրահներում չեն կատարվում ձեր ստեղծագործությունները: Կուզեի՞ք ասել, թե ինչն է պատճառը:

ԿՈՄՊ.- Նո՜ւ… խնդրեմ, խնդրեմ, ես պարզապես աշխատում էի:

ԹՂԹ. – Մեր ունկնդիրների հիշողությունից դեռ չի ջնջվել տասնհինգ, այո,, այո, ուղիղ տասնհինգ տարի առաջ գրած ձեր մանկական գողտրիկ «Ծաղիկ» երգը: Դուք հիշո՞ւմ եք այդ երգը:

ԿՈՄՊ. – Նու… իհարկե, հիշում եմ: Լավ երգ էր:

ԹՂԹ. – Այո: Ընկեր Երազունի, այժմ խնդրում եմ մեր ունկնդիրներին պատմեք, թե ինչ նոր գործերի վրա եք աշխատում, ինչպիսի ծրագրեր ու նախագծեր ունեք:

ԿՈՄՊ. – Նու… Խնդրեմ: Ուրեմն, շուտով կավարտեմ իմ նոր օպերան, որը, կարծում եմ երևույթ կլինի մեր երաժշտական կյանքում: Օպերան կկոչվի, նո՜ւ, «Ծաղիկ, ծաղիկ»:

ԹՂԹ. - Դարձյա՞լ «Ծաղիկ»:

ԿՈՄՊ. – Դա՛, բայց դրանք գրեթե ուրիշ ծաղիկներ են: Թեև, դա՜, իմ օպերայի համար հիմք կհանդիսանա իմ այն, նո՜ւ, «Ծաղիկ երգը»:

ԹՂԹ. Հետաքրքիր է:

ԿՈՄՊ.- Բացի այդ, արվեստի վարչությանն եմ հանձնել իմ նոր օպերետը՝ «Ծաղիկ-ծաղիկ-ծաղիկներ» վերնագրով:

ԹՂԹ.- Ծաղիկնե՞ր…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿՈՄՊ. – Նու, դա, ի՞նչ է, դուք ծաղիկներ չե՞ք սիրում:

ԹՂԹ. – Սիրում եմ:

ԿՈՄՊ. – Տեսնում եք: Նու, առիթից օգտվելով, կարող եմ իմ սիրելի ունկնդիրներին ուրախացնել. իբրև ստեղծագործության լեյտմոտիվ ընտրելով ժողովրդի կողմից սիրված իմ ,,Ծաղիկ,, երգը, ես այս տարի կավարտեմ նաև իմ «Ծաղիկներ» սիմֆոնիան, նույն թեմայով կանտատան՝ նվագախմբի և երգչախմբի կատարմամբ, «Ծաղկեփունջ» պարային սյուիտը և մի պոեմ՝ գրված փողի համար:

ԹՂԹ. – Ներեցեք, ինչպե՞ս թե փողի համար: Իսկ մյուսների համար ձեզ չե՞ն վճարելու:

ԿՈՄՊ. – Փողի՞, ի՞նչ փողի: Ախ, դա՛ /ծիծաղում է/, ոչ, ոչ, ես ուզում էի ասել՝ շեփորի համար: Նու, տրուբա, պանյատնո՞…

ԹՂԹ. – Ըհը, այո, շնորհակալություն, ծաղիկներ ձեզ… այսինքն՝ ցտեսություն ձեզ:

ԿՈՄՊ. – Ցտեսություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԿՌԻՎ

Ուստա Վահրամի տունը: Տանն են բոլորը, բացի ուստա Վահրամից: Տիկին Վարդուհին սեղան է պատրաստել: Հարսները օգնում են նրան: Տղաները նարդի են խաղում: Այս ու այն կողմ են գնում թոռները:

ՎԱՐԴՈՒՀԻ – Ի՞նչ եղավ էդ մարդուն:

ԳԵՎՈՐԳ – Ջահել մարդ է, ա՛յ մեր, ի՞նչ իմանաս…

ՎԱՐԴՈՒՀԻ – Դե ձենդ, անլուրջ:

ԷԴԻԿ – Ջառդ գցիր… Մի բաժակ ջուր կտա՞ս, հարս ջան…

ԺԵՆՅԱ – Հիմա, եղբայր:

ԳԵՎՈՐԳ - Էդ ինչի՞ քո կնոջը չես ասում…

ԷԴԻԿ – / Ծիծաղում է/ Շատ եմ ծարավ… /խմում է/ Ապրես, հարս ջան: ԺԵՆՅԱ – Անուշ, եղբայր:

ԳԵՎՈՐԳ – Էդ որտե՞ղ ես հաց կերել:

ԷԴԻԿ – Սովից եմ խմում…Իսկապես՝ ի՞նչ եղավ հայրիկը…

/ Ներս են ընկնում երկու փոքրիկ/:

ՓՈՔՐԻԿՆԵՐ- Պապին եկա՛վ, պապին եկա՛վ, լվացվում է…

/Տղաները թողնում են նարդին, վեր են կենում: Վարդուհին դուրս է գալիս դիմավորելու ամուսնուն, հարսները հացն են դնում սեղանին; Աղմկոտ, երջանիկ տուն է/:

ՎԱՀՐԱՄ – Բարի իրիկուն… /երեխաները փարվել են ոտքերին/ Վայ, ես ձեր ցավը տանեմ, գառնուկներ ջան…/գրպանից կոնֆետ է հանում/ դե, առեք,առեք,վազեք…

ՎԱՐԴՈՒՀԻ – Շատ ուշացար, Վահրամ ջան…

ՎԱՀՐԱՄ – Գործ կար, այ կնիկ, գործ կար…Դե նստեք, ժողովուրդ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

/Տեղավորվում են/: Ուրեմն էսպես…էսօր կանչեց ինձ մեր գործկոմի նախագահը ու ասաց. ուստա Վահրամ, էսպես ու էսպես, հաշվի առնելով ձեր ընտանիքի բազմանդամ վիճակը և էլի շատ ուրիշ բաներ, գործկոմը ձեր ընտանիքին երկու սենյականոց բնակարան է հատկացնում շրջկենտրոնի նորակառույց շենքում, ուզում ես դու գնա, ուզում ես տղաներիցդ մեկին ուղարկիր… մի փոքր բարելավեք ձեր վիճակը: Հը, ասաց, օրդերն էլ տալիս եմ… ում անուն ազգանունը վրան գրեք, նա էլ կստանա: Էդպես ասաց: Ահա օրդերը…

/Գրպանից հանում է, պարզում է օրդերը, ոչ ոք չի վերցնում/:

ՎԱՐԴՈՒՀԻ – Տուր տեսնեմ /վերցնում նայում է/: Իսկ դու չասացի՞ր, որ մենք տասներկու հոգի ենք, երկու սենյականոցի մեջ ինչպե՞ս պետք է տեղավորվենք:

ԼԵՆԱ – Ճիշտ որ, մայրիկ…

ՎԱՀՐԱՄ - /Հեգնում է/ Ներողություն խնդրեց: Ասաց՝ շատ ներողություն, որ դեռ ութ սենյականոց բնակարաններ չենք կառուցում: / Տղաները ծիծաղում են/: Վարդուհի ջան, հենց ես ու դու էլ չպոկվե՞նք գնանք: Հերիք է, էլի, մեծացել ենք, աղմուկը շատ է, հոգսը մեծ է, օր ծերության հանգիստ ապրենք: Հը՞: Ախր դու հիմա շատ ես հոգնում… էն օրն էլ չէի՞ր ասում, թե ձեռքերս ցավում են…

ՎԱՐԴՈՒՀԻ - Ո՞վ է ասել:

ՎԱՀՐԱՄ – Դու չէի՞ր ասում:

ՎԱՐԴՈՒՀԻ – Ե՞րբ:

ՎԱՀՐԱՄ - /Հեգնում է/ Սպասիր մտքիս բլոկնոտի մեջ նայեմ…/ իբր մտածում է/ ուղիղ երեք օր առաջ:

ՎԱՐԴՈՒՀԻ – Է, երեք օր առաջ լավաշ էի թխել, ցավում էին ձեռքերս, չասե՞ի…

ՎԱՀՐԱՄ – Գնացի տեսա, լավ էլ բնակարան է, երկրորդ հարկում: Ջուրը մեջը, էն բանը մեջը, բաղնիքը առանձին, երկու բալկոն…

ՎԱՐԴՈՒՀԻ – Լո՞ւրջ ես ասում:

ՎԱՀՐԱՄ – Ի՞նչը: ՎԱՐԴՈՒՀԻ – Մեր գնալը:

ՎԱՀՐԱՄ – Լուրջ:

ՎԱՐԴՈՒՀԻ - Հետո՞, առանց երեխաների ո՞նց պիտի ապրենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՀՐԱՄ – Հետաքրքիր մարդ ես, Վարդուհի, ես քեզ ասում եմ, գնանք…պրծնենք երեխաներից, հանգստանանք, իսկ դու ասում ես՝ առանց երեխաների ո՞նց պիտի ապրենք: Եղա՞վ:

ՎԱՐԴՈՒՀԻ – Եղավ: Ինքդ էլ կգնաս ու կապրես:

ՎԱՀՐԱՄ - Ե՞ս: Մենա՞կ:

ՎԱՐԴՈՒՀԻ – Դե հանգստանալ ես ուզում, էլ ի՞նչ կա, ինձնից էլ կհանգստանաս:

ՎԱՀՐԱՄ – Դե լավ, էս մի հարցը փակվեց… Նորից եմ հիշեցնում, ա՛յ կին, հետո չփոշմանես՝ երկրորդ հարկ է, ջուրը մեջը…

ՎԱՐԴՈՒՀԻ – Վերջ տուր, Վահրամ, ես հողի վրա ապրելուն սովորած մարդ եմ, երկրորդ հարկում գլուխս կպտտվի:

ՎԱՀՐԱՄ – Լավ, էս մի հարցը փակվեց: Ուրեմն գուցե թե դո՞ւ գնաս, Գևորգ: ԳԵՎՈՐԳ – Ե՞ս, իսկ ինչո՞ւ ես…

ՎԱՀՐԱՄ – Տան մեծ տղան ես: Մեկ: Երեխաներ ունես: Երկու:

ԳԵՎՈՐԳ – Իմ երեխաները ձեզ խանգարո՞ւմ են, հը՞, մամ…

ՎԱՐԴՈՒՀԻ- Ինձ չեն խանգարում:

ԳԵՎՈՐԳ – Ժենյայից դժգո՞հ եք: ՎԱՀՐԱՄ – Ո՞վ…

ԳԵՎՈՐԳ – Բա էլ ինչո՞ւ եք ուզում մեզ տնից հանել…

ՎԱՀՐԱՄ – Տնից չենք հանում, ա՛յ տղա, տուն ենք տալիս: Շենքում է, երկրորդ հարկում…

ԷԴԻԿ – Ջուրը մեջը:

ՎԱՀՐԱՄ – Հա, ջուրը մեջը… Գնացեք ապրեք կուլտուրական կյանքով, ինչպես վայել է, բա ի՞նչ…

ԳԵՎՈՐԳ – Մամ, էս ի՞նչ է ասում:

ՎԱՀՐԱՄ – Մայրիկիդ ինչո՞ւ ես հարցնում, այ բալա, կնոջդ հարցրու…

ԺԵՆՅԱ – Հայրիկ ջան, մենք ձեզ ի՞նչ ենք արել… Մենք շատ գոհ ենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՀՐԱՄ – Աղջիկ ջան, ես ձեզ հո արտասահման չեմ ուղարկում… գործկոմն առաջարկում է երկու սենյականոց…

ՎԱՐԴՈՒՀԻ –Գևորգից ձեռք քաշիր, Վահրամ, նրա երեխաները մեծ են, հետևող է պետք…

ԳԵՎՈՐԳ – Իհարկե…

ԺԵՆՅԱ – Շնորհակալություն, մամ ջան…

ՎԱՀՐԱՄ – Ըհը, էս մի հարցն էլ փակվեց: Էդի՞կ…

ԷԴԻԿ – Ե՞ս…

ՎԱՀՐԱՄ – Դուք…

ԷԴԻԿ – Ես տան փոքրն եմ: Կարգ կա, կանոն կա, հայրիկ, ծնողների մոտ փոքր տղան պիտի մնա: Ճիշտ չի՞, մամ…

ՎԱՐԴՈՒՀԻ – Իհարկե:

ԼԵՆԱ – Երևի ինձ խոսք չի հասնում, հայրիկ, բայց հեքիաթներում էլ է այդպես: Չե՞ք հիշում, միշտ փոքր տղան է ընտանիքով մնում ծնողների մոտ:

ԺԵՆՅԱ – Հետո՞: Հեքիաթներում փոքր եղբայրը միշտ խելոք է լինում, բայց դա չի նշանակում, թե մեծ եղբայրը…

ԳԵՎՈՐԳ – Շատ շնորհակալություն, Ժենյա ջան, դու ինձ փրկեցիր…

ԺԵՆՅԱ - /Շփոթված ծիծաղում է/ Դե լավ, էլի, Գևորգ ջան, ես ուրիշ բան էի ուզում ասել…

ԷԴԻԿ – Չէ, հայրիկ ջան, բան դուրս չի գա: Էնքան բարեկամներ, հարազատներ ու ծանոթներ ունենք, ի՞նչ կասեն, եթե իմանան, որ փոքր որդին… այսինքն ես…

ԳԵՎՈՐԳ – Դե գիտես ինչ, բավական է, Էդիկ տղա…ուրիշ ժամանակ մեծ ու փոքր չես ճանաչում… /հեգնանքով/ Փո՛քր որդին…

ԷԴԻԿ - Ե՞ս… ե՞ս չեմ ճանաչում… բա եղա՞վ, եղբայր, ե՞րբ չեմ ճանաչել:

ԳԵՎՈՐԳ – Հենց հիմա…

ԷԴԻԿ- Հիմա, ի՞նչ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԳԵՎՈՐԳ – Ես խոսում եմ, իսկ դու պատասխանում ես…

ԼԵՆԱ – Մամ ջան, մամ ջան, դու ասա, էլի, բա դա հնարավո՞ր բան է…

ՎԱՐԴՈՒՀԻ – Չէ, Վահրամ, էդիկից ձեռք քաշիր… նրա երեխաները փոքր են,, հետևող է պետք…

ՎԱՀՐԱՄ – Չհասկացա: Գևորգը չի կարող… որովհետև երեխաները մեծ են, էդիկը չի կարող… որովհետև երեխաները փոքր են…

ԳԵՎՈՐԳ – Դե հեր ջան, չհասկանալու ի՞նչ կա…

ԷԴԻԿ – Չէ, իսկապես, այդ օրդերը հո ստիպողական չէ, որպես պատի՞ժ են տալիս, ինչ է…

ՎԱՐԴՈՒՀԻ – Լավ, Վահրամ ջան, տան մեծը դու ես, դու էլ վճռիր…Ո՞վ մնա տանը. Գևորգե՞նք թե Էդիկենք…

ԷԴԻԿ – Ճիշտ է, հայրիկը երբեք չի սխալվի, ավանդներ կան, օրենքներ կան, կարգ կա…

ԳԵՎՈՐԳ – Դեմագոգիա մի սկսիր…

ՎԱՀՐԱՄ – Ուրեմն հարցը էդպես է դրվում, հա՞…Ես պետք է վճռեմ… Ուրեմն ես պետք է վճռեմ… Չէ, ախպեր, դա իմ ուժերից վեր է…

ՎԱՐԴՈՒՀԻ – Տեսա՞ր…

ԷԴԻԿ – Օրդերը ետ տար, հայրիկ, ու ասա այսպես, եթե մեզ նույն շենքի նույն հարկում…

ԺԵՆՅԱ – Նույն աստիճավանդակում…

ԷԴԻԿ – Իհարկե… նույն աստիճավանդակում երեք բնակարան տաք, գուցե թե համաձայնենք:

ՎԱՀՐԱՄ – Կատակը մի կողմ, հիմա իսկապես ի՞նչ անենք, ա՛յ ժողովուրդ: Գուցե վիճակ հանենք, հը՞… Խոսեք, տղերք:

ԳԵՎՈՐԳ – Խնդրեմ, բայց ինձ ընկնի թե չընկնի, ես մայրիկից բաժանվողը չեմ:

ԺԵՆՅԱ – Ես էլ:

ԷԴԻԿ – Ես էլ, քանի որ փոքր որդին եմ…

ԼԵՆԱ – Ես էլ, քանի որ փոքր որդու կին եմ, և մեր երեխաներն էլ փոքր են…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՎԱՐԴՈՒՀԻ – Իմ բալանե՛ր… Չէ՛, մեզ վրա հույս չդնես, Վահրամ…

ՎԱՀՐԱՄ – Դե ես էլ բնակարանի համար օր ծերության հո քեզանից չեմ բաժանվելու, ա՛յ կին. մնում է թոռներից մեկին արագ կարգով ամուսնացնել… Ամոթ է, օրդերը հո ետ չենք տալու…

ԳԵՎՈՐԳ – Ա՛յ քեզ իմաստուն միտք… Ամուսնանալու համար նրանք անմիջապես վիճակ կհանեն: Հաստատ…

ՎԱՐԴՈՒՀԻ – Հաստատ: Կամուսնանան ու էլի չեն բաժանվի… Ես քո ցեղը հո լավ գիտեմ, ուստա Վահրամ…

/Բոլորը ծիծաղում են/

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՍՈՒՏԱՍԱՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՏԱԿՈՒՄ

ՇԵՖ
ԳԱՆԳՐԱՀԵՐ
ԾԵՐՈՒԿ
ՄԵՎՈՒԿ
ՃՈՒՏՈ
ՄԻԱՄԻՏ
ՀԱՃԱԽՈՐԴ
ՎԱՐԻՉ
ԹՂԹԱԿԻՑ

Բեմը ներկայացնում է բունկերային տիպի բետոնապատ մի սենյակ: Պատին փակված են Քաջ Նազարի, Մյունհաուզենի, Սուտլիկ որսկանի, Սուլդիի և Բուլդիի նկարները: Այդ նկարները սկզբում չեն երևում, ծածկված են մի բնանկարով: Սենյակը տեխնիկապես հագեցված է՝ հեռախոսներ, հեռուստացույց, ղեկավարման վահանակ: Սովորական մի գրասեղանի ետևում նստած է Շեֆը՝ սև-սպիտակ վերնաշապիկով, գրում է՝ ստեղծագործական խանդավառության մեջ:

ՇԵՖ - Չլինել թե լինել: Չէ՛, չէ՛, ավելի ճիշտ՝ լինել թե չլինել: Հա, լինել թե չլինել: Հը՞, կարծես թե վատ չէ: Տե՛ր աստված, օգնիր ինձ ստեղծագործական պոռթկման այս պահին: Զգում եմ, որ մեծ գործ եմ գրում: Ահա, գտա. «Լինել թե չլինել, այս է խնդիրը: Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ: Տանե՞լ գոռ բախտի պարսաքարերը և սլաքները, թե զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ և դիմադրելով վերջ տալ բոլորին»: /Արագ-արագ գրում է/: Կարծես թե ստացվում է, հը՞: Նորից կարդամ ու թափով առաջ գնամ, օգնիր, իմ մուսա… «Լինել, թե չլինել, այս է խնդիրը…» Թե՞ գուցե «այս է հիմնական և կարևորագույն խնդիրը», հը՞… չէ, զգում եմ, որ մեծ գործ է ստացվելու… /Դուռը թակում են՝ երկու անգամ արագ, երեք անգամ դանդաղ/:

ՇԵՖ – Ահա, հավաքվում են: Ներս մտեք: «Այս է խնդիրը: Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ…», օ՜հ, որքան դժվար է բանաստեղծություն գրելը…

/ Գանգրահերը ներս է մտնում, նայում է չորս կողմը և հավաստիանալով, որ ուրիշ մարդ չկա, հարցնում է շշուկով/:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ներեցեք, այստե՞ղ են վաճառում վիեննական աթոռներ…

ՇԵՖ – Երբ ժամացույցի զանգերը կխփեն տասներկու անգամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Երկու անգամ երկու հավասար է չորսի:

ՇԵՖ – Ասացեք ճապոնական տրանզիստորի ֆիրմայի անունը…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ո՞ւմ, հա, ի՞նչ էր այդ անտերի անունը: Կնոջ անուն էր: Հա, Սոնյա…

ՇԵՖ - /Ծաղրելով/ Սոնյա… Ոչ թե Սոնյա, այլ Սոնի…ընդհատակայինիս տեսեք: Դե եկ ու սրանց հետ գործունեություն ծավալիր: Նշանաբանն էլ կարգին չգիտի:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Բայց դուք հո ինձ լավ գիտեք, Շեֆ:

ՇԵՖ – Դա ոչ մի նշանակություն չունի: Մեր գործում կոնսպիրացիայի օրենքները խստիվ պետք է պահպանել: Զգուշություն, զգուշություն և դարձյալ զգուշություն, ինչպես իրավացիորեն նշում են նախկին վանեցիները: Ում չէ, չէ, բայց քեզ քաջ հայտնի է, երիտասարդ, թե մենք ինչ դժվարին ժամանակներ ենք ապրում: Ստի հիմքերը սասանվում են: Ասա ինձ, որտե՞ղ են մեր փառապանծ սուտասանների հետնորդները: Որտե՞ղ են Քաջ Նազարի, գերմանացի այն ազնիվ բարոնի, Սուլդիի, Բուլդիի, հանգիստ նրանց ոսկորներին, ժառանգները: Նրանք չկան, նրանք գնալով մանրացան, պառակտվեցին, վերածվեցին մանրիկ ու էժանագին սուտասանների, ինչպես այն թեթևամիտ պատանին , որ ամեն տարի ապրիլի մեկին բռնում է սրա-նրա փեշից ու աչքերը կլորացրած բացականչում. «Վայ, ձեր թաշկինակը ընկավ»: Ահա թե ուր ենք հասել:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Այո, մի կողմից էլ տեղական օրգանների այս անվերջ հալածանքը մեր նկատմամբ: Իմ նյարդերն այլևս չեն դիմանում: Որքա՞ն կարելի է ընդհատակում ապրել: Այդ նշանաբաններից իմ գլուխը ցավում է: «Երկու անգամ երկու հավասար է չորսի»: Ա՜խ այդ բարձրագույն մաթեմատիկական և ինտեգրալ հավասարումները:

ՇԵՖ – Ախր, նույնիսկ այնպիսի մարդիկ են սկսել ճիշտ խոսել, որ կատաղությունից պայթում ես: Առաջ երբ որևէ քաղցր տղա, ասենք՝ ցեխի վարիչ, ավտոմեքենա էր գնում, հարցնում էիր, ասենք.

- Սաքո, ինչո՞վ գնեցիր այդ «Վոլգան»: Չէ՞ որ քո աշխատավարձով ավտոմեքենա գնելու համար, դու պետք է ագռավի չափ ապրեիր, մի երկու հարյուր-երեք հարյուր տարի: - Վիճակախաղի տոմսս շահեց,- ազնվորեն ասում էր Սաքոն: Խնդրեմ, հավատում էիր այդ մարդուն, որովհետև պարզ երևում էր, որ ճիշտ է ասում, այսինքն՝ սուտ է ասում: Իսկ հիմա ի՞նչ, հարցնում ես՝ որտեղի՞ց քեզ ավտո, առանց ամաչելու, երեսիդ ասում է. բա զո՞ւր եմ ցեխ բացել: Եղա՞վ: Եվ խնդրեմ, մի սուտասան էլ շարքից դուրս եկավ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ –Սոսկալի բան է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ - /Նայելով ժամացույցին/ Ուշացան տղաները…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Դժվար է, Շեֆ: Հետևում են, հետապնդում, ամեն մի խաչմերուկում երկու-երեք ճշտախոս են կանգնած, անցնել չի լինում: Մեկն էլ կպել էր պոչիցս. քանի տրանսպորտ եմ փոխել, մինչև կորցրել եմ հետքս… Իսկ այդ ի՞նչ եք գրում, մեր նոր ծրագի՞րն է…

ՇԵՖ – Այո, գրեթե մեր ծրագիրն է, բարեկամս, որ ևս բանաստեղծական ձևի մեջ եմ դրել: Եվ կարծես թե ստացվում է:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - Չե՞ք կարդա, Շեֆ:

ՇԵՖ – Սիրով, սիրով… «Լինել, թե չլինել: Այս է խնդիրը: Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ: Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքնե՞րը, թե զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ և դիմադրելով վերջ տալ բոլորին»:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - Շեքսպի՞ր…

ՇԵՖ – Իհարկե: Բայց սպասիր, նոր մտքեր են գալիս, ահա… «Մեռնել, քուն մտնել, ոչինչ ավելի: Եվ մտածել, թե մի պարզ քնով մենք վերջ ենք տալիս այն սրտացավին և բյուր բնական անձկություններին, որոնց ժառանգն է մեր հեգ մարմինը, մի վախճան է դա՝ հոգով բաղձալի: Մեռնել, ննջել… ննջե՞լ…» Լսիր, այս ինչե՞ր եմ գրում, գլուխս պտտվում է…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Շեքսպի՛ր… Շեքսպի՛ր

ՇԵՖ – Ի՞նչ Շեքսպիր…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ախր դա Համլետի մենախոսությունն է Շեքսպիրի ողբերգությունից:

ՇԵՖ – Չի կարող պատահել, ի՞նչ ես ասում, չե՞ս տեսնում, նոր եմ գրում…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Վայ, ճիշտ եմ ասում, Շեֆ…

ՇԵՖ - Ի՞նչ, ուրեմն դու է՞լ ես սկսել ճիշտ խոսել…

ԳԱՆԳՐԱՀԵՐ - Ո՞վ ասաց ճիշտ եմ ասում, ներողություն, սուտ եմ ասում, սուտ եմ ասում…

ՇԵՖ – Այդպես: Ուրիշ ի՞նչ կա: Զեկուցիր, քանի խորհրդակցության մյուս անդամները չեն հայտնվել: Ինչպե՞ս է մեր գործակից «Ց»-ն: Նրա վերաբերյալ կասկածներ չկա՞ն:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ոչ, Շեֆ, «Ց»-ն լավ քողարկված է, խաբելու համար իսկի բերանը բացելու կարիք չունի: Ձեռքերով է խաբում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ - Ի՞նչ է, կրկեսում աճպարա՞ր է աշխատում:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ոչ, պտուղբանջարեղենի խանութի գործակատար է…

ՇԵՖ – Ուհ, խելոք սրիկա… Լավ է, իսկ ինչպե՞ս է «Բ»-ն, նրա զեկուցագրերն ինձ դուր են գալիս, համարձակ է, նախաձեռնող…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – «Բ»-ն բը-բը-բըռնվեց, Շեֆ:

ՇԵՖ – Ինչպե՞ս թե բռնվեց, գրողը տանի, ես նրա հետ մեծ հույսեր էի կապում: Նա այնպես լավ էր քողարկվել, ո՞վ կմտածեր, որ մթերման լիազորներին էլ կսկսեն բռնել: /Լսվում է դռան թակոցը/ Բացիր դուռը:

/Ներս է մտնում Ծերուկը/

ԾԵՐՈՒԿ - Որտե՞ղ կարող եմ տեսնել ժանյակագործ Առաքելին:

ՇԵՖ – Իսկ մի՞թե հիմա ժանյակագործներ կան:

ԾԵՐՈՒԿ – Երբ գարունը գալիս է, ձյունը հալվում է…

ՇԵՖ – Գուցե դուք նկատի ունեք խաչի վալետը՞:

ԾԵՐՈՒԿ – Ահա իմ բաժինը, որտե՞ղ է ձերը: / Շեֆը գրպանից հանում է խաղաթղթի կեսը, փորձում՝ համընկնո՞ւմ են արդյոք գծերն ու կտրվածքը: Ամեն ինչ լավ է/

ՇԵՖ – Հանվիր, Ծերուկ, ի՞նչ կա դրսում…

ԾԵՐՈՒԿ – Ամեն ինչ հիանալի է, Շեֆ, քաղաքը սուտասաններով լցված է, ճշտախոսներին գնդակահարում են առանց հարցաքննության, քաղաքում ոչ մի վարսավիր չի մնացել, փաստաբանների կոլեգիան փակված է…«Պեպո»-ի դերակատարին կախաղան է սպառնում: Թեև նա հուսահատ գոռում է, թե ինքը իբրև դերասան է ճշմարիտ խոսքեր ասում, թե այդ խոսքերը ոչ թե ինքն է գրել, այլ Սունդուկյանը, բայց նրան լսող չկա… Նրան բաց չեն թողնում և միաժամանակ փնտրում են Սունդուկյանին: Շուտով այստեղ կգան սուտասանները և ձեզ իրենց ձեռքերի վրա դատախազություն կտանեն…

ՇԵՖ – Դատախազությո՞ւն…

ԾԵՐՈՒԿ – Այո, որոշվել է այնտեղ հիմնել ձեր աթոռանիստը…

ՇԵՖ – Լսիր, Ծերուկ, փչիր, բայց չափդ ճանաչիր… Դու ինձ ո՞ւմ տեղն ես դրել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԾԵՐՈՒԿ – Ներեցեք, Շեֆ, խաբում եմ, շնորհավոր ձեր ապրիլի 1-ը:

ՇԵՖ – Խաբո՛ւմ է… Սիրելիս, այո, այսօր ապրիլի մեկն է: Այսպես ասած՝ ավանդական խաբելու օրը: Բոլորը կարող են խաբել այսօր: Այո, բոլորը, բացի քեզանից, ինձանից և էլի մի քանիսից, հասկացա՞ր: Որովհետև մենք ամբողջ տարին ենք խաբում, լսո՞ւմ ես, ով դու ճշմարտախոս Պետրոս առաքյալ: Սա էլ դարձավ մեր բնակկառավարիչը…

ԾԵՐՈՒԿ - Ո՞վ…

ՇԵՖ - Քե՞զ ինչ ով: Ի՞նչ տարբերություն: Կառավարիչը կառավարիչ է: Հա, եկել էր մեկը մոտը, բողոքում էր, թե տանիքը կաթում է: - Արդեն թիթեղագործ եմ ուղարկել, մինչև դուք տուն հասնեք, էլ չի կաթի, - հավատացրեց բնակկառավարիչը: Խեղճ մարդը տուն էր հասել երեք ժամ հետո, որովհետև ծեր էր և հարգելու համար հասկանալիորեն շենքի 12-րդ հարկում էին բնակարան տվել նրան, մի շենքի, որի վերելակը հասկանալիորեն չէր աշխատում: Հա, ուրեմն, երեք ժամ հետո զանգ է տալիս բնակկառավարիչին, թե էլի կաթում է…

- Խաբել եմ, - ուրախ բացականչում է բնակկառավարիչը հեռախոսով, - խաբել եմ, ուռա, այսօր ապրիլի մեկն է: Իբր թե տարվա մյուս 364 օրերին ճիշտ էր խոսում…

Հա, գանգրահեր, ի դեպ դու բնակկառավարիչների ցուցակը կազմիր ու ներկայացրու ինձ, նրանք մեծ մասամբ մերոնցից են:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Լսում եմ, Շեֆ:

ԾԵՐՈՒԿ – Այդ դեպքում ընդունիր նաև այս ցուցակը: Ստուգված է:

ՇԵՖ - Ովքե՞ր են:

ԾԵՐՈՒԿ – Որոշ ավտոտնտեսությունների ղեկավարներ:

ՇԵՖ - Ի՞նչ են արել:

ԾԵՐՈՒԿ – Մեր կանոնադրության 8-րդ բաժնի 5-րդ ենթաբաժնի 132-րդ կետի 3664-րդ պարագրաֆով հաշվետվություններ են ներկայացրել, թե անցյալ տարի այստեղից այնտեղ են տեղափոխել մեծ բեռներ և այդքան էլ այնտեղից տեղափոխել են այստեղ:

ՇԵՖ - Է՛, թող տեղափոխեն, քե՞զ ինչ…

ԾԵՐՈՒԿ – Եթե նրանց հաշվետվությունները ճիշտ են, ուրեմն նրանք մեր ողջ քաղաքը՝ իր փողոցներով, խարխուլ ու կիսախարխուլ նորակառույցներով, բաղնիքներով, խանութներով

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ու խանութների ավտոմատ չաշխատող սարքերով մի տարում տարել-հասցրել են Խաշուրիի մոտերքը:

ԳԱՆԳՐԱՀԵՐ -Մանրիկ սուտասաններ են, Շեֆ, վարորդները գալիս են աշխատանքի, բայց չեն աշխատում, մինչև որ աշխղեկը մի ուղերթի համար յոթ-ութ ուղեգիր է տալիս: Տեղափոխում են, ասենք, հինգ տոննա ավազ, բայց գրում են, թե տեղափոխել են քառասուն տոննա: Այդքան բան…

ՇԵՖ – Լսիր, Գանգրահեր, դու ինձ դուր չես գալիս, սկսել ես ճիշտ բաներ ասել:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Դողդողալով/ Ներեցեք, Շեֆ, ես պարզապես շատ եմ հոգնել մեր այս ժողովը կազմակերպելիս: Ամեն ինչ խառնել եմ իրար: Հավատացեք, նույնիսկ ես հաճախ չեմ կարողանում սուտն ու ճիշտը, լավն ու վատը, առաջավորն ու հետադիմականը զանազանել:

ՇԵՖ – Իսկ դու ի՞նչ վիճակում ես, Ծերուկ:

ԾԵՐՈՒԿ – Հոյակապ, այսինքն, ոչինչ, էլի, այսինքն, լավ չեմ, ավելի ճիշտ՝ վատ եմ, Շեֆ:

ՇԵՖ – Ահա, խնդրեմ, պարզ ու սպառիչ պատասխան: Ապրես, Ծերուկ, ուրեմն դու լավն ու վատը կարողանում ես զանազանել:

ԾԵՐՈՒԿ – Լավն ու վատը տարբերում եմ, Շեֆ: Բայց, սուտն ասած, մի հարցում լրիվ կորցրել եմ ինձ:

ՇԵՖ – Ի՞նչ հարցում, Ծերուկ:

ԾԵՐՈՒԿ – Ինքնասպասարկման խանութների հարցում,

Շեֆ: Առաջադիմակա՞ն են դրանք թե ընդհակառակը, չեմ կարողանում որոշել:

ՇԵՖ - Խաբելո՞ւ հարցում:

ԾԵՐՈՒԿ – Խաբելու հարցում հենց ընդհակառակն է, Շեֆ: Նախքան ինքնասպասարկման անցնելը հաճախորդներն էին բողոքում, թե վաճառողները խաբում են մեզ: Հիմա էլ վաճառողներն են բողոքում, թե հաճախորդները խաբում են մեզ:

ՇԵՖ - Ե՞րբ են խաբում, ապրիլի 1-ի՞ն:

ԾԵՐՈՒԿ – Ոչ, ոչ, ամեն օր: Վաճառողներն ասում են, թե հաճախորդներից ոմանք ընտրում են իրենց ուզած ապրանքը, դնում գրպանները ու դուրս գնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Է, դա եղավ գողություն…

ԾԵՐՈՒԿ – Իսկ հաճախորդներն ասում են, թե կատակ են արել: Տեսնո՞ւմ եք, զանազանելը դժվար է, Շեֆ:

ՇԵՖ – Դա՛, իսկ հիմա հարցը ի՞նչ վիճակում է…

ԾԵՐՈՒԿ – Բարդ, սոսկալի բարդ: Այսինքն, ի՞նչ եմ երկարացնում, կուզե՞ք միացնեմ խանութ, տեսեք…

Առաջ այս խանութում աշխատում էին երկու հոգի՝ մեկը վաճառող էր, մյուսը գանձապահ, հիմա…

ՊԱՏԿԵՐ

Խանութ: Ինչ-որ զիգզագ ճամփաներ: Շղթաներ, հաստ երկաթյա սլաքներ: Մի ճամփի եզրին բազմել է գանձապահը: Այստեղ ու այնտեղ կանգնել են վաճառող-վաճառողուհիները: Երբ մարդ է մտնում, ինչ-որ ազդանշաններ սկսում են աշխատել, վառվում-հանգչում է լույսը: Ահա վառվում է լույսը, ներս է մտնում մի հաճախորդ՝ անթերի հագնված, փողկապով, լայնեզր գլխարկով, մի աչքին սև վիրակապ: Ձեռքին ճամպրուկ:

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Ուշադրություն, մեկը ներս է մտնում: ՎԱՐԻՉԸ – Բոլորն իրենց տեղերում, սկսում ենք…

/Բոլորն աշխուժորեն նշաններով իրար հասկացնում են, որ մարդ է մտել խանութ/

ՀԱՃԱԽՈՐԴ - /Ներս է մտնում/ Բարև ձեզ: /Ոչ ոք չի պատասխանում/ Հարգանքներս: /Ոչ մի ձայն: Ուզում է մի տեղից մտնել/:

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Այդ ո՞ւր ես գնում, է՛յ:

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Սլաքները չե՞ս տեսնում:

3-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Այս ինչ տեսակ մարդիկ են, տո՛…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ներեցեք, ինձ տնտեսական մի քանի ապրանքներ են պետք, որտե՞ղ որոնեմ…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Այդտեղ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Ինքնասպասարկում է, ման եկեք, գտեք:

3-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Իսկ, ի՞նչ է, կարդալ չգիտե՞ս… Էդտեղ հայերեն գրված է. «Խազայստվեննի»:

ՀԱՃԱԽՈՐԴ – Ներեցեք, շնորհակալություն /սկսում է որոնել/:

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Ուշադիր հետևիր դրան…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ - /Իբր դիմափոշի է քսում՝ հայելու մեջ նայում է/ Հանգիստ, պարզ տեսնում եմ:

ՎԱՐԻՉ - /Ձեռքի միկրոֆոնի մեջ/ Տեսեք բան ման չթռցնի…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Լսիր, ընկեր,մի բաժնի մոտ այդքան կանգնել չի կարելի…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ինչպե՞ս, ներեցեք, իսկ որտե՞ղ կանգնեմ…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Հո թանգարան չի, առնում ես՝ առ, չես առնում, գնա…

ՀԱՃԱԽՈՐԴ – Հիմա, հիմա, ներեցեք… հա, ներեցեք, այս դանակներից ավելի մեծը չունե՞ք…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Չէ…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Ինչ որ կա, էդ է…

3-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Դե, շտապիր, շտապիր…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ներեցեք, հիմա, դե լավ, լավ, ինձ ոչինչ պետք չէ /Ուզում է դուրս գալ/…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Ո՞ւր, ո՞ւր, այն կողմից պիտի դուրս գաս…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ինչո՞ւ…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Սլաքները չե՞ս տեսնում…

3-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Ի՜նչ տիպեր են…

ՀԱՃԱԽՈՐԴ – Օ, այո, ներեցեք, դե ցտեսություն…

ՎԱՐԻՉ - /Միկրոֆոնի մեջ/ Բռնեք դրան…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Ո՞ւր եք գնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՃԱԽՈՐԴ – Տուն, այսինքն, ներեցեք, ձե՞ր ինչ գործն է…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Բա ինչո՞ւ չես մուծում…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ի՞նչ մուծեմ…

3-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Բա ի՞նչ առար…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ոչինչ էլ չգնեցի…

1-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Իսկ ինչո՞ւ չառար…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ներեցեք, չուզեցի, չգնեցի…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Իսկ վերարկուդ ինչո՞ւ է ուռած…

ՀԱՃԱԽՈՐԴ – Լավ չեն կարել, իսկ ի՞նչ կա…

3-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Մեզ է հարցնում՝ ինչ կա: Դո՛ւ ասա, թե ինչ կա մեջը:

ՀԱՃԱԽՈՐԴ – Սպասեք, բայց դա ձեր ի՞նչ գործն է: Իմ վերարկուն է, մեջն ինչ ուզեմ կպահեմ…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Եթե դու ազնիվ մարդ ես, ինչո՞ւ ես վերարկուիդ մեջ բան պահում, վերարկուն պահարա՞ն է…

ՀԱՃԱԽՈՐԴ – Լսեք, բայց դա նույնիսկ ծիծաղելի չէ: Ի՞նչ եք ուզում ինձնից: Գուցե ես սխա՞լ տեղ եմ մտել: Սա ինքնասպասարկման խանութ չէ՞…

ՎԱՐԻՉ – Անմիջապես հանիր վերարկուդ, եթե չես ուզում ինքներս խուզարկենք: Դե, շուտ-շուտ, դատարկիր գրպաններդ…

ՀԱՃԱԽՈՐԴ – Գրպաններս ինչո՞ւ դատարկեմ, ավազակնե՞ր եք, ինչ է…

ՎԱՐԻՉ – Ավազակ բռնողներ ենք: Իսկ աչքդ ինչո՞ւ ես կապել…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ցավում է, բայց ձե՞ր ինչ գործն է…

ՎԱՐԻՉ – Երբ ներս մտավ, աչքին վիրակապ կա՞ր…

2-ՐԴ ՎԱՃԱՌՈՂ – Կարծես թե կար…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՀԱՃԱԽՈՐԴ – Չէ, չէ, վիրակապի տակ լվացքի մեքենա եմ թաքցրել: Գրողը տանի, դուք ինձ ո՞ւմ տեղն եք դրել վերջապես: Ես գիտական աշխատող եմ, ես կբողոքեմ…

ՎԱՃԱՌՈՂՆԵՐ - /Ծիծաղում են/ Վախեցրեց, գիտնական, երեկ մի վաստակավոր գործիչ արդուկ էր տանում, գրպանից հանեցինք…

ՀԱՃԱԽՈՐԴ - Հա, հա, ձեր վաճառած արդուկն էլ գրպան կմտնի…

2ՐԴ ՎԱՃԱՌՈՂ - Կարծես թե դիսերտացիա չեք գողանում

ՀԱՃԱԽՈՐԴ – Բայց դա ի՞նչ կապ ունի…

ՎԱՐԻՉ – Ձու գողացողը ձի էլ կգողանա: Չերկարացնենք, խուզարկեք դրան, տղերք: /Երկու հոգի բռնում են հաճախորդին, մյուսները շոշափելով գրպանները, խուզարկում են: Ոչինչ չկա/:

ՎԱՐԻՉ – Ոչինչ չկա՞:

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Վա՛յ, ոչինչ չկա…

ՀԱՃԱԽՈՐԴ – Իսկ գիտնականի գրպանում ի՞նչ պետք է լիներ, հիմար:

ՎԱՐԻՉ – Խնդրում եմ, առանց վիրավորելու: Մենք մեր պարտքն ենք կատարում:

ՀԱՃԱԽՈՐԴ – Ուրեմն դեռ ե՞ս եմ վիրավորում: Ինձ գողի տեղ եք դնում, խուզարկում եք՝ առանց դատարանի սանկցիայի, շորերս եք հանում և դեռ ե՞ս եմ վիրավորում…

1-ԻՆ ՎԱՃԱՌՈՂ – Ախպեր ջան, դե լավ, գնա, գնա… Հո շառ չես…

ՎԱՐԻՉ – Ախր, բա ի՞նչ անենք, այ, ձեզ նման լավ հագնված գալիս են ու մեխ են տանում, ի՞նչ անենք: Գիրք ենք կազմել, ուզո՞ւմ ես «Գողերի գիրքը» բերենք:

ՀԱՃԱԽՈՐԴ – Ուրեմն՝ մեկին կասկածելու համար բոլորին պետք է խուզարկե՞ք…

ՎԱՐԻՉ – Դե լավ, դու ասա, ի՞նչ անենք: Ախր ինքնասպասարկում է…

ՀԱՃԱԽՈՐԴ – Ես ձեզ ինքնասպասարկում ցույց կտամ… Այս ի՞նչ օր էր, տե՛ր աստված…

ՎԱՐԻՉ - /Ձեռքը ճակատին զարկելով/ Օ՞ր, խաբեցինք, խաբեցինք, այսօր ապրիլի մեկն է…

ՎԱՃԱՌՈՂՆԵՐ – Խաբեցինք, խաբեցինք…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ

ՇԵՖ – Ըմ, դա… ապրիլի մեկը փրկեց: Այնուամենայնիվ, Ծերուկ, սա իմ կարծիքով առաջադիմական ձև է, ես ամեն ինչ կթողնեի նույնը, միայն վաճառողներին կհեռացնեի…

ԾԵՐՈՒԿ – /Ծիծաղում է/ Է՛, կդառնար խանութ՝ առանց վաճառողի… Դա էլ են փորձել:

ՇԵՖ – Դե, չէ, պարզապես ինքնասպասարկման այս պայմաններում առևտրական կրթություն ստացած մարդիկ ավելորդ են: Ես նրանց կհեռացնեի և փոխարենը կընդունեի մարդիկ միլիցիայի պահակային ծառայությունից, փորձված,թրծված խուզարկուներ…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Մի երկու-երեք փորձված շունն էլ չէր խանգարի:

ՇԵՖ – Ապրես, Գանգրահեր, և որովհետև այստեղ հիմնական խնդիրը ակամա դառնում է պայքարը ցրվածների ու գողերի դեմ, ապա ինքնասպասարկման խանութները ես կհանձնեի քրեական հետախուզության տնօրինությանը: Սուտ չե՞մ ասում:

ԾԵՐՈՒԿ – Սուտ է, սուտ է…

/Դուռը թակում են՝ պայմանական նշաններով/

ՇԵՖ – Ահա, մի գործիչ ևս: /Բացում են/

/Ներս է մտնում Սևուկը/

ՍԵՎՈՒԿ – Ներեցեք, ինձ ասացին, որ այստեղ վարձով սենյակ են տալիս:

ՇԵՖ – Փոքրիկ երեխաներ ունե՞ք:

ՍԵՎՈՒԿ – Իսկ, ի՞նչ է, սենյակի համար երեխաներ չունենայի՞:

ՇԵՖ – Այդպես է Երևանի տնատերերի կամքը: / Գրկախառնվում են/

ՇԵՖ – Ուրախ եմ, որ քեզ կենդանի եմ տեսնում, Սևուկ:

ՍԵՎՈՒԿ – Ես էլ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ձեր զրույցը շատ նմանվեց մի անեկդոտի: Քաղաքացին դիմում է կոշիկ վաճառողին.

- Ես ուզում եմ ամուր, գեղեցիկ և էժան կոշիկներ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

- Ես էլ, - ասում է վաճառողը:

ՇԵՖ – Լավն էր: Ապրես, Գանգրահեր, ուրեմն շատ նման էր, հա՞: Իսկ այս անեկդոտին ավելի նման անեկդոտ ո՞վ կարող է ասել:

ԾԵՐՈՒԿ – Ես: Հիվանդը դիմում է բժշկին.

- Բժիշկ, իսկ դուք ի՞նչ եք անում, երբ մրսում եք:

- Հազում եմ, - ասում է բժիշկը:

ՇԵՖ – Հոյակապ նմանություն ուներ, ապրես, Ծերուկ: Բայց նախքան անեկդոտներին անցնելը, բարեկամներ, ես ուզում եմ լսել Սևուկին: Ի՞նչ կա քո գծով…

ՍԵՎՈՒԿ - /Բարձրացնում է երեք մատը/:

ՇԵՖ – Երեք ի՞նչ…

ՍԵՎՈՒԿ – Երեք գործակալ, Շեֆ: Երկուսը…

ՇԵՖ – Երկուսը մեռած են, մեկի բերանում էլ իսկի շո՞ւնչ չկա:

ՍԵՎՈՒԿ – Ոչ, ոչ, Շեֆ, Սուտլիկ որսկանը երեխա էր պարզապես: Երկուսը քիչ հետո կգան, իսկ երրորդին ուղարկել եմ ԶԱԳՍ: Եթե արդարացրեց՝ կընդունենք:

ՇԵՖ – Իսկ ի՞նչ է անում ԶԱԳՍ-ում, ամուսնանո՞ւմ է…

ՍԵՎՈՒԿ – Մակիչը երդվյալ ամուրի է, Շեֆ, և այդ կապակցությամբ տեղն ու տեղը նույնիսկ մի իմաստուն անեկդոտ ստեղծվեց: Ընկերը դիմեց նրան՝ խնդրելով մասնակցել իր հարսանիքին:

- Ե՞րբ է հարսանիքը,- հարցրեց Մակիչը:

- Փետրվարին, - ասաց ընկերը:

- Մարտին ամուսնացիր, - խորհուրդ տվեց Մակիչը:

- Ինչո՞ւ:

- Մի ամիս շահում ես, - պատասխանում է Մակիչը:

ՇԵՖ – Տղան կարծես տվյալներ ունի: Հիմա տեսնենք, թե ինչ է անում նա ԶԱԳՍ-ում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

Սեղմում է հեռուստացույցի կոճակը: ԶԱԳՍ-ի աղքատիկ մի սենյակ: Երեք սեղան: Մեկի վերևում գրված է «Մահ», մյուսի վերևում՝ «Ծնունդ», երրորդի վերևում՝ «Ամուսնություն»: Մահվան բաժնի աշխատողը մի սիրուն աղջիկ է: Ծնունդի բաժնի աշխատողը՝մի տղա, հարսանիքի բաժնի աշխատողը մի պառավ: Պատերին պլակատներ՝ միկրոբներ, խոշորացված ճանճեր, վերևում գրված է՝«Համբույրը վարակ է տարածում», կեղտոտ մի արմավենի, թղթե ծաղիկներ, պատի մի անկյունում գրված է «Մոտակա դագաղագործի հասցեն՝ Դագաղագործների փողոց համար երկու»: Ներս է մտնում թղթակիցը միկրոֆոնով:

ԹՂԹԱԿԻՑ – Ուշադրություն, ուշադրություն, մեկ,երկու, երեք, չորս: Երեք,երկու, մեկ, մոտոր… /Փչում է/

ԱՂՋԻԿ – Այդ ի՞նչ եք անում:

ԹՂԹԱԿԻՑ – Փչում եմ… այդպես է պետք… Ուշադրություն, հարգելի ռադիոլսողներ, մեր միկրոֆոնը գտնվում է ԶԱԳՍ-ի բաժանմունքում: Մի քանի րոպե անց այստեղ տեղի է ունենալու երջանիկ մի ամուսնության գրանցում: Այստեղ ամեն ինչ լուսավոր է: Տոնականորեն զարդարված, հանդիսավոր: Ափսոս, որ մեր ռադիոռեպորտաժը միաժամանակ գունավոր հեռուստացույցով չի հաղորդվում, որպեսզի դուք տեսնեիք այս գույները, այս նրբերանգները, բազմերանգ ու թավշեթավիշ ծաղիկները, զգայիք լուսերազ, շողշողուն վարդերի ցնորային բույրը: Սակայն հոգ չէ, ապավինեք ձեր երևակայությանը: Այստեղ ամեն-ամեն ինչ ամուսնության է տրամադրում, գեղեցիկ բնանկարները, մեծ ճաշակով արված պլակատները և այլ դիդակտիկ նյութեր փառաբանում են սերը,ամուսնությունը, մահը, ծնունդը, ներեցեք, սերն ու ամուսնությունը: Ահա հենց առաջին պլակատի վրա գեղարվեստական տառերով գրված է «Համբույրը… վա…վա… Համբույրը սիրո ծաղիկն է»: Գեղեցիկ ծաղիկ է, այնպես չէ՞… Իսկ հիմա, ես ձեզ կներկայացնեմ այսօրվա երջանիկներին, ուշադրություն, նրանք ներս են մտնում: Տղան սև, նրբաճաշակ կոստյումով է, սպիտակ վարդը կրծքին, աղջիկը՝ավանդական սպիտակ շղարշե հագուստով, դեմքը ծածկած սնդուսե քողի տակից երևում է նրա ամոթխած դեմքը: Հնչում է հանդիսավոր երաժշտությունը… /Միկրոֆոնը փակում է ձեռքով, բղավում է. «Միացրեք երաժշտությունը»: Հնչում է Շոպենի սգո քայլերգը/: Այս տոնական ուրախ երաժշտությունը կարծես գալիս է պարուրելու մեր նորապսակ զույ-զույ… Այս ի՞նչ եք անում, մյուս մագնիտոֆոնը միացրեք: Ներեցեք, հարգելի ռադիոլսողներ, /հնչում է ժողովրդական ուրախ պարեղանակ, սկզբում բարձր, հետո՝ նվազելով/: Ահա նրանք, մեր երջանիկ նորապսակները մոտենում են ԶԱԳՍ-ի աշխատողին: Լսենք նրանց:

ՓԵՍԱՑՈՒ - /Տարիքով, ճաղատ մարդ է, հաստ ձայնով՝ սվսվացնելով/ Ներեցեք, մենք ուզում ենք ամուսնանալ, այստե՞ղ ենք գրանցվելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԱՂՋԻԿ – Ոչ, սա մահվան գրանցումների բաժինն է:

ՓԵՍԱՑՈՒ – Օ՜հ, աստված իմ, արդե՞ն: Պետք չէ, պետք չէ, ա՜, ոչ, «Ծնունդն» էլ չէ…ահա…

ԱՂՋԻԿԸ – Կարծես առաջին անգամ է ամուսնանում, տեղը չգիտի…

ՊԱՌԱՎ – Բոլոր փաստաթղթերը բերե՞լ եք: ՓԵՍԱՑՈՒ – Այո…

ՊԱՌԱՎ – Վկաներ ունե՞ք…

ՀԱՐՄՆԱՑՈՒ – Բայց մենք ի՞նչ հանցանք ենք գործել…

ՊԱՌԱՎ – Անպայման վկաներ պետք է ունենաք, որովհետև գալիս են էսպես ձեր նմանները, անազնիվ մարդիկ, խոսքս ձեր մասին չէ, չարչարում-չարչարում են, թղթեր են լրացնում, մեկ էլ գալիս են, թե բաժանեք: Թե բաժանվելու եք, միանգամից ասեք, ինչ եք գլուխ տանում: Խոսքս ձեր մասին չէ:

ՓԵՍԱՑՈՒ – Շնորհակալություն:

ԹՂԹԱԿԻՑ – ԶԱԳՍ-ի հնագույն աշխատակիցը միշտ այսպես սիրով ու ջերմությամբ է դիմավորում նորապսակներին, կենաց խորհուրդներ տալիս, մաղթում երկար ու երջանիկ կյանք, ինչպես ասում են՝ մի բարձի վրա: Հարգելի ռադիոլսողներ, թույլ տվեք ձեր անունից, մեր բազմահազար ռադիոլսողների անունից միանալ ԶԱԳՍ-ի աշխատողի բարեմաղթ…

/Շեֆն անջատում է/

ՇԵՖ – Այդ տղային վաղն անմիջապես ինձ մոտ կբերես…

ՍԵՎՈՒԿ – Եղավ, Շեֆ:

ՇԵՖ – Կբերես նաև այդ երիտասարդ նորապսակ ծերուկին:

ՍԵՎՈՒԿ – Նրա՞ն ինչու, Շեֆ:

ՇԵՖ – Լավ էր խաբել աղջկան:

ՍԵՎՈՒԿ – Ներեցեք, Շեֆ, բայց մի՞թե սուտ է այն ասացվածքը, թե «կնոջը կարելի է խաբել միայն այն ժամանակ, երբ նա ուզում է խաբվել»:

ՇԵՖ – Չգիտեմ, արդեն երկու տարի է, ինչ ես չեմ խոսում կնոջս հետ:

ՍԵՎՈՒԿ – Ինչո՞ւ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Բարեկիրթ մարդ եմ, տղաս, չեմ ուզում խոսքն ընդհատել…

ՍԵՎՈՒԿ - /Ծիծաղում է/

ՇԵՖ – Այ, ուրիշ է Գանգրահերը, տասնութ տարի է, ինչ ամուսնացած է և սիրում է միևնույն կնոջը:

ՍԵՎՈՒԿ – Ուրեմն կարելի է ասել՝ երջանիկ կին ունի:

ՇԵՖ – Ի՜նչ ես ասում, կինը տեղեկություն չունի այդ մասին: Թե կիմանար…

ՍԵՎՈՒԿ – Իսկ ի՞նչ կարծիքի եք Ծերուկի կնոջ մասին…

ՇԵՖ – Երկու ամիս առաջ մեկը նրան փրկել էր գետում խեղդվելուց, իսկ հետո երկար ժամանակ ներողություն էր խնդրում: Ծերուկը շատ էր չարացած…

ԾԵՐՈՒԿ – Ախր այդպիսի բարենպաստ առիթ կյանքում մի անգամ է լինում, Շեֆ: Իսկ ես տանել չեմ կարողանում ինքնագործունեությունը, այդ կամավոր կազմակերպությունները, խեղդվողներին փրկող ջոկատները: Ձե՞ր ինչ գործն է, ինչո՞ւ եք նախախնամության դեր կատարում: Ես եմ, ուզում եմ խեղդվել, ձե՞զ ինչ…

ՍԵՎՈՒԿ - / Սարսափած/ Սպասեք, ձեր կինն ուզում էր խեղդվե՞լ…

ԾԵՐՈՒԿ – Չէ, ես էի ուզում, որ խեղդվեր: Ի՞նչ տարբերություն: Մի՞թե ավետարանում ասված չէ՝ «Այր ու կին մի մարմին»:

ՍԵՎՈՒԿ – Բայց ո՞րն է նրա մեղքը…

ԾԵՐՈՒԿ – Իսկ ի՞մ մեղքը որն է, իմը: Մեր օրենքները ամենաարդար և ամենախիստ օրենքներն են: Բայց այդ օրենքները նույնիսկ քրեական խոշոր հանցագործին 15 տարվա բանտարկությունից ավելի չեն նշանակում: Իսկ ես արդեն 20 տարի ամուսնացած եմ: Բա սա խի՞ղճ է: Բա որտե՞ղ է օրենքը:

ՍԵՎՈՒԿ – Բայց ի՞նչ է անում նա վերջապես…

ԾԵՐՈՒԿ – Հենց բանն էլ այն է, որ ինձ չի թողնում անել: Անմիջապես աչքիս առաջ թափ է տալիս մարտի ութի դրոշակը: Հավասարություն: Մի երեկո ձանձրացել էի տանը: Մարդ եմ: Էսպես հանգիստ, անմեղ ասում եմ կնոջս՝

- Ի՞նչ ես կարծում, չգնա՞մ մի տեղ զվարճանալու: Եվ ի՞նչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

- Հիանալի ես մտածել, - պատասխանում է կինս,- եթե առաջինը դու տուն գաս, միջանցքի լույսը վառ թող: Բա սա եղավ պատվասեր կնոջ պատասխա՞ն: Իսկ մի օր փաստորեն ինձ վիրավորեց: Աղջիկս հրապուրվել է մի-մի-մի, նու, մեկով: Ես կնոջս ասում եմ.

- Լսիր, մեր աղջկան թույլ չտաս ամուսնանալ այդ մարդու հետ: Թող սպասի, գուցե մենք նրա համար ավելի խելոք ամուսին կգտնենք: Եվ ի՞նչ է ասում կինս. չէ, չէ, լսիր թե ի՛նչ է ասում կինս.

- Եթե ջահել ժամանակ ես էլ այդպես մտածեի,- ասում է, - ապա մինչև հիմա պառավ օրիորդ կմնայի:

Բա՞: Կարծում էր չեմ հասկանում, թե ինչ է ուզում ասել:

ՇԵՖ – Երևի քո աշխատավարձն էլ է պահանջում, չէ՞…

ԾԵՐՈՒԿ – Բա էլ ինչո՞ւ եմ այսքան բարկանում, Շեֆ…

ՇԵՖ – Լսիր, հո քո մասին չեն պատմում, որ…

ԾԵՐՈՒԿ – Իմ մասին կլինի…

ՇԵՖ – Ուրեմն ուշ գիշերին մի անցորդի, կարծեմ հենց մեր էս Ծերուկին է մոտենում ժանտատես մի մարդ, հանում է ատրճանակը ու բղավում.

- Փողերդ, արագ: Վախեցած անցորդը խեղճ-խեղճ բարձրացնում է ձեռքերն ու աղերսում.

- Խղճա ինձ: Եթե ես առանց փողի տուն գնամ, կինս կյանքս կուտի: - Ամբողջ սրտով ցավում եմ, - ասում է ավազակը, - բայց ես ի՞նչ անեմ, որ իմ կինն էլ ճիշտ-ճիշտ քո կնոջ բնավորությունն ունի:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Նման մի բան էլ ես պատմե՞մ:

ԾԵՐՈՒԿ – Էլի իմ մասին կլինի…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Չէ,չէ, դատավորը հարցնում է ոստիկանին.

- Վկա ոստիկան, ինչպե՞ս կռահեցիք, որ նա հանցագործ է:

- Ես քայլում էի մի կնոջ ետևից, քաղաքացի դատավոր, - ասում է ոստիկանը: - Երբ այդ կինը անտարբեր անցավ կանացի հագուստեղենի և ոսկերչական խանութների կողքով և ոչ մի հայացք չնետեց ցուցափեղկերին, ես անմիջապես կռահեցի, որ նա տղամարդ է: '

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ավելի մոտ որևէ բան չգիտեի՞ր, անուղղելի մարդ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ավելի՞ մոտ, խնդրեմ, մեր մոտի նորակառույց շենքն ընդունող հանձնաժողովի նախագահն ասաց.

- Ինձ հատկապես դուր են գալիս պատերի մեջ փորված այս պահարանները: - Ի՞նչ պահարան, - զարմացավ ճարտարապետը,- դրանք սենյակներ են:

ՇԵՖ – Գրազ կգամ, որ դու Նորքի զանգվածում ես ապրում, Գանգրահեր:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ինչպե՞ս իմացաք, Շեֆ:

ՇԵՖ – Տուր այստեղ ձեռքդ: Այդպե՛ս: Սոսկալի գծեր են: Ահա… բնակարանը նոր տարվա նախօրյակին ստացար, չէ՞: Ահա, պարզ երևում է…այո, այո, այ տղա, էս ինչպե՞ս եք ապրում, ձեր կամային հոգեկան բարձր հատկություններով պատվոգրի արժանի մարդիկ եք: Ոչ ջուր ունեք, ոչ գազ ունեք, ոչ ջեռուցում ունեք, ոչ վերելակ ունեք, ոչ աղբատար ունեք, ոչ հեռախոս ունեք…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Իմաստուն եք, իմաստուն եք, Շեֆ, ինչպե՞ս իմացաք:

ՇԵՖ – Դատարկ բան է, ձեր ձեռքի ափի գծերի վրա պարզ երևում են…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ի՛նչ եք ասում, վաղը այս ձեռքս վերցնեմ, տանեմ բնակվարչություն… Այսպես ցույց տամ, տեսնեմ ինչ են ասում: Թե չէ հիմա նամակ կարդացող չկա:

ՇԵՖ – Է՛, իսկ հիմա ինչո՞վ ես զբաղված, ի՞նչ ես անում, Գանգրահեր:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Հուշեր եմ գրում: Հիմա մոդա է, բոլորը հուշեր են գրում:

ՇԵՖ – Ուրեմն, հուշե՞ր ես գրում: Հիանալի է, շատ լավ ես անում: Իսկ արդեն հասե՞լ ես այն թվականին, երբ ինձանից հարյուր ռուբլի պարտք վերցրեցիր:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ոչ, Շեֆ, ներեցեք, մոտենում եմ…

ՇԵՖ – Հա, դե մոտեցիր, համարձակ, համարձակ…

/Դուռը թակում են/

ՍԵՎՈՒԿ – Մերոնք են: /Արագ բացում է դուռը, ներս է թողնում երկու հոգու՝ Ճուտոյին ու Միամիտին/: ԵՐԿՈՒՍՈՎ – Ողջույն ձեզ, ով աշխարհի ամենաճշմարտախոս մարդիկ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Լավ սկսեցիք: Բարև ձեզ: Ներկայացրու, Սևուկ:

ՍԵՎՈՒԿ – Հարգելի Շեֆ, հարգելիներս, այս մարդկանց ես երաշխավորում եմ ցուցակով, նրանք միանգամայն արժանի են ազնիվ սուտասանների մեր փառապանծ ակումբի անդամ լինելու:

ՇԵՖ – Այդպես…/ նայում է Ճուտոյին/ Սպասիր, բայց ես կարծես թե քեզ ճանաչում եմ: Դու այն մանր սուտասանը չե՞ս, որ մեր նիստերում տեղի-անտեղի…

ՃՈՒՏՈ – Վա՛յ, Շեֆ, ձեր թաշկինակն ընկել է…

ՇԵՖ – Ահա, ինքն է որ կա… Այ տղա, դու էլի նո՞ւյնն ես, ուրեմն բոլորովին չե՞ս աճել, ոնց որ ֆիլհարմոնիայի շրջիկ արտիստներից լինես… Էլի թաշկինակի վրա՞ ես աշխատում…

ՃՈՒՏՈ - /Կարմրում է/ Ոչ, Շեֆ, թաշկինակը ես ձեր պատվին հիշեցի: Հիմա խոշոր թեմաների վրա եմ աշխատում…

ՇԵՖ – Ավազա՛կ, խոշոր թեմաներ, վե՞պ ես գրում, թե սիմֆոնիա… Կամ գուցե հսկա կտավի վրա՞ ես աշխատում, ասենք Դոնի կազակների պատասխանը թուրքի սուլթանին:

ՃՈՒՏՈ – Ոչ, Շեֆ, ասում եմ. վա՛յ, ձեր պայուսակը ընկել է…

ՇԵՖ – Այ ապրես, խոշոր աճ ես ունեցել… Ուրեմն, պայուսակ, հա՞… ավազա՛կ, և ինչ, հավատո՞ւմ են…

ՃՈՒՏՈ – Պայուսակ չունեցողները հավատում են և սկսում են պահանջել…

ՇԵՖ – Իսկ գուցե երբեմն նաև շոյում են, հա՞, վզակոթդ, աչքերիդ տակի այդ կապույտը նրանց սիրո և նվիրվածության առհավատչյա՞ն է…

ՃՈՒՏՈ – Ոչ, Շեֆ, դա թեյ խմելուց է…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ի՞նչ, չէ, սա կարգին սուտասան է…

ԾԵՐՈՒԿ – Այն քառասուն աստիճա՞ն թեյից…

ՃՈՒՏՈ – Ոչ, ոչ, սուտ չեմ ասում,սովորական թեյից: Տասնհինգ տարի է ինչ տառապում եմ: Մի բաժակ թեյ խմեմ թե չէ, աչքս ցավում է:

ՇԵՖ – Լսիր, մանր ավազակ, սուտն էլ պետք է համով ու ճշմարիտ լինի, թե չէ կդառնա զզվելի ճիշտ: Ինչպե՞ս կարող է թեյից աչքը ցավել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՃՈՒՏՈ – Ցավում է, ի՞նչ անեմ, տասնհինգ տարի է, ցավում է…

ՇԵՖ – Հիմա որ մի բաժակ թեյ խմես, կցավի՞…

ՃՈՒՏՈ – Բա չի՞ ցավի…

ՇԵՖ – Էյ, Գանգրահեր, մի բաժակ թեյ բեր, շուտ…

/Բոլորը հավաքվում են Ճուտոյի շուրջը: Գանգրահերը բերում է թեյը՝ գդալը բաժակի մեջ, մեկնում է նրան/

ՃՈՒՏՈ - /Վերցնում է, գդալով խառնում է թեյը/ Տասնհինգ տարի է, ասում եմ ցավում է, ոչ ոք չի հավատում:

ՇԵՖ – Խմիր,խմիր…

ՃՈՒՏՈ – Կխմեմ, բայց ես պատասխանատու չեմ: /Բաժակը, գդալը մեջը, տանում է դեպի բերանը, գդալի պոչը սեղմվում է աչքի տակը: Խմում է/: Ըհը, չասացի՞, ըհը, էլի ցավում է…

ՇԵՖ – Այ տղա, գդալը հանիր, գդալը…

ՃՈՒՏՈ – Վա՞յ, էս ո՞վ դրեց…

/Բոլորը ծիծաղում են, խփում են Ճուտոյին: Ճուտոն շփոթված է/ Բա տասնհինգ տարի ո՞նց չէի տեսնում…

ՇԵՖ – Կույր ավազակ, լավ, մի հարց ևս: Ճանապարհորդ Կուկի մասին լսե՞լ ես:

ՃՈՒՏՈ – Սուտասա՞ն է:

ՇԵՖ – Սուտասանը դու ես: Լավ, այ թե ինչ, կապիտան Կուկը երեք անգամ նավով պտտվել է երկրագնդի շուրջը: Այդ պտույտներից մեկի ժամանակ նա մեռել է: Պատասխանիր մեզ, ո՞ր պտույտի ժամանակ է մեռել կապիտան Կուկը:

ՃՈՒՏՈ – Դե որ այդքան բարդ հարցեր էիք տալու, ավելի լավ չէ՞ր համալսարան ընդունվեի… Ես պատմություն շա՞տ գիտեմ…

ՇԵՖ – Իսկ քո այդ ընկերոջը գիտե՞ս: /Ցույց է տալիս Միամիտին/

ՃՈՒՏՈ – Գիտեմ, Շեֆ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ի՞նչ ես կարծում, նրան կարելի՞ է գաղտնիք վստահել: ՃՈՒՏՈ – Լիովին, Շեֆ: Չորս տարի առաջ բարձրացրել են նրա աշխատավարձը, բայց մինչև այսօր կինը չգիտի այդ մասին:

ՇԵՖ – Ահա թե ինչ: Եկ այստեղ, երիտասարդ:

ՄԻԱՄԻՏ – Լսում եմ, Շեֆ:

ՇԵՖ – Ինչպե՞ս է անունդ:

ՄԻԱՄԻՏ – Իսկ դուք ի՞նչ կուզեիք, Շեֆ:

ՇԵՖ - Ե՞ս…/ծիծաղելով/ Նազար:

ՄԻԱՄԻՏ – Անունս Նազար է, Շեֆ:

ՇԵՖ - /Հետաքրքրությամբ նայում է նրան/ Ուրեմն այսպես, սիրելի Նազար: Ծխո՞ւմ ես

ՄԻԱՄԻՏ – Ոչ…

ՇԵՖ – Թղթախաղ սիրո՞ւմ ես:

ՄԻԱՄԻՏ – Ոչ:

ՇԵՖ - Խմո՞ւմ ես:

ՄԻԱՄԻՏ – Ոչ:

ՇԵՖ – Վայ, իսկ թիակներդ քոր չե՞ն գալիս, գուցե թևե՞ր են բուսնում, գուցե հրեշտա՞կ ես:

ՄԻԱՄԻՏ – Ոչ, Շեֆ:

ՇԵՖ – Այ տղա, ուրեմն դու ոչ մի արատ չունե՞ս…

ՄԻԱՄԻՏ – Ունեմ, Շեֆ, միայն մեկը:

ՇԵՖ - Ի՞նչ արատ է դա:

ՄԻԱՄԻՏ – Ստում եմ…

ՇԵՖ - /Ծիծաղում է/ Դա ի՞նչ արատ է, սիրելի Նազար, դա քեզ պատիվ է բերում: /Մոտենում է պատին կախված բնանկարին, միանգամից իջեցնում է այն: Տակից հայտնվում են Քաջ Նազարը, Սուտլիկ որսկանը, Բարոն Մյունհաուզենը, Սուլդին ու Բուլդին: Բոլորը ոտքի են

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

կանգնում: Հնչում են ծափահարություններ/: Իսկ հիմա, ասա ինձ, սիրելի Նազար, ովքե՞ր են այս նկարներում պատկերված մարդիկ:

ՄԻԱՄԻՏ – Մեր հայրերն են, Շեֆ: Ստի վետերանները: Հանգիստ նրանց շիրիմներին:

ՇԵՖ - Կարո՞ղ ես մեկ-երկու բառով բնութագրել նրանց:

ՄԻԱՄԻՏ – Խնդրեմ, Շեֆ: Սա Քաջ Նազարն է: Իմ խորին համոզմամբ, նա սխալմունքով է սուտասան համարվել: Որովհետև իր ստին հավատացողը սուտասան չէ: Ավելի շուտ կարող է համարվել արվեստի ռոմանտիկ դպրոցի նախահայրը, մի հայ Դոն Կիխոտ: Այդ մարդու ողբերգությունը կայանում էր նրանում, որ կարիերիստ էր, տարրական կրթությամբ, հակում ուներ դեպի թագավորական ժողովները և թերագնահատում էր կնոջ դերը՝ ազգային-ազատագրական շարժումներում: Դա էլ կործանեց նրան: /Ծափեր/:

ՇԵՖ – Իսկ Սուտլիկ որսկա՞նը:

ՄԻԱՄԻՏ – Իմ կարծիքով ամենացայտուն կերպարն է հայկական ստի պատմության մեջ: Եվ դեռևս ըստ ամենայնի չգնահատված: «Երևան» կինոմիավորումը զուր տեղը վարկաբեկեց նրան: Նա զոհ է: Այդ հարվածից հետո նա դժվար թե այլևս ուշքի գա:

ՇԵՖ – Լավ, վերջացնենք: Հիմա պատասխանիր այս հանելուկին. լավ մտածիր: Մեկ կիլոգրամ կշռաքարերից մեկը կշռում է 850 գրամ, իսկ մյուսը՝ 50 գրամ պակաս: Խնայդրամարկղի քանի՞ գրքույկ ունի այդ կշռաքարերով աշխատող վաճառողը:

ՄԻԱՄԻՏ – Խնայեք ինձ, Շեֆ, ես կեղտոտ հաշիվների հետ գործ չունեմ: Ես ազնիվ սուտասան եմ:

ՇԵՖ – Լավ: Այդ դեպքում ասա ինձ, խնդրեմ, կարո՞ղ է մարդ ապրել առանց կույր աղիքի:

ՄԻԱՄԻՏ – Մարդը կարող է ապրել, Շեֆ, բայց վիրաբույժները չեն կարող:

ՇԵՖ – Վերջին հարցը: Ո՞վ է քո կարծիքով շեֆ-խոհարարը:

ՄԻԱՄԻՏ – Շեֆ-խոհարարը այն մարդն է, Շեֆ, որ կարողանում է մսի նույն փոքրիկ կտորին քսան տեսակ անուն կնքել կերակրացանկում:

ՇԵՖ - /Մեկուսի/ Գրողը տանի, սա ոնց որ պրովոկատոր լինի, ամեն ինչին ճիշտ պատասխաններ է տալիս: Հիմա կստուգենք վերջին անգամ: Լսիր ինձ, ը՛ը, Նազար: Որպեսզի քեզ և ը՛ը…

ՃՈՒՏՈ – Ճուտո…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ճուտոյին ընդունենք մեր շարքերը, հարկավոր է, որ դուք ըստ կարգի մեջլիս մտնեք:

ՃՈՒՏՈ - Որտե՞ղ է, ասեք մտնեմ:

ՇԵՖ – Սպասիր, մանրիկ,մեջլիսը դա մրցություն է, ամեն մեկդ վերցնում եք մի-մի թառ կամ քամանչա, նստում կամ կանգնում եք իրար դիմաց, նվագում ու խոսքեր եք հնարում: Ով ամենալավ սուտն ասաց, նա էլ կլինի հաղթողը և կընդունվի մեր շարքերը: Մեջլիս, նու, «կոնկուրս յունիխ տալանտով», հասկացա՞ք:

ՄԻԱՄԻՏ – Իսկ դաշնամուրով չի՞ լինի:

ՇԵՖ – Չէ մի, Չայկովսկու անվան մրցանակաբաշխությունն է… թառ կամ քամանչա…

ՃՈՒՏՈ – Իսկ չի՞ լինի երկուսիս էլ ընդունեք:

ՇԵՖ – Հնարավոր չէ, մի հաստիք ունենք…

ՃՈՒՏՈ – Ըհը, ամեն տեղ նույն պատմությունը, ակադեմիա են դարձրել…

ՇԵՖ – Գանգրահեր, Ծերուկ, նրանց գործիքներ տվեք: Ուշադրություն, առաջինն ո՞վ է սկսում…

/Հնչում է նվագը՝ Ջիվանու մրցույթից/:

ՄԻԱՄԻՏ – Նազարն ասաց՝ անվախ ու քաջ մարդ եմ ես, ինձնից սարսափում են կինս ու քենիս, տղաս առանց ծանոթի մանկամսուր է գնում, առանց փողի կոպերատիվ բնակարան եմ գրվել ես…

/Նվագ/:

ՃՈՒՏՈ - /Բարկացած/ Ստոր, սուտասան: Ես Ճուտոն եմ, Աշտարակի Շաքարաշեն ավանում ոչ ոք գինուն վառած շաքար երբեք չի խառնում: Խանութներում ապրանքները երբեք տակից չեն տանում, շրջսովետի աշխատանքից գոհ եմ ես…

/Նվագ/:

ՄԻԱՄԻՏ - /Բարկացած այս ու այն կողմ է նայում/ Այսքան էլ սո՞ւտ: /Բարձր/ Երեկ եղա ես մեր Կամո քաղաքում, ժողովուրդը ուրախ թարմ կաթ էր խմում, օղի վաճառողները լաց էին լինում, կինոթատրոնում հնդկական ֆիլմեր չտեսա ես…

/Նվագ/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՃՈՒՏՈ - /Կատաղած/ Հավատում եմ խոսքերիդ, այ իմ կոլեգա… Նոր եմ գալիս ժողտնից, արևս վկա, ոչ մի պրոֆեսիոնալ գրող պիես չուներ այնտեղ, ժողովրդական տաղանդներ են բեմադրվում միշտ…

/Նվագ/:

ՄԻԱՄԻՏ – /Մեկուսի/ Վ՛ախ, ախր սուտն էլ պետք է չափ ունենա, չէ՞, ժողովրդական տաղանդներ… /Բարձր/ Ամբողջ օրը ոչ ոք չի վիրավորել ինձ՝ ոչ վաճառող, հավաքարար և ոչ էլ հսկիչ, տաքսու վարորդը մանրը վերադարձրեց ինձ, առանց ծանոթի՝ հյուրանոցում եմ ապրում ես…

ՃՈՒՏՈ – Բավական է, ես այլևս չեմ ուզում շարունակել: Ես իմ ողջ սերն ու զգացմունքները մեր սիրելի Շեֆի նկատմամբ ուզում եմ արտահայտել նրա պատվին գրած այս երգով: /Հնչում է «Գեղեցկուհի, պայծառ կենաս» երգը Դավիթ Պողոսյանի կատարմամբ, բոլորը լսում են զարմացած,հիացած: Ճուտոն շարժում է բերանը, հնչում է երգը: Երբ երգն ավարտվում է, մոռանում է իբր անջատել տրանզիստորը և շարունակվում է դիալոգը Սայաթ-Նովայի և Ֆաթուլլայի միջև: Բոլորը ծիծաղում են/:

ՇԵՖ - /Արագ մոտենում, Ճուտոյի պիջակի ներքին գրպանից հանում է տրանզիստորը՝ երկար անտենայով/ Ավազա՛կ… համո՛վ ավազակ… Ընդունված եք, երկուսդ էլ ընդունված եք կես դրույքով… առանց արտաղրությունից կտրվելու:

ՃՈՒՏՈ – Կես դրույքո՞վ, բայց դա խաբեություն է:

ՄԻԱՄԻՏ - /Կիսաձայն/ Շնորհակալություն, Շեֆ…

ՇԵՖ – Այդ ինչո՞ւ ձայնդ կտրվեց, Նազար…

ՄԻԱՄԻՏ – Կես դրույքով եմ խոսում, Շեֆ…

/Ծիծաղում են/

ՇԵՖ – Հարգելի սուտասաններ, մեր ազնիվ սուտասանների ակումբի ժողովը հայտարարում եմ բացված: Առաջարկություն է եղել ինձ նշանակել ժողովի նախագահ, ուրիշ թեկնածուներ կա՞ն: Չկան: Ովքե՞ր են համաձայն, որ ես լինեմ ժողովի նախագահը: Դեմ չկա՞: Անցավ միաձայն:

ՄԻԱՄԻՏ – Իսկապես միաձայն, միայն իր ձայնով անցավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ժողովի քարտուղար եմ առաջարկում Գանգրահերին: /Սպառնալով/: Ովքե՞ր են դեմ: Այդպես: Անցավ միաձայն: Անցնում եմ օրակարգի առաջին հարցին: Հարգելի սուտասաններ ընկ. ընկ. Նազարը և Ճուտոն դիմել են ԱՍԱ, այսինքն՝ ազնիվ սուտասանների ակումբի անդամ դառնալու խնդրանքով: Երաշխավորել է Սևուկը: Նրանք մեջլիս մտան, բավարար պատասխանեցին մեր հարցերին, գուցե ուրի՞շ հարցեր էլ ունեք:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ես մի հարց ունեմ հարգելի Նազարին: Հարգելի Նազար, այդ ճի՞շտ է, որ եթե ուտես շատ գազար, տեսողությունդ կլավանա:

ՆԱԶԱՐ – Անկասկած, ես մինչև այժմ չեմ հանդիպել ակնոց կրող որևէ նապաստակի:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ապրես, ես բավարարված եմ:

ԾԵՐՈՒԿ – Մի հարց Ճուտոյին: Եթե դուք փողոցում երկու ժամ տրամվայ չտեսնեք, ի՞նչ կմտածեք:

ՃՈՒՏՈ – Կմտածեմ, որ տրամվայի աշխատողները ժամկետից շուտ են կատարել իրենց փոխադրումների պլանը և հանգստանում են:

ԾԵՐՈՒԿ – Ես բավարարված եմ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ես այլևս հարցեր չունեմ:

ՇԵՖ – Այդ դեպքում ես էլ մի հարց տամ, սիրելի Նազար, ի՞նչ կանեիր դու, եթե քեզ հայտնեին, որ կինդ անզգուշաբար հայտնվել է վագրի վանդակում:

ՄԻԱՄԻՏ – Ընդհանրապե՞ս կինը, թե՞ իմ կինը:

ՇԵՖ – Քո կինը…

ՄԻԱՄԻՏ – Իմ կինը… Կասեի, որ ես պատասխանատու չեմ վագրի կյանքի համար…

ՇԵՖ – Ես առաջարկում եմ ընկ. ընկ. Միամիտին և Ճուտոյին ընդունել մեր շարքերը, ովքեր դեմ են, թող համարձակվեն… Ներեցեք, թող ձեռք բարձրացնեն: Դեմ չկա: Կո՞ղմ: Կողմ էլ չկա: Անցավ միաձայն: Դուք ազատ եք, նորընծա սուտասաններ, լայն ճանապարհ ձեզ, հաջողություն…

ՄԻԱՄԻՏ, ՃՈՒՏՈ – Կաշխատենք արդարացնել ձեր վստահությունը:

ՇԵՖ – Իսկ հիմա մեր սարքի միջոցով հետևենք, թե ինչ են անում նրանք և որն է ըստ կոչման արտասանած առաջին սուտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

* *

ՄԻԱՄԻՏ - /Քայլելով/ Իմ շունը այնքան խելոք է, որ երբ տուն է վերադառնում, սեղմում է զանգի կոճակը:

ՃՈՒՏՈ – Չէ, իմ շունը դրա կարիքը չունի: Նա ունի դռան իր սեփական բանալին: Բա՞…

*

* *

ՇԵՖ – Ամեն ինչ կարգին է: Անցնում ենք օրակարգի առաջին հարցին՝ զեկուցմանը: Զեկուցման համար… Գանգրահեր, նպատակահարմար ենք գտնում, որ դու ինձ ձայն տաս:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Զեկուցման համար ձայնը տրվում է ականավոր սուտասան, ստաբանական գիտությունների դոկտոր Շեֆին: /Ծափահարություններ/:

ՇԵՖ –Պետք չէ, պետք չէ, ինչպես ասում են, ոչ փառք, ոչ երգեր, եկեք սկսելով վերջացնենք: Ինչպես ես իմ նախորդ ելույթներից մեկում նշեցի, այսօր, ապրիլի մեկին, երբ ամբողջ աշխարհը խաբում է, երբ ոչ մեկը ոչ մեկին չի հավատում, երբ թոթովախոս մանուկն անգամ փորձում է շփոթեցնել իր ծնողներին, եկեք մենք ճիշտ խոսենք: Մենք իրավունք չունենք խաբելու այսօր, որովհետև շուրջ տարի խաբում ենք, և մեզ հետ ոմանք՝ տարբեր բնագավառներում: Եվ այսպես, ինչի՞ ենք հասել մենք ակումբի անցյալ ժողովից հետո անցած ժամանակահատվածում: Ոչնչի, թանկագին սուտասաններ: Մեր մեծ կազմակերպությունից ահա միայն այս չորսն ենք, որ հավատարմորեն և արիաբար տանում ենք մեր խաչը:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Լաց է լինում/ Սուտ է…

ՇԵՖ – Որոշեցինք ճիշտ խոսել…

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Լաց է լինում/ Ճիշտ է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ահա, քիչ առաջ մենք մեր ակումբն ընդունեցինք երկու մանուկների: Ովքե՞ր էին նրանք, մեր լավ օրից չէր, ինչպես ասում են, որ մենք նրանց ընդունեցինք: Ախր չզինված աչքով էլ պարզ երևում էր, որ նրանք ոչ թե ստախոսներ են, այլ սրախոսներ: Իսկ դրանք տարբեր կատեգորիաներ են, ինչպես իրավացիորեն ընդգծել է Ժան Էլոյանը: Բայց մենք ստիպված էինք աչք փակել: Որովհետև ելք չունենք… Ո՞րն է ելքը, ասացեք ինձ, ո՞րն է ելքը, ես այն չեմ տեսնում…

Ե՞րբ պետք է վերջ տրվի ստի նկատմամբ այս անլուր հալածանքին, որը շարունակվում է անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը: Հեռու չգնանք, բացենք «Հայկական առածածին» /Ա.Ղանալանյան, 1960թ.Հայկական ՍՍՀ գիտ. Ակադեմիայի հրատակչություն, էջ 40-41/ դա մեր հալածանքի պատմությունն է՝ ամփոփված երկու էջում: Տասնյակ առակ-ասացվածքների մեջ չկա մեկը, որ գոնե կարեկցանքով լցված լինի ստի կամ ստախոսի նկատմամբ: Ամենուրեք հեգնանք, ծաղր, արհամարհանք, ատելություն…

Ահա՝ Ստի ոտքերը կարճ են:

Սուտ ասողի տունը կրակ ընկավ, ոչ ոք չհավատաց: Ստի ճրագը մինչև կես գիշեր կվառվի: Սուտը սամույր մուշտակ էլ դառնա, ոչ ոք չի հագնի…

ՍԵՎՈՒԿ – Հե, հե, կինս տես ոնց կհագնի…

ՇԵՖ – Սուտը սուտասանին կվայելի…

Սուտը ճամփա չունի…

Եվ այլն, և այլն, և այլն… Բայց այսպես չի կարելի: Սա բացարձակ ծայրահեղություն է: Առանց ստի ինչպե՞ս կարելի է ապրել: Եղե՞լ է մի պատերազմ, մի խռովություն, մի իշխանություն, մի թագավորություն, որի հիմքում եղած չլինի նաև սուտը: Իսկ գրականությո՞ւնը… գրականությունը գոյություն չէր ունենա, եթե չլինեին սուտն ու խաբեությունը: «Օթելլոյից» հանեք Յագոյին, և Շեքսպիրի անմահ երկը կդառնա միամիտ հովվերգություն: «Դիմակահանդեսից» հանեք սուտն ու խաբեությունը և չի լինի ոչ դիմակահանդես և ոչ էլ Արամ Խաչատրյանի երաժշտությունը՝ գրված դիմակահանդեսի համար: Նման պայմաններում չէին լինի ոչ Դանթեի «Դժոխքը», ոչ Անդերսենի հեքիաթները, ոչ Ժյուլ-Վերնի վեպերը և ոչ էլ Սունդուկյան: Ի՞նչ Սունդուկյան, առանց Զիմզիմովի և Զամբախովի:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Լաց լինելով/ Սուտ է, այսինքն՝ ճիշտ է…

ՇԵՖ – Սա դեռ գրականությունը: Իսկ կենցաղը, առևտուրը, տրանսպորտը, կապը, կինոն, կռիվը… Հա, հա, ասենք գերի ես ընկել թշնամիներին և նրանք հարցնում են՝ որտե՞ղ է քո

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ջոկատը: Ի՞նչ անես: Ճի՞շտն ասես, դառնաս մատնիչ ու դավաճա՞ն: Ոչ, ստել է պետք, թանկագին ընկերներ: Եթե Իվան Սուսանինը ճիշտն ասեր և թշնամիներին ցույց տար ճանապարհը, կդառնա՞ր ազգային հերոս: Օպերա կգրվե՞ր նրա մասին…

ԾԵՐՈՒԿ – Նրա անունը կգրվե՞ր շոկոլադի տուփերի վրա…

ՇԵՖ – Այո, բայց ես արդեն հոգնել եմ: Ես մի կողմ եմ քաշվում, ես ուզում եմ ձեռքերս լվանալ, ինչպես Պիղատոսը…

ԾԵՐՈՒԿ – Ջուրը կտրված է, Շեֆ, գիշերն են տալիս…

ՇԵՖ – Լռիր, փոխաբերական իմաստով եմ ասում: Վերջ: Ես զեկուցեցի և վայր եմ դնում իմ լիազորությունները: Նոր շեֆ ընտրեք ձեզ համար: Այսքանը…

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Մեկուսի: Միայն ձայնը/ Տեսնես անկե՞ղծ է, թե ուզում է մեր տրամադրությունը իմանալ:

ԾԵՐՈՒԿ - /Միայն ձայնը/ Ի՞նչ անեմ, ծա՞փ տամ, թե լաց լինեմ…

ՍԵՎՈՒԿ - /Միայն ձայնը/ Տեսնեմ մյուսները ինչ են ասում: Զգուշություն:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ի՞նչ ընտրություն, մեր Շեֆը դուք եք հուր հավիտյան… Այո /Բարձրանում է տեղից/: Հարգելի սուտասաններ, ես առաջարկում եմ կրկին մեզ ղեկավար ընտրել Շեֆին, նրա կամքը, եռանդը, ազնվությունը, խիղճը, տեսական պատրաստությունն ու պրակտիկ գործունեությունը անխզելիորեն…/ձայնը գնալով մարում է, բայց ոգևորված, ժպտուն շարժվում է բերանը: Հնչում է այլ տոնի մագնիտոֆոնային ձայն/

Սպասիր, սպասիր, ստոր սրիկա, տես ցուցակից ոնց եմ ջնջելու: Կյանքներս կերար՝ մեծամիտ, տգետ, բութ, խաբեբա, կարիերիստ, փառամոլ և խառնածին վերջապես… Եթե վստահ լինեի, որ այս անազնիվները ինձ կպաշտպանեն, ուրիշ տեսակ կխոսեի, ոչինչ, համբերենք… /ձայնը/…Ես առաջարկում եմ Շեֆին՝ Շեֆ:

ՇԵՖ – Շնորհակալություն, Գանգրահեր, բայց ես իսկապես հոգնել եմ, և պարտադիր չէ, որ ամեն անգամ ես լինեմ շեֆը: Նոր, երիտասարդ կադրեր կան, թող աճեն,սովորեն ղեկավարել: Ինչո՞ւ, օրինակ, ղեկավար չլինես հենց դու, որ քո անբասիր կյանքով և մատուցած ծառայություններով…/ձայնը մարում է, շարժվում են շրթունքները: Մագնիտոֆոնային այլ տեքստ/ Հա, հա, Գանգրահերը՝ շեֆ, ծոծրակդ կտեսնես, ցնդած ծերուկ, ո՞ւմ հետ եմ աշխատում ես, մի՞թե սա է իմ շրջապատը: Իսկապես, ավելի լավ չէ՞ լինել թե չլինել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ԾԵՐՈՒԿ – Գանգրահերը հիանալի ասաց, սա քննարկման հարց չէ, միայն դուք, Շեֆ, կարող եք մեզ փրկել վերջնական կործանումից, մեր հույսը, հավատը, մեր սերը, երախտագիտությունը…/նույն ձևով մագնիտոֆոնը/: Օ՜, ինչ հաճույքով երկուսիդ էլ կջնջեմ: Կեղծավոր, երկերեսանի Գանգրահեր, երեկ համոզում էր, որ ես Շեֆի դեմ ելույթ ունենամ, այսօր ինքը փառաբանում է: Բա չէ, կընկնեմ քո ցանցը, ավելի լավ է այս փքված հնդուհավը մնա, քան քեզ նման աղվեսը: Սրիկանե՜ր…

ՇԵՖ – Իսկ քո՞ կարծիքն ինչ է, Սևուկ…

ՍԵՎՈՒԿ – Իմ կարծիքը միշտ եղել է մասսաների կարծիքը, Շեֆ: /Ցույց է տալիս երկուսին/ Իսկ իմ անձնական կարծիքն այն է, որ դուք, միայն և միայն դուք կարող եք ձեր իմաստուն ցուցումներով… /Մագնիտոֆոնով/: Ա՜խ, եթե ես կարողանայի ասել իմ անձնական կարծիքը քո և այս նզովյալ սուտասանների մասին… Դատարկապորտներ, միևնույն է, դուք դատապարտված եք կործանման: /Խոսում է/: Ես առաջարկում եմ ցուցակում թողնել Շեֆի թեկնածությունը:

ՇԵՖ – Եզրափակենք: Ո՞րն է ձեր միասնական կարծիքը…

ԲՈԼՈՐԸ – Շեֆը, Շեֆը, ուռա՜…

ՇԵՖ – Այ տղերք, թողնելու եք ցուցակում, հետո թաքուն ջնջելու եք, ախր ես ձեզ գիտեմ…

ԲՈԼՈՐԸ – Չենք ջնջի, ո՞վ կհամարձակվի ջնջել ձեզ…

ՇԵՖ – Դե լավ, եթե այդպես է, գաղտնի քվեարկության կարիք չկա, եկեք բաց քվեարկությամբ վերջացնենք…

ԲՈԼՈՐԸ – Իսկ կանոնադրությո՞ւնը…

ՇԵՖ – Կանոնադրությունը մենք չե՞նք ստեղծել, մենք էլ մասնակի փոփոխության ենք ենթարկում: Եվ այսպես, միահամուռ առաջարկություն է եղել ինձ ընտրել իբրև շեֆ, ովքեր համաձայն են, թող ձեռք բարձրացնեն: Դե, դե, մի քաշվեք, բարձրացրեք, բարձրացրեք… Այդպե՜ս…Լավ, եկեք հարցին ուրիշ կերպ նայենք: /Ցույց է տալիս հատակը/ Սա ի՞նչ է:

ԲՈԼՈՐԸ – Հատակ է:

ՇԵՖ – Իսկ սա՞ ինչ է /ցույց է տալիս առաստաղը/:

ԲՈԼՈՐԸ – Առաստաղ է: /Բարձրացնում են ձեռքերը/:

Copyright © Artashes Kalantarian Foundation ՝ http://kalantarian.org/artashes ՝ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Բավական է… Անցավ միաձայն…Ավազակներ…Նորից ստիպեցիք ընտրվել… Հազիվ որոշել էի թոշակի անցնել…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Այ քեզ ընտրություն…

ՇԵՖ – Դե գնացեք, հաջողություն ձեզ: Իսկ ես մի քիչ ստեղծագործեմ…/ Դուրս են գնում: Շեֆը մոտենում է գրասեղանին, նորից նստում է սեղանի առջև, ձեռքն է վերցնում գրիչը/: Լինել, թե չլինել, այս է խնդիրը, ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ… Չէ՛, հոյակապ գործ է ստացվելու…

/Դուռը կրնկի վրա բացվում է, ներս է ընկնում Գանգրահերը՝ գունատված ու վախեցած, իր ետևից անմիջապես ծածկում է դուռը և օրորվում/:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Դավաճանություն, մենք կործանված ենք, Շեֆ…

ՇԵՖ – Ի՞նչ է պատահել… Դա ի՞նչ նոր մեներգ է «Խանդութ» բալետից:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ծերուկին ու Սևուկին անմիջապես ձերբակալեցին, Շեֆ: Ձեր տունը շրջապատված է ճշմարտախոսներով, ես հազիվ ներս ընկա, մենք կորած ենք…

/Դուռը բռնցքահարում են/:

ՇԵՖ – Դե լավ, ինչպես բանաստեղծներն են ասում՝ մի դողա աշնան տերևի նման: /Մոտենում է դռանը, բղավում է/: Լսեք, մի թխկթխկացրեք, գլուխս ցավում է: Հինգ րոպե ժամանակ տվեք՝ խորհրդակցելու: Միջազգային օրենք կա: /Ձայն. «Լավ»/:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Հինգ րոպեում ի՞նչ կարող ենք անել, Շեֆ…

ՇԵՖ – Կարող ենք արժանապատվորեն մեռնել:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Վա՞յ, ի՞նչ մեռնել, կինս հիվանդ է, երեխաներիս ո՞վ է դպրոց տանելու, տան վարձը չենք մուծել, հարևանս ինձ հիսուն ռուբլի պարտք է, պատշգամբս ապակեպատ եմ դարձնում, կիսատ է… Այնքան գործեր ունեմ, ի՞նչ մեռնել… Ես մեռնելու ժամանա՞կ ունեմ…

ՇԵՖ – Հանուն գաղափարի, Գանգրահեր, հիմա մենք կապացուցենք նրանց, որ ստի համար էլ կարելի է մեռնել:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Բայց ես չեմ ուզում մեռնել, ես այնքան ջահել եմ…

ՇԵՖ - /Հանում է ատրճանակը/ Վերջացնենք, ընտրիր, ատրճանա՞կ, թե թույն…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Օ՛ֆ, էլի ընտրություն, դնենք գաղտնի քվեարկության, շեֆ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ասացի վերջացնենք՝ ընտրիր…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Այդ դեպքում՝ թույն, կրակոցի ձայնից վախենում եմ: Հետո թույնը այսպես թե այնպես խմելու բան է… Է՛խ, կեղծված կոնյակներ, ինչքա՛ն ենք խմել…

/Շեֆը բերում է երկու բաժակ, գինի է լցնում, հետո ձեռքի մատանու ակը պտտեցնում է և ինչ-որ փոշի թափում բաժակների մեջ/:

ՇԵՖ – Նստիր, վերցրու բաժակդ…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Էս ի՞նչ գինի է, եթե քաղցր է, ես չեմ խմում, սիրտս խառնում է…

ՇԵՖ – Դառն է, դառը, «Հրազդան» է, խմիր…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Բա էլ թո՞ւյնը ինչի էիր լցնում, ինքը հերիք էր, էլի…

ՇԵՖ – Օ՛ֆ, շատախոս, զզվում եմ քեզ հետ խմելուց…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Բա ինչո՞ւ քո բաժակի մեջ քիչ փոշի լցրեցիր:

ՇԵՖ - Ո՛ւֆ, կասկածամիտ, վերցրու իմը…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ուրեմն ուրիշ ելք չկա՞, Շեֆ, զուցե մի կերպ խաբեինք նրանց, հը՞…

ՇԵՖ – Չկա, ես հոգնել եմ այլևս, տեսնենք, թե առանց մեզ ոնց են ապրելու, առանց ստի կապրեն, բա չէ… Կտեսնենք…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ախր, որ մեռած լինենք, ո՞նց կտեսնենք…

ՇԵՖ – Հոգու աչքերով, խմիր… Որ խարդախություն չլինի, միասին, դե, գնացինք…

/Բաժակները բարձրացնում են, նայում են իրար/:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Ակամա բաժակը մոտեցնում է Շեֆի բաժակին, նա էլ է մոտեցնում/ Ողջ լինես, Շեֆ…

ՇԵՖ – Ի՞նչ… սաղ լինես… զանգուր մազերով տղա…

/Խմում են/

ԳԱՆԳՐԱՀԵՐ-Անու՛շ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ՛ http://kalantarian.org/artashes ՛ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Դե լավ, վերջ տուր, մեռնենք…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Լավ…

/Գլուխները դնում են սեղանին, անշարժանում/:

ԳԱՆԳՐԱՀԵՐ - /Բարձրացնում է գլուխը/ Շեֆ, Շեֆ, ե՞րբ պիտի մեռնենք, թե ժամանակ կա, զանգ տամ տուն՝ կնոջս ասեմ, որ հարևանից հիսուն ռուբլին ուզի… Ախր ինչո՞ւ կորչի…

ՇԵՖ – Չես հասցնի, մեռի՛ր:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Լավ: /Նորից դնում է գլուխը, սպասում, հետո կրկին բարձրացնում է/:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Շեֆ, Շեֆ, դու արդեն մեռե՞լ ես…

ՇԵՖ – Հա…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Բա ես չեմ մեռնում, ի՞նչ անեմ…

ՇԵՖ - /Բարձրացնելով գլուխը/ Սպասիր, էս ինչո՞ւ չենք մեռնում: Չլինի՞ այստեղ մի խաբեություն կա:

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Այդ թույնը որտեղի՞ց ես գնել, Շեֆ…

ՇԵՖ – Համբարձումի դեղատնից…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Ի՞նչ, Համբարձումի՞, խաբել է, խաբել է, թույնը թանկ է, բա նա քեզ թո՞ւյն կտար, ես էլ ասեմ ինչի եմ քրտնում, ասպիրին է, ասպիրին…

ՇԵՖ - Ախ, սրիկա, խաբել սուտասանների շեֆի՞ն, դրանից հետո մի՞թե իսկապես արժե ապրել: Տուր այստեղ ատրճանակը, Գանգրահեր, նախ քեզ, ապա ինձ…

ԳԱՆԳՐԱՀԵՐ – Չէ, առաջ քեզ, Շեֆ, չէ՞ որ դու միշտ առաջինն ես… Կմեռնեմ, բայց քեզանից առաջ չեմ ընկնի…

ՇԵՖ – Ա՜խ, մորթապաշտ… լավ թող այդպես լինի…

/Դուռը բացվում է, ներս են ընկնում ներկայացման մասնակիցները/:

ՍԵՎՈՒԿ – Սպասեք, չկրակեք… Այս ամենը սուտ էր, կատակ էր, խաբել ենք, խաբել ենք, շնորհավոր ձեր ապրիլի մեկը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org

ՇԵՖ – Ախր, ասում էի չէ՞, առանց մեզ ինչպե՞ս կլինի…

/ՎԱՐԱԳՈՒՅՐ/

Copyright © Artashes Kalantarian Foundation ´ http://kalantarian.org/artashes ´ artashes@kalantarian.org